

ԼԵՌ

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՆ



Ltn

Ltr

9(44.925)

— 38 —

ԴՐՎԱԳՆԵՐ
ՀԱՅ ԿՂԵՐԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴՐԵՆԱԼԻՆ



ԳԵՏԱԿՈՂ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ

1 2 3 4

ԽՈԶԱՅԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

ՅԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ

ՀԱՅԵՐԻ ՄԵԶ

(x)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ — ՑԵՐԵՎԱՆ

1 2 3

ՊԵՏԱՐԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Պետական Հրատարակչությունը հրատարակելով համգույցալ Լեռյի մերկա աշխատությունը՝ նշում ե, վոր նրա մի շաբէ դրույքները նիշտ չեն: Հատկապես աշխատության մեջ պաշտպանված այն միտք, թէ հայկական կղեթական դիվանագիտությանը խարիզէ և յեվրոպական յել մասնավորապես ռուսական դիպումացիայից, միանգամայն չի կարու Վոչ մի բննադատության դիմանալ: Սակայն նկատի ունենալով այն ծավալուն նյութը, վոր կօւտակված է այս գրքում, Պետիրատն անհրաժեշտ եւմարեց լույս ընծայել այն:



ԱՌԱՋԱԲԱՆ

Մարգիկային պատմության այն շրջանը, վորին սովորաբար տրվում է նոր ժամանակներ անունը, հայերի մեջ ել, ինչպես և Արևմտյան Յեվրոպայում սկսվում է զարգանում եր առևտրական կապիտալի խորունկ ազգեցության տակ:

XVI դարից, ուշեմն ճիշտ այն ժամանակից, յերբ Արևմտյան Յեվրոպան մտնում եր առևտրական կապիտալի իշխանության տակ, Արևելյան Հայաստանում ից վերելքի դարն եր սկսում հին հայ առևտրական կապիտալի այն ճյուղավորումը, վոր ամփոփված եր Արաքս գետի ձորում, նրա քարավագներից դեպի արևմտաք և վորին մենք տալիս ենք Խոշայական Կապիտալ անունը:

Յեթի Արևմտյան Յեվրոպայում առևտրական կապիտալի տիրապետությունը բներան եր իր հետ մի շարք խոշոր քաղաքական-հասարակական շարժումներ (Նիդերլանդական, անգլիական, ֆրանսիական հեղափոխություններ, գերմանական ռեֆորմացիա և այլն), հայերի մեջ ել չնայած վոր սրանք ապրում եյին բոլորովին տարբեր քաղաքական մշակույթային միջավայրում, խոշայական կապիտալը ծնող, դաստիարակող, զեկավար դարձավ խոշոր և յերկարատև մի յերեսույթի, վոր նույնապես ազատազրական հեղափոխություն եր, բայց արգեն Առաջավոր Ասիայի հողի վրա, ասիական մեծ բռնապետություններից սեփական ազգային անկախություն խլելու համար:

Նմանությունն ապշեցուցիչ է և ամենասաստիկ կերպով աշքի մեջ և խոթվում առաջին իսկ հայացքից: Նշանակում ե, աշխարհի այդ յերկու իրարից հեռու ընկած կողմերում հեղափոխություն հյուսող ու մշակող առևտրական բուրժուազիան իրար բոլորովին խորթ ու անծանոթ սկզբունքներից չեր յելնում, այլ կապված եր մի ներքին գաղափարակցությամբ: Այս մի շատ կարենոր հատկություն ե, վոր պետք ե նշանակել են սկզբից և յեթ: Ուրիշ կերպ չեր կարող լինել, վորովհետև հայ խոշայական կապիտալը — այս նրա առանձնահատկությունն ե — աշակերտում եր յեվրոպական կապիտալին:

Այսպիսով խոջայական կապիտալը հանդիսանում ե այնքան
մեծ, այնքան անգերակշռելի մի հասարակական ույժ, վոր նրան
և միայն վերապահվում իրանով լցնել հայոց պատմության ամ-
բողջնոր շրջանը Ասել, ինարկե, չի կարելի, թե այս ուժը նա հայտ-
նաբերեց մի անգամից կազմակերպված-ավարտված՝ հայ ժողովրդի
բախտը տնօրինելու համար, Ինչպես մարդկային ամեն մի դորձ՝
հայ խոջայական կապիտալն իր ուժին տիրանում եր աստիճա-
նական դանդաղ, բայց կորովի և անհողողդ զարգացման միջոցով:

Չափազանց հետաքնական ե դիտել այդ զարգացումն իւ ման-
րամանությունների մեջ: Չափազանց հետաքննական են և այն
հզոր ներգործությունները, վոր այդ զարգացման այս ու այն աստի-
ճանը բերում, մտցնում եր հայ կյանքի մեջ, դառնալով առանձին-
առանձին գործոններ հայ հասարակական մտքի զարգացման:

Խոջայական կապիտալի այս անզուգական առանձնահատկու-
թյունը պարզել կարելի յե, համեմատելով նրան հայ կյանքի մի-
ուրիշ խոշոր տնտեսական ձեւավորման, այն ե՛ հայ ամիրայական
կապիտալի հետ: Մինչդեռ այս վերջինս, հարազատ զավակ բռնա-
պետական ուժիմի, ինքն ել բռնավոր եր, անշարժ պահպանողա-
կանություն՝ ամփոփված նեղ տեղայնության մեջ, խոջայական կա-
պիտալը գրական և շինարար սկզբունք եր, և այս վոչ թե, ինարկե, ա-
ռանձին առաքինություններով ոժոված լինելու պատճառով, այլ
պարզապես, վորովհետեւ իր բնավորությամբ և շահերով շատ եր
հակված գեղի միջազգայնություն, թափառաշրջիկ եր, վերին աստի-
ճան զգայուն և տպավորվող իր շահերի շուրջը, ընզունող և ավող
և այդ պատճառով ել ընդունակ կրելու տեսակ-տեսակ կերպարանա-
փոխություններ, վորոնք միայն նյութական բովանդակություն-
չունեյին, այլ և զաղափարական: Յեկ ահա բոլոր պայմանները,
վորպեսզի խոջայական կապիտալը լինի հասարակական զարգաց-
ման ուժեղ գործոն և վոչ թե մի ուրիշ գաս կամ զասակարգ:

Յեկ ուրիշ անկախ և ինքնամփոփ հասարակական դաս կամ
դասակարգ չեր ել մնացել հայերի մեջ: Հայ առետրական կա-
պիտալը, դեռ խոջայական կապիտալից ել առաջ, լուծել եր իր
մեջ միջնադարյան հայ կյանքի յերկու հզոր տերերին ել — հոգե-
վորական և ազնվական դասերը: Միանգամայն դիմազուրկ եր
դարձել ազնվականությունը, մինչդեռ հոգեորականությունն, իր
իշխանության արտաքին նշանները պահպանած լինելու համար,
առանձին հասարակական դասի հագուստ ու լեզու ուներ, բայց
իրապես, հոգով և մարմնով, ինչպես սովորություն ե ասել, անձ-
նատուր եր կապիտալին, նրա ստրուկն եր:

Խոջայական կապիտալը, զործոն հանդիսանալով այն յերե-
վույթի, վոր հայությունը միջնադարյան փակ ու անցուկ կրո-
նական աղանդի գրություննից դուրս գա, քայլ առ քայլ դիմի-
գեպի աշխարհականացում, դեպի քաղաքական ինքնադիտակցու-
թյուն, հետաքրար և ազատազրական գործ, իր այս քաղաքական-
հասարակական դիրք կոթնեցնում եր իր հետ մերված դասերի
վրա. ազնվականությունը, վորից միայն մանր-մունք մնացորդներ
եյին գոյություն պահպանել, զինվորական գործն եր ստանձնում,
իսկ ամենազլիսավոր և ամենապատախանառու գործը — զաղա-
փարախոսությունը, դիվանագիտությունը, — մնում եյին առաջվա-
նման, ինչպես յեղել ե հին դարերից, հոգեսրականության ձեռ-
քին, իրու նրա դասակարգային սեփականություն, նվիրագործ-
ված կրոնի անքակտելի սկզբունքներով, հրամաններով և հավա-
տալիքներով: Ինքը, խոջայական կապիտալն իլ, վոչ միայն իր
տգետ զանգվածներով, այլև իր առաջ բերած ինտելիգենցիայով
ամբողջովին յենթարկված եր հայ կղերական դիվանագիտու-
թյան: Յեկ խոջայական կապիտալի ամրող քաղաքական-հասա-
րակական դիրք, սկզբից մինչև վերջ, անցնում եր հայ կղերական
դիվանագիտության նշանի տակ:

Ահա ինչու մենք այդ պատմության ճակատին, բոլոր հատոր-
ների վրա, դրոշմում ենք «Իրվագներ հայ կղերական դիվանագի-
տության պատմությունից» ընդհանուր և միացնող վերնագիրը:

Մնում ե մեկ բացատրել, թե ինչ ե հայ կղերական դիվանա-
գիտությունը: Յեկ մենք այս անում ենք այստեղ առաջին իսկ
ներածական դրվագով: Հետո անցնում ենք խոջայական կապի-
տալի կատարած քաղաքական-հասարակական դիրքի պատմու-
թյան, վորի առաջին հատորն ե այս գիրքը:

Այս հատորը պարունակում ե իր մեջ խոջայական կապիտալի
զարգացման առաջին շրջանը, ջուղայականը, վոր առաջացնում ե
հայ իրականության մեջ մի նոր հասարակական շերտավորում —
բուրժուական ինտելիգենցիա՝ քաղաքական-հեղափոխական մտա-
ծողությամբ և այս նոր ուժը հերյուրում և ղեկավարում ե քաղա-
քական շարժում հայ կղերական դիվանագիտության թեերի տակ,
վոր և յելլրոպական և մասնավորապես ունական դիպլոմատիա-
յին խարված՝ ձուլվում ե ապստամբական խոշոր, բայց վերջի-
վերջո լրված շարժման մեջ: Հայ ազատագրական վոգորման առա-
ջին պատրանքն ե այս:

Յերկրորդ հատորը պիտի ամփոփի իր մեջ խոջայական կա-
պիտալի յերկու նշանավոր հատվածավորումները — հարավային և

նյուսիսային, կամ Հնդկաստանի և Մուսասաստանի նոր տիպի խոշաներ — հարավում՝ անգլո-հոլլանդական և ֆրանսիական կապիտալների ազգեցության տակ և հյուսիսայինը՝ կցված ուսւառքաւարդյունաբերական կապիտալին։ Յերկու հատվածների դերը հասարակական գարգացման մեջ, հարավը՝ գլխավորապես գրական-քարոզչական, քաղաքական-հրապարակախոսական բովանդակությամբ, իսկ հյուսիսը՝ նոր քաղաքական շարժումներով, վորոնք նորից ապստամբական գրության մեջ են զնում Դարսարադի հայերին, խարված և վաճառված ուսւական խմբերիալիզմի ձեռքով։ Հայ կեղերական դիվանագիտության ամենածաղկած և ամենասուն ժամանակն է այս Յերկրորդ ազատագրական պատրանք։

Յերրորդ հատորը բովանդակում է իր մեջ *ХІХ* դարի ամբողջ առաջին կեսը։ Այստեղ խոջայական կապիտալը ուսւա խմբերիալիստական նվաճողականության առաջընթաց ուղենարդարն և դեպի կուր և Արաքս գետերի հովիտները։ Եջմիածնի դերը և Ներսես Աշտարակեցի։ Արարատյան Հայաստանի նվաճումը և նոր հայկական հարց՝ ցարական բյաւրոկրատիայի դրած բովանդակությամբ։ Ներսես Աշտարակեցու ավանդավեպը և խոջայական կապիտալի հղացումը Արաքսյան մի Հայաստան կազմելու մասին։ Ամիրայական կապիտալի աշխատակցությունը խոջայականի հետ։ Յերրորդ ազատագրական պատրանք։

Չորրորդ հատորը քսան տարվա պատմություն և, 1858 — 1878, Ղրիմի պատերազմի վերջից մինչև Սան-Ստեփանո, ամբողջովին նվիրված թյուրքահայերին, թե ինչպես նրանք դարձան ուսւական քաղաքականության ուշադրության առանձին առարկա և թե վորքան ստոր, բացասական գեր կատարեց հայ կեղերական դիվանագիտությունն այդ գործի մեջ և թե ուր տարավ թյուրքահայերին այդ գիվանագիտությունը։ Աշխատակցություն ուսւահայ և թյուրքահայ խոջայական (առևտրական) կապիտալների։ Լիակատար պատմություն թյուրքահայ հարցի սկզբնավորման։ Հատորը պարունակում է իր մեջ 100-ից ավելի զետ չհրատարակված պատմական վավերագրեր։ Չորրորդ ազատագրական պատրանք։

Հինգերորդ հատոր — «Վաթուուն և մեկ» հատուկ անունով, վոր նշանակում է՝ հայ ժողովուրդը համաշխարհային խմբերիալիզմի հանկերում։ Մոջայական կապիտալը վերջնականապես տեղի յետալիս նորածին արդյունաբերական կապիտալին։ Հինգերորդ և վերջին ազատագրական պատրանք։

ԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ

(ՆԵՐԱԾԱԿԱՆ)

ՀԱՅ ԿՈՆՔԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ կղերական դիվանագիտությունը հայ պատմական բոլոր շարժումների մեջ կենտրոնական դիրք բռնած ամենաուժեղ գործուն եր, անչշատասխանատու, ինքնակամ մի կարգադրիչ ու հրամանատար: Ցեղ մենք ամենից առաջ այդ հիմնարկությունը պիտի մեր տեսության առարկա դարձնենք՝ նրա եյության հետաձանոթանալու համար:

Առաջին անգամ մենք ենք, վոր ձեւկերպում ենք մի այսպիսի արտահայտություն — հայ կղերական դիվանագիտուրյուն, իբրև մի անվանում, վոր, կարծում ենք, միանգամայն ի վիճակի յէ բավարար կերպով բնորոշիչ լինելու հայոց պատմության մի չափազանց կարևոր առանձնահատկության. այդ այն իրողությունն ե, վոր հայ ժողովրդի քաղաքական վիճակի տնօրինումը, ասել ե՝ նրա դիվանագիտությունը, նրա դիվլումատիան հայ հոգևորականության ձեռքին ե գտնվել յեղել ե նրա դասակարգային մենաշնորհը:

Այս խոշոր յերեսույթը, վոր պիտի քննական գնահատման յենթարկվի, ինչպես ասվում ե հասարակորեն՝ կարմիր թելի պես անցնում ե մեր պատմության միջով, և յեթե պետք ե վորոնել նրա տեղությունը, մենք կարող ենք ամենայն հեշտությամբ մատնանշել այն կետը, ուր վերջանում ե այդ կարմիր թելը: Այդ՝ 1920 թվի նոյեմբերի վերջն ե, յերբ Հայաստանի մի մասը, հազիվ ազատվելով համաշխարհային պատերազմի ըերած ընդհանուր փլուզումից, մտավ խորհրդային հանրապետությունների Միության մեջ:

Իսկ կարմիր թելի սկիզբը՝ նրան գեռ պետք ե վորոնել, և մենք կղբաղվենք այդ վորոնումով, առանց, սակայն, ընդարձակորեն մանրամասնությունների մեջ մտնելու: Մեղ անհրաժեշտ է հիմնավորել «Հայ կղերական դիվանագիտություն» տերմինի հաստատուն և տեսական պատմականությունը:

Հայոց պատմության նախաքրիստոնեյական կամ հեթանոսական դարերում մենք, ճիշտ և, տեօնում ենք կղերի ուժեղ և իր հարստություններով խիստ հեղինակավոր կազմակերպություն, բայց նյութ չունենք դատելու համար, թե պաշտամունքի սեփականատեր լինելուց ավել ի՞նչ եր նա, պետական ի՞նչ հանձնառություններ եր կատարում ինարկե, քրմական դասակարգը, իրեւ միակ գրադեստարը պետության մեջ, պիտի խոշոր մասնակցություն ունենար ներքին և արտաքին հարաբերությունների մեջ: Բայց հարցը գրագրի, կամ հին պաշտոնակոչումով՝ դիվանադպրի մասին չե, այլ լիազոր հրամանատարի մասին: Շատ հավանական է թվում, վոր հեթանոս կղերը պետության ճակատագիրը անկախարար և միանձնորեն վարելու արտոնության տեր չեր: Հայաստանի մեջ, ինչպես նաև առասարակ հեթանոսական աշխարհում, թագավորող անձը կամ տոհմը միացնում եր իր մեջ և քրմապետությունը, հետևաբար մեհյանի ազատ և ինքնամփոփակ աշխարհավարության մասին խոսք լինել չի կարող: Հայ հեթանոս կղերը քաղաքական իշխանության հոլու հպատակ և յեղել և այս ապացուցում են քրիստոնեյության մուտքի առաջին դարում գործած մի շարք հոգևորականներ, վորոնք նախկին քուրմեր եյին կամ քրմական սերունդներ: Խոսել, ուրեմն, հայոց պատմության այս առաջին շրջանի, հեթանոսականի մասին, կարիք չկա մեր այս նյութի տեսակետից:

Մեղ մատչելի ըրորդ տվյալները միաբան թելադրում են, թե հայ կղերական գիվանադիտությունը մեկն և այն արդյունքներից, վոր տվեց հայ ժողովրդին չորրորդ գարը, ավատական հեղաշրջման այն չափազանց նշանագործ ժամանակաշրջանը, վոր սահմանաբաժան դարագլուխ և ներկայացնում տնտեսական յերկու խոշոր ձևերի — անառնապահական կամ արոտային և յերկրագործական կամ հովտային դրությունների հակամարտությունների միջ: ¹⁾ Ավատականության կատարյալ և ջախջախիչ հաղթանակը ընթառող մի խորունկ հեղաշրջում եր այդ, վոր նոր ճակատագիր, մի գյուղական-ճորտային յերկրի ճակատագիրն եր ընդհանրացնում ամբողջ հայկական բարձրագանդակի վրա:

Հայ անցյալի այս բազմաբեղուն և զնուական կերպարանությունը յեթե վոչ միանգամայն կախված եր, գեթ շատ հզոր և

¹⁾ Այս դրությունների մասին տես իմ «Հոդվածը՝ «Հայոց Պատմության հարցերից» («Հայաստանի Պետ. Համալուրանի Յեղեկագիր», յերկրորդ գիրը, Յերևան, 1927 թ., յեր. 393 — 432):

անդիմադրելի մզումներ եր ստանում այն մեծ քաղաքական, համաշխարհային նշանակություն ունեցող փոփոխություններից, վորոնք յերրորդ գարի կեսից մինչև չորրորդի կեսը տեղի ունեցան Առաջավոր Ասիայում, այլակերպելով դիրքերն այդտեղ տիրապետող յերկու մեծ պետությունների — Հռոմի և Իրանի և նրանց մեջ յեղած փոխարարերությունները: Իրանում ջնջվում եր պարթեների թագավորությունը, վոր տոհմատիրական ցեղային դրությունից անցել եր ավատական տնտեսակարգին¹⁾, և ամբողջ այդ ահազին պետությունը հպատակվում եր Սասանյան ցեղին, վոր պետական աշխարհավարության հիմք եր դարձնում աղքայնական զրադաշտական կրոնը, ընդգրկելով ռազմատեհնչ քաղաքականությունը, մանավանդ Հռոմի դեմ և վերականգնելով այն հին համառ պատերազմը, վորի նպատակն եր դարձյալ հինը — դուրս մղել Հռոմը Միջերկրական ծովի արևելյան ավաղանից և վերահաստատել այնտեղ պարսկական տիրապետությունը: Հռոմն ել ինարկե, իր հին նվաճողական ավանդություններին եր հետեւվում և, ինչպես միշտ, ասիական ռազմադաշտի առաջավոր դիրքեր եր նկատում Հայաստանն ու Միջագետքը: Յեվ, ինչպես այս կրկնվել եր հնուց, այդ յերկու սահմանաբաժան դիրքերն ել Հայաստան թե Միջագետք, ձեռքից ձեռք եյին անցնում, մերթ Հռոմին և մերթ Իրանին, նայած թե ի՞նչ եր բերում պահերազմական բախտ կոչված բանը:

Հայաստանը, յերկու վիթխարի մրցակիցների մեջ տրորվող մի թույլ քաղաքական կազմակերպություն, անկախություն, իսկական մտքով չուներ, այլ կազմում եր փոխարքայություն մերթ Հռոմի և մերթ Իրանի տիրապետության տակ և համապատասխան այս փոփոխության, յենթարկվում եր Իրանի և Հռոմի վոչ միայն քաղաքական, այլև տնտեսական աղքեցության: Ի՞նչ կարող եր նա ստանալ իր այդ դիրքերից:

Պարթեական Իրանը շատ մոտ եր Հայաստանին՝ հարազատության կապերով կապված, շնորհիլ այն քաղաքական կազմակերպության, վոր նա տվել եր հայերին: Այդ կազմակերպությունը թագավորություն եր, պարթեական կերպարանքով: Իրանց ահազին պետությունը Իրանի պարթե Շահերը կառավարում եյին վոչ թե խիստ կենտրոնացման յեղանակով, ինչպես անում եյին Աքեմենյան դինաստիայի Շահերը, այլ տեղական լայն ինքնավարությունների կամ փոխարքայությունների սիստեմով: Այդպիսի փոխարքայություններ պարթե թագավորներն ունեյին

¹⁾ A Chrestiensens—, L'Empire des Sassani des, Kobenhove 1907. p. 7.

Հրանի պետության զանազան կողմնում մինչև տասնեռութ¹⁾ և դրանցից մեկն եր Հայաստանը: Այդ ինքնավարությունները շատ ընդարձակ եյին: Փոխարքան իր յերկրի մեջ վասար թագավոր եր, հարկ եր տալիս իրանի թագավորին, վոր այդպիսով դառնում եր Շահինշահ (արքայից արքա) և բացառիկ իրավունք ուներ զրամ կարելու: Փոխարքաները միշտ լինում եյին պարթեական թագավորող տանից եայդ պատճառով նրանք իրար հետ կապված եյին աղդականական զգացմունքներով: Այս պարթեական սիստեմի առանձնահատկությունն եր կազմում: Հասկանալի յե, վոր այս տեսակ քաղաքական կազմակերպության հողի վրա հեշտ կարող եր զարգանալ պարսիկ և ինքնավար տեղերի տիրող դասերի, այն եա աղնվականության մեջ մերձեցում, վոր շատ հաճախ վերածվում եր խնամիական կապերի: Բայց մերձակցությունը մենակ քաղաքական շահերի բերմունք չեր, այլ և տնտեսական շահերի: Հայերն ու պարթեներն անասնաբուժական պարապմունքների մեջ իրար շատ եյին մոտ: Առանձին գեր այս կողմից կատարում եր ձիարությունը Մուղանի դաշտում և Կասպից ծովի հարավ-արևմտյան կողմերում:²⁾

Ավելորդ ե ասել թե յերկու յերկրների հարազատ մերձակցությունը ամփոփում եր գտնում տնտեսավարական մի ընդհանուր ձեի — ավատականության մեջ, վոր հատուկ եր վոչ միայն իրանին, այլև հարեան մյուս յերկիրներին: Այսպիսով, ուրեմն, անասնապահությունը կամ արոտային տնտեսությունը, վոր տիրում եր Հայաստանի մեծագույն մասում, քաշում-տանում եր հայ ավատականության խոշորագույն մասի համակրությունը զեպի պարթեական իրանը, մի հանգամանք, վոր այնքան աչքի ընկնող ե յեղել հոռմեյական աշխարհում, վոր նրան իր տարեգրության մեջ արձանագրել հարկ ե համարել այնպիսի մի լուրջ պատմիչ, վորպիսին ե Տակիտոսը³⁾:

Հիմա տեսնենք մյուս կողմը — Հռոմը: Սա արդեն մի յերեւոյթ ե, բոլորովին խորթ Արևելքին, ծնվելու մեծացել ե Յեվրոպայում, ոժտված ե բարձր կուլտուրայով, զինվորական կազմակերպությունը և արշավներ գործելու արհեստը հասցըել ե ժամանակի տեսակետից կատարելագործության, ապրում ե պատերազմներով, հաղթում ե ու հարստանում աշխարհներ կողոպտելով, միլիոնավոր ժարդիկ ստրկության վերածելով ու իրեն ծառայեցնելով:

¹⁾ Ibid. p. 9.

²⁾ Սարաքոն, XI, 9, 1.

³⁾ Տակիտոս Տարեգրը. Վենետիկ, 1872, № 362.

Մեզանում մինչև որս հոռմեյական իմպերիալիզմը հասկացվել է լոկ նվաճողական փառասիրության տեսակետից: Հռոմի բանակ-ների յեկարատն գրավությունը, վորոնց ծանրության կենտրոնը կազմում եր Արաքսի միջին հոսանքը կամ Արարատյան յերկիրը, նկարագրվում եյին իրեւ յեկան, գրավեցին, նստեցին, հետո ելի գնացին, ելի յեկան, և այսպես շարունակ: Կարծես Հռոմի լեզիոնները զինվորական զրուանքներ եյին կատարում, կամ այնքան արդեն կառուտ եյին դափնիների, վոր այնքան հետու և դժվարին արշամներ եյին հանձն առնում, և յեթե այսոր Կառոնի գյուղի մոտ մեացել են հոռմեյական ավերակների սքանչելի բեկորները, այս միայն այն ե նշանակում, վոր հոռմեյական արվեստի բոլոր սրբություններով կառուցված տաճարը և նրա շուրջը տարածված մեծ կայանը ունեցել են միակ նպատակ՝ վայելելու յերկու քայլի վրա հորդահոս վազող աղրյուրի պաղ ջուրը:

Վոչ, այսպես չեր դարավոր իրողությունը: Հռոմեյական իմպերիալիզմը ծնեցրեց Հռոմի կապիտալիզմը, վորպիսզի դառնա նրա սպասավորը և աշխարհից աշխարհ ընկնելով՝ շահեր նվաճե նրա համար: Հռոմի բանկիրները, կապալառուները և մատակարարները — ահա ովքեր եյին հոռմեյական լեզիոնների քայլեցնողները: Հարկավոր եյին ոտար մարզեր՝ սրանց գաղութավորելու, շահագործելու համար: Յեկ բանակի յետելից զեպի ոտար յերկիրներն եյին շարժվում կապիտալիստական տղուկների ամրող բանակներ, վորոնք ունեյին տեսակ տեսակ հանձնառություններ — հարկերի հավաքում, զերիների առևտուր, տեղի հողային հարստությունների, արդյունագործական ձեռնարկությունների շահագործում և այլն, և այս բոլորը պիտի հովանավորեյին և պաշտպանեյին յերկիրները գրաված հոռմեյական զորքերը:¹⁾ Թե վորքան բազմաթիվ եյին զինվորական արշամներին հետևող այս վայելուների վոհմակները, — կարելի յե հետևեցնել այն հանգամանքից, վոր, յերբ Հռոմի վիխերիմ թշնամի Միհրդատ Պոնտացին հրաման արձակեց վոչնչացնել Փոքր Ասիայի բնակիչ հոռմեյացիներին, այդ յերկրի զանազան համայնքներում ջարդվեցին 80,000 իտալացիներ:²⁾ Այսուհետև այս հոռմեյական ջարդը մի տեսակ սովորություն եր գառնում Ասիա նահանգում: Կովկասի լեռներից իջնում եյին ցեղեր և մասնակի կոտորածներ եյին սարքում այս ու այն քաղաքում:³⁾ Այս արյունահեղություններն ապացույց են,

¹⁾ В. Ю. Виппер — Очерки Истории Римск. Импер., Бернн, 1923, гл. V

²⁾ Д. Комчаловский — «Экономическая История Рима» М. 1925 с. 78

³⁾ Г. Ферреро — «Величие и падение Рима», т. IV, М. 1920, с. 154

թե մինչև վոր աստիճան կատաղի յեր տեղական ազգարնակության աստելությունը դեպի յեկվոր շահագործողները և մյուս կողմից ել թե վորքան այդ շահագործողները կարու եյին լեզիոնների արթուն և յեռանդուն պաշապանության, վոր և դառնում եր կապիտալի ձեռքին գտնվող հոռմեյական կառավարության գլխավոր հոգսերի առարկա:

Այս կողմից ուսանելի և հետաքրքրական են այն խրատները, վոր տալիս եր կապիտալիստական խավերի գաղափարախոս Կիերոնը Հայաստանը նորից նվաճած զորավար Պոմպեոսին, յերբ սա, կապիտալիստական դասակարգից առաջ քաշված, գնում եր փոխարինելու Լուկուլոսին, վոր արիստոկրատ դասակարգին եր պատկանում և վոր, չնայած իր փայլուն հաղթություններին, պաշտոնանկ եր յեղել իր զինվորների ձեռքով, շնորհիվ այն պրոպագանդի, վոր տարածել եյին բանակի մեջ նորմից գնացած կապիտալիստական գործակալները: Կիերոնը, հիշեցնելով Պոմպեոսին, թե վարքան մեծ կարեսորություն ունի Ասիա նահանգն իր բնական հարստություններով, զարգացած յերկրագործությամբ, ընդուրածակ արտատեղիներով և արտահանության համար ողտակար արդյունագործությամբ, դարձնում եր նրա ուշադրությունն այն անապահովության վրա, վոր տիրում եր այնտեղ և առաջ եր բերում այն դրությունը, վոր մարդիկ վախից թողնում են իրանց տներն ու դաշտերը, և այսպիսով մնասվում են պետական գանձարանը կամ, ավելի ճիշտ, գանձարանի գործակալ և հարկահավաքության մեջ իրանց համար խոշոր հարստություններ դիմու կապալառուները, վորոնց Հռոմի հոչակավոր հոեստորն անվանում եր «հարգեսոր և պատվավոր», և գտնում եր, վոր առաջ ու առաջ սրանք պիտի վայելին գլխավոր հրամանատարի խնամուտ ուշադրությունը, քանի վոր նրանք «իրանց դրամական գործողություններն ու կապիտալները տարել են այդ յերկիրը, իսկ սրանց շահերը, ինքն ըստ ինքյան, արժանի յեն ձեր ուշադրության իրավ, յեթե մենք արդարացի կերպով արքունական հասույթների մեջ միշտ տեսել ենք մեր պետության զարկերակները, նույնքան արդարացի կերպով անվանել ենք այն դասակարգը, վոր վարում ե այդ հասույթներ, մյուս դասակարգերի գոյության յերաշխիք: Բայց, բացի դրանից, մյուս դասակարգերի անդամներն ել, նախաձեռնող և գործունյա մարդիկ, մասամբ իրանք են դրամական շըրջանառություններով զբաղվում Ասիայի մեջ, ուստի, իրրե բացականեր, իրավունք ունեն ստանալու ձեր աջակցությունը, մասամբ ել մեծ կապիտալներ են տեղավորել այդ նահանգի մեջ: Այսպիս

սով ինքը՝ մարդասիրությունը պահանջում և ձեզանից, վոր դուք փրկեք մեր այնքան բազմաթիվ համաքաղաքացիներին ճախորդությունից, բայց ի վերա այսր ամենայնի, ձեր խոհականությունը պիտի թելագրե ձեզ, թե այդքան քաղաքացիների քայքայումը չե կարող անհետ անցնել և մեր պետության կյանքի համար: Ի հարկի, կարելի յե առարկել, թե նրանց կորցնելուց հետո մենք կարող ենք հաղթությունների ճանապարհով վերադարձնել մեր յեկամուտները, բայց նախ այս բանի մեջ ոգուտ քիչ կա, վորովհետեւ նախկին ընկերությունները քայքայվելով, ի վիճակի չեն լինի վերցնել նրանց կապալը, իսկ ուրիշ ընկերություններ վախից մոտ չեն գա, հետո նաև մենք պետք ե լավ հիշենք, թե ինչի սովորեցրեց մեզ հենց այս իսկ Ասիան և ինքն այդ Միհրդատը ասիական պատերազմի սկզբում, լավ վոր այդ դասը մեղ չափաղանց թանգ նստեց. յերբ այդ միջոցին բազմաթիվ քաղաքացիները կորցրին Ասիայում մեծամեծ կապիտալներ, Հռոմում վճարումները կանգ առան և բոլոր կուրսերն ընկան: Ուրիշ կերպ չի կարող լինել, անկարելի յե, վոր մի պետության մեջ շատ քաղաքացիները կորցնեն իրանց կարողությունը, չքաշելով այդ խորտակման մեջ և ուրիշ անձանց մասսաներ: Պաշտպանեցեք, ուրիշներ, այդ վտանգից մեր պետությունը և հավատացեք, յեթե վոչ ինձ, գոնե ձեր սեփական աչքերին. Հռոմի կուրսերը, Հռոմի դրամական գործողությունները, վորոնք կատարվում են այսեղ, Ֆորումում, սերտ և որդանական կապակցության մեջ են գտնվում Ասիայում կատարվող դրամական շրջանառությունների հետ, այս վերջինների խորտակումը չի կարող չքաշել առաջիններին ել միենալուն անդունդի մեջ:¹⁾

Ահա ինչ եր նշանակում լինել հոռմեյական նահանգ: Նվաճումը զինվորական չեր, այլ գերազանցորեն տնտեսական և հոռմեյական զինվորը հոռմեյական կապիտալների պահապանն եր: Այսպիսով շահագործվող գաղութը հարցուրավոր կենսական թելերով կապկապված եր պետության կենտրոնի հետ և հոռմեյական աշխարհածավալ պետության հրամանատարը Հռոմի բորսան եր, նրա ֆորումը:

Հայաստանը Ասիա նահանգին սահմանակից եր և նրանից պակաս կ ըստություն չուներ վաչ միայն ոպազմագիտական, այլ մասնավորապես նաև տնտեսական տեսակետից: Լինելով հոռմեյական իմպերիալիզմի առաջավոր պահակն Արևելքում, վոր ապահովում

1) Кончаловский. С. 79—81.

2) Լեռ — Խոջյական կապիտալ

եր տիրապետության հնարյավորությունը Յեփրատ-Տիգրիսյան հովտի վրա մինչև Պարսից ծոցը, նա միաժամանակ ուներ իր մեջ սեփական, տեղային հարստության այնպիսի աղբյուրներ, վորոնք չեյին կարող չգրավել հոռմեյական զինվորին կընկալու հետևող հոռմեյական կապիտալները։ Հոռմեյական զինվորական գրավումը ամբողջ Հայաստանը չեր բունում, այլ նրա մի մասը, և յեթե այդ մասը Արարատն եր և վոչ թե մի այլ նահանգ, այս ել հենց նույն այն պատճառով, վոր նույն այս նահանգը, և վոչ մի այլ ուրիշը, դարձրել եր հայ պետության կենտրոն, այն ել նրա տնտեսական առաջնակարգ կարևորության պատճառով։ Այստեղ եր, վոր նստեց Հոռմի զինվորական գրավումը և այնքան ամուր, վոր անհրաժեշտություն համարվեց Գառնի փոքրիկ, բայց մեծածախս տաճարի դժվար իրագործելի կառուցումը։ Յեվ զինվորական գրավման հետ Արարատյան յերկրում ամուր նոտում եր նաև Հոռմի կապիտալիստական գրավումը, վորի տրամադրության տակ եյին մտնում իր բերրիությամբ հոչակված հողի բազմազան մշակույթները։ Յեթե Ասիա նահանգում Հոռմի տնտեսական հենարաններից զլիսավորների թվումն եյին գորգագործության խոշոր գործարանները և վոսկենուռ դիպակների արվեստագործությունը,¹⁾ Հայաստանն ել հայտնի յեր իր գորգերով, իսկ վոսկեթել դիպակագործությամբ արաբական շրջանում հոչակված եր Դվին քաղաքը, վորի գործվածքներն ամբողջ Արեւելքում կրում եյին «հակական ապրանք» անունը,²⁾ մի հոչակ, վոր, անշուշտ չեր կարող միանգամից ստեղծվել, այլ արդյունք եր գարերի արհեստագիտական գարգացման։ Մեզ այստեղ կարիք չկա մանրամասներու, թե արտահանության ուրիշ ինչ արժեքագործություններ կարող եր ոգտագործել Արարատյան յերկրում նստած հոռմեյական կապիտալը — ըավական և հիշել մեկը — վորդան կարմիրը։

Այսպիսով մենք ունենք մեր առջև մի չափականց խոշոր կենսական յերևույթ — յելքոպական կապիտալը հայ ժողովրդի մեջ, նրա յերկրում։ Այս կապիտալը միայն կեղեքել, տանել չգիտեր, այլ և տնտեսական միջավայր կազմակերպել՝ համապատասխան իր շահագործման, արդյունավորման պահանջների։ Այս նշանակում եր հոռմեյական կարգերի ներածում Հայաստանի մեջ, վոր մինչև Հոռմեյացիներին ճանաչելը գտնվում եր Իրանի տնտեսավարական

1) Г. Ферреро — «Вел. и пад. Рима» т. IV, с. 153.

2) Դվինի շատ զարգացած բրդի և մետաքսի գործվածքների արդյունաբերությունը սքանչացումով նկարագրում և արաբացի աշխարհագիր Ալ-Իստահերը (Х.դար), ծ. իմ «Հայոց Պատմություն», հատոր յերկու, գիրք Ա. (ձեռագիր)։

կարգերի խիստ ազդեցության տակ։ Քաղաքական ազդեցությունների խիստ մրցակցության հետ զուգընթացաբար զնում և տրնտեսական ազդեցությունների մրցակցությունը։ Գերակշռող հանդիսանում եր, իհարկե, յեվրոպական մեթոդը, իրեւ ավելի բարձրը և ուժեղը։ Բայց նա ուներ և իր ակար կողմը, և այդ այն եր, վոր կապիտած լինելով հոռմեյական կապիտալի հետ, կապվում եր և հոռմեյական զինվորական գրավման տարածության հետ, անկարող թեակոխելու այնպիսի հողամասեր, ուր հոռմայեցի զինվոր չկար։ Այս նշանակում եր, վոր Հայաստանի ամբողջ տարածության վրա միայն Արարատյան յերկիրն եր տնտեսական նոր յերկույթի կրկես դառնում, ուրիմն և մի տեսակ բացառություն՝ հայ համատարած իրականության մեջ։

Արդ՝ զիմելով այդ բացառությունը հատկանշող տնտեսական ձևերին, մենք տեսնում ենք ամենից առաջ քաղաքային անտեսության խիստ զարգացումը մի համեմատաբար փոքր տարածության վրա, բայց անշուշտ աչքաթող չեր անվում և կապիտալիստական զյուղատնտեսությունը, վորին հոժարությամբ նվիրվում եյին հոռմայեցիներն ոտար յերկրներում, ընտրելով դրա համար— նվաճողի, իհարկե, իրավունքով, — ամենալավ և բերրի հողաբաժիններ։ Աշխատանքի հիմք չեր կարող չինել այն, ինչ զործ եր ածում ամբողջ հին աշխարհը, այն և ստրկությունը։

Հայ ժողովրդի պատմական կյանքի վաղ արշալույսին մենք տեսնում ենք նրան տնտեսական զարգացման ցած աստիճանի վրա — խորունկ տոնմատիրական նախնականության մեջ։ Բսենությունը շտեսավ և վոչ մի քաղաք Հայաստանում։ Հետագա զարգացման ընթացքում, մանավանդ հելլենահոռմեյական աշխարհի հետ ունեցած շփումների հետևանքով, անհրաժեշտ է դառնում քաղաքային տնտեսությունը, բայց վորովհետև հայ ժողովուրդը տնտեսապես զարգացած չեր քաղաքային տարր դառնալու չափ, ուստի հայ թագավորները, Արտաշես և Տիգրան, լցնում եյին իրանց մայրաքաղաքները — Արտաշատ և Տիգրանակերտ — ոտարազդի ազգաբնակությամբ, առաջինը՝ մարերով և յերկրորդը՝ հույներով։ Մանավանդ վերջիններս դառնում են խոշոր ներգաղթերի առարկա և լրացնում են քաղաքային տարրի պակասությունը Հայաստանի մի քանի վայրերում, առանձնապես Արարատյան յերկրում։ Հոռմեյական կառավարությունը, նախանձախնդիր քաղաքային տնտեսության զարգացման և ծավալման, խրախուսում եր այդ հրեյական ներգաղթերը և հենց այդ նպատակով եր, յերկե, վոր նա հայ թագավորական գահի վրա նստեցրեց մի քանի թա-

գավորներ, վորոնք հրեյական ծագում ունեյին և կրում եյին Տիգրան անունը: Հրեյական տարբն իր խոշորագույն մասով կենտրոնանում եր այն քաղաքներում, վորոնք գտնվում եյին Արարատյան յերկրի միջից գնացող հոռմեյական մեծ ռազմական ճանապարհի վրա, վոր միաժամանակ նաև հոռմի կապիտալիսերի ճանապարհն եր, Նա սկսվում եր Արտաշատից, ընդունում եր իր մեջ Նախճավանի մեծ տունտրական ուղին, գնում եր Վաղարշապատ, այնտեղից Յերվանդաշատ Ախուրյան գետի վրա, ուր անցնում եր Արաքսի աջ ափը և բարձրանալով Բարթողյան լեռնանցքներով, իջնում եր Արևելյան Յեփրատի (Արածանիի) հովիտը, ուր գըտնը գումար եր Զարեհնավան քաղաքը և գնում եր գետի Բասեն և Կարին:

Քաղաքային տնտեսության (առևտուր, արդյունագործություն) այս արտակարգ զարգացումը Արարատի մեջ խոշոր նշանակություն ուներ նաև յերկրի քաղաքական և վարչական կազմակերպության տեսակետից: Ամբողջ պետությունը ավատական, այսինքն գավառական հատվածականության հիմքերի վրա յեր կառուցված կենտրոնական իշխանությունը, վոր պետի կազ հանդիսանար այդ բազմաթիվ առանձնությունների մեջ, ինքն ել մի ավատական մարմին եր և նրա ներկայացուցիչը, վոր ամենայն հայոց թագավոր եր կոչվում, իր նյութական միջոցներով շատ չեր տարբերվում մի առաջնակարգ նախարարից: Նրա կալվածների մեծագույն մասը գտնվում եր Արարատում, և այս հարստությունը չեր կարող պահել նրան մի թագավորի թեկուղ համեստ գիրքում, յեթե չլինեյին առևտրա-արդյունաբերական այն կենտրոնները, վորոնց անունները թվեցինք վերեսում և վորոնց վրա յել հենքում եր կենտրոնական իշխանությունը: Այս զրությունը շահավետ եր թե Հռոմի և թե պարթևական Իրանի համար, վորովհետեւ Արարատի թագավորը մերթ մեկի, մերթ մյուսի վասարն եր, յերբեմն և յերկուսինը միասին, հետեւարար և նրանց ոգուան եր, վոր այդ վասսալը լինի իրեն հպատակ ավատականությունիցքարձը իր ույժով ու գիրքով, վորպեսզի կարողանա կարգ պահպանել այդ կալվածատերերի կենտրոնախույս ըմբռատ ձգտումների մեջ:

Թե ինքն Արարատյան արքունիքն ել լավ ըմբռանում եր քաղաքային տնտեսության մեծ նշանակությունն իր իսկ շահերի տեսակետից, ցույց եր տալիս նույնանման առևտրա-արդյունագործական կենտրոնի, Զարիշատ քաղաքի գոյությունը հոռմեյական մեծ ռազմակապիտալիստական ճանապարհից դուրս, Աղինովիտ գավառում (Ղանի լճի հյուսիսարևելյան կողմ), վոր թագա-

վորող տոհմի սեփականությունն եր կազմում և հատկացված եր թագավորի վորդիներին իրեն բնակության տեղ և ապրուստի միջոց:

Չնայած, վոր մեր հին աղբյուրները միանգամայն լուռ ու մունջ են Արարատյան յերկրի տնտեսական շարժումների վերաբերմամբ, մենք, այնուամենայնիվ, կարող ենք մի փոքրիկ պատկեր տալ, թե ինչ զարդացման եր կարողանում հասնել քաղաքային տնտեսությունը¹) արարատյան իրականության մեջ: Յերվանդաշատ մեծ քաղաքի արվարձանը կազմած Յերվանդակերտն այսպես և նկարագրում Մովսես Խորենացին:

«Քաղցր և ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին երուանդակերտի, զոր յօրինեաց նույն ինքն երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի ըսու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպես ական բիր, իսկ շուրջ զմարդկութեամբն ծաղկոցաց և տարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբութիւն զայլ բոլորակութիւն ական իսկ զրագմութիւն այգեստանոց, իբր զարաւեանաց խիտ և գեղեցիկ ծիր, որոյ հիւսիսային կողմանն զիր կարակնաձև՝ արգարի գեղաւոր կուսից յօնից գարեանդաց համեմատ իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց, ծնոտից պարզութեան գեղեցկութիւն, իսկ գետն բերանացեալ զարւանդօք ականցն՝ զերկթերթիւն նշանակէ շրթունք և այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմ գողցես բարձրաւանդակ թագաւորանիսոն զհայեցուածոն ունի և արգարի բերքի և թագաւորական զաստակերտն»:²

Պակաս չեր և հոռմի կառավարության հոգացողությունը, վոր արարատյան քաղաքային տնտեսությունը բարգավաճ զրության մեջ լինի: Հայաստանի մեջ ել, ինչպես և Ասիայի այլ յերկիրներում, հաջող վարած պատերազմների հետեւանքով հարստությունների մեծ կուտակումներ եյին գոյացել, վորոնք և զրուում եյին հդոմայեցի զինվորականների ավագակային հակումները: Նրանք կողոպտեցին միջազգային ուխտատեղի գարձած և իր հարստություններով հոչակված Անահիտի տաճարը: Լուկուլլոսն ահազին հարստություններ տարավ Հայաստանից, թալանի մատներով Տիգրանակերտ մայրաքաղաքը, հարավային Հայաստանում: Ա. վելիվատթար վիճակի մեջ ընկալ մյուս մայրաքաղաքը, Արտաշատ, Արաքսի

1) Քաղաքային տնտեսություն ասելով, չպետք և կարծել զյուղային տեսության կատարյալ բացակայություն քաղաքներում Միջնադարյան քաղաքը Յեկուպայում ուներ իր մեջ և հողագործ աղջաբնակություն, վոր անասնապահ ել եր և այսպիսով, ինչպես տառմ և մի հոտազուող, միջնադարյան քաղաքի մեջ թագավորում իր զյուղական մթնոլորտ (տ. Средневековый Быт» ժողովածու, Լениնգրад, 1925 շ. 152): Այսպիսի եր և մեջանում մինչև իսկ հորացույն ժամանակներում, որինակ Յերեանը (տ. Шопен—„Исторический памятник состояния Армянской обл. в эпоху ее присоединения к Росс. Импер.“, СПБ 1 8:8).

2) Խորենացի, Խր.

վրա։ Յերկու անգամ նա յենթարկվեց բարբարոսական կործանման և կոտորածի։ Առաջին անգամ այդ «քաջությունը» ցույց եր տալիս քաջ համարվող կորբուլոն զորավարը։ Հոռմը հակառակ եր Արտաշատի վոչնչացման մինչ այն աստիճան, վոր նրա իմպերիալիստական գիշատիչ գանձարանը բաց արավ իր գոները և առատ գումար տվեց Արտաշատը նորից վերականգնելու և զարդարելու համար։ Իսկ յերբ յերկրորդ անգամ նույն հոռմեյական կողոպտիչ զինվորական վայրագությունը կը կնեց նույն կործանումը, դարձյալ նույն գանձարանն եր, վոր Արտաշատի փոխարեն շինեց Կայնապոլիս կամ նոր Քաղաք, այլ և Քաղաքուղաշտ անունով քաղաքը, վոր հետո կոչվեց Վաղարշապատ։

2.

Այսպես եր Հայաստանը պարթեա-հոռմեյական տիրապետության ժամանակ։

Սասանյանների գործած պետական հեղաշրջումը մի սասանեցուցիչ հարված եր բոլոր պարթեական փոխարքայությունների համար։ Բնականորեն նրանք բոլորը պիտի ջնջվեյին։ Բայց Հայաստանը, շնորհիվ այն հանգամանքի, վոր հոռմեյական իմպերիալիզմն այստեղ շահեր ուներ, կարող յեղավ պարթեական մնալ։ Կառչելով Հոռմի ույժին Այստեղից առաջանում եր դինաստիական թշնամություն հայ Արշակունիների և Սասանյանների միջև, և այս թշնամությունը վերածվում եր յերկարատև պատերազմների։ Սասանյաններին մնում եր նորից զենքով նվաճել Հայաստանը, բայց այստեղ իրանց առջև տեսնում եյին հոռմեյական լեզիոնները, վորոնք վերականգնում եյին status quo-ն Արևելքում և այսպիսով հանգիսանում եյին իսկական ֆրկիչներ հայ Արշակունիների, քանի վոր մենամարտությունը փոքրիկ ու թույլ Հայաստանի և Սասանյան հզոր պետության մեջ չեր կարող խոստանալ վորմել վճռել վճռական հաջողություն առաջինի համար։

Այստեղից ինքն ըստ ինքյան հասկանալի յե, թե վորքան մեծ, կյանքի և մահվան նշանակություն ունեցող անհրաժեշտություն եր դառնում հայ Արշակունիների համար՝ իսպառ հրաժարվելը իրանական ազգեցությունից և միմիայն Հոռմի վասսալը գառնալու վերջնական ամրապնդումը։ Յեվ իրավ, Հայաստանի պարթեթագավորները, Սասանյանների ժամանակ, հոռմեյական պաշտոնյանների դիրքումն են և նրանցից մեկը, Տրդատը յերկար ժամանակ ապրում է Հոռմում, դաստիարակվում է հոռմեյական վոգով՝ մինչև իսկ յուրացնում և հոռմեյական փիլիսոփայությունը։ Արա-

րատյան թագավորության մեջ այսպիսով քաղաքական և տնտեսական իր հզոր ազգեցությունների վրա Հոռմն ավելացնում եր և մշակույթային ազգեցությունը — լուսավորություն, արվեստ, գիտություն։ Յեվրոպական մի կես-գաղութ եր դառնում Հայաստանի այդ միջնաշխարհը, մշակելով իր սեփական ազնվագետական նիստու կացը, քաղաքակրթական պահանջները և այլն¹⁾ մինչդեռ նրա շուրջը, բարձրագանդակների վրա, արտային տնտեսությունն եր տիրում իր աղքատ նախնականությամբ, վոր հասնում եր այն աստիճան, վոր վայրեր կային, ուր գեռ հայտնի չեր միս յեփելը²⁾։

Բայց չորրորդ դարի առաջին քառորդում հոռմեյական պետականությունը յենթարկվում եր արմատական փոփոխության։ Կոնստանդիանոս կայսրը, կամենալով ազատել կայսրների գահը Հոռմ քաղաքի հանրապետական ավանդություններից և այսպիսով ուժեղացնել միահեծան իշխանության սկզբունքները, պետական կրոնի աստիճանին եր բարձրացնում քրիստոնեյությունը, ապա և փոխադրում եր իր գահը Հոռմից Բյուզանդիա, վոր և նրա անունով կոչվեց Կոնստանդիանուպոլիս։ Յերկու աշխարհի փոխարկություն եր այս Պատմության բեմից իշխում եր հեթանոսական Հոռմն՝ իր ապերասան կենցաղով, զլիառվին անհավատ, իսկ նրա տեղ բեմ եր մտնում յեպիսկոպոսների մշակած նոր կրոնն՝ իր ֆանատիկոսական անհամբերողությամբ և ճգնավորական բթամտությամբ, վորոնք առանձնապես թանձրացած եյին հունական միջավայրում և պիտի նվաճեյին նաև զեղիս ու հղփացած Հոռմը։

Տալով քրիստոնեյության պետական-նվաճողական ույժ, կայսրը հոգս եր տանում նույնպես, վոր նոր յեկեղեցին տարածվի և ուրիշ յերկիրներում, առաջին հերթին, ինարկե, կայսրության վերաբերվող վասսալական յերկիրներում։ Քրիստոնեյությունն ընդունելու և պաշտօնական կրոն դարձնելու հրաման ստանում եյին Հայաստանի և Վրաստանի վասսալ թագավորները։ Հասկանալի յե, վոր մի այսպիսի առաջարկություն անտես անել չեյին կարող մանավանդ հայ Արշակունիները, վորոնց բախտը կախված եր ամբողջովին հոռմեյական կայսրությունից։

Սակայն քրիստոնեյությունը Հայաստանին միանդամայն անձանութ կրոն չեր։ Նա վաղուց մուտք եր գործել այդ յերկիրը, դանդաղ տարածվում եր, առանց մեծամեծ ազմուկներ և շարժում-

¹⁾ Հայ աղնվականության տնային կենցաղը մանրամասն նկարագրել և Յեղիշեն իր պատմության ութերորդ հեղանակի այն հատվածում, վոր սկսվում և «իսկ կանայք» խոռքերով։

²⁾ Խորեն. Բ.,

ներ առաջացնելու։ Գուցե բնական դարձացման ընթացքին թողնվելով, նրան աջողվեր կատարել յերկրի նվաճումը խաղաղ պրոպագանդի միջոցով։ Այս միանգամայն հնարավոր եր այդ նոր պաշտամունքի համար, վորովհետեւ նա սիրիական քրիստոնեությունն եր, վոր Հայաստան մտնելու հետ միաժամանակ, մուտք եր դործել նույնիսկ և Պարսկաստան իրեւ խաղաղ և չեզոք կրոնական յերեւոյթ և իր քարոզության կենարոն եր գարձել Սասանյան մայրաքաղաք Տիգրանը, հիմնելով այնտեղ յեկեղեցի և յեպիսկոպոսական աթոռ։ Սիրիական միախոնարության միակ ույժն ու հմայքը սիրիացի վաճառականի թափառիկ առևտրական կապիտալն եր, վորի ուսերը հեծած նոր կրոնը գնաց աննկատելի կերպով տարածվելու մինչև Հնդկաստան։

Սիրիական այդ աղքատ քրիստոնեության վրա հայ Արշակունիները ուշադրություն չեյին գարձնում։ Կար քրիստոնեություն և քրիստոնեյություն։ Հարկավոր եր վոչ թե վաճառականական, այլ կայսերական քրիստոնեյություն, մինչև ատամները զինված մի հզոր պետականություն, վորի լեզուն այնքան ավետարանն ու սազմուր չե, վորքան յերկաթն ու հուրը։ Հարկավոր եր հունական քրիստոնեյությունը, վոր Արեւելքում գալիս եր փոխարինելու հոռմեյական իմպերիալիզմը։ Այս կլիներ, ամենից առաջ, լավագույն պաշտպանություն հայ Արշակունիների դինաստիական շահերի ընդգեմ Սասանյան վտանգի։

Այսպես եր ստեղծվում դինաստիական մեծ անհրաժեշտությունը Արարատյան կենարոնում։ Սակայն նրա իրագործումը հեշտ չեր բոլորովին։ Միակամություն չեր կարող լինել այնպիսի մի բազմագլխյան ավատական յերկրում, ուր այնքան շատ եյին հետամնաց տնտեսական ձևերի ձգողությունը դեպի Իրան, մշակույթային առտիճանների տարրեր շերտավորումները և այլն։ Այս, ինչ միանգամայն հասկանալի յեր և ցանկալի Արարատյան խիսքաղաքային անտեսության սրտում, կարող եր միանգամայն մութու խորթ լինել Հայաստանի պարարտ արոտներում, ուր նախարարական տնտեսություններն եյին՝ մեծամեծ հոտերից բաղկացած։

Այս մեծ անհրաժեշտության հողի վրա յեր ահա, մեծ տարակուսանքների և յերերումների մեջ, վոր անհայտությունից արագ դուրս յեկավ և դրությունն իր ձեռքի մեջ առավ և զործել սկսեց մի տոհմ, վոր առանձնակի տոհմանուն չի թողել մերթ կոչվում և Պարթե, մերթ Պահրավ, բայց ավելի հաճախորեն՝ իր հիմնադրի անունով Գրիգորի տոհմ։ և վորովհետեւ այս Գրիգորը յեկեղեցական գրականության մեջ աստվածացված և Լուս

ապօպիչ տիտղոսով, ուստի սովորական և դարձել անվանել այդ տոհմը Լուսավորչի տոհմ։

Նա իսկ վոր մացրեց Հայաստանի մեջ կայսրների քրիստոնեյությունը և գլուխ հանեց նոր պետական կրոնի ամրապնդման գժվար գործը։ Բայց այս հաջողությունը հայ Արշակունիների փրկության համար չեր, վոչ ել յերկրի անտեսական առաջացումն եր ապահովում։ Ընդհակառակը։

Պատմական քննադատության յերեք չպիտի հաջողվի պարզել այս Գրիգորի իսկական ծագումը։ Թեև նա ունի իր պատմությունը, վորի շուրջը գոյացել և մի ամքողջ գրականություն։ Բայց այդ պատմությունն այնքան խճողված և առասպելներով, հրաշքներով, մարդկային միամտությունը հիմարացնելու և խարիլու ճիգերով, վոր ճշմարտության մասին միայն յենթադրությունները կարելի յե անել, վորոնց մեջ միանմանություն անգամ չի կարելի գտնել։ Հայ յեկեղեցականությանն այսպիսի վողորմելի միջոցով աջողվել և արգեն բոլոր յերկիրների և ժամանակաների կղերին հատուկ քողարկված «սուրբ» ստեր ու խարդախություններ կուտակել ու նրանց շատությամբ մոլորեցնել նախապաշտպան մարդկությունը և մի տեսակ կիսաստված զարձնել Գրիգորին իրեւ հատուցում այն մեծ ջանքերի, վորոնց շնորհիվ Հայաստանը գարձավ քրիստոնյա պետություն։

Բայց այսքան անհունապես բարձրացված և փառաբանված գործիչի ծագումը մեզ կարող և և չետաքրքրել Կարեորն այն չե, թե հույն եր նա արդյոք, հայացած պարթե, թե մի ուրիշ ազգից ու յերկրից։ Կարեորը նրա կատարած գործն ի։ Յեվ այս գործի գնահատության մեջ մենք այնքան ել անողնական չենք։ Հենց այն պատմությունը, վոր հերոսացրել ու սրբացրել և նրան, թաղելով նրա անձը հրաշքների, հիացական որհներգների մեջ, նույն տյդ պատմությունը, նույն այդ Ագաթանգեղոսն իր անվերջ շատախոսություններով մեզ շատ նյութ և տալիս իմանալու համար, թե ինչ տեսակ գործիչ եր Հայաստանը քրիստոնեյացնող Գրիգորը։

Ամենից առաջ տեսնում ենք, վոր դա աղքատների, զրկվածների և առհասարակ խոնարհների հերյուրած Քրիստոսի խաղաղութեղ աշակերտը չե, այլ յեկեղեցականացրած, այսինքն՝ ուղղմականացրած, սուրբ հաղցրած Քրիստոսի մի անողոք և զաժան գորապետը, վորի ձեռքում միայն մի միջոց կա՝ համողելու և խոռնացնեցնելու — զինական բոնություն։ Հայաստանի դարձի պատմությունը զինվորական արշամերի, մի պատմություն և Թագա-

վորը, վորին նույնակես շատ փքել—ուոցրել ե յեկեղեցական ներբողականությունը, մի կատարյալ վոչնչություն ե այդ մարդու առաջ, իր զորքն ու զենքը տվել ե նրան, ինքը մի կողմ քաշվել, յերեկ գոհ ե, վոր կատարվում ե Կոստանդիանոսի կամքը և ամրապնդվում ե Արշակունիների գահը Հայաստանում։ Այդպիսի մի ապիկար բնավորություն առանց այլքայլության պիտի հաղթանարկեր Գրիգորի յեռանդի, ճարպիկության և մանավանդ կազմակերպչական մեծ կարողության առաջ։

Յեկըրկը «քրիստոնեյացումը» կատարվում եր հեշտ, կայծակնային արագությամբ։ Այդ մի զաղափարական շարժում չեր մտցված ժողովրդական զանգվածների մեջ՝ համոզում, գիտակցություն առաջ բերելու համար։ Այդ մի հրաման եր, ձևական մի արարողություն։ Խուսավորում եր Գրիգորը վոչ թե խոսքով, համառ ու յերկարատե քարոզությամբ, այլ հրով և յերկաթով։ Հեթանոսական Հայաստանում մեհյանը մի ավատական հիմնարկություն եր, ուժեղ ու հեղինակավոր, մանավանդ նրանով, վոր հարստությունների կուտակումներ եր պարունակումիր մեջ։ Հիմնովին կործանել այդ տաճարները, կոտորել կամ փախցնել նրասպաշտոնյաններին — այս եր, վոր Գրիգորի համար նշանակում եր «տարածել քրիստոնեյություն», յերբ նա, թագավորական զորքերի զլուխն անցած, մի տեղից թոշում եր մյուս տեղ՝ մեհյաններ քանդելու և քուրմեր փախցնելու համար։ Ագաթանգիզուր շարունակ այսպիսի արտահայտություններով և հիշատակում իր հերոսի աստվածային առաքելությունները։ Բայց նա չի մոռանում նաև շարունակ և միալար կրկնել վոր կործանված մեհյանի վոսկին ու արծաթը Գրիգորը չեր վոնչացնում, այլ վերցնում եր զանազան նպատակներով գործադրելու համար։

Դաղտնիքը բացված ն։ Նըրազան թալան — անա զլսավորը, միսիոնարության առանցքը, հաջողության մեծ գրավականը։ Մեհյանների հարստությունն, ինարկե, միայն մետաղական չեր։ Ագաթական կարգի մեջ ամենամեծ հարստությունը հողն եր, մեխանման անելլութեամբ Ըալանկառ և լին և մեխանապատեան հողերը։ Այս հարստությունների բաշխման միջոցով եր, վոր Գրիգորը կազմակերպում եր քրիստոնեյական յեկեղեցին Հայաստանում, նրա պաշտոնեյությունը, նրա նվիրապետությունը և այն քաղաքական ուժը, վորի վրա նա պիտի կոթներ։

Քրիստոնեյության այս մուտքը Հայաստան պետք և նշատելիքն մի ամբողջ ավատական շարժում, վորի մեջ տակն ու վրայությունների յեն յենթարկվում հողային հարստությունների

բաշխման ավանդական կարգերը, վոչնչացնելով հին տերերին։ Նոր ավատատերեր առաջ քաշելով, մնացողներին կամ ուժեղացնելով, կամ թուլացնելով, նայած թե ինչպես են պահանջում նոր յեկեղեցու կուսակացական շահերը։ Այսպիսով ավատական գասիմնջոյնում եյին տեսակ-տեսակ խմբավորումներ իրենց ուրույնությունը շահերով, վորոնք հակադիր և հակամարտ զրություններ եյին գոյացնում, փոխարարերությունների և շփումների սրությունն ավելի ևս սաստկացնում։ Ավատականությունն արդեն ինքն ըստ ինքյան դյուրավառ նյութերով հարուստ մի միջավայր եր պատրաստել իր առաջախաղացության մեջ դեպի ընդհանուր և վերջնական հաղթանակ, քրիստոնեյությունն ընկնելով այդ դյուրավառ միջավայրի մեջ, ըռնկեցնում եր ավատական մի ամբողջ հրդեհ՝ ավատական հեղափոխությունը փութացնելու համար։

Նոր, ուժեղ և լավապես կազմակերպված ավատական հիմնարկություն եր գառնում քրիստոնեյական յեկեղեցին, ստանալով ամեն գյուղում առատ հողաբաժիններ և այդպիսով դառնում եր ճորտային տնտեսության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը։ Բայց յեկեղեցական կազմակերպման մեջ առանձնապես կարենը գերը պատկանում եր յեկեղեցու պետին, և Գրիգորն այդ պետի դիրքը կարգավորում եր անձնապես իր համար ամենաոյակապ կերպով։ Պետն ինքն եր և մի ուրիշին այդ տեղը նա չերտա, և ահա այդ, իր փառաբանողների բերանով սրբերի ամենավերին դասի մեջ զրվածը, այդ «հրեշտակ ի մարմիխ-ն, այդ գրեթե ասավածը ցույց եր տալիս, վոր հաշվի ու շահի լավագիտակ մարդ ե, և հարստությունների բաշխման միջոցին անձնապես իրան եր պահում առյուծի բաժինը Իրեն քահանայապետ՝ նա դառնում եր ամենից հարուստ մարդը Հայաստանում, գուցն թագավորի չափ հարուստ, հետեւրար ամենից ուժեղն ու հեղինակավորն ավատական գասիմնջոյնից։ Այս, — յեթե հարցնելու լինենք մեկդերականի, — վոչ թե, ինարկե, իր անձի, իր «հողեղեն շինվածք» համար, աչ մեխան ու մեխան Քրիստոսի փառքի համար։

Փակստու Բյուզանդը, մի մոլի կուսակից Գրիգոր Լուսավորչութոհմի, մի զրեթե անհավատալի թիվ և տալիս նրա կալվածներին, — 15 գավառ¹⁾ իրանց թագն ու պսակը Տարոնի Աշտիշատներ, «մենեան մեծագանձ, — ասում է Ագաթանգեղոսը, — լի ոսկով

1) «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832 թ., յեր, 114:

և արծաթով և բաղում նուերք մեծամեծ թագաւորաց, ձռնեալ անդ»:¹⁾ Բացի իր այս մեծահարուստ բովանդակությունից, մեջանը հոչակված երև և իր կալվածների գեղեցիկ դիրքով ու բնական հարստություններով: Գրիգորը նրան տիրացավ մեծ դժվարություններով, մի ամրող պատերազմի միջոցով, վոր մանրամասն նկարագրված և Զենոր Գլակի անունով մնացած ավանդությունների մեջ: Մենք այստեղ տեսնում ենք քրմական մի խոշոր ավատական յերկիր, վորպիսին Տարոնն եր, վոր հանում եր Գրիգորի տարած աքքունի զորքերի դիմ իր սեփական բանակը, բաղկացած վեց հազար հոգուց և այս ուժը պարտվում է համառ և արյունահեղ դիմագրություն կցույց տալուց հետո: Այսպիսի թանգ գնով ձեռք բերած սքանչելի կալվածը Գրիգորը սեփականում եր իրան:

Յեկեղեցու պետից հետո գալիս եյին նրա իշխանները — յեպիսկոպոսները, վարոնք նույնպես բավարար կալվածներ եյին ստանում Գրիգորից: Թէ վարքան եր նա առատաձեռն այս յերկառաջին բաշխումների մեջ և մանավանդ թե ինչպես եր նա վերաբերվում հայ ժողովրդին պատկանող հոգերին, այս մասին մոտավոր հասկացողություն կարելի յէ կազմել նույն Զենոր Գլակի անունը կրող ավանդություններից: Այստեղ մենք տեսնում ենք Գրիգորին վերագրվող մի նամակ, վորով նա Արևմուտքից յեպիսկոպոսներ և քահանաներ եր հրավիրում՝ Հայաստանի մեջ պաշտոնավարելու համար:

«Մանաւանդ զի, — գրում եր նա մի յեպիսկոպոսի, — զիտէիք եթէ ամենայն գաւառաց եպիսկոպոս պիտոյ են և քահանայա Զի թէպէտ ումանք, որք ուստիք ուստիք եկեղեց եկեղեց են ժողովեալ բայց զի՞նչ են այսոքիկ առ վեց հարիւր և քսան գաւառու հայոց. որի գաւառին մեն մի քահանայ կամ երկու լուկ թէ հանդիպի: Զի դեռ մանկունք երկրիս ի գալրոց են, և ոչ որ ի նոցանէ բաւական քահանայութեան... Ապա աղաչէմք զձեզ, ի մէնչ մի վերջանայր, այլ ամենաշն վստահութեամբ փութացարուք զար զի՞նի արանցդ, զոր յղցաք առ ձեզ եւ եթէ զայցիք, զամենայն երկիրդ եկեղեց և Հարբայ ձեր առաջի ունիմք, յոր վիճակ և բնակեսչիք՝ ձեր եղեցի և որք զի՞նի ձեր, որչափ կենդանի էք զուք և մեք. իսկ երկիրն Մամիկոնէից եթէ հանոյ թուեսցի ձեզ, որպէս և զու իսկ ասէիք՝ զի՞նակնեան տեղին ինձ տուր, և անդ զօր եղուայն իսկ և՛ ձեռնազրեալ հպիսկոպոս, և ըստ կարի աղաչանաց զանուն տեղույն փոխեցաք յիւր աւելի անուն... Սակայն եթէ ինքն տացե, ի մէնչ լիով է, զի այլ ևս յուելում ի պատակերտու: Ապա եթէ զայն ոչ սակայն ամենայն երկիրն առաջի ձեր է, զոր և տեսանք տեղի փայելու, այն ձեղու:²⁾

Նկատի ունենալով այս առատարաշխությունը, լսենք Ագաթանգեղոսին, վոր պառմ ե, թէ չորս հարյուր յեպիսկոպոսներ

¹⁾ Ագաթանգեղոս, Վենետիկ, 1862, յեր. 606.

²⁾ Զենոր Ասորի — «Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, յեր. 13.

կային Գրիգորից ձեռնադրված և վիճակների տեսուչներ նշանակված:¹⁾ Բայց այս բոլորը չեն Յեկեղեցին ուներ և իր մեծ բանակը — վանականություն:

«Եւ դարձեալ — զրում և Ագաթանգեղոսը, — բազում և անհամար զունդ գունդու վանականաց ի շէնս և յանչէնս, դաշտական շինակեցու և լեռնակեցու, անձտամուտ և արգելական հաստատէր»²⁾

Սրանց մասին եր, վոր Կեսարիայի յեպիսկոպոսը զրում եր Գրիգորին.

«Եւ Ժողովեացի ի նոյն տեղի հարիւր արանց չափ, որոշեցին ի նոսագիւղ և աւանս մեծամեծ, որպէս զի պիտք վանացն ի նոցանե վճարեցի, և ինչեանք միայն աղօթից և ճգնութեան պարապիցին»³⁾

Ահա վորքան հողային տակնուվրայություններ եր բերում Հայոստանին չորրորդ դարն իր պաշտոնական քրիստոնեյությամբ: Զպետք և մոռանաւ վոր յերկրի մակերեսույթն առանց այն ել կտրտված եր մեծ ու փոքր մասերի և բաժանված եր աշխարհական ավատատերերի կամ նախարարությունների մեջ, իսկ սրանց թիվը, ինչպես ասում են, հասնում եր 900-ի:⁴⁾ Յեթե նույն իսկ իջեցնենք այդ թիվը մինչև 400-ի, ինչպես առաջարկում են վորմանք, այսուամենայնիվ կունենանք մի յերկիր, կտրատված չափազանց մասը մասերի, վորոնց զյուղացի ճորտ ազգարնակությունը ստիպված եր կերպակել աշխարհական և հոգեորբական ձրիակերների անթիվ վոհմակներ:

Տարօնի քրմական խոշոր ավատապետի թյան անկման և կըտրաման հետ, յերեի, կապ. ուներ այն հանդամանքը, վոր այդ գալվառի մնացած խոշորագույն մասին (Հնաշված՝ Աշախշատն ու նրա հարակից հողամասերը) տիրում եր Մամիկոնյան նախարարական տոհմը, վորի բուն հայրենիքը Սպեր գավառն եր և վոր, գառնալով Գրիգորի հետ կալվածակից, անշուշտ վոչ առանց Գրիգորի աջակցության, կապվում եր ամենասերտ կապերով այդ հոգեորբական խոշոր ավատապետի տոհմի հետ: Իսկ թէ ինչ տեսակ խոշոր նվաճում եր այս բանը հունական քրիստոնեյության կողմանակիցների համար, կարելի յէ յեպիսկոպոսներ այն փաստից, վոր Մամիկոնյանները ժառանգարար ունեցին իրանց ձեռքում հայրանական գլխավոր հրամանատարությունը: Այսպիսով քրմական հարուստ կալվածը կապում եր յեկեղեցին զորանոցի հետ և դառ-

¹⁾ Ագաթանգեղոս, յեր. 637.

²⁾ Անդ, յեր. 629.

³⁾ Զենոր, յեր. 11.

⁴⁾ ՏԷս իմ «Հայոց Պատմություն», հատ. Ա, Թիֆլիս, 1917, յեր. 489.

Նում եր մի ամուր պատվանդան, վ չ միայն պաշտամունքի, այլ և այդ պաշտամունքը գլխավորող խոշոր կալվածատիրական տան շահերի համար:

3.

Իսկ մի այլպիսի նեցուկ շատ եր հարկավոր Գրիգորյան տոհմին:

Մեծ հարստությունը, մեծ ույժը, մանավանդ մեծ հեղինակությունը, տանում եյին զարմանալի աջողակ քահանայապետին և դեպի իշխելամոլության և նրա այնպիսի մի տեսակը, վորի նըմանը զուր կլինի վորոնել քրիստոնեյական յեկեղեցու այդ և նախընթաց դարերի տարեզրությունների մեջ: Իր իշխանությունը նա տալիս եր իր վորուն և այլպիսով սկզբնավորվում եր մի ժառանգական քահանայապետություն, մի կղերապետական դինաստիա, վոր ընդհատումներով տեսեց զրեթե մի ամրող դար և, ուրեմն, բավական ժամանակ ունեցավ մշակելու իր համար դինաստիական շահեր ու նախապաշարումներ:

Այս ել մի պետություն եր, դարձյալ ավատական, ինչպես տեսանք, իր անթիվ ու անհամար հողատեր ձրիակերներով, վորոնք, բառիս բուն նշանակությամբ, լավում եյին պետությունը: Այս դրությունը գալիս ընդհարվում եր աշխարհական պետության շահերի հետ: Թագավորական թագը և քահանայապետական խույրը դառնում եյին իրար հակադրված ույժեր, և ընդհարումը դառնում եր անխուսափելի:

Պետականացրած քրիստոնեյությունից հայ Արշակունիները սպասում եյին իրանց խախուտ գահի ամրապնդում, բայց դուրս եր զալիս հակառակը: Բավագան չեր Սասանյան իրանը, բավական չեյին նրա կողմանակից հայ ավատական տերերը և ահա զալիս եր մի յերրորդ ուժեղ կողմ, վոր խարսխված եր հենց այդ խնդրված ու փնտոված բյուզանդականության վրա, բայց իր կուսակցական և դինաստիական շահերով չեր կարող չլինել հակառակորդների շարքերում: Ընդհարումը նրա հետ հասունանում եր արագ կերպով և չորրորդ դարի մի խոշոր մասը լցվում եր այդ ընդհարման անցուղարձերով: Արշակունիներն այդ կովի մեջ թույլ կողմն եյին, վորովհետև նախարարական դասի մեջ կողմնակիցներ չունեյին Խոսում եյին տնտեսական հակամարտ շահերը: Արտային գոտիների ավատականությունը, լինելով Սասանյանների կողմանակից, հեշտությամբ յենթարկվում եր պարսից արքունիքի գայթակղեցուցիչ խոստումներին՝ թե իրանց կորվի

Հայաստանի թագը: Մնում եյին Մամիկոնյանները և նրանց էլողմնակից նախարարները: Տարոնը նույնպես հովտային տնտեսության աշխարհ եր: Բացի զրանից, նրանց՝ Սասանյաններից հեռացնում եր քրիստոնեյությունը, վորի պաշտպանն եյին և բնականաբար բյուզանդական մի կուսակցություն եյին Հայատանում, ուր նրանց հավաքողը, նրանց գլուխը քահանայապետական դինաստիան եր: Այս կուսակցությունն եր հայ Արշակունիների բնական դաշնակիցը, միայն այն պայմանով, վոր թագավորական գահը հպատակեցվի քահանայապետության, և վերջինս ինի պետության ճակատագրի կարգադրիչը թե՛ ներսում և թե դրսում: Որինակը տվել եր Գրիգորը, առանց վորի խորհրդի և թույլտվության Տրդատ թագավորը քայլ չեր անում, և մենք արդեն տեսանք նույն Գրիգորին պետական հողերն աջ ու ձախ ընձայողի գերում, ինչ վոր մի ավատական յերկրի մեջ նշանակում եր լինել գերազույն իշխանավոր, հավասարազոր՝ թագավորին: Այս դիրքը հատկացրին իրանց և Գրիգորի ժառանգները: Տրդատի վորդի Խոտակի ժամանակ պետության տերն ու տնուրենը Գրիգորի վորդի Վրթանես կաթողիկոսն եր:

Բայց Գրիգորի ժառանգների մեջ այս կողմից առանձնապես հոչակավոր ե ներսեսը, վորին յերախտապարտ յեկեղեցին հատկացրել և «Մեծ» տիտղոսը: Այս անսովոր յեռանդուտ, համարձակ, իր կալվածական հարստությունների մեծ ուժով խրոխտ կղերապետը հանդիսացնում եր իրան մի յերկրորդ Գրիգոր, իր ձեռքի մեջ կենարոնացներով վոչ միայն յերկրի ներքին կառավարությունը, այլ և արտաքին հարաբերությունը, նրա ամրող դիպալոմատիան: Հողային հափշտակումների կողմից նա նույնիսկ գերազանցեց Գրիգորին, բաց անելով բազմաթիվ բարեգործական հիմնարկություններ, կղերանոցներ և ապահովելով դրանց գոյությունը հողային անթիվ հատկացումներով: Զրիակերությունը դառնում եր պետական իդեալ: Մարդիկ կային, վորոնք հասկանում եյին այդքան մեծ չափազանցությունների անթույլատրելիությունը, և այդ տեսակ մարդկանցից մեկն եր Հայը մարդպետը, վոր գնալով Աշտիշատ, հիանում ե այդ կալվածի գեղեցկության վրա և հայտնում ե ներսեսին, թե վորքան վատ ըան և արել Տրդատ թագավորը, այսպիսի մի չքնաղ վայր նվիրելով «կանացազգեստ» մարդկանց, այսինքն՝ հոգևորականներին: Հեղություն կամ խոնարհություն կեղծող կղերապետն խորային մըտնում ե իր Քրիստոսի փեշի տակ և ասում ե՝ թե կալվածը յերը իրանն ե, նշանակում ե թե Քրիստոսինն ե: Հարցը, սակայն,

սրանով չի փակվում: Հանդուզն բողոքողը մեկնում էր Աշտիշատից՝
բայց նրա սահմաններից չհեռացած՝ սպանվում էր կալվածական
ձրիակերներից մեկի ձեռքով:¹⁾ Հերոսը դարձյալ Քրիստոսի փե-
շերի տակն էր: Խնքը չեր սպանել տվողը, Քրիստոսն էր:

Այսպես գործել գիտեր քահանայապետական գինաստիայի
հոչակավոր ներկայացուցիչը, և ով պիտի լիներ նրան հակառակ-
վողը, յեթե Հայր մարդպետի նման ազգեցիկ նախարարը վոչն-
չացվում էր լոկ իր մի քանի խոսքերի համար: Փավստում մի
աննման միամտությամբ կարծում է իր սքանչացրած հերոսին
դրած լինել պաշտամունքի աներևակայելի բարձրության վրա,
յերբ հավատացնում է, թե ներսեսն իր ներքին բարեկարգու-
թյուններով գարձիկ էր Հայաստանը վանական միաբանության
նման մի բան: Մնում էր, ուրեմն, վոր այդ վանք - պետության
գլխից վերցվեր թագավորական թագը և նրա աեղ դրվեր քահա-
նայապետական խույրը: Այսպիսով Արաքսի հովտում յերեան կը-
գար մի տեսակ դալայ-լամայություն, վոր, սակայն, արտաքուստ
անկախ լինել չեր կարող, ուստի պիտի գտնվեր Բյուզանդիայի
հովանավորության տակ: Այս էր քահանայապետական միապե-
տության իդեալը, վոր ինչպես կտեսնենք իր տեղում, ապրում էր
նույնիսկ 19-րդ դարի կեսում և պաշտպաններ ուներ նաև յեզրո-
պական կրթություն ունեցող ինտելիգենցիայի մեջ, հարմարվելով,
ինարկե, ժամանակի քաղաքական պայմաններին:

4.

Հայ Արշակունիները, չունենալով հանդերձ իրանց կողմը նա-
խարարական դասի միակամությունը, զգում ելին կարենու-
թյունը՝ դիմադրելու կղերական միապետության առաջ բերող
վտանգին, և այս ուղղությամբ իզիճակի կլինելին հանդես բե-
րել ցույց ավածից ավելի տոկուն և հաստատ կարողություն,
յեթե ընդհանրապես ապիկար ու թուլամորթ չլինելին: Նրանցից
մի յերկուսը, Տիրան և Պապ, փորձեցին նույնիսկ հակառակվել
Լուսավորչի ժառանգներին, հենվելով պետական իշխանության
վրա: Բայց բոնությունը նրանց համար ույժ չդարձավ: Բոնու-
թյունը գոհեր էր առաջացնում, իսկ Քրիստոնեյական յեկեղեցին
գիտեր հիանալի կերպով շահագործել իր տված գոհերը՝ իր հը-
մայքն ավելի ու ավելի բարձրացնելու համար: Այսպես յեղան
չուսիկն ու ներսեսն իրանց մահով՝ առնասարակ յեկեղեցակա-

¹⁾ Փաւստոս, յեր. 114 — 115.

նության տիրապետության և մասնավորապես Լուսավորչյան
դինաստիայի համար:

Հայ Արշակունիների համար զեռ մնում էր այն հակակշռող
ույժը, վոր ներկայացնում էր հոռմեյական տիրապետության ժա-
մանակից հաստատված տնտեսական կարգը Արաքսի և Արածա-
նիի հովիտներում, այն ե՛ քաղաքային տնտեսությունն իր առե-
տրական կապիտալով: Քանի վոր կանգուն և զործունյա յեր այս
կարգը, անսասան պիտի մնար տնտեսական գերագահությունը
Հայաստանի մյուս մասերի վրա, տալով զրա հետ միասին և քա-
ղաքական ու մշակույթային ուժեղ կենտրոնի դիրքը Արարա-
տյան աշխարհին, և լեռնային ավատականությունը պիտի
այդպիսով ունենար հակակշռության դեմ: Բայց տոհմատիրական տնտեսությունը
Հայաստանի մեջ վազուց եր մտել զարգացման այն ուղին, վոր
տանում էր դեպի ավատական տնտեսակարգը և մնում էր մի հե-
ղաշրջմամբ ընդհանրացնել և ամրացնել ավատականությունը:

Այս հեղաշրջումը հատուկ է յեղել առնասարակ բոլոր յերկիր-
ներին, իբրև մի համաշխարհային կարգ տնտեսական զարգացման
և մեծագույն մասամբ կատարվել է յերկարատև, անգամ հաճախ
խաղաղ պրոցեսի ձեռք, կենտրոնական իշխանության թուլաց-
ման և վոչնչացման միջոցով: Բայց Հայաստանում այդ հեղաշր-
ջումը կատարվում էր կատաստրոֆիկ յեղանակով, զրոից արշա-
ված բանակների ձեռքով:

Դրսից արշավոզ Սասանյան մեծ Շահերից մեկն էր Շապուհ
Ցերկարակյացը. վոր մի քանի հայ նախարարների առաջնորդու-
թյամբ և ունենալով իր կուսակցությունը յերկրում ապրող ավա-
տականության մեջ, մանում էր Հայաստան՝ այտեղի պա թեա-
կան կազմակերպությունը վտարելու համար: Խաղառ վոչնչացնել
հայ Արշակունիներին նա չկարողացավ, ունենալով իր զեմ Բյու-
զանդական մըցակցությունը, բայց թուլացնել նրանց, մատնել
նրանց թագավորությունը մի յերկարատև հոգեարքի՝ կարողացավ
լիուլի չափերով: Պարսկական զորքերը հեղեղեցին Հայաստանը,
պարտության մատնեցին ամեն մի դիմադրական փորձ, մեծամեծ
կոտրածներ և գաղանություններ կատարեցին: Մեծ առեւրական
ճանապարհի վրա ծաղկած քաղաքները մեկ մեկ կործանվեցին —
կամ բոլորովին ամայական, կամ վերածվեցին զյուղերի և ավան-
ների: Շապուհն այդ ամրող քաղաքային ազգարնակությունը, վոր
Փաւստոսը հաշվում է 131 հ. զար տուն¹⁾ , քշեց տարավ Պար-

¹⁾ Փաւստոս, յեր. 172 — 173: Այս թվից 75 հազար տուն էրիա, մնացած
3 կտոր և նորայական կապիտալը

կաստան, ինչպես այդ նույնն արավ, գարձյալ առևտրական կապիտալը՝ Արաքսի հովտից պոկել տանելու համար մի ուրիշ պարսկական մեծ բոհակալ, Շահ-Արքասը, 17-րդ դարի սկզբում:

Հաշիվը միանգամայն անսխալ եր: Հայաստանի կենտրոնի ժողովուրդը տկարացնելու, անարյուն դարձնելու ամենաիրական միջոցը նրա առաջավոր տնտեսական զարգացման ազդյուրը ցամաքեցնելն եր: Հոռմեյական իրականությունը վերանում եր: Շալուհ Յերկարակյացի զինվորները ճիշտ նույն վիճակը բերին Հայաստանի գլխին, ինչ Բարբարոսների արշավանքները հետեւյալ հինգերորդ դարում բերեցին իրան՝ հոռմեյական կայսրության, ջնջելով նրա կապիտալիստական տնտեսությունը և յետ շպրտելով յերկիրը նորից դեպի ավտոտականություն: Հայաստանն այս մեծ և աղետալի հեղաշրջումից ուշքի գալ այլևս յերբեք չկարողացավ: Այնունետև նա գերազանցորեն մի զյուղական աշխարհ եր. արոտային անտեսությունն իջավ նաև այն հովիտներն, ուր դեռ ծխում եյին Նախավանի, Արտաշատի, Վաղարշապատի, Յերվանդաշատի, Զարեհավանի, Զարիշատի և Վանի ավերակները: Ավատական հեղափոխությունը կատարված, լրացած իրողություն եր, կալվածատեր իշխանները կազմակերպված դաս եյին դարձել և հավաքական կամք եյին ցուցադրում թագավորական իշխանության գիմ: Հայ Արշակունիների վոչչացումը դառնում եր ժամանակի հարց:

Այս մեծ իրարանցման միջից անմնաս դուրս եր գալիս Գրիգորի զինաստիհն, չնայած վոր Շապուհ Յերկարակյացի արշավանքի քաղաքական գլխավոր դրդապատճառն եր այդ դինաստիայի հունամոլ քաղաքականությունը: Ավատական հեղափոխությունից դժգոհելու նա վոչ մի առիթ չուներ, վորովհետեւ, ինչպես տեսանք, ավատականությունը նրա հարազատ տարբն եր, վորի հզոր նեցուկն ու պաշտպանն եր իրբեւ նրա առաջնակարգ մի ներկայացուցիչը: Մամիկոնյանների սպարապետական տունը մնաց իր նախկին դիրքի և նշանակության մեջ, իրբեւ գլխավոր զեկավար այն նախարարական ուժեղ կուսակցության, վորի շահերը կապված եյին Լուսավորչի տոհմի, հետևաբար և բյուզանդական որինտացիայի հետ: Իր ավատատիրական բնույթն և ավատակարգի ընդհանուր շահերի հետ մերժած մնալու տրամադրությունը

հաբ Մի հասդամանք, վոր ցույց և տալիս թե հայերը չորրորդ դարում արդին աշանավոր տոկոսով քաղաքային ազգաբնակություն եյին կազմում: Բացի այս բոլորից վերականգնությունը — հրետ՝ 18 հազար տուն և հայ՝ 5 հազար տուն:

Քահանայապետական գինաստիհն ցուցահանում եր մի շատ բնուըշը շարժման մեջ: Յերբ Արշակ թագավորը, անշուշտ այն գիտավորությամբ, վոր կործանված քաղաքային տնտեսության գոնեացրանքները վերականգնեն, շինեց Մասիսի հարավային ստորոտում, Տրապիզոնից Պարսկաստան տանող առևտրական մեծ ճանապարհի վրա, Արշակավան քաղաքը, վոր, Փավստոսի ասելով, սկսեց արագ մեծանալ և հարստանալ, հայ ավատական ազնվականությունը, բնականարար, ծառացավ այդ հակաավատական յերեւույթի գեմ և ներսես «Մեծը» առաջինն յեղավ, վոր զեկավարեց և բորբոքեց նախարարական անրավականությունը, մինչև վոր զրգոված ավատապետները զնացին քանդեցին, յերկրի յերեսից անհետացրին իրենց գասակարգային թշնամի Արշակավանը:¹⁾ Թշնամի՝ մանավանդ այն կողմից, վոր այդ մի աղատ քաղաք եր և նրա մեջ ապահով ապաստան կարող եյին գտնել նաև իրանց տերերից փախած ճորտ գյուղացիները: Շատ բնորոշ և այն պատճառագանությունը, վորով կղերական հեղինակն արդարացնում եր նախարարական բարբարոսությունը:— իբր թե Արշակավանը լըցդած եր անբարոյականությամբ: Բայց այս մի սովորական մեղադրանք է, վոր զնում եր հայ կղերը բոլոր այն միջնադարյան քաղաքների վրա, ուր ծաղկած եր առևտրական կապիտալը և մարդիկ ուտում, խմում և զվարճանում եյին առատ առատ (որինակ՝ Անին, Կարսը, Արծնը և այլն):

Կղերական հնարագիտությունը մեծ ճարպիկությամբ եր խառնում մարդկային տղետ հավատը, — մենք այս տեսանք Գրիգորի տոհմի ձեռքին իրբեւ ամենահզոր գործիք, վորով մեծ բախտ, հարստություն և տիրապետելու անսահման իշխանություն ստեղծեց իր համար: Մի բանի մեջ միայն անաջողության հանդիպեց հոչակավոր տոհմը, և այդ քահանայապետության ժառանգականության տեսականությունն եր: Այս մի մեծ հոգս եր և նրա համար գործազրվել եյին արտակարգ միջոցներ անզամ: Ամենից առաջ խախտվել եր յեպիսկոպոսական կուսակրոնության կարգը. կաթողիկոսը պիտի ամուսնացած լիներ, վորպեսզի ժառանգ թողներ: Գրիգորի վորդի Վրթանեսը թողնում եր մի հատ ժառանգ մասուկ հասակում, Հուսիկ անունով, և սակայն այդ մանուկին կաթողիկոս ձեռնադրեցին: Մըա վրա յել ընկնում եր ժառանգ ունենալու տոհմային պարտավորությունը: Յեվ այս մի ամրող ցավը կրակ և դառնում նրա համար կամ, ավելի ճիշտ ասած, նրա

¹⁾ Փաւուսոս, յեր. 109.

պատմաբան Փավստոս Բյուզանդի համար: Սրա համար Հուսիկը սրբության և մաքրության ամենաբարձր կատարելատիպն է, մի, ինչպես ասում են, մարդու հրեշտակ: Բայց ի՞նչպես համաձայնեցնել այս պատկերացումն այն փաստի հետ; վոր նա հայր եր յերկու կատարելապես անպիտան և փչացած տղաների, վորոնք հոգեռական չդարձան, բայց շարունակեցին վայելել իրանց պապերի Աշտիշատն ել, 15 գավառներն ել, ի՞նչ ասե Փավստոսը, վոր լավ լինի իր հրեշտակատիպ Հուսիկի համար: Նա յերդում հավատ և անուժ, թե Հուսիկը միայն մի գիշեր և քնել իր կնոջ հետ, բայց ի՞նչպես սուրբ մարդ՝ տեղն ու տեղն իմացել է, ի՞նարկե, յերկնքի ոգնությամբ, վոր կինը հղիացավ, պիտի ծնե մի զույգ տղա, յերկուսն ել անարժան կաթողիկոսանալու: Յեկ այնուհետև այլևս չեր մոտենաւ կնոջը, «լայր—ասում ե մանկամիտ պատմաբանը, — և աղաչեր զաստուած և ապաշխարեր մեծաւ տառապանօք»:¹⁾

Այս ինչեր եյին հյուսվում և ներյուրվում քահանայապետական զինաստիան պահպանելու, բարձր ու զարդարուն պահելու համար: Բայց Հուսիկից անհամեմատ դժբախտ եր ներսես մեծն վորդի Սահակը: Նրան հո բոլորովին չեր աջողվում ունենալ արու զավակ, և նա տիտոր ու վշտարեկ ասում եր. «Յառաջ քան զամս բազում խորհուրդը անմիթիթարք նեղէին զիս, անդապար զմտաւ ածելովի աղաչելով զբարձրեալն շնորհել ինձ արու որդի, որպես և նախնեցն իմոց, որք յառաջ քան զիս եին ամուսնացեալք յաղագս որդենութեան»:²⁾ Բայց նրան վիճակված եր այդպես ել անմիթարք մտնել գերեզման: Ճակատագիրը ծաղըել եր քահանայապետական միապետության վերջին ներկայացուցչի տոհմային իշխանապետական իղձերից ամենավառը, տալով նրա մի աղջիկ միայն, վոր կարող եր ժառանգել դինաստիական 15 գավառները, բայց վոչ խույրը: Նա Մամիկոնյան տան հարս եր և Սահակը նրան տվեց իր բոլոր կարգածները: Այսպիսով կարգածորեն վերջի վերջո միաձուլվում եյին յերկու հոչակավոր տոհմերը, և Մամիկոնյաններն այս միաձուլումից ուժեղանում եյին, առաջացնելով հայ ավատական դասի մեջ նորանոր կալվածատիրական հակադրություններ և մրցություններ, վորոնք հիմք գարձան հինգերորդ դարի «կրոնական պատերազմ» անունով հոչակաված, բայց իրապես կալվածատիրական տակնուվրայությունների համար:

Բայց Լուսավորչի վերջին արու ժառանգը յեթե ավատական տիրապետողի անձնականությունը կարողանար մի կողմ թողնել,

1) Փավստոս, յեր. 11.

2) Հազար Փարապեցի-«Պատմ. Հայոց», Թիֆ. 1908, յեր. 59.

առիթ չեր ունենա այնքան անմիթիթարք լինելու զինաստիական յեսամոլության տեսակետից: Ճիշտ ե, Գրիգորի սերունդն անհետանում եր Հայաստանի իշխանապետական իրականությունից, բայց զրա փոխարեն թողնում եր մի նոր Հայաստան, վորի հոգին եր նրա կազմակերպած և գործի կանգնեցրած յեկեղեցականությունը: Սահակի մեռնելու ժամանակ վոչնչացած եր Արշակունիների ստվերային միապետությունը, բայդ նրա տեղ հաստատված եր հոգեռականների միապետությունը, վոր շատ լավ կարողացավ կենասական խոր արմատներ զցել Հայաստանի ավատական բազմազլխության մեջ և դառնալ նրա մի չափազանց կարեւոր մասը, պահելով իր գերիշխանությունը բոլոր ավատական տերերի վրա հենց նրանով, վոր թեև ինքն ել ուներ ավատական կազմակերպություն, բայց անվիթարք և ուժեղ պահեց ծայրագույն կենարունացնող իշխանությունը հանձին քահանայապետական զլխավորության: Յեկեղեցու մեծ ույժը աշխարհիկ ավատական իշխողների հետ յեղրայրանալն եր: Ինքը, Սահակն այս գործի մեջ ահա գին դեր եր կատարում, հիմնադիր հանդիսանալով հայերեն գրականության, վոր հմայք ու հեղինակություն եր ստեղծում յեկեղեցու համար, բայց վոր իր մի խոշոր մասով զերազանցորեն ավատական եր:

Այս մի վերջնական և անդիմադրելի նվաճում եր, վոր կատարում եր հայ յեկեղեցականությունը հայ ժողովրդի զլխին նստելու և նրա ամբողջ ճակատագիրն իր ձեռքի մեջ առնելու համար: Յեկ այսպես եր, վոր հայ ժողովուրդը, մի հարազատ ըեկոր արևելյան Միջնադարի, վերածվում եր մի կրոնական համայնքի, վորի առանձնահատուկ ընդմիշտ զրոշմված և անջնջելի անուններ եր, Գրիգորից ստացած, լուսավորչականուրբյուն: Այս միայն անուն չեր, ոյս սպառիչ բովանդակություն եր, վոր փաթաթում, ծրարում եր այդ կրոնական համայնքը նեղ ու թանձը, սահմանափակող ու կղզիացնող ավանդավորության մեջ: Քաղաքական կյանքի համար թույլ անպատղ և ապիկար, այդ համայնքն ապշեցնող համառությամբ և տոկունությամբ լուսավորչական եր իր հոգեռականության հրամանով: Զեկար զոհվելու և վոչ մի յեղանակ, վոչ մի չափ ու աստիճան, վոր հայ կղերը չպահանջներ հայ ժողովրդից՝ լուսավորչականությունը պահպանելու համար: Յեթե այդ ժողովրդի պատմությունը հյուսված ե աղետներից, ամենամեծ աղետն այն եր, վոր նա պարտավոր եր լինել լուսավորչական, չեր կարող լուսավորչական չլինել: Այս եր հիմքն այն քաղաքականության, վոր հայ կղերը ժառանգել եր լուսավորչի տոհմից՝ գործադրելու հա-

մար վոչ միայն յերկրի ներսում, այլ առավելապես և ստիպողաբար արտաքին հարաբերությունները վարող դիվանագիտության մեջ, վորի կղերական մենաշնորհ դարձնողն ու իր յեկեղեցուն ավանդողը յեղել եր, ինչպես ահսանք, ինքը Գրիգորը, լուսավորչականության հիմնադիրն ու առաքյալը:

5.

Միանձնյա կղերապետության դիվանագիտական գիծը շասուղաձիգ, շատ պարզ, անկնճիռ եր և մանավանդ զյուրը մրունելի թեթև կամնանք մի հատ բառով բնորոշել այդ գիծն իր սկըզբնավորումից իսկ յելնելով, ամենից հարմարը, կարծում ենք ✓ կլինի արեվմտամոլուրյուն: Աշխարհագրական այս բովանդակությունը կղերական դիվանագիտության առլիս եր քրիստոնեյության ասրածումը: Հայաստանից ել առաջ դեպի Արևելքի քրիստոնեյությունն իրքե հաստատուն և յերկարատև համատարածություն չգնաց, և այս յերկիրը կախվեց Մերձավոր Արևելքի մեջ իրքե քրիստոնեյության առաջավոր պահակ, միացած, ճիշտ և, իր մի քանի մանր դրացիների հետ, բայց ընդհանրապես ինքն ել փոքր, թույլ, մենակը Ամեն ինչ, վոր քրիստոնեյությունն ուներ ուժեղ, խոշոր, ահարկու — և ամենից առաջ, ինարկե, աշխարհակալություն, նվաճողականություն, — գտնվում եր Արևմուտքում: Կղերական հասկացողությամբ, աշխարհի վրա կարող ե գոյություն ունենալ միայն մի շահ — քրիստոնեյությունը: Այս շահի տեսակից միջազգային հարաբերությունների մեջ չի կարող լինել մի այլ հզոր կապ, բացի կրոնակցությունից:

Հայաստանն, իրքե քրիստոնյա յերկիր, բնականարար գըտնվում է (այսպես եր ըմբռնումը) Բյուզանդական մեծ պետության ամբողջ ույժի հովանու տակ և նրա իրավունքն ե միշտ պաշտպանված մինել քրիստոնյա լինելուց բղինող պարզ և անժխտելի հետևանքով, այդ մեծ պետության կողմից: Այս բնական իրավունքը, վոր կղերական մտածողությունը հատկացնում եր ամեն մի այն տեսակ յերկրի, վորին կրոնակցությունը կապել և մի ուժեղ պետության հետ, միանդամայն բավական եր, վոր հայերն արհամարեն իրանց վոչ-կրոնակից դրացիներին և արհամարեն վոչ միայն նրանց կրօնն ու մշակույթը, այլ նույն իսկ նրանց պետական ույժը: Այս ույժը, վոր ողակում եր Հայաստանը հարավից և արևելքից, իրանն եր:

Ցեվ այսպես ել անում եր քահանայապետական դինատիայի ձևակերպած դիվանագիտությունը: Փակտոսը գործ և ածում բո-

լորովին աներկմիտ արտահայտություններ՝ «վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան գաշինն, որ եր աշխարհին հայոց ընդ կայսերն յունաց»:¹⁾ Այս դաշինքով կղերական միապետությունը դարձնում եր Հայաստանը Բյուզանդական մի զավառ կամ, ինչպես անվանում և Յեղիշեն, «դաստակերտ»:²⁾

Պաշտամունք դարձնելով արևմտամոլությունը, հայ կղերական դիվանագիտությունը իրան դարձնում եր այդ պաշտամունքի կույր, մոլուանդ քուրմը և հենց սկզբից մեծամեծ զոհերով եր պատվում ու փառաբանում իր այդ կուռքը: Առաջին նշանավոր զոհը Պապ թագավորն եր, ներսիս մեծի հակառակորդը:

Շապուհ Յերկարակյացի փոած ավերակներն եր ժառանգություն ստանում այս թագավորն իր հայր Արշակից և հանդես եր քերում կամքի ույժ, վճռականություն և պետական ուժեղ շինարարություն, վորոնք բոլորովին հասուկ չեցին հայ Արշակունիներին: Ցեվ սկսվեց անխուսափելին — պայքար աշխարհական և հոգևորական միապետությունների մեջ: Ահավոր բաղխում եր տեղի ունենում յերկու սկզբունքների մեջ, ներսիս համար ամբողջ պետությունն իր ամբողջ ժողովրդով յեկեղեցու համար եր, իսկ յերիտասարդ թագավորը հակադրում եր դրան բոլորովին հակառակ սկզբունքը — պետության և ժողովրդի նախամեծարությունը: Պապը ջախջախեց արևմտամոլության չափազանցությունները և իր ձեռքն առնելով յերկրի դիվանագիտությունը, բարեկամական հարաբերություններ սկսեց նաև Պարսկաստանի հետ, ինչպես այս պահանջում ելին հայ պետության իրական շահերը: Այս մերձեցումը կդադարեր կասկածելի լինել միայն այն զեղքում, յեթե կանգնեցվեր և կամ առնվազը մեղմացվեր Հայաստանի բյուզանդականացումը: Վոչ միայն այս հանդամանքը, այլ և իր ուժեառության ուղիղ հասկացված շահը թեւաղբեցին Պապին մի շարք արմատական միջոցներ այս ուղղությամբ: Հիմնահատակ քանդվեց այն վանական կառուցվածքը, վոր ներսիսը տվել եր Հայաստանին: Ցետ վերցվեցին վանքերին ու յեկեղեցիներին հատկացված հողերը, փակվեցին այն բաղմաթիվ կրօնական հաստատությունները, վորոնք ծծում ելին պետության կենսական հյութերը՝ իրանց մեջ սնուցանելու համար մի բազմամբուխ քրիստոսասեր ձերակերություն, բաղկացած վարդապետերից, կույսերից և ուրիշ տեսակ հոգեսոր տղրուկներից:

Այս անինա մարտի մի հրավեր եր, վոր համարձակ Արշա-

1) Փաւոսոս, յեր. 79:

2) Յեղիշե, Թհագոսիս, 1861, յեր. 109:

կունին խփում եր քահանայազետական միապետության և Հայաստանի աերը դարձած սանձարձակ բյուզանդականության գետքին: Յեվ հասկանալի յէ, թե ինչ տեսակ անհնարին ցատում պիտի բորբոքվեր հակառակորդների բանակում: Ներսեսը, վոր սովորել եր տեսնել ամեն ինչ խոնարհված իր միապետական կամքի առաջ, չկարողացավ տանել Պապի հարվածները և մեռավ: Կղերական կատաղության մասին հասկացողություն տալիս և Լուսավորչի տան խանդավառ յերկրպագու Փավստոսը, ամեն տեսակի հեքիաթային այլանդակություններ բարդելով տաելի թագավորի անձի վրա: Նա իրը թե և՛ իրեշ եր, և՛ դե եր, նրա ծոցում ոձեր եյին բնակում, հավատացնում և կղերական չարախոսը մի շինծու միամտությամբ:¹⁾

Ներսեսի մահը՝ դրան կից Պապի ամբողջ արտաքին և ներքին քաղաքականությունը՝ առիթ եր դառնում, վոր մահվան դատապարտի նաև ինքը, թագավորը: Մականությունը կատարում եյին բյուզանդական զորքերը, բայց հայերին անհայտ չմնաց, վոր այդ գործի բուն հեղինակը քաջ և բազմահռչակ Մուշեղ սպարապետն եր, ինչ ասել կուզե, Մամիկոնյան տոհմից, վորպես և այս վայել եր Լուսավորչյան տան պաշտպան տոհմին: Պապի սպանությունը բերում եր յետելից և այս Մուշեղի սպանությունը, վոր կատարվեց թագավորի կողմնակիցներից մեկի ձեռքով: Յերկորի համար այս մի մեծ կորուստ եր: Յեվ այդ դժբախտության վրա ավերանում եր մի ափելի մեծագույնը՝ ամրող մի ազգամիջյան պատերազմ Մամիկոնյան և թագավորական կողմնակիցների մեջ:

Այս արյունահեղ իրարանցումներն ամենեին չվարկարեկեցին կամ գեթ չթուլացրին հայ կղերական դիվանագիտության պաշտամունքը՝ արևմտամոլությունը: Փավստոսը պատմում և. «Եւ ժողովեցան եկին ամենայն իշխանքն հայոց մեծամեծք ի մի վայր ի միասին, և Մուշեղ սպարապետն և Հայը Մարդպետ և ամենայն իշխանքն և ասէին. Զի՞նչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խընդրեսցուք զվրեժ թագաւորին մերոյ թե ոչ: ²⁾Եւ ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն և ասեն. Ո՛չ կարեմք հեթանոսաց

) Ամենից զգարձալին այն և, վոր Փավստոսը շարունակ շեշտում և, թէ Պապը արվագնետ եր: Կարծես ինքը՝ «արքալյաց» հոգևորականությունը միանգամայն աղատ եր այս ախտից չերակլ կայսրն ասում եր Եջմիածնի հոգեորականներին. «Դուք հայք ունիք զանբնական պղծությունս ընդ արուս և ընդ այլս հոլոված: Յեվ այս վկայությունը, բավական ըպատվավոր», չե՛ վոր արձանագրել և իր պատմության մեջ մի բարձրաստիճան հայ հոգեորական (Ստեփանոս Օքքենեան — «Պատմություն նահանդին Միսական»), թիֆ. 1911, յեր. 116).

2) Մոսքը Պապի մասին եւ.

ի պարսից ծառայութիւն մտանել և թշնամի առնել զթագաւորն յունաց: ¹⁾

Մուշեղ սպարապետի զումարած ժողովը, ինարկի, ուրիշ վճիռ չեր կարող կայացնել: Նա ասում եր այն, ինչ կասեր Գրիգոր Լուսավորչի տոհմի ամեն մի ներկայացուցիչ: Կղերական դիվանագիտության սկզբունքը, գործադրված աշխարհականների ձեռքով, մի բան, վոր սովորական եր դառնում այս առաջին որինակից հետո: Յեվ Մուշեղ սպարապետի սպանությունը արդյոք մի բողոք չեր այդ նախարարական վճու գեմ:

6.

Իսկ ի՞նչ վոխագարձություն եր ստանում այսքան զո՞ներով և զրկանքներով Հայաստանի մեջ բյուզանդական քրիստոնեյության տնկած ու սնուցած արևմտամոլությունը:

Այս հարցին շատ պարզ ու մեկին պատասխանում եր բյուզանդական դիվանագիտառությունը:

Նա, ինարկի, քրիստոնեյական եր վոտից մինչև գլուխ, նա, ինարկի, յերկնքի փառքին եր ծառայում, գիտեր կրօնակցության նշանակությունը միջազգային հարարերությունների մեջ, գիտեր և արժեքավորել նրան, դարձնելով նրան, հարկավոր գեգքում, նաև պատերազմի հիանալի կերպով շղարված առիթ: Նա սիրառաւստ ժպիտներով եր նայում բյուզանդականացող Հայաստանին, ընդունում եր նրա խոնարհ ու հիացական յերկրպագությունները, նրա բերած խունկն ու աղոթքը՝ մի մեծ և հզոր պետության վայել վեհ վողորմածությամբ: Բայց այս բոլորը գեռ չեր նշանակում, թե Հայաստանի քաղաքական անկախությունը շատ և թանգ նրա սրտին: Հայաստանի կրօնակցությունը նյութ եր, վորից բյուզանդական դիվանագիտությունը իր համար խաղեր եր ստեղծում՝ իր սեփական շահերը հաղթանակող գարձնելու համար: Առաքելան ինքը Հայաստանը չեր, այլ Բյուզանդիայի հղոր մրցակիցն Արեկելքում, իրանը Մենք տեսնում ենք բյուզանդական զորքերը Հայաստան մտած՝ հայերի հետ միասին նապուհի գեմ կավելու համար: Այստեղ լիովին իրականացած եր յերեւմ հայ կղերական դիվանագիտության իգեալլը: Բայց այս չե խանգարում բյուզանդական քրիստոսասեր դիվլումատիային զրեթե միաժամանակ համաձայնություն կայացնել նույն Շապուհ Յերկարակյացի հետ և բաժանել Հայաստանը իրանի և Բյուզանդիայի մեջ:

1) Փաւստոս, յեր. 233—234.

Այս գործողությունը, վոր կատարվեց 384-ին, խողիողում եր հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնությունը։ Հայաստանն այնուհետեւ այլևս չկարողացավ մի քաղաքական ամբողջություն դոյցնել թեկուզ ավատական բովանդակությամբ։

Այս բավական չե ավաղակային հափշտակության գործողությունն ըստ արժանույն գնահատելու համար։ Մենք այսուղ գեց զեցիկ առիթ ունենք համեմատության գնելու հայ կղերի համար պաշտամունք դարձած արևմտյան պետական քրիստոնեյությունը նույն այդ կղերի առած և մեծամտաբար արհամարհած հեթանոս Պարսկաստանի քաղաքականության հետ։

Ստանալով Հայաստանի արևմտյան բաժինը, Բյուզանդիան յերկու տարվա մեջ վերջ դրեց նրա առանձին թագավորության և սկսեց արագ և անողոք կերպով ապազգայնացնել այդ յերկիրը, հունացնել։ Մինչդեռ պարսկական բաժին դարձած Արևելյան Հայաստանում հայ Արշակունիները շարունակեցին իրանց թագավորությունը դեռ ելի՛ 40 տարուց ավելի և այդուղ ել կենարունացավ ամբողջ հայ մտավորական և նյութական մշակույթը։

Չնայած, սակայն, այս բացարձակ և ակնրախ իրողության, արտաքին քաղաքականությունն իր ձեռքում պահող հայ հոգեվորականությունը Պարսկական Հայաստանից, մորթված բյուզանդական Հայաստանի վրայով, սիրավառ աղաչավորությամբ իր դույզ աչքերը հառած եր Բոսֆորի ափերի վրա, համարում եր այնուղի քրիստոնյա կառավարությունն իր միակ պաշտպանն ու փրկիչը կրօնակցության որենքով։

Վերևում մենք տեսանք Սահակ կաթողիկոսի հոգեկան տագնապը արու զավակ չունենալու հետևանքով։ Այդ վշտի մեջ նրա համար միսիթարություն եր այն, վոր իր առանձին ինսամքի տակ եր պահում իր ալվագ թոռն Վարդան Մամիկոնյանին, վորի իշխանական պատիվը բարձրացնելու համար հատուկ ուղևորություն կատարեց Մեծագետք, Սասանյան Տիզրոն մայրաքաղաքը։ Այդ Վարդանն իր հոչակալոր պապի միջնորդություններով, բայց մանավանդ ժառանգություն տված հողային ահազին հարստություններով հայ ավանդական աղնվականության առաջին շարքն եր մանում, մարմացներով իր մորավապերի և իր սեփական հայրենի տոհմի ավանդները, այսինքն՝ հունամոլ կղերական քաղաքականությունը Մամիկոնյանների այնքան ուժեղացումն ու բարձրացումը բնական հակառակություններ ել կուսակցական ընդիմարտություններ եյին առաջնում ավատական կալվածատիրության մեջ, վորոնք, ինչպես այս ամենուրեք և տեղի

աւնենում այդ տնտեսական կարգի մեջ, արագ փոխվում եյին կավի՝ ավատական գահերեցության տիրանալու համար։ Իսկ կողմեր կողմեր և կազմակերպում և իրական ույժերի փոխհարաբերություններ ստեղծում։ Վարդանի կողմն ուժեղ եր։ Սահակ կաթողիկոսն այդ ժամանակ կենդանի չեր, բայց նրա ունիտն հոգսերով պատրաստված հունամոլ հոգեստրականությունը նրա սիրելի թուան ամենագործունյա ողնական յեղավ, և այսպիսով ավատական պայքարին հաղորդվեց կրոնական հանգամանք։ Հակառակ կողմին, Վասակ Սյունու գլխավորությամբ, մնում եր, ըստ հին սովորության, հենվել Սասանյանների ույժի վրա, գըրգռելով նրանց ժառանգական կասկածը բյուզանդականության դեմ, մի կասկած, վոր արդեն մի քանի անգել հանգել եր հակաքրիստոնեյական հալածանքների, վորոնց զոհն եյին դարձել սիրիացիները։ Այժմ Սասանյան ֆանատիկոսությունը Հայաստանում եր ընդհարվում բյուզանդամոլ ֆանատիկոսության հետ, և հայ հոգեվորականությունը գրգռում եր մի հախուռն և կորստարեր ապրատամբություն, դրոշակ ունենալով Սահակ Պարթեի թուան։

Կղերական ապստամբությունը գիտեր, ինարկե, վոր իր գեմաւներ ամբողջ ահարկու Իրանը, բայց մեծ հույս ուներ բյուզանդական ոգնության վրա, և Յեղիշեն բերում և այն զարմանալի միամիտ նամակը, վոր ապստամբության առաջնորդները դրեցին թեոփոս կայսրին և վոր կարող և հայ կղերական գիվանապիտության առաջին դրավոր հաղորդագրությունը համարվել ինչպես նաև նմուշ այն մեծագույն իմաստության, վորով նա կարծում եր իրան զարդարված ամեն ժամանակ, մինչև իսկ մեր ժամանակը։

Ահա ինչ եր տաված այդ նամակի մեջ։

«Եւ մեք ի ձեր քաջութիւնն արիութիւնդ խիզախեալ, եր ինչ որ ընդգեմ դարձաք նոցա հրամանացն, և բազում այն է որ արդ տառջի պատրաստեալ եմք։ Ըստրեցաք զման աստուածաշառութիւնմք քան զեկանո ուրացութիւնմք։ Կթէ դուք ևս ի ձեռն տառջիք զմեղ, անտ կրկին կենաց զիվեցաք, և ոչ մի անգամ մահու ևս եւ կթէ սակաւիկ մի հեղգայք, զուցի բազում և այլ աշխարհաց հասանեցէ ասպ բացոյ սորա»¹⁾։

Դիմողները չեյին մոռացել նաև թվել հայ ժողովրդի բարեմասնությունները։ Հիշեցնում եյին, վոր Հայաստանը մի ժամանակ հումայեցիների համար յեղել և զմեծ և սիրելի դաստակերա», վոր Տրդատը Հոռմի մեջ և ապաստանվել և թագ ստացեք վոր քրստոնեյությունն ել Հոռմի սուրբ յեպիսկոպոսից և ստացվել Հայաստանում։

1) Յեղիշեի վարդապետի Պատմութիւն Վարդանանց, Թեոդոսիա, 1861, յեր. 109։

Ինչպես հեշտ կարելի յեւ տեսնել, հինգերորդ դարի այս գիշանագիտական դիմումը զրեթե վոչչով չեր տարբերվում 19-ըդ և 20-րդ դարերում յեղած անթիվ և անհամար դիմումներից։ Հայ կղերական դիվանագիտությունը այս միակ լեզուն է կարողացել մշակել 14—15 դարերի ընթացքում։

Բայց ինչ յեղավ այդ դիմումից թեուլոս կայսրը մեռած էր, յերբ հայ պատգամավորությունը հասավ կ. Պոլիս իսկ նրան հաջորդած Մարկիսանոսը վոչ միայն ոգնություն չի անում, այլ դարձնում է Հայաստանը ստոր վաճառքի առարկա։ Այս շատ լավ դիտե և Յեղիշեն, վոր և ասում ե.

«Իսկ անարիս այս (Մարկիսանոսը) լու համարէր պահել զուխտն հեթոնուաց վասն մարմնական խաղաղութեան՝ քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան վասն այսու իսկ փութացաւ արձակաց զգեսպանս առ թագաւորն պարսից և եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան ձեռնթափ լինելի գօրացն հայոց գօրու և զինու և ամենայն օգնականութեամբ»¹⁾)

Յեկ չելին խմանում հայ խակամիտ քաղաքագետները, թե ինչու յեղավ այսպես։ Նրանք կարծեցին, թե կայսրի խորհրդականներն եյին վատ մարդիկ, ուստի այսպիսի տխուր վախճան ունեցավ իրենց քրիստոսասիրական մուրացկանությունը։ Յեկ դարձյալ մնաց այն հավատը, թե կրոնակցությունն Արևմուտքի հետ այն միակ փրկությունն է, վորին կարող է ակնկալել հայ ժողովուրդը։

Նկատենք այսանդ հայ կղերական դիվանագիտության մի տուանձնահատկությունն ել—ամբողջ հայության անունից նշանաբաններ ձևակերպելը։ «Մահ աստուածպատրեսում, քան զիւանս սւրացութեամբ»—այս նշանակում էր, մի ամբողջ աշխարհը պիտի մեռնե՝ քրիստոնեյության, կամ ավելի ճիշտ, լուսավորչականության համար։ Յեկ դուրս էր դալիս, վոր մի բուռն մարդիկ մի ամբողջ ժողովրդի ֆիզիկական կոյության տեր ու տնորեն եյին դարձնում իրանց և մատնում եյին նրան կոտորածի և բնաջնջման՝ հանդեպ սրանից շատ ուժեղ հակառակորդ կողմի։ Հայ կղերական դիվանագիտության ներկայացուցիչները չգիտեյին և յերեք չեն իմացել համրել հայ ժողովրդից իրանց խրած բոլոր զոհերը։ Հախուռն, անշրջահայաց, անպատասխանատու յեն յեղել և այս պատճառով մի փոքրիկ և տկար ժողովրդի վողջակիզումը կատարել էն խղճի հանգստությամբ։ Յեղիշեն իր փառաբանացնելու և հիմնավորելու համար, հավատացնում է, թե

1) Եղիշեի վարդապետի Պատմութիւն Վարդանաց, Թեոդոսիա, 1861, յեր. 111

ամբողջ աշխարհն ուզում էր մեռնել իր կրոնի համար և ամենքը վազում եյին զեպի պատերազմի դաշտը, ինչպես վոչխարները՝ զեպի աղը։ Այս բանաստեղծություն ե, վոր յերեք չի պակասել կղերական դիվանագիտության՝ թե իրան և թե ուրիշներին խարելու համար։ Դազար Փարպեցին տալիս ե նույն Վարդանաց պատերազմի նկարազությունը և մենք այդուղ տեսնում ենք ավատական իշխանների հրամանով Ավարայրի դաշտը քշված հորտ գյուղացիների ամրող զանգվածներ, վորոնք փախչում են դաշտից, պատերազմը զեւ չկսած։¹⁾

Ավատական Հայաստանը քարուքանդ յեղավ այդ ապատամբությունից, վորը պարսիկները ճնշեցին ամենայն անզթությամբ։ Բայց կղերական դիվանագիտությունը վհչ սարսափեց այդքան զոհերից, վհչ խրատական դասեր առավ ժողովրդական մեծ ազետից։ Յեկեղեցու մեջ կար մի զիրք, վոր կղերի մեծագույն նեցուկներից մեկն էր կազմում և վորի անունն էր «Ճոնացույց»։ Այդ զրքի մեջ մացվեց այսպիսի հիշատակություն։ «Մրցոց Վարդանանց զորավորացն մերոց հազար երեսուն եվ վեց վիայից, որք կատարեցան ի մեծի պատերազմին»²⁾) Կղերակ ան դիվանագիտություն այս շնորհն էր անում կոտորված ժողովրդին և այնուհետև կարող էր հանգիստ շարունակել իր վարքագիծը»³⁾։

7.

Այլևս կարիք չկա, վոր մենք շարունակենք պատմական վորանումները մեր ընտրած նյութի վերաբերմամբ։ Շարունակել՝ կնշանակեր վերլուծել մեզ պատմության մի խոշոր մասը հինգերորդ գարից հետո, մինչև մեր որերը։ Այսոր մեր առջև այդպիսի ինողիր չկա։ Մեր կատարած ուսումնասիրությունն ել, կարծում ենք, միանգամայն բավարար ե, վորպեսզի ընթերցողին պարզ լինեն մեծ և ճակատազրական յերևույթի յերեք զլիսավոր համագամանքները — սկզբնավորությունը, հայ կղերական դիվանագիտության վերաբերմունքը՝ դեպի բյուղանդականությունը և վերջինիս վերաբերմունքը՝ զեպի իր կրոնակից Հայաստանը։

Ինչ վոր տեսանք մինչև այժմ, նույնը կրկնվում է և այսուհետև յերկար և յերկար դարերի ընթացքում։ Յեկ չի ել կարելի տանը, թե հոգեօրականությունն այսպիսի դեկավրող դեր յերկ-

1) Դ. Փարպեցի, յեր. 153։

2) Եջմիածնի Որացույց 1927 թ. յեր. 35։

3) Միկենույն Որացույցը Վարդանաց պատերազմից 1464 տարի հետո 1915-ի ամենի ունեցած կոտորածներին վերաբերվում էր այսպիս. «Ճօն ազգային Յիշական բիւրաւոր նահատակաց յընթացս համաշխարհային պատերազմի. յեկեղեցին Հայաստանեաց կատարել հոգեհանգիստ» (յեր. 67)։

քի քաղաքական ճակատագրի վերաբերմամբ խաղացել և շնորհիվ այն հանդամանքի, վոր նա՝ քաղաքական իշխանության անկման և վոչնչացման շրջաններում յեղել և հայ ժողովորդի պաշտոնական ներկայացուցիչը։ Նախ՝ այս հանդամանքը բացասում են մեր 4-րդ և 11-րդ դարերը, վերջինս Անիի թագավորության մեջ, յերբ գոյություն ուներ թագավոր (Գաղիկ), բայց խաղալիք եր Պետրոս կաթողիկոսի ձեռքում, մի շահամոլ և զգվելուրեն աղան կղերականի, վոր միացած մի քանի ավատական աերերի հետ՝ վաճառեց Հայաստանի այդ գավառային անկախությունը բյուզանդացիներին, բայց և այնպես, կղերական գրականության մեջ վոչ միայն չե ստացել վորեն կշտամբանք այդ պժդալի գործի համար, այլ դեռ զարդարվել և հրաշագործ սուրբի («Գետագարձ») լուսապսակով։ Յերկրորդ՝ Խնդիրը ներկայացուցիչ լինելը կամ չլինելը չե։ Խնդիրը սկզբունքն ե, բովանդակությունը, ընրունումն ե, աշխարհայացքը։ 19-րդ և 20-րդ դարերում մենք ունենք մի շարք փաստեր, յերբ կղերական դիվանագիտության վարիչները հոգենրականներ ել չեն, այլ աշխարհականներ, անդամ այնպիսիները, վորոնք համարում եյին իրենց «սոցիալիստ»։

Մեղ մնում ե յերեւութիւ ամբողջ տևողականության վերաբերմամբ պատմական ճշտությունը պահպանած լինելու համար, վերցնել Բյուզանդականություն տերմինը և նրա տեղ դնել Երևանի թիվը։ Եյությունն, այս փոփոխութիւն, մազի չափ չի մնավի յերկու կողմերի համար և դրությունը կմնա հավերժական — մի կողմը, այն և հայ կղերական դիվանագիտությունը, լացող մուրացկան՝ «Քրիստոսի սերին», իսկ մյուս կողմը, քրիստոնեյական դիվանագիտան, ստախոս, խարերա, դավաճան, ազգերի արյունը առևտուր դարձնող, ինքն ել վաճառվող մի քող։

Թե վորքան չարադանդ մի մոլություն եր հայ կղերական դիվանագիտության պաշտամունքը, — այս հանդամանքն ել հայոց պատմությունն ընդգծել և մի շարք խոշոր փաստերով։ Առաջին փաստը մենք տեսանք — Պատ թագավորը՝ զոհ։ Նրանից հետո ել հայ իրականության մեջ յերկացել են գործիչներ, վորոնք հասկացել են, թե յերկրի քաղաքական շահերը բարձրաբերառ հրամայում են ձեռք վերցնել կրօնակցության թշվառ հենարանից և փոխադարձության լեզու գտնել հարեան ուժեղ, աիլապետող, բայց վոչ քրիստոնյա պետությունների հետ Պապից հետո յերկրորդ տեղը պատկանում է Թեոդորոս Ռշտունուն (7-րդ դար), վորը զգվելով Բյուզանդիայի խարգախ քաղաքակա-

նությունից, դաշնակցեց արարների հետ՝ Հայաստանի համար շատ ձեռնուու պայմաններով՝ ընդդեմ Բյուզանդիայի, բայց դրա համար նրա զեմ թշնամություն բարձրացրեց ժամանակի հունամոլ կաթողիկոսը, Ներսես Շինողը։

Ավելի փառավոր որինակ ներկայացնում ե Կիլիկիայի Մլեհ իշխանը (12-րդ դար), մի շատ բացառիկ յերեւությ հայոց պատմության մեջ։ Նա դաշնակցում է հարևան մահմեղական պետությունների հետ, նրանց ողնությամբ հաղթական պատերազմ և մղում տեղական լատինական իշխանությունների դեմ։ Այս միակ մարդն եր, վոր մի կողմ նետելով կրօնական նախապաշտմունքները, հենց այդ միջոցով ուժեղացավ այնքան, վոր պատերազմներ մղեց մինչև իսկ Բյուզանդիայի գեմ և յերերք չըհաղթվեց, մինչև վոր Մանվել կայսրն ստիպված յեղավ հաշտություն կնքել նրա հետ։

Բայց այսպիսի մի յերեւությ չեր կարող տանել հայ կղերական դիվանագիտությունը և Մլեհն սպանվեց իրայինների ձեռքով, հաղիկ կարողանալով վարել իր իշխանությունը հինգ տարի։

Մի ուրիշ որինակ ել ավելի ևս զարմանալի։ Կույն Կիլիկիայի Հեթում թագավորը (13-րդ դար) վոր մոնղոլական աշխարհավեր արշավանքներից իր յերկիրն ազատելու համար՝ գաշնակցություն կնքեց մոնղոլների մեծ խանի հետ և դրա համար մի տաժանելի և անսովոր ճանապարհորդություն կատարեց Միջերկրական ծովի ափից մինչև Մոնղոլիայի Կարակորում մայրաքաղաքը։ Հեթումը պարտավորվեց իր զորքերով ողնել մոնղոլական բանակներին, բայց դրա փոխարին պահպանեց իր պետության խաղաղությունն ու անկախությունը։

Հայ ժողովուրդն, ուրեմն, միանգամայն զրկված չեր իրերն իրենց խկական արժեքով և նշանակությամբ տեսնելու և կշռագատելու ընդունակությունից։ Բայց մեր բերած այս վկայությունները մնում են կղերացած ու առանձնացած, իրեւ անհասկանալի, հալածվող բացառություններ հայ կղերական դիվանագիտության կատարյալ և անսահմանափակ տիրապետության հերքու։

ԴՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

ԶՈՒՂԱ ՅԵՎ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՒԹՅՈՒՆ

ԽՈՉԱՅԱԿԱՆ ԿԱՊԻՏՈԼԻ ՎԱՍԿԵԴԱՐԸ

1.

Մեր նախընթաց դրվագի մեջ տեսանք յեվրոպական կապիտալը, վոր ինքն իր վոտով յեկավ մտավ Հայաստանի քաղաքական և տնտեսական սրտի մեջ՝ Արարատյան յերկիրը, և նրա թողած մեծ աղղեցությունն այդ աշխարհի վրա: Տեսանք նույնպես, վոր չորսորդ դարի ավատական հեղաշրջումը վերջ դրեց յեվրոպական կապիտալի հիմնադրած տնտեսական կարդին և այնուհետեւ ամբողջ յերկիրը ավատական տնտեսակարգի իշխանության տակ եր գտնվում մոտ ինն դար:

Բայց այդ ամբողջ ժամանակ նույն այդ տնտեսակարգի տերը հանդիսացող դասը, նախարարությունը, ուժի և աղղեցության միանման աստիճանի վրա կանգնած չմնաց: Քաղաքական փոթորիկների, վորոնք այդ ժամանակամիջոցում այնքան հաճախակի խտանում ելին Հայաստանի վրա, ամենից շատ ներզործում ելին նախարարական դասի վրա՝ նոսրացնելով նրա շարքերը: Զինվորական հոժարակամ կամ բռնադատված արտագաղթերը շարունակ բյուզանդական կայսրության այլ և այլ կողմերը և մասնավորապես Կ. Պոլիս ելին տանում նախարարական ամբողջ տներ՝ իրանց տոհմային զորագնդերով՝ փառք և հարտառություն վորոնելու համար: Սաստիկ նոսրացնում եր նախարարական շարքերը նաև արարական տիրապետությունը, վոր այդ տեղային ըմբռատ զինվորական ուժը թուլացնելու համար կանոշեր առնում նաև մասսայական ջարդի առաջ:

Այդ թուլացման հետ զուգընթացարար կենդանանում եր միջնադարյան առևտուրը: Դարձյալ կենտրոնը Արարատյան յերկրում եր, վորի մեծ առևտորական շուկան Դիլինն եր, կապված մի կող-

մից Աղվանքի Բարդա (հին Պարտավ) մայրաքաղաքի և նրա միջոցով նաև կասպիական նավահանգստների հետ, իսկ մյուս կողմից, Անիի և Կարսի վրայով, Արծն մեծ և վաճառաշահ քաղաքի հետ, վոր ասլրանքների մեծ պահեստն եր Տրավիզոնի նավահանգստի համար, և այստեղ իրար եյին հանդիպում Փոքր Ասիայի բոլոր աղքերը, իսկ առևտրական մեծ ճանապարհն այնտեղից Բուլանընի, Մուշի, Բաղեշի և Սղերդի ուղղությամբ իջնում եր մինչև Բաղդադ, վորի կարավանները շրջան եյին գործում այս ճանապարհներով, կենտրոն ունենալով Դիլինը:

Սակայն այս ամրող աշխարհը 11-րդ դարից մատնվում է Միջին Ասիայից գուրս յեկած քանդումին: Մեջուկներն եյին նրա առաջապահ ընթացողները: Հայ նախարարական դասի նոմրացումը կատաստրոֆիկ կերպարանք և ստանում: Հարավային և միջին Հայաստանը դատարկվում և ավատատեր դասից, վոր կամ դեպի հյուսիս և քշվում, կառչելով ծայրագավառների լեռներին կամ գաղութավորում և Փոքր Ասիայում և զինագորապես Միջերկրական ծովի ափին: Հայաստանում նրա տեղը բռնում է քուրդ կարվածատիրությունը:

Այս նոր դիրքի մեջ հայ նախարարական դասը միանդամայն ապահովված և իր կարմածատիրական արտօնությունների մեջ՝ Կիլիկիայում նա ընդգրկել և Յեփրոպայի ավատական սխանմքը բարոնական ամրոցների մի ամրող ցանց պատել և լեռնային Կիլիկիան և հայ բարոնների կենցաղը նույնն ե, ինչպես Յեփրոպայում, քանի վոր այստեղ ել ինչպես և այնտեղ, ավատական ամրող ամրոցն իր մեջքի վրա տանում և ճորտ գյուղացիությունը:

Բայց այստեղ հայ բարոնության դուռն ել ծեծել սկսեց այն թշնամին, վոր արդեն կատարյալ ուժի մեջ եր Յեփրոպայում՝ Իտալիան առևտրական կապիտալը մուտք գործեց Կիլիկիա, բարոնության հիմքերն սկսեցին նույնպես ճնշալ, ինչպես Յեփրոպայում: Հոսմի կապիտալի հաջորդն եր, վոր ելի հայ ժողովրդական անտեսության կերպարանափխում եր տալիս, բայց արդեն վճէ Հայաստանի հողի վրա, այլ հեռավոր մի գաղութում: Այսպես պիտի լիներ այնուհետև միշտ: Յեփրոպական կապիտալը կարող եր հայերի հետ շփում ունենալ միայն գաղութներում: Իսկ այդ շփումը շատ մեծ, շատ կարևոր Կոռինուրդ ուներ հատկապես հայ կյանքի համար: Կարող եր կազմվել հայ առևտրական կապիտալ նույն իսկ ուժեղ չափով, բայց յեթե սա մնար ինքն իր մեջ, իր յերկրի սահմաններում, իր ներքին շըր-

ջանառություններով միայն ապրող, կլիներ այն, ինչ եր և կարող եր լինել մի պարսկական, մի արարական կամ մի թուրքական կապիտալ: Յեթե հա, առևտրական կապիտալը այդպես չելողել այլ ավելի զործունյա և շարժիչ, այդ միայն շնորհիվ այն հանգամանքի, վոր սա գրեթե իր մեծագույն մասով յենթարկվել և յեփրոպական կապիտալի ազդեցության: Այստեղից այն ահապին նշանակությունը, վոր ստացան հայ առևտրական գաղութները:

Այսպիսի մի գաղութ մասամբ գառնում եր և Կիլիկիան: Այստեղ եր, վոր ավատական, ամրոցային իրականությաւնը ճեղքվածքներ եր ստանում ավելի բարձր տնտեսակարգից: Իսկ այս նշանակում եր դուրս գալ Միջին դարերից և մտնել կապիտալիստական դարը իր նոր աշխարհավարությամբ և հասարակական նոր շերտավորումներով: Իտալական առևտրական կապիտալը լավ շահագործում եր Կիլիկիան, բայց և լավ դասախրակում եր, թե ինչպես պետք և վաճառականներ դառնալ: Յեկ նրա առաջին աշակերտները հենց իրանք՝ հայ բարոններն եյին, վորոնք դառնում եյին արդեն պարոններ: Այս մի նոր տիտղոս չեր, այլ նույն հին «բարոնը», բայց կիլիկյան տառադարձությամբ, վոր կարող եյին կրել և ավատական ամրոցներ չունեցողները: Ազնվական հողատիրությունը թափվում եր փողատիրության մեջ: Այս մի բնական հոսանք եր բոլոր ժամանակների և բոլոր յերկիրների համար: Իսկ Կիլիկիայի համար, բայց դրանից, կար և բռնադատող անհրաժեշտությունը: Կործանվել եր Կիլիկիայի հայոց թագավորությունը և հայ բարոնները կորցրել եյին հողն իրենց վոտների տակ, քանի վոր նրանք հողատեր եյին նվաճողի իրավունքով և նրանց ճորտ գյուղացիության մեծամասնությունը բաղկացած եր տեղացին, վոչհայ տարրերից: Մնում եր հայ բարոններին վոչնչանալ իրեւ դաս, ձուլվել այն տարրերի հետ, վորոնց վրա տիրում եյին: Բայց ամենքը չգնացին կորսոյան ճանապարհով. շատերն ըմբռնեցին, վոր քաղաքական անկումը վոչնչացնելով հողի ուժը, նրան համազոր մի փոխարինություն եր բարձրացնում — փողի ուժը, վոր ձեռք եր բերվում վաճառականությամբ: Իսկ սեփական անկախությունը կորցրած մի ժողովրդի համար առևտրական կապիտալը կարող եր լինել թափառիկ, տեղերին և հանգամանքներին հարմարվող կամ, ուրիշ խոսքով, գաղութային: Կիլիկիայում աճել սկսած հայ առևտրական կապիտալ այս վիճակին և յենթարկվում սկզբից և եթ, գոյացնելով մանր առևտրական գաղութներ առևտրական գաղութներում ծովեղրյա

կետերում, գաղութներ, վորոնք մատնվում եյին իրենց սեփական ճակատագրին, չունենալով ընդհանուր, կապող և միացնող տընտեսական հենաբաններ, ամեն մեկն անջատ, իր համար:

Կիլիկյան այս իրականությունը հզոր արձագանգներ ե տաւլիս բուն Հայաստանի մեջ ել ուր գործում եյին միենույն տեսակի քաղաքական հանգամանքները: Միջին Ասիայի արշավողական հեղեղները հիմնավորապես քարուքանդ եյին արել ամրող Արևմտյան Ասիան, յինթարկելով նրան իրենց նախնական արտադին տնտեսության անողոք պահանջներին: Քաղաքակըթության ավերակների վրա թափառող վոչխարներ — այս եր ընդհանուր տեսարանն աշխարհի այդ մասում: Հայաստանն ել իր լուսվ բաժինն ունեցավ այդ համեստարած քանդումի մեջ: Խցվեցին նրա յերբեմնի առևտրական ճանապարհները. Արծնը, Անինը, Դվինը, Բարդան ավերակների կույտեր եյին: Յեկ տընտեսական ձևերի միենույն հաջորդականությունը դառնում եր անհամեշտություն և Հայաստանի կենտրոնական մասերում: Արդեն Շիրակի արձանագրությունների մեջ հաճախացել եր կիլիկյան «բարոն» պատվանունը, փոխարինելով նախկին ավատականը — «իշխան»-ը: Յեկ այս ապացույց եր, վոր այստեղ ել համարժեք նշանակություն եյին ստացել հողի և փողի ազնվագետությունները: Ցուցանակող են մանավանդ արտագաղթերը: Իրանք Արևմտյան Ասիայի թյուրքական և մոնղոլական շրջաններում ավելի հաճախանաւմ են, ավելի քաղմամարդանում, բայց այլ ևս նախկին ավատական զինված արտագաղթերը չեն, և նրանց ոտար յերկիրներ տանողն այլ ևս զինվորական փառքը չե, այլ խանութի շահը:

2.

Տասն և վեցերորդ դարը բերում եր Արևմտյան Ասիային մի փոփոխություն, վորի ամրող արժեքը մշտառենությունն եր, կազմվում եյին և իրար սահմանակից եյին դառնում յերկու մեծ պետություններ — Իրանը և Թյուրքիան: Թեև յերկումն ել միենույն միջին-ասիական սկզբունքն եյին ներկայացնում և ցեղային հարազատությամբ կապված պիտի լինեյին, բայց այդ սկզբունքի գլխավոր հատկությունը կազմող կովարարությունը սկզբից և եթ պատերազմներ եր բորբոքեցնում յերկու կողմերի մեջ, համառ, դարավոր պատերազմներ, վորոնց բեմը հանդիսանում եր Հայաստանը: Չնայած վոր այս մի սարսափելի աղեա եր այդ յերկում ապրողների համար, բայց և արդեն, պարսկա-

թյուրքական տիրապետությունը, համեմատած նրանից առաջ յեղած գրության հետ, նպաստավոր հանգամանքներ շատ եր բերում իր հետ: Այլևս այն ժամանակները չեյին, յերբ Լինկիթիւմուրի, նրա ժառանգների, թուրքմենն և քուրդ խաչնարածների անդապար շարժումներն ու հարձակումները պահում եյին յերկիրը մի տեսակ հրաբխային տատանումների վհճակի մեջ: Պարսկաթյուրքական իրականությունը բերում եր և խաղաղության միջոցներ, յերբ հասատավում եր յերկուսի մշակած գրեթե միատեսակ պետականությունն իր որենսդրած վորոշ կարգերով և յերաշխիքներով: Այս կարգը հիմնվում եր մասսամբ և այն բանի վրա, վոր յերկու կողմերն ել ընդունում եյին տնտեսական բարեկաման և զարգացման խոշոր նշանակությունը պետության համար: Այս մի շատ նպաստավոր հանգամանք եր՝ մանավանդ աւասրի համար, վոր Արևելքի հին պետականության մեջ ել խրախուսված և պաշտպանված մի պարագմունք եր:

Յեկ ահա նույն այդ պարսկա-թյուրքական պետականության ոկզբնավորման դարում մենք տեսնում ենք հայ առևտրական կապիտալի աշքի ընկնող զարգացում և շարժումներ բուն Հայաստանի հողի վրա: Տեղը գարձյալ հինն ե—Արաքսի միջին հովիտը, բայց այս անգամ վոչ թե Նախճավանից գետի արևմուտք, ինչպես եր հոսում յական ժամանակներում, այլ գետի արևելք: Այս մի փոքրիկ աշխարհ ե, սեղմված Սյունիքի լեռնաշղթայի և Արաքսի ձախ ափի մեջ, Նախճավանից մինչև Արաքսի վերջին քարավագները և այդ տարածության վրա ցրված են զյուղեր և ավաններ, ամենքն ել առևտրական՝ Զուղա, Շահկերտ, Ծղնա, Դաշտ, Դաստակ, Ազուլիս, Որդուրաթ, Մեղրի, Կալեր և այլն,—տեղեր, վորոնք պատկանում եյին մի ժամանակ մարերին, հետո հայցած և իրանց ինքնուրույն աղգագրական հատկություններն ու տընտեսական կարողությունը պահպանած զգալի չափերով: Մենք չենք կարող ասել, թե այդ արաքսյան առևտրական կապիտալը միշտ ել գյուղական միջավայրում և յեղել պարփակված: Այսպես մտածել թույլ չե տալիս Զուղայից վոչ-հեռու գանվոզ հին քաղաքատեղ Ազատգիրանը, վոր անշուշտ մի ժամանակ յեղել ե առևտրական կինտրոն, բայց այժմ դժբաղգարք գեռ չուսումնասիրոված ավերակների մի տարածություն ե: Համենայն դեպս իրողությունն այն ե, վոր 16-րդ դարում արաքսյան առևտրական կապիտալը բացառապես գյուղերում և ավաններում եր պարփակված: Այս կապիտալին ե, վոր մենք տալիս ենք խոզայսկան հատուկ անունը: Խոջա, սովորաբար, նշանակում է վաճառական ամեն

կարգի, սկսած զյուղական մանր փերեղակից, մինչև խոշոր առևտրի ներկայացուցիչները: Բոլոր աստիճանավորութների վրա յել խոջայությունն ունի իր պատվավոր նշանակությունը, վոր չափվում է խոջայի գործերի դիրքերով. կային մեծ խոջաներ, կային և փոքրերը: Փոքրերը մեծերից են կախված և կազմում են մանր, ընդարձակ տարածված խանութպանությունը, վոր վաճառելի ապրանքներ ստանում է մեծ խոջաներից և այդպիսով կազմում է նրանց գործակատարությունը, ասել ե, նրանց անձնվեր դինվորությունը, նրանց ույժն ու շահը:

Մենք, սակայն, այդ մանր խանութպանությունը չունենք ի նկատի Խոջայական կապիտալ—այդ՝ պարսկական իրակունության մեջ կազմված հայ խոշոր առևտրական բուրժուազիան եր, վոր կազմում եր հասարակական առաջնակարգ շարժիչ ույժ ավատական իշխանապետությունից ազատված հայ ժողովրդի մեջ: Այդ ույժն ել գառնում է այն առանցքը, վորի շուրջը պտտում է հայոց ամբողջ պատմությունը 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ դարերի ընթացքում:

Այսքան ահազին գեր խոջայական կապիտալը չեր կարող կատարել, անշարժ կառչած մնալով Արաքսի նեղ ձորին: Իրեւ հուժկուշարժիչ նա պիտի անցներ զարգացման աստիճաններ, պիտի յենթարկվեր տարբեր կերպարանավորութների, մանավանդ ընկներ տարբեր տնտեսական-մշակութային միջավայրերի աղդեցության տակ ու այդպես ներգործեր պատմության ընթացքի վրա:

Արաքսի հովտում հայ առևտրական կապիտալը 16-րդ դարում ապրում եր իր նահապետական, առաջին շրջանը, վորի սկզբնավորման ժամանակը գեթ մոտավորապես վորոշելու հնարավորություն մենք, դժբախտաբար: Հայց վոչինչ չի արդելում յենթագրելու, վոր սկզբում Զուղայի առևտուրը տեղական սահմանափակ առևտուր եր, վոր հետզհետև ընդարձակվեց Պարսկաստանում և սահմանակից յերկիրներում: 17-րդ դարի յերկրորդ կեսում մենք տեսնում ենք այդ առևտուրը յեվրոպական շուկաներն անցած, վորոնցից մանավանդ Վենետիկն է Զուղայեցի խոջաների սիրած տեղը: 1570 թվին Վենետիկի հանրապետության դեսպանը հասնում եր Ղազին քաղաքը՝ պարսից Շահին նամակ տալու համար: Ղազինում նրան ներկայանում եյին ջուղայից յեկած գլխավոր խոջաները և տեղեկություն եյին հարցնում այն ջուղայեցիների մասին, վորոնք ապրանքներ եյին տարել Վենետիկ, և ստանում եյին պատասխան, թե այդ խոջաներին

լավ ընդունել ե Վենետիկի դոժը, թե նրանք առևտուրն արել վերջացրել են և ուղևորվել են հայրենիք: Այս գեսպանն ել ցույց է տալիս, թե վորքան նշանավոր դիրք ունեցին ջուղայեցի խոջաները պարսից արքունիքում: Նրանք եյին, վոր հաջողեցրին դեսպանի ընդունելությունը Շահի վորդու մաս: Այս ժամանակներն ել ջուղայեցի խոջաներին անսուր ենք պարսից կառավարության գաղտնի դիվանագիտական հանձնարարություններ կատարելիս: Այսպես, նրանցից յերեք հոգի գնում եյին Վենետիկի հայտնելու, թե պարսիկները պատրաստվում են պատերազմի սումանցիների գեմ, բայց սումանցիները վախում են, թե այդ պատերազմն առիթ կդառնա, վոր քրիստոնյաները (Վենետիկիցիները) հարձակվեն իրանց նավատօրմի վրա:¹⁾

Ենք այսպես, ջուղայեցիները 17-րդ դարում լավ առևտուր եյին անում, հարստանում եյին, բայց նրանց կապիտալը զեռ հաստակական նշանակություն չուներ: Հարստավություններ եյին դիգվում հարստությունների վրա: Ավանդապահ, պապերի որինակին հետեղը, ջուղայեցիները մնում եյին հարազատ զավակներ պարսկական իրականության: Թվում եր, թե խոջայական կապիտալը պիտի բացառություն կազմե ընդհանուր հայ առևտրական կապիտալի վիճակից, չպիտի գաղութայնանա, միշտ իր հայրենի ժայռերի վրա արմատավորված, խոջայական դարձած մանավանդ նրանով, վոր իր ներսում ստեղծել եր խոջաների կառավարություն: Զուղան մի փոքրիկ, առանձնացած, իր դուգակիցը չունեցող վաճառականական ինքնավար համայնք եր խոջաների վարչության տակ:

Զուղային առանձին կարեոր առևտրական նշանակություն տալիս եր նրա աշխարհագրական դիրքն այն մեծ ձանապարհի վրա, վոր կապում եր Միջին Ասիան, Իրանը Աև ծովի արևելյան ավաղանի և Կովկասի մեծ ճանապարհների հետ: Զուղայի առջեն ե, վոր Արաքսի աջ ափը ներկայացնում է հարմարություն, վոր հյուսիսից յեկող միջազգային ճանապարհը շարունակե իր ուղղությունը գեղի թալրիզ՝ մեծ առևտրական շահաստանը և դեպի այլ կողմեր: Զուղան այսպիսով դառնում է մի մեծ կայսն այդ ձանապարհի վրա, ապրանքների մի մեծ պահեստանոց:

Բայց, յեթե միայն աշխարհագրական դիրքը լիներ տնտեսական յերկույթներ ստեղծողը, մենք պիտի տեսնեյինք Փյունիկեն, կարթագենը, նույն իսկ և Զուղան իրանց նախկին առևտրական

1) Հ. Ալիշան—«Հայ-Վենետիկ», Վենետիկ, 1896, յեր. 370—372.

նշանակության մեջ, անկախ այն հանգամանքից, թե ինչ ժողովուրդներ եյին ապրում նրանց մեջ։ Բայց աշխարհագրական դիրքի հետ պիտի միանա և մարդկանց առանձնահատուկ ընդունակությունը տնտեսական վորոշ յերկույթ արտաքերելու համար։ Այս կողմից ջուղայեցիները կազմում են հայ գարավոր իրականության մեջ մի այնպիսի բացառիկ վաճառականական յերկույթ, վոր իրավունք և տալիս նրանց նմանեցնել, հայկական, ինարկե, չափանիշով, փյունիկեցիներին և կարթագենացիներին, այնքան նրանք ձարպիկ եյին ու ճարտար, այնքան հեռագնաց, շահագետ ու շահամու, ագահ ու խորամանկ։ Թեև մի բուռն համայնք, ամփոփված մի գյուղի կամ առ առավելն մի գյուղաքաղաքի մեջ, ջուղայեցին ուներ իր հատուկ զավառաբարբառը, կանոնավորված, նուրբ արտահայտություններով և ճշտություններով՝ հարմարեցրած մի առևտրական լեզու դառնալու պահանջներին։ Ջուղան ուներ և իր սեփական, չգերազանցված արվեստը—գծերի քանդակում քարի վրա և այդ արվեստով, վորի նրբությունները, ճոխություններն ու հերյուրական խոյանքների համարձակությունն այսոր ել զարմացնում են տեսնողներին, նա զարդարում եր իր գերեզմանաքարերը, մնալով, սակայն, քանդակագործության մյուս ճյուղերում կատարյալ բարբարում՝ ճաշակի և ըմբռնման տեսակներից։

Խոջայական կապիտալի այս նախնական շրջանի մասին մեր հասկացողությունն ընդլայնելու ոժանդակ միջոց կարող է դառնալ և ջուղայի, իրրե այդ կապիտալի ամենագլխավոր ներկայացուցչի, ինչ տեսակ ընակալայր յեղած լինելու հարցը։ Մենք կտանք մի վոքրիկ կառը այն նկարագրությունից, վորի մեջ մի ձանապարհորդ ներկայացնում և ջուղայի ավերակները։

«Հին ջուղայի տեղը, — զրում ենա, — ներկայացնում և կարմիր ժայռերով պատած մի խորախոր ձորակ, վորի միջով հոսում և Արաքսը և սորա ձախ ափումն եր գժբախա գյուղաքաղաքի ավերակները։ Զախակողմյան ժայռի ճակատին, նոր զյուղի գեմ, յերեսում և անտ մի հին բերդ, վորի պատերը գետ և սեպացած մնում են Այս բերդից ցած Արաքսը բավականին մոտենալով ժայռն, կազմում և մի նեղ անցք, վորի վերա յերեսում են գյուղաքաղաքի արևելյան զարպասի պատերը։ Սորանից փոքր ինչ դինը սկսվում են ավերակները, վորոնք ցրմած են վոչ միայն տափարակի վերա, այլ նաև ժայռի սեղերի և լանջի վերա Միայն այս վերջին շինությունները, նույնպես և մի քանի զըմբեթած մատուաներ, վորոնք կարծես բենակած լինին ժայռի ճակատին, այնքան փոքրադիր են, վոր տեսնողը զարմանում է, թե ինչպես եյին ընակվուժ այդ շինությունների մեջ, ուր յեթե մարդ ցանկանար մտնել, նախապես պետք է վողնի դառնար և ապա թե կարողանար ներս սողալ։ Նույնպես զարմանալի յե, թե ինչպես եյին շրջում այդ ժայռա լեռան ճակատում, ուր կարող են պատել միայն այծյամները։ Ցածի ավերակների վորոշ կերպարանքը կորել և հարդիկ, բայց նոցա մեջ դեռևս կանգնած են յերկու բազմասենյակ մեծ շի-

նություններ, վորոնք գուցե լինելին իջևաններ — քարվանսարայք։ Զուղայի տեղադրությունը այնքան փոքր և և նեղ, վոր յերեմն 8000 գերդաստան ընակիչ ունեցող գյուղաքաղաքը չեր կարող կենալ այլ կերպ, յեթե վոչ սեղմակած փոքրիկ տների մեջ, վորոնք ավելի նման են թոշունի բուների, քան մարդկային կացարանների»:¹⁾

Յեթե ճիշտ ե, վոր Զուղայում ապրում եյին 8000 ընտանիք, մի թիվ, վոր շատ կասկածելի յե թվում, դրանք բոլորն ել, ի հարկե, հարուստ կամ միջակ ունեոր խոջաներ չեյին, այլ կարնակ սովորական ամրութ, վոր սեղմակած եր այդ թոշունի բուների մեջ։ Պիտք ե յենթագրել վոր առաջնակարգ խոջաներն այդքան թշվառ կերպով չեյին տեղավորված, այլ ունեյին իրանց ապարանքները։ Այդպիսի մի ապարանք հիշատակում և Առաքել Դավիթի ժեցին, խոջա Խաչիկի ապարանքը, վորի մեջ յերեք որ ապրեց Շահ-Աբբասը²⁾։ Այս Շահն իր մի թղթի մեջ ասում եր, թե Զուղայում կան տներ, վորոնցից յուրաքանչյուրի վրա ծախսված և 2000 թուման։³⁾ Բայց այս տեսակ բացառություններն անշուշտ շատ չեյին և գյուղաքաղաքի ընդհանուր տեսարանն այնքան հուսահատեցուցիչ տիպուր եր գուցե այն պատճառով, վոր մի այդպիսի արտաքինը դարձել եր անհրաժեշտություն թագցնելու համար այն միլիոնները, վոր դրսից բերում եյին խոջաներն իրանց գաղտնարաններում թագցնելու համար։ Ինչ բացարություն ել սակայն, յեթե կարողանանք գտնել այս ասիսական բնորոշ կապիտալիստական տեսարանի առիթով, փաստը կմնա փաստ և այդ կլինի այն, վոր Ասիան ու Յեվրոպան վոտքի տակ տված խոջայական կապիտալը միայն կծծի հավաքող ու դիզող եր, լոկ դեղին վոսկու տեսքով կերակրվող, առանց այլ տեսակ ձկտումների ու սպասելիքների։ Այսպիսի իրականություն եր դարբնել ու անշարժացրել արաքսյան միջավայրը։ Յեվ վորպեսպի խոջայական կապիտալը գուրս գար իր գծիության, կարելի յե ասել՝ տնանկության խեղաբանից, պետք կլինել հանել նրան այդ միջավայրից։

Այդպիսի մի խորունկ հեղաշրջում պատրաստվեց նրա համար։ Բայց այս նույն այդ կապիտալի հօժար կամքով կամ ինքնարերաքար չեր կատարվում, այլ բոնի կերպով, հակառակ նրա կամենողության, քաղաքական փոթորիկների բուռն և ահավոր ստի-

1) Քաջերունի — «Ճանապարհորդական նկատողութիւնք» («Փորձ», հանդես, 1877—78, № 11, յեր. 352—353):

2) «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավիթից» («Վաղարշապատ», 1896, յեր. 25).

3) Յ. Տեր Յովհաննաց — «Պատմութիւն նոր Զուղայու որ յԱսպահան» հատ. Ա. Նոր Զուղայ, 1880, յեր. 46.—Թումանը-10 ուորից։

պողականությամբ: Այս մեզ կբացատրեն պարսկա-թյուրքական պատերազմների հետևյալ հատվածը:

16-րդ դարի յերկրորդ կեսի առաջին տասնամյակները չափազանց ծանր գրություն ելին ստեղծում Պարսկաստանի համար, շնորհիվ գրեթե կույր Խուղարանդա Շահի թուրության և ապիկարության, վորոնց հետևանքով յերկրի մեջ պատական իշխողների խռովություններն ու անկարգություններն ելին ծայր տալիս: Ոսմանցիներն այս հարմար առիթ ելին համարում պատերազմը վերանորոգելու համար և արագ գրավում ելին Ասրալատականը Թավրիզ քաղաքով և պարսկական ամրող Այսրելովկասը — Հայաստան, Վրաստան, Մերձկասպիական յերկիրները մինչև Դերբենտ: 1587 թվին Խուղարանդա Շահին հաջորդեց նրա վորդի Շահ-Արքասը, վոր ստիպված յեղավ հաշտություն խնդրել հաղթական թշնամուց, ընդունեց նրա ծանր պայմանները, զրկվելով նրա զրաված ըոլոր պարսկական յերկիրներից: Այսուհետև նա 16 տարի շարունակ լուլյայն, հետևողական կերպով պատրաստվում եր վոլխերիմ և շատ ուժեղ թշնամուն պատշաճավոր հականարվածը տալու համար:

Այդ պատրաստությունների մեջ ել նա հայտաբերեց այնպիսի հատկություններ, վորոնք անզուգական են զարձրել նրան վոչ միայն պարսկական, այլև և առհասարակ արևելյան Շահերի մեջ: Ամենից առաջ նա, ինչ տսել կուզի, Շահ եր, այսինքն բռնակար, վոր յեթե ցած չեր, բարձր ել չեր հին և նոր աշխարհների, Ասիայի թե Աֆրիկայի և հավագարապես Ցեվրոպայի թագակիր բռնակալներից: Այս բռնակալներից վոմանք, շատ քչերը, յեղել են և իրանց յերկրի բարեկարգիչները: Ցեվ Շահ-Արքասն ել այդպիսիներից մեկն եր, յերկաթե կամքի տեր, աննկուն ու յեռանդաշտ: Նա սկզբից և եթ ցույց տվեց, թե զիտե պատերազմել, և մի շարք նվաճումներ կատարեց Արևելյան Պարսկաստանում, տարածելով իր իշխանությունը նաև Աֆղանիստանի վրա, մինչև Հնդկաստան:

Բայց գլխավորը գեռ այդ չեր, այլ այն, վոր այդ ասիացի մարդու մեջ զարմանալի համբերատարությամբ ելին զետեղված մի բռնակալի և մի քաղակրթողի ընազդները: 1597 թվականին յերկու անդլիացիներ, Անտոնի և Ռոբերտ Շերլի յեղբայրները կնացին նրա մոտ և առաջարկեցին իրանց ծառայությունները: Արքասն արդեն զիտեր, թե վորքան բարձր և յեվրոպական քաղաքակրթությունն ասիականից և սիրով ընդունելով յերկուսին, դարձրեց նրանց իր խորհրդականները: Առաջ ու առաջ Շերլի

յեղբայրները վերակազմեցին պարսկական բանակը յեվրոպական յեղանակով, տալով նրան և ուժեղ թնդանոթային զինվորություն, զոր ուներ 500 թնդանոթ:¹⁾

Բայց մի յերկրի ույժը միայն թնդանոթների մեջ չեւ շին իրանը թույլ եր տնտեսապես, և ահա այս բանի վրա յեր ամենալուրջ ուշագրություն գարձնում իրանի տերը: Իր թագավորության սկզբից նա հանդես եր գալիս իրքեւ շինարարական տենչով բռնված մի թագավոր: Իր մայրաքաղաքն եր նա դարձնում Սպահան քաղաքը և զարգարում եր նրան մեծամեծ շինություններով, վորոնցից յերկուսը — պարատներ: Իրքեւ շերմեռանդ շին՝ նա կառուցում եր և բաղմաթիվ կրոնական շինություններ: Այս տենիպային վերակառուցողական հոգսերը զորքի և մշակույթային ձեռնարկությունների համար պահանջում ելին հսկայական ծախսեր, մինչդեռ իրանի պետական գանձարանը միշտ փայլել և իր աղքատությամբ: Շահ-Արքասը անհագորեն աշխատում և լցնել այդ գանձարանը, և նրա համար առաջնակարգ միջոցը առևտուրն եւ: Դա մի գերազանցորեն վաճառական թագավոր ե, իր կապիտայները ծառայեցնում և առևտրին, ինքն իր մարդկանց ձեռքով հավաքում և Իրանում և Միջին Ասիայում ծաղկած մետաքսագործական արդյունաբերությունը և արտահանում և նրան յեվրոպական շուկաները: Արքսի հոգտի հայերը և մասնավորապես ջուղայեցին ըը նույնպես մետաքսի առևտրով ելին զրագում և այս հողի վրա Շահ-Արքասը ծանոթություններ ուներ անձամբ նրանց հետ: Ամեն կերպ աշխատելով, վոր իր յերկիրը դառնա մի միջազգային շուկա, իրանի վաճառական թագավորն անզիացի իր յերկու խորհրդականներին ուղարկում եր Ցեվրոպա՝ կառավարությունների հետ առևտրական և զինվորական դաշնադրություններ կնքելու համար: Միաժամանակ շանքեր եր զործադրում զանազան արածություններով յեվրոպական կապիտալը գեալի իրանի առևտրական շուկան գրավելու համար: Այս բանի մեջ նա ցուցադրում եր ամենաբարձր աստիճանի կրոնական համբերողություն, ինչպես և պահանջում ելին կապիտալի շահերը: Այսպիս, նա թույլ եր տալիս յեվրոպացի վաճառականներին շինել իրանում յեկեղեցիներ և տանել այնտեղ իրանց սեփական քահանաներին:²⁾

Բայց պետք ե ասել վոր Շահի առևտրական քաղաքականության այս ճյուղն աչքի ընկնող հաջողություն չվաստակեց: Ցեվ-

1) Lavisce et Rambaud — Histoire générale, t. v, Paris, 1905 p. 871.
2) Ibid. p. 871.

բոպական կապիտալը շատ քիչ ներկայացուցիչներ ուներ Իրանում: Յեղածների և Շահի մեջ հարաբերական խոչնպոտներ եյին դնում բարքերի, սովորությունների, վարվեցողաթյան տարբերությունները:

Ահա այս հատկությունների համար և, — հատկություններ, գորոնք կենդանացրին մահամերձ Իրանը, — վոր Շահ-Արքասը ստացել և «Մեծ» տիազուր: Մանավանդ իր առևտրական հոգանավորությամբ նա դարձնում էր Իրանը թանձր աղջամուղջային խավարի մեջ պայծառ վառված մի ճրագ, դեպի վորը ամեն կողմից ձգվում եյին խաղաղ աշխատանքի և քաղաքական հանգստության կարուտ անհատներ և խմբեր: Այդպես յեղավ Իրանը մանավանդ Դանձակի, Ղարաբաղի և հյուսիսային Սյունիքի համար, յերեք հիրավի դժբախտացած յերկիրներ, վորոնց գրեթե ամբողջ կես դար քանդել, քերել, ամայացրել եյին մարդն ու արհավիրքները — ժանտախտ, սով, ուսմանյան արշավանքներ, լեզգիներ և այլն:

Յեկա մենք տեսնում ենք, վոր 17-րդ դարի սկզբում այդ տեղերից մի շարք մարդիկինքնահոժար գաղթում են և դնում Շահ-Արքասի մոտ, վոր նրանց ընդունում և սիրով և բնակեցնում Սպահանի մեջ:

Առաքել ողատմագիրը տվել և այդ գաղթողների ցուցակը, և մենք տեսնում ենք, վոր դրանք ամենքը, «արք նշանաւորք»¹⁾ ինչպես անվանում ե պատմագիրը, տեղական մանր ավատական իշխողներից եյին, մելիքներից կամ մելիքական տոհմերից: Դրանք Սպահանում, հարկավ, չեյին կարող մելիք մնալ և բնականարար պիտի անցնեյին խոջաների կարգը, դառնային վաճառականներ: Յերկուսի մասին մենք ունենք հաստատ վկայություն. Զալալբեկը և Մելիք Հայկազը դարձան Սպահանում յերևելի վաճառականներ Խոջա-Զալալ և Խոջա-Հայկազ անուններով:²⁾ Սակայն մյուսներն ել ուրիշ անելիք չունեյին պարսից մայրաքաղաքում, բացի համանման կերպարանափոխության յենթարկվելուց:

Բացի ըազմաթիվ անհատներից, գաղթեցին նաև չորս գյուղ Ղարաբաղի Դիլակ գավառից: Բայց Շահ-Արքասի համար արժեքավորն այն եր, վոր նա ձեռք եր բերում զոկական կապիտալի մի նշանավոր մասը: Դաշտ գյուղի (Ներքին Ագուլիսի) բնակչության յերեք մասը նույնպես գաղթեց և բնակություն ստացավ դարձյալ Սպահանում: Այս գաղթականներն ստացան «գաշ-

տեցի» հատուկ անունը և խոշոր դեր կատարեցին խոջայական կապիտալի պատմության մեջ:

3.

Դեպքերը, վերջապես, հասունացրին հնարավորությունը, և Շահ-Արքասն շտապեց ոգավել նրանից՝ իր գլխավոր նպատակին հասնելու, այն և ոսմանյան թշնամությունը հարվածելու համար: 17-րդ դարի սկզբում Թյուրքիան մատնված եր անիշխանության: 1603-ին Շահ-Արքասն արագ արշավեց դեպի հյուսիս, խեց Թագրիզը ոսմանցիների ձեռքից և անցկացրեց պատերազմական զործողությունները Արաքսի ձախ ափը: Ինքն այդ ափը վոտք դրած շղրած՝ զսպել չկարողանալով իր առևտրական ներքինի հետաքըրքը քրությունը, զնաց այցելելու Զուղան: Այդ մի փորձ եր բաց անելու խոջայական կապիտալի սիրար, վոր նա ցույց տա, թե ինչ և պահվում Արաքսի կարմիր ժայռերի ծերպերում: Յեվ Զուղայի խոջաները զուրս յեկան Իրանի տիրոջ առաջ կատարյալ սրտարցությամբ, ձոնելու նրանց ամենամեծ և ամենանվիրական պաշտամունքը: Առաքել Դավրիժեցին այսպես և պատմում այդ այցելությունը:

Եւ ի զալն յորժամ հասին ի գիւղաքաղաքն Զուղայ, ամենայն բնակչան Զուղայու բազմամ, և զանազան, և պէսպէս յօրինուածովք պատրաստութիւնն հոգացիալ եյին ընդ առաջ շահին, որպէս վայել է թագաւորին Իշխանը և ծերը և երիտասարդք՝ ի դարդ և ի զէնս ուկիհուուն սիրատեսիլ հանգերձից պահագարդեալը ընդ առաջ ընթանային եւ—նորաբողոջ զեռտահաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշանամ և ազնիւ զինի մատուցանէին: Լուցեալ մոմեզինօք և խնկօք և կնորկօք քահանայք և մարմնավոր երգեցիկը առաջի ընթանալով յարմարական ձախնի նուագէին: Եւ զանապարհու անցից արքայի զարդարեցին. և յեղերէ գետոյն մինչի ցապարանն Խոջայ Խաչիկին արկին փայտանդաղ առաթուր թագաւորին, պատւական և վայելու կումաշ, որոյ վերայ էանց թագուուն և զնացի տան Խոջայ Խաչիկին: Եւ ի տան անդը, Խոջայ Խաչիկն ոսկի սկոտեղ լցեալ ոսկով եղեալ ի ձեռն որդույ իւրոյ մատոյց առաջի թագաւորին, նույնպէս և ամենայն մեծամեծքն Զուղայու մատուցին ընծայ, որպէս վայել և թագաւորին եւ զաւուրս երեք եկաց անդ շահն, և ջուղայեցիք պատուցին զնահամադամ կերպար և ծաղկեհամ զինեաւ³⁾:

Պետք կամ ասելու, թե վորքան պիտի զրուած լիներ վաճառական թագավորի ախորժակը Զուղայեցիների փարթամությունը: Այստեղ եր յերևում, թե այդ մարդիկ ինչքան լավ պիտեն շահվել և շատ շահվել: Շահ-Արքասի մեջ վերջանական վճիռ եր ստանում յերեկ վաղուց ծագած միտքը: Այսքան ժիր ու լիարուն շահ վաստակող մարդկանց տեղը պիտի լինի վոչ թե այս ժայռու

1) Առաքել յեր. 16—17.

2) Տեր Հովհաննյան, յեր. 12.

3) Յեկ. 24—25.

ձորը, վոր յենթակա յե ոսմանյան հարվածներին ու չի կարող համարվել ապահով և անվիճելի պարսկական սեփականություն-այսպիսի մարդիկ մշտապես պիտի իր, Շահի ձեռքին լինեն, վոր նրանց գործածե, նրանցով հարստանա:

Զուղայի վիճակն այսպիսով վորոշված եր,—նա պիտի փոխադրվեր Պարսկաստան: Յեվ նաև միայն: Պատերազմական գործողությունները գեռ հաղթանակներ եյին բերում պարսիկներին: Բայց յերկու տարուց հետո զրությունը փոխվում եր: Թյուրքիան կարողանում եր փոքր ինչ զապել ներքին անիշխանությունը և դորաժողով լինել պարսից Շահի գետ: Աս ամենալավ յելք համարում եր նահանջել, անցնել Արաքսի աջ ափը: Իսկ իր նվաճումներն Արարատյան յերկում և նրա շրջականերում պաշտպանելու համար զորք ու զորություն չեր թողնում, այլ անապատի սարսափը: Թշնամին այլևս չպիտի կարողանալ մտնել այդ յերկիրները, վորոնք, ամայացած լինելով, չպիտի կարողանային կերակրել նրան: Ամբողջ աղքարնակությունը, հայ, թուրք թե քուրդ, դառնալով գործիք մի այդ տեսակ ռազմագիտական նկատառման, պիտի գըշիովին յենթարկվեր բռնի տեղահանության և քշվեր Պարսկաստան: Բայց զործողը միայն ռազմագիտությունը չեր: Կասենք ավելին: Ռազմագիտությունը միայն պատրվակ եր: Իսկական նպաստակը հայ խոջայական կապիտալը հափշտակել տանելին եր: Յեզ ասանողի նրբամտությունն այսպես եր դատել, թե խոջաները մենակ չգնան գերություն, այլ շրջապատված ժողովրդի հոծ բազմությամբ: Մեծ եր այս բռնադատությունը, դժվար եր նրան դլուխ բերելլ, բայց խոջայական կապիտալն այնքան թանկագին եր իրանի տիրոջ համար, վոր նա կանգ չառավ վոչ մի արգելքի առաջ, միայն թե այս լինի մեկն այն խնամառատ հոգացողություններից, վորոնցով Շահ-Արքասն աշխատում եր վոսկեղոծել Զուղայի քանդումը և տարագրումը:

Տեղահանությունը կատարվեց 1603 թվի աշնանը: Նա, իհարկե, սոսկալի ժողովրդական գժրախտություն եր: Յեվ զուր չեր աղետալի շարժման ականատես վարդապետի վողը հառաջում.

Ասոսս քեզ հայոց խզնուկ ժողովուրդ,

Ցիրուցն ելաք անմեղ անխորհուրդ

Չերի զնաման աք գեպի Խորասան

Քաղցած ու ծարակի տկլոր, թշվառական: ¹⁾

Այս ճիշտ և ճիշտ այսպիս եր, ժողովրդական թշվառություն: Բայց այս անխորհուրդ չեր: Կոտորվելով, աջ ու ձախ հարյուրա-

¹⁾ Մ. Միանսարյանի—«Քնար Հայկական», Պետք, 1868, յեր. 134

վոր դիակներ փոելով, այդ ժողովուրդը քշվում եր յերկրից յերկիր, հեռությունու լոկ այն պատճառով, վոր իր միակ նյութական ուժը կազմող վաճառականական կարողությունը պիտի շահագործելին աշխարհի բռնավորները: Հայ առետրական կապիտալն եր հայ ժողովուրդը գեպի Սպահան քշողը, ինչպես մի ժամանակակից:

Առաքել պատճագիրը կալիծով և նկարագրում Շահարքասյան դիրեվարությունը: Իրավունք ունի: Բայց նա սխալվում է այն տեղ, ուր ջուղայեցիներին ել գնում է միալար քշվող ժողովրդական զանգվածների հետ մի շարքում, իրեւն բանց վիճակից: Այսպիսի բան չեր կարող թույլ տալ Շահ-Արքասը: Զուղայեցիները հարկավ կորցրին իրանց շարժական կարողության մեծագույն մասը, բայց պիտի պահեցին իրանց միլիոնները, նորից գործեր սկսելու համար և այս մասին անշուշտ Շահ-Արքասն առանձին հոգացողություններից ունեցել ե: Մի ուրիշ պատճագիր, վոր այդ միջոցին Զուղայումն եր յեղեւ գրում է:

«Բայց հայոց աղքացն ոչինչ խստեց, այլ միայն սուրկուն արար տամբը և ամենայն բնշիւնն ե տարեալ բնակեցոյց ի Սոս քաղաք, որ է Սպահէն»¹⁾ Առհասարակ Շահ-Արքասն այս գաղթից հետո իրան անվանում եր հայերին հայը²⁾ և ամեն տեղ ասում եր, թե հայերի գաղթեցումը իրան մեծ ծախս է պատճառական կամքի կամքակիցին իրան գաղթական անվանում ե, այս սպահական մի պարսկի, Շահ-Արքասը սպահականի կողմից իրան դիմած բողոքարկվին անաց, թե յուրաքանչյուր հայի այստեղ բերելը իրան նստել և հաղար թուման և յեթե նա կամենում է, վոր ինքը մահվան դատապարտի սպահական, այն ժամանակ թեղ վերադարձնի իրան իր ծախսած հաղար թումանը:³⁾

Առաքել պատճագիրը, վոր անվանում է Շահ-Արքասին «վիշապ անդնդային», հայ աղգի կործանիչ և այն, ի վերջոյ խոստովանում ե, թե նա հայրաբար եր վերաբերում իր տարած հայերին, բայց իսկույն բացարում է զրա գաղտնիքը — կապել տարածներին իրանց նոր հայրենիքի հետ և զրանից քաղել տընտեսական ոգուտներ: Այս, ինքնըստինքյան, հասկանալի յե: Յեզ

¹⁾ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի կամախեցոյ կամ Դարանացոյ, Երուսաղեմ, 1915, եր. 38.

²⁾ P. R. du Mans Estat de la Perse en 1660, Paris, 1897, p. 183.

³⁾ Տեր Յովհաննեսն, 1, յեր. 47.

Հերմինանդ վորգեսեր հայր Շահն խալապես դառնում եր հայր
Խոջայական կապիտալի համար:

4.

Այսպես եր կատարվում հայ պատմության ամենախոշոր վաստերից մեկը, այն և՝ Զուղան տարված Սպահան կամ, ուրիշ խոսքով, հայ խոջայական կապիտալին գաղութային կայանի դիրք տալը: Խոջայական համայնքը չեր խառնվում մյուս գաղթական զանգվածների հետ: Շահ-Արքասը առանձնացնում եր նրան, բնակության հատուկ տեղեր նշանակում իր մայրաքաղաքի մի արվարձանում և այսպիսով ծնունդ եր առնում նոր Զուղան, զաղութային հայ կապիտալի ամենամեծ և ամենաուժեղ կենտրոնը գրեթե մի ամբողջ գարի ընթացքում:

Նոր Զուղան Հին Զուղայի կատարյալ կերպարանափոխությունն եր և հենց դրանով մարմնավորում եր այն դերը, վոր նա պիտի կատարեր հայ կյանքի վերաբերմամբ, դառնալով, ինչպես արդեն դարձել եր առեւրական կապիտալը Յեվրոպայի շատ տեղերում, մի հուժկու գործոն, վոր հաճում եր մարդկությունը միջին զարերից դեպի նոր ժամանակները, վորոնք լիցուն են տնտեսական, սոցիալական և քաղաքական հեղաշրջումներով:

Ի՞նչ տարբերություն հնի ու նորի մեջ: Հինը կպած և Արքաքսի ժայռերին և պետք և այժյամ լինել դրանց վրա շարժվելու համար, ինչպես նաև վողնի՝ թոշնարույնի մեծություն ունեցող տների մեջ մտնել կարողանալու համար: Մի վասկե վոր տնանկություն, անձար տափակացած ավանդականության ժայռերի տակ: Իսկ նորը լայնարձակ մի դաշտավայր ե, վորի վրա անցնում և մի կենտրոնական լայն փողոց և այդ փողոցը կարատում են յերկրորդական կանոնավոր ու լայն փողոցներ և սրանց յերկու կողքին բարձրացած են հոյաշեն մեծ տներ: Մի վաճառականական քաղաքիկ, մի փոքրիկ առեւրական հանրապետություն, վորի կառավարությունը Շահ-Արքասը հանձնել և Խոջա Նազարին, իսկ սա իր ձեռքի տակ ունի թաղապետներ, վորոնց միջոցով իրականացվում և ինքնավարությունը: Դասակարգային շերտավորումների գլխին կանգնած և խոջայությունը, նրա հետ և և հոգևորականությունը, և սրանք իրար լրացնում են, յերկումն ել իշխաններ են: Միջին դասակարգը արհեստավորությունն ե, իսկ ստորինը՝ մշակները կամ բանվորները, վորոնք առավելապես շինությունների վրա յեն աշխատում: Պրանց մեծ պահանջ կար մանավանդ այն շրջանում, յերբ կառուցվում եր Զուղան:

Այստեղ մենք, ինարկե, Զուղայի պատմությունը չենք տալիս, վորը կազմում և ընդարձակ հատվածը մեր մի այլ աշխատության, վորի վերնագիրն և «Պատմություն հայ առեւրական կապիտալի»: Այստեղ մենք պիտի ջանանք պատկերացնել հայ խոջայական կապիտալի ուժն ու շարժումները, վորոնց միջոցով նա կարողացավ այնքան խոր ազգեցություն գործել հայ կյանքի վրա:

Այդ ուժի առաջին և գլխավոր աղբյուրն այն եր, վոր խոջայական կապիտալը թագավորական կապիտալ եր և իրանք խոջաներն ել պարսից շահի գործակատարներն եյին, վորոնք կատարում եյին ապրանքների արտահանություն և ներմուծում, ազատված լինելով մաքսերից և վայելելով չտեսնված արտնությունները: Առաքել Դավրիժեցին ունի մի այսպիսի հետաքրքրական թվարկություն:

«Եամի՞ զի ինքն Շահարան ունէր սեր ընդ ազգին հայոց և մեծարանն նոցա և մանաւանդ ընդ Զուղայեցոց, որոց գլխաւորի անունն եր Խոջա Սաֆար և սորին եղբօրն Խոջա Նազար և որդոց սոցին Մելքը աղայ, և Սուլթանում և Սարֆրազի եւ հանապաղ ինքն շահն գայր ի տունն նոցա, ուտէր և ըմպէր ընդ նոսա դկերակուրս նոցա առանց խարելոյ, որպէս սովորութիւն է պարսից առնել խարսաթիւն ընդ քրիստոնէրից, այլ և ինքն շահն կոչէր զնոսա ի տունն և ի սեղան իւր և պատուէր ընդ մեծամեծն իւր, այլ և պատուիրեալ եր իւրոց նախարարաց նոյնպես առներ երկրորդ՝ զի դմակաւորական հարկն, զոր տային քրիստոնեայքն, թեթե առնոյք՝ որպէս և քրիստոնեայք ախործէին: Երրորդ՝ եթէ զիվէր կազ և կոփի և խոռվութիւն ինչ քրիստոնէից ընդ մանմետականաց և կամ այլ ինչ գործ գատաստանի՝ եթէ մեծ և եթէ փոքր, քրիստոնեայն իրավացուցանէր և զմանմետականս զատապարտէր: Չորրորդ՝ յորժամ զքրիստոնեայն բերեալ հասոց ի Ապահան և ի գիւղօրայր նորա, բազում մանմետականս արտաքսեաց ի տեղեաց և ի բնակութեանց իւրեանց և զտունս և զանդաստանս նոցա և սո քրիստոնէից: Հինգերորդ՝ յօժար կամօք հրամայեաց և կեղեցիս շինել յամենայն տեղիս, ի Զուղայ և ի գիւղօրայս, նաև ի մէջ Բերդի քաղաքին, մեծանիստ և բարձրաշէն, և այնքան յօժարությամբ, մինչ զի և ինքն յորդորէր զքրիստոնեայն, շինել զիկեղեցից և յաւուրս մեծամեծ տօնից Յարութեան և Համբարձման և յայլան, զայր յեկեղեցիսն և ուրախանոյր ընդ քրիստոնէից: Վեցերորդ՝ զամենայն կարգ և զտանդութիւնն քրիստոնէական համարձակութեամբ կատարէին քրիստոնեայքն. զիոչնակ հարկանել զժամանակ և զժորհնէքն մեծամիում հանդիսիւ առնել, այլ և ինքն շահն հա զայր ի ջրօրհնէքն և խրախանայր ի տեսութիւնն եւ զմեսեալը խաշալամով և ձայնի շարականաւ հանեալ ի քաղաքէն անցուցանէին ընդ մեջ շուկային և տանէին ի թաղիկ՝ և ոչ ոք ի պարսից ազգէն եղբերանաց և հայնոյանաց բանս առէր... և այնքան համարձակութիւն ես շահն քրիստոնէից, մինչև ի հրապարակս և ի շակայս թե հանդիպէր կազ և կոփի քրիստոնէից ընդ մանմետականաց, համահավասար զմիմեանս հարկանէին և հայնոյէին առանց երկիրդի¹⁾»:

1) Ցեր. 64 — 65

Յեվ այս բոլորն անումներ առևտրական շահի ակնկարությունը՝ վոչինչ չկար այլնս, վոր դժվարություն և դժգոհություն պատճառեր հայ վաճառականներին։ Նրա առաջ վարկի հարց ել չկար։ Շահ-Արքասը կանչում եր նրան, փող եր տալիս տոկոսներով, պայման եր կապում մետաքս զնելու և Յեվրոպա արտահանելու մասին կամ հենց տալիս եր պատրաստ ապրանք¹⁾։ Հայ խոջայի համար շատ շահավետ եր և թանկագին քարերի առևտուրը, վորը կոչվում եր նաև ակնավաճառություն կամ գոհարավաճառություն։ Այնքան ընդհանրացած և մեծ նշանակություն ստացած մի պարապմունք եր այս ակնավաճառությունը, վոր նույնիսկ մի փոքրիկ գրականություն և կաղմիկ ակների և նրանց հատկությունների մասին, առաջին վաճառականական գրականությունը մեղանում²⁾։

Ամեն ինչ, ուրեմն, կար, մնում եր անել ու շահվել։ Առետրի ծավալը, շահի չափը կախված եր հայ խոջաների ճարադիկությունից, մանավանդ չարքաշությունից, տոկուն ու համառ աշխատանքից։ Ապրանքային շրջանառությունը պահանջում եր ահուզին տարածություններ վոտի տակ տալ, չփախենալով խոչընդուներից, թշնամիներից, մահից անգամ այդ անձանապարհ ժամանակներում։ Պետք եր, վերջապես լավ ծանոթ լինել միջազգային առևտրի տեղերին, պայմաններին, պահանջներին ու առաջարկություններին։

Ի՞նչպես եր այդ բոլորի մեջ ոլուխ հանում հայ խոջան։ Այս հարցին պատասխանելու համար մենք ունենք մի շարք հետաքրքրական վավերագրեր, վորոնց հետ կծանոթացնենք այսուհետ։

I. Առաջին և անզուգական աղբյուրն է մի հայ խոջա Զաքարիա անունով, վոր ապրում եր 17-րդ դարում և վոր թեև Զուզակացի չե, այլ զոկ, բայց իր թողած վերին աստիճանի հետաքրքրական որագրով պատկերացրել ե իր ժամանակի հայ վաճառականին և վաճառականությունը մի աննման պարզությամբ։ Մենք մի քանի հատվածներ կրերենք այդ որագրից³⁾, լուսաբանելու համար մեր գրած հարցը։

1) К.Патканов—„Дневник Осады Испагани Афганцами, веденный Петросом ди Саргис Гиланем,, СПб 1876, с. XVI.

2) Այս գրականությունն ամփոփված է Առաքել Դավիթի թագավորության վերջում և բարկացած է մի քանի հատվածներից, վորոնց ուսւերն թարգմանությունը հետաքրքրական ծանոթությունների հետ ամել է պրոֆ. Ք. Պատկանյանը (տ. նրա «Црагоценные камни их названия и свойства по понятиям армян в XVII веке» СПб. 1873).

3) Այս թանկագին հիշատակարանը հրատարակել եր գյուղանոտես Ալեքսանդր Քալանթարը, բայց բոլոր տպագրած թերթերը կորել են տպարանում

Խոջայական գրականության այս նախահայրը, անվանված «Զաքարիա Ագուլեցու Արագիրը» սկսվում է այսպես։

«Ես Զաքարիայ հարց ու փորձով իմացայ իմ հայր Աղամիթըն, մայր Սավուլին, որ թվին 1630-ումն ես անարժան Զաքարիայ, որ մօրէ ծնայ սուրբ Գէորգի կիրակի օրն կէսօրէն յետն Դարձեալ կամիկն Աստուծոյ եկեալ հասար մինչև 1647 յամն կամեցաք կամիկն Աստուծոյ ուսանել վաճառականութիւնն։ 1647 յամի մարտ ամսոյն 5 աղունացից առաջին շաբաթոյն ուրբաթ օրն ես անարժան Զաքարիայ իմ հօր, իմ մօր, իմ եղրօր հրամանաւ և իմ յօժար կամոյն՝ այսօր Ագուլեց գուրս եւա իմ եղրօր որդի պարոն նիկողոսին հետ մին քնոն ապրշմուվ, դնացի գեղի Ծգմիր։ Դարձեալ մին քեռն ապրշում այլի նիկողոսին ունեց։»

Այսպես եր ահա խոջայական կապիտալի խոշոր ծովեկերյա կինտրոն կազմող Զմյուռնիայում խոջայական մկրտություն ստանում ազուլեցի Քրդանց Մաղղեսի Աղամիթի վորդի Զաքարիան 16 տարեկան հասակում։ Այնուհետև նա խոջայի թափառական կյանքի մեջ ե, մտցնում ե իր որագրի մեջ իր թափառական վաճառականության գեղքերը, իր տեսածներն ու լսածները, վորոնք հաճախ մեծ հետաքրքրություն են ներկայացնում հասարակական և նույնիսկ քաղաքական տեսակետներից։ Իսկ թե վորքան բարեխիզմ և ուշագիր արձանագրող եր նա, ցույց ե տալիս հետեւյալ հատվածը նրա որագրից։

«Դարձեալ ես Զաքարիայ կամեցայ, ուր որ զնամ, կամիկն աստուծոյ թէ զիւղն և թէ քաղաք, թէ ավեր ճանապարհ, ուր և հանդիպեցէ Զատիկի կամ Վարդագան կամ Սուրբ Խոչ կամ Զօրօհնէք արար իցեմ կամ թէ ինչ զիւղ կամ քաղաք մտանիցեմ կամ ելանիցեմ՝ զրեցեմ։ Դարձեալ կամ ինչ կամ մանզիլն, հարցանելով անուն՝ վոչ թէ մին մարդ, երեք մարդ կամ չորս մարդ կու հարցում անունն կամ քանի աղաջ կայ, վոչ թէ չափելով իմացայ, այլ իմաստուն մարդիկ հարցանելով, վոչ թե մին անգամ զնալով այս զրեցի։ 1647 յամի Ագուլեց գուրս զնացի մինչև 1664 յամն շուրջ զալով զնալով հարցանելով զրեցի ըստուքն։ Երեք չորս թղթի վրայ զրած էի, ոմն ըստուք, ոմն սխալ ազամ 1664 յամին կամիկն Աստուծոյ թերթի նորոգեցի այսօր զավարս։ Դարձեալ ես անարժան Զաքարիայ, ուր և իցէ, է թէ զիւղ, թէ քաղաք, թէ ծով և թէ ցամաք մինչև յստ զնացի ոչ, ականատես չելաք, զրեցի ոչ, զերայ իմ զնացած տեսած տեսու զրեցի, անտեսն ոչ զրեցի։»

Յեվ ահա այս ստուգապատում խոջան զնում և իր ժամանակի ամենահոչակավոր յեվրոպական առևտրական շուկաներից մեկը, Ամստերդամ։

«Յամի 1658 սեպտեմբերի 19-ումն, — զրում ենա, — ես Զաքարիայ իղմիր այսօր մտա նավ, որ Աստուծով զնանք վենետիկի։ Նավն եր Փելամիկի անուն նավին Մասպանզ-Լիսունը Աստուծած բարին առաջի։

«Սեպտեմբերի 29-ումն նավն հասաւ Մութուն Բուռուն. 7 նավ Տարաբու-

և միայն մի հատ որինակ նացել եր ինձ իբրև ընծա Քալանթարից և այդ որին այժմ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի մոտ եւ

լուս հեռու երկցաւ, գալիս էին թէ մեր նավս առնուն: Խո Աստուած մեղ
պորմեցաւ, քամի վերկացաւ, մեր նավը ողծաւ, փախաւ Աստուծով:

«Հոկտեմբերի 1-ումն նավս հասաւ Վենետիկ, Աստուծով:

«Հոկտեմբերի 17-ումն Վենետիկ, նավին 27 հայ, թող զփուանգ, ամենիկեան
թուղթն հրամանաւ տարան հին նազարաթն, տուին մինչի 2 օր ազարաթ.

«Նոյեմբերի 25-ումն նազարաթն թամաժեց, այսօր զմեղ ամեն դուրս տա-
րան, և Զաքարիայ որ եկի Վենետիկ քաղաք Աստուծով:

«Յամի 1659 յունվարի 25-ումն ևս Զաքարիայ Վենետիկէն այսօր դուրս
ելայ Աստուծով, զոր ցամաքով զնանք Մորդամ:

«Փետրվարի 13-ումն ևս Զաքարիայ բուն բարկենդան Ալամանի քաղաքն
Լիմրոկումն արարի Աստուծով:

«Փետրվարի 20-ումն ևս Զաքարիայ այսօր եկայ Թիւամենիկի քարաքն
Ամսըրդամ, որ է աննման:

«Մայիս մեկումն Ամսըրդամ. Այսոր ստամբոյ, որ է զիր դուրս եկաւ, թէ
Իսպանովի թագաւորի աղջիկն տվին Թուանդիսի թագաւորի տղին, որ բարիշե-
ցին, զերայ կասին թէ 30 տարի այ որ կոււ էին անում. այս է:

«Մայիս 23-ումն, ևս Զաքարիաս Ամսըրդանու զնացի Լեյդա քաղաք, եկի
Հառլամ քաղաքը, 2 օրէն յետնայ այլիկ եկի Ամսըրդամ:

«Յունիսի 19-ումն ևս Զաքարիայ Ամսըրդամ զիշերն 5 սհաթ, ցերեկն 19
սհաթ տեսաբ:

«Յունիսի 21-ումն Ամսըրդամ: Եկին մուշտուուդ բերին թէ Հնդստանու
9 նավ եկաւ Ամսըրդամ:

«Յուլիսի 4-ումն Ամսըրդամ: ևս Զաքարիայ տեսայ որ մեկ արծաթէ ջահ
տարան, Մուսկօվի թագաւորի համար տարան որ եր 2218 ֆունտ արծաթ, 5
ֆունտ ոսկի, որ ջուր էր տված, որ էր աննման, որ կանի 140 լիտր, թոնդ-
րաբի լիդր արծաթ:

«Նոյեմբերի 12-ումն ևս Զաքարիայ, որ Ամսըրդամայ դուրս ելայ, որ ծովով
գամ Լիլորնոյ, նավի անունն Զուստից:

«Դեկտեմբերի 6-ումն թէսիլու, 140 նաւով մին տեղ վեր կացինք Աստու-
ծով: Դեկտեմբերի 29 Զրօրհնեաց բարիկենդան նավի Զուստիցումն արարի
Այսօր Փորթուգալու սարն երկեցավ, զերայ 22 օր այ որ ցամաք չէինք տե-
սել. մեծ ուրախութիւն է:

«Յամի 1660 յունվարի մեկումն նավով եկինք Իսպանիա ի քաղաքն Կալիս
արկաթ զցեցինք: Յունվարի 6 թէ մէկի արամ հնումն ևս Զաքարիայ Զրաւու-
նենք Կալիս արարի: Յունվարի 10-ումն նավերը Կալիսու վերկացին: Յունվարի
17-ումն ևս Զաքարիան նավով եկինք Իսպանիայ, ի քաղաքն Մալիկայ. 2 օր
կացին, նավեր Մալիկու վեր կացին:

«Փետրվարի 6-ումն ևս Զաքարիայ նավով այսօր եկինք Իսպանիայ ի քա-
ղաքն Ալկանթայ, 4 օր կացինք, նավերն վեր կացին:

«Փետրվարի 27-ումն, ևս Զաքարիայ այսօր նավով եկինք Լիլորնոյ, եխ-
պայր Նիկողոսն, Ալեքսանն տեղս էին:

«Ապրիլ մեկումն ևս Զաքարիայ Եխպայր Ալեքսանն մի տեղ մտանք նավի
Զուստիցն, այսօր Լիկոռնու դուրս եկանք Աստուծով, որ զնանք Իզմիր:

«Ապրիլ 15-ումն ևս Զաքարիայ նավով եկինք Միսինայ, արկաթ զցեցինք:
Ապրիլ 28 ևս Զաքարիայ, որ Միսինու նավով դուրս եկանք Աստուծով

«Մայիս 14-ումն ևս Զաքարիայ այսօր եկինք Իզմիր, արկաթ զցեցինք:
դուրս ելանք ցամաք: Գոհութիւն Քրիստոսի, որ նոյեմբերի 12-ումն Ամսըրդամ

մասյ Փետամբիկի նավի Զուստիցն, այսօր 6 ամիսն թամամից աւել 2 օր եկինը
իզմիր¹⁾:

Ամենքն իհարկե, այսչափ բարեհաջող կերպով չեյին կա-
տարում իրենց յերկարատեւ ու ծանր ճանապարհորդությունը:
Յեթե վաճառականությունը մեծամեծ ոգուտներ տալիս եր, զրա
հետ միասին շատ հաճախ վոչ պակաս խոշոր վնասների հետ եռ
կապվում: Դժբախտ պատահարներ շատ եյին լինում, և զրանց
մեջ առանձին աղետի կերպարանք եր ստանում սնանկությունը:
Ահա մի պատկեր նույն Զաքարիայից:

«Դարձեալ այս տարուս (1661) իզմիր բինագար ոմն Զուղեցի, անունն
Քրիզոր, ավել անունն Դաւաշին, որ մեռաւ, զժոխոց բաժինն էլու, մասց այս
ստակածիս վիրա բաղրանի ապրանք 300.000 մարչիւ Ոմն փող են շախով
տուեր, ոմն ապրիշում և այլ ապրանք: Ամեն երկիր մարզի կէր, Ազուլաց Զա-
միաթին կէր 12.000 մարչիւ իմ ու իմ եղբոր Սիմոնին կէր 15.000 մարչիւ,
զերա ընկերի կէր Իզմիրումն, որ այս փողն տուեն: Այս ստակածիւուս, որ սա-
տակեցաւ, փող շատ ուներ Հնդստան թէ Ֆրանկու տան, ամեն ուրիշ մարդ
կերաւ: Սորա դաւին երեք տարի արարին, ախրն փուշ էլաւ, / փող բնամ
չի եկաւ. շատ շատ մարդ ավարայ էլաւ, մեռաւ: Այս Քրիզոր մասց Քրիստոսի
կատաստանին սկերես²⁾:

Յերբ մեռավ Զաքարիայի յեղբայր Շմավոնը Սպահա-
նում սնանկացած դրության մեջ, պարտատերերը պահան-
ջեցին, զոր Զաքարիան, իրու յերաշխավոր յեղբոր պարտքերի,
զնա Սպահան և վերջացնի հաշիվները, և Զաքարիան ստիպ-
ված յեղավ կատարել այդ պահանջը, թիւն մեծ դժվարություն-
ներով:

II. 18-րդ դարի սկզբին Յեվրոպայում գրի յին առնվել մի
քանի շատ հետաքրքրական խոսակցություններ, վորոնց մեջ շատ
կենդանի կերպով պատկերացված են Զուղայի և Արաքսի հով-
տի խոջայական կապիտալի կենցաղը, գործելու յեղանակը և
այլն: Ահա մի կտոր այդ խոսակցություններից, վոր տեղի յի-
ունեցել մի ֆրանսիացու և Սաֆարի (անշուշտ ջուղայեցի) մեջ և
վոր տալիս և հայ խոջաների «ալիշվերիշ» պատկերը ամենայն
պարզությամբ.

«Ֆրանսիացի. — Հիմա շաղագաթ արա ձեր վաճառականների առ ու ծախսն
ինձ ասա, ինչ բարաթ ապրանք կու բանացնեն ու ինչ յերկիր կերթան:

«Սաֆար. — Մեր աղջի մեջ բարաթ բարաթ բազրիկան կան, վորն յերկրին
դուրս չեն գնալ, մա դուրանումն նստած՝ այ և ամեն յերկրի ճոթ կու ծախսէ,
վորն Հնդկաստան, Արաբաստան, Հոռմացատան, Ֆրանցիաստան և այլ
յերկրի խրիդ կը բերի, եստոնց մոտ ամեն բարաթ ապրանք կընի — Զավահր

1) «Զաքարիա Ազուլեցու Օբազիրը», եր. 21—23.

2) Անդ. եր. 29.

ևարդարիա, չուխա, չիթ, արքմեղեն, տան զինաթ, ձեռագործ և այլն մանր ժունը ապրանք:

Թրանսիացի. — Մա, պարոն Սաֆար, ձեր վաճառականըն ինչպես ճանապարհ կանեն այնքան ապրանք են ձեր մեծ ու լայնասարած յերկրութիւն դեպի Հնդկաստան, Ռումելի, Արարատան, և այլ աշխարհ, չուն վոր ձեր յերկրութիւն ժուլ ու նավագնացություն չկա:

Սաֆար. — Խիստ հեշտ և սափայով. զարա յերբ վոր շատվոր են և շատ ապրանք կա, կարավան կու զանան և ունին յուրյանց քյարվանքաշին, չսկուզ, թուժանքին ամեն խառաթովին, ապրանքն ուղարկեն, ձի կամ ջորի կու բառնան, և յուրյանք ձիպորք, ինչպես մի մեծ որդու կու զնան ու ամենքն օյարվանքաշու հրամանովն աստ կամ տնդ իջեվանեն, ունեն յուրյանց հետ ամեն թուրլու (տեսակ) թոշակ և զափիրա (տատելիք), ինչ տեղ վոր կուզին վրան ու չաղիր կու տան և յուրյանց պկուքն կամ կարիքն լիուլի կատարեն, չետ յուրյանց ճանապարհն հաւաչ զնան:

«Թրանսիացի. — Զարմանալի ճանապարհ ու և առավել մեզ, վոր չենք տեսել. մա եղ խորդ կարավան ինչ լիզու ա, կամ ինչ ասել:

Սաֆար. — Մեզ ել մեծ զարմանք ա, յերբ վոր նավի հաքաթ կու լսենք. Կարավան, վոր թուրքն քարվան կանե, հայոց լիզու ա, ասել սաքի կարող վանելո, վոր աշխարհորեն կանեն դարչու կենալու կարող: Ես ել Սպահանա կարավանի հետ եկի թարգիր, տեղեն երզրում, թախաթ մինչեւ իզմիքն և իզմիրու նավ մաս, չորս ամսութեան հասանք թասին. ինչ տեղս ե, եսոր ինս որ ա, վոր քարտքս եմ մտել:

Թրանսիացի. — Տեզ շատ կու մնաս:

Սաֆար. — Պիտի մնամ մինչեւ որ ապրանքս ծախեմ: Թէ որ ծախսս յետացավ, ընկերիս մոտ ապրանքս կը թողում, խրիդ կանեմ Մոոկովի վերան, առառնով տուն կերթամ»¹⁾:

III. Գրեթե սույն ժամանակները Թրանսիացի զիտնական Տուրնըփորը ճանապարհորդում եր Թյուրքական ու Պարսկական Հայաստանում և ինչպես յերեւմ ե, ընկերացել եր Երզրումի մոտով անցնող մի խոջայական կարավանի, վորին և նվերել ե մի ամբողջ գլուխ իր ճանապարհորդական նկարագրությունների մեջ: Նա պատմում ե, վոր առետրական կարավանի շարժումը, մի ամբողջ անցք եր տնտեսապես յետամնաց, իր ամբողջ նախնականությամբ ապրող յերկրի համար: Լուրը, թե կարավանը պիտի գա, վաղորոք տարածվում եր հետավոր տեղեր և հայերը յերկու որվա ճանապարհ ընդ առաջ եյին գնում՝ նրան դիմավորելու համար և բերում եյին իրենց հետ, վաճառականների համար, զովարար ըմպելիքներ և զինի, իսկ վաճառականները լիացնում եյին ամենքին, հանելով իրանց բեռներից հարյուր ու մի գեղեցիկ ու անհրաժեշտ իրեր:

¹⁾ Շրոդեր — «Գանձ Արամյան լեզուի — Thesaurus lingae Armenicae», Ամստերդամ, 1711, յեր. 361 — 362.

«Ասիայի մեջ, — զրում եր զիտնական ֆրանսիացին, — Վենետիկի, Ֆրանսիայի և Գերմանիայի այլ և այլ ապրանքների մանրավաճառությամբ հայերն ապրագում: Փոքրիկ հայելիները, մանյակները, կիտագանկարները, փոքրիկ զանակները, մերատները, գնդասեղները և ասեղները դրամից ավելի հարգի յեն քաղաքների մեջ»¹⁾:

Այս տողերի մեջ ակնարկվողը մանր խանութպանությունն եր, վերեղակությունը: Բայց այդ մանրունքների մեծաքանակ ներուժությունը մեջանորդն եր, ինչպես վերևում բացատրեց և Սաֆարը: Հայերին առնարակ ընորոշելու համար Տուրնըփորը զրում ե.

«Հայերին յերջանիկ պիտի համարեցի զենք գործածելը շիմանալուն համար, յեթե մարդկանց բնության համեմատ հարկավոր չլիներ յերբեմն զենք գործածել՝ իրանց նմանների ձեռքով հարստանարգելուց պաշտպանվելու համար: Ինչ վոր ել լինի՝ հայերը միմիայն իրենց վաճառականությամբ են զրադվում և բովանդակ կարողությամբ սրան հետամուռ են»:

Հայ վաճառականի չարքաշությունն ու տոկունությունը իրավամբ զարմացրել են դիտող յելքրապացւն և նա ասում ե, թե տեսել և նույնիսկ ամենահրուսած վաճառականների, վորոնք մինչև վիզը գետի մեջ մտած՝ ձիերը և սրանց վրա բարձած մետաքսի բեռները սուզվելուց համար, առանց ուշագրություն դարձնելու՝ թե ումն են պատկանում այդ բեռները — իրենց, թե իրենց բարեկամներին:

«Գետակներից անցնելիս հայերը իրենց ձիաների կողքով են քայլում և ամբողջ ճանապարհորդության ժամանակ ոգնում են վոչ միայն իրենց աղղակցներին, այլ և այլազգիներին Այս բարեմիտ մարդիկ իրանց սովորություններից բնուպ չեն չեղալում: միշտ նույնն են, չափաղանց խոռվարություններից խույս են տալիս և հարգում են խաղաղասերներին, վորոնց հյուրընկարում են ամենայն սիրով և կերպարում: Յերբ խամամում եյինք նրանց մի հիմնողին, ամբողջ կարավանն իր չնորմակալությունն եր հայունում մեզ»:

Բայց այսքանի հետ միասին Տուրնըփորն արձանագրում է հայ խոջայության մի պիտիկասվոր կողմը: Այդ այն ե, վոր յեր նրանցից մեկը ոտարության մեջ անհաջողության և հանդիպում, այլ ևս չի վերադառնում իր յերկիրը, վորպեսզի ազատի իր պարտապահնջներից, ասելով՝ թե յերես չունի նրանց մոտ յերակալ: Սակայն այս բանը չի արդարացնելի հանգամանքն այն ե, վոր սնանկություններ շատ սակավ եյին պատահում հայ վաճառականների մեջ: Նշանակելի յե և սակարկության հետելյալ նկարագրությունը:

¹⁾ «Pitton de Tournefort — «Relations d'un voyage de Levant», Lyon, 1717, t. II, lettre XX.

նուում են, և դնուում սեղանի վրա. հետո ճռումաբանուում են, վորքան կարող են, մի կողմից փառ են համբում, մյուս կողմից աղմկալից խոսակցություններ շարունակում Տեսնելով այս, մեզ թվում եր, թե մտա և կոխվը, բայց միշտ հակառակն եր լինում, վորովհետև այս տեսակ առևտուրը իրանց սովորությունն ե. իրար հրելոց հետո, միջնորդները վաճառողի ձեռքը այնպես սաստիկ են թոթվում, վոր խեղճը ճիչ է արձակում և նրան չեն թողնում, մինչև վոր համաձայնում է գնողի առաջարկած գումարին Սակարկությունը վերջացավ և մենք ծիծառում ենք¹⁾:

Այս ել ավելի տեղային, խանութպանական մի տեսարան ե: Խոշոր խոջայությունը, այն, վոր առևտրական գործիչ եր միջազգային չափանիշով, այդ յեղանակի սակարկություն չեր անի, գոնե յեվրոպական շուկաներում: Բայց Տուռնը ֆորին զվարճացրած առ ու ծախսի յեղանակն առհասարակ ասիսական եր և միայն հայերին չեր հատուկ:

Զուղայի տեղափոխումը մի տեսակ դրդապատճառ եր դառնուում, վոր ավելի գործոն, ավելի միջազգային գառնար Արաքսի հովտի մյուս առևտրական գյուղերում ամփոփված խոջայական կապիտալը: Առաջնություն ստանում եր դոկական կամ, ավելի ճիշտ ասած, ազուլիսյան կապիտալը: Զուղայեցիների հետ յեվրոպական շուկաներում են և դոկ խոջաները, վորոնց ներքին և արտաքին կյանքը մեզ ալիլի լավ ծանօթ ե, շնորհիվ վերոհիշյալ Քրդոնց Աղամիրի վորդի Զաքարիայի:

Միջազգային շուկաներում հայ խոջան, բացի լեզուներից, պիտի ունենար և մի ամրող առևտրական հանրագիտակ՝ զանազան յերկիրների առևտրական պայմաններն իմանալու համար: Այդ գործը գյուրացնելու համար Զուղայեցի խոջա Պետրոսի հաշվով 1699-ին մի գրքույկ եր տալվում Ամստերդամում այսպիսի վերտառությամբ.

«ԳԱՆՉ ԶԱՓՈՅՑ ԿՇՐՈՅՑ, ԹՈՒՈՅՑ ԵՎ ԴՐԱՄԻՑ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՐՀԻ, որ է գիտութիւն ամենայն տեսակ կշռոց՝ չափուց և դրամից, որով բոլոր աշխարհի վաճառականութիւնն վարի, ժողովեալ ու ի մի վայր հավաքեալ աշխատությամբ ՂԱԻԿԱՍԻ, ապաշնորհ Զահընկալի ՎԱՆԱՆԴԵՑԻՈՅՑ ծախիւք և ի խնդրոյ հայցման զուղայեցի Խաչատուրի որդի պարոն Պետրոսի:

Այս ել խոջայական գրականության մի շատ հետաքրքրական հիշատակարանն ե: Թեև վերնագիրը գրաբար լեզվով ե, բայց ամրող գրքույկը գրված և պարզ Զուղայական աշխարհաբարով: Այդ ամենքին մատչելի մի ուղեցույց եր, վոր մատակարարում եր բազմադիմի տեղեկություններ համաշխարհային շուկայում գործածվող չափերի, կշիռների, ապրանքների մասին,

թե ինչ, ուր կարելի յե ձեռք բերել թե ինչ յերկրներում ինչ լեզուներ են գործ ածվում, թե ինչ ճանապարհներով կարելի յե գնալ Յեվրոպայի այս կամ այն վաճառանոցը և այլն, և այլն: Առանձին մի գլուխ մեջ բացատրված են թվաբանության (ռադիամի) չորս գործողությունները և առաջարկվում են խնդիրներ վաճառականական գործունելությունից: Հայ խոշոր խոջան շատ լավ ըմբռնում եր, թե միջազգային շուկան իր յերկրի մանրավաճառի անշարժ խանութը չե, այլ փոփոխվում ե անդադար, և այդ փոփոխություններին հետևել չկարեցողը պետք և դուրս շպրտվի շահի ասպարեզից: Յեվ անա այդ առևտրական ձեռնարկի մեջ հեղինակը, հանկարծ կանգնեցնելով հեթանոս, բրահմանական, հրեական աղանդների թվարկումը, մոցնում և այսպիսի մի խրատ:

«Յեղբայր վաճառական, հայս գրքումս ինչ վոր գրեցավ վասն քաշից, դրամից և դիմաթի, ժամանակով կու փոխի, կամ ավելանայ կամ կու պակասի. զարա ալիշվեր շի բանն աստվածապեր կանոն չե, վոր անփոփոխ լինի, բայց փոփոխական և և մարդադիր կանոն և ժամանակավոր: Հայտնապես միշտ և հանապազ կու տեսնանք՝ քաշից, գրամից և ապրանաց զիմաթի փոփոխութերը ինչպես ապրեշումին՝ մանածին՝ բրդին՝ զրմին և այդ ապրանաց: Ես պատճառիս թե ժամանակավ մեր գրածին զարշու տեսնիք, չը զարմանաք և վոչ վատ ասեք մեզ, սարար փոփոխումն, ինչ վոր մենք գրեցինք՝ ժամանակավ հշմարիտ եր և ժամանակավ բանիք բաներ կու փոխի. վող լիք և լիք բանասեր»¹⁾:

Ահա և նմուշներ այն ժամանակված վաճառականական լեզվից:

«Իմօրնայ քաղաքումն ճոթն խարջ այ փոքր՝ թաղայ թաղայ կու ծախվի, այսպես՝ մոլիխարն և սօֆն, ապրեշումն զարով կու ծախուի, հարիւրին և զարյինը կառնուն Ալիշվերիշի փողն ջուլի այ. 9 ջուլին մին կորենթ մարշիլ է, որ է 72 գրացի հարիւր զիտր ապրիշումին՝ նազարաթանայ կառնուն. հակին մին մարշիլ աօվանի. զարին կես մարշիլ, նովը յինք կառնուն, մի կօրէնթ մարշին 69 գրացի է. վախտի գէօրայ՝ հարիւրին 2,3,4,5, ավելի սարքն է Քէվանդու գրամոնին, լաջվարդն, բեխի սումբուլն, ոսքի մանածն, մահմուգին՝ մերջանն քահրիւրարն՝ զըբմըզն՝ և սոցին նման ապրանք զարով կու ծախին, մաջին օնցով, բուլըն՝ բամբակէ մանածն և մեղրամուն զանթարով կու ծախին: Վենետիկու ալիշվերին Լիտօրնու պես այ. ապրեշումի ահվան այս է. Ղադիմի սովորություն և կապած հնար ապրեշումն լիարէն 48 զրուշիթ՝ որ է 2 կորէնթ դուկատ, թէ թանգ է հնար ապրեշումն՝ գարէն փոքր այ, թէ ածան է, գարէն շատ է: Միւս ապրեշումիցն վախտին գեօրայ՝ զան ավել՝ զան փոքր թանկ ու աժան Ալիշվերիշի փողը շատն կըուշէթ այց²⁾:»

Ահա ինչ դաստիարակություն եր բերում ասիացի հայ խոջային յեվրոպական կապիտալը: Շահն ստիպում եր, շահը պարտավորեցնում եր շարժվել, վարեքար ընկնել, սովորել,

1) Յեր. 53:

2) Յեր. 41 — 42:

¹⁾ Ibid.

հոկել արթուն, առիթ չփախցնել: Յեվ խոջան, այս գաժան, բայց
իր շահամիտությամբ սիրելի դպրոցի մեջ կուած-կովիված, դառ-
նում եր առաջավոր տարրը իր համայնքի մեջ, ամենքից խե-
լքն ու փորձառուն, վոր գիտեր խիզախել շահեր վորսալու հա-
սար, նախաձեռնող, համառ ու աներկյուղ, իրեն մի արտօն-
ված և պաշտպանված արքայական հիմնարկություն:

5

Յեվ հարստանում եր նոր Զուղան որերով, ժամերով հեքաթա-
կան չափերով: Յեղիս կրօնավոր Ռափայել դյու Մանը, մեկն
այն բազմաթիվ մինիոնարներից, վորոնք վխտում եյին Թյուր-
քիայում և Պարսկաստանում՝ պապի համար հոգիներ և ֆրան-
սիայի համար առևտրական շահեր վորսալու համար, պատմում ե,
վոր Չուղայեցի խոջան դնում եր Վենետիկում յերկու շարան
մարգարիտ յերկու կամ յերեք ֆրանկով և ծախում եր Սպահա-
նում յերեսուն կամ քառասուն ֆրանկով: Ահա ինչպես գիտեր
հայ խոջան շահացնել իր գրամն ու բազմարկածյան յեռանդը:
Այսպիսով եր, ասում ե նույն ֆրանսիացի կղերականը, վոր
Զուղայի հայերը տիրացան անհուն հարստությունների: Նա հի-
շատակում և մեկին, վոր Յերեանում յեղել եր մսագործ, խալ
Զուղայում ձեռք եր բերել 23 կամ 24 հազար թումանի մեծ կա-
րողություն, վոր անում եր 960 հազար ֆրանկ: Ուրիշ շատերն
ունեն 20 հազար, 10 հազար թումանի կաբողություն¹⁾:

Ոտար աղբյուրներից ավելի ճոխ, գրեթե հրաշապատում են
հայ աղբյուրները: Նոր Զուղայի պատմության հեղինակն ա-
սում ե, թե հարստությունը գետի պես եր թափվում Զուղա: Յեվ
իրավ, միայն այզմիսի առատության մեջ են հասկանալի դառ-
նում այն որինակները, վոր բերում ե նա: Հենց միայն խոջա
Սարֆրազի մասին ժողովրդական ավանդությունը պատմում եր
յերկու բան: մեկն այն եր, վոր նա, ճաշի հրավիրելով Շահ-Արքաս
յերկրորդին, նրա բոլոր նախարարներին, պալատական ավագա-
նու և անթիվ ծառաների հետ, ամենաճոխ սեղան սարքեց և՝

«Յետ ամենայն վայելչությամբ վերջանալոյ հացկերութեանն, — ասում է
պատմիչը, — զամենայն արծաթի կարասի և պարագայս նույն հանդիսի ի պա-
տիւ երեսոց արքային ընձայեալ է գորացն նորա»:

Մի ուրիշ անգամ շահի հետ գնալով այն տեղը, ուր կամուրջ
եր շինվում գետի վրա, նույն Սարֆրազը, գարճյալ ի պատիւ
թագավորի, կանգնեցնում է գետի ընթացքը, թափելով նրա մեջ

«հերմակ շահի» կոչվող մանր արծաթի գրամներով միքը քը-
սակներ և այդ գումարն ընձայում ե շահի այդտեղ զտնված
ծառաներին: Այս յերկու դեպքում հայ խոջայի ծախսած գումարը
հաշվում են մոտ քսան հազար թուման, վոր անում ե մոտ ութ
հարյուր հազար ֆրանկ¹⁾:

Այստեղ շատ շահեկան ե ցույց տալ հայ առետրական խոշոր
բուրժուազիայի մի շատ ընորոշ հատկությունը: Այսպիսի ան-
միտ շոայլություններ ցուցադրելու հետ զուգընթացաբար, հայ
խոջան մնում եր դարձյալ գծի, գրոշանոց: Գետը վոսկով և ար-
ծաթով կտրելու ու այդպիսով կամուրջի հիմքը դնելու ավան-
դությունը գոյություն ուներ և հին Զուղայում և վերաբերում
եր Արաքս գետին, իսկ գործող անձը խոջա Խաչիկն եր, յերկի
վոչ այն, վորի տանը, ինչպես տեսանք, հյուրընկալություն
գտավ Շահ Արքասը: Ահա ինչ են պատմել Քաջրերունուն Զու-
ղա գյուղի հայերը.

«Պատմում ե նաև, — ասում ե նա, — վոր խոջա Խաչիկը կամրջի ամրության
համար վոսկի և արծաթ եր զնում հիմքումը: Կամրջի շինության ժամանակը
նա հանձնեց յուր ծառային այժմյան հինգ կոպեկին համապատասխան գու-
մար, վոր Զուղայի փողոցումը գնե 3 կոպեկի 100 հատ ձռ և 2 կոպեկը վի-
րագարձնի: Մասան կասարեց տիրոջ հրամանը, բայց 2 կոպեկը ավելորդ հա-
մարեց վերագարձնել և զրա համար սաստիկ հանդիմանություն ստացավ խոջա
Խաչիկից Մասան ընդդիմարանեց յուր պարսին, թե ի՞նչ և 2 կոպեկից ար-
ժողությունը՝ յերբ զու գոսկին և արծաթը անխնայ թափում ևս ջրի հատակը:
Խաչիկը պատասխանեց, վոր յեթե 2 կոպեկը չխնայէ, անկարելի կլինի և այս
առատությունը»²⁾:

Փողովրդական ավանդությունն ե, վոր մի փոքր բարձրաց-
նում և վարագույրի ծայրը՝ ցույց տալու համար, թե ինչպնա
եյին հարստանում մեծափարթամ խոջաները: Այսպիսի գրոշանոց
խնայողությունը չեր, անշուշտ, միակ միջոցը: Հարստացման յե-
ղանակների մեջ եյին անխուսափելիորեն նաև հանրածանոթ
շահագործումներն ու կեղեքումները կապիտալի միջոցով, բայց
այս մասին մեզ անկեկությունները գրեթե բոլորովին չեն հասել,
վորովհետև պատմություն գրողները հոգեորականներն եյին, իսկ
այս դասի հետ առետրական կապիտալը մերժ մերժած եր իրեն
շահակից և աջակից: Խոջայությունը, կամ առհասարակ վորեն
ուրիշ անվանումով, փողի ներկայացուցիչ հանդիմացող հասարա-
կական տարրերը գրի և գրականության տերը յեղող հոգեորա-
կանության համար և ազգի գլուխ եր, և իշխան, մինչև անգամ

1) Տեր Հովհանյան, 1, յեր. 90.

2) «Փորձ» 1871—78, № 11, յեր. 351.

և իշխանապետ, և այսպիս պիտի ընդունելին, իհարկե, նաև խոնարհ խավերը, աշխատանքի տակ կքվածները, կեղեքվողները: Մեր վերոհիշյալ խոջա Սաֆրազի գերեզմանաքարի վրա զրված եր.

«Ա», իմ անհման խոջայ որ էիր Հայոց թագաւոր,
Անունա Սաֆրազ կոչի՝ սրճթաց զօրիդ դատավոր,
Խելօք, քո ճարտար լեզվիս զարմանար ամեն թագաւոր,
Շատ իշխան քո տեսուտ փափագ անեղատես իշխան փառուոր¹⁾:

Հետաքրքրական ե այստեղ նշանակել խոջայական կապիտալի մի հատկությունն եր Զուղայի բոլոր հարուստները լուսավորչական չեյին: Կային և կաթոլիկ հայեր, և դրանց մեջ շատ հայտնի յեր Շահնրիմանյանների տոհմը, վոր ընդարձակ առևտրական գործառնությունների և խոշոր կապիտալի տեր եր: Թեև կապիտալը միայն իր շահն ունի զավանանք, բայց հայ իրականության մեջ կրոնական-դավանաբանական արոհումներն ազդում ենին նաև կապիտալի վրա, տալով նրա հասարակական-մշակույթային դերին տարբեր ուղղություններ, մինչև իսկ առաջ բերելով ազգամիջյան պայքարներ: Այս յերեսույթը նկատելի յի դառնում Հնդկաստանում և մանավանդ կ. Պոլսում:

Հայ խոջայությունը, Սպահան գնալուց հետո յենթարկվելով, արաքսյան իրականության համեմատությամբ, խորին կենցաղական հեղաշրջման, գարգացնում եր Ասիայի Վտորքում մի շառյլ բուրժուական նիստուկաց, աշխատելով համընթաց քայլել յեթե վոչ իրանի շահնշահի պալատի, գոնե պետական բարձր պաշտոններության և ազնվականության հետ: Առաջ ու առաջ այս նոր ճաշակի և նոր պահանջների արտահայտիչ եյին հանդիսանում խոջայական ընակարանները:

«Եինեցին, — գրում ե Գավրիժեցին, — յարկս և ընակութիւնս ինքեանց հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցք, թեաւոր ապարանոք և ամբասուն նովանցոք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղկես ոսկոյ և լաջվարդի և պէս պէս երանգաց ակնախտիդ տեսողաց: Նույնպէս շինեցին և զեկեղեցին հրաշապան յօրինուածովք ըստ արժանույն փառացն աստուծոյ, յերկնանման խորանոք և զերամբարձ կաթուղիկէիւք, բովանդակ ծաղկեալ պէս պէս երանգովք ոսկոյ և լաջվարդով, տնօրինականոք տեան և պատկերօվք սրբոց²⁾»:

Գեղարվեստական այս յեռուն շարժումն այնքան տեական է գառնում, ինչպես կյանքի յերեսույթ, վոր ծնեցնում է տեղական նկարչական պատկերագրական տաղանդ: Դա Մինաս վարպետն էր, յեվրոպական արվեստի փոքր ինչ աշակերտած մի ջուղայեցի:

Ոոր վերադառնում ե իր հայրենիքը և իր նկարչական զեղեցիկ ձիւքը գործադրելու մի ուրիշ ասպարեզ, իհարկե, չի գտնում, բացի խոջայական ապարանքից:

Պարսկական արվեստն իր արհեստավորական միանման անընականությամբ յետ եր մնում նույն իսկ պարսիկների աչքում, և Զուղայի խոջայական ընակարանը նկարչական զարդարանքի կողմից գերազանցում եր նույն իսկ շահական պալատը: Այստեղ ել տեղեկություններ մենք ստանում ենք դարձյալ միայն Առաքել Դավրիժեցուց: Նա ասում է.

«Եւ եկեալ (Մինաս վարպետն) ի քաղաքն Ասպահան ընակեցաւ ի տան իւրում որ էր ի մեջ Զուղայեցոց, և զործէր զարուեստն իւր զպատկերանութեան: Եւ վամն կարի առավել վայելչակերտ գեղեցկամիզ չքնազատն յօրինուածոյ արուեստին, մեծամեծք Զուղայեցոց տանէին ի ծաղկել և ի պատկերագրել զյարդս ապարանքից և տանս իւրեանց, այսպէս և խոջայ նազարի որդի խոջայ Սարֆրազն տարեալ ի տուն իւր առ ի զարդարել զապարանս իւր ծաղկօք և պատկերօք³⁾»:

Շահ-Սեփին, գնացած լինելով Սարֆրազի տունը, ծանոթանում ե այդ զարմանալի արվեստին և արվեստագործին, և այսուհետեւ ե միայն, վոր Մինաս վարպետի վրձինը, հայ խոջաների ընակարանները շքեղազարդելուց հետո, գնում ե նույնն անելու և շահական պալատում:

Կշապատելով նոր Զուղայի այդ բոլոր պարագաները նրա հիմնարկության սկզբից, մենք կարող ենք, առանց սխալանքի մեջ ընկնելու ասել, վոր այս գաճառականական զաղութը մի յեղակի յերեսույթը եր Արևելքում: Մեծ հարց եր — կարող եր այդ յերեսույթը մշտական լինել և այս հարցը, ինչպես յերեսում ե, իրենց չեյին տալիս ջուղայեցիները, Մեռավ Շահ-Աբբաս մեծը, մեռան և նրա մոտիկ հաջորդները, վորոնք, այսպես թե այնպիս, պահպանում եյին Զուղայի վերաբերմամբ ստեղծված դրությունը: Բայց վորքան ճեռանում եր ժամանակը մեծ բոնակալի և մեծ գաճառականի ստեղծած կարգերից, այնքան մանրանում և անպետքանում եյին Սեփեվյան տան Շահերը, պետությունը աղքատանում եր, սաեղծելով Զուղան պարբերաբար կողոպտելու անհրաժեշտություն, կրոնական ֆանատիկությունը դառնում եր պետական ուղղություն, անկարելի դարձնելով խաղաղ կենակցությունը Սպահանի և նրա արվարձանի մեջ: Զուղան աստիճանաբար ընկնում եր:

Բայց նա արդեն կատարել եր իր չափազանց խոշոր դերը,

¹⁾ Անդ, յեր. 91.

²⁾ Յեր. 63-64.

կենարուսացնելով և մեծացնելով խոջայական կապիտալը և այսպիսով դարձել եր մի մեծ կայան, վորտեղից այդ կապիտալը պիտի մղվնի գեղի իր հետագա զարգացման, տարածման և կերպարանափոխման փուլիրը:

Այսպիսի մի գերի մեջ մտնելու համար հարկավոր եր, վորինք՝ ջուղայեցիությունն ել՝ ավելի լայն հասկացողություն դառնար: Իր գոյության առաջին հիմնամյակում Ջուղան պատկանում եր ջուղայեցիներին: Բայց հետո, շահի հրամանով Սպահան քաղաքի բնակիչ հայերը դուրս հանվեցին այդ քաղաքից և բնակեցվեցին ջուղայի մոտ: Այսպիսով Սպահանի մի շարք հայարնակ թաղեր — Դաշտեցի, Յերեգանցի, Թավրիզեցի և այլն դարձան Ջուղայի թաղեր: Սրանով, ուրեմն, բոլոր խոջոյական տարրերը համախմբվում եյին մի տեղ և Ջուղան, կորցնելով իր աղ գագրական միատարրությունը, դառնում եր մի ընդհանուր վաճառականական հայրենիք, վորի մեջ մտնող մասանիկներին հաղորդվում եր մի համայնական միաձույլ կերպարանք — Ջուղայի փուրյուն: Այս բառվ կարելի յե բնորոշել 17-րդ դարի այդ խոշոր հայ առևտրական բուրժուազիան:

Իինելով հանդերձ մի հեռավոր, հաղորդակցության վատ միջոցներով անջամաված զաղութ, ջուղայեցիությունը շատ խոշոր ազգեցություն եր գործադրում զրեթե ամբողջ հայության, մասնավորապես նրա կրօնական կենարոնի, Եջմիածնի վրա: Այստեղից և այն հաստրակական գերը, վոր ուրիշներից չգերազանցված չափով դառնում եր ջուղայեցիության հատկանիշը: Ջուղայուսուկ խոջայական կապիտալայի կուտակման վայր չեր, այլ և ժամանակի հոչակված մտավոր կենարոններից մեկը: Նրա դերը շատ մեծ և մանավանդ ժամանակի ամենազիստավոր մշակույթային շարժումներից մեկը կազմող տպարանական գործի մեջ: Ինքը, Սպահանի առևտրական արվարձանը մեծամեծ ջանքեր եր թափում իր ծոցում զարգացնելու համար տպագրական-հրատարակչական գործունեյությունը, բայց իրանը վոչ մի հարմարություններ չեր տալիս այդպիսի մի գեր կատարելու համար: Յեկ ջուղայեցիությունը դրա փոխարեն մեծ գործ տեսնում եր Յեվլուպայում, ուր նա գտնվում եր ինչպես իր տանը: Գրական աշխատանքի մեջ ինքը՝ խոջայությունն անձամբ վոչ մի մասնակցություն չուներ, ամեն ինչ կատարվում եր հոգևորականության ձեռքով, իսկ խոջայական կապիտալն իր ճոխություններից փշրանքներ եր հանում հրատարակության ծախսերը հոգալու համար, ստանձնում եր այսպիսով մեկնասության պաշտոնը, վոր ապագայում

շատ պիտի դարգանար և դառնար հայոց գրականության զարդացման ամուր հիմքերից մեկը: Մշակույթային գործունեյության այս ճուղին ջուղայեցիության հետ աշխատակցում եր և զոկ խոջայությունն Արաքսի հովարից:

Խոջայական մեկնասությունը, տպագրելի գրքերի ընտրությունը թողնելով հոգենելով հոգենորականներին, բաժին եր պահանջում և հայ վաճառականի համար, վոր պետք եր զուսա աշխարհաբար հասկանալի լեզվով հաշվառություն սովորելու, անդամ յեկեղեցական գրքեր կարգալու, աշխարհներ ճանաչելու և այլն: Կապիտալի այդ պահանջը կատարվում եր, և բացառապես յեկեղեցական — ժամերգային տպագրիր գրականության մեջ սովորում եյին հատուկոր այսպիսի հրատարակություններ — մի թվաբանություն, մի աշխարհագրական քարտեղ, — վորոնք չնայած իրանց փոքրության և սակավության, ամբողջ հեղաշրջում եյին առաջացնում հայկական մտայնության մեջ, մղելով նրան դեպի աշխարհականացում: Գեղեցիկ որինակ կարող և ծառայել այն, վոր հայ հոգևորականը ջուղայեցի խոջայի պատվերով պարաստում և «Գանձ չտփուց...» վաճառականական ձեռնարկը, վորից մենք նմուշներ բերինք վերևում:

Յեկ միայն գրականության ասպարեզում չե, վոր ջուղայեցիությունը փոքրիկ ու նեղիկ պատուհաններ եր բաց անում գեպի մտքի դրսի, նյութական աշխարհը: Այսպիսի պատուհանիկ խոջայությունը Ջուղայում բաց եր անում և դեպի պետականությունը: Նրանից կան ծառայողներ շահական կասավարության, անդամ զորքի մեջ: Մենք խոջաներ ենք տեսնում, վորոնք շահերի կողմից դեպան են գնում պետությունների հետ քաղաքական և առևտրական բանակցություններ վարելու և դաշնագրություններ կնքելու համար:

Այս բոլորը նշան և բուրժուական տնտեսության զարգացման: Խոջայական կապիտալի վոչ միայն նահապետականությունն և անցել այլ և պահանջները, ախորժակն են մեծացել: Համաշխարհային առևտրական կապիտալի իմպերիալիստական մարմաջը — շուկաների նվաճումը նրան ել և բռնում, նա յել սկսում և անդիւցիների, հոլլանդացիների, ֆրանսիացիների յեղանակով զործել՝ առևտրական ընկերություններ կազմելու միջոցով: Թեև այդ ընկերությունները, յեվրոպականների հետ համեմատած, փոքր ու ասհամանափակ բաներ են, բայց այդքանն ել նշանավոր առաջազիմություն և ասիական անհատականությամբ տուգորված իրականության մեջ, և հայերն այնքան ուժեղ եյին 6 կո – Խոջայական կապիտալը

զգում իրենց այդ կաղմակերպության շնորհիվ, վոր նույնիսկ մրցակից եյին հանդիսանում յեվրոպացիներին: Այսպես, յերբ 18-րդ դարի սկզբում Փրանսիացի կրօնավորները շատ ձեռքնորու զաշնազիր կնքեցին Սպահանում և ստացան Ֆրանսիայի համար մի քանի կոնցեսիաներ, այս բանին սաստիկ հակառակություն ցույց տվին անդիմացիները, հոլլանդացիները և հայրը¹⁾:

6.

Զուղայեցի խոջան վոտի տակ եր տալիս համարյա ամբողջ աշխարհը, և մենք ունենք մի յերկար ցանկ այն տեղերի, ուր նույն յերկան եր գալիս գնողի և վաճառողի դերում: Ահա Զուղայի այդ առևտրական քարտեզը:

Մոլրան, Լանոն, Սրբիրնդան, Զանասար, Աբարաբրադ, Խուռջու յել Հնդկան, Բանկալա, Բիարքարան, Բնարխս, Մովի, Դագիփուլ, Զալտափուլ, Շանգադափուլ, Խերաբադ, Դարխարադ, Դոլփարադ, Մրինջան, Բերանիփուլ, Սուլշար, Գուջրար, Ովուանկարադ, Շադանի, Հեյդարարադ, Մոււլիբանիլար, Փեղու, Հուռ, Բուրանդ, Խորա յել Խուռա, Չիրաս, Քոչին, Սենան, Մալադ, Զափիար, այս ոմանի Բրատիա կան, Թոնատի, Ամրուն, Մուլխաս, Թիմուն, Ալիոն, Մանիլա, Շուենսվ, Հարաւուսան. Սպահան իր արշաներուն, Մասադ, Բալխորուխոս, որ և Ազբեկասան, Պանդահա, Պազի, Քարուլ, Արակն, Փիւռար, Քիւմիր: Գառնամք զամ Երեվան, Դիլան, Մազմանդարան, Գասկոն յել Քեսան Շուէս, յել Լոյիջան յել Լուսաւեան, Գանջա յել Գարաբադ, Շիրվան, Շամտի, Մուկով, Լենումազար: Գառնամք Բարտ, Արաբսան, Բաղդադ, Հալապ, Կուտանինուսպոլիս, Բուրսայի Անդրանա, Մար, Արցրում, Թոռար, Իզմիր, Մահնա, Ալիկունա, Վանատիկ, Ալանան, Զենիվա, Մառչիլա յել Ֆուանգա, Բնիլլեն, Ամսերդամ յել Տանձիկա, Ասպանիտ յել Ենիփիլունի Երկիրն»²⁾:

Թեև այսքան շատ են և մձնագած Զուղայի առևտրական ձևնապարհները, բայց և այնպես՝ խոջայական կապիտալի ամենաշղթավոր ձգողական ուղղությունները յերկու եյին — դեպի հարավ, դեպի Հնդկաստան և դեպի հյուսիս, դեպի Մուսաստան:

Ավելի շատ սիրվածը, ավելի շատ բանուկը հարավային ուղղությունն եր, և այս այն բնական պատճառով, վոր Հնդկաս-

տանից կարելի յերշատ հարստություններ արա սհանել, մինչդեռ Մուսաստանը գրեթե բացառապես ներմուծման և սպառողության յերկիր եր:

Խոջայական կապիտալը ճանաչել եր Հնդկաստանի ճանապարհը Նոր Զուղայի կառուցումից շատ առաջ ել, գեռ նույն յսկ 16-րդ դարում: Մենք գիտենք արգեն, վոր խոջայական առեմրի գլխավոր ճյուղերից մեկը գոհարավաճառությունն եր, իսկ ամեն տեսակ թանկագին քարերի հայրենիքը Հնդկաստանն եր: Թեթև ու փոքր, հեշտ ու աննկատելի տանելու, միաժամանակ նաև մեծ շահ բերող ապրանքը բնականաբար պիտի Հնդկաստան տաներ հայ վաճառականին վոչ միայն Արաքսի հովտից, այլ և Լեհաստանից և այլ տեղերից: Բայց այդ յերթևեկությունը մինչև 17-րդ դարի սկիզբը մասնակի, նոսր յերեսույթ եր կազմում:

Նոր Զուղան մուեցնում եր հայ խոջայական կապիտալը Հընդկաստանի սահմաններին: Շահագրգումտն առիթներն այս մեծահարուստ և շուայլ յերկիրը միշտ ել մատակարարել ե համաշխարհին վաճառականության, բայց առանձնապես 16—17 դարերունն եր, վոր նա յենթարկվեց յերկոպական կապիտալի բուռն հարձակություններին, վորոնք և հետո պիտի լափեյին իր հարստությունների յերեսից դժբախտ յերկրի ինքնուրույնությունը, տնտեսական և քաղաքական անկախությունը:

Յերբ Զուղան տեղափոխվեց Սպահան, Հնդկական թերակղզում իրար հետ կատաղի մրցման մեջ եյին անգլիացիները, Փրանսիացիները, հոլլանդացիները և փորթուգալացիները: Հասկանալի յե մրցությունների խստությունը — չափազանց չաղ եյին այս կտորները, վոր պոկում եր այդ յերկրից անկշտում կապիտալը: Անգլիական հռչակավոր Արենլա — Հնդկական տուերական ընկերությունն իր հիմնարկության առաջին տարիներում տալիս եր իր բաժնետերերին դիվիդենտ 210, 218, 260, մինչեւ իսկ 340 տոկոս:¹⁾ Զուղայեցիությունն ել նետվում եր այդ մրցադաշտը նույնական հարուստ հունձ վերցնելու համար: Պայմանավորվերսվ անգլիական ընկերության հետ, նա ապրանքներ իր տալիս և լավ շահվում: Շահ Արբաս առաջինը անգլիական ընկերության ոգնությամբ խլեց փորթուգալացիների ձեռքից ներմուգ նեղուցի վրա յեղած գեղեցիկ նավահանգիստը, վորին տվեց Բենդիր-Արբաս անունը: Այդ մի ճանապարհ եր, վոր հատկապես հարկավոր

¹⁾ Maurice Herbette — «Une Ambassade Persane sous Louis XIV», Paris, 1917, p. 11.

²⁾ Տեր Հովհանյան, 1, յեր. 159-160:

եր հայ խոջայական կապիտալին՝ Հնդկաստանի հետ առևտրական հարաբերություններ պահպանելու համար¹⁾:

Անգլիական ընկերության (կոչվում եր հայերի մեջ սովորաբար Կումպանի) հետ իրանց հարաբերությունները ճշտելու համար, ջուղայեցի վաճառականները կայացնում են համաձայնություն, վոր արձանագրված եւ 1688 թվին ընկերության կողմից տրված հետեւյալ արտանագրի մեջ.

«Կուսակալ և ընկերություն վաճառականաց Խոնդրնայ առևտուր առողջ ընդ արեւլյան Հնդկաց, առ ամենեւնան՝ յորս այս ընծայութիւն հասանեցի, առաքեն ողջոյն»:

«Որովհետեւ Սըր Զօսիս Չայլդ, պարոն փոխ կուսակալ ընդ երկար խօսակցությամբ ընդ Խոջայ Փանոսի Քեւալանթարի, մեծի հայ վաճառականին Ասպահանցուց՝ որ ի Պարսկաստան, որպէս և ընդ Սըր Շարժինայ ասպետի, որ ի Խոնդոն՝ ծանոթացաւ ի մասին ազգին հայոց՝ պէս-պէս հանդամանաց յառաջ տանելոյ զմեծ մասն հայ վաճառականութեան որ ի Հնդկիս և ի Պարսկաստան և անստի յնւլքոսից ընդ հանապարհն Անգլիոյ, որ ոչ միայն օգտէր մաքսից նորին մեծութեան, այլ և մեծապէս նպաստ մատուցանէր անգլիական նաւարկութեան, իթէ ազգն հայոց այնպիսի արձակութիւն գտանէին յընկերութենէ ի քաջալերութիւն փոխազրելոյ զնախնի զընթաց վաճառականութեան իւրեանց ընդ եւրոպիան եւ որովհետեւ մեր կամք եղեալ է այն՝ միշտ քաջալերս տալ և առաւելուլ զհասարակաց վաճառ և նաւարկութիւն թագաւորութեան այսորիկ, վասն որոյ յետ լրջութեամբ հասու լինելոյ առաջարկութեանց վերաբերելոց առ այս գործ, բարւոք համարեցաք հաստատել ըստ հետեւյոց զոր օրինակ! Նախ զի ազգ հայոց այժմ և յամենայն յաջորդեալ ժամանակս ունելին զհասարաբաժին օգուտ արդարութեանց՝ զոր ունի կամ որոց Հնորհնելոց իցէ ընկերութիւնս այսորում և իցէ ի նախազրաւիցն կամ անգղիացի վաճառականաց: Երկրորդ՝ զինոցա է բացարձակ ազատութիւն ընդ ամենայն ժամանակս անցուդարձ առնել ի Հնդկաց յայլ աշխարհ կամ յայլոց աշխարհաց ի Հնդկիս ունիցէ նաւու ընկերութեան միջասահման պայմանաւ, որպէս վայել է ազատ անձանց ընդհանրապէս երրորդ՝ ազատութիւն է նոցա բնակել յո և իցէ քաղաքո, յաւանս, ի պահակս զօրաց ընկերութեան ի Հնդկաստան, առնուլ, տալ և զնել զկալուածս և տունս ընտրիլ ի քաղաքական պաշտօնս և ի պատիւս, այնպէս՝ որպէս թե ծնեալ իսկ էին յանգղիացիս, ունիլ միշտ զբացարձակ և զանվրդով ազատութիւն պաշտերոյ զհաւատ իւրեանց: Եւ առ այս վճռնմք զի չունիմք անսասան պահել կամ մշտնչենաւորիլ ի ծառայութեան մերում զայն կուսակալ որ ունիցէ մասամբ խուիցէ կամ խսովիցէ զսսա յո և իցէ արտօնութեանց՝ սովոր Հնորհնելոց նոցանու իսկ զայլ կամ առաւել հարկս հարկանիցին նորս ի Հնդկաստան, քան զոր գործավարք ընկերութեան, կամ որիցէ անգղիացի ծնեալ՝ առնէ կամ պարտ իցէ առներ Զորրորդ՝ զի արձակ լիցին նաւարկել յո և իցէ պահակաց ընկերութեան ի նաւահանգիստ Հնդկաստանի, ի ծովն հարաւային, ի Զին և ի Մանիլայ՝ նաւօք ընկերութեանն և առնել զառևտուր իւրեանց ընդ Զին և Մանիլայ կամ ընդ նավահանգիստ և տեղիս, որք սահման հասանեցին հրովարտակին ընկերութեան հաւասար սակարկութեամբ, մաքսիւ և նաւողչէիւ՝ ընդ անգղիացիս»²⁾:

1) Տ. իմ «Հայկական Տպագրություն», հատ. 1, թիֆ. 1904, յեր. 176:

2) Տեր Հովհաննյան, 1, յեր. 178—179.

Այս արտոնություններով անգղիական առևտրական կապիտալը կատարելապես վորդեգրում եր հայ խոջայական կապիտալը Հընդկաստանում, դրա հետ միասին մտցնում եր իր վորդեգրածի մեջ զուտ անգղիական գծեր, վորոնց ամենախոշորն այն եր, վոր ցամաքագնաց և կարավանավար խոջան զառնում եր ծովագնաց, ովկիանուսների վրա առևտուր անող: Այս մեծ կերպարանագությունը բավական կլիներ հանելու համար Հնդկաստանի հայ վաճառականներին խոջայության գրությունից: Բայց դեռ դրա ժամանակը չեր: Դեռ Հնդկաստանի առևտրականն ամուլք կապված եր Զուղայի հետ՝ վոչ միայն ընտանեկան կապերով, այլ և առևտրական բարձր շահներով: Հնդկաստանի առևտրական հայը յենթարկված եր Զուղայի վաճառականական ժողովի իրավասության և նրա գատաստանին եր զիմում իր շահները պաշտպանելու համար: Բայց, համենայն դեպս, 17-դարի ընթացքում հայ խոջայությունը Հնդկաստանի հողի վրա սկսել եր և առաջ եր տանում իր կերպարանագությունը:

Անգլիական Կումպանիան այնքան բարձր գնահատեց իր ձեռքբերած հայկական կապիտալի աշխատակցությունը, վոր պարտք համարեց առանձնապես վարձատրել միջնորդ խոջա Փանոսին: Վերևում բերած արտոնագրի հետ միասին ստորագրվում եր և հետեւյալ թուղթը.

«Որովհետեւ խոջա Փանոս Քալանթար մեծ հայ վաճառական, ընակիչ Ասպահանաց ի Պարս մեծաջան աշխատառութեամբ յառաջ տարաւ զդաշնն ընդ ասացեալ ընկերութեան, յաղագս վերածելոյ զմեծ վաճառ անգղիական նաւովք, թէ յիւրմէ կողմանէ և թէ այլոց համազգեաց իւրոց, վասն որոյ ասացեալ կուսակալ և ընկերութեան ըստ խնդրոյ յիշեալ խոջա Փանոս Քալանթարի և ի տրիտուր վաստակոց նորա, չնորհէ նմա և սերնդոց նորա զմենավաճառութեան մեղեսիկական,¹⁾ որոյ վասն հատուցանելոց է նա միայն հարիւրին՝ տասն մաքս և զովորական վարձ նաւոց ընկերութեան եւ ասացեալ ընկերութեանն սովոր հաստատէ՝ զի ոչ ինքնին զնեսցէ և վաճառեսցէ այսուհետև զայս նիւթս և ոչ այլում թույլ ատցէ թէ անգղիացի ոք իցէ՝ թէ օտարական»²⁾:

Ակնեղենների այս մենավաճառը նորից և նորից շեշտում ե, թե վորքան կարևորություն ուներ առևտրի այս ճյուղը ջուղայեցիության համար: Հնդկաստանը կարող եր միայն բազմապատկել այդ կարևորությունը, ընդարձակել այդ առևտրի տարածումը և մանավանդ շահավետությունը: Հայ վաճառականը կարող եր աջող ձեռք բերում մի որում տիրանալ հարգին հարստության: Ահա հենց մի որինակ: Յերկու վաճառականներ ընկերովի գնում են

1) Մեղեսիկ—մի տեսակ թանկագին քար ե:

2) Անդ, յեր. 179—180.

անսովոր խոշորություն ունեցող մի աղամանդ: Ծագում է նրանց մեջ վեճ և գնողներից մեկը զիմում և Զուղայի վաճառականական ժողովին այսպիսի բողոք քաղը ունեցած է:

«Պատճառ զբոյ այս ե, վոր թիզը 1118-ում (1669) արյամ ամսի 25-ում եկինք Սուրաթ Բանդարն, դաշտն մին դանս ալմագ եր բերել ավել Աղամանանց Հովհաննեսն. քան 159 ըռաթի Հովհաննեսն արել իմ կուչտն ասաց, թե այ Սիմոն, դամալին եկել ա մին քար ա բերել 159 ըռաթի ա, առունք ընկերովի, ևս ասացի իմ ա առունք ընկերովի, ասաց լավ ա առունք, կեսն ինձ կեսն քե. ևս յեղարս մեր միջումն եկավ. հինգ վեց որով հետան դալալն արել քարարեն խոտուրն. Հովհաննեսն ինձ կանչ ուղարկեց թե յեկ վոր քարն մուշախաս առենք, գնացի Հովհաննեսնենց տունն նսասանք, քարն քաշով 159 ըռաթի, գինն մուշախաս արարինք 11 հազար թուման, 15 " բատա փողն ասանք Մին զարեաֆ՝ քար ծախողին ավենք խալաթ, մին զարեափ դաշտին, եսպես առինք դուրս եկինք: Հովհաննեսն ասաց այ Սիմոն, չունքի Սահակն ինձ խետա, մին հստա ինձ, մին հստա Սահակին, մին հստա քե. յես ասացի թե գոր որ զարար անի ևարարել կեսն իմն ա կեսն քունն, չումքի Սահակի անունն հառաջ հիշել չի. դու եվ զիտես քո հստան ու Սահակն Յերկու օրով հետան դալալն ուղարկեցի, թե այ պարոն Հովհաննեսն, իմ ըռաստաթ փողն ուղարկեմ, ասաց թե քարն հետ ամ ավել ես ծախողին՝ դալալեն ել թախեթ արարի վոր յետ չեր տիկել: Յես գանձա արարի Հովհաննեսին հետախոսկ ասելն, չումքի եսպես մեծ քար ա, չնի թե Ավան յիմանա՝ քարն ձեռաց գնա, չումքի քարն գնամանա Սպահան, գրեմ մեր Ռայնուն, վոր պարոն Ավետիկն ա, պարոն Մինասն՝ մեր դատաստանն առեն: Հովհաննեսն դուս յելավ թե գնա Գուշաթն, պարոն Մինասն մարդ ուղարկեց Հովհաննեսն հետ բերին, թե քարն ինձ խետ ընկերովի առել աս՝ վեսել զնաման, մին տարգա 2500 թուման շախ արետ քարն ձեռնեն հինք առեց»¹⁾:

Հնդկաստանի վաճառական հայն իր գոհարեղենով համարձակություն եր ստանում նույն իսկ նորին բրիտանական մեծության վաճառերն ընկնելու: 17-դարի կեսում Մաղրասից վոչ հետո գտնվող Մալափուռ քաղաքի քաղաքապետն եր մի հայ, Մարկոս Բուզգադ (Աղապադ?) անունով. նա ակնեղեններ շատ ուներ, ուղում եր իր սեփական նավա ունենալ, բայց վորովհետեւ Հնդկաստանում լավ նավ շինել չգիտեն, դիմում և Անգլիայի թագավոր կարողուն, իրը նրա հավատարիմ հալատակ և ներկայացնելով մի տուփ, ցուցակագրում ե նրա բովանդակությունն իր նամակի մեջ այսպես.

«Մատանի մի մեծաքանակ՝ կապոյտ գոհարաւ. այլ մասանի մի ևս մեծագույն ուկեպյն յակնթաւ. և մասանի մի կարմիր յակնթաւ՝ փոքրագոյն քան զիկեր յիշեալսն. մի հատ մարզարիտ բարէմայ. պատուական կարմիր յակնթավ բերկրալի ի տես ընդելուզեալ ոսկելուու. գոհար մի վասն կրելոյ ի վերայ լանջաց և կարելի առ ի զատուցանել ի մասուն՝ լինելով ակն մի հանդերձ երեքին կապոյտ և ճերմակ շերտիւք. և ևս ակն մի ծանրաթեք և մեծաքանակ ըստ զատողութեան ընիկ երկրականաց տեղւոյս որք վկայեն առզայն մեր ձաւոր գոլ ական կարկեհանսի: Այսոքի ամեներին, ամփոփեալ ի փոքրիկ տուփ

մի սոկեկուռ և կնքեալ նոյն իսկ կնքով որ առ երի ստորագրեալ անուանս նուերեմ և զետեղեմ ի ներքոյ ստից գերիշխանութեան ձերոյ...»²⁾;

Փոխարենը աղերսում եր, վոր թագավորն իրան մի նաւ պարզեց: Ահա և մի ուրիշ ջուղայեցի խոջայի դրամագրուխը ակունքը ներով.

«ա. դանա մեծ լալ որ է 65 զիրեթ, ա. դանա լալ որ է 14 և կէս զիրեթ ա. դանա լալ որ է 8 զիրեթ, ա. դանա լալ որ է 18 զիրեթ. ա. դանա լալ որ է 10 զիրեթ, ա. դանա կազոյա եազութ 105 զիրեթ, ա. գեղին և ա. ճերմակ անլուռ արծաթ մատանի, ա. դանա լալ մատանի արծաթ, ա. դանա լալ թախուա, ձիդ 13 և կես զիրեթ, ա. դանա լալ բազամի 22 և կես զիրեթ. 26 զիրեթ լովեզա (մանր) եազութ. 8 հատ սուլայի. 16 ճերմակ բուրսադ, ա. գեղին բուրսադ. ա. ճերմակ բլոր գուշվարա. ա. հատ կարմիր եազութ, թ. դանա լալ հընդի 103 զիրեթ. է. դանա զմբութ՝ քաշն ա 94 զիրեթ»³⁾:

Բայց գոհարավաճառները միշտ չեյին գոհ մնում իրանց գործից: Մեր առջեւ և մի խոջա, վոր թանգ գներով ակներ և առել, տարել և վենետիկ, բայց գնող չե զտել: Յեվ նա գանդատվում և վոտանավորով.

«Փոստով եկաք մեր Վանատիկ, որ ժամանակն էր ամառան Ունինք ալմազ եազութ բարինք վասն վաճառութեան. Պատահեաց մեղ քասատ բազար, գինն պակաս կուզեն, յիժան. Ասինք թե տանք մեր ջաւայիրն, առնումք սոցա ջամ ու շիշան: Մեր ասնուլն սազի կացինք՝ շիշա տփողը զայի չեղան»⁴⁾:

Մենք արդին հիշատակեցինք, վոր խոջայական կապիտալը գիտեր Զուղայում կազմակերպվել առեւտրական ընկերությունների մեջ: Այդ ընկերությունները բավական հաճախ կրկնվող յերկույթ են կազմում խոջայական կյանքի մեջ: Բայց գրանք խոշոր կազմակերպություններ չեյին, զրեթե միշտ 2—5 հոգուց ավել մասնակցողներ չունեյին և զործի մեջ մտցրած կապիտալն ել հետո յեր խոշոր լինելուց: Շատ անգամ ընկերություն կազմողները յեղայրներ եյին լինում: Կազմակերպման փոքրությունը, սակայն արգելք չեր, վոր ստացվող շահը լինի խոշոր: Ահա, որինակ յերկու այդպիսի զեպք: Յերեք հոգի ընկերություն են կազմում, յերկուսը դնում են 600 թուման, յերբորդը մասնակցում ե իր անձնական աշխատանքով և տասը տարվա ընթացքում այդ գումարը շրջանառություն գործելով զանազան տեղերի և մասնավորապիս Հնդկաստանի առնութիւն մեջ, բերում եր զուտ շահ 36804 թուման⁵⁾: Մի ուրիշ ընկերություն, բազկացած յերկու յեղայր-

1) Ս. Տեր Մ. Գրիգորեան — «Հայք ի Հարաւային Հնդկաստան», Վենետիկ 1922, յեր. 9 — 11.

2) Տեր Հովհանյան, 1, յեր. 163.

3) Անդ, յեր. 168.

4) Անդ, յեր. 161.

ներից, առևտուր և անում Հնդկաստանում, ունինալով դրամա-
գլուխ 27950 ռուփի: 30 տարվա ընթացքում այս գումարը բերում
է մաքուր շահ 1,763,600 ռուփի¹⁾: Այս յերկու յեղայրներից մնկն
եր զլխավոր գործիչը, Խոջա-Հովսեփը, վորի գերեզմանաքարի
վրա դրված է:

«Տոպան խոջայ Յուսէփի
Որդի աւագ շինէնց Մարգարի,
Վաճառական յոյժ գովելի,
Մեծահոչակ Հնդկաց երկրի,
Պատուով պայծառ յամէն տեղի,
Ի մեջ ծովու և ցամաքի,
Նաւագար էր ուրոյն նաւի,
Համագործ էր նաւապետի,
Թագաւորաց էր ցանկալի
Մեծամեծաց յոյժ պատուելի,
Անձանձիր և աշխատալի,
Երախտաւոր բազում մարդի.
Սա աշխատեաց յիսուն տարի,
Բարզեաց գանձս ի վերայ գանձի,
Զամենն եթող ի յաշարնի,
Ինքն հանգեաւ ի յայս տեղի,
Սա ոչ հանգեաւ և ոչ օր մի
Եւ ոչ ինդաց իւրոյ զանձի,
Գնաց առ յոյսն քրիստոնէի,
Առ հանգիստն մեր Քրիստոսի²⁾:

1704 թ.

Այս իրը թե փառաբանություն եր, վոր իրը թե սիրելի պիտի
դարձներ խոջայական կապիտալի հերոսին Զուղայի գերեզմանո-
ցում: Բայց վոչ մի պարավագրություն այնքան ցայտուն կեր-
պով չեր կարող բնորոշել այդ կապիտալիստական մարմաջը — որ
ու գիշեր քնից ու հանգստությունից զըկվել միայն փող դիզելու,
գանձի վրա գանձ ավելացնելու համար: Այսպես և յեղել և այս-
պես և բուրժուազիայի պաշտամունքն ամեն տեղ: Յեվ յեթե այս
պես եր լուսավորչական կապիտալը Զուղայում, նրանից վոչնչով
պակաս չեր և կաթոլիկ կապիտալը նույն տեղում: Շահը իմանյան
հարուստ վաճառականական տունը 17 թղ դարի վերջերում մոտ
ութ հարյուր հազար գուկատի մի գումար և դնում Վենետիկի
բանկերում, վերպեսզի նրա տոկոսներով հասութակերի (ունտիյե)
ապրուստ անե: Միաժամանակ Շահը իմանյան շարունակում

¹⁾ Անդ. յեր. 183.

²⁾ Անդ. յեր. 196 — 197.

Եյին իրանց առևտրական գործունեյությունը զլխավորապես
Հնդկաստանում, ասել ե՞ն նախընթացի, խոջա Հովսեփի նման զանձ
եյին ավելացնում գանձերի վրա: Սակայն ի՞նչ յեղան հազար ու
մի տեսակ հնարքներով դիզած այդ վուկիները: Նապոինոնյան
պատերազմները սնանկություն եյին բերում Վենետիկի բանկերին
և խոջայական կապիտալի այդ խոշոր կուտակումը կորչում եր
անհետու¹⁾

Մենք արգեն տեսանք, վոր նոր Զուղայում խոջայական կապի-
տալը կենդրոնանում և ուռճանում եր, ցանցերի մեջ առնելով և
Արևմուտքի բոլոր շուկաները, վորոնցից ամենաուժեղը հանդիսա-
նում եր Հնդկաստանը: Տեսանք նույնպես, թե ինչպես խոջայա-
կան կապիտալը հոսում և Զուղայից գեպի այդ հարուստ, միջազ-
գային կովախնձոր գարձած յերկիրը: Այս հոսանքը գնալով հոր-
դանում եր, նախանշան գառնալով՝ վոր Զուղայի գերակշությունը
թուլանում և և Հնդկաստանը վերջիվերջո պիտի խլեր նրան՝ յեթե
Զուղային մինչև անգամ տրված լիներ խաղաղ մրցակցի ճակատա-
գիր ավելի յերկար ժամանակով, քան վորքան տրված եր նրան:

17 դարի կեսում այդ հոսանքն այնքան մեծացել եր, վոր հա-
յերին մենք տեսնում ենք մի փոքրիկ գաղութ հիմնած Գանգեսի
գետաբերանքում, ուր հետո, 1690-ին, անգլիական կումպանին
հիմնեց Կալկաթա քաղաքը, վորի համար Բենգալի թագավորից
գնվեցին յերեք զյուղեր և այդ գնումն աջողեցնողն եր խոջա
Սահրատ ջուղայեցին: Այսպես վոր հայերն են համարվում Կալ-
կաթայի խակական հիմնադիրները²⁾:

18-րդ դարին եր մնում վերջնական հաղթանակ տալ այս պատ-
մական շարժման, վորի հետեւանքով հայ խոջայական կապիտալը
պիտի կերպարանափոխվեր, դառնալով նմանայ տելվրական
կապիտալ: Այս նոր շարժիչին մենք կդիմենք իր տեղում:

7.

Գալով այժմ այն յերկրորդ ուղղության, վորով հայ խոջա-
յական կապիտալը տանում եր իր առևտրական գործառնություն-
ները, մենք այստեղ ունենք մեր առջև նախառեփորմյան կամ նա-
խապետուայն Ռուսաստանը, մի գերազանցորեն ասիական պե-
տություն, վոր նոր և, Արևմուտքի հետ սկսված առևտրի մի-
ջոցով, յենթարկվում Արևմուան Յեվրոպայի ազգեցության: Թեև

¹⁾ Անդ. յեր. 127.

²⁾ S. Mesroby S. Seth — «History of the Armenians in India», London
1903, հատված 3-րդ.

այսպիսով ասիական ապրանքների պահանջը սաստիկ պակասում էր Ռուսաստանի մեծ քաղաքներում, տեղի տարով յելրոպական ապրանքների գերակշռության, բայց սրանով չեր խցվում վոլոս գետի մեծ ճանապարհը, վոր ուղղակի կապում եր ցարերի պետությունը Պարսկաստանի հետ, Կասպից ծովի վրայով¹⁾: Պարսկական ապրանքները, վորոնց մեջ գլխավոր տեղը բռնում եյին մետաքսն ու բուժքը, մնում եյին իրանց նախկին կարևորության մեջ և նրանց գներու համար ուսւ վաճառականները գնում եյին Պարսկաստան, բայց այդ ճանապարհորդությունները հաճախակի չեյին լինում, վոչ ել շատ արդյունավոր, այնպիս վոր դարձյալ աշխարհաշրջիկ ջուղայեցին եր գլխավորապես, վոր իր բեռները մացնում եր և այս աշխարհը: Վոլգայի գետաբերանքում շինված Աստրախան քաղաքն արդեն մի խոշոր առևտրական կենտրոն եր, ուր իրար հանդիպում եյին Արևելքի բոլոր վաճառական ժողովուրդները:

Հայերը մի փոքրիկ առևտրական գաղութ ունեյին, ուր անշուշտ, անծանոթ հյուրեր չեյին արաքսյան խոջաները և առավելապես ջուղայեցիները: Աստրախանի հայ առևտրական գաղութը առանձին կարևորություն ստանում եր 17-րդ դարում և սկսում էր զարգանալ ու մեծանալ մանավանդ դարի յերկրորդ կեսում: Այստեղ եյին յերևան գալիս Նոր Ջուղայի խոջաներն իրենց ապրանքներով, բայց սովորաբար վոչ թի տեղական շուկայի հետ կապվելու համար, այլ դարձնում եյին այդ տեղն իրենց գլխավոր կայան և մտնում եյին ընդարձակ յերկրի խորքերը—Մոսկվա, Նովգորոդ, մինչև իսկ Արքանգելիկ, ուր նրանց առջև բացվում եր ծովային ճանապարհ, վոր տանում եր նրանց Արևմտյան Յելրոպա: Բայց ամենից շատ հաճախված տեղը Մոսկվան եր, մայրաքաղաքը, վոր ներմուծվող ապրանքների գլխավոր սպառողն եր: Այստեղ եր ցարը, վոր ինքն ել վաճառական եր, գնում եր իր հավանած ապրանքները, իսկ չհավանածները բաց են թողնում, վոր շուկա մտցնեն²⁾:

Հետաքրքրական ե, վոր հայ վաճառականների գործառնությունները Ռուսաստանում հետքեր են թողել պետության պաշտոնական թղթերի մեջ և զրանք հավաքված են ու ապված³⁾:

1) П. Мельгунов—«Очерки по истории русской торговли IX—XVII в.», М. 1905, гл. VIII.

2) Проф. Кулишер—«История русской торговли» Петер. 1923 г. с. 157:

3) «Собр. окт.» ч. I стр. 328.
«Всемирный», վենետիկ, 1843, յեր. 13—14.

այնպես, վոր կարելի յե քայլ առ քայլ հետեւ այդ առևտրական հարաբերությունների զարգացման: Առաջին ծանոթ արձանագրությունը վերաբերում է 1626 թվականին, յերբ Մոսկվայությունը թագավորում եր առաջին Ռուսանովը—Միխայիլ Ֆեոդորովիչ: Նրա վորդի Ս. լեքսեցի թագավորության յերկրորդ տարին (1647) թագավայլյան անունով մի հայ խնդրում ե նրան տալ հրովարտակներ, վոր ինքն իր ապրանքներով շրջե զանազան քաղաքներ: Իսկ 1660-ին նույն ցարի մոտ զալիս և «Ապահանից հայ վաճառական խոջա Զաքար Ասհրադյանը մատուցանելու համար թագավորին առեւտրական ընկերության կողմից ընծավուկ և արծաթով ու աղամանդներով, հակինթներով և մարդարիտներով ընդեկուզած բազկաթուներ, վորոնք զնահատված են 22,589 ոռերլի 60 հոպ. ինչպես նաև ուրիշ ընծաներ: Դիսպանական Պրիկազի մեջ այս վաճառականը բացատրություններ տվեց Հնդկաստանից թանկագին քարեր և թութակներ բերելու և Պարսկաստանից Ռուսաստան վոսկերիչներ, արծաթագործներ, հղկիչներ և այլ արհեստավորներ հրավիրելու մասին: Յեկ նորից վերադարձվեց Պարսկաստան

Այս ընծայի մասին հետեւյալ մանրամասնություններն ե հաղորդում «Բազմավեպ» կիսամայտ հանդեսը:

«Խուսաց Ս. լեքս թագավորին որերը, 1659-ին Ասպահանի հայ վաճառականներն Զաքար Ասհրադյան անունով մեկը, վոր պարսից գոխարթային ալ գործակալն ե յեղեր, ծովով Ս. մատերիան կուգա, անկեց ալ 1660-ին թագավորական հրամանով Մոսկվա քաղաքը կը հասնի ինն ընկերով: Ասիկա թագավորին ընծա կը բերէ մեկ պղնձի վրա քաշված պատկեր մը՝ Քրիստոսի ընթրիքը. մեկ սկիե մատնի, այլի այլ սուղ բաժակներ, աղնիկ ըմպելիքներ ու անուշանութեր, բայց ամենն յերեկի ընծան յեղած ե թագավորական աթոռը, վոր Զաքարին հայը շիներ ե յեղեր: Ասոր շատ տեղը վոսկի յե, ու վրան մեծ եւ պղտիկ 876 աղամանդ կա, 1 լալ 1223 հակինթ մանր ու խոյոր, յերեք կարդ մարգրիտ, անկե զատ յերկուք ալ մարգրիտներով ձեացուցած հրեշտակներ: Ան ատենի վաճառականները ասոնց ամենուն գինը կտրեր են 24,443 բուլլի, վոր հիմկվա արժեքով 550,000 զուրուշն ավելի կը նե: Թագավորն ալ գրեթե նույնչափ ստակ կուտա Ասհրադյանին: ասկէ զատ իրեն ու իր ընկերներուն թագավորական ոռնիկ կը կապէ ան հինգ ամսի չափ ժամանակն, վոր Մոսկվա կեցեր են և յետք իրենց տեղը կը ճամբի... Այս աթոռը ուսւի թագավորները հին ատենը կը գործածեն յեղեր թագ դնելու որերին, մեծ տոներուն, յեկեղեցական հանդեսներու կամ թագորներու ատեն, և ուսար տերությունից զեսպանները ընդունելու ժամանակին Հիմա միայն թագավոր ոծվելու ատենը կը գործածեն վերափոխման տաճարին մեջ: իսկ սովորաբար Կրանովիթայա Փալաթու բած թանգարանը կը պահպի⁴⁾:»

1) «Собр. окт.» ч. I стр. 328.

2) «Բազմավեպ», վենետիկ, 1843, յեր. 13—14.

Այս Զաքարը հետո այլևս մեջ տեղ չի յերկում: Ի՞նչ եր նա.—
միայն ընծառ բերդից վորքան և մեծ հասկացողություն ունենանք
Նոր Զուղայի խոջաների զրամական կարողության մասին, բայց
և այնպես չենք կարող ընդունել, վոր մի անհայտ մարդ այդ-
քան ծանրագին ընծառ աներ մի ուրիշին: Նշանակում ե, վոր
Սահմաղյանը ընծառ բերող եր և գլուխ եր մի պատգամավորու-
թյան, վորի մեջ, բացի իրանից, կային ինը հոգի: Ռուսական
բնագիրը պարզ կերպով առում ե, թե այդ ընծառն հայ առևտրա-
կան ընկերության կողմից եր: Թե ի՞նչ ընկերություն եր այդ ե-
քանի՞ հոգուց եր բաղկացած, մենք չգիտենք: Բայց վոր նա
կազմակերպված եր Զուղայում, այդ հաստատվում և նրանով, վոր
Սպահանում այդ ժամանակ հայ ազգաբնակություն չեր մնացել,
ամբողջը տեղափոխված եր Զուղա: Ընկերությունը զրամական
խոշոր միջոցներ ուներ: Այս ապացուցում ե վոչ միայն Մոսկվայի
ցարին ուղարկած ընծառն, այլ և այն ընդարձակ առևտրական
զորակությունը, վոր նա ծավալեց Ռուսաստանի՝ մեջ տարինե-
րի ընթացքում:

Զաքար Սահմաղյանի առաքելությունը միայն սկիզբ եր զը-
նում բանակցություններին, թե ի՞նչ պայմաններով և արտօնություն-
ներով կարող եր գործունեյություն սկսել Զուղայի առևտրական
ընկերությունը Ռուսաստանում: Բանակցությունները յերկար
տևեցին, յոթը տարի, յերեխ ընդհատումներ ունեցան: Վերջապես
1666-ին Մոսկվա յեն գնում առևտրական ընկերության յերկու
գործականեր՝ Ստեփան Ռուսականցի յել Դրիգոր Լաւիկյան
(շատ հաճախ գրվում եր և Հուսիկյան, Գյուսիկօթ), վորոնք վեր-
ջացնելով բանակցությունները, հետեւյալ տարին կնքեցին առև-
տրական դաշնագիր, և այդ ժամանակից ել հայ խոջայական
կապիտալը հաստատ հիմքեր եր զնում Ռուսաստանում, ստանա-
լով մի շարք արտօնություններ և յերաշխավորություններ ցարա-
կան կառավարությունից¹⁾:

Ռուսաստանը, բացի շուկա դառնալուց, հայ վաճառականնե-
րին տալիս եր ազատ անցք՝ իրենց ապրանքները տանելու հա-
մար յեփրոպական վաճառանոցները: Ապրանքների ապահով տե-
ղափոխումը Աստրախանից Վոլգայի վրայով գեպի Մոսկվա և
ուրիշ տեղեր յերաշխավորում եր կառավարությունը. առանձնա-
պես հիշատակվում եր Վոլգայի վրա զարգացած ավազակությունը,
վորից խոջայական բեռները պաշտպանելու համար կառավա-

րությունը պատշաճավոր հրահանգներ եր տալիս տեղական իշխանու-
թյուններին: Նախատեսնվում եր և այնպիսի գեպք, յերբ բեռնա-
կիր նավերը կարող եյին խորտակվել և ջրասույզ անել ապրանք-
ները: Այս գեպքում պետական գանձարանը տալիս եր ապրանքի
արժեքը: Հայ խոջան կարող եր չվախենալ, թե իր ապրանքը
կմար անվաճառ: Այսպիսի գեպքում պետական գանձարանն եր
գնում այդ ապրանքը, իսկ յեթե ընկերությունը համաձայն չեր
դրան, կարող եր դուրս տանել ապրանքը Ռուսաստանից Յեվրո-
պա, վճարելով մարքս: Խոջայական կապիտալը միայն ապրանք
ծախող չեր, այլ և ուստական ապրանքներ եր գնում: Այդ գնումը
կատարվում եր կամ փողով կամ փոխանակման սիջոցով:

Զուղայի առևտրական ընկերությունն իր անդամներից կազմ-
ված բաժանմունք չեր հաստատամ Ռուսաստանում, այլ այս-
տեղ ունենում եր մի գործակալ (αρχητ), վոր պիտի վարեր
նրա բոլոր առևտրական գործերը: Այսպիսի գործակալ նույն
Ստեփան Ռումաղանցին և Գրիգոր Լուսիկյանն ընտրում էին Մոսկ-
վայում բնակվող անդիմացի Թոմաս Բրայտին, վորին տալիս եյին
ընդարձակ լիազորություններ՝ ընկերության ապրանքներն ստա-
նալու, ուղարկելու, ծախելու, ինչպես նաև ուստական ապրանք-
ներ գնելու, ամեն տեսակ հարաբերություններ պահպանելու
համար ուստական իշխանությունների հետ, հարկավոր գեպքե-
րում նաև ցարին ներկայանալու գետնամած (ճակատը գետնին
խփելով) խնդիրքներ անելու համար: Յեվ իր այդ բոլոր տեսա-
կի գործառնությունների համար Թոմաս Բրայտը պիտի ստանար
իր ձեռքով անցած բոլոր ապրանքների գնի յուրաքանչյուր ուուր-
լուց կես կոպեկ (δεκեρα)¹⁾:

Առևտրական ընկերությունը հիմք և դառնում, վոր հետզ-
նետե հաճախանան և զարգանան հայ վաճառականների հարա-
բերությունները Ռուսաստանի հետ: Ընկերության իրավունքներն
ու արտօնությունները միայն ուստական ցարի կողմից չեն հաս-
տատվում: Շահ Սուլեյմանն ել հավանություն եր տալիս այդ
պայմաններին և իր համաձայնությունը հայտնում եր ուուրաց
կառավարության և այսպիսով ջուղայեցի խոչաների այս ձեռ-
նարկությունը մտնում եր միջազգային հոգանավորության տակ-
բայց չնայած այս բոլոր նպաստավոր պայմաններին, Զուղայի
ընկերությունը յերկար գոյություն չունեցավ:

Սակայն նա դրել եր սկիզբը, բացել եր հանապարհը, և այդ

¹⁾ «Собр. актов», ч. 1, стр. 142—160.

¹⁾ «Собр. акт.» I. с. 142—145.

ճանապարհը բանուկ և լայն եր դառնում մանավանդ Ալեքսեյ Միխայլովիչի վորդի Պետրոսի ժամանակ, վորին վիճակված եր Ռուսաստանի վերանորոգիչը լինել, վորի համար և արժանանում եր «Մեծ» տիտղոսին (1682—1725): Սկզբում եր ռուսական իմպերիալիզմի վերելքը: Իր պետության տնտեսական ուժը բարձրացնելու համար Պետրոսն աշխատում եր, վոր Ռուսաստանը դանա առևտրական միջնորդ և կարեոր ճանապարհ Արևելքի և Արևմուտքի մեջ, իսկ մասնավորապես պարսկական կամ մետաքսի ու բոժոժի ճանապարհը հանել իր նախկին ուղղությունից (ցամաքով, Տրապիզոն և Ջմյուսնիա), դարձնել նրան ջրային ճանապարհ Ռուսաստանի վրայով (Կասպից ծով, Վոլգա, Դվինա, Ապիտակ ծով): Այս ծրագրի մեջ, վոր ցարն իրավործում եր իրան հատուկ յիուանդով, խոշոր գեր եր վերապահվում ջուղայեցի խուջաներին, և մենք տեսնում ենք նրանց անընդհատ յերթենեկությունը այդ մեծ ճանապարհի վրա, Աստրախանից Արխանգելսկ կամ հաճախ նաև Աստրախանից մինչև Բալթիկ ծովի նավահանգստաը, Նովգորոդի վրայով: Արտասահմանյան այս առևտուրը ճետպարձ ճանապարհ գեպի Պարսկաստան ուներ դարձյալ Կասպիական ծովով, Աստրախանից: Այս մի տարրող շարժում եր, վորին հայ խոջայական կապիտալը մասնակցում եր վոչ միայն անհատ անձերով, այլ և խմբերով:

Այս շարժման մեջ Աստրախանն, իրեն զլխավոր կայան, հետրզնետե կադմակերպում եր իր մեջ հայ արտոնված առևտրական կապիտալի գաղութ: Այս նախորինակն եր նույնանման գաղութների, վորոնք սկիզբ առան Հարավային Ռուսաստանում 18-րդ դարից և այնքան խոշոր գեր կատարեցին հայոց պատմության մեջ: Մի փոքրիկ գաղութ հայ առևտրականներից կազմվեց նաև Մոսկվայում խոջայական կապիտալի մեր հիշած շարժման հետեւանքով, 17-րդ դարի վերջին քառորդում:

8.

Համաշխարհային շրջիկ հայ խոջաները ժողովրդների, մշակույթների, պետական գանազանակերպ կազմվածքների հետ իրանց ունեցած անդադրում հանդիպումների մեջ չեյին մնում անտարեր և անզգա գեպի իրանց տեսածներն ու լսածները և այս մասնավորապես Արևմույան Յեվրոպայում: Վաճառականն արդեն իր պարագաւունքներով իսկ նյութական մշակույթի տարածող եր ազգերի մեջ: Տարածողի գերը առանձնապես անխոնչ կերպով կատարում եր Արևելքի ժողովրդների մեջ Արևմուտքի քա-

զաքակը թության վերաբերմամբ, հետևաբար շատ լավ պիտի ճանաչեր Արևմույան յերկրների արդյունագործության առարկաները և նրանց, յեթե կարելի յե ասել ամբողջ հոգեբանությունը: Իսկ յեթե այսպիս եր առարկայացած, շոշափելի գաղափարների վերաբերմամբ, վոչ մի հիմք չի մնա պնդելու, թե նույն այդ խոջայությունը միապաղապ մի ապառաժ եր այնպիսի գաղափարների առջև, վորոնց առարկայացնել, շոշափելի գարձնել չի կարելի, այլ վորոնք ըմբռնում և մշակվում են մտավոր կարողության միջոցով: Այստեղ հայ խոջայությունը յեթե ապառաժ ել լիներ, զոնե միապաղապ չեր, այլ այնպիսի ապառաժներից, վորոնց ճեղքերում սեանողի շերտեր են պահպել և այդ շերտերը կարող են ընդունել իրենց մեջ և ընդմավորել ուրիշ տեղերից բերված սերմերը:

Հայագետ Շրոդերի խմբագրած խոսակցություններից յերեսում ե, վոր հայ խոջաների հետ խոսող յեվրոպացիները շոշափում եյին և հայ ժողովրդի քաղաքական դրության հարցը, բայց խոջաները խուսափում եյին այդ նյութից, նույն իսկ դրականապես հայտարարում եյին, թե հայերը քաղաքական հարց չունեն և չեն ուղղում ունենալ: Մենք հետո մանրամասն կխոսենք խոսակցությունների այս կետի մասին: Այստեղ միայն շոշափում ենք այն հարցը, թե միապաղապ եր արդյոք այդ խոջայական միտքը, թե վոչ Խուզան իր քաղաքական դրության փոփոխություններով գառնում եր այն քամին, վոր ուրիշ տեղերից սերմեր եր բերում և արդասավորում խոջայական մտքի ծերպերում: Գոյանում եյին այդ բնագավառում շերտավորումներ: Իրանց մեջ հետզնետե ձեւվորվում և առաջ եյին մղվում այնպիսի տարրեր, վորոնք ներկայացնում եյին նախատիպն այն հասարակական հոսանքի, վորին տրվում ե ինտելիգենցիա անունը: Այս շըրջանում արդեն չեր կարող միանգամայն անըմբռնելի լինել քաղաքական աղատության գաղափարը, մանավանդ Յեվրոպայում, վորի վերաբերմաբ հայ կղերական դիվանագիտությունը զարերից ի վեր կազմել եր մի մեծ աղատագրական հավատ և պահում եր այն իրեն նվիրական ավանդություն:

Այդ հավատը կազմակերպվեց 11-րդ դարից հետո, խաչակրաց արշավանքների ժամանակ: Զորբորդ դարի մեջ ծանոթ Ներսեսին վերաբրվող մի շինծու մարգարեյություն, հերյուրփած, իհարկե, հոգեբորականության ճեղքով, ասում եր, թե Արևմուտքը գալու յի զինծու Հայաստանն աղատելու և հայոց թագավորությունը վերականգնելու համար: 15-րդ դարում, յերբ ոսմանյան թյուր-

քերը նվաճեցին կ. Պոլիսը, այդ խաչակրական ակնկալությունը բոնեց և հույներին, իսկ խաչակրության առարկան դարձավ արդին ամբողջ արևելյան քրիստոնեյությունը իր կ. Պոլիսի հետ միասին: Խաչակրության միակ շարժիչը պիտի լիներ քրիստոնեյությունը: Այս միամիտ մանկական հավատը, վոր ծնեցրել եր Արևելքն իր քաղաքական դժբախտության արգանդից, Արևմտյան Յեփրոպան չեր մերժում ու հերքուս, այլ ընդհակառակը, պահպանում և խրախուսում եր իր ոգուտների համար: Այսպես հարկավոր եր մանավանդ հոսմի պապին, վորի աշխարհավարության կետ նպատակին եր հպատակեցնել իրան Արևելքի ամբողջ քրիստոնեյությունը: 17-րդ դարից, իրրե պատասխան գերմանական Ռեֆորմացիային, վոր մեծամեծ ավերածներ գործեց կաթոլիկ յեկեղեցու մեջ, Հոսմի սկսեց մի սոսկալի կղերական հետաշրջում, վորի հետևանքով սկսեց ծավալվել մի համաշխարհային կաթոլիկ պղողագանդ, վոր կաթոլիկ վարդապետների վոհմակներով վողողեց ամբողջ Արևելքը, ամեն տեղ տարածելով մի կատաղի հավատորսություն:

Հայաստանը խոշոր բաժին եր ստանում այդ սե արշավից և դառնում եր գոտեմարտի ասպարեզ կաթոլիկ և լուսավորչական կղերի մեջ: Այս մի հին դժբախտություն եր, վոր լավել եր հայ ժողովրդի կենսունակությունը, և 17-րդ դարում ստանում եր աշվելի մեծ ուժգնություն: Հայերին կաթոլիկացնելը դարձել եր մի տեսակ condito sine qua non և պիտի իրագործվեր անհապաղ վոչ այնքան կրոնի շահերի համար, վորքան իրրե քաղաքական առաջնակարգ անհրաժեշտություն Ֆրանսիայի համար: Այս պատճառով Հայաստան եյին ուղարկվում և կաթոլիկության ամենազարհուրելի սե ույժը կազմող յեղվիտ վարդապետները, վորոնց ինչ լինելը բնորոշել եր հենց ինքը, մի յեղվիտ մեծավոր, այսպիսի խոսքերով: «Մենք գառների պես ներս ընկանք, իսկ կառավարեցինք վորպես գայլեր՝ մեզ շների պես կարտաքսեն, իսկ մենք կթուշենք իրրե արծիվներա¹⁾: Կաթոլիկական այս արշավին ուղղություն եր տալիս Ֆրանսիայի Լուի 14-րդ թագավորը, վոր ինքն ել մտել եր յեղվիտների կարգը:

Արդ՝ Ֆրանսիայի համար այդ քաղաքական անհրաժշտությունն ստեղծել եր Զուղայի հայ խոջայական կապիտալը: Մենք տեսանք նրա յերկու գործը. մեկը կատարվել եր Հնդկաստանում, և այդ՝ խոջա Փանոսի դաշնագրությունն եր Անգլիական կում-

պանիայի հետ, վորի զորությամբ խոջաների բոլոր ապրանքները Յեփրոպա պիտի փոխադրվեյին բացառապես անգլիական նավերով և Անգլիայի վրայով, իսկ մյուսն ել այն եր, վոր Պարսկաստանի առևտուրն ել խոջայությունն անում եր Յեփրոպայի հետ մուսատանի վրայով: Այս յերկու ուղղություններն ել այնքան վասում եյին Ֆրանսիայի շահերը, վոր Լուի 14-րդ, «արև-դավոր» անվանված իր ժողովրդից, սկսեց գործել իր սիրած ուղղությամբ: Այսպիսով հայ խոջայական կապիտալը, ուղենարշուղինար, միջազգային մրցությունների ասպարեզում դառնում եր քաղաքական գործոն և, իրքև այդպիսին, պիտի իր սեփական քաղաքականությունը հարդարելու հոգսն ունենար:

Բայց ինքն, «արև-թագավորը» չեր կարող ի հարկե, բացահայտ կերպով ասել, թե կովում և հայ խոջայական կապիտալի դեմ: Խնդիրը ներկայանում եր աշխարհին իրքե մի սովորական պապական առորեյություն — կաթոլիկացում, վոր կատարվում եր սուանց զենքի ու զորքի մասնակցության, լոկ կղերի հայթայթած միջոցներով:

Այսպես եր ծավալվում հոգեվորսության տեսարանը: Հայ ժողովուրդը թշվառ եր, կոտորվում եր, կեղեքվում, և այս բոլորը, — այն միակ պատճառն ունի, վոր հայերը մաքուր ու սուրբ հավատացյաներ չեն, պիղծ են, վորովհետեւ պապի վոտները չեն համբուրում և աստված ել իհարկե պապական աստվածը, պատժում և նրանց՝ այնքան թշվառություններ թափելով նրանց գլխին:

Այսպես ել անվանում եր հայերին Յեփրոպայից Արևելք զնացած կղերական ճանապարհորդը — «Ասուծուց պատժված»¹⁾: Յեղուակացությունը պարզ եր: Հայը յեթե ուղում և աղատվել այս աշխարհի տառապանքներից, պիտի մտնի պապական աստծու փեշի տակ: Այս մի հեշտ միջոց եր և տառապող թշվառ ժողովուրդը գուցե գնար փրկության այդ ճանապարհով յեթե չլիներ լուսավորչական աստվածը, պապական վոխերիմ թշնամին, վորի վողակենքի եր գրված այլ ժողովուրդը չորրորդ դարից ի վեր: Գործն այսպիսով գժվարանում եր, պայքարը յերկարածովում եր: Կաթոլիկ պրոպագանդին մտում եր կյանքի մեջ, գործնականով ցույց տալ պատվական աստծու ամբողջ առավելությունը: Կար դրա համար զեղեցիկ նյութ և այդ՝ Նախիջևանի զավառում ընալիքող հայ կաթոլիկների (ունիթորների) համայնքն եր, վորին Լուի 14-րդը վերցրել եր իր առանձին հոգանավորության տակ և ամեն հնա-

¹⁾ Rumi de Dieu' (m. v. Voyages de Pietro della Valle', t. II, Paris, 1795 p. 320). — Այս արտահայտությունը նա գործ է ածում շատ անգամ:

¹⁾ Տ. իմ «Հայկական տպագրություն», I, յեր. 349.

բավոր ջանք գործ եր դնում, վոր պարսից Շահն ել նրա հովանավորը գտնա, ապահովելով այդ փոքրիկ ժողովրդի հանգստությունն ու խաղաղ աշխատանքը: Դրա համար «արեթագավորը» անդադար նամակներ եր գրում թագավորող շահին, դեսպանություններ եր ուղարկում Սպահան, վորոնք ընծաներ եյին ասնում և անձամբ ել միջնորդում եյին ունիթորների համար: Այսպես, 1674-ի փետրվարի 7-ին գրած նամակի մեջ կուի 14-րդը դանդատվում եր, վոր ունիթորներն ել, վորպես քրիստոնյաներ, յենթարկված են Պարսկաստանում զործագրվող այն որինքին, վորի համաձայն ամեն մի քրիստոնյա, ընդունելով մահմեդականություն, տիրանում եր իր քրիստոնյա ազգականների բոլոր կարգածներին: Խնդրելով վոր վերացվի այս որենքը, Ֆրանսիայի որեւ, ճոխացած «ամենաքրիստոնյա» տիտղոսով, շատապում եր ավելացնել, թե իր խոսքը միմիայն այն քրիստոնյաների մասին և, վորոնք իրանց անվանում են ֆրանկ և բոլորովին չե վերաբերվում հերձվածողներին, այսինքն վոչ-կաթոլիկ հայերին, Հռոմից դուրս գտնվողներին¹⁾: Իսկ յերեք տարուց հետոնույն կուին արգեն ուրիշ տեսակ միջնորդություն, եր անում Շահին գրած իր նամակի մեջ: Նա միանդամայն արդարացի յեր գտնում, վոր կաթոլիկ հայերին իրավունք արվի իրանց յեկեղեցու ծոցը կանչել այն հայերին, վորոնք ուրացել են կաթոլիկ հավատը (այսինքն՝ լուսավորչականներին) և յեթե սրանից մեկը մտնում ե կաթոլիկ յեկեղեցու ծոցը, այդպիսին իրավունք պիտի ունենա ժառանգի իր «հերձվածող» արդարանների բոլոր կայքերը²⁾: Այս նշանակում եր կաթոլիկ կրոնին հատկացնել նույն իրավունքը, վոր բարբարոսարար պարսից Շահերը հատկացրել եյին խալամբին և վորից անհունապես տառապում եյին քրիստոնյաները:

Ահա ինչ «արդարություն» եր գալս բազմատանջ հայ ժողովրդին Յեվրոպայի սրտից, Վերսայի վոսկեղարդ պարատից: Նախիջեանի դավառի մի բուռն կաթոլիկ հայերն իրանց ձեռքի մեջ ունեյին այս աշխարհահոչակ պարատը, վոր միայն վոսկի ու մարմար չեր, այլ քաղաքական այնպիսի ույժ, վորի վուգակիցը չուներ Յեվրոպան: Ֆրանսիայի արեն անմիջապես նամակագրություն ուներ հայ ունիթորների հետ և հայտնում եր, թե ինքը պիտի շարունակ հոգա նրանց բարիքը, դիմումներ անելով Շահին, «մեր շատ թանկագին յեղբորը»³⁾:

¹⁾ P. Raphael du Mans «Estat de la Perse en 1660» p. 288—289.

²⁾ Ibid. p. 321—322.

³⁾ Ibid. p. 338.

Պարզ է, թե վորքան խոր ու ցնցող տպավորություն պիտի թողնելին ժամանակի ամենանզոր թագավորի այս փայփայանքները հայ ժողովրդի այսի վրա, վոր ապրում եր լուսավորչականություններ մեջ: Կաթոլիկությունը առանձին մի զրավշություն պիտի ստանար հայ ժողովրդական զանգվածների մեջ: Հենց այս բանի վրա յել մեծ հույս ուներ դրած կաթոլիկ պրոպագանդը Հայաստանում: Վորքան վատթարանար «աստուծուց պատժված» ժողովրդի քաղաքական կացությունը մահմեդական Արևելքում, այնքան այս լավ եր «Ճիրոջ հունձի» համար: Յեվ այս պատճառով կաթոլիկ Յեվրոպայի քաղաքականությունը վոչ միայն չեր աշխատում, վոր ասիական անկարդ բռնապետությունների մեջ զեթ մեղմացվի բարբարոսությունը, այլ ինքն եր թելագրում գործադրել բռնություններից ամենազդկելիները, յեթե վրանք համապատասխանում եյին իր շահերին:

Ահա, որինակ, ինչի յեր ընդունակ հանդիսանում ինքը կաթոլիկության զլուխ Հռոմի պապը նրա զեսպանը, Անսիրի արքեպիսկոպոսն, անդւմ եր Սպահանում, Շահի տված ունկնդրության ժամանակ, մի այսպիսի հայտարարություն: Ինքն, իրեն պապի զեսպան, չի կարող առանց ուշադրության թողնել մի հանդամանք, վոր զոյություն ունի Պարսկաստանում, վոր զցում և իր պատիմը ու արժանավորությունը: Դեսպանը զիտի, վոր նորին մեծություն Շահը տեղյակ է, վոր պապը Հիսուս Քրիստոսի փոխանորդն և այս աշխարհում և այս հանգամանքը նա ինքն ել հաստատել և իր պապին զրած նամակներում: Գիտե Շահը նույնպես, վոր աշխարհի բոլոր թագավորները պապին հալատակվում են կամ պատվում են իրեն Քրիստոսի տեղապահի, և միայն մի բուռն հայեր են, վոր չեն հնազանդվում նրան, և հանդիսանում են իրեն ամենից անհաշտ հակառակորդներ, այնպես վոր համարձակվում են նույն իսկ իրանց յեկեղեցիներում անիծել նրան: Յեվ վորովհետեւ ինքը՝ պապը իր հալատակներին ներշնչում և խորին պատկառանք զեպի նորին մեծությունը, ուստի կարող ե տրանջալ, թե նորին մեծությունը միանման կերպով չի պատասխանում իրան և կհավատա անկասկած, թե այն, ինչ լինում է իր վերաբերմամբ հայերի մեջ, կատարվում ե նրա (այսինքն Շահի) հրամանով կամ, առնվազն, նրա թույլտվությամբ¹⁾:

Վոչ մի կասկած լինել չի կարող, վոր այս յեղիփատական զիւվանագիտության մեջ խոսքն ամբողջ հայ ժողովրդին չեր վերա-

¹⁾ Г. А. Эзов—Сношения Петра Вел. с арм. нар. СПб. 1898, стр. XIII.

բերվում, վորի վրա պարսից շահերը իշխանություն ել չունեիին, այլ այն մի ըուռն հայերին, վորոնք ապրում եյին Սպահանուում (հետն ել առած, իհարկե, Զուղան), ուրիշ խոսքով՝ լուսավորչական խոջայությունը: Իսկական թշնամին այդ եր, խոջայական կապիտալը: Հայ խոջաներին եր, վոր Շահը պիտի հարկադրեր հըպատակել Հիսուս Քրիստոսի փոխանորդին, վորի մյուս անունն եր Փրանսիական առևտրական կապիտալ: Այդ այն ժամանակն եր, յերբ հարդարիկել եր սկսում հարյուրամյա վաճառականական պատերազմը մրանսիայի և Անգլիայի մեջ: Հայ խոջայական կապիտալն, ինչպես տեսանք, Անգլիայի կողմն եր: Յեթե նա կաթոլիկանար, Փրանսիական կապիտալը կունենար իրան հլու շատ Շահիմանյաններ: Իսկ յեթե լուսավորչական խոջաները շարունակելին համառել իրանց դիմադրությունը կաթոլիկ վարդապետներին, ինչպես այդ շարունակ տեղի յեր ունենում Զուղայում և Շահը, Հիսուս Քրիստոսի տեղապահին փոխանակություն անելու համար կոտորեր բոլոր վոչ-կաթոլիկ խոջաներին, այդ կլիների փառս «տիրոջ հունձի», վոր դարձյալ Փրանսիական կապիտալն եր:

Այսպես եր մտածում և այսպես ել կարգադրել եր ուղում այդ կապիտալը: Բայց պարսից կառավարությունն առանց ուղեղի չեր: Ֆրանսիական թագավորի «յեղայրական» դիմումները նա միանգամայն չեր արհամարհում, և Նախիջևանի կաթոլիկները վորոշ թեթևացումներ, վորոշ հովանավորություն ստանում եյին: Բայց այն, ինչ վոր պահանջում եյին գործադրել լուսավորչական հայերի վերաբերմամբ, շահական կառավարությունն անհնարին եր գտնում իրագործել: Այստեղ բացահայտվում եր, վոր յեթե հայերն իրենց պաշտպանության համար ունեյին Պարսկաստանում մի վորեւ ույժ, — այդ խոջայական կապիտալն եր: Շահի մեծ վեղիբն ասում եր Փրանսիական հյուպատոսի յեղբորը:

«Ի՞նչո՞ւ համար պիտի մենք արտօնություններ տանք ձեր կրոնակիցներին ի վես մեր սեփական հպատակներին ի՞նչ իրավունքով, ի սեր մի բուռն թըշվառների, վորոնց զուք անվանում եր ձեր կաթոլիկները և վորոնք մեղ համար վոչ ոգտակարություն չունեն, մենք պիտի անբավական դարձնենք հարստա վաճառականների մի արյափի մեծ թիվ, վորն իր անդուր հոգացողություններով և անպական առևտրով հարստացնում է յերկիրը, բազմապատկում և թագավորի յիկամումները և ինքնանութար կերպով ողում և կառավարության ամեն ծանր պարագաների մեջ»¹⁾

Այսպիսով վոչնշանում եր ամեն մի հույս պարսից կառավարության աղջու աշխատակցության վրա: Յեկ կաթոլիկ պըսուա-

զանդը մնում եր իր հին զենքի հետ — քարոզություն զրով և ինսպիրով: Յերկու ջյուղերի մեջ ել նա ծավալում եր մեծ յեռանդ: Գրավոր քարոզությունը, սակայն, ավելի անցյալի գործ եր, թեև մատիկ անցյալի: Յեվրոպական կրոնավորները զալիս եյին Հայաստան, սովորում եյին հայերեն լեզուն, ուսումնասիրում եյին հայոց հին զրականությունը, գլխովին ձեռագիր և զրում եյին յերկարաշունչ վիճարանական և պատմական-կրոնական աշխատություններ, վորոնց մեջ անց եյին կացնում միշտ միւնույն հիմնական միտքը — վոր հայերը մի ժամանակ կաթոլիկ են յեղել, հետո շեղվել են այդ ուղղափառ ճանապարհից և հիմա դարձյալ պիտի դառնան մտնեն կաթոլիկության ծոցը: Այս զրական զործունեյությամբ և առհասարակ իր միսիոնարական յեռանդով անվանի յե մանավանդ կղեմես Գալանոսը, վորի զիսավոր աշխատությունն ե մի վիճարանական-պատմական հետազոտություն, բաղկացած յերկու խոշոր հատորից՝ «Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն բնդի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» վերնագրով:²⁾ Այստեղ յեվրոպացի կրոնավորը միայն աստվածարանությունը չունի իր ձեռքում նրա հիմար միջնադարյան բացատրություններով: Ավելի իրական պիտի յերկար պատմական դործակալի զիվանագիտությունը, վոր անվերապահ կերպով խոստանում եր ազատություն Յեվրոպայի ձեռքով, իհարկե կաթոլիկանալուց հետո: Կրոնավոր խարեւային անձանոթ չեր հայերնասիրական լարերի վրա խաղալու արհեստը, և նա կոչում եր կեղծ պաֆոսով:

«Ո՞գ աշխարհ Հայաստանեայց, ո՞րքան երանելի յառաջն էիր, որքան հզորագոյն տէրութեամբ և փառաւորազոյն վայելութեամբ զարդարէիր, յորժամ զարդն քո և պայծառութիւն և զիշխանութիւն ի Պետրոսի սուրբ աթոռոյն ընկալայիր: Անող, եղանկ զիարդ իշխանդ գաւառաց եղեր ընդ հարկիւ, զիարդ ոսկինքս փափեցաւ յերկաթ, զիարդ, ամենայն բարեզարդութիւնք քո ոչինչ եղեն Բայց ևս զինչ արարից առ ի քեզ օգտելոյ, առ ովկ կարգացցից լինել քեզ օգնական, մանաւանդ ի թագորդն վշտաց որ վերա կայ չարազոյն քան զառաջնուն: Արդ ի ձեզ ապահովանիմ և առ ձեզ ապահովանիմ և զձեզ ազաշեմ բազկատարած, և հայոց սուրբ հարք և հայրապետք: Դուք որ ստոյգ զիրն գիտէք, և որ կարողն և պարտական էք ազանց և անձանց ձերոց օգնել ողորմեցարութ վըշտաց և նեղութեանց ձերոց, բժշկեցէք զիէրս ձեր, կանգնեցէք զկոխեալ անուն և զնամբուն աղպիզ ձերոց, չատագով յերուք փրկութեան տառապեհալ հայրենիաց ձերոց... Ապա թէ ես որ ոչ եմ հայ և յոյժ հայերէն բարբառով տեղիկացեալ և ոչ զայլ ինչ ի ձերում միջի կարող առնել բայց միայն թըվատ լեզուով աղպակել և առել, թէ ես այն բարբառոյ ի Հայս, պատրաստ արաբէք զմանապարհ Տեղան... Թեսիս և արարի զայդ տուազես զրով և անպիր,

¹⁾ Du Mans, p. 370.

տակաւին երկնչիմ յարդարադատ դատաւորէն և օր ըստ օրէ ինձ թուի լոել զմայն զահաւորն թէ տուք զհամար անտեսութեան քո... Աւրեմն զալոց են հառվմայեցիք փրկել զաշխարհն և զագգն ձեր Բայց զիմրդ ձեր ազինքն պատրաստ արարին նոցա զնանապարհ, կամ յորժամ համարին առնուլ ի նոցանէ զհանգիստ և զբարերարութիւն զայս միծ, Միջին յորժամ պղծեալ զդաշինս հնագոյն միաբանութեան՝ ընդդէմ զինքն Պետրոսի և Սեղբետրոսի սուրբ աթոռոյն Ո՞չ իցէ այսքան յիմար, որ զայդպիսի թշնամակուն պատրաստութիւն համարիցէ գոլ յարմար ոգնական հրաւիրումն հոգմայեցոյն առ ի փրկել զաշխարհն հայոց¹⁾:

Թոլորվին գայթակղեցուցիչ խոստումներ, վարոնք դալիս եյին շահագործելու հայ կղերական դիվանագատության այն հերցուրանքը, թե հոռմայեցիները կամ ֆրանկները պիտի զան պատելու Հայաստանը: Կաթոլիկ կրոնավորներն իրենք չեյին հնարի այդ գայթակղությունը և միայն միջոց եյին դարձնում նրան՝ լուսավորչականությունը տապալելու համար: Իսկ հայ կղերական դիվանագիտությունը, բռնված իր սեփական ցանցի մեջ, այժմ կարիք եր զգում ինքնապաշտպանության՝ կատաղության ծայրահեղ նշանաբանի տակ. «Ավելի շուտ մամնեական դարձեմ, ինև Ֆրանկ կամ նուովմայեցի»²⁾: Այս չափազանց խիստ եր ասված և կարող եր խոռվեցնել հավատացողներին, ուստի քաղաքական գայթակղությունը հերքելու համար լուսավորչական կղերը հանդիս եր հանում վիճաբանական ուրիշ միջոցներ եր, դարձյալ ելի խիստ ու միանդամայն անհաղթ, բայց գաղափարախոսական ավելի դյուրատար վոճով: Բանը հաճախ դալիս հասնում եր այն կետին, վոր լուսավորչական բարերախառություն եր հայտարարվում այն հանգամանքը, վոր հայերը հալածվում են ու տանջովում և կից դրա հետ ապացուցվում եր, վոր հայերը կարոտ ել չեն քաղաքական ազատության: Այս կողմից նշանակելի յե մի գաղափարախոսություն, մանավանդ, վորի հեղինակն եր 18-րդ դարի անվանի հոգևորակականներից մեկը, Գեորգ Մխլայիմյանը: Ահա ինչ եր նա գրում.

«Ո՞վ մեծի խելագարութեանդ, գիտե՞ս, ով տքես, զի անկումն թագաւորութեան ոչ եթէ հերձուածոց նշանակ է, այլ նշանակ է ճշմարտութեան հաւատոյ մերոյ Քանզի տերն մեր յայտնի ասէ՝ թէ թագաւորութիւն իւր և աշակերտացն իւրոց ոչ ե յաշխարհէ աստի նմանապէս առաքեան ասէ, թէ հաւատացեալքն հանապազ ի հալածանս կայցեն Վասնորոյ անկումն թագավորութեան աշխարհու ցուցանէ մանավանդ թէ մեզ Քրիստոսի ճշմարիտ հաւատացեալքս աշակերտեմք, նման առաջին հաւատացելոց և աշակերտացն Քրիստոսի Դարձյալ գիտելի է, զի արևելեան քրիստոնեայք թէպէտ առանց թագաւորութեան են, սակայն առաւել երջանկութիւն և անդորրութիւն ունին քան զնոսա, որք ընդ-

¹⁾ Հատ. II, յել. 296.
²⁾ Տա Մանս, թ. 329.

թագաւորությամբ են ես բազում անդամ լուայ ի ֆուանկաց, որք երանէին զարկելցիք քրիստոնեայսն՝ ասելով թէ յիս տալոյ զնարկս Ե (5) կամ Ժ (10) գուռուշ ի մի տարին, ապա հանդարս ի խնդութիւնն և յուրախութիւնն ըլլը Ծին Իսկ երբ միւս քրիստոնեայք բռնադատին զնալ ի պատերազմ ընդդէմ եղբարց իւրեանց և սուր քարշելով ընդդէմ խաչին մեռանին, որոց զանտանելի թշուառութեանց լիովին խօսել ինձ ոչ է հարկ աստէն, քանզի բաղում այն է որ ոչ միայն ի սիրոյ, այլ և քաղցուէ մեռանին եւ այս պատահի ոչ թէ ի պահապատեանէ կերակրոց, զի յամենայն քաղաքին լի են կերակրօք, այլ իպակասութեանէ արծաթոյ, զոր յափշտակեն ի ձեռաց աղքատաց հարկապահանջըն թագաւորաց: Արհեստառքը և սէնջալէրը թէ շահին ի միում աւուր ի (20) ստակ զժ (10) պարտ են առ թագաւորըն: Նմանապէս և վաճառական մի, որ ի ձեռս իւր ունի Ռ (1000) դուրուշ, պարտի տալ ամ յամեն ԲՃ (200) դուրուշ: Հստ այսմ և այլք ըստ մեծութեանը ընչչց իւրեանց պարտավորին վճարել եւ յորժամ ոչ կարողացին հատոցանել զայսպիսի անտանելի հարկս, յայնժամ հարկանանք թագաւորաց յափշտակեն զկան և զկարասիս նոցա և թողուն զնոսա մերկ և չքաւորս և այսպիսի թշուառութիւնը նոցին գրեթէ անզապար են: Քանզի անդարս է պատերազմ ի մեջ նոցա իսկ մեջ՝ գոհութիւն Աստուծոյ, ոչ երբէք տեսանեմք զայսպիսի թշուառութիւնս. և թէ փորձութիւն ինչ պատահնցի մեզ իձեռաց տաճկաց ես, այն վասն հավատոյ և վասն անուան Ցիսուսի Քրիստոսի է»¹⁾:

Այսպես քննադատել պիտեր արևելցի սայան Լուի 14-րդի և նրա նման ուրիշ շատերի վոսկելով և յերփներանգ շպարված թագավորության եյությունը: Յեկ այս բուրժուական և արիստոկրատական կարգին, այնուամենայնիվ, անելու ուրիշ բան չեր մնում, բայց միայն բաց չժողոնել Քրիստոսի ոձիքը և զրանով շահի աղբյուր դարձնել այդ արևելցի սայան: Ինչ ել կարողանար խոսել սրա լեզուն, կար և հավիտեան ֆում եր այդ լեզվի տիրոջ «Հոգին», վորը փրկելու յեր զալիս արևելցի սուրբազուականդիսատը: Լուի 14-րդի կարգակեցից յեղվիտները զործի եյին լծվում ամբողջ Արենելքում, ուր, ինչպես և ամենուրեք, նրանք մտնում եյին զառնումներ, դառնում եյին կեղեքիչ գայլեր, մինչև վոր հալածական եյին լինում շների պես և թոշում եյին ուրիշ տեղեր՝ արծիվների նման: Ամեն տեղ նրանք լավ ընդունելություն եյին զանում, վորովհետեւ լավ վաճառականներ եյին և ֆինանսիստներ, հմուտ բժիշկներ եյին և բազմակողմանի զիտնականներ, բայց ամեն տեղ ել խոռվություններ ու թշնամություններ եյին հարուցանում «Հոգիների վորսը» յեղվիտարար տանելու պատճառով: Յեկ հայերը բացառություն չեյին կազմում: Երդումի և Բաղեշի մեջ նրանք վորքի կանգնեցին և իրանց միջից դուրս արին յեղվիտներին:

¹⁾ «Արարատ» ամսագիր Եջմիածնի, 1871, յել. 129 — 139.

Պարսկաստանում՝ յեզվիտները զործունեյության կինտրոններ ունեցին Սպահանում և Շիրազում։ Շամախում՝ յեզվիտական առաքելությունն հաստատվում էր լեհական գեսապանի միջնորդությամբ։ Ասածին միախոնարն էր Պոթիյեն,¹⁾ վոր հենց սկզբից անբավականություններ հարուցեց իր կրոնափոխություններով, այնպիս վոր նրան սպանեցին 1687 թվին, քնած ժամանակ անկողնի մեջ։ Բայց նրա զործը շարունակեցին ուրիշները։ Յեզվիտական պաշտոնական ջատագովությունը պարծենում է, վոր Շիրվանի մայրաքաղաքում «Ճիրոջ հունձը» առաջ էր։ «Մենք այստեղ միայն յիրկու միսիոնար ենք, — գրում էր նրանցից մեկը, — բայց յեթե նախախանամությունը չորսուրից միսիոնար ել ուղարկեր, ամենքս աշխատանք կունենայինք»։

Ավելի մեծ հույսեր կաթոլիկ պրովագանդը դնում էր այն յեզվիտական առաքելության վրա, վոր հաստատվեց Յերևանում։ Բաղեշի հայոց առաջնորդն ասել էր յեզվիտներին, վոր յեթե նըրանց աջողվի կաթոլիկացնել Եջմիածնի կաթողիկոսին, դրանով իսկ կաթոլիկացվեր ամբողջ հայ ժողովուրդը։ Այս միտքն իրադրծելու համար յեզվիտները պիտի հաստատվեյին Եջմիածնի կողքին, Յերևանում և այդաեղից սկսեցին իրանց ձեռնարկությունը, վոր համարվում էր միսիոնարական առաջնակարգ հանդգնություններից մեկը։ Պարսից կառավարությունից թույլավություն ստանալու համար զործադրվում էր այսպիսի միջոց։ Լուի 14-րդն իր նամակի հետուղարկում էր Շահին թանգարին ընծաներ, վորոնց մեջ առանձնապես աչքի ընկնողներն եյին այն մեքենաները, վորոնք ցույց եյին տալիս լուսնի խավարման տեսարանները և մոլորակների շարժումները։ Այդ մեքենաների վրա բացարություններ տալու համար հարկավոր եյին վիտնականներ, և ահա յերկու յեզվիտներ ուղարկվեցին Սպահան այս զործը կատարելու համար։ Շահը չափազանց զոհ մնաց նրանց տված բացարություններից և պարզեաւրեց նրանց ինչպես իրանք եյին ցանկանում, տալով թույլավություն հաստատվելու Յերևանում։

Այս բանը տեղի ունեցավ Հակաբ կաթողիկոսի ժամանակ։ Առաջին միսիոնարը Յերևանում Հ. Լոնժոն էր, վորը փորձեց առաջին իսկ քայլից ծանոթություն կատել կաթողիկոսի հետ, բայց հանդիպեց նրա կողմից կատարյալ թշնամության Եջմիածնի դռները փակվեցին նրա առջեւ։ Յեկ յերը շուտով մեռավ այդ յեզվիտը, սկսե-

ցին պատմությաններ անել, թե կաթողիկոսի հորդորներով նրան թունավորել ե Յերևանի ծառաներից մեկը։ Այս լուրն առնելով, Սպահանի յեզվիտների մեծավոր մուռն շատապում էր Յերեվան և, իրեւ ավելի փորձված վորսորդ, իր ձեռքն էր առնում առաքելության դեկը, մոտենում էր Հակոբ կաթողիկոսին և կարողանում էր վճռական դեկ ստանձնել այն նոր գրության մեջ, վոր Փրանսիական դիվանագիտությունն ստեղծում էր Արևիկելը։

Մենք արդեն մի քանի անգամ շեշտեցինք, վոր Պարսկաստանում այնքան արտակարգ յեսանդով, այնքան մեծ ծախսերով առաջ տարգող կրոնափոխական շարժումը անունով միայն հայերի հոգիների փրկության նշանաբանն ուներ։ Վորքան ել մեծ չափով ընդունենք կաթոլիկական մոլիվությունը Լուի 14-րդի մեջ, այնուամենայնիվ միանգամայն անհասկանալի կլինի այն բացարիկ ուշադրությունը, վոր նաև հառած էր պահում հեռավոր Պարսկաստանի հայության վրա։ Այդտեղ նրա ուշքն ու միտքը գրավողը «Ճիրոջ հունձը» չեր, պյու հայ խոջայական կապիտալը, վոր գտնվում էր «Աստծու գեմ ապատամբ», «Աստծուց պատժված» և այլ այսպիսի տեսական հիմարական հերյուրանքներով կարդարված մարդկանց ձեռքին և տնտեսական մի խոշոր ուժ էր, վորով նրանք ձեծում եյին «արև թագավորի» թրանսիան։

Հայ խոջայական կապիտալի պատմության համար չափազանց մի կարևոր աղբյուր ե այն մանրամասն տեղեկագիրը, վոր նկարագրում է Արևելքի և մասնավորապես հայերի տեսատուրը և վոր կազմված է Լուի 14-րդի ժամանակից։ Այդ վավերագիրն արգեն վոչինչ անհասկան ալիրան չի թողնում ֆրանսիական թագավորի, պապի և յեզվիտների ջանքերի մեջ¹⁾։

Ուշագրավ են ամենից առաջ պարսկական առեւտրի առարկաները։ Ամենից անվանին և ամեն տեղ փնտուվածը մետաքսն էր, վոր ուներ յերեք տեսակ։ Հետո պակաս աղնիվ և բարձրագնի չեյին գունավոր կաշիները, (կարմիր, դեղին, կանաչ), վորոնք պատրաստվում եյին Հայաստանում և վորոնք իրենց հատկություններով գերազանցում եյին Յեվրոպայում պատրաստվածները։ Շատ լավ էր գնահատվում և շատ մեծ պահանջ ուներ մանավանդ Հայաստանի և նրա հարեվան յերկրների գղթորը, վոր տալիս էր պատվական սե գույն և վորի վորակի հետ չեր կարող մրցել յեզվիտական գղթորը։ Արտահանության կարեվորագույն առարկաներից մեկն էր, վերջապես, բամբակը և նրա մանածը։

¹⁾ Du Mans, pp. 342—353.

¹⁾ Հայաստանի մեջ զործած յեզվիտների պատմությունը ա. R. de Damas (ինքն ել յեզվիտ) — «Coup d'oeil sur l'Arménie» Lyon. 1888.

ժամանակի փոփոխված տնտեսական շահեր և դրանց հետ կապված հազորգակցության ճանապարհների փոխադրության հետեւվանքով, Պարսկաստանի և Հայաստանի ապրանքներն արտահանվում եյին միջազգային շուկաներն այնպիսի ուղղություններով, վորոնցից անմիջապես ոգտվել չեր կարող ֆրանսիան։ Հայ վաճառականն իր ապրանքներով գնում եր դեպի հյուսիս, Ռուսաստանի, Շվեդիայի, Գերմանիայի, Հոլլանդիայի շուկաներում եր հանդիս գալիս, կամ վաճառքի յեր հանում իր ապրանքները Միջերկրական ծովի արևելյան ափի նավահանգիստներում։ Մինչդեռ առաջ բարոր ապրանքները Մարսելի վրայով եյին տեղափոխվում Յեկարպա։ Անգլիական արդյունաբերությունը ֆրանսիականից խիստ մասուդի առևտուրն Արևելքում, ամեն հարմարություն տալով հայ խոջայական կապիտալին, վոր ստիպված չեր լինում գնալ Անգլիա, այլ գնում եր այդ ապրանքն եժան գնով Ռուսական գաղաքում քաղաքում, ուր անգլիացիները բաց եյին արել մի մեծ առևտրական տուն։ Յեկ գնալով զրությունն ավելի սպառնական կարող եր դառնալ ֆրանսիական առևտրի համար։ Մարսելը կարող եր միանգամայն կորցնել իր նշանակությունը, յեթե Պարսկաստանի առևտուրն ել ամբողջովին ուղղվեր դեպի Հնդկական ովկիանոսը և Յեկարպա հասներ ովկիանոսյան ճանապարհով¹⁾։

Անա ինչ հոգաեր կային ֆրանսիական կառավարության առաջ Արևելյան հայ խոջայի հոգու առջեւ արքայության ճանապարհ հարթելուց շատ ավելի կարևոր եր կուի 14-դի համար, վոր այդ խոջան իր նախկին ճանապարհով գնա իր առևտուրին, այսինքն ֆրանսիայի վրայով։ Պետք եր ուժեղացնել ֆրանսիայի աղղեցությունն Արևելքում, պետք եր պաշտպանություն ցույց տալ կաթոլիկ կրօնավորներին, վորպեսզի, վորպես ասվում եր մի հիշատակագրի մեջ, «մի որ մեր ադգր (ֆրանսիական) ամրակուռ հաստատված լինի այնուղ և մեր առևտուրն ել մշտապես լավ պահանջանքած»²⁾։ Ցանկությունը միանգամայն մերկապարանոց եր — կապիտալ՝ հեծած յեղիտի ուսերին։

Բայց արդյունքը Շատ աննշան։ Զարմանում եր այս բանի վրա և հոչակագոր ճարդենը Խոսելով Հոսոմի ուղարկած միախոնարների, վարդապետների, քահանաների մասին, նա ասում ե. «Յես խոսք չունեմ նկարագրելու այն խորամանկություններն ու այն ծախսերը, վորոնց այդ նպատակով դիմում եր Հոսոմի աթոռը, սակայն վոչ մի բան ցանկացած հետեւվանք-

¹⁾ Ibid. p. 361.

²⁾ Ibid. p. 369.

ներին չհասցըեց»։ Յեկ խորաթափանց ֆրանսիացին շատ լավ հասկացել եր միջավայրը։ «Խղճմանքով խոսելով, — շարունակում ե նա, — հայերը և արևելյան մյուս քրիստոնյաները հավատարիմ են իրենց հաւատին միայն շնորհիվ իր անց դաստիարակության, վորովհետեւ խելացիորեն բացատրել — ինչու համար են իրանք իրանց քրիստոնյա համարում՝ ըոլորովին անկարող են։ Հայերը յերեխայությունից սովորում են ասել Քրիստոս, խաչակինքել յերեսը և պաս պահել, և շարունակելով միենույնը և չափահաս ժամանակ, հաստատապես հավատում են, թե միայն այդ ծեսերի կատարման մեջ ե բովանդակվում և քրիստոնեյության ամբողջ եյությունը»¹⁾։ Այսպես եր ամբողջ ժողովուրդը։ Յեկ նրա համար, ինարկել, վոչինչ նշանակություն ունենալ չեյին կարող կատարդի, աշխարհավեր վեճերը կունի տոմարի, մի կամ յերկու բնության, բաժակի մեջ ջուր խառնելու կամ չխառնելու մասին։ Այս անհեթեթությունները յերկու կողմի կղերի զործունեյությունն եյին կազմում, կոխվ ու թշնամություն բորբոքում անահման չափերով։

Բայց Մարսելը կարող եր կորցնել իր նշանակությունը։ Այս վտանգն ստիպում եր Լուի 14-դին Արևելքը դեպի իրեն քաշելու համար միացնել կաթոլիկ պրոպագանդին մի խաչակրական ծրագիր, վորն արգեն խելքահան պիտի աներ և հայ կղերական դիմագիտությունը։

9.

Յերբ Պարսկաստանում զործող ֆրանսիական վարդապետները, ավելի կոմիվոյաժյորներ, քան Հիսուսի գործակալներ, արձանագրում եյին այն վտանգը, վոր սպառնում եր Մարսելին, մենք պիտի ներկայացնենք մեզ այն ամբողջ անհանգստությունն ու հուգմունքը, վորը պատճառում եյին այդ խոսքերը ֆրանսիական կառավարության։ Նրա համար մենք պիտի մի բովե վերակենացնացնենք մեր հիշողության մեջ առևտրի ընդհանուր դրությունն Արևելքի (Levant) մեջ 17-րդ դարում և ֆրանսիայի գերը նրա մեջ։

Լըվան անունով հասկացվում եր Միջերկրական ծովի ամբողջ արևելյան ավազանը, այն հոչակագոր աշխարհամասը, վոր նախապատմական և հնագույն պատմական գարերում մարդկության համար ամենախոշոր քաղաքակրթական դերն և կատարել և միշտ ել յեղել ե միջազգային առևտրի նշանագոր շուկա, ստեղծելով

¹⁾ «Путешествие Шардена». Тиф., стр 250—251.

այնպիսի մարդարիտներ այդ մեծ ծովի ափերին, վորապիսիներից մեկն և Մարսել նավահանգիստը Յերբ ամբողջ այդ Լըվանը մոտավ ումանյան թյուրքերի տիրապետության տակ, ֆրանսիական թագավորներն առաջինը յեղան, վոր իրանց առևտրի շահերի համար սկսեցին բարեկամանալ սուլթանների հետ՝ նրանցից բացառիկ առևտրական արագություններ ստանալու համար, վորպեսզի ֆրանսիական առևտրական կապիտալը միակ տիրապետող ուժը լինի արևելյան ջրերում: Այս արտօնությունների դաշնագրերն ստացան կապիտալավոն անունը:

Սակայն ֆրանսիական այս հնարագիտությունը ֆրանսիայի մենաշնորհ չմնաց: Ուրիշ առևտրական կապիտալներ (անգլիական, հոլլանդական) միենույն դաշնագրական յեղանակով կպան չակ պատառին և Լըվանի ջրերում բոլորվեց սի մրցակցություն, վորի մեջ ֆրանսիական առևտուրը յետ եր մղվում: 17-րդ դարի սկզբում է: Պոլսի մեջ մնացել եյին միայն յերկու ֆրանսիացի վաճառականներ: Արևելքի բոլոր շուկաներում մահուդի առևտուրն անցել եր անգլիացների և հոլլանդացների ձեռքը: Ֆրանսիական կառավարությունն աշխատում եր մենագաճառ ստեղծել ֆրանսիացի վաճառականների համար թյուրք սուլթանների ձեռքով, բայց այս չհաջողվեց նրան և այն, ինչ կարողացավ նա անել վերանորոշումն եր նախկին կապիտուլասիոնի, վոր տեղի ունեցավ 1603-ին:

Այսպես եր գրությունը, յերբ սկսվեց Լուի 14-դի թագավորությունը: Այդ թագավորության ժամանակ հոչակված պետական գործիչներից մեկն եր Կոլբերը, ֆինանսների մինիստր, վոր իր յեռանգուն գործունեյությամբ մի նոր գարագլուխ բացավ ֆրանսիայի տնտեսական դարպացման համար: Վաճառականի վորդի, ինքն ել մի ժամանակ վաճառական, նա բարձրացրեց և ուժեղացրեց ֆրանսիական բուրժուազիան, ստեղծելով արդյունաբերական նորանոր ճյուղեր: Առանձնապես մեծ նշանակություն նա տալիս եր առևտրին: Ֆրանսիական արտաքին առևտուրը շատ նեղված եր հոլլանդական և անգլիական առևտրական կապիտալների կողմից, վորոնք կազմակերպել եյին խոշոր և ուժեղ ընկերություններ Արևելյան (ավելի ճիշտ՝ ասիական) Հնդկաստանի և Արևմտյան Հնդկաստանի (Ամերիկայի) հարստությունները շահագործելու համար: Կոլբերն այլպիսի ընկերություններ կազմեց ֆրանսիայի համար ֆրանսիացի վաճառականներից: Կազմակերպչական խոշոր գործունեյություն մացրեց նա և Լըվանի առևտրի մեջ: Մարսելը դառնում եր ազատ նավահանգիստ

(պորտ Պրանկո), վորպեսզի բոլոր անդերի ապրանքները հավաքվին այնտեղ: Կազմակերպում եր հատուկ առևտրական ընկերություն՝ Լըվանի հետ առևտուր անելու համար. մի ընկերություն, վոր բաղկացած եր հայտնի ֆինանսական գործիչներից և վորի գրամագլուխը 15 միլիոն լիվր եր: Այս ընկերությունն ստանում եր Լուի 14-դից մեծամեծ արտօնություններ, վորոնք նրա գործունեյության ասպարեզն ընդարձակում եյին նաև ցամաքի վրա, այն հարյուրավոր հյուպատոսարանների, վորմանյուպատոսարանների, առևտրական գրասենյակների միջոցով, վորոնք ցըլած եյին Միջերկրական ծովի ափերին մինչև Սև ծով և Պարսից ծոց¹⁾:

Այս առևտրական ընկերության գործերն, այնուամենայնիվ, լավ չեյին գնում, կոլեբը հարկ եր համարում ստանալ թյուրքաց կառավարությունից հորանոր արտօնություններ: Բայց սկսված բանակցությունները նոր կապիտուլասիոն կնքելու մասին նոր հավելումներով՝ մերժողական արամագրություն եյին առաջ բերում թյուրք պաշտոնյաների շրջանում, ուր առնասարակ սկսել եր մի սառն վերաբերմունք կազմվել ֆրանսիայի վերաբերմաք շնորհիվ այն հանգամանքի, վոր ֆրանսիացները գաղտնի կերպով ոգնել եյին վենետիկցիներին, վորոնք պատերազմ ունեյին թյուրքերի հետ: Մեծ վեղիր Քենիրալուն ասում եր ֆրանսիական գեապաննին. «Մենք գիտենք, վոր դուք մեր բարեկամներն եք, բայց ամեն տեղ ձեղ պատահում ենք մեր թշնամիների հետ»²⁾:

Բանակցությունները խիստ կերպարանք ընդունեցին մանավանդ 1670-ից, յերբ Լուի 14-դը Կ. Պոլիս գեսպան ուղարկեց մարքիզ Նուանտելին, վորն յեկավ իր պաշտոնատեղին ուղամական նավատորմով: Նավերը խարիսխ ձգեցին սուլթանի պալատի դիմաց, վողջույնի թնդանոթաձություն չարին ու շարվեցին ուղամական կարգով: Ազգաբնակությունը յերկյուղի մեջ ընկավ, սպասում եյին թե հիմա պատերազմ կասվի, բայց Առևլթանի մոր միջամտությունը վերջ գրեց այդ գրությանը: Ֆրանսիական նաև վերը վողջունեցին և հետո գոռող գեսպանը մեծ շուքով քաղաք մտավ: Այս վարմունքով ուզում եյին վախեցնել թյուրքերին, բայց մեծ վեղիրը վախեցողներից չեր և ստոնությամբ լուց

1) Paul Masson—«Histoire du commerce français dans le Levant au XVII siècle», Paris, 1890, p. 183—184.

2) Comte de Saint-Priest—«Mémoire sur l'ambassade de France en Turquie» Paris, 1877, p. 229.

Նուանտելի բերած պահանջները: Լուի 14-դը գժկոն էր՝ մանավանդ այն բանից, վոր Փրանսիական վաճառականները մաքսավալիս եյին 5%, մինչդեռ հոլլանդացիներից և անգլիացիներից ստացվում եր միայն 3%: Առաջին պահանջն այն եր, ուրեմն, վոր Փրանսիացիներն ել 3 % վճարեն: Յերկրորդ պահանջն այն եր, վոր Լուի 14-դը ճանաչվի միակ հովանավոր թյուրքիայում ապրող բոլոր կաթոլիկների: Յերրորդ պահանջը կոլբերի առեւրական ծրագիրն եր Հնդկաստանի վերաբերմամբ: Մարսելի համար Հնդկաստանի ամենակարճ ճանապարհն եյին Յեղիպատոսը և Կարմիր ծովը: Ուստի պահանջում եր, վոր Սուլթանը Փրանսիական նավերին ճանապարհ տա Կարմիր ծովով, ապա ցամաքային ճանապարհով ապրանքները փոխադրվին Ալեքսանդրիա, վոր պիտի այդպիսով դաւանար ապրանքային մթերանցց¹⁾:

Մեծ վեզիր Քեռփրուլու Ահմեդը, լսելով այդ պահանջներն, ասում եր Նուանտել ղետպանին. «Դուք շատ գովում եք ձեր թագավորի մեծությունը, ինչպես և մի այդքան, ձեր ասածին պես, հզոր վեհապետ կարողացել այդքան ջերմություն մտցնել վաճառականների անարդ շահերի համար»²⁾:

Պահանջները մերժվում եյին, Լուի 14-դը կատաղում եր և հարկադրելու միջոցներ եյին փնտրում Վերսայի պալատի մեջ. ժողովի եյին կանչվում վաճառականները և այլ դիտական անձինք, վորոնք հավաքվում եյին Մարսելում և վճռում եյին, վոր թագավորը պիտի զործի ուժով. բավական ե, ասում եյին նրանք մի քանի նավով փակել Դարդանելը, և կ. Պոլիսը կմեռնի սովից և այնտեղ ապստամբություն կծագի հոգուտ Փրանսիացիների: Վաճառականներն ապահովություն եյին տալիս, վոր այդ բռնի զործողությունների ժամանակ Ֆրանսիան կարու չի լինի Լըվանի ապրանքներին, վորովհետեւ Մարսելի և Պրովանսի նահանգի ուրիշ մթերանցներում այնքան ապրանքներ կան, վոր բավական են տասը տարգա համար»³⁾:

Թվում եր, թե միջադեպը պիտի հանգե մի նոր վաճառականական պատերազմի: Յեկ վորովհետեւ հակառակորդը թյուրքն եր, ուստի կաթոլիկական մոլեկնությունն ամենայն հեշտությամբ տալիս եր նրան կրոնական կերպարանք: Նախկին խաչակրաց արշավանքների հմայքը, վորի պաշտպանն ու պահապանը Հոռմի պապն եր, նորից սավառնում եր Ֆրանսիայի արքունիքում և

Նրան ամենայն հոժարությամբ անձնատուր եյին լինում վերսայի պալատի բյուրավոր ձրիակերները: Նոր խաչակրական մի արշավանք Թյուրքիան վոչնչացնելու և նրա փրատակների վրա հաղթական կաթոլիկությունը կանգնեցնելու համար — այս վաղեմի իղձը բոլոր յեվրոպական կաթոլիկ յերկրներից ավելի Ֆըրանսիային եր գալիս, վոր զուր չեր սեփականել իրան «Հոռմի ավագ դուստր» և «ամենաքրիստոնյա» տիտղոսները: Խաչակրության լուսապսակն եր պակասում Ֆրանսիայի յերիտասարդ թագավորին, վոր իր հաղթություններով արդեն իսկ մեծ ժողովրդականությունն եր ստացել Նրան՝ թագավորին ել արդեն սաստիկ վոգեվորում եր խաչակրի դինուր լինելու ցնորքը: Յեկ նրան այդ ուղղությամբ խրախուսում ու վասում եյին ամեն կողմից: Մեծ հոչակ վայելող դրանիկ բանաստեղծ Բուլլոն ասում եր նրան. «Je t'attends dans six mois aux bords de l'Hellespont»⁴⁾ («Յես վեց ամսում սպասում եմ քեզ Հելլիսպոնտեսի ափերին»):

Այս մտայնությունը միայն կաթոլիկներին չեր հատուկ: Թյուրքիան Ֆրանսիայի ձեռքով վոչնչացնելու զաղափարին ջերմ համակրություն եր ցույց տալիս ժամանակի հոչակավոր դիականներիցը, թեև ինքը բողոքական: Նա դրություններ եր ուղարկում Լուի 14-դին, վորոնց մեջ արծարծում եր այն միտքը, թե նախախնամությունը պահնել ե Ֆրանսիան՝ Արևելքում քրիստոնյաների զենքերն առաջնորդելու համար: Այժմ, ասում եր նա, դրված և ծովերի վրա տիրելու հարցը, վոր Արևելյան կայսրություն ստեղծելու հարցն և և ումանյան պետությունը քանզելու հարցը: Յեկիպտոսի նվաճումը Ֆրանսիայի իրավունքն ե, և հեղինակավոր դիտնականը խորհուրդ եր տալիս սկսել հենց այդ տեղից⁵⁾:

Ավելորդ և ասեի վոր Քոփրուլու Ահմեդ մեծ վեզիրը միայն եր անձնական նկատառությունների վրա չեր խարսխում իր մերժուգական քաղաքականությունը: Այդպիս տրամադրում և դրզում եր նրան յեվրոպական դիվանագիտական մրցակցությունը, վորի ներկայացուցիչներն եյին Անգլիան և Հոլլանդիան վորոնք զգուշացնում եյին մանավանդ Յեղիպտոսի վերաբերմամբ, ասելով, թե՝ Փրանսիացիների միտքն ե նվաճել այդ յերկրը: Բայց ի վերջո հաղթանակ տանում եր Փրանսիական զիվանագիտությունը: Թյուրք կառավարության վրա ազգեցություն զործում եր խաչակրական արշավանքի պատրաստվելու առիթով բարձրացրած

¹⁾ Masson, p. 186.

²⁾ Saint-Priest, p. 300.

³⁾ Théophil Lavallée — «Histoire de l'Empire Ottoman», Paris, 1855, p. 321.

¹⁾ Ibid.

²⁾ Ibid.

աղմուկը, վոր գուցե և այնքան իրական սպառնալիք չհամարվել, յիթե նրա հետ միաժամանակ, 1672 թվին, ֆրանսիական բանակը շտաներ Հոլլանդիա և չնվաճեր նրան։ Այս իրականության վրա հնված՝ Կոլլերը վերջնագիր եր ուղարկում է։ Պոլիս, սպահանջելով իր առաջարկած պայմանների ընդունումը, հակառակ դեպքում նուանտել դեսպանը պիտի անմիջապես հեռանար Թյուրքիայից։ Բոփրուլուն անկարելի յեր համարում այլևս դիմադրել և 1673-ին կնքում եր Ֆրանսիայի և Թյուրքիայի մեջ կապիտուլատիոն։ Այս հաղթանակը մեծահանգես տոնախմբության առարկա դարձավ Ֆրանսիայում։ Փարիզի փողոցների մեջ տպած հաղորդագրություններ եյին բաժանում այսպիսի վերնագրով՝ «Վերանորոգում և նոր դաշնակցություն Սուլթանի թագավորի հետ և կաթոլիկ հավատի վերահաստատումը պ. Դր. Նուանտելի ձեռքով, ուսմանյան պետության մեջ»¹⁾։

Այսպիս, ուրեմն, զործը վերջացած պետք եր համարել Ֆրանսիայի և Թյուրքիայի նախկին բարեկամությունը վերահաստատված եր և ոսմանյան Սուլթանը կարող եր հանգիստ քնել Բոսֆորի ափին, ապահովված, վոր վոչ վոք այլևս չի մտածում փըշրել նրա դահը։ Այսպես եղ նրա համար, բայց այսպիս չեր Արեվելքի ամրող քրիստոնեյության համար։ Խաչակրաց արշավանքը վոչ միայն չեր անհետանում 1673 թվականից հետո, այլ ընդհակառակն, ավելի մեծ ծավալում եր ստանում, իրրե մի հսկայական կազմակերպություն ստացած խաբերայություն, վոր այս անգամ պիտի միանգամայն իրացնելի դարձներ նախկին սնամեջ ցնորդները՝ ամրող քրիստոնյա Արևելքը կաթոլիկացնելու մասին։ Միսիսոնարները շատ ու շատ եյին խարել, թե անա գալիս են ֆրանկները՝ ստրուկ յերկրներն ազատելու համար։ Այժմ վերսայիլ պալատն եր դալիս միենույն խարեյությունը, իրրե Լուի 14-րդի սրտի սրբազն ուխտ, տարածելու։ Գայթակղությունն այս անգամ շատ մեծ եր։

Այս դայթակղությունն ուներ ինքն իրան քարոզելու համար գրական և բանավոր միջոցներ։ Առարկային նվիրված դրականության մեջ առանձնապես ուշադրություն դրավեցին յերկու գիրք, վորոնք պատկանում եյին Միշել Ֆեբրի (Michel Feuvre) գրչին և լույս տեսան 1675 և 1682 թվականներին։ Այս անվան տակ գրողը մի կապյուսին կրոնավոր եր, հայր Հաւտինիանոսը վոր 18 տարի ապրել եր ասիական Թուրքիայում և մասնավո-

րապես Հայեպում, ճանապարհորդել եր Սիրիայում, սովորել եր Թյուրքերեն, հայերեն, արաբերեն և քրդերեն լեզուները։ Իր այդ կրքերի մեջ նա ապացուցում եր, թե դժվար չե Թյուրքիան նվաճելը, թե այդ գործին ձեռնարկելուց առաջ պետք ե յեվրոպական պետությունների միություն կազմել՝ փոխադարձ աջակցության սկզբունքով։ Ամեն մասնակցող պետություն պատշաճավոր բաժին կստանա ընդհանուր ոգուաներից¹⁾։ Հրատարակվեց և մի այլ գիրք՝ «Թրիստոնյա Թյուրքիան Լուի մեծի հովանավորության տակ, վոր Արևելքի քրիստոնեյության միակ հովանավորն ե» (La Turquie Chrétienne sous la protection de Louis le grand, protecteur unique du Christianisme en Orient)։ Միայն այս վերնագիրը բավական ե ցույց տալու համար, թե ինչի մասին եր խոսում այդ աշխատությունը։ Հեղինակը, Դրլաերուան, վոր արևելյան լեզուների թարգման եր, վկայում եր, վոր Արևելքում տանջվող բոլոր քրիստոնյա ազգերն սպասում են միայն Ֆրանսիայի ոգնության՝ Թյուրքիայի լուծը թոթափելու համար և ավելացնում եր։ «Վոչինչ չի լինի ավելի գեղեցիկ և ավելի ուրախալի, քան Յերուսաղեմի թագավորության վերահաստատումը»²⁾։ Միուրիշ հեղինակ առաջարկում եր, առանց այլևս լեզության, բաժանել Թյուրքիան յեվրոպական պետությունների մեջ և տալիս եր նեղուցներն ու կ. Պոլիսը Ֆրանսիային։

Բայց ինչ պիտի լիներ արևելյան քրիստոնյա ժողովուրդների վիճակը։ Առաջին պայմանն, իհարկե, այն եր, վոր բոլոր հերձվածող յիկեղեցիները (հայեր, հույներ, և այլն) պիտի վերջ գընելին իրանց գոյության, տեղի տալով կաթոլիկության, վոր պիտի թագավորեր ամեն տեղ, նույնիսկ Յեվրոպայում։ Միշել Ֆեբրի չեր ընդունում անգամ, վոր այնուհետև գոյություն պահպանեն և այդ ազգերի լեզուները և պահանջում եր, վոր տեղի ունենա վոչ միայն յիկեղեցիների, այլ և ծեսերի միություն, այսինքն՝ Արևելքի կատարյալ լատինացումը³⁾։

Լուի 14-րդը վոչ միայն լառմ եր առաջարկությունները, կարդում եր գրքերը, այլ և գործնական աշխատանք ել եր սկսել։ Արևելքում ըջում և գործում եյին նրա բազմաթիվ գաղտնի գործակալները, վորոնց տրված եյին զանազան հրահանգներ, վոմանց առևտրական և վոմանց ելքաղաքական բովանդակությամբ։

¹⁾ Léonovic Drapeyron — , Un proje frarçais pe Conquête de l'Empir Ottoman — «vus des deux Mondes», 1876, t. XVIII p. 137 — 140.

²⁾ Lavilléée p. 324.

³⁾ Drapeyron, p. 142 — 144.

Այդ գործակալների մեծ մասը յեզվիտներից եր: Հարց ու փորձի, տեղն ու տեղը կատարած ուսումնասիրության միջոցով հավաքվում ելին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Այսպես, կային հետեւյալ տեսակի գեկուցումները. «Թե ինչ ուժեր են անհրաժեշտ կ. Պոլիսը հրդեհելու համար, հետևելով նորին մեծության հրահանգներին». — «Թե ինչ միջոցներով նախատես վերադարձնել դեսպանին և ուրիշ ֆրանսիացիներին» և այլն¹⁾): Ծրագրվում եր, վոր թյուրքիայի տեղ կազմվի մի նոր պետություն, վորի գլուխը պիտի անցներ մի ֆրանսիական թագավորագում: Արևելյան քրիստոնյա ժողվուրդները պիտի ապստամբության միջոցով նպաստեյին ֆրանսիական արշավանքին:

Այս պատրաստություններն, ինարկե, ծածուկ չելին մնում, թյուրք կառավարությունից: Լուրեր ելին հասնում կ. Պոլիս, թե լուրի թագավորը պատրաստվում է պատերազմ բերել Բոսֆորի ափերը: Այս լուրերը հուզմունք, վոչ իսկ անհանգստություն չը պատճառեցին: Գիտեյին, վոր Վերսայի պալատում ժամանցի համար սարքած մի խաղ եր այդ «խաչակրությունը»: Կոլիբրը չթողեց, վոր իր վեհափառ տիրոջ քիմքը պարարող ծրագիրը թղթից և զրույցից մի քայլ առաջ գնաւ: Հետզհետե լուր 14-րդը մտավ ֆրանսիական ավանդական քաղաքականության հունը, այսինքն՝ բարեկամացավ թյուրքիայի հետ:

Բայց և այնպես, յեղածը մի շարժում եր, վոր խոր ազդեցություն ունեցավ թյուրքական Արևելքում: Բալկանյան թերակզզում այդ ազգեցությունը հրահրում եր զինված ապստամբական գործողություններ թյուրքիայի դեմ: Իսկ Ասիայում ֆրանսիական պրոպագանդը սաղմնավորում է հայերի մեջ այն յերկարատե հասարակական շարժումը, վորը հայտնի յե «Ազատգրական ըստում» անունով:

Ահա ինչ հանգամանքների մեջ կազմավորված ծնունդ և ներկայացնում մեզ այդ շարժումը:

Մենք արդեն գիտենք, թե հայ կղերական զիվանազիտությունն ինչ արժեքավոր զենք եր ստեղծել, իր արևմտամոլական պաշտամունքի տևականության տեսակետից, իր խակ ձեռքով հերյուրած և ներսես Պարթևեն վերագրած մարդարեյությունը՝ Յելլոպայի քրիստոնեյության կատարելիք ազատարար գերի մասին: Գիտենք նույնպես, թե կաթոլիկ պրոպագանդը վորքան ամուր բռնած եր պահում իր ձեռքում այդ հին ավանդությունը,

վորը շահագործելու համար նա, ինարկե, պիտի տարածեր ամեն տեղ և միշտ ել լսելի պիտի դարձներ իր ունկնդիրներին: Գլխավորապես այս պատճառով եր, վոր 17-րդ դարի յերկրորդ կեսում այս ներսեսյան ավանդությունը խոսքի առարկա յեր հայարնակ շատ տեղերում:

1665 թվին Յերեան հասան յերկու ֆրանսիացի ճանապարհորդներ, Դը-Լալան և Դը-Բուլի լր-Գուգ, վորոնք ճանապարհորդում ելին թագավորի հրամանով յերկրներն ու առևտրական հանգամանքներն ուսումնասիրելու համար: Մայիսի 20-ին թագավորին գրած նամակում նրանք մանրամասն պատմում ելին իրենց ուղեղորությունը երգրումից մինչև Յերեան և ասում:

«Դոյյակում, ինչպես և քաղաքում, ապրում են հայերի մի բազմություն, և ամենքը, վորքան և կան, ինչպես և նրանք, վորոնց մենք տեսանք թյուրքիացում հեծելիս ուսմանյան բռնակալության տակ, ամեն որ սպասում են, թե վերջ կունենա իրանց թշվառությունը ձեր մեծության հաղթական զենքերից, մի թագավորի, վորի մեծությունն ու կարողությունը նրանք ճանաշում են»²⁾:

Անշուշտ, այս տրամադրությունը ֆրանսիացի ճանապարհորդներն իմացել ելին՝ ամեն տեղ հարց ու փորձ անկելով և խոստումներ միջ զցելով, ինչպես նաև Եջմիածնում, ուր նրանք տեսնվեցին հայ կղերական զիվանազիտության վարիչների հետ և լսեցին նրանցից ել ինչպես լսել ելին ամեն տեղ, թե տեսնում են, վոր կատարվում է ներսես Պարթևի գուշակությունը: Յեկ վորովինետե այդքանը զեռ բավական չեր, ճանապարհորդ գործակալները հայտնում ելին ի զիտություն թագավորի, թե բոլոր հայերն ընդունում են նրան, իրեւ իրանց ազատությունը վերանորոգողի և իրեւ իրանց յեկեղեցու և հավատի հավանավորողի»:

Վերեւում հիշատակված Միշել Ֆերվը կրօնավորն, արգեն 1673-ից հետո, յերբ ֆրանսիական խաչակրությունն եր ավետվում ամեն տեղ, այսպես և պատմում ներսես Պարթևի ավանդությունը: Գուշակելով հայերին ամեն տեսակ զիրախտություններ անհավատների ձեռքից, ներսեսն ասում եր, թե մի որ նրանք ազատված կղինեն թյուրքերի զամբան բռնակալությունից ֆրանկների հաղթական զենքերով, վորոնք կ. Պոլսի և Յերուսաղեմի տերերը կղառնան, կնվաճեն ամրող թյուրքիան մինչև թավրիզ, վոր մի ժամանակ, ս. գրքի մեջ, կոչվում եր Յեկբատան, և այնուհետե Յերուսաղեմի ս. Հարության տաճարի գոները կծածկեն վոսկով և մարդարիտներով³⁾:

¹⁾ Du Mans, p. 302.

²⁾ Michel Feuvre—«Etat présent de la Turquie», Paris, 1675, p. 407—408.

Այսպիսով ահա, այս բոլոր հոսանքների հուժկու ազդեցության տակ սկսում եր խմբվել Եջմիածնում մի գրություն, վոր կատարյալ հաղթանակ եր պատրաստում կաթոլիկ պրոպագանդի համար։ Տեսանք արդին, վոր Յերեանում հաստատված յեղվիտուն կարողացավ այսպես կոտրել Հակոբ կաթոլիկոսի դիմադրական համառությունը, վոր արդին մի տեսակ յեղբայրություն եր ստեղծվում յերկու ընդդիմամարտ յեկեղեցիների մեջ. կաթոլիկոսը թույլ եր տալիս, վոր յեղվիտները և այլ տեսակ կրոնավորները քարոզեն և պատարագեն հայոց յեկեղեցիներում։ Գայթակղությունը չափազանց մեծ եր. ամբողջ շրջապատը խոսում եր, դըրդում եր, հավատացնում եր, կաթոլիկության գերազանցությունը խոշոր որինակներով եր իրանց ցուցադրում։ Այսպես, Նախիջևանի կաթոլիկ առաջնորդ Մատթեոսը տարիներով (1668 – 1674) Սպահանում կատարում եր Լուի 14-րդի, Հռոմի պապի և Վենետիկի հանրապետության ներկայացուցչի պաշտոնը¹⁾։ Հայ կաթոլիկ յերիտասարդները տարվում եյին Փարիզ ուրիշ ազգերի (մարոնի, հույն) յերիտասարդների հետ, կրթվում եյին այստեղ և իսկույն հայրենիք վերադարձվում, վորպեսզի այստեղ տարածեն սեր դեպի Ֆրանսիան²⁾։

Ենդ Հակոբ կաթոլիկոսի համար անհրաժեշտություն եր դառնում կաթոլիկանալու միջոցը՝ հայությունն իր դարավոր ստըրկությունից ազատելու համար։ Բայց այս մի նորանշան միտք չեր, մի աննախընթաց ձեռնարկություն, այլ լոկ կրկնություն յեղած յերկու փորձերի։ Առաջին փորձի ձեռնարկող յեղել եր Ստեփանոս Սալմասեցի կաթոլիկոսը 1547 թվին։ Եջմիածնում սա գումարում ե մի գաղտնի ժողով հոգևորականներից և աշխարհական տանուտերերից, վոր և ուղարկում եր կաթոլիկոսին Վենետիկ և Հռոմ։ Հայ ժողովրդի ազատությունը խնդրելու համար Այն դիմումը, վոր ուղղել եր ժողովը Վենետիկի հանրապետության, մի ապացույց եր, վոր այսպիսի մի դիվանագիտական առաքելություն հնարավոր դարձնողն ընդհանրապես հայ առետրական կապիտալն եր և մասնավորապես նրա արևելյան խոշոր ձյուղը, խոջայական կապիտալը, վոր մոտիկ ծանոթություն եր ստեղծել հայ ժողովրդի համար և. Մարկոսի հոչակավոր առետրական քաղաքում, և այս ծանոթությունը հիմք բռնած արևելյացի դիմուները խնդրում եյին հանրապետության միջնորդությունն ու աջակցությունը, վոր Հռոմի պապն ընդունե հայոց

¹⁾ Du Mans. p. LVI.

²⁾ Lavallée, p. 325.

կաթողիկոսի աղերսանքը և ազատություն կազմակերպե Հայաստանի համար։ Ստեփանոս կաթողիկոսը գնում եր Իսաալիա և հայ կղերական դիվանագիտության անաջող և անհետևանք դիմումներից մեկն եր կատարում, թեև պապի վոտների տակ եր սըփում հայ ժողովրդի կաթոլիկացման հոժարությունը։

Յերկրորդ նույնանման դիմումը տեղի յե ունենում 15 տարուց հետո, Ստեփանոսի հաջորդ Միքայել Սեբատացի կաթողիկոսի կողմից, 1562-ին, յերբ կաթողիկոսն ինքը չեր Հռոմ գնում, այլ իր տեղ ուղարկում եր Սահար կամ Աբգար անունով մեկին՝ Թոքաթ քաղաքից, վոր, ինչպես յերեւում է, հարուստ վաճառական եր և, հետևելով իր դասակիցներից շատերի որինակին, իրան համարում եր թագավորական ծագում ունեցող և վորովհետեւ դիվանագիտությունը հոգևորականների մենաշնորհն եր, ուստի Միքայել կաթողիկոսը աալիս եր իր այդ «արքայազուն» վաճառական դեսպանին գպրի աստիճանը։

Լուսավարչականությունն այս յերկու դիմումներն անում եր հուսանատության ծայրին հասած այն սարսավեներից, վորոնք տարիների ընթացքում թափվել եյին հայ ժողովրդի գլխին թյուքը պարսկական պատերազմների հետևանքով։ Այնքան անտանելի յեր մանավանդ Եջմիածնի դրությունը, վոր կաթողիկոսները թողնում եյին իրանց աթոռը և փախստական գառնում։ Հռոմի պապն եր այս դրության մեջ թվում փրկության միջոց և հայ կղերական դիվանագիտությունն իր դասակարգային դիրքերը փրկելու համար բռնադատվում եր մինչեւ իսկ դավանական դիջումների բանակցություններ խնդրել։

Դիմումների ծրագրային մանրամասնությունները մեզ հայտնի չեն և մենք չենք կարող ասել թե դիմուներն ինչ եյին սպասում Յեվրոպայից յերկու հզոր պետությունների մեջ կեղեքվող յերկու պատության համար, — արդյոք հրաշագործություն խոսքով, հրամանով կամ դիվանագիտական ճնշումներով։ Գործունեյության այս յեղանակը յեթե անպետք ե մեր ժամանակներում, ավելի ևս անպետք, անգամ անկարելի յեր այն ժամանակներում։ Մնում եր միակ իրական, բոլոր տեղերի և ժամանակներում համար հասկանալի լեզուն — զենքը, խաչակրաց արշավանքը։ Յեթե այս ակնկալությունն ուներ հայ կղերական դիվանագիտությունը, այդ ուրիշ մի բան չեր կարող նշանակել բայց միայն այն, վոր 16-րդ դարում ել մնացել եր նույնը — մանկամիտ, ինչպես ծնվել և մեծացել եր։ Ճիշտ ե, Պիոս չորրորդ պապը շատ լավ ընդունեց գպիր Արքար թոխաթեցուն, խոստացավ նույնիսկ, թե նրան

թագավոր կշինե ու այդպես կվերադառնե իր հայրենիքը, բայց
այս պատական մի զավեշտ եր, ուրիշ վոչինչ:

17-րդ դարի յերկրորդ կեսում դրությունն այլևս այն չեր, ինչ
Ստեփանոս և Միքայել կաթողիկոսների ժամանակ: Այժմ արդեն
կաթոլիկ պրոպագանդն ինքն եր յեկել մտել Եջմիածին, բե-
րելով իր հետ Լուի 14-րդի խաչակրության համբավն ու խոստում-
ները: Հակոբ կաթողիկոսն ավելի միամիտ գտնվեց իր յերկու
նախորդներից և մտածեց, թե իրան մնում ե միայն կաթոլիկա-
նալ՝ խոստացած բարիքներն ստանալու համար: Այս հաջողու-
թյունը կաթոլիկ պրոպագանդը ձեռք եր բերում վոչ միանգամից
և հանկարծակի, այլ տարիների նախապատրաստության միշտ-
ցով: Հակոբին դարձի բերելու գործը Կղեմես 10-րդ պապը հանձ-
նել եր Պիսկոպո կրօնավորին և Պետիկ անունով կաթոլիկ հային,
վոր Նախիջևանի ունիթորներից եր¹⁾: Նրանք գնացին Յերևան և
գործի կան: Հաղթությունը խոշոր եր, դարերով չտեսնված:
Կաթոլիկական աշխարհակալ աստծուն, վերջապես, հաջողվում եր
վորսալ իր ամենահամառ հակառակորդներից մեկին, լուսավոր-
չական կղերապետին: Առանց պայմանների չեր, ինարկե, այս
անձնատվությունը, և առաջին պայմանն եր Հայաստանի ազա-
տությունը: Մի խուլացի միսիոնար գրում եր.

«Հակոբը թշնամի մահմետականաց, կըսեր թե կհուսա տեսնել և հետ գո՞-
մեռնել՝ թյուրքերու խրոխանքը ջախջախված հաջ պարականայերեն հոռվիշյա-
ցոց ամենազոր բազկին հետ»:

Այս խոսքերը վերաբերվում են 1676 թվականին, յերբ, ինչ-
պես յերեւում ե, բանակցություններ եյին մղվում մի կողմից Հոռմի,
մյուս կողմից «քաջ պարսկահայերի» հետ:

Ովքեր եյին այսպիսի անուն կրողները: Հետագայի ամբողջ
պատմությունը ցույց է տալիս, վոր «քաջ պարսկահայեր» ան-
գան տակ հասկացվում եյին հյուսիսարևելյան լեռնագավառների,
այսինքն՝ Ղարաբաղի հայերը: Այստեղ, ուրեմն, մենք ունենք մի
փոքրիկ ծրագրային մանրամասնություն—Հայաստանի աղա-
տագրությունը պիտի կատարվեր այս ընդարձակ լեռնագավառի
ազգաբնակության ապստամբացման միջոցով, վոր տեղի պիտի

1) Այս և հետեւյալ տեղեկությունները, վորոնք մինչեւ այժմ հայտնի չեյին հայ
պատմագրության, հաղորդում ե 1695-ին Իտալիայի նախորդ քաղաքում արգ-
ած մի գիրք, վոր պարունակում ե իր մեջ քարոզիչ (Փրանցիսկյան) միսիո-
նարների հանապարհորդության նկարագրությունը հետեւյալ վերնագրով.
Ragagli del viaggio fatto da Padri dell' Ordin Preparatori inviati dalla
sceta Congregation de Propagatione Fidei Nolla Tarta via Minore l anno 1662^o.
Այս հազվագյուտ գիրքը գտնվում է Վենետիկի և Մարկոսի մատենադարանում,
ուր մենք տեսանք նրան 1908-ին և մեզ համար թարգմանություններ արագ
Միթարյան վարդապետ Կարապետ Տեր-Մահակյանը

ունենար Յեվրոպայից արշաված զորքի հովանավորության տակ:
Մի սկզբունք եր այս, վոր ազատագրական ծրագիրների հիմքն
եր գտնում ամբողջ 18-րդ դարի ընթացքում, բայց յերբեք չի-
րագործվեց ամբողջությամբ:

Իսկ Հակոբ կաթողիկոսը հավատաց, թե Փրանսիական խաչա-
կրությունն արդեն իսկ դրույթ մոտ ե, և իր զավանափոխու-
թյան հանդեսը չուշացրեց այլևս: Մեր աղբյուրը շարունակում է.

«1676-ի ապրիլի 2-ին, ավագ հինգամբի, եփմիծային (Եջմիածինի) իր պատ-
րիարքական յեկեղեցվույն մեջ, անթիվ ժողովրդյան առջե, և Պիսկոպոյի
առջե ծնրագրելով, հրաժարեցավ մի առ մի նզովելով Դունա հերձվածին և
մոլորություններեն, խնդրելով հեծեծանոք և արտասվոր, վոր ճշմարիտ հավատո
հոտին մեջ ընդունե այնքան տարիներ ի վեր մոլորյալ վոչխարը, խոստա
նալով ապագային մեջ խոնարհ և հաստատուն հնազանդություն հովմեկական
ծայրագրույն բանահայպետին Այսպես և, վոր այս մասին
առանձին իշխանություն ստացած եր, բանագրանքներե արձակում ընդունե-
րով և ուղղափառ յեկեղեցվոր հորհրդական մարմնու մեջ մանելով, հանպատմելի
ցնծություն, ի զարման և ի շինություն շրջակայից՝ հաստատեց իր այս զա-
վանանքը նամակներով, զորս գրեց առ սրբ քահանայալին Կղեմիս 10-րդ
և կարդինալ Դալուցց Ալբիերի, նախագահ Պրուպագանդայի և միաբանության
և այլ քահանույան իշխանու, պատմելով ընդարձակորեն ինչ վոր կպարտի և
Պիսկոպոյի և ասպետ Պետիկի նախանձանությանը¹⁾».

Այս բոլորը հետաքրքրական եր Հոռմի պապի և նրա գործա-
կալիների համար: Գլխավորն այս չեր, այլ այն, թե հավատավա-
ճառության այդ շուկայում ինչ գին եր ստանում վաճառվողը,
այսինքն՝ հայոց կաթողիկոսն իր ժողովրդի հետ: Վոր նա խար-
վեց տեղն ու տեղը, առաջին իսկ բովելին, —այս պարզ եր: Նրա
գավանափոխությունը, ինչ ասել կուզե, վոչինչ շարժում, անզամ
շշուկ շբարձրացրեց քաղաքական աշխարհում, և ամեն ինչ—
Հոռմի և մյուս կաթոլիկ պետությունների հարաբերությունները
թե Պարսկաստանի և թե Թյուրքիայի հետ—զնաց ինչպես զնա-
ցել եր մինչեւ այդ: Հայերի աղատության համար վոչ մի տեղից չեր
բարձրանում վոչ միայն վոչ մի ձեռք, այլ և վոչ մի ձայն: Մնում եր
մի կարելիություն, վոր նույնիսկ նոր ել չեր—գնալ, ինդրել:

Առաջին գնացողները Հակոբին կաթոլիկացնողները յեղան—
Պիսկոպո կրօնավորը և Պետիկ ասպետը: Զատիկիլը Հակոբի հետ
անելուց հետո՝ նրանք յերկուսով ճանապարհվում են Դերբենտ,
անցնում են Թերք անունով քերդը, վոր ոռւսական հող եր, ապա
կասպից ծովով Աստրախան գնալով, Ծուսաստանի վրայով մեկ-
նում են Վիեննա, ուր և կենտրոնացնում են իրանց դիվանագի-
տական գործունեյությունը: Այս մի աղացույց ե, թե Լուի 14-րդի

1) Ibid. p. 342.

խաչակրական խաղը յեթե չեր վերջացել, վերջանալու վրա յեր, այնպես վոր Հայաստանի համար խնդրողներն առաջ ու առաջ նրան չելին դիմում, այլ ավստրիական կայսրին:

«Կայսեր առաջին ունկնդրության ընդունվելով, —պատմում ե նույն մեր ապրյօնը, — (Պիսկովոն) անոր հարգանք մատուց ի զիմաց պարսից Շահին, բացարեց Հայաստանի քրիստոնյաներու վիճակը, վորք միշտ Ավստրիո տան հառած են աչքերնին, ներկայացուց Հակոբ պատրիարքի նամակները առ Ավստրիայի իշխանու»:

Այդքանով չի բավականանում Եջմիածինի կաթողիկոսի յեռանդու հավատարմատարքը.

«Տեսակցեցավ այրի և թափավորող կայսրունիներուն հետ, հետո Հոյաստանի կաթոլիկներն ոգտակար տեսան, վոր Պիսկովը Հոռմ յերթա, իսկ Պետիկ վիճնա մաս՝ Պիսկովը խորհուրդ հարցուց Մոնթեքուլյովի գորավարեն և անոր հարդուրանոր Պետիկ տեղեկագիր մը զրեց Ավստրիո կայսեր, վոր զի՞նք իր ամեննեն բարեկամ և մաերիմ ասպետներուն կարգը դասեց»¹⁾:

Այսուհետեւ Պիսկովոն մեկնում ե Հոռմ՝ հայոց գատն այնտեղ պաշտպանելու համար, իսկ Պետիկը, մնալով Վիճնայում, շարադրեց և հրատարակեց մի գիրք, վորի մեջ խոսում եր Պարսկաստանի դրության մասին և պատմում եր հայերի մեջ տեղի ունեցած անցքերը: Այս տեղեկություններն ել աղքյուր են ծառայել մեր անանուն հեղինակին:

Հակոբ կաթողիկոսն, անշուշտ ուշադրությամբ հետեւմ եր իր հավատարմատարների գործունեյության Յեվրոպայում: Թվում ե, թե նա իր հետ խորհրդակից եր անում և իր ասած «քաջ պարսկահայերից», այսինքն՝ հարավային Հարաբաղի զինավորներից (մելիքներից), վորոնք և հատկապես այդ նպատակով դրսում եյին Եջմիածին:

Յեկ ահա գործի այս դրության մեջ հ. Պիսկովոն վախճանվում եր Հոռմում (1678 թ. հուլիսին): Անտարակույս այս պատահաջի հետեւանքով եր, վոր նույն 1678-ին Եջմիածնում հավաքվեց խորհրդակցություն, բաղկացած վեց հոգևորականներից և վեց աշխարհականներից, վոր և հանձնարարեց կաթողիկոսին՝ գնալ Հոռմ և անձամբ վարել այստեղ հայերի գատը: Հակոբը, շնայած զառամյալ համակին, հանձն և առնում այդ յերկար և ծանր ճանապարհորդությունը ու ժողովարարության պատրիարքով գնում ե Թիֆլիս, այդտեղից ճանապարհում ե կ. Պոլիս: Այսուղեղ միայն հոչակվում ե, թե ուր ե նա գնում, և մի ոտար ուղինաց գրում եր.

¹⁾ 1678 թվին, յերբ յես Զմյուռնիայից Անգլիա գնալու համար բռնեցի Հոռմ և իտալիայի ճանապարհը, շշուկ եր տարածված ամրող Յեկեցական Պետության մեջ չի գործում ամենամեծ պատմության մեջ մտցնելը՝ կմտցնենք պատագրական շարժման պատմության մեջ մտցնելը՝ կմտցնենք Հարաբաղի, իբրև աշխարհագրական-պատմական միջավայրի մեջ:

թյան մեջ, թե հայոց առաջին պատրիարքը, իր մի քանի մնարողովիտների ուղեկցությամբ, շուտով զնալու յե Հոռմ պատին հնագանդություն հայտնելու համար: Այսուհետեւ յես մի քանի ամիս մնացի իտալիայում, բայց այնուն այդ պատգամավորության մոտենալու մասին վոչ մի լուր չստացվեց, ուստի այն ժամանակից յես յեկել եմ այն յեղրակացության, վոր հայոց պատրիարքը նույնքան հեռու յեր մի վորեւ ոտար յեկեղեցուն հպատակվելու դիտավորությունից, վորքան հայությանը հեռու յե հոռմեական կրոնի աթոռից»¹⁾:

Սակայն պատճառն այդ չեր, վոր Հակոբը չերեաց Իտալիայում: կ. Պոլիսի մեջ նա հապաղեց ամբողջ ութ ամիս և այնտեղ ել մեռավ: Նրա հետ յեղած պատվիրակությունը, վորի մեջ մտած եյին յերեք յեկեղեցականներ և յերեք աշխարհականներ, ցրիկ յեկալ:

Բայց հայ աղատագրական գործի սկիզբը գրված եր և այսքանով: Այս ամենը, ինչ պատմեցինք, կազմում և սաղմնային գրությունը, վորի միջից գուրս եր գալիս և զարգացման աստիճաններն անցնում մի մեծ շարժում, վոր հայոց պատմության նորագույն շրջանի առանցքն ե կազմում և այդ առանցքը ամբողջ 18-րդ դարի ընթացքում գտնվում եր Ղարաբաղի լեռնաշխարհում, վոր և այսպիսով գուրս եր քաշվում պատմության բնմի առաջավոր դիրքերը, յետ մղելով Հայաստանի բոլոր մյուս տեղերի պատմությունը մինչև յերկրորդական և յերբորդական աստիճանի նշանակություն: Յեկ շատ բնական ե, վոր հայ աղատագրական շարժման այս առաջին դարը ըեենե մեր ուշադրությունն ամենից առաջ առաջ այն միջավայրի վրա, ուր պատրաստվեց, զարգացավ և տապալվեց այդ հոչակավոր շարժումը:

Յեկ վորովհետև մարդկային հարաբերությունների պատմության մեջ վոչինչ չի կարելի հասկանալ և բացարել առանց ճանաչելու այն միջավայրը, վոր հանդիս ե բերուժ և գործիչներ, և գործողություններ, ուստի մենք մեր ընթերցողին նախ քան գործողություններ, պատի մենք մեր ընթերցողին նախ աղատագրական շարժման պատմության մեջ մտցնելը՝ կմտցնենք Հարաբաղի, իբրև աշխարհագրական-պատմական միջավայրի մեջ:

Այս մեղ անհրաժեշտ և մանավանդ այն պատճառով, վոր այստեղ, Ղարաբաղում, մնացած պիտի տեսնենք դարերի տակով աննկատելի անցած, թեև իսկամ ել մաշված հին հայկական ավատական-աղջնվականական իրականությունը, վոր իր դաշնակից հոգեռականության հետ միասին յենթարկվում ե վոչ ~ ավատական հոգեռականության և նրա դաշնակից խոջոյական կապիտալի աղջեցության և անդունդից առաջնորդվելով, վոչնչանում ե իբրև դաս, իբրև վերջին մոհիկան:

¹⁾ Г. А. Эзов — „Сношения Петра Великого с Армянским народом“, СПБ. 1858, с. XX.

Հայկական բարձրավանդակի գրեթե ամբողջ հյուսիս-արևելյան ծայրը, վոր սահման ունի Կուր գետի հովիտը հյուսիսում և Արաքս գետի հովիտը հարավում, ընդարձակ առումով, այնպես, ինչպես հասկացվել է վերջին յերեք դարերի ընթացքում, կարելի յի ամփոփել մի ընդհանուր աշխարհագրական անվան տակ—Հարաբաղ։ Ամբողջ այս տարածությունը, հյուսիսից հարավ և արևմուտքից արեելք, լցված եւ լեռնային բավիզներով, վորոնք կազմում են Փոքր Կովկասի՝ զանազան ուղղություններով ձըդված ճյուղերի խոնումը։ Արևելյան կողմից լեռնակույտերի այս մեծ աշխարհն իջնում եւ այն ընդարձակ տափաստանի վրա, վոր նույնակա կոչվում եւ Հարաբաղ և նմանապես նաև Միլի դաշտավայր (ստեղ)։ Այսպիսով իրար կողքի յեն արտաքուստ, տեղագրապես իրար նմանություն չունեցող, բայց անտեսապես իրարից կախված Հարաբաղներ—լեռնային և դաշտային։ Արեվմուտքում Լեռնային Հարաբաղը չունի այլևս այնքան խիստ վորշված սահմանագիծ, քանի վոր իր եյական տեղագրական և լեռնագրական գծերով նա կազմում եւ շարունակություն այն լեռնաշխարհի, վորի մեջ մտնում են Լոռին, Դաղախը, Շամքորը, Դանձակի լեռնաշղթայի արևմտյան մասը։ Այստեղ, Արևմուտքում, մասնավոր և պայմանական սահմանագիծ կարելի յե ընդունել այն ջրաժան բարձրությունները, վորոնք Սևանի լճի արեվելյան կողմում ձգվում են հյուսիսից դեպի հարավ, միանում են Դարալազյագի լեռներին։ Այս լեռներից հարավում բաժանվում եւ դեպի արեելք գնում Բարգուշատի շղթան, վոր և Հարաբաղի հարավ-արևմտյան և հարավային սահմանագիծն եւ կաղմում, բաժանելով այն նախիջեանի դավառից։

Այս ընդհանուր ստվերային գծագրությունը ներկայացնում է Հարաբաղն իրեն մի հսկայական լեռնաբերդ, ճակատը դարձրած դեպի Կուր-Արաքսյան և Մերձ Կասպիական անհուն տափարակները։ Այս վիթխարի ընական պատվարին կարծես թե դեր վիճակված լիներ ճակատ խփել այն մարդկային հեղեղներին, վորոնք այդ տափարակների կողմից արշավում եյին դեպի հայկական բարձրավանդակի ներսերը, դեպի այն մեծ ճանապարհները, վորոնք Արևմուտքի մեծ ծովափնյա յերկիրներն են տանում։ Բայց մի այդպիսի դեր անփոփոխ կատարել տալու համար, բնությունը զլացել եր տալու իր այդ ահեղ բերդին միանգամայն փակված ամրության անմատչելիություն։ Լեռնաստանի բոլոր ջրերն ունեն հոսանք արևմուտքից արեելք, սարից դեպի դաշտ։ Իսկ սրանք ճանապարհներ են դաշտից սար և սարից դաշտ։

Այս ջրային յերակները, մեծագույն մասամբ հորդ լեռնային գետեր, իսկական կենդանություն են դաշտին եւ սարին եւ Դաշտային Հարաբաղը մի մեռած անապատ կլիներ, յեթե Լեռնայինը չուղարկեր նրան գետեր, վորոնք բառիս բուն նշանակությամբ կաթիլ առ կաթիլ հափշտակվում են դաշտի բազմահարուստ և բերբի հողերը վոռոգելու համար։ Իրենց հերթին ինչ կլինեյին քաղցած և մերկ սարեցիները իրենց վեհատեսիլ, բայց կողմանը ջրերի ճանապարհները վեհատեսիլ, բայց ժամանակամատանակ և բեռների ու տնտեսական տեղափոխությունների ճանապարհներ։

Իրար տաւ, իրարից առնել—այս սերտ փոխհարաբերությունն է զրել ինքը՝ բնությունը լեռան և դաշտի մեջ, և մարդկային կյանքը հպատակվել ե այս յերկաթե որենքին, սկսած այն անհիշելի դարերից, յերբ կազմակերպվել սկսեց մարդկային հանրակեցությունը անտեսական կովանների վրա։ Լեռնային Հարաբաղը, ինչպես և ամեն մի լեռնաստան, չափականց հարուստ և զժնդակ վայրենի պայմաններով, վորոնք միանգամայն անընկանություն յեն մարդու համար, մանավանդ յերբ սա գտնվում ե տղետու անկար նսխնականության գրկում և չափականց ել աղքատ և այնպիսի հսարավորություններով, վորոնք կարող են թույլ տալ նույն այդ մարդուն ապրել իր ձեռքի աշխատանքով, քանի վոր ֆիզիկական գոյություն պահպանելու միակ միջոցը լեռներում հաստատված նստակեցության համար ել հողագործությունն եր։ Իսկ այն հողը, վոր տալիս եր լեռը՝ գործելու համար, բաղկացած և մեծագույն մասամբ ցուրտ սարահարթերից՝ ընդհանրապես աղքատիկ բերքատվությամբ։ Կան, ինարկե, և ավելի յերջանիկ

հողեր, վորոնք լեռնային բերքաբերության տեսակետից կարող են և հարուստ համարվել բայց այդպիսիները կազմում են փոքրագույն մասը, տեղավորված լինելով խոր հովհանների և ձորերի մեջ, ուր խստասիրտ և անհյուրընկալ բնությունը մեղմանում ու վողորմածանում ե մինչ այն աստիճան, վոր թույլ և տալիս մարդուն անդամ այգեգործության մեջ զործ զնել իր աշխատանքը, մինչև իսկ խաղողի մշակման հասցնել այն։ Այսպիսի հնարավորություններ շատ են տալիս մանավանդ այն տեղերը, ուր Լեռնային Ղարաբաղը կամաց կամաց թեքվում և գեղի դաշտայնացումը և Ղարավային Ղարաբաղի այն ձորերը, վորոնք պատկանում են Արաքսին։ Բայց այս փոքրամասնությունը, բնականաբար, այնքան անծուկ տեղայնություն ունի, վոր չի կարող փոփոխել յերկրի ընդհանուր բնավորությունը։

Բայց յերկրագործությունը սակավաբժեք կենսական աղբյուր դարձնող միայն հողի ընդհանրապես կարծիք շերտավորումը չե, յեղբայրացած կլիմայական պայմանների հետ, այլ և մասնավորապես հենց իր, այդ աշխատանքի դաժանությունը, վոր խարսխված և լեռնային միջավայրի բազմազան հատկությունների վրա։ Այսպես են հաղորդակցության ճանապարհների կամ կատարյալ բացակայությունը կամ յեղածների դժնդակությունը, անտառների բունացումը շատ տեղերում և կատարյալ անփայտությունն ուրիշ շատ տեղերում, հողի պակասությունը, վոր հարկադրում եր կամ կարել անտառներն այն տեղերում, ուր նրանք շատ եյին և խիտ, մի փոքրիկ արտի համար մաքրել, «խամրատ» անել մեծ արածություններ անտառների ծոցում, կամ վար ու ցանքի համար ընտրել լեռնային դժվարամատչելի լանջեր ու նույն իսկ այնպիսի ժայռոտ խոռոշներ, ուր հողը փորել կարելի յե միայն բրիչով։ Յեվ այսպիսով լեռնային յերկրագործությունը, ընդհանուր առմամբ, տեղական պետքերը հազիվ բավարարող մի պարապմունք ե, այն ել յերկրի վոչ բոլոր մասերում։

Այս աղքատության դիմաց լեռը ներկայացնում ե և մի շատ խոշոր հարստություն—ամառնային արոտ։ Հականալ Ղարաբաղի հսկայական նշանակությունն այս կողմից կարելի յե, նկատի առնելով այն հանգամանքը, վոր այդ լեռնաստանը յերկու կողմից, հյուսիսից և արևելքից շրջապատղ անծայր տափարակներում թագավորում է, իրեւ տնտեսության ավագ ճյուղ, անսանապատճեն իր նախնական ձևի, այն ե վերաբնակ քոչվորության մեջ։ Հենց վոր գարնան արեն սկսում ե այրել և խանձել տափարակները, ծայր ե տալիս ժողովուրդների և նրանց

հոտային տնտեսությունների տեղափոխությունը դեպի լեռների կանաչ ու զով աշխարհը, ուր և ամբողջ ամառվա ընթացքում յերսում են կաթնային՝ տնտեսության վերաբերյալ աշխատանքները։

Այս մի շատ հին յերեսույթ ե և բոլորովին սխալ կլինի կարծելի թե թյուրք ցեղերն են այստեղ բերել քոչվորությունը։ Նրանց այս կողմերում յերեալուց շատ առաջ են տեղեկությունները մեզ հավաստիացնում, թե տնտեսական շարժումը տեղական ծագում ունի։ Ամառը լեռներն ստանում եյին իրանց հատուկ տեղային անվանումը—«հովոց»¹⁾, վոր այժմյան «ամառանց» բառի նախահայրը պիտի համարվի։ Մենք ունենք և մի ուրիշ տեղեկություն, վոր վերաբերվում ե իններորդ դարին և ազոտ հասկացողություն ե տալիս հովոց գնացողների թվի մասին։ Միայն Ղարաբաղի Մեծիրանք գավառակում հեղեղը մի ամառ քշում տանում ե խաչնարածների 800 վրան, «որք եկեալ եյին ի կովկասայ յապուր՝ յաւուրս ամարայնոյց»²⁾։

Բայց ժողովրդական անտեսության այս ճյուղը առաջնակարգ պիտի լիներ և միևնույն բնական տնտեսության պայմաններին յենթարկված լեռնաբնակության մեջ։ Իսկ այս հնարավար եր լեռան և դաշտի մերձափոր աշխատակցությամբ, վորովհետեւ յեթե լեռը հովոց եր, դաշտն ել ձմեռոց եր։ Յերկարագան դառնաշղունչ ձմեռը լեռներում նույնքան անհրաժեշտ եր դարձնում անասունների համար տափաստանի մեղմ, խոտափեած ձմեռը, վորքան նույն տափաստանի ամառնային կիզիչ արեւի փրկագործ եր դարձնում լեռնային հովոցը։ Յեվ այս աշխատակցությունն ել արձանագրել ե պատմությունը ավելի ևս հին ժամանակներից։ Այսպես, յոթներորդ դարում հոնաց թագավորը հարձակվում եր Կուր-Արաքսյան տափաստանի վրա և հափշտակում եր այնտեղ արածող բոլոր հոտերը, վոչ միայն բնաշխարհիկները, — ասում ե Կաղանկայտուացին, «այլ և որ Այրաբայան գաւառաց և ի Սիւնեստանեայց աշխարհէն հօտք և անդեայք ի ձմեռնաճաշակ դաշտն եկեալ եին յարօտ»³⁾, դրանց հետ և հազարավոր մարդկանց։ Ազվանից Զվանշիլ իշխանը թափում և մարդկանց ե անասունների այդ գերությունը, և մենք ունենք ազատվածների մի այսպիսի ցուցակ, — «Դարձուցանէր յաւարէ անտի հարիւր և քսան հազար հօտից և հօթն հազար ձիոց և

1) Մովսեսի Կաղանկայտուացոյ Պատմութիւն Աղուանից, Թիֆլ. 1913, յեր. 98.

2) Անդրեյեր. 380.

3) Անդրեյեր. 218.

արջառաց բաղմութիւն և ոչինչ նուազ քան զհաղար արանց գերելեաց¹⁾:

Սակայն այս տնտեսական համերաշխությունը լեռան և դաշտի մեջ կարող եր տեսական լինել այնքան ժամանակ, վորքան նըրանք յերկուսը միենույն պետության մասնիկներն են կազմում: Բայց այսպիսի զրություն միշտ չեր պահպում, և դաշտի ու լեռան հարաբերությունները հաճախ յենթարկվում եյին տեղային իշխանությունների քմահաճույքին: Հետո եր լինում խզել լեռան հարաբերությունները դաշտի հետ, մինչդեռ դաշտի հարաբերությունները լեռան հետ մնում եյին անխզելի: Այսպիս եյին տրամադրում յերկու տնտեսությունների ուժերը: Լեռը նըստակեցություն եր, և դաշտ ուղարկում եր իր իր անասունները միայն: Ծանր դեպքերում նա հեշտ կարող եր զոհել իր տնտեսական շահը, քան ավարի և սպանության վտանգին յենթարկել իր անդամների գույքն ու կյանքը: Այսպիս չեր վաչկատուն տնտեսությունը: Նա հովոց գնում եր ամբողջովին, տանելով իր հետ ընտանիքը, ամբողջ շարժական գույքը, համայնական կարգն ու կազմակերպությունը: Այս, ուրիմն, կյանքի և մահվան հարց եր, այն ել վոչ թե անհատական, այլ համայնական, անդամ ցեղային: Հետեաբար նա պիտի պաշտպաներ դրությունն իր բոլոր ուժերով: Յեկ այսպիս ել անում եր նա, դործադրելով հարկավոր դեպքում և բռնություն:

Լեռնային տնտեսությունը, ինչպիս և ամեն մի նստակեցություն, նեղված եր վաչկատունից: Այս, սակայն, համարվում եր մի անխուսափելի չարիք, վորի հետ լեռնցին ակամա հաշտվում եր, քանի վոր, վերջին հաշվով, վաչկատուն տնտեսությունն իր ընդարձակ և հարուստ անասնապահական պաշտեղեններով և նյութերով խոշոր ոգուտներ եր տալիս լեռնցի ազգաբնակության ամբողջ ամառվա ընթացքում:

Այս հանգամանքով պետք ե բացատրել, վոր լեռնային տընտեսությունը հետզհետե պակասացնում եր իր անասնապահությունը, կառչած մնալով իր յերկրագործության: Դաշտը գերազանցում եր նրան, իհարկե, և այս ճյուղի մեջ, ունինալով, բացի դրանից, և այնպիսի արդյունագործություններ, որինակ՝ մետաքսագործություն, գորգագործություն, կաշեգործություն, վորոնց մասին լեռնցին կամ բոլորովին հասկացողություն չուներ, կամ ուներ շատ խեղճ հասկացողություն: Վերջապես, դաշտի

անտեսական մեծամեծ ուժերն եյին կազմում թանգարժեք բույսների մշակույթները—բամբակ, բրինձ, քունջութ և այլն: Դաշտն իր այս բաղմաղան հարստություններով դառնում եր խոշոր առևտրական շուկա, վոր ճին ժամանակներում ուներ միջազգային նշանակություն: Լեռներին մոտիկ եր Պարտավ մայրաքաղաքը, հոչակված մանավանդ իր «կյուրակի» անունով կիրակագորյա տոնավաճառներով, ուր հաղպատական կամաց մասնակին Ասիայից, անգամ Հնդկաստանից: Կիրակագործանվեց ու անհետացավ Պարտավը, բայց նրա տեղ բուսաբարդարությունն իր կիրակնորյա տոնավաճառներով, վորոնք աչքի ընկնող եյին մյուս դաշտային մած գյուղերի տոնավաճառների շարքում:

Լեռնային Դարաբաղը այդ աշխուժ արդյունագործական շարժումներից միշտ մի կողմ մնաց, ունենալով այդ տոնավաճառներում իր համեստ տնտեսական առաջարկություններն ու պահանջները միայն: Մինչև 18-րդ դարի կեսը մենք չենք տեսնում ամբողջ Լեռնային Դարաբաղում մի հատ քաղաք կամ փոքրի շատե աչքի ընկնող առևտրական կամ արդյունագործական կենտրոն: Նրա նեղ ու վոլորուն կածաններով շարժվել կարող եյին միայն չարչիական բեռները: Ըստանիքը, ինչպես ամեն մի ավատական տնտեսության իշխանության տակ, ինքն եր հոգում իր կարիքները, պահանջի համաձայն փոխարկելով իրան այս կամ այն արհեստանոցի:

2.

Լեռնային Դարաբաղի ազգաբնակությունը 17—18-րդ դարերում խառն եր, բաղկացած հայերից (մեծամասնություն) և թյուրքերից (փոքրամասնություն), իսկ դաշտային Դարաբաղում ապրում եր միապաղաղ թյուրք ազգաբնակություն: Թյուրքերի համար Արևելյան Այսրկովկասի տափաստանները հայրենիք դարձել եյին 11—13 դարերից վոչ վաղ, յերբ տեղի ունեցին սելջուկյան և թաթարական արշավանքները, վորոնք լինելով վաչկատուն ժողովուրդների տեղափոխություններ, նստեցրին այստեղ հոծ բազմություններ իրանցից իբրև այնպիսի աշխարհական միջավայրում, վոր կարծես հատկապես ստեղծված եր վաչկատուն տնտեսության համար և լիուլի փոխարինուս եր նըրանց բուն հայրենիք՝ Միջին Ասիան: Տափաստաններից թյուրք ժողովրդի հատկածները, առաջանալով մինչև լեռները, գրավեցին

1) Անդ, յել. 219.

տեղեր նըանց խոր հովիտներում, յենթարկելով իրանց նստակյաց տնտեսության նիստ ու կացին:

Այս յեկվոր ժողովուրդն երի համեմատությամբ լեռնական հայ ժողովուրդը, յեթե վոչ ամբողջությամբ, զեթ ամենամեծ մասմբ ընիկ եր անհիշելի հին ժամանակներից: Այս ազգագրական անփոփոխությունը լեռը պահել-պահապահնել եր շնորհիվ իր ամբավինդ տուանձնացման իրք աշխարհագրական միջավայրի և մանավանդ շնորհիվ այն տնտեսական պայմանների, վոր մենք հենց նոր նկարագրեցինք, պայմաններ, վորոնք, ընդհանուր առմամբ, իրենց աղքատությամբ չեյին կարող դրավիչ և գայթակղեցուցիչ լինել վոչ բռնի, նվաճողական, վոչ ել խաղաղ, ինքնահօժար գաղթավորումների համար: Բայց կար և ավելի հըզոր պատվար-պաշտպան, և այս հայ ազգարնակության վայելած համբավն եր: Ահա ինչպես եր հանձնարարում հինգերորդ դարի հայ մատենագիր Կորյունը Աղվանից աշխարհը, վորի մի մասն եր կազմում Արցախը (հյուսիսային Ղարաբաղը): «Վայրինամիտ և դատարկասուն և անասնարարոյ»¹), իսկ Սյունիքին (հարավային Ղարաբաղին) տալիս և «գաղանամիտ», «վայրենագոյն», «ճիւաղաբարոյ»²) անունները: Այս տեսակ գնահատումների հիմքը պետք և վորոնել տեղական ազգագրական-կինցաղական առանձնահատկությունների մեջ, առանձնահատկություններ, վորոնցից ամենազլխավորը հենց այն եր, վոր յերկու յերկիրներն ել հայերից նվաճված և հայերի ձեռքով հայտցված այլացեղ ազգարնակություն ունեյին: Մի պատմական պրոցես եր այն, վոր կատարվել եր վոչ միայն Սյունիքում և Արցախում, այլ և բոլոր այն ծայրագավառներում, վորոնք չորս կողմից շրջապատում են Հայկական Բարձրավանդակը: Հույն բազմահաշակ աշխարհագիր Ստրարոնը, վոր ապրում եր քրիստոնեյական թվականության առաջին դարում, վկայում է, վոր ծայր յերկիրների նվաճումը կատարել են Արտաշես առաջին և Տիգրան յերկորդ (Մեծ հորջորջված) հայ թագավորները, վորոնցից առաջինն ապրում եր մեր թվականությունից առաջ 189—165 տարիներում, իսկ յերկորդը՝ 140—55 տարիներում: Նվաճումից հետո սկսվեց ծայր յերկրների հայացումը, վոր ինչպես կարելի յե յեղբակացնել Ստրարոնի մի ակնարկից, կատարվում եր հայոց լեզվի տարածման միջոցով: Յեկ յեթե Կորյունի ժամանակ

¹⁾ Կորին վարդապետի Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպ-պատմականի, 1833, յեր. 19.

²⁾ Անդ, յեր. 14.

այսինքն՝ Սյունիքի և Արցախի նվաճումից մոտ 500 տարի անցած յերկու նահանգներն ել տակավին «գաղանամիտ» եյին և «վայրենապույն», այս միայն ապացույց ե, թե վորպիսի համառությամբ եյին նրանք պահպանում իսենց ազգագրական ինքնուրույնությունը: Յեկ հասկանալի յե, թե ինչու հայ հայցնողներն այնպիսի մեծ ատելությամբ եյին վերաբերվում տեղական լեզուներին: Կորյունի ժամանակ դեռ գոյություն եր պահպանում Արցախի գավառաբարբառներից մեկը, վոր կոչվում եր «գարգարացոց» լեզու, և Մովսես Խորենացին անվանում է նրան «կոկորդախոս, աղմազուր, խժական, խեցրեկագոյն»¹⁾: Միայն տասներորդ դարումն ե, վոր մենք տեսնում ենք Արցախը լիովին հայախոս և այս յերկույթի մի շատ հետաքրքրական հուշարձանն ե առաջին տեղացի հեղինակը, Մովսես Կաղանկայտուացին, վոր այնքան և հայացած, այնքան և յենթարկված Խորենացու աղդեցության, վոր կրկնում եր նրա արհամարհական խոսքերը գարգարացոց լեզվի մասին²⁾, թեև այս լեզուն կարող եր նրա ժամանակ միանգամայն անհետացած շլինել իրք մայրենի լեզու շատերի համար:

Հայացման փաստն այսպիսով պարզված տեսնելով, կարենությունն ե ծագում բացահայտ դարձնելու նաև ազգարնակության ցեղական ծագումը, մի հարց, վոր պիտի վոչ նվազ չափով ոգնե հայտաբերելու հազարավոր տարիներով իր լեռների վրա նստած ժողովրդի Փիզիկական և հոգիկան առանձնահատուկ կարողությունների չափն ու վորակը, նրա ընկերային և քաղաքական կյանքի բովանդակության և կաղմավորման հիմքերը:

Արդ՝ ծագման հարցը մեզ տանում ե մի նախապատմական շրջան, վոր գեռ բավականաչափ չի լուսարանված ժամանակակից գիտության ջանքերով: Ինչ վոր հայտնի յե առավել կամ նվազ չափերով և թույլ ե տալիս հավանական յենթաղբություններով ձանապարհ բաց անել անհայտության խավարի մեջ, մենք այդ բոլորն արել ենք մանրամասնորեն մի ուրիշ աեղ³⁾: Այսեղ կասենք միայն հետեւյալը:

Հարավային Ղարաբաղը (Սյունիքը) գեռ նախահայկական շրջանում հայտնի յեր դարձնում իրան Սևանի լճի սեպածե արձանապրություններից մեկի մեջ «Սիունիա» անունով, իբրև կ

¹⁾ Խոր. Գ, ծդ.

²⁾ Կաղանկայտ յեր. 95:

³⁾ Տ. իմ «Պատմություն Ղարաբաղի հայոց թվական հոգեվոր Թուրքիա», Թիֆլիս, 1915, զլ. առաջին:

մի առանձին կազմակերպված յերկիր, վոր նվաճվեց Ուրարտական թագավորի ձեռքով: Այսպես չե Հյուսիսային Ղարաբաղը (Արցախը): Սրա մասին հատուկ հիշատակություն մինք վոչ մի տեղ չունինք, սակայն հայտնի յե, վոր սա մտնում եր իրրե բաղկացուցիչ մաս այն ընդարձակ պիտական կազմակերպության մեջ, վոր ընդհանուր առմամբ կոչվում եր Աղվանից աշխարհ և վոր բռնած ուներ Արևելյան Այսրկովկասի բոլոր տափառանները՝ կովասյան շղթայից մինչեւ Կասպից ծովը, ունենալով լեռնային ծայրադավառներ Արցախը և Ուտիքի մի մասը:

Ի՞նչպիսի ժողովուրդներ ի եյին պատկանում այդ յերկիրները Միաձույլ մեծ ցեղային խմբավորումների մասին մտածել չի յել կարելի: Իսկական ազգեր չկային, կային միայն ցեղային մեծ կամ փոքր ընտանիքներ՝ բազմաթիվ մեծ ու փոքր ներքին տրոհումներով ու ճյուղավորություններով: Այսպիսի կազմ ուներ այն ամբողջ ազգաբնակությունը, վոր տարածված եր Փոքր Ասիայից մինչեւ Կասպից ծովը: Այս ցեղային մեծ ու փոքր ընտանիքներն իրենց ծագման տեսակետից յերկու գլխավոր ճյուղեր եյին կազմում — մեկն ընդունված ե անվանել արխական, և այս համեմատաբար նորեկ մի ազգագրական տարր եր, իսկ մյուսը, վորի համար գիտությունը պայմանուրեն կիրառում ե ներիրական անվանումը, ներկայացնում ե ավելի հին, բնիկ և ավելի բազմամարդ ու ծավալուն ազգաբնակչական տարրերը: Սրանց թվին եյին պատկանում վրացիները, կովկասյան լեռնաշղթան գրաված լեռնականները, և այն անթիվ ցեղերը, վորոնք խտացած եյին Մերձ-Կասպիական և Կուր-Արաքսյան տափարակները, ծածկում եյին իրանցով Փոքր Կովկասի լեռնային յերկիրները, իջնում եյին Արարատյան գաշտը և բռնած ունեյին ամբողջ Հայկական բարձրավանդակը, Վանի և Ուրմիայի լճերի ավազանները, մինչեւ Հայկական Տավրոսի և Զագրոսի լեռնանցքները:

Հեթիթական ցեղերի այս միջերկրական ծովը կենդանի ու գործոն եր իր ներքին բաժանումներով, վորոնք կարող եյին հեռու գնալ միմյանց լեզուն չհասկանալու չափ: Բայց ցեղային լեզուների ու նրանց բարբառների բազմությունը, վոչ նույն իսկ միջեղային հարաբերությունները չեյին խանգարում, վոր բոլոր այդ տարրեր անուններով, տարրեր գիրքերով ու տեղերով տրոհված ազգագրական տարրերը լինին իրար վերաբերմամբ բույրիվ, այսինքն՝ մինչույն ծագման, հետևաբար և մշակութային տիպին պատկանող Այս հանգամանքի հետևանքով ե, վոր հնագիտությունը նմանություն ե գտնում, որինակ՝ Հյուսիսային Ղարա-

բաղի և Վանի նախապատմական գերեզմաններում պահպած կուլտուրանների մեջ:

Նույն այս տեսակ և սրանից տվելի սերտ հարաբերություն տեղի ուներ և Ղարաբաղի յերկու մասերի մեջ, վորոնք աշխարհագրություն ել անջատված չեյին իրարից: Թեև Հյուսիսը պատկանում եր Աղվանքին, մինչդեռ հարավն ինքնազլուխ քաղաքական մարմին եր կազմում, բայց միանգամայն հազվագյուտ ե այն անձուկ հարազատությունը, վորով յերկու յերկիրները կպած եյին իրանց աշխարհագրական անուններով: Արցախն ուներ Սիսական գավառ, իսկ Սյունիքն ել ամբողջովին կոչվում եր նաև Սիսական նահանգ: Յեկ փոխազգարձարար, Արցախն ել հաճախ կոչվում եր Փոքր Սյունիք: Նշանակենք և այն, վոր Սյունիքն ուներ «Նարանդ» գավառ, Արցախը՝ «Մյուս Նարանդ» գավառ: Յեկ այս մերձավորությունն եր, վոր դարերի աշխատակցության միջոցով մշակեց յերկու յերկիրների համար մի ընդհանուր կուլտուրա — նիստ ու կաց, սովորություններ, հագուստի ձև և վերջապես՝ մի հարուստ և ուժեղ լեռնային գավառաբարան Նշանավոր ե այս կուլտուրան մանավանդ այն կողմից, վոր կըրում ե իր մեջ մանր գավառակային ինքնուրույնություններ և վարիանաներ: Բայց հենց այս և գավառայնության ստեղծագործական կենսունակությունը, աղբյուր ունենալով ցեղական ընտանիքի հին զրությունը:

Ստրաբոնը պատմում է, վոր Աղվանքի (Ալբանիայի) պետությունը բաղկացած եր 26 առանձին մասերից, վորոնցից յուրաքանչյուրն ուներ իր սեփական թագավորը և այդ ամենքը յենթարկվում եյին իրանց մեկին, վոր այդպիսով դառնում եր համերկրային թագավոր և պիտի իմանար բոլոր 26 թագավորությունների լեզուն¹⁾): Այս 26-ն անշուշտ գլխավոր բաժանումներն եյին, և անհնարին ե, վոր յուրաքանչյուր տեղական թագավոր չունենար իր ձեռքի ատկ բազմ «թիվ մանր իշխողներ», տուժապետներ: Յեթե այսպիսի մի պիտական կազմակերպություն ամենամեծ մասով տարածված եր ընդարձակ դաշտավայրի յերեսին, վոր նպաստում ե միաձույլ մարդկային հանրակեցությունների կազմակերպման, ապա ուրեմն հեղտ և յերեակայել, թե ինչ կլիներ լեռնային նահանգը, ուր յուրաքանչյուր գետաձոր, յուրաքանչյուր մեծ սարալանջ առանձնացում ե, անջատականություն, մանր, բայց գրեթե միշտ գոսող, անդամ ըմբոստ տեղայնությունը նմանություն ե գտնում, որինակ՝ Հյուսիսային Ղարա-

1) Geographie de Strabon, Paris, Hachette, 1891, t. II, p. 106—111.

թյուն և, զրեթե շրջապատված ինքնամփոփում, և այս բոլորը մտցնում ե յերկրի ընդհանուր կյանքի մեջ այն տեղային ինքնուրույնություններն ու վարիանաները, վորոնց հիշատակեցինք քիչ առաջ և վորոնք լոկ մշակութային յերեռույթներ չեցին, այլ և խոր արմատներ եյին բռնած յերկրի քաղաքական և վարչական շահերի բնագավառում։ Այսպես եր ցեղային ընտանիքների դրությամբ ապրող աշխարհը։ Այսպես եր և հատկապես լուսնային Ղարաբաղում յերկաթե որենքով հաստատված դարավոր իրականությունը։

Վերցնենք հենց միայն Արցախը։ Այդ՝ ցեղային մի ընտանիք եր իր լեռնակղզմերով և գաշտահայաց բարձրություններով, և նրա ներս լցված եր քույրաթիվ ցեղերով, և դրանցից մի քանիսների անունները պահված եյին այն 14 զավառների անունների մեջ, վորոնցից բաղկացած եր այդ նահանգը։ Դրանցից առնվազն ութը հատ (Վայկունիք, Մեծիրանք, Մեծկուանք, Նարջլանք, Մոխանք, Պիանք, Պարծկանք, Սիսական) մենք ամենայն հավանականությամբ կարող ենք համարել ցեղական անուններ։ Ունենք Մոխանք գավառ, ունենք և «Մխանց տոհմ»¹⁾, ունենք Պարծկանք գավառ, ունենք և «աշխարհ Պարծկանց»²⁾։

Բայց, չնայած տոհմականության կատարած բազմաթիվ մասրանջատումներին, ցեղային նույնիսկ մեծ ընտանիքները պահպանում եյին ընդհանուր հատկություններ, և այս կողմից չափազանց հետաքրքրական են այն գծերը, վորոնցով Սարարոնը բնորոշում ե աղվան ընդհանուր անունը կրող ժողովուրդը։

«Ալբանիայի ազգարնակությունն, — ասում ենա, — ունի ավելի հովվական սովորություններ, վորոնք, չնամնելով հանդերձ վաչկատուն ազգերի վայրենության, ավելի մոտենում են, սակայն, այդ ազգերի բարքերին, և այս թույլ և ատլիս ընդունելու, վոր այդ ազգարնակությունը պիտի մինի քիչ պատերազմակեր Մարդիկ աչքի յեն ընկնում իրանց գեղեցկությամբ և բարձր հաստիով Ավելացնենք, վոր նրանք անկեղծ են, շատ քիչ են անազնիվ, ինչպես մարդիկ, վորոնք ժամանակի մեծ մասում գրամ գործածելու սովորություն չունին, վորոնք հարյուրից տվել համբել չգիտեն և բայցականանում են փոխանակելով իրանց միեւքները դրսից յեկած ապրանքների հետ Կյանքի ուրիշ գործերի մեջ նրանք ունեն մի մեծ անփութություն։ Չունեն, որինակ, համարացզություն ձիւտ շափի և էջոի մասին, կարճ ասած՝ վարում են իրանց պատերազմները։ Իրանց գործերը, իրանց մշակույթը մի կատարյալ անհախտակառությամբ։ Այս սակայն չի խանգարում, վոր նրանք ունենան կանոնավոր զորք, հետևակ և ձիավոր»³⁾։

¹⁾ Կաղանկ. յեր. 135.

²⁾ Նույնը Փարիզի ապագր. յեր. 167.

³⁾ Strabon, t II, p. 406—409.

Մի ժողովուրդ, ուրեմն, ամրողջովին տոպորված նախնականությամբ, Յեվ այս նախնականությունն ավելի ևս խտացած պիտի լիներ Հյուսիսային Ղարաբաղում, վոր հաղորդակցության միջոցներից զուրկ, աշխարհի հետ շփումներ ունենալու անկարող մի յերկրի եր, իր պատմության հին շրջաններում Արցախը յեթե մի դեր կատարել ե, այդ կարելի յե վորոշել յերկու բառով—«հովոց» և «թագստոց»։ Նա տալիս եր և զով աշխատավոր ամառ և ծերպեր ու խոռոչներ, ուր մարդիկ կարող եյին թագցնել իրանց գժբախտացած գլուխները վտանգի գեպքում։ Յեվ այսպիսի գեր վոչ միայն Աղվանից դաշտավայրերի, այլ նաև Հայաստանի միջնաշխարհի վերաբերմամբ, յերբ այս վերջինը հովոց չեր վորոնում, այլ ամրապինդ բերդ։ Դեռ հինգերորդ գարում, Վարդանաց հախուռն ապստամբության սարսափելի հետևանքներից ազատվելու համար՝ «Փափկասուն տիկիններն» անգամ փախչում եյին, ահազին տարածություններ կոխվուելով, Արցախի թանձրախտ անտառները, ազատ շունչ քաշելու հնարավորություն վորոնելով նրանց վայրենության մեջ։ Դարերի ընթացքում այս յերկիրն ե յեղել այն հակայական բերդը, վոր պաշտպանել և Արարատյան յերկիրը։ Զաբարիա Քանաքեռցին մանրամասն պատմում ե, թե ինչպես 17-րդ դարում ոսմանյան արշավանքին յենթարկված ամբողջ Յերևանի խանությունը պոկվեց իր տեղերից և գնաց ապաստան վորոնելու Ղարաբաղի լեռներում։

Բնականության և նախնականության այս ուժեղ, անընկճելի տիրապետությունը միանգամայն հասկանալի յե զարձնում այն համեստ, գրեթե աննկատելի գոյությունը, վոր տանում եր Հյուսասաւային Ղարաբաղը յերկար ժամանակ։ Հասկանալի յե այս, մասնավորապես, և այն նկատառումով, վոր քանի կանգուն եր Աղվանից պետությունը, սրա կառավարող մարմինները և վայելող դասերն ապրում եյին Պարտավ մայրաքաղաքում և ուրիշ գաշտային վայրերում, պահելով լեռնաստանը միշտ հովոցի պաշտոնի մեջ, վոր վոչ մեծ հնարավորություններ ուներ, վոչ ել մեծ պահանջներ։

Այսպես չեր Սյունիքը։ Հայոց պատմության վազ ժամանակներից, յերեկ հենց իր հայացման հետևանքով, նա սկսում եր զործոն գեր խաղալ հայ պետական կազմակերպության մեջ, հանդիսանալով իրեւ հաճախ անգերակշռելի կենտրոնախույս ույժ, վոր ձգտում եր—և այս վոչ առանց ժամանակավոր աջողությունների—առանձնանալ հայ ավատական միջավայրից վոչ միայն քաղաքականապես, այլ և յեկեղեցականապես։ Զնայած, սակայն,

այս ուժեղ պատմական դերին, Սյունիքի ժողովուրդների վրա
յել կարելի յէ տարածել նախնականության այն գծերը, վոր
կտել եր Ստրարոնն Աղվանքում:

3.

Մեր ծրագրից դուրս ե մնում Լեռնային Ղարաբաղի պատմու-
թյան մշակումը սկզբից մինչև վերջ, Մեզ հետաքրքրողը, ինչպես
հայտնել ենք, այն ե, վոր պարզենք, թե ինչ տեսակ կազմական
կերպարանք եր ներկայացնում այդ յերկիրը, յերք դարձավ
17—18-րդ դարերի շարժման միջավայրը: Իսկ այս նպատակի
համար բավական կլինի և այն, յեթե մենք համառոտ դիմումներ
կանենք անցյալի այս կամ այն շրջանին՝ բացարելու համար
յերկրի ազգաբնակության ընկերական-հասարակական կազմը և
նրա մեջ հաստատված տնտեսական հարաբերությունները:

Յուրաքանչյուր լեռնաստան, լինելով մի մեկուսացած աշ-
խարհ, ընականորեն յենթագրել ե տալիս մի համառ և խոժոռ
պահպանողականություն: Սյդ հատկությամբ մենք տոգորված
տեսանք և ամրող Լեռնային Ղարաբաղը: Ուստի, թվում ե, թե
նա անազարտ պիտի պահած լիներ իր ներքին կյանքն այնպիս,
ինչպես սա կազմակերպվել եր դարերի ընթացքում, համրերող
հանդիսանալով միայն այն փոխոխությունների վերաբերմամբ:
վորոնք դանդաղորեն, զրեթե աննկատելի կերպով առաջ եյին
գալիս կյանքի զարգացման հետևանքով: Սյս այսպես ել կար-
Բայց Հայաստանի մեջ տեղի ունեցած խոր, սասանեցուցիչ քա-
ղաքական տակնուվրայություններն իրանց հուժկու ալիքներով
զարնվել են Ղարաբաղի լեռներին և չկարողանալով սրբել տա-
նել լեռնային ամրակուռ կենցաղը, ինչպես արել եյին համարյա-
ամեն տեղ, ստեղծել են այնպիսի նոր զրություն, վոր լեռնցիու-
թյունն, իր սեփական ինքնապահպանման համար, դիմում եր
ձևափոխությունների, և կարկատանների միջոցով դարձյալ պի-
տանի պահում հինը, հիմնականը: Ահա այդ հիմնականի վրա կար-
կատած կյանքն ե, վոր մեղ համար կազմում ե «ինդրո առարկա»:
Բերենք, ուրեմն, նախ հիմնականը, ապա տեսնենք նրա կար-
կատնածը:

Հիմնականը շատ պարզ հիմքերի վրա յէ զրված և ինքն ել
զրեթե միանդամայն զերծ ե բարդություններից: Հասարակական
յերկու շերտ, մեկը ներքեռում, մեծը, ծավալունը, աշխատողը,
մյուսը՝ նրա վրա նստած, փոքրաթիվ և խժող: Սյսքան անար-
վեստ — նախնական և լեռնային հանրակեցությունը: Մի հատիկ

անտեսություն ե — գյուղական և յերկու հատ դասակարգ: Վերե-
վինը, վոր վայելողն ե, իրան անվանում ե «ազատ», իսկ ինչ
եր այն, վոր նրա տակն եր գտնվում: — նա այն եր, ինչ կազ-
մում եր «ազատ»-ի հակառակը — «անազատ»: Մեր հին գրակա-
նության մեջ այս յերկու բառերով ե վորոշվում հասարակական
այն կարգը, վորի վրա կառուցվում եր պետությունը՝ Այս այն
կարգն եր, վոր ուներ իր հատուկ հայկական անունը — նախա-
րարություն, բայց հատուկ հայկական հիմնարկություն չեր, այլ
ամեն տեղ, թե Արևմուտքում, թե Արևելքում տարածված մի
տնտեսական գրություն, վոր միաժամանակ եր և քաղաքական
գրություն և կոչվում եր ավատականություն կամ ֆեոդալիզմ: Նրա հիմքը գյուղացիությունն եր, վոր ճորտ եր, այսինքն՝ ամ-
րացված հողին, և վոր պատկանում եր նախարարին կամ իշխանին:

Յերկրի տերը նախարարն եր: Նա յեր կառավարում ինքնիշ-
խան կերպով, ստանում եր հարկեր ու տուրքեր, դատաստան եր
կարում, պատիժներ նշանակում, ուներ իր սեփական զորքը, վոր
հաճախ պատերազմի յեր տանում իր հարեւան նախարարների
գեմ՝ մանը ու խոշոր սահմանային վեճեր զենքի ուժով լուծելու
կամ հաճախ հողային հափշտակություններ կատարելու համար:
Նախարարությունը միակերպ մի իշխանություն չեր, այլ ուներ
ստախանակորումներ: Կային ամենապլիսալորները, գլխավորները,
ավագները, կրտսերները: Յեթե մի ամրող մեծ զավառ կամ նա-
հանգ պատկանում եր մի նախարարի, այս չեր նշանակում, թե
նա անձամբ և միայնակ կառավարում և շահագործում եր իր այդ
ընդարձակ յերկիրը: Լինելով ծայրագույն սեփականատեր, նա
թույլ եր տալիս, վոր իր հետ և իր ձեռքի տակ գտնվեն և ա-
վելի մանը կալվածատերեր, վորոնք իրանց դնում եյին նրա
պաշտպանության տակ, մատուցանում եյին նրան, իրքեւ ավա-
տապետի, ծառայություններ, հարկավոր յեղած դեպքերում իրանց
զորքն եյին դնում նրա արամագրության տակ և այլն: Այսպի-
սով բազմանում եր հողատերերի, աղնվականների կամ, վոր միե-
նույն ե, ձբիակերների դասը: Նրա թվական կազմի մասին մի
աղոտ հասկացողություն տալու համար կասենք, վոր արարացիները
Հայաստանին տիրելուց հետո, կամենալով թուլացնել նախարա-
րական գասը, 8-րդ դարի առաջին կեսին նախիջևանի և Խրամի
յեկեղեցիներում այրեցին 1200 հոգի¹), սուանց դրանով կարենալու
սպառել հայ աղնվականությունը:

1) Հ. Դ. Ալիշանը — «Յուշիկը Հայունսեաց Հայոց», Վենեա. 1870, Բ. եր. 144:

Դիմավոր նախարարը, սակայն, ինքն ել գլուխ ուներ — թափափորը, վորին նա պարտավոր եր ծառայել այնպես, ինչպես կրտսեր նախարարները ծառայում եյին իրան։ Ստացվում եր միենույն պատկերը, ինչ Սարարոնը տեսել եր Աղվանից յերկրում — մասնավոր թագավորներ մի ընդհանուր թագավորի ձեռքի տակ։ Հայաստանում դրությունը չեր փոխվում այն հանգամանքից, վոր մասնավոր թագավորները նախարար անունն ունեյին։ Թագավորն ել նրանց նման մի նախարար եր, միայն գաներեց։

Գյուղացի ազգաբնակությունը խմբված եր լինում մեծ մասամբ իր կալվածատիրոջ ամրոցի շուրջը։ Հողատիրական դղյակ, մեծ թե փոքր, առաջնակարգ թե յերկրորդական, ամեն ինչ եր ճորտ գյուղացու համար, մանավանդ, այնպիսի տեղերում, ուր չկային քաղաքներ, ինչպես եր, որինակ՝ Դարաբաղը։ Այդտեղ եյին լուծվում վեճերը, անային տնտեսության և նրա արտադրությունների փոխանակության հարցերը, այդտեղ եյին կատարվում հանրային հանդեսները, մըցությունները՝ յերգի, խաղի, արվեստի, ըմբշամարտության ասպարեզներում։ Ժողովուրդն անգրագետ եր, աշխատանքին լծված անասուն։ Յեվ իշխանական ամրոցն եր, վոր դառնում եր յերկրի նյութական և մտավոր մշակույթի շահերի ներկայացուցիչ։ Հին Հայաստանի լուսավորությունը, շինարարական արվեստը և առհասարակ մշակութային առաջադիմությունն ուժեղ մղումներ եյին ստանում այն մի քանի նշանավոր նախարարական տոհմօրից, վորոնք հովատային տնտեսության տեսքը եյին և հարուստ։ Մինչդեռ նրանց ապարանքներում ծաղկած եր բարձր արիստոկրատական փափկակեցություն։ Հայաստանում դեռ կային այնպիսի կորած լեռնային անկյուններ, ուր միսր հուծ եյին ուտում։ Նախարարություններից շատերը, առավելապես այնպիսիները, վորոնք լեռնարնակ եյին, հետեւարար պատկանում եյին արոտային տնտեսության, միայն իրանց անուններն են թողել պատմության մեջ և վոչինչ ծառայություն չունին արած ավատական Հայաստանի մտավոր և մշակութային առաջարկության։ Դրանք գլխավորապես խաշնարած ցեղեր եյին, վորոնք, հավանորեն, վոչնչով չեյին զանազանվում այժմյան քուրդ ցեղապետներից։

Այս կարգին չեր պատկանում էեռնային Դարաբաղը։ Արդեն ասացինք, վոր Սյունիքը վաղ ժամանակներից մտավ շատ զործուն քաղաքական-մշակութային շարժման հունու իսկ Արցախի համար դեռ պիտի պատրաստվեր այսպիսի մի առաջընթացության հնարավորությունը։ Այս պատրաստությունն իրացնողն եյին այն

մեծամեծ գեղքերը, վորոնք կատարվեցին դաշտային Դարաբաղում։ Այստեղ ել, ինչպես յեղել եր և Հայաստանում, վոչնչացավ թագավորական իշխանությունը, այստեղ ել, ինչպես և այնտեղ, ավատական հողատերերի դասն եր, վոր վարում եր յերկրի կառավարությունը, բայց հենց այն ինքնակալության մեջ ել գրում եր իր թուլությունը, շնորհիվ այն ներքին կոփակերի, վորոնք մղվում եյին ավատական ուժեղ տոհմերի մեջ ավատական գահերեցության համար, վոր նշանակուժ եր անթաղ թագավորություն։ Յեվ այս բոլորը վերջանում եր արտարական նվաճումով, վոր մահմեղականացնում եր ամբողջ դաշտային Աղվանքը, այնպես, վոր հայացած Աղվանքը մնում եր թառած արագ ապազգայնացող և իր ընդհանուր ցեղական անունն անգամ մոռացող դաշտերի մեջ, Արցախի և նրա հարևան Ուտիք նահանգի լեռներում։ Այս ժամանակից և ահա, վոր արցախական անտառների մթության մեջ սկսում են նկատելի դառնալ շարժումներ, վորոնց լծված են, ինչպես ամենուրեք, ավատական տերերը, դաշտից արգեն բոլորովին կտրված և այս լեռնային բարձրությունների մշտական բնակիչ գարձած հայախոս աղվանները։

Վերին աստիճանի հետաքրքրական յերեսույթ ե, վոր կեռնային Դարաբաղի յերկու քույրաթիվ մասերում յեղած շարժումների մեջ կարելի յե գտնել զուգավորումներ, վորոնք կարծես ներշնչվում են իրարից անկախ կերպով, բայց ունենալով, իբրև ազբյուր, միատեսակ անհրաժեշտությունը, այն, ինչ մենք անգանեցինք հիմնական ձեափոխություն, կարկատան հիմնականի վրա։ Ապացույց՝ յերկու մասերում գրեթե միաժամանակ գոյություն ստացած նորատեսիլ իշխանությունները — զյուդական բազավորներ։

Հայտնի յե, վոր արաբական պետության անկման շրջանում կազմվեցին զանազան կողմերում գավառական թագավորություններ, վորոնցից մի քանիաը շատ ուժեղացան և ընդարձակվեցին։ Դավառական թագավորությունների փորձեր եյին Հայաստանում Շիրակը և Վասպուրականը, վորոնք թեև չկարողացան ընդարձակվել մինչև հանուր Հայաստանյան իրողություն, բայց դոնե գոյության իրավունք եյին պահպանում, ունենալով այնպիսի տնտեսապես ուժեղ կովաններ, ինչպես եյին Անի, Կարս և Վան քաղաքները։ Բայց ահա նրանց որինակին եյին հետեւում և լեռնաստանները — Լոռին, Արցախը, Սյունիքը։ Այստեղ միջավայրն արգեն բոլորովին ուրիշ և — զուտ զյուղական, և գյուղում նստող թագավորն արգեն իր արտաքին տեսքով, իր բնակարանի

նիստ ու կացի հանգամանքներով վոչինչ նմանություն չուներ Շիրակի թագալորին, մինչև անգամ այն ժամանակ, յերբ այս վերջինի ձեռքում մնացել եր միայն Անի քաղաքը: Վերջացել եր Աղվանից թագավորությունը լայնարձակ, հարուստ, արդավանդ դաշտերում ու նրանց հոչակավոր մայրաքաղաքի մեջ, այժմ վերստին կազմվում եր նույնպես Աղվանից անունը կրող մի թագավորություն Հյուսիսային Ղարաբաղի լեռներում, և յեթե ուղենանք դանել նրա աթոռանիստը, պիտի վորոնենք անտառապատճենների մի կիրճում կորած փոքրիկ ու աղքատ գյուղը, Տումի անունով, ուր այսոր ժողովրդական ավանդությունը ցույց է տալիս «թագավորի պալատը», աղքատիկ մի քանի փլատակներ, «թագավորի գերեզմանը», մի հասարակ քար, և անգամ «թագավորի աղբյուրը»¹⁾: Ահա ինչպես եր լեռնային տնտեսության վլուխ բերած կարկատանը, այդ գյուղացի թագավորը, վոր յերեան եր գալիս լեռներում իրքն ապագայի կարկատուն ավատապետության անվանադիր: Այժմ դեռ գոյություն պահպանում եյին հին անունները—նախարար, իշխան: Բայց դրանք ել պիտի անհայտանային, իրանց տեղը տալով այս նոր անվան—գյուղական թագավոր, վորի մեջ, սակայն, հայերեն «թագավոր» բառը փոխարինված կլիներ ոտար, բայց համանիշ մի բառով—«Մելիք»: Լոռու, Մածնարերդի, Փառիսոսի, Աղվանից, Բաղաց գյուղական թագավորներն ապագա մելիքներն եյին:

Այս մի կարկատան եր, վոր հարդարվեց մի քանի դարի ընթացքում: Թեև թագավոր անունը սովորական գործածությունից դուրս յեկավ, բայց շարունակեց ապրել իրքն տիտղոս, մանավանդ 12—13 դարերում, յերբ առանձնապեսուժեղացավ Արցախի ավատական դասը Խաչեն գավառում և հոչակվում եր մինչ այն աստիճան, վոր այս գավառն իր անունով մոռացնել եր տալիս ամբողջ նահանգի անունը (Արցախ): Այդ այն ժամանակ եր, յերբ կազմվում եր Հյուսիսային Հայաստանի իշխանական տոհմերի ուժեղ դաշնակցությունը լոռու հոչակավոր Զաքարե սպասարի գլխավորությամբ, մի դաշնակցություն, վոր միացնում եր իր ուժերը վրաց բանակի հետ և միասին հաղթական պատերազմներ եր մղում սելջուկների դեմ: Այս արշավանքները հարստություններ մտցրին Խաչենի գավառը, ուստի այստեղ ել մտավ այն մեծ մշակութային շարժումը, վոր հատուկ եր Զաքարե ըսպասարի դարին: Այս շարժման գեղեցիկ հուշարձաններից մեկն

եր Գանձասարի վանքը, վորի շինությունն ավարտվեց 1238 թ. և շինողը Խաչենի խոշոր ավատապետներից մեկը, Զալալ-Դոլտ Հասնի, Զաքարե սպասարի քեռորդին, անվանում եր իրան հյուսիսային պատի յերկար արձանագրության մեջ «Բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի թագաւոր»²⁾:

Ցեթե մի ակնարկ զցենք այդ ժամանակների Հարավային Ղարաբաղի վրա, այնտեղ ել կտեսնենք մի շատ բարզավաճ և «ընակավոր ինքնակալ» ավատականություն: Այստեղ ծագում է մի շատ կարևոր հարց.—հողային հարաբերությունների այս Սյունիք-արցախական կովանը, լինելով հիմք յերկրի ամբողջ սոցիալական-հանրային կառուցվածքի, ուներ այն բոլոր հանգամանքները, վորոնք հատուկ եյին ընդհանուր հայ և առհասարակ համաշխարհային ավատականության, թե այստեղ զոյստյուն ունեյին տեղային առանձնահատուկ հապավումներ և հավելումներ: Զափազանց կարևոր ե, մանավանդ, վորոշել գյուղական ազգաբնակության դրությունը—ճռտ եր նա, թե վոչ:

Դիմելով այս հարցերին, մենք մեր ձեռքի մեջ չենք տեսնուայնպիս տվյալներ, վորոնք հիմք տային կարծելու, թե յերկու մասնավոր լեռնագավառները կարող եյին փոքրի շատե աչքի ընկնող բացառություն կազմել այն ավատական իրավակարգի մեջ, վորով նրանք շրջապատված եյին ամեն կողմից: Այդպիսի յերեվույթ չի նկատվում յերկրի կյանքի մեջ ամենափոքր չափով իսկ: Ամենազդվագոր հանգամանքն այստեղ ել սաստիկ տիրապետող ե—ավատատեր կամ «ուտող», դասերի—աշխարհական և հոգևորական—բազմամարդությունն ու սերա շահակցությունը: Իսկ վորքան շատ են մի վորեւ տեղում ուտողները, այնտեղ, ընականարար, շատ ցանցապատված և ծանրաբեռնված պիտի լինեն աշխատողները: Բավական ե վերցնել հենց միայն միջնադարյան վանքերը, այս վիթխարի ձրիակերանոցները, վորոնք իրանց հազար հազարավոր բերաններով խժուամ եյին որ ու գիշեր ժողովրդի անտեսությունը: Սյունիքի վանքերից ամենառչակավորը, Տաթեր, հարկ եր ստանում 677 գյուղերից²⁾: Բացի գրանից, այդ գյուղացիներից շատերը գլխովին վանքապատկան եյին, իրքն աշխարհական ավատատերերի կողմից հոգու փրկության համար արված պարզեներ: Պակաս հարուստ չեյին կալվածներով և Արցախի հոգեորական ֆեոդալները: Այդտեղի վանքապատկան

¹⁾ Անդ, յեր. 173:

²⁾ Սահմաննոս Օքքելեան—«Պատմութիւն Նահանգին» Սիսական», Թիֆլիս, 1911, յեր. 497—523.

կալվածները մենք մանրամասն նկարագրել ենք մի այլ աշխատության մեջ¹⁾:

Ի՞նչպիսի տերեր եյին Սյունիքի ավատատերերը: Ահա նրանցից մեկը, Զելինեւք իշխանը, տալիս եր իր կալվածատիրական իրավունքները Տաթևի Խողոմն յեպիսկոպոսին և զրում եր կալվածագրի մեջ. «Արդ իշխան էք զուք Տէր Սողոմոն՝ ուտել և ժառանգել զայդ շէնդ զԱրուքու իւը սահմանօքդ բոլորովիմբ, ծառոք և այգեօք, գետով և ցամաքով, արտավարօք և մարզօք, ջրաղացովք և պարտիզովք, եկեղեցնեւ և այլ շինուածովք, դու հոգեոր տէր Սողոմոն՝ և ով որ յաջորդի ի տեղիդ ձեր ի յաթոռդ և սուրբ խաչիդ պաշտոնեայքդ մինչեւ հաւիտեանս ժամանակաց²⁾: Բնորոշ Փեղալական և այս ուտել բառը, վոր, ինչպես յերեւմ ե, իրավագիտական վորոշ տերմին եր, ինչպես նա զուգրում եր «վայելել» բառի հետ նույն Սողոմոնին արված մի այլ կալվածագրի մեջ.— «Ետու ես Թուրքիդուխտ զայդ շէնդ լերամբք և դաշտով, մարզով և արտով, գետով, ջրով և ցամաքով, ծառովք և տնկովք ի սուրբ խաչդ և ի Տէր Սողոմոն, Սիւնեաց եպիսկոպոս: Եւ զիմ հոգիս ի քեզ յանձնարարի, արդ իշխան ես զու Տէր Սողոմոն և որ յաջորդէ ոք ի սրբութեանց յաթոռդ Սիւնեաց եպիսկոպոսունք, ուտել և վայելել զայդ շէնդ բոլորովիմբ իւը սահմանօքդ մինչեւ յաւիտեանս ժամանակաց³⁾:»:

Մենք տեսնում ենք այս յերկու վավերագրերից, վոր գյուղում կատարելապես վոչինչ չեր մնում, վոր կեր չարվեր կալվածատիրոջ: Յեկ կարմզ եր միայն գյուղի մարդը չգտնվել այդ կալվածատիրական բոլորակերության մեջ: Ընդհակառակն, այդ իսկ գյուղացին եր, վոր իրանով ուտելի ու վայելելի յեր գարձնում և լեռը և դաշտը, և արտն ու այդին: Իսկ այսպես լինել նա կարող եր, միմիայն գտնվելով ճորտային գրության մեջ, այսինքն՝ անազատ, ամրացված իր հողին և այդ հողի հետ մեկեց մյուսին վաճառվող, գրավ գրվող կամ շատ հաճախ մի տիրոջից մյուսին ընծայվող:

Հայոց հին գրականության մեջ շատ քողարկված և մթացրած և յեղել ճորտության դրությունը, և այս ասիթ եր տվել գիտնական իրավաբան վահան վարդապետ Բաստամյանին հայտարարելու, թե Հայաստանում գոյություն չի ունեցել ճորտությունը⁴⁾:

1) «Պատմ. Դարաբաղի Հայ. Թեմ. Հոգ. Գորոցի», Թիֆ. 1915.

2) Ստեփանոս Արքելեան, յեր. 217.

3) Անդ. յեր. 219.

4) «Քատառանազիբք Միիթարայ Գօշի», Վաղարշապատ, 1880. յեր. 316.

Առաջին անգամ մենք եյինք, վոր հերքեցինք այդ հայտարարությունը, Շիրակի արձանագրություններից մի քանիսի միջոցով ապացուցելով, վոր Հայաստանում յեղել և ճորտություն¹⁾: Այսուհետեւ յեղած մի շարք հետազոտություններ, այլև կասկածի տեղ շիռողիցին, վոր Հայաստանը բոլորովին բացառություն չի յեղել կազմելիս ճորտատիրական գրության վերաբերմամբ: Ապացուցում են այս գյուղացիական մի շարք շարժումներ և ապստամբություններ, վորոնք տեղի ունեցան 10-րդ դարում և վորոնցից մի քանիսը բաժին են ընկնում Սյունիքին:

Ճորտ գյուղացին կարող եր հողարաժիններ ստանալ ժառանգությամբ կամ իր սեփական փողով գնելու միջոցով, կարող եր այդի տնկել, բայց այդ բոլորի սեփականատերը նա ինքը չեր, այլ կալվածատերը, առանց վորի համաձայնության նա չեր կարող կարգադրություններ անել իր այդ կալվածների վերաբերմամբ: Հիմնվելով իրենց այս սեփականատիրական իրավունքի վրա, կալվածատերերը շատ անգամ վոտնակուս եյին անում ճորտերի իրավունքները, խլում եյին նրանց ժառանգական հողերը և տերի իրավունք այդ հողերից: Այդպես վարվեց Տաթևի առաջնորդ Հովհաննես յեպիսկոպոսը Ցուրա քար անունով գյուղի հետ, վորի բնակիչները համբերությունից զուրս գալով, մի գիշեր հարձակվեցին վանքի վրա՝ յեպիսկոպոսին ձեռք գցելու և փախցնելու համար, բայց չգտնելով նրան վանքում, սպանեցին մի քանի ծերունի վարդապետների, կողոպտեցին վանքը, տարանույնիսկ մեռոնի արծաթե ամանը և մեռնն ել թափեցին ժայռից: Հովհաննես յեպիսկոպոսը վերապառնալով, գիմեց Եշիանության, վոր և, ինարկե, խկույն ձեռք առավ ամենակարուկ միջոցներ՝ կարգածատեր վանքի իրավունքները վերականգնելու և նրա ըմբռուս ճորտերին զաղելու համար: Յայց ցուրեցիներն այդպես շուտ ընկճացեցին և նրանց ըմբռուսությունն ստացավ տեսկան կերպարանք: Յեկ Տաթևի վեղարագոր Ֆեղալների ուտելու և վայելիկու անհագ ախորժակը միայն ցուրեցիները չեյին կտրում: Նման շարժումներ տեղի եյին ունենում և հարեան Տամալեկ և Արքալազաշա գյուղերում նույնիսկ ավելի համառ, կատալի կերպով: Հովհաննես յեպիսկոպոսի ջանքերն ապարդյուն յեղան, իսկ նրա հաջորդը Հակոբ յեպիսկոպոսը կարողացավ միայն այն մեկը հարկադրեց Ամբատ իշխանին և նրա Սովիա կնոջը գնել տառմակեցիների ժառանգական հողերը 1000 դրամով և տալ վան-

1) «Անցյալի հարցերից» («Առողջապահություն» 1905, № 10).

քին: Բայց բանը սրանով չվերջացավ: Դյուղացիները գժզոհ մնուցին այս առ ու ծախսով և սպանեցին Հակոր յեպիսկոպոսին: Վեճը շարունակվեց տասնյակ տարիներով¹⁾:

Միայն այս շարժումները բավական են ապացուցելու, վոր լեռնային Սյունիքի գյուղացիությունը մի հարազատ բեկոր եր այն ճորատիրության, վոր տանջվում եր համաշխարհային ավատատիրության ճանկերի մեջ և իր գառն դրությունը լուսավորում եր հուսահատական ընդվզումներով, ապստամբություններով, ամբողջ գյուղացիական պատերազմներով:

Ի՞նչ վերաբերվում է Հյուսիսային Հարարազին, մենք կրավականանք մի բնորոշ ցուցմունքով: «Դատաստանագիրք հայոց» յեղակի և անզուգական աշխատության հեղինակ Մխիթար Գոշը, ծնված Գանձակ քաղաքում, արդյունք եր այն ծաղկած ավատական փեղբացիայի, վոր, ինչպես ասացինք, կազմում եր Զաքարի սպասարկի դարը: Այդ որենսգիրքը Մխիթարը զբել և Աղվանից յերկրում, Գանձակի և Արցախի շրջանում, Աղվանից Ստեփանոս կարողիկովի խնդիրքով և հորդորներով: Պարզ ե, ուրիշն, վոր այդ որենսգրության մեջ արձագանք պիտի գտնելին և տեղային իրավական հասկացողություններն ու հիմնարկությունները: Յեթ ահա ինչ է տառեմ «Դատաստանագրքի» հոդվածներից մեկը.

«Ազատ յԱրարչէն եղե մարզկային բնութիւն, այլ ծառայել տէրանց յաղագս պիտօյից եղե հողոյ և ջրոյ և զայս պատշաճ կարծեմ դտատասան—զիթողեալ զաէրունիսն, ազատ է ուր և կամնացի կար Ապա թե այսմ ոչ նել: ոք ի տէրանցն և բռնադատէ զինացեալոն տնդիրէն դաւանե զինի մահուան հորն աղաս են որդիք ծնեալք այլուր և ոչ անդք²⁾:»

Այս հոդվածի վերնագիրն եւ՝ «Յաղագս դատաստանաց շինականաց»: Ասել ե, թե ամբողջ գյուղացիությունը յենթարկվում եր այս որենքին, վոր զուտ և անխոսոն ճորտացին որենք եւ՝ — գյուղացին ամրացված եր հողին, կարող եր գնալ մի ուրիշ տեղ միայն իր կարվածատիրոջ թույլավությամբ, հակառակ դեպքում նա վերադարձվում եր իր տիրոջ մոտ բռնությամ: Բայց յեթե ոտար տեղ ապրած ժամանակ ունեցել և վորդիներ, սրանք, վերադարձալով իրանց հոր հետ, ճորտ եյին դառնում, բայց նրա մահց հետո ազատվում եյին:

Այս աղբյուրից ենք մենք իմանում, թե ինչպես եյին հոդա-

X 1) Հ. Զորյան - «Ֆեռզական Հայաստանի գյուղացիական շարժումները»
2) «Մխիթարայ Գոշի Դատաստանագրքը Հայոց», Վաղարշապատ, 1880
յերես 320:

տերերն ուտում, ըստ տաթեյան կալվածագրի, իրանց գյուղերը: Ճորտ գյուղացին իր տիրոջ վերաբերմամբ կատարում եր պարտավորություններ, վորոնց որենսգրությունը կատարել եր տալիս հարկեր ու տուրքեր տալու և անձնական պարտադիր ծառայություններ անելու միջոցով: Հարկերի մեջ առաջին տեղն, անշուշտ, բռնում եր գլխահարկը: Սակայն Մխիթար Գոշը, իրեն քրիստոնյա հոգեբորական և յեկեղեցական հեղինակություններից բարոյախոսություն քաղող, զիխահարկից ազատում եր քրիստոնյա գյուղացիներին, իսկ վոչ-քրիստոնյաներին, վորոնք նվաճված եյին զինքի ուժով, պարտավորեցնում եր գլխահարկ տալ այն իշխանին, վորի հողը մշակում եյին: Բայց այս անկասկած մի փորձ եր՝ պատասխանելու մահմեղական որենսգիրներին՝ նրանց զրած հարկային սխտումի հակառակ գործադրությամբ: Ինչպես հայտնի յե, մահմեղական որենսգիրները զիխահարկից ազատել եյին մահմեղականներին և զենքով նվաճված վոչ-մահմեղականներին յենթարկել եյին գլխահարկի: Այսպես վոր Մխիթար Գոշի այս վորոշումն իրական նշանակություն չի ունեցել, և զիխահարկը յեղել ե և մնացել և առաջին պայման՝ ճորտային հարաբերությունների գեպի իրանց տերերը:

Այսուհետև գալիս եյին հողագործական տուրքերը: Յեթե կալվածատիրական հողը ջրարրի յեր, նրա բերքից ստացվում եր հնդյակ, այսինքն՝ հինգ մասից մեկը, իսկ յեթե անջրդի յեր, նրանից վերցվում եր տասանորդ, այսինքն՝ տասը մասից մեկը: Տասանորդի չափն առհասարակ ընդհանուր եր և մրգարուծության ու խաշնարածության մեջ: Տասը գառներից մեկը հողատիրոջն եր: Տուրք չեր վերցվում բանվոր անասուններից — յեզներից, ձիերից, ջորիներից, եշերից, վորովնետե, ինչպես բացատրում եր Գոշը, զրանց աշխատանքով ե, վոր իրացվում և հնդյակը: Վորոշ բաժին հանվում եր և ճորտային կաթնատնաեսությունից, որին կովի յուղից: Իսկ անձնական ծառայությունը կամ կոռ ու բեկարը Գոշը վորոշում և այն, վոր յուրաքանչյուր ճորտ շաբաթվա Շ որից մեկը պիտք ե տա կալվածատիրոջը, աշխատանքներ կատարե նրա համար:

Դնելով իր գրքի մեջ ճորտային պարտավորություններից այսքանը, Մխիթար Գոշը, արդարության գործ կատարած լինելու համար, պարտավորություններ և դնում և ճորտատերերի վրա: Հորդորում ե նրանց մեղք և մարդասիրաբար վարվել իրանց շինականների հետ, խիստ պատիժներ չտալ նրանց, չափից գուրս շատ չաշխատեցնել, շատ չտուգանել, մինչեւ իսկ ճորտի սպանու-

թյան համար նշանակում եր նույն պատիժը, ինչ նշանակված եր աղատ մարդու սպանության համար և այլն¹⁾:

Այս բոլորը գուցե և պատիվ եր բերում հայ առաջին որենսողին, բայց այս բոլորը ուրիշ բան չեր, յեթե վոչ, ըստ ժողովրդական արտահայտություն, «գայլի զլիքին ավետարան»: Անթույլատրելի միամտություն կլինի կարծել թե ճորտ ասված արարածի ամբողջ զրությունն եւ դրված այս պարտավորությունների մեջ: Ճորտային պարտավորություններն աշխարհի վոչ մի կողմում չեն ցուցակադրված ամբողջովին և վոչ մի լիակատար ցուցակ անհնարին եւ, քանի վոր ճորտային պարտավորությունները բառիս բուն իմաստով անթիվ են: Թրանսիական մեծ հեղափոխության ժամանակ, թեև ճորտությունը կարելի յեր համարել վերացած, բայց նրանից մնացած սենյորալ (ավատապետական) պարտավորությունների, այսինքն՝ այն պարտավորությունների, վոր գյուղացիներն ազատվելուց հետո ել կատարում ելին իրանց տերերի վերաբերմամբ, մասնակի ցուցակագրումը ցույց տվեց, վոր նըանք շատ տեղերում հասնում ելին թվով 200-ի Մի կողմից իրավագուրկ մի ահազին ամրոխ, մյուս կողմից՝ ույժ, իշխանություն, քմահաճույք շահագործման միջոցներ ավելացնելու, անհագություն զարգացնելու մեջ — ահա ինչպես եր գոյանում այդ անհուն բազմազանությունը: Ճորտը, լինելով տնտեսապես գերի, գերի յեր և իր ամբողջ հոգով ու մարմնով, իր բոլոր մասնավոր սրբություններով, իր ընտանեկան պատվով անգամ:

Հայ նախարարական ճորտատիրության ամրող ջական տեսարանն իր մեջ պահել եր քրդական ճորտատիրությունը, վոր գոյություն ունեցավ. քանի վոր գոյություն ուներ անբախտ թյուրքահայ գյուղացիությունը: Քուրդ ազնվականությունն եր, վոր ժառանգեց հայ նախարարական ավատականությունը: Այս պրոցեսը հեշտացնող դարձավ վերը մեր շեշտած այն հանգամանքը, վոր լիոնաբնակ հայ նախարարներն իրանց տնտեսական կենցաղով նույնն ելին, ինչ 19-րդ դարի քուրդ ցեղակերպությունը: Ամենքին հայտնի իրողություն եւ, վոր քուրդ ցեղակերպ մի քանիս իրանք ելին խոստովանում, թե հայկական ծագում ունեն: Հայերի մասսայական քրդացման զեսլը հայտնի յեւ և հայ պատմագիրներից մեկին (Թովմա Մեծոփեցուն), վոր ապրում եր 15-րդ դարում: Հայ նախարարական կալվածների փոխան-

1) Խաչիկ Սամվելյան — «Միտթար Գոշի զատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրավունքը», Վիեննա, 1911, յեր. 299 — 303:

ցումը քրդերին կատարվում եր և ինսամիացման միջոցով: Այսպիսում, Շիրակի Բագրատունիների անկումից հետո, ամբողջ այդ ճորտատիրական զավառն անցնում եր քուրդ Շեղգալյան տոհմին, վորի անդամներից մեկն ամուսնացած եր Բագրատունյաց տոհմի տեղային ճյուղին պատկանող մի աղջկա հետ: Բայց զլիքավոր փաստն, ինարկե, այն եր, վոր քուրդ ցեղապետները, հենված զենքի ույժի վրա, բռնում ելին հայ նախարարների տեղերը, վորոնք, սկսած 11-րդ դարից, կամ մասսայուն հեռանում էին յերկրից, կամ վոչնչանում:

Այսպիսով քուրդ ազնվականությունը դառնում եր տեր հայ ճորտ գյուղացիության, շահագործելով նրան հայ նախարարական յեղանակով, վոր, անշուշտ, խորթ չեր նրան իրու շահակից և հարազատ դասի:

Արդ՝ ուսումնասիրելով քուրդ ճորտատիրության այն փաստերը, վորոնք դեռ մնացել ելին 19-րդ դարում, մենք կարող կը մինենք վերականգնել հայ նախարարական ճորտատիրության ընդհանուր պատկերը¹⁾: Յեվ մենք այստեղ ել տեսնում ենք սենյորական պարտավորությունների մեծ բազմազանություն, վոր փոփոխություններ ցուցադրում ե ըստ տեղերի տնտեսական հանգամանքների: Որինակ՝ Շատախի (Վանի շրջան) լիոնային մի դյուդ պարտավոր եր տալ իր քուրդ տիրոջը 40 հազար ընկույզ տարեկան, մենչդեռ այդպիսի տուրք մի ուրիշ տեղ չկար: Պատճառն այն եր, վոր թեև ընկույզներ ամեն տեղ կային, բայց այդ գյուղի ընկույզները հոչակ ունեյին իրենց գերազանց համակություններով:

Զեր գյուղական տնտեսության և վոչ մի ճյուղ, ուր ճորտատերը չունենար իր առյուծի բաժինը: Մինչև անգամ գյուղացու շինած գլազ, շերեփ, ցախավել մտնում ելին որինականացրած տարեկան տուրքերի ցանկի մեջ: Իսկ մարդը — մարդը վաճառվում եր, քշվում եր պատերազմի, ընծայվում եր իրու հարսի ոժիու: Մարդը պարտավոր եր առներին և վորոշ դեպքերում (ծնունդ, հարսանիք, մահ) ընծաներ տանել իր տիրոջ: Մարդն իրավունք չուներ ամուսնություններ կատարել, աղջիկ տալ հարսնակությունների մասնական ծառայություններ տիրոջ համաձայնության: Իսկ անձնական ծառայություններ տիրոջ տանը և դաշտում կատարում եր ճորտը վոչ միայն անհատականորեն, այլ և իր ընտանիքի հետ միասին:

1) Այս ուսումնասիրությունը յիս տվել եմ իմ անտիպ աշխատության մեջ, վորի վերնազիրն եւ «ՀՀԿ դար. — հայ նախարարական շեղապետներ և շարժումներ».

Ահա այս եր, շատ համառոտ գծերով, հայ ընդհանուր նախարարական ճորտատիրությունը, և Լեռնային Ղարաբաղն իր նախարարական շրջանում, ինչպես ասացինք, վոչ մի բացառություն չեր կազմում:

4.

Բայց յեկալ այդ նախարարական շրջանի վերջը՝ Վերածնված Վրաստանը, նրա հետևանքով ծաղկած Զաքարյան հայ միջնադարը և սրան ել իրեն արդյունք հանդիսացած Խաչենցի ավատապետների ազգակցական ֆեդերացիան — այս բոլորը կազմում եր մի ժամանակ այն զարհուրելի աշխարհաքանդության, վորի սկ հրաբուխային հոսանքները հանում եր իր ներսէրից Միջին Ասիան՝ մինչև Միջերկրական ծովը՝ քար քարի վրա չըթողնելու համար:

Առաջավորները և հետագա յեկողներին որինակ տվողները թաթարներն եյին. Զաքարե սպասարկը չտեսավ նրանց: Նա մեռավ 1212 թվին, իսկ այդ ժամանակ թաթարական մի բանակ նոր եր յերկացել Սևանի լճի ափին: Աշխարհաքանդությունը, տարածվելով Իրանի ամրող սարահարթի վրայով, մտել եր Հայաստան արևելյան սահմաններից: Արդեն սկսվել եր մոնղոլական դարը, վորի բնորոշման համար հայոց լեզուն այնուհետև ընդգըրս կում եր «ի դառն և ի նեղ ժամանակի» արտահայտությունը, վոր և կրկնվում եր անթիվ արձանագրությունների և հիշատակարանների մեջ, դարից դար: Բայց Զաքարյան մշակութային դարը մի հարվածով չեր սպանվում: Նա շարունակեց ապրել և 13-րդ դարում, թողնելով այնպիսի կոթողներ, ինչպես եյին Հախալատի զանգակատունը, Գանձասարի վանքը: Մինչև անդամ Հյուսիսային Ղարաբաղի Դիզակ գավառի լեռներում շինված փոքրիկ, բայց գեղեցիկ, անխական վոճը կրող Գատիչի վանքն իր արձանագրության մեջ, Հախալատի զանգակատան նման, ասում եր, թե ինքը շինվել ե «ի դառն և նեղ ժամանակիս՝ որ ազգն նետողաց (թաթար) զբաղում գտառու աւերեաց»¹⁾:

Այս նշան եր, վոր յերկիրն իր մեջ դեռ ույժ ուներ դիմանաւու մոնղոլական աշխարհաքանդության: Բայց այդ ույժն սպառվեց, վորովհետև քանդման շրջանը չափազանց յերկարացավ, ձգվելով յերեք դար և ավելի: Մոնղոլների դարն անցավ, բայց միջին ասիական քառորդ դադար չառավ Արևմտյան Ասիայում. յեկան

Անմկրիմուր, թյուրքմեն ցեղեր և այլ խառնիճաղանձ որդուներ ու տերեր, վորոնք չորացրին յերկրի և ժողովուրդների կենսական հյութերը: Միայն 16-րդ դարի սկիզբը կարելի յե համարել այնպիսի մի ժամանակ, յերբ Արևմտյան Ասիայում կանգ և առնում նվաճողական քառորդ և սկսվում յերկու մեծ պետությունների — Պարսկաստանի և Թյուրքիայի, իրեւ սահմանակից հարեւնների կազմակերպման ծանր շրջանը, վոր թեև դարձյալ քանդումների շրջան եր միջին ասիական վորով, բայց և այնպիս, դրանք վորոշ սկզբունքներով, վորոշ հիմքերի վրա կառուցվող բռնապետական կազմակերպություններ եյին:

Հայաստանն այս յերեք դարյան անխնա աշխարհաքանդությունների մեջ ըոլորովին կերպարանափոխվում եր: Հայ ազգաբնակությունը սաստիկ նվազում եր, կորցնում եր թվական գերակությունը թե ճարակ դառնալով համատարած կոտորածներին և թե փախչելով զանազան յերկիրներ: Բուն յերկրում մնացողը մեծագույն մասամբ հայ գյուղացիությունն եր, վոր հասրացին չափ պաշտպանություն գտնում եր այլ ևս վոչ թե հայ ճորտատերերի, իրեւ սազմիկ տարրի իշխանության տակ, վոր արդին չքացել եր, այլ նրան փոխարինած քուրդ ճորտատիրության ստվերի տակ: Իրեւ ազգաբնակչական զանգված, հայությունն այլև նշանավոր ույժ չեր ներկայացնում, վորովհետև կորցրել եր և իր փոքր և շատե հոծ ազգագրական միապաղազությունը լայնարձակ տարածությունների վրա և մեծագույն մասամբ վերածված եր չորս կողմից նվաճող տարրերով շրջապատված կամ ավելի հաճախ խճողված հատվածների:

Յեկ ահա այսպիսի համատարած ավերածության մեջ մի քիչ այլ տեսարան եր հանգես բերում Լեռնային Ղարաբաղը:

Այստեղ ել յեղել եյին մոնղոլները: Զմեռը նրանք անց եյին կացնում Մուղանի զաշտում, իսկ մնացած ժամանակները լեռնատանն եր նրանց ճանապարհը գեպի Արևմուտք և հակառակ ուղղությամբ: Մոնղոլական քանդումները պակաս վայրագ չեյին լեռներում, և կիրակոս Գանձակեցին հատկապես Խաչենի մասին ե ասում, թե այստեղի լեռնային բերդերն ել չեյին կարողանում դիմանալ թաթարական բաղխումներին:

«Մտին յամուրսն, — զբում ե նա, — և սրոյ ճարակ հատուն զբաղմութիւնն և զիկսն գահավէժ սրաբին. և ի բազմութենէ անկելոցն ծածկէր երկիրն և առիւնն առու եղեալ՝ իրեւ զջուք երթայր, և յոշ ոք խնայեցին և սոկերըն յիշ բազում ժամանակաց իրեւ զդերբուկս քարանց կուտեալ երեէին»:

1) Ա. յեպ. Բարխուտարյան — «Արցախ», յեր. 81.

Պատմիչն ավելացնում եր մի այլ տեղ, թե թաթարներն այնքան հիմնավորապես եյին քանդում մարդկային բնակության տեղը, վոր չեր կարելի իմանաւ, թե առաջ այդտեղ բնակություն է յեղել:

Այսպիս եր սկսում մեռնել Խաչենի մեծ ավատատերերի դարձ Մինույն մահացում տարածվում եր, ինարկե, նաև Սյունիքում:

Չնայած այս բոլորին, Դարաբաղի խորածորերում և անտառապատ խորշերում գաղված պահպեցին ժողովրդական զանգվածներ, վորոնք անցկացրին յերեք դարյան կատաստրոֆը, ծածկվելով լիոնային անհայտության, դաժանության և աղքատության տակը Եղի թանձր ծածկոցի տակ ժողովրդական զանգվածները կառչած մնացին իրանց հին կենցաղին: Յել յերբ այսպիսով հասակ պատմության պարսկառումանյան շրջանը, այսինքն՝ 16-րդ դարը, այս ընդարձակ լիոնաստանն ել արևիտակ հանեց իր ապրած աղջամուղջն ու վերքերը: Կյանքն աղքատացել ու փոքրացել եր ավելի ևս շատ, 12—13-րդ դարերի մշակույթն անհետացել եր, վայրենացման աղետը բերելով յերկրի զլսին: Գանձասարը, վոր հրաշքով աղատվել եր կործանումից, ամայի յեր դարձել իրուեւ ավատական դարի վարչական և մտավոր կենտրոն, և 17-րդ դարի յերկրորդ կեսի մի գրիչ մտցնում եր իր հիշատակարանի մեջ, թե մինչև Աղվանից Պետրոս կարողիկոսը:

«Բոլոր տաւնս Ազուանից ի բազում ժամանակաց կայր խախտեալ և խանգարեալ ի կարգաց և ի կրօնից վանօրայք և յամենայն եկեղեցիք: Ցորոց մի էր և մեծ աթոռ Ամարաս, զի յամանակաց հոլովից կայր աւեր և անբնակ ի մարդկանէ, զի արք ոմանք խէնէշը և անխոննեք փեռեկտեալ և խրամատեալ էին զինմ և զվիճակ սորին»¹⁾:

Վերանորոգիչ հանդիսանում ե նույն Պետրոս կաթողիկոսը, վոր կազմակերպչական ընդունակության տեր եր և ստացել եր աչքի ընկնող վանական կրթություն: Հիշատակարանի հեղինակն ասում ե, թե նա յեր, վոր «լուսավորեց» Աղվանից աշխարհը, վերականգնեց Ամարասը: «Կաթողիկոս Պետրոս, — ասում ե նա, — եկեալ ժողովեաց զվիճակ երկրիս նարանդ կոչեցեալ որ այժմ ասի Վարանդա և կացոյց առաջնորդ զաշակերտն իւր զպարոն տէր Բարսեղ»²⁾: Վանքեր բարեկարգելը բավական չեր: Աղվանից յերկրում ել աշխարհաքանդությունների դարերը նույն մտավորական ավերն եյին առաջացրել, ինչ կար և հայաստանի մյուս մասերում, այն և՝ գրքի անհետացում, գրքազրկություն Պետրոսն

այս ցավը բուժելու համար արտազրել եր տալիս կարենոր գըրքերը, վորոնց թվում և Մովսես Կաղանկայտուացու Աղվանից պատմությունը, «որը, — ասում ե մերազրյուր հիշատակարանը, — ի վաղուց հետէ սպառեալ էր ի տանէս Աղուանից և գտեալ եղեւ ի ձեռն լուսաւոր հոգի Պատկանակատին և ետ գրել և որինակել վերոգրեալ հայրապետ և ետ վախմ Ամարասա և նորաշէն և Գրիգորիսի վանուցն»³⁾:

Մի ուրիշ գրիչ ահա ինչ և ասում Մովսես Խորենացուն վերագրվող, «Գիրք Պիտոյից»-ի հիշատակարանում:

Ենգանատիոս վատշուէր սպասաւորս եմ յերկրէն Զարարերդայի գեղջէն Մեծնու, ըստ բնական տեղույ մննդեան ի ուխտն ս. Երից Մանկանց, մնեալ և վարժեալ ի նախնի աթոռն մեր և կաթողիկոսարանն հայոց և ամենայն աղուանից ս. Գանձասար՝ որ այսու ժամանակաւ զեղեցկաղարդ պայծառութեամբ շրեղացեալ զոյ՝ հոգեորին և մարմնաւորին սահմանադութեամբ (ի ձեռն երջանիկ կաթողիկոսին Պետրոսի) իւրովք որդիցեալ վարդապետականիս խմբիւր, յաւէտ պարապետը հնոց և նորոց կտակարանաց սրբից և արտաքնոց և քերթողութեանց արուեստից ընաւին թափաւորեալք. ոյց կրտի և առաջնորդ լեալ մեծ վարժապետա Անդրէաս տեղեաւ Զուղայիցի ի Շօշայ, որ այժմ ասի Ըսպահան եկեալ յայսմ ժամանակի մեծ բարունապետն ի ս. ուխտէն Տաթեոյ և է Տաթեացի, որ է սա ի մրջի բանասիրաց արեգակն. անձանձրոյթ ուսուցանելով աշակերտելոց, մանաւանդ վարժապետիս մերոյ Անդրէաս վարդապետի. բերեալ ընդ իւր (Ոհան) զօրինակ զբոցն ճարասաւանութեան մեծի քերթողանօրն Մովսեսի Խորենացոյ, որ զանունն միայն լուեալ, քայլց զինքն տեսակալ ոչ բնաւ. զի էր բնաւին անհետացեալ ի մերայինս ազգաց. առեալ զադափարեցի, եղեւ թիւ ավարտման սորա ի 1110=1661»²⁾:

Այս պատառիկը բաց և անում մեր առաջ մի հետաքրքիր տեսարան հայ մշակութային պատմությունից: Հայանի յե, վոր 17-րդ դարի առաջին քառորդից Հայաստանում սկսվում և միջնադարյան վանականության մի վերածնունդ՝ նախորդ յերեք դարերի ընթացքում կուտակված անգրագիտության և վայրենացման խավարը փարատելու համար և վոր այդ շարժման մեջ նշանավոր դեր եր կատարում նոր Զուղան³⁾: Յել ահա նույն այդ Զուղայից մի վարդապետ վարժապետություն և անում հեռավոր Հյուսիսային Հարաբաղում, վերանորոգվող մտավոր կենարոն Պանձասարի վանքի մեջ: Զեռնտու յե այդ շարժման և Հարավային Հարաբաղը, վորի մտավոր կենարոն Տաթեռ, ինչպես տեսնում ենք, վաղուց եր մտել վանական վերածնության հունի մեջ: Այսպիսով ամրող կեռնային Հարաբաղը գնում եր 17-րդ դարի գրական շարժման հետ համընթաց:

1) Անդ.

2) Անդ, յեր. 101.

3) Տ. իմ «Հայկական Տպագրություն», 1 հատ. 1904 թ.

1) Յ. Թոփճյան—«Ցուցակ Ձեռագրաց Դադյան Խաչիկ վարդապետի», Վարդապատա, 1898, յեր. 100.

2) Անդ.

Բայց Ղարաբաղը յեթե վանական վերածնության մեջ միայն հետևող եր ընդհանուր շարժման, դրա փոխարեն պահպանել եր իր ծոցում մի այնպիսի ինքնուրույնություն, վորի նմանը չուներ վոչ մի հայաբնակ վայր: Այդ նրա սեփական ազգային իշխանությունն եր: Այստեղ ել մենք, Հյուսիսային Ղարաբաղի վերաբերմամբ, տեսնում ենք դարձյալ Գանձասարի կենտրոնացնող և դեկավարող գերը: Գանձասարը Հասան-Զալալյան իշխանական առհմի սեփականությունն եր, և Աղվանից կաթողիկոսության աթոռն այս վանքը տեղափոխելուց հետո՝ ինքն այդ կաթողիկոսությունն ել դառնում եր նույն այդ առհմի ժառանգական սեփականություն: Վրաց պատմությունը հազորդում ե մեզ միշտապահ հետաքրքրական տեղեկություն: 17-րդ դարի յերկրորդի կեսին մոտ Կախեթի Թեմուրազ առաջին թագավորը հարձակվում է Գանձակի վրա և կողոպտում ու գերում և ամբողջ յերկրն, սկսած այդ քաղաքից մինչև Բարդա: Նրա հետ Գանձակ քաղաքում տեսնվում է Գանձասարի կաթողիկոսը, վորքամենալով դեպի ուրիշ կողմ ուղղել հարձակվողների ռազմական յեռանդը, խորհուրդ ե տալիս թագավորին՝ ոգտվել այն հանգամանքից, վոր այդ միջոցին պարսիկներն ու ոսմանցիներն իրար հետ պատերազմի յեն բռնված և իր 40 հազարանոց բանակը տանել Արաքսի մյուս ափը և նվաճել Ատրպատականը: Իր կողմից կաթողիկոսը խոստանում եր ոգնել թագավորին, նրա տրամադրության տակ դնելով իրան ստորադրված իշխանների (վասսարների) գորքերը: Բայց Թեմուրազը մերժում եր այդ առաջարկությունը¹⁾:

Հետաքրքրականն, իհարկե, այդ մերժումը չե, այլ այն, վոր Գանձասարի կաթողիկոսն իր հոգեսր պաշտոնին միացրել եր աշխարհական իշխանության գահերեցությունը: Ուրեմն, պահպանվել եր այդ հին հիմնարկությունը, թեև այլափոխված, կարկատնած ձեի տակ: Յեկ յեթե սկսենք վորոնել այդ վեղարակիր գահերեց իշխանի ստորադրված «վասսարներին», այստեղ կգտնենք ավելի բազմակողմանի ձևափոխութենք, կարկատաններ: Այս բոլորը թելադրում եր միջամայրի այն կերպարանավորումը, վոր ստեղծվել եր անկման և ավերման խուլ շրջանում:

Ամենից առաջ նկատել պետք ե այն, վոր ընկել եր յերկրի սվատական տնտեսությունը անցյալի համեմատությամբ և այլևս չեր կարող կերպել այն ընդարձակ ավատական կազմակերպու-

թյունները, վորոնց զարգացման համար հարկավոր եյին խոշոր հողամասեր: Ազգաբնակությունը փոքրացել եր և մշտական վախի յերեսից բռնված լոկ Փիղիկական գոյություն պահպանելու անձուկ մտահոգությամբ, մոռացել եր մի ժամանակ գոյություն ունեցած ավատատիրական կենցաղի լայնությունն ու առատությունը և ըստ այնմ ել փոքրացրել եր իր պահանջները, ինչպես պարտավորեցնում եյին լեռան այն ամուր տեղերը, վորոնք անհրաժեշտորեն դարձրել եյին մարդկային կյանքը խնայող ապաստարաններ: Յերեք դարյան աշխարհաքանությունների կատաստրոֆը լեռնաստանն անց եր կացրել փոքրանալու, ինքն իր մեջ սեղմվելու և անհրապույյր աղքատության մեջ փաթաթվելու միջոցով: Այս տնտեսական անկման ապացույցն առաջին հերթում այն, վոր լեռնաստանն իսպառ մոռացել և խաչենցիների շըր-ջանի շինարարությունը, այլ ևս Գանձասարի և Գտիչի հեռավոր նմանությունն անգամ ունեցող շինություններ չեն յերևում, և ամեն տեղ կոպիտ, անտաշ քարերով գործելու աղքատիկ արհեստին միայն ծանոթ վորմաղրությունն եր կառուցումներ կատարում:

Այս բովանդակության մեջ ամփոփված տնտեսակարգն իր եյությամբ մնում եր հինը — ավատականությունը, վորի համար ել կյանքը նոր ձևեր եր կազմել իր ընդորրկած պայմաններին համաձայն: Ավատատիրական հողամասերը տրոհված են մանր կտորների, ավելի ևս մանրացնելով յերկրորդական կարվածատերերին և բազմացնելով նրանց թիվը: Ըստհանրապես փոքր են և տկարնակ առաջնակարգ կարվածատերերը, ավատապետները, վորոնց ձեռքում ե և իրանց մարդի իշխանությունը: Այլևս գոյություն չունեն նախկին ֆեոդալական անունները — նախարար, իշխան, տեր: Նրանց տեղ կյանքը նոր անուններ և որինականացնում: Սկզբում մենք տեսնում ենք, վոր «իշխան» բասի տեղ կիրառվում և թաթարական շրջանում ամենուրեք քաղաքացիություն ստացած «պարոն» բառը¹⁾, հետո գործածական ենք տեսնում «պարոն տեր» անունը, վոր, կարծում ենք հատկացվում եր գյուղացիներ ունեցող կարվածատերերին: Բայց այս յերկու անվանութերն ել մասնակի կիրառություններ են: Ամեն տեղ տարածված եր, մասնավորապես 16-րդ դարից, «մելիք» անունը: Ենուային Ղարաբաղը դառնում եր «մելիքների» հոչականուն հայրենիքը:

1) M. Brosset — «Histoire de la Géorgie» t. II, liv. I, St. Peters, 1856 p. 64.

Միանդամից դժվար ե վորոշել, թե ինչ եր իր մեջ բովանդակում այս անունը: «Մելիքը» մի շատ տարածված պաշտոնանուն եր Պարսկաստանում, վոր տրվում եր վոչ-մահմետական-ներին: Նշանակելով հանդերձ «թագավոր», այս անունն եր կը բռում ամեն մի մարդ, վորին հանձնվում եր մի զյուղի ղեկավարությունը զյուղական համայնքի ընտրությամբ, ասել ե, ուրեմն համանիշ եր «քյոլսվա», «ուես», «քեթխուուլա» (տանուտեր) հասկացողությունը: Գյուղապետ մելիքը մի ժամանակավոր պաշտոնյա յեր, վոր այդ անունը կը ում եր միայն այն ժամանակ, քանի պաշտոնը թողնելուց հետո մտնում եր նորից հասարակ հարկատուների կարգը, քանի վոր մելիքությունը չեր տալիս նրան վոչինչ առանձին անձնական և կալվածական արագություն: Այսպես եր զյուղապետ մելիքի սովորական, տարածված տիպը Բայց կային և բացառություններ: Մելիքությունը նաև ժառանգական-կալվածատիրական իշխանություններ եր Յեկանա այս տեսակ մելիքական իշխանություններ, վոր տարածված եր յեթե վոչ բացառապես, գեթամեննեծ մասամբ Լեռնային Ղարաբաղում ծայրե ծայր:

Ռուսներն իրանց (աիրապետությունը Վրաստանում հաստատելու առաջին խսկ քայլերից տեղեկություններ եյին հավաքում Ղարաբաղի մելիքների ծագման և իշխանության հանգամանքների մասին իրանց պաշտոնյաների ձեռքով, և նրանց ներկայացուցիչը վրաց արքունիքում, Կովկանսկին, գրում եր իր կառավարության, թե «մելիքները հայոց թագավորության անկումից հետո, հին ժամանակից պահպանել են իրանց կալվածների անկախությունը մինչև նորագույն ժամանակները¹⁾: Այս ցուցմունքը ուսու պաշտոնյան անշուշտ հենց հայ մելիքներից եր լսել վորոնք ուրիշ դեպքերում ել հայտարարում եյին ուստաց կառավարության, թե իրանք ծագում են հայոց թագավորներից: Մենք գիտենք արդեն, թե այդ թագավորները Լեռնային Ղարաբաղի զյուղական թագավորներն եյին, վորոնք իրանց անհետացումից հետո ապրում եյին Խաչենի խոշոր ավատապետների տիտղոսների մեջ և հենց այստեղ ել 16-րդ դարից ծրարվեցին «մելիք» կարկատանի մեջ:

Այս հաջորդականությունը կարելի յե հաստատել պատմական վագրագրերով: Զաքարե սպասալարի քույր Դոփը ամուսնությու-

նից առաջ յեկավ Դոփյան ուժեղ իշխանական տոհմը, վորից 16-րդ դարի սկզբում սերված ենք տեսնում այն մելիքական տոհմը, վոր տիրում եր Գեղարքունիքում, ընակություն հաստատելով Մազրագյուղի մեջ և վոր Մելիք-Շահնաղար 1-ի անունով սկսեց կոչվել Մելիք-Շահնաղարյան¹⁾:

Պարզ ե և բուն Խաչենի մելիքական տոհմի ծագումը: Այդ տոհմը հաստատված եր Գանձասարի վանքի մոտ, Վանք գյուղում և սերված եր Գանձասարը շինող Զալալ-Դովան «ինքնակալ թագավորից», կոչվում եր Հասան Զալալյան և, ինչպես տեսանք, դահերեցություն եր պահպանում յերկրի մեջ, իր շուրջը ժողովելով ամրող կարվածատիրական դասը: Խսկ այդ դասը բազմաթիվ եր: Մեր վերևում բերած ձեռագրական հիշատակարաններից մեկը պարունակում ե Վարանդա զավառի Ամարասի գյուղում ապրող պարոն սերի այսպիսի մի ցուցակը: Առաջինն ե Բարսել արքեպիսկոպոս պարոն տեր, «ընդ սմին և միաբանք տեղոյս զՄարտիրոս, զԱլեքսան և զԵղիա պարոն տեարքն, այլ և որք կանն ի պաշտօն ուխտեաց զՈվանես պարոն տէրս... Յիշեցէք զՄարտիրոս պարոն տէրն, որ մականուամբ շեկ կոչիւր, զհայր իւր Աղան և զմայրն իւր Գուլազն...»²⁾):

Խսկ մի ուրիշ ձեռագիր (Ավետարան), վոր գրել ե Վարվառե կույսը Դաղեյի վանքում (Թարթառ գետի վրա, Զրաբերդ գավառի վերին մասում), այսպիսի հիշատակություններ ե անում 1684 թ.

«Դարձեալ յիշեցէք զերոպրեալ բարունապետն Տէր Պետրոս և զաստուածական ծնողն իւր, զհայրն իւր զպարոն Մէլիք պէկն և զմայրն հանգուցեալն ի Քրիստոս զՄամպուպն և զարազատ եղբայրն իւր զՄէլիք Միրզախանն և զՄանուչար պէկն, զԱլեպէկն և զասան պէկն և զեղորորդին և զեաւրի պէկն և զԱլզին պէկն և զԴրիգոր սարկաւագն և զպարոն Աստուածատուրն և զտիրացու Շաւրի բէկն և զՕհեա բէկն և զԱղի բէկն և Սարգիսանն և այլ ամենայն արեանառու մերձաւորս, մանաւանդ, զհանգուցեալսն ի Քրիստոս զաւագ եղբայրն իւր զԱղապէկն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք: Դարձեալ յիշեցէք զմեծ պապն իւր զՄէլիք Պալասանն և զեղբայրն իւր զՄտեփանոս արքեպիսկոպոսն»³⁾:

Արդ՝ յեթե այս միայն մի ազնվական ընտանիքի ցանկն ե, պետք ե սրանով յերևակայել, թե ուտող դասի ինչ ահագին բազմություն եր նստած Լեռնային Ղարաբաղի ժողովրդական զանգվածների ուսին:

¹⁾ Կարապետ յեպիսկոպոս—«Դոփյանք և Մելիք-Շահնաղարյանք («Նյութեր հայ մելիքության մասին», 2-րդ պլակ), յեր, 102—104.

²⁾ Ցուցակ ձեռ. Դագեան Խաչ, վարդ. յեր, 101.

³⁾ Ավետարան Վառվառե կույսի, Եղմիածնի մատենադարան:

1) Чкты Кавказской Археографической Комиссии. т. I. № 34.

Յեվ ահա այստեղ հարց ե առաջ գալիս, թե ինչպես եյին ուշադրում այս ձևափոխված ավատական շրջանի ազնվականները կամ՝ ուրիշ խոսքերով, ինչ եր մելիքական իշխանությունը և ինչ հաւաքարերություններ ուներ իրան յենթարկված ժողովրդի հետ: Իսկ այս հարցը ճշտությամբ և ամրողությամբ պարզելը հեշտ չե ամենից առաջ հենց այն պատճառով, վոր տեղեկություններ այդ մասին շատ չունենք և յեղածների մեջ ել նկատելի յեն հակասություններ:

Մելիքությունը զուտ պարսկական հիմնարկություն եր, և ընդհանուր առմամբ նշանակում եր քրիստոնյա ազգարնակության տեղական կառավարություն քրիստոնյա պաշտոնակալների ձեռքով: Բայց այս կառավարությունը չեր դրված ամեն տեղի համար միանման և անխախտ սկզբունքների վրա: Ուստի և մելիքական իշխանությունը պաշտոնական բովանդակություն ստանում եր նայած հանգամանքներին, վորոնք մեկից ավելի եյին: Ամենից առաջ և ամենից բարձր այդ հանգամանքների մեջ կանդնած եր, ինարկե, Շահի կամքը, վորի առջև ամրող պետությունը ստրուկ եր: Մեծ պիտական ձեռներեցության տեր Շահերը որինակ մի Շահ - Արքաս մեծ 17-րդ դարում կամ մի նադիր Շահ 18-րդ դարում, բարձրացնում և ամրացնում եյին մելիքությունները տնտեսական և ռազմական նկատառությունը, իսկ մեղկ ու ապիկար Շահերը, վորոնց համար թագավորել՝ նշանակում եր կեղեգել հաղատակներին, զրկում եյին մելիքներին նույնիսկ հարկահավաքության իրավունքից և իրանց ուղարկած մարդկանց ձեռքով եյին կողոպտում մելիքական կառավարության տակ գտնվող ժողովուրդները: Շահական տրամադրությունից հետո նշանակություն ուներ և մելիքի անձնավորությունը: Ցեթե դա կարող է կորովի մարդ եր, մանավանդ հարուստ, ազդեցիկ, կենտրոնական կառավարության աչքում այլպիսին առանձին հարգ ու պատիվ եր ստանում: Վերջապես, հիշենք և մի շատ հզոր հանգամանք — այդ իրանի ընդհանուր քաղաքական դրությունն եր: Ցերք ուժեղ եր կենտրոնական կառավարությունը, պարսից պետությունը յենթարկված եր մնում վորոշ կարգ ու կանոնի, և այն ժամանակ կարելի յեր ասել, թե կառավարական սիստեմն ունի վորոշ չափով կայունություն և տևողություն: Բայց յերք պետությունը մատնվում եր անիշխանության, — իսկ այսպես եր նա համարյա ամրող 18-րդ դարում — այն ժամանակ առաջանում եյին ամեն տեսակ տակնուվրայություններ, և մենք տեսնում ենք մելիքներին կամ կատարյալ անկախության հասած կամ, ընդհակառակն,

իրանցից ուժեղ տեղական խաներից ընկճված և նրանց իշխանության յենթարկված:

Այսքան հեղձեղուկ եր այն ընդհանուր իրավական հիմքը, վորի վրա դրված եր մելիքական իշխանությունը: Կմնար վորակել նրա ընույթն ըստ տեղերի և ժամանակների, բայց այդպես անելու վոչ մի հնարավորություն չկա, վորովհետև ամրող Ղարաբաղի վերաբերմամբ, յեթե չհաշվենք մի յերկու, այն ել կասկածելի յերեացող բացառություն, չկան պարսից կառավարության պաշտոնական գրությունները, վորոնք ցույց տային նրա վերաբերմունքը դեպի այնքան՝ բազմաթիվ մելիքություններն ու մելիքները:

Կա, սակայն, մի ոժանդակ աղբյուր, վոր թեև վերաբերում ե մելիքական շրջանում արդեն Ղարաբաղից առանձնացած մի յերկրի, բայց կարող ե ընդհանուր ծանոթություններ մտցնել այն խավարի մեջ, վորով այս կողմից ծածկված և լեռնային Ղարաբաղն իր խական սահմանների մեջ: Այս յերկիրը Գեղարքունիքն ե, Սևանի լճի արեւելյան կողմում, Սողք կամ Զոդ կոչված, ինչպես նաև Ծարի գավառը: Պատմականորեն սրանք նույն Ղարաբաղն են (Այունիք, Վերին Խաչեն) և այստեղ ե, վոր մանր մելիքական գյուղատիրությունը զարգանդւմ ե, ընդունում մեծ չափեր: Մենք արդեն հիշեցինք, այդ մելիքներից մեկին, Շահնաղար առաջինին, վոր Մաղրա գյուղն իր նստոց դարձրած՝ մելիքական տոհմի անվանատերն եր: Ահա այս տոհմը թողել ե 17 վավերագրեր, վորոնց թվումն են շահական ֆերմաններ, կալվածական դատավճիռներ այլն¹): Այս մի կողման ե՝ պարզելու համար գոնե Մաղրայի մելիքների դիրքը, մի բան, վոր այս կամ այն չափով հասկացողություն կազմել տալ կարող ե և առհասարակ մելիքական դիրքի մասին:

Արդ՝ Մաղրայի մելիքները բավական ուժեղ իշխանական յերեւյթ եյին կազմում 17-րդ դարի ընթացքում, Սևմելլի տոհմի թագավորության ժամանակ: Մեր հիշատակած Մելիք Շահնաղարը Շահ Արքաս մեծին ծանոթ եր մոտիկուց, և այս յերեւում ե այն հրամանագրից, վոր նա ուղել ե «քրիստոնյաների մեջ ընտրյալ» մելիքին՝ Թավրիզն ոսմանցիների ձեռքից առնելուց հետո²):

Թիֆլիսից վերապարսալու ժամանակ, Շահը մտավ Մաղրա և հյուրընկալվեց Մելիք Շահնաղարի մոտ: Այս առթիվ Առաքել Դավրիթեցին վրում ե.

¹⁾ Մելրասպ յեպ. Ամբատյան — «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գավառին», Վաղարշապատ, 1895. յեր. 783 — 808.

²⁾ Անդ. յեր. 785.

«Եւ էր Մելիք Շահնազարս յազգէն հայոց և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր, որ արար հիւրընկալութիւն Շահին որպէս վայել է թագաւորի՝ և էր ինքն բարեկամ և մտերիմ և արգոյ առաջի թագաւորին Վասն որոյ և թագաւորն պատուական և ազնիւ զգեստուք շքեղացեալ խիլայեաց, և պարզեաց նմա զիշխանութիւն մէլիքութեան գաւառին և այլ ևս դաստակերտ և զիւղօրայս ետ նմա և եղարց նորա եւ հաստատուն նոմոն զրեաց և կնքեաց թագաւորական կնքով և ետ նոցա, զի անփոփոխ լիցի ժառանգութիւն այն նոցա և զաւակաց նոցա յազգէ յազգ մինչեւ յաւիտեան¹⁾:

Ահա մի ուրիշ ժամանակակից վկայություն նույն մելիքի մասին:

«Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄէլիք Շահնազարն, որ է յոյժ բարուքն քարի և բնութեամբն յստակ և հնազանդ ամենայն եկեղեցականաց, ուղիզ ի դաստատան և անաշառ ի յանդիմանութիւն, ազատ և որդի ազատի, իշխանական փառօք զարգարեար Զի ի նախնի զարմից սորա յորբոց յորդիս մինչեւ ի սա հոգեոր և մարմնաւոր իշխանութեամբ տիրեալ էին յերկրին Գեղամայ, իսկ սա կարի փառօք նոխացոյց բարեկարն քան զամենայն ազինս իւր մարմնաւոր իշխանությամբ, զի ի վերջացեալ ժամանակիս զի ոչ զոյր նման սորա իշխան ի յազգս հայոց... զի է յոյժ փարթամ գոյիիք և տասատ ընչիւք՝ լցեալ ի պարզեացն Աստուծոյ, ամենայն առաստութեամբ և հզօր իշխանութեամբ բարզաւաճեալ, պատուեալ և մեծարեալ ի խրոխտ կայսերէն պարսից ի Շահ Թահմազէն և ի Շահ Խոմայիլէն և այլ իշխանացն այլազեաց ի խանէ և ի սուլթանէ բազում անգամ խիլայեալ²⁾:

Այս հիշատակարանի մի ուրիշ որինակի մեջ զրված և Մելիք Շահնազարի տոհմարանությունն այսպես.

«Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոնաց պարոն և զիշխանաց իշխան զՄէլիք Շահնազարն և զհայըն իւր զՄէլիք բէկն և զմայըն իւր զթաթուն աղէն և զկենակիցն իւր զպարոն Յախրի Զհանն և զիշխանատիպ որդիքն իւր զհախնազար բէկն և զնայ բէկն և զդիլանչի բէկն և զամալ բէկն և զԱվրի բէկն և զզուստրն իւր զթաթուն աղէն և զփոխեցիարն առ Աստուած զպարոն տէր Ցովինն և զթահիքն և զՇիրինապաջին և զհամես հարսունքն իւր զպարոն Վոսխախն և զթանում աղէն և զԱղասուլթանն և զնորարողոջ թոռն իւր զպարոն Նազարն»³⁾:

Ցեվ այսպիս, ուրեմն, կարծեք Գեղամի յերկրում վերակենդանացել և հին խոշոր ավատապետություններից մեկը, և այս «իշխանաց իշխան» Շահնազարն իր բազմանդամ ընտանիքով, վորի յուրաքանչյուր անդամը զարդարված և ազնվականություն, տիրապետություն արտահայտող անուններով, մեծամեծ հողային տարածությունների, ամրող յերկիրների տեր և Բայց ահա ինչ շահական ֆիրման և տված նրա հայր Մելիք բեկին.

«Որովհետեւ Մէլիք բէկն քրիստոնեայն յայտնեաց, թե ի հրովարտակիս լիշտակեալ զիւղօրայքն, որք ի նահանգի ծովային Գեօկչայի, ժառանգութիւն

¹⁾ Առաքել, յեր. 71—72.

²⁾ Կարապետ յելիս. — «Դոփյանք և Մել. Շահ.», յեր. 190—195.

³⁾ Սմբատյան, յեր. 809.

նորա են սեպհական և ունի առ ի հաստատութիւն բանից իւրոց զգիքս օրինողորդաց մերոց ի ձեռին իւրում, վասն որոյ և մնան որպէս հաստատեցաք լինել ժառանգութիւն նորին որպէս էյին, և աչ ոք առանց իրավանց օրինաց լինիցի ձեռնոտմուխ սեպհական հողոյ նորա, և թողեալ եմք նմա առնել զինութիւն և զցանու, զի մի հասցէ պակասութիւն արքունի հասութիցն, յայտ մասին զարգելական հրաման իմ սաստիկ գիտացեալ մի ընդդիմանջիք և յամենայնի ամենայնի զնոր հաստատութիւն մի խնդրեսնիք»¹⁾:

Հրովարտակին կցված են ութ զյուղի անուններ: Ցեվ այս ութ զյուղերն ել մինչև վերջը մնացին «իշխանաց իշխան» Մելիք Շահնազարի տոհմի ամրող հողային հարստությունը, այնպես, վոր Առաքել պատմազրի ասածը, թե Շահ Աբրասը զյուղեր ընծայեց Մելիք Շահնազարին առասպեկտ: Այս փաստը զալիս է մինչեւ կալվածատեր իշխանացներու մելիքության ամենաեյլական պայմանը, այն, վոր մելիքը մասնավոր կալվածատեր եր և վոչ գավառատեր հին իմաստով: Հրովարտակից հետևում ե, վոր կալվածատեր մելիքը պարտավոր եր շինարար լինել ցանել վորպես վասս հասանի պետական հասույթներին: Նշանակում ե, վոր նրա կալվածները նույնպես յենթարկված եյին պետական տուրքի: Մելիքական իշխանությունն այսպիսով չեր բոլոր հողատիրությունից, հետևապես մելիքը հին ավատապետի (սենյորի) հաջորդը չեր: Իսկ նրա իշխանությունը պաշտոնի բերմունք եր, վորովհետեւ յեթե նա գավառատեր չեր, բայց գավառի կառավարիչ եր, այն ել վոչ թե սովորական, այլ ժառանգական և ցմահ: Հարկավոր եր միայն, վոր վախճանված մելիքին հաջորդողն ըստանար Շահի հաստատությունը²⁾: Այսպես եր Գեղարքունիք գավառում: Իսկ Ղարաբաղի Վարանդա գավառի վերաբերմաբ կիրապվում եր այլ կարգ: Այդուղ յուրաքանչյուր նոր մելիք պիտի համախոսական գրություն ներկայացներ Շահին, թե ժողովուրդը համաձայն ե, վոր ինքը լինի մելիք, և այսպիսով մելիքությունը վարանդայում դառնում եր ընտրովի պահտոն:

Թե մելիքական պաշտոնի հետ ինչ լիազորություններ եյին կապված, այս ամենից հստակ կերպով արտահայտված ե Մելիք Շահնազարի վորդի Մելիք Քյամալին տված շահական հրովարտակից, վոր հետևյալն ե.

¹⁾ Սմբատյան, յեր. 784—785.

²⁾ Այս տեղեկությունը մենք քաղում ենք այն ընդառաջակ զատաստանական գործից, վոր վարում եյին Վարանդայի Մելիք Շահնազարյանի ժառանգներն իրենց կալվածները հափշտակած իշխան Մաղաթովի գեմ 19-րդ դարի առաջին կեսում Այսպես կա մի շահական ֆերման, վոր վերաբերում և մելիքի համաձայն և այդ հաստատումը հիմնված է ժողովրդական համախոսականների վրա Մել այս աղբյուրը կանվանենք այսուհետեւ «Շահնազարյանների գործ» (Ըլո Շահնազարօվակ):

«Հրաման արքայական իմ է զի որովհետև ի հնոց հետէ ըստ հրամանի շոցին մեծափառութիւնց նախնի առաջին թագաւորաց արդէն ի դրախտին եղելոց. Գեօշայի նահանգի մէլիքությունն ի հարց և ի հաւուց անտե՛ Մէլիք Շահնազարի զալով յանձնեալ և յանցեալ ժամանակի բարձր հրամանաւ զիշեալ նահանգի մէլիքութիւն նորա որդի Մէլիք Եսւրուին էր շնորհեցեալ վասն որոյ ի զալ ընտրելոյն ի քրիստոնեայս Մէլիք Քեամալին եղոր յիշեալ Մէլիք Եսւրումին ի յաշխարհայուց տուն մեր, յայտնեաց զման եղոր իւրոյ, վասն որոյ ըստ թագաւորական ինամոց և ողորմութիւնց մերոց, յօրէ հանգստեան նախայիշեալ Մէլիք Եսւրումին, զիշեալ նահանգի մէլիքութիւնն ըստ առաջնոյն նմա յանձն առնեմք (այսինքն Մէլիք Քեամալին) զի հարկաւորաբար գործոյն և հետեւելոցն հոգ տարցի և կատարեսցէ առանց անցուցանելոյ զժամ մի պարապորդութեամբ Յիշեալ նահանգի իշխանք, ծերք և հասարակութիւնը, զիշեալն Մէլիք և իշխան ձեր զիտացեալ՝ ի բանից և ի հրամանաց նորա մի ելանիցէք արտաքս. և առանց զիտութեան և յայտնելոյն նմա եթէ մասնաւոր և եթէ ընդհանուր արքունի առեւրոցն մի լիջիք ձեռնամուխ. և յիշեալ գործն հարկաւորութեան նմա յատկացեալ իմանալով, ոչ զոք ի յիշեալ գործն և ի պաշտօնս ընկել նմա մի ծանիջիք, ընտրեալն յիշխանութենէ և կամ յիշեալ նահանգին կառավարիչն զձեռն իշխանութեան և յայնմ զործ հաստատ արարեալ. որ ինչ զատ և իրաւոնք լինին ի մէջ ժողովրդեան ի ներկայութեան նորա վճռեալ զտուգանս ըստ կարողութեան յանցավորին ստացեն Յիշեալ Մէլիքի կարգադրութիւն կամ իրաւոն այս է, որ յիշեալ նահանգի նորոգութեան ջանացող լինիցի և այնպէս արասցէ, զի մի ումեք զրկանք պատահեցի, և այնպիսի կերպիւ կառավարեցի ընդ հասարակութեան, որով ամենեքեան զնանէ գոհացող լիցին. և զբարի աղօթո ի նոցունց վասն թագաւորութեան մերոյ վաստակեցէ. եւ յամենայն ամի վասն այսր՝ նորոգ հրաման մի խընդրեցեն»¹⁾:

Այսեղ մելիքական գործողութիւնների մէջ հիշատակվում ե մի վերին աստիճանի կարեոր պայման, վոր մինչեւ այժմ վոչ վոքի ուշադրության առարկա չի դարձել և վոր սակայն, բոլորովին նոր լույս ե սփոռւմ մելիքության Եյական տարրերից մեկի վրա. Այդ այն ե, վոր մելիքն իրան հանձնված դավառի վոչ միայն վարչական-դատաստանական, այլ և առեւթրական գլխավորն ե, վոր մենակ ու ինքնազլուխ վարում ե, իրրե մի տեսակ մենաշնորհ, թե մասնավոր և թե պետական առեստուրը: Անշուշտ, մասնավոր առեստուրը ներմուծվողն եր, վոր թեև մասնավոր վաճառականների ձեռքով եր կատարվում, բայց շուկա հանողը, գներ նշանակողն ու կարգավորողը մելիքն եր: Իսկ ինչ եր պետական առեստուրը: Մելիքության մէջ բոլոր գյուղերը, ինչպէս տեսանք, մելիքներին չեյին պատկանում, այլ կային և թագավորական զյուղեր²⁾, վորոնց արքունի հասույթները ընական բերքերով և զրամով մելիքների ձեռքով եյին գանձվում և բնական բերքերն

1) Սմբատյան, յեր. 788 — 789.

2) Անդ, յեր. 793.

Ֆլ գրամի եյին վերածվում, շահական գանձարանն ուղարկվելու համար, վաճառքի միջոցով: Այս եր ահա, մեր կարծիքով, պետական կամ «արքունի» առեստուրը: Մելիքության առեստրական գործառնությունը, վոր գուցե այս հիմնարկության զլխավոր րայոն դ'էեր-ներից մեկն եր կազմում, մենք զրեթե համանման արտահայտությամբ կրկնված ենք տեսնում և Մելիք Շափուշին տված հրովարտակի մեջ — «առնաց զիտութեան նորա եթէ մասնաւոր և եթէ ընդհանուր արքունի առեստուր մի արամշիք»¹⁾:

Յեթե մելիքներից շատերը շատ ուժեղ եյին իրենց հարստությամբ, այս բանը բղխում եր նրանց առեստրական գործառնությունից: Իրանց հարստությամբ հոչակված եյին Գեղարքունիքի Մելիք Շահնազար առաջինը, Դիղակի Մելիք Յեզանն ու իր վորդի Մելիք Արտակը, Բշտաղսի Մելիք Հայկազը, վոր, ինչպէս զիտենք, Ապահան տեղափոխվելով, գարձավ խոջա: Այսպիսով դուրս ե գալիս, վոր հայ կալվածատեր ազնվականության և առեստրական կապիտալի մեջ ջրբաժան բարձրություններ չկային, և նրանք զրեթե խառնված եյին իրար հետ:

Այս եր, վորքան կարելի յեր հետեւեցնել Գեղարքունիքի Մելիք Շահնազարյանների տոհմային փաստաթղթերից, մելիքների իրավական գրությունը պարսից կառավարության առաջ: Բայց չկարելի ասել, թե միանման վերաբերմունք ուներ գեպի իր մելիքները նաև հայ ժողովուրդը: Յեթե պարսից կառավարութեան համար մելիքը մի մասնավոր կավառի կամ գավառակի կառավարել եր և մասնավոր կալվածատեր, այն ել վոչ խոշորներից, հայ ժողովրդի համար նույն այդ անձը պարսկական պաշտօնյա լինելուց շատ ավել եր: Նույն պարսից կառավարության համար Վրաստանի թագավորները թագավորներ չեյին, այլ լոկ պարսկական պաշտօնյաներ, խաներ, սակայն այս չեր խանզարում, վոր վրաց ժողովուրդն ընդունե նրանց իբրև իր աղքային թագավորների: Այսպես և հայ ժողովուրդը: Պարսից Շահների Փիրմանները չեյին որենք նրա համար, այլ իր սովորույթի դարավոր կարգը: Հայ մելիքները նրա համար զյուղական ավելի ևս մանրացած արքայիկներ եյին, վորոնք մի կոռքը գավառի կամ գավառակի ներքին ժողովրդական ինքնազարությունն եյին մարմացնում: Յեկ սովորույթը մնձ ուշադրություն եր նվիրել այդ արքայիկների գինաստիական շահներին: Հաստատված եր ժառանգության պարզ կարգ, վորի մեջ ցոլանում եր հին նախարարական սովո-

1) Անդ, յեր. 790.

բուլթը. մելիքին հաջորդում եր նրա ավագ վորդին, վոր կոչվում էր մելիքաղա, մինչեռ մյուս վորդիները կրում եյին լոկ «բեկ» տիտղոսը: Մելիքն ուներ իր սեփական զորքը, վորի մասին կը խոսենք քիչ հետո: Մենք կարող կլինելինք ավելացնել և այն, վոր ժողովուրդը տալիս եր մելիքին հատուկ հարկ, վոր կոչվում եր «մելիքյանա», բայց այս փաստին առանձին կարեւորություն տալ չենք կարողանում, քանի վոր պարսկական կառավարչական սխատեմի մեջ սովորական բան եր, վոր պաշտոնյան ոռծիկ ստանագոչ թե պետական գանձարանից, այլ աղքարնակությունից, հատուկ սահմանված տուրքեր ժողովելու միջոցով:

Ինչ վերաբերվում և մելիքական դիրքի, իրեն ազգային իշխանության, վայելած հարկ ու պատվին, մենք վերեւում բերինք Գեղարքունու Մելիք Շահնազար առաջինին վերաբերյալ փառադրական հատվածներ: Բայց այդ մելիքը բացառություն չեր. 18-րդ դարում Ղարաբաղի Զրաբերդ դավառում անվանի դարձած Մելիք Հարամին (Աղամին) այսպիսի խոսքերով եր դիմում Եղմիածնի Սիմեոն կարողիկոս Յերևանցին (1771).

«Ցորմէ ժամանեցի թուղթ սիրոյ՝ ողջունի՝ օրհնութեան և չնորհաց, հանդերձ ամենառատ ողորմութեամբն և զթութեամբն աստուածային և չնորհուսրոյ իջման տեղույս ի վերայ սիրելոյդ մերոյ և սուոյդ և օգտասէր բարեկամիկ և հարազատ դասկալիդ սրբոյ աթոռոյ՝ Քրիստոսասէր. և ի սոյն միշտ դուացեալ պերճապատիւ և շքեղափառ, օրհնեալ և բարեպաշտօն պարոն Մելիք Աղամիդ, աստուածապահ տանդ և ընակութեանդակի Քրիստոս զօրացեալ որդոցդ և դստերացդ, սիրելեացդ և բարեկամացդ, ընչցդ և ապրանացդ, անդիցդ և անդասացդ, վարիցդ և վաստակացդ, հօտիցդ և արջառացդ և ամենայն քոյանոցդ և ընդ օրհնեալ յարկաւդ եղելոցն»¹⁾:

Իսկ յերբ մեռավ նույն Մելիք Հաթամը, Սիմեոնի հաջորդ Պուկաս կաթողիկոսը գրեց նրա յեղբայր Հովհանի միսիթարական թուղթ, վորի մեջ ասում եր.

«Զի լուաք այժմ զաղետալի համբաւ մահուան գերազնիւ սիրելոյն մերոյ և եղբօրն քո ի Քրիստոս հանգուցեալ պարոն Մելիք Աղամին, որ յիրաւի նորի իմ ցաւ եղեւ մեղ մեծագոյն և էարկ ի տրամութիւնս սաստիկս և ի սուզս դառնապոյնս, քանզի ոչ եր նա իրեն զայլս ի պիտանաւորաց և յօդտարարաց այլ առաւել քան զբազում և ընտիր՝ զարդարեալ խոնեմութեամբ և հանճարեղութեամբ պիտանի բազմաց և օգտարար հասարակութեան»²⁾:

Բայց մելիքական իշխանության և ժողովրդի փոխարարերությունների հիմքը հողային հարցն ե, վոր անհրաժեշտ և պարզել:

¹⁾ «Օրինակ զրութեանց Յակով կաթողիկոսի Շամախեցւոյ և Սիմեոն կաթողիկոսի Երեխանցւոյ», մասն Բ. Զեռագիր, Եղմիածնի մատենագրաբան, ըստ իրն ցուցակի № 748:

²⁾ «Օրինակ կոնդակաց Պուկաս կաթողիկոսի»: Զեռագիր, Եղմիածնի մատենագրաբան, № 752:

Ի՞նչպես եր մելիքական հողատիրությունն իրականության մեջ և վոչ թե թղթի վրա, պարսկական փիրմանների տնորինածից դուրս, ժողովրդական զանգվածների խորության մեջ, սովորութիւնների ամրապնդված: Ի՞նչ եր պահպանել այդ սովորությը հին, նախարարական ժամանակների հողատիրության եյությունը կազմած ճորտատիրությունից:

Այս հարցն ել անորոշության մեջ և դեպերում, ճիշտ և մանրամասն տեղեկությունների բացակայության պատճառով: 1820-ական թվականներին Կովկասի ոռւս բարձր քյուլուկրատիայի առջև դրված եր Գյուլստանի Մելիք Բեկլարան հայտնի մելիքական տոհմի մեջ ծագած վեճը հողերի բաժանման մասին¹⁾: Բը նականարար, հարց եր ծագում, թե գյուղացիները մելիքների ճորտերն եյին արդյոք թե վոչ: Փոխանակ այս կարևոր հարցի պահանջած ամբողջ լրջությամբ քննություն կատարելու, վավերագրեր մեջ առնելու, բազմակողմանի հարց ու փորձերով գործի մեջ մտցնելու շահագրգուված յերկու կողմն ել, այսինքն մելիքներին ել, գյուղացիներին ել ցարական քյուլուկրատիան՝ իրան հատուկ բթամտությամբ՝ այդ վեճը հանձնում եր Շուշու գավառական դատարանին, վոր հարց ու փորձ եր անում Ղարաբաղի խանի մի քանի ազգականներին և հիմնվերով լոկ այդ ցուցմունքների վրա, վորոնք խկությամբ չեն ել բերված, հասնում եր «խորիմաստ» յեղակացությունների, վորոնցից մի քանիսն ուղղակի զավեշտական բնավորություն են կրում: Հենց ամենից առաջ այն, վոր ոռւս չինովնիկներն ամեն քայլում ասում և կրկնում եյին, վոր Պարսկաստանում չի յեղել ճորտատիրություն: Իսկ Վրաստանը Պարսկաստան չեր — ամրողջովին ճորտատիրական չեր: Իսկ յեթե Պարսկաստանը չինելով հանդերձ ճորտատիրական պետություն, մի բան, վոր գեռ հարցի տակ ե, թույլ եր տալիս, վոր իր մի կարևոր ծայրյերկրում գոյություն պահպանե հին անտեսակարգը, ինչունույն անհնարին պիտի դառնար Լեռնային Ղարաբաղի համար, վոր սահմանակից եր Վրաստանին, նրա Սոմիթնահնանդի կողմից: Վորի հետ նա յերկար ժամանակ միություններ եր կազմել վոչ միայն կուլտուրական, այլ և տնտեսական տեսակետից՝ միանման ավատատիրական-ճորտային կացության հողի վրա, ինչպես բացատրել ենք վերևում:

Զավեշտական ե նույնպես և այն, թե ինչպես եր բացատրում ոռւս չին վնիկությունը մելիքական գյուղի ծագումը: Մելիքը,

¹⁾ Վեճի ամրողջ պատմությունը տ. «Ակտы Кавказской Археографической Комиссии», т VI, ч. 1, № 1320.

ասում եր նա, հող եր գնում խաներից, գյուղացիները մշակում ելին այդ հողը և դրա համար վարձ ելին տալիս հողատիրոջ, երանք մնալով պատ իսկ ինչ անել, վոր մելիքությունները հին ելին Ղարաբաղի խանությունից և գյուղերն ել մեծագույն մասամբ հին ելին մելիքություններից:

Շուշու դատարանն ավելի հիմնավոր մի գործ չեր կարող կատարել, քանի վոր նա գեներալ Յերմոլավի ժամանակի դատարանն եր, իսկ Յերմոյովը մի ամբարտավան և ինքնակամ ցարական աստրապ եր, վորի համար զոյսություն ուներ կովկասը ոռւսացներու գաղափարը, իսկ մեացած ամեն ինչը անձնական քմահաճություն եր: Մելիք Բեղլարյաններին համարելով լոկ գյուղերի կառավարիչներ, նա խլում եր Վարանդայի Մելիք Շահնազարյանների գյուղերը, տալիս եր բարեկամ իշխան Մաղարոսին, զարձնելով նրան 1500 գյուղական ծխերի ճորտատեր կալվածատեր ոռւսական վոճով և հավատացնում եր Ալեքսանդր Լ կայսրին, թե այդ բոլոր ծուխերը պատկանելիս են յեղել մի ժամանակ Մադաթովի Նախնիքներին: Այս ցույց եր տալիս, վոր կովկասյան բյուրոկատիան բոլորովին անգետ չեր անցյալի իրականության, նույն իսկ և Մելիք Բեղլարյանների նկատմամբ: Դատարանը վկայում ե, վոր այդ մելիքները «յերկրի սովորությամբ կարող ելին պարզել գյուղացիներին իրեւ մշակների, տալ ծառայության, հարեկերի յենթարկել, պատժել ըստ չափու նրանց հանցանքի»: Մեր առջև նկարվում ե ոռւս կալվածատերը, վոր իր ճորտին բռնի կերպով զինվոր եր տալիս, ծեծում եր, Սիրիք եր ուղարկում առանց դատաստանի: Բայց մեզ ասում են, թե Մելիք Բեղլարյանն, այնուամենայնիվ ճորտատեր չեր, վորովհետեւ նա իրավունք չուներ իր գյուղացուն վհչ ծախեր, վհչ վրավ դնել: Բայց վհրակից գիտենք, վոր այդպես եր: Յեկ այդ ինչ որենք եր, վոր թույլ եր տալիս մարդուն, իրեւ անասունի, առանց նրա կամքը հարցնելու, ընծայել մի ուրիշին, բայց փողով կատարել այդ միենանունը չեր:

Մելիքական ճորտատիրության մի յերկու հետքեր ել ենք պըտել մենք:

1830 թվին չինովնիկ Զոբարեվը նեկայացնում եր կոմս Պառկիլիչին մի տեղեկագիր Ղարաբաղի գյուղացիության հարստահարվող և կեղեգվող դրության մասին և լուսաբանում եր իր նկարագրությունն այսպիսի մի փաստով, Կղարծի գյուղն եր գըտել մենք:

Նում Վարանդայի նայիր (կառավարիչ) Մելիք Խուդադաղը, Մելիք Շահնազարի վորդին: Այստեղ նա իմանում ե, վոր մի գյուղացի ուղում և ամուսնանալ մի այրի կնոջ հետ և արգելում է այդ պսակը, պահանջելով փեսայից 20 չերվոնեց ընծա իր համար և բացի դրանից, կանչում ե իր մոտ հարսին և առաջարկում է նրան պառկել իր հետ: Յեվ յերբ այդ առաջարկություններից վոչ մեկն ել չի կատարվում, կատաղած մելիքը գնում ե յեկեղեցի պսակակատարության ժամանակ և իր ամբողջ թույնը թափում է քահանայի վրա, խելով նրանից գիրքը և հայոյանքներ թափելով¹⁾: Այս մի ճորտային հարսանիքի բոլոր հանգամանքներն ունի: Մելիք Խուդադաղն, անշնչատ, բանեցնում եր իր հոր տանը գործադրված վաղեմի ճորտատիրական իրավունքը և յեթե անում եր այդ բանն այն ժամանակ, յերբ մելիքությունից միայն մի անուն եր մնացել, պատճառն այն եր, վոր նա հարբած եր:

Մրանից ավելի հարուստ ճորտատիրական փաստեր մեզ տալիս և Խաչենի վանական կալվածատիրությունը: Ղարաբաղի վանքապատկան կալվածների ցուցակի մեջ, վոր կազմվել է Շուշու կոնսիստորիայում 1854 թվին, Գանձասարի վանքի անշարժ կայքերի առաջին հողվածն ե՝ «Քառասուն երեք գերգաստանք ըստրկաց, որք բնակին ի գիւղօրէսն Գանձասար և Կնողություն»²⁾: Կոնսիստորական անդրագիտությունը թեև չի կարողացել տարբերություն գտնել «սարուկ» և «ճորտ» բառերի մեջ, բայց այս ըլլուստի շփոթեցնի մնութեալ ճորտատիրական տնտեսությունը տասնյակ դարեր առաջ եր փոխարինել ստրկատիրականը և այժմ խոսք կարող եր լինել միայն ճորտերի մասին: Չպետք ե մեզ շփոթեցնի և այն հանգամանքը, վոր կոնսիստորական «սարուկ» հորջորջութեան առանցք առաջ Գանձասարի ճորտերը թղթերի մեջ կռչվում եյին «Ճառաներ»: Նրանք ունեն իրանց փոքրիկ պատմությունը, վոր ամենափոքր անգամ կատկած չի թողնում նրանց իսկական սոցիալական դրությունը վորոշող անվան վերաբերմամբ:

18-րդ դարի վերջին քառորդում Հյուսիսային Ղարաբաղի հայկական հիմնարկությունները, ինչպես կտևսնենք իր տեղում, յենթարկվում եյին կատարյալ խորտակման: Մելիքները փախչում եյին յերկրից, տանելով իրանց հետ իրանց գյուղացիներին: Փախչում եր և Գանձասարի կաթողիկոսը, վորը թե Հասան Զալարյան տոհմի կալվածատեր եր և թե պետ յերկրի բարձրակույն հոգուր ավատատիրության: Գանձասարն ամայանում եր, նրան

¹⁾ Բայտ Կավ, Արք, Կոմ, թ. VII, № 411.

²⁾ Առու — «Պատմ. Ղար. Թիմ, հոդ, դպր. 2, յեր. 144.

պատկանող գյուղացիները ցրվում եյին. Բայց Ղարաբաղի խանությունը ոռւսաց տիրապետության տակ անցնելուց հետո, Գանձասարի Սարգիս կաթողիկոսը, վոր ապաստանված եր Հախաղատի վանքում, 1808 թվին Ղարաբաղ եր ուղարկում իր յերկու յեղբոր վորդիներին, վորոնցից մեկն եր Բաղրամար վարդապետը (հայումիարոպոլիտ)՝ Գանձասարը վերանորոգելու համար, վորպեսի ինքն ել, փախստական մելիքների նման, վերադառնա հայրենի յերկիրը: Բաղրամարը հաջողությամբ զլուխ ե ըերում այդ հանձնարարությունը, գործադրելով մի միակ միջոց, վոր մասցել եր կաթողիկոսության տրամադրության տակ, այն ե՝ ճորտային աշխատանքը: Գանձակում նա գտնում եր 15 ճորտ ընտանիք, տառում եր իր հետ Գանձասար, այդտեղ ել հավաքում եր գանազան գյուղերում ցրված ճորտերին, և այսպիսով ստեղծում եր տնտեսական մի ուժեղ կուվան՝ քայքայված շինությունները վերականգնելու և նոր տնտեսություն կառուցելու համար: Ղարաբաղի Մեհինութիւնի խանը հրամանագրում եր աշակցություն ցույց տալ Բաղրամար միտրոպոլիտին և ասում եր այդ հրամանագրի մեջ:

«Եւ ապա ամենքն դուք, որ ի նախնումն հպատակը էիք վանիցն Գանձասարու և որ այժմ ցրուեալը էք ի զանազան տեղիս և ի հեռաւոր զիւղորայս, գարձնիք ի հպատակութիւնն ձերոց նախկին կալուածատեաց, բնակենչիք ի մերձակայս յիշեալ վանիցն, ըստ կարգադրութեան Բաղրամարայ վարդապետին և տքնեսնիք ի շինութիւնն նախնի տանն (օճախըն) ձերոյ»¹⁾:

Այս «հպատակների», «ծառաների», «ստրուկների» և պարզապես ճորտերի ծագումն այսպես եր բացատրում Բաղրամար միտրոպոլիտը 1849 թվին իշխան Վորոնցովին գրած իր թղթի մեջ,

«Ի ժամանակս իշխանութեան վաղեմի արքայիցն պարսից վանքն Գանձասարու էր ի ծաղկեալ գրութեան և նոխացեալ էր բաւական արդեամբ ի սրունդ ինքեան և կաթողիկոսունք նորա հանդերձ միաբանութեամբք իւրեանց լին ի բարօրութեան, վասն զի վանքն ունէր ինքեան ի սեպհական ստրուկ զնարիւր յիսուն զերդաստան՝ բնակեալս ի վերայ վանքական հողոյն, ոչ հնաժարկեալս պահանջման իմիք յօդուա տէրութեան և աղատ յամենատեսակ հարկատուութեանց և ի հզատակութեանց, — որք միայն վանիցն հասուցանէին զամենայն սահմանեալս հասատառութեամբք»²⁾:

Այս վանքական ճորտերն եյին: Բայց կային և անձնական սեփականություն կազմող ճորտերը Բաղրամար միտրոպոլիտն ուներ 27 այդպիսի ընտանիք, վորոնք ապրում եյին Գանձասար գյուղում: 1841 թվականին: Բաղրամարը հասած լինելով ծերության հասակին և չկամնալով, վոր իր մահից հետո իր ճորտերն

¹⁾ Գր. Տեր Հովհաննիսյան — «Բաղրամար Միտրոպոլիտ Հասան Զալալյանի համառոտ կենսագրությունը», «Փորձ» ամսագիր, 1880, № V. յեր. 151.

²⁾ Առաջ. Պատ. Ղար. Թիմ. հոգ. զալը. յեր. 107.

ուրիշի սեփականություն գառնան, նվիրում ե նրանց Գանձասարի վանքին: Եջմիածնի Սինողը կարգադրում եր, վոր այդ «ստրուկները» զրվեն Գանձասարի անշարժ կալվածների կարգում և կայացնում եր այսպիսի մի վորոշում:

«Յաղագս-այսպիսի գովանի չերմեանգութեան Մետրոպոլիտին Բաղրամարու առ օգուտն եկեղեցույ և գան հոգունակութեան նորա զրարելաւութենէ յանձնեալ ի տեսչութիւն նորին բարձր սրբազնութեան վանիցն Գանձասարու խնդրել առաջարկութեամբ ի վեհափառ կաթողիկոսէն ամենայն հայոց ներսիսէ առաքել ի դիմաց իւրոց գիւնդակ շնորհակալութեան յանուն նորին բարձր սրբազնութեան և զայսի բարեպաշտ և արժանին լինելոյ օրինակ այլոց նորիսանց Մետրապոլիտին Բաղրամարու, տալ զիտել հրամանօք առ ամենայն վիճակային կոնսիստորիայն հայոց Ռուսաստանի»¹⁾։

Գանձասարի մոտ գտնվող ս. Հակոբի վանքն ուներ յերկու ճորտ ընտանիք: Դրանցից՝ մեկի կազմը մենք քաղել ենք պաշտոնական ցուցակից և դնում ենք այստեղ:

«Զարարա Դանիելյան — կին նորա Թելլու Մարկոսյան. գորդիք նորա Սահակ և Հովհաննես. և գուսար նորա Բաջի. յեղբայր նորա Խաչատուր. կին նորա Մարիամ Գրիգորյան»²⁾։

Այսքանով վերջացնում ենք մեր ապացույցները, վոր Ղարաբաղի մելիքական հողատիրությունն ուներ ճորտատիրական բովանդակություն: Այժմ անցնում ենք մի այլ հարցի — թե ինչ արձագանգներ են միացել ժողովրդական ավանդությունների մեջ մելիքական կառավարության յեղանակից, արձագանգներ, վորոնք ներկայացնում են վոչ միայն այդ լեռնային իշխողներին, այլ և հենց նույն այդ ժողովուրդը, վոր իր հին սովորույթային կարգերի մեջ դրել ու պահպանել եր լեռնային ինքնավարության այդքան ինքնատիպ ձեեր: Ահա, որինակ, ինչ եր, ըստ այդ ավանդությունների, մելիքական զորքը.

«Ամեն մի տուն պարտավորված է յեղել մելիքի պահանջած միջոցին մի զինվոր տալ իսկ յերք դրությունը ծանր եր լինում, զինվում եյին բոլոր զենք կրելու ընդունակ մարդիկ Զինվորն ինքն եր հայթայթում յուր համար զենքեր և ծի, իսկ յեթե նա բոլորովին աղքատ եր լինում, մելիքն եր տալիս Առանձին զինվորական համագնեստ չկար Զինավարության համար հատուկ որեր և ծառայություն չեր նշանակված, բայց կային վորոշյալ հանդեսներ, յերբ յերիտասարդ զինվորները մելիքի և ժողովրդի ներկայությամբ վարժվում եյին հարցանագության և ձիարշավի մեջ: Այսպես, հարսանիքներին ձիարշավներ եյին կազմվում, բացի սրանից, յերբ նորապատճերը յեկեղեցուց վերադառնում եյին նորահարուի տունը, մի բարձր ծառից մի բարձր թելով մի խնձոր եյին քարշ տալիս և մակարներն աշխատում եյին գնտակով վայր զցել ինձորը, և ով հաջողեցնում եր, մի զույգ գուլպա կամ մի այլ ըան նվեր եր ստանում: Մելիքն ինքը ներկա յեր գանգում այս խաղերին Մեծ պատի առաջին որը բոլոր գուու-

¹⁾ Անդ. յեր. 76 — 77.

²⁾ Անդ.

դացիները ձի եյին հեծում և զառով զուրսի առաջնորդությամբ զալիս մելք քին առնում և գնում մի հարթ տեղ ձիարշավի Հետո խմբով շրջում եյին գյուղում նշանավոր տներից վիսնչա (ուտելեղին և զինի) եյին զուրս ըերում նրանց առաջ և հյուրանիբում Կերչը մելիքին տանում եյին իր տունը, անմիջապես մելիքը հրամայում եր իր ծառաներին, զինի տալ ըոլորին և նրանք «մելիքի մին որը հազար»¹⁾ բղավելով՝ խմում եյին և ուրախ, յերջանիկ ցրփում տները

«Զինվորները սոճիկ չեյին ստանում, միայն յեղած ափարք, մելիքի բաժինը վերցնելուց հետո, իրանց մեջ բաժանում եյին Բայց մելիքները մոտ 300 զինվոր միշտ պահում եյին իրանց մոտ վորպիս թիկնապահներ, վորոնց կերպում և թոշակ եյին տալիս Մելիքներն իրանք եյին համարվում զորքերի ընդհանուր հրամանատարը, բայց յուրաքանչյուր խումբ ուներ իր յուրագուն»²⁾։

Այժմ տեսնենք մելիքին ժողովրդական դատավորի դերում

«Գատավարության իրավունքը պատկանում եք մելիքներ և նրա հաստատում տանուտերին³⁾: Մանր հանցանքներն ինքը մելիքն եք քննում, իսկ թեթևները՝ տանուտերերը: Այս վերջիններին վճռից դժգոհ կարող եք բողոքել մելիքին, վորի վճռից վերջնական եր: Ապակայն լինում քյին գեղպեր, վոր մելիքի վճռից դժգոհ հպատակները, նրան թշնամանալով, անցնում եյին թշնամի մելիքի կողմը և կամ դիմում խաներին և զանազան բամբասանքներ և լրտեսություններ անում իրանց մելիքի դիմ: Կատարողական իշխանությունը զարձյալ կենտրոնանում էր տանուտերի և մանավանդ մելիքի ձեռքում: Յերբ մի վճռարձակվեց, տանուտերը նրամայում էր իր զգիրին, իսկ մելիքը իր զանոն կագնած հիսունի չափ ծառաներից մեկին, վոր զատախազի հետ գնա և վճռությունագրեն Վճիռն արձանապրված չեր հանձնվում ծառային, այլ միայն մի թղթի վրա խփված մելիքի կնիքը և կամ նրա համբիչը: Վճուի եյությունը բերանացի բացատրում եյին ծառաներին, նա և՛ զատապարտվածին և իրը հաստատություն իր ասածին՝ ցույց եր տալիս մելիքի կնիքը կամ համբիչը: Թեև մելիքը, ինչպես և տանուտերը, իր զատավարության համար վարձ չեր պահանջում, բայց ծառան պոկում եր ինչքան կարող եր՝ թե մեկ և թե մյուս կողմից Դատավարության համար վորոշ որենքներ կամ որենսպիրը չկային, մելիքները լեկավարվում եյին սովորության իրավունքով և իրանց բարեհայեցողությամբ Դատավարության համար հաստուկ շենք չկար: Դատը տեսնվում եր Մելիքի տան բակում կամ ապարանքի սենյակներից մեկում: Շատ անդամ պատահում եր, վոր մելիքը փողոցում կամ հրավարակում ել զատ եր կտրում նույնականացնելով, վոր մելիքը գործության համար հատուկ որեր: Մելիքը զատ եր կատարում երը ցանկանում եր, բայց առավելապես նա գատի յեր նստում կիրակի որենքը: Երբ գործից ազատ լինելով, ուրիշ գյուղերից ել զալիս եյին զանգատվելու և վարչական գործության համար հատուկ որեր: Ըստ հանրապետության համար կամ ապարանքի սենյակներից մեկում:

¹⁾ Ոսմանցիների շփառիշահը ըին յաշա:

²⁾ б. Լալայան — «Գանձակի գավառ», յեր. 252 — 253.

³⁾ Կազմում եք բավարար հաստատություն։ «Միլիոն Հարամայում մայում լինի ձեզ, Մաղավուգեցոյք, մեծ և փոքր, զոր իմանաք Մելքոն Ձեղ քովիսա շինեցի. պիտի վոր յեսանի խոսկան դյուռ չի կյաք Դարձյալ ջամիյաթ, թէ յեզ նորս յեկիք թէ Մելքոնը մեզ հաջաթ չի, զարուչ չի, դոք եք հայանել շիներ, թիին ՆՄԻՒԾ ինորդվար ամսուն ժիշտ (Կոփ. — Քիթիստոսի ծառա Մելք Աղամա։ (Մակար յեպիսկոպոս Բարիուղարյան — «Արցախ», Բագու, 1895, յեր. 221).

գործ զբուռմ. 1. Եթեկաղցում կամ մի սրբի տաւջ զանգատավորը մի զույգ մոռ
եր վասում և բռնելով մեղադրվածի կռնից, մոտեցնում եր մոմերին, վոր փշի
հանգնի. յեթե հանգներ, անմեղ եր համարվում. 2. Գանգատավորը մի վառ
ածուխ եր տալիս մեղադրվածին և սա, վրան չուր ածելով, ասում եր, «Այս-
պես անցնեմ, թե վոր արել եմ»: Եկրքեմն առաջավոր մարդիկն եյին յերդիւմ
իրանց ստորագրվածների փոխարեն: Ընդհանրապես, յերդիկելը շատ գժվար եր
համարվում և վոչ միայն շատ հազիկ եյին պատահում տուտ յերդիողներ, այլև
յերքեմն հանցանը հանձն եյին առնում, վորակեսզի չերդիւն:

«Մելիքները հետեւալ պատիժներն եյին տալիս» 1. Ծիծ: Առ ամենասովորական և ամենազործածական պատիժն եր: Յերեկն ինքը, մելիքն եր ծեծում, բայց սովորաբար ծառաներին եր հրամայում այս պատիժը գործադրել Շատ անգամ ել պառկեցնում եյին և բարակ ճիպատներով ծեծում, նաև կապում, եյին ծառից և այլպես ծեծում, շատ անգամ ել այդպես կապած յերկու յերեք որ պահում եյին 2. Տուգանք: Տուգանք եյին վերցնում մելիքներն իրենց ոգտին 3. Բանտարկություն: Հատուկ բանտ սկզբներում չկար. մելիքի ախոռը, փայտատունը, իսկ ազնվի ուշ՝ մի վորոշ սենյակ ծառայում եր գորակես բանտ 4. Անվանարկություն: Այս պատժին զլխավորապես յենթարկվում եյին անառակ կանայք, վորոնց եշի վրա նստացնում եյին, եշի պոշը ձեռը տալիս, յերեսին մուր քսում, շրջեցնում եյին գյուղի մեջ: Ազնվի փոքր հանցավորների յերեսին թրիք եյին քսում և գյուղով ման ածում 5. Դամբա խփել: Մերկացնում եյին նստաելին և մելիքի կնիքը խփում: 6. Այրումն: Փակքամիջն կրակի մեջը կարծրացնում եյին և դնում գատապարտվածի գլխին, վոր անմիջապես մնունում երթ Այսպես և պատժել Մելիք Բեզլարը հովիզ Հայովիրդուն: 7. Կախ տալ: Առանձին կախազան չկար. սովորաբար ծառերից եյին կախ տալիս Այսպես Մելիք Արակ ծ-րդը կախ և տվել Փանուանց Հայրապետին Բոլնիսում, վոր չեր ուզում իրան հնագանդվեր 8. Զիու պոչից կապել յեվ քարշ տալ: Այս պատժին յենթարկվում եյին անսարդելի պոռանիկ կանայք: Այսպես, Մելիք Հայսի 1-ը սույն պատժով սպանել և պանիկ Մարիամին»!»

Դիմելով այժմ այն հարցին՝ թե առհասարակ ինչ կուլտուրական արժեք եյին ներկայացնում մելիքությունները, մենք կասենք, վոր արդեն վերևում բացատրել ենք, թե ինչ զրության մեջ եր Լեռնային Ղարաբաղը գուրս յեկել աշխարհաքանզության յերեք դարերից և ասել ենք, վոր այդ զրությունը վայրենացման զրությունն եր, յերբ մի յերկիրը մտանում ե և այն, ինչ գիտեր յերեկ, յերբ նրա շինարարական ընդունակությունն իջնում է մինչև կոպիտ ու հասարակ վորմեազրությունն անտաշ քարերից, յերբ չկան մեծապործություններ արվեստի և արհեստի ըլլագավառում: Մելիքական դարը զրեթե վոչինչ բարելավում չի մտցնում այս զրության մեջ: Յերկիրը մնաց անլույս և զրեթե անզիր: Նույնիսկ հին ձեռագրեր արտադրելը և վանականության վերածնունդը, վոր այնքան նկատելի եյին դարձել Գանձասարի Պետրոս կարողիկոսի ժամանակ, մոռացվեցին և դրական դարգաց-

¹⁾ Յէ. Լալայան. — «Գանձակի գովառ», յեր. 253 — 255.

ման տեսակետից փոքր ի շատեւ նշմարելի բացառություն ե կազմում Յեսայի կարողիկոսը։ Գրադիտությունը, յեթե կար եւ վերածված եր աղքատ ձևերի, վորոնք ծառայում եյին առորեյականության՝ տեղական բարբառի միջոցով։ Յերկիրը գերազանցորեն ավանդություններով, բանավոր զրույցներով ապրող յերկիր երև զրանց մեջ եր պահպանում կապ իր մոտիկ անցյալի հետ։

Մելիքներն անձնապես, իրըև իշխող տարր, ամբոխային զանգվածներից բարձր եյին կանգնած իրանց կենցաղով։ Այսպես ցույց են տալիս նրանց բնակարանները և մանավանդ սրանց մեջ առանձնապես աչքի ընկնող յերկու տները, վորոնք պատկանում եյին Զրաբերդի Մելիք Հարամին և վորոնց ավերակները վկայում են այսոր¹), վոր դրանք խակական ապարանքներ եյին իրանց շրջապատի համեմատությամբ։ Մինչդեռ ամբողջ գյուղական Դարսարադն ապրում եր կիսով չափ հողի մեջ թաղված «դարադամների» (սկ տների) մեջ, այսպես անվանված այն պատճառով, վոր լիքն եյին լինում ծխով. մելիքները գիտեյին ապրել գոնե հողի յերեսին, բազմասենյակ տների մեջ, վորոնք տաքացվում եյին ժողով ի շատե կատարելազործված վառարաններով (բուխարիներով): Մելիք Հաթամի աները վայելուչ և գեղեցիկ եյին նույն իսկ ճարտարապետական տեսակետից, ներկայացնելով տեղ-տեղ նաև սրբատաշ քարերի արվեստը:

Մենք այսոր ի վիճակի յենք մասամբ կենդանացնելու մեջի-քական ապարանքների ավերակները, դնելով նրանց մեջ այն ամենը, ինչ մեկփես տնային արդ ու զարդերի և տնտեսության հարստություններն եյին և այսպիսով հասկացողություն տալ այն ևաշե-ի (պերճանքի) մասին, վոր կար մելիքական դարի հասարակական վերնաշերտերում, աղբյուր ունենալով, անշուշտ իրանք։ Այս հնարավորությունը մեղ տալիս ե Ղարաբաղի ազգեցիկ և ընչափետ մելիքներից մեկի՝ Վարանդայի Մելիք Շահնազար 2-րդի դույքի ցուցակը²⁾:

Նախ և առաջ մի քանի թվանշաններ այս մելիքի յեկամուտներին վերաբերյալ «Միայն սուլանքներից ստացվող յեկամուտը տալիս եր 20 հազար ռուբլի, իսկ «միջի» (ձրի աշխատանքով կատարված) վարու ցանքը և հունձը, վոր անում եյին մելիքի համար՝ 30 հազար ռուբլի։ Խմիչքների հարկերի կապալը (Շուշի բերդում) լիս եր Մելիք Զումեռիկին (Մելիք Շահնազարի վորդուն) 7 հազար ռուբլի։

¹⁾ Ա. յե. Բարխոսւհ. — «Արցակ», յեր. 217, 22:

²⁾ «Фирма Шахназаровых» («Дело Шахназаровых»).

«Մելիք Շահնազարի մահից հետո, նրա վորդի Զումշուղն իր ձեռքն և զը-
ցել հետեւյալ ժառանգական կայքը՝ Առձեսն զբամ բաջախլու (չերվոնեց) զու-
կով՝ 4200, արծաթով՝ 3500 սուրլի. ծախել և ժառանգական ցորեն սովի տա-
րիներում՝ 8000 զիար, ստացել և 360 հազար սուրլի, մուրհակներով հավաքել և
Վարանգայի բնակիչներից 15 հազար սուրլի, աղնվական Զաքար Բուզաղյանից՝
900 սուրլի, Առյի Հյուսեյին խանից 2500, Դարայազի Մուստաֆա խանի վորդի
Թահմադ-Կուլի աղայից՝ 3500 սուրլի. Տնային իրեր, 12 խոնչա, յուրաքանչյուրի
վրա զնում եյին պարսկական արծաթե ամաններ զանազան տեսակի՝ մի մի
դյուքին. 4 սպասի (զինու աման), 3 մեծ մոմակալ պարսկական վոճով, նրանց
հետ և 3 զարանդա (մատուցարան), 2 մեծ պարսկական թեյաման, 2 սուր, վո-
րոնք հին ժամանակներում գնված եյին 300 սուրլով, իսկ հետո զարդարված
եյին 300 մսխալ վոսկով. 1 հատ խարխա (մուշտակ) սև սամուրինուց՝ ծածկված
շամլա կոչված շալերով, նրա վրա պիտի լինի 300 մոխալ վոսկե կոճակներ
(դյուքմա). 3 հատ սամուրի մուշտակ նույնպիսի վոսկե դյուքմաներով, ծածկ-
ված շալերով, սամուրի մի մուշտակ՝ ծածկված, ըստ պարսկական տորազի
աղյուսագույն մահուղով, նոր շալեր զանազան գործաշանների, ինչպես և՝
շարդար, շամլա, գում, փիթ, ութ հատ, մի մեծ մաֆրաշ լիքը թավիշով, դալամ-
բյարով (հնդկական ձոթ) և Յեղդինի զանազան մետաքսե կոտորներով, ութ
մաֆրաշ, լիքը թավրիզի մետաքսե ճոթեկենով. մի սենյակ՝ լիքը սպիտակ բաժ-
րակե կտավով, 12 հատ յորդան-դոշակ, վորոնց յերեսները ծածկված եյին
թավիշով, դալամբյարով և քալակայիներով (մետաքսե ազնիվ շալեր) և վորոնք
պահպատ եյին տան մեջ պատվավոր հյուրերի համար. Շուշու տան մեջ բոլոր
սենյակները զարդարված եյին, ըստ սովորության, խալիներով (գորգերով),
ոմյաւնաք — և չամերավ (թաղիք ուղարի բրդից) Խորասանի գորգերով, կար այդ-
տեղ չինի — ջանը, ըստու եղյա ամաններն տան յերկու խոնչաների վրա, յուրա-
քանչյուրի վրա զնում եյին զանազան տեսակներից տասն երկու հատ. Պղնձե
զանազան ամաններ 100 փութից ավել, մի մեծ չաղիք (վրան) պատով, յերկա-
րությունը 15 և լայնությունը 10 արշին, շինած յերկտակ կտավից և մեջտեղ
շահմաթի ձեռվ զարդարված Սպահանի զանազան բուրմեդներով. Նույն տեսակ
մի ուրիշ վրան, փոքր, յերեք միջին չափի յերկտակ վրաններ, յերկու մուխորի
աղաչուխ (պարսկական թաղիքի վրան), մի դարի-լիովի (դալամուխական վրան),
Գուրանա — ասպար (գութանի գործիքներ) 26, ալաթ — խուփ 60 հատ, յերկաթե
իրեր, ինչպես նիզ, բիբ, թի, կացին, մուրճ, ունելիք, ծովերով յերկաթ և այլ
շատ բաներ, զոր չեն հիշում. Բամբակ 400 լիտր, պարսկական լավ թամբեր՝
իրանց բոլոր պարագաներով՝ 12, արծաթով զարդարված, լավ ատրճանակներ՝ 3,
արծաթապատ, շատ լավ հրացաններ՝ 3. Ամենալավ վորձ ձի 20 հատ, լավ ջորի-
ներ իրանց թամբերով՝ 40, լավ մատակ ձիաներ մորուկներով՝ 100, եշ՝ 60, գո-
մեշ՝ 120, յեղ՝ 60, կովեր իրանց հօրթերով՝ 200, վոչխար և գառն՝ 1000; Քա-
րաշեն տներ. Շուշում յերկու հատ, Ավետարանոց (Զանախչի) պյուղում 3 հատ»¹⁾։

Ահա միջավայրը: Ամբողջովին թանձրացած նախնականու-
թ յուն, լեռ ու ժայռ, աղքատություն ու մանր անջատականու-

¹⁾ Զպետք և մոռանալ, վոր այս Մելիք Շահնազարի ամբողջական գույքը չե, այլ նրա այն մասը, վոր ստացավ նրա ափակ վորդի Մելիք Ջուղաշողը, վոր թեև իրեն ժառանգ ստանում եր հայրական կայքի մեծագույն մասը, բայց ժառանգության մեջ մաս ունեիլն և Մելիք Շահնազարի մյուս վարդինելը, իսկ որպանը սակամավոր չէր իմն:

թյուն, լիքը սահմանային և քմահաճոյական վեճերով ու կոփվաներով, կտրված դաշտից ու ճանտպարհներից, մնկուսացած իր միջանուալ ու լացող ամպերի տակ:

Յեզ ահա Արևելքի այդ մշուշապատ ծոցը, ինքն ել մի ամբողջ միամիտ ու անզրագետ Արևելք ծոցած իր մեջ, գնում եր սաստիկ հետաքրքրություն վառելու Հարավային Գերմանիայի բազմաթիվ իշխանություններից մեկի մեջ, դառնալ քաղաքական ծրագիր, դիվանագիտություն, վորի շուրջը նույն իսկ զինական շարժումներ, արշավանքներ ել եյին հերյուրվում:

Ո՞վ պոկեց Լեռնային Ղարաբաղն իր ամպերի կրծքից և տարավ այդքան հեռու: Մի ույժ կար միայն, վոր ընդունակ եր այդպիսի գործ կատարելու, և այդ՝ առևտրական կապիտալն եր:

Մենք տեսնում ենք, վոր այդ կապիտալը, միացած վաշխառվականի հետ, բավական ուժեղ յերեռություն եր և Լեռնային Ղարաբաղում, իբրև արդյունք սեփական հողին Բայց նա չեր գործողը ներկա դեպքում: Զմոռանանք այն, ինչ արդեն ասել ենք մի անգամ. — հայ առևտրական կապիտալը գաղարում ե իրեն շրջապատող ժողովուրդների կապիտալներին նման լինելուց և ձեռք ե բերում քաղաքական-հասարակական գործոնի ույժ միայն այն ժամանակ, յերբ յենթարկվում ե յեվրոպական կապիտալի ազդեցության: Ուրեմն, պիտի վորոնենք այդպիսի կապիտալ, վորպեսպիտենք Ղարաբաղը Յեվրոպա տեղափոխելու հանելուկը,

Յեզ վորոնում ենք, և գտնում ենք:

Հարավային Ղարաբաղն իր մի ամբողջ գավառով (Արևելք-Մելլի) մտնում ե Արաքսի ձորը, վոր, ինչպես ասել ենք, խոջայական կապիտալի հայրենիքն եր: Ահա, ուրեմն, այն ճանապարհը, վորով Ղարաբաղը պիտի շփվեր Յեվրոպայի հետ: Իսկ թե ժվար պիտի լինելին այդ հաղորդակցությունը մշակողները, պատասխանել կարելի յե մի խոսքով — դափնացիները: Դափնաց այս մի գավառ ե Սյունիքում: Բայց 17-րդ դարում այդ մի անուն եր, վոր ծածկում եր գրեթե ամբողջ Ղարաբաղը: Կաք Մեծ Ղափան, կաք և Փոքր Ղափան: Յեզ ահա Արևելքի խոջաներն իրենց անվանում եյին Արևմուտքում Ղափնացիներ: Այսպես եյին, որինակ, նախույնները վենետիկում, վորոնք 17-րդ դարի կեսից խոշոր առևտրական տուն ունեյին այնտեղ¹⁾: Յեզ միջազգային առևտրական շուկայում մենակ սբանք չեյին, վոր ներկայացնում եյին դափնացիներին:

1) Հ. Ալիշան — «Արևական», Վենետիկ, 1893, յեր. 300 — 301.

Մենք նորից պիտի վերադառնանք հայագետ Շրոդերին՝ Յեղազայում արևատուր անող հայ խոջաներին բնորոշելու համար քաղաքական տեսակետից: Նրա ջուղայեցի Սաֆարը, վոր խռակցություն ուներ ֆրանսիացու հետ, ասում ե.

«Մեղ ինչ պետք ա թագավորաց կովի վերա խոսիլ. ասացի մեր յերկիրը խաղաղություն այ Յեղ հետո. «Ռուդորդ ա, մեր ազգն հասր ել գինչ ա քանց մեր թագավորաց վախտին, զարա կոիվ չի դնալ ու ամեն ազգի հետ ազատ եղումուա ունի»²⁾:

Ահա և մի խոջայական խնջույք: Մեկն ասում ե.

«Յես Ֆրանկատան մինքանի տեղ ասել եմ, թե մեզ մոտ արտօն բարաթ խաղող կա. իսկի ուղել չեն հավատալ. կասեն թե դուք մին անկիրթ ազգ եք, ձեր խոսքին թամալ չկա. — Աջար չե ափեր, զարա ինչպես ել ենդունց մինն ասելա. եսոր հային վոչ թուր ունի վոչ գրիչ, խարբագելու վախտ աշու Յեզ ահա ինչ պատասխան ե տրվում դրան.

«Թող ինչ կուզեն՝ ասեն, ինչպես վոր Աստված զմեղ ստեղծել ա, ենհենց հնք. վոչ ենդունք գիտեն զմեղ փոխել՝ վոչ մեզ հաջոկի ա ենդունց դարշու խոսիլ»³⁾:

Վաճառական գասակարգի ամենաորինավոր ցանկություններ և իդեալներ: Հային հարկավոր ել չե սեփական թագավոր. յեթե ունենա այդպիսի բան, պիտի պատերազմի զնա, մինչեռ աշխատ կովի չի գնում և ազատ առևտուր ե անում բոլոր ազգերի հետ: Հային համարում են անկիրթ ազգ և դրա համար իլ նշանակություն չեն առաջին սրա խոսքին: Հայց, ասում են, վոչ թուր ունի, վոչ գրիչ, ուրեմն և կարելի յե նրան հարստահարել: Ինչ ուզում են, թող ասեն, պատասխանում ե հայ խոջան — մենք այսպես ենք ստեղծված և վոչվոք չի կարող մեզ փոխել:

Այս, կարելի յե ասել, հասարակական կարծիք ե, շահի և կապիտալի հաստատած մտայնություն: Այսպես ե հայ խոջայական զանգվածը յեվրոպական վաճառանոցներում: Յեվրոպական կապիտալից նա վերցնում եր շահ, պերճանք, փարթամություն: Իսկ մտքով ու հոգով անընաբարելի խոջա: Բայց այսպես եր, քանի վոր կաք, արտօնված ու փայփայված եր խոջայական կապիտալի հայրենիք Զուղան: Այս բացառիկ գրությունը, սակայն, յերկար չտևեց: 17-րդ դարի յերկրորդ կեսում հետզհետե սկսվում են պարսից կառավարության ճնշումները, Զուղայում: Հետզհետե բացվում եր կառավարության նոր ուղղությունը — վոչ թե պաշտպանել խոջայական առևտրարել, այլ հարստահարել ու կողոպատել նրան: Այս ուղղության հետ սաստկանում եյին և կրոնական

1) Շրոդեր — «Գանձ Արևմետան լեզուին», յեր. 338 — 339.

2) Անդ. յեր. 361 — 362.

հալածանքները: Խոջայության մեջ մտնում եր անբավականություն պարսից կառավարության դեմ: Ահա այս հողի վրա ել հետդիետե խոջայական կապիտալի սեջ արտահայտվել ե սկսվում յեվրոպական մտքից ազգված քաղաքական անբավականություն, վոր և մզվում եր գեղի այնպիսի ուղղություն, վոր իր եյությամբ պիտի սարսափեցներ Շրողերի Սաֆարին ել, մյուս բարեմիտ և ինքնազո՞ն խոջաներին ել:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ՀՐԵՆՈՍՅԱՆ ՀԱՅ ԹԱԳԱՎՈՐԱՑՈՒՆ

1.

Տասնյոթերորդ դարի վերջին տասնամյակում, Լուի 14-րդի արքունիքին մոտ, Փարիզում կամ Վերսայլում, մի հայ մարդ բաց եր արել պերճանքի մի խանութ և իր առևարի այս ճյուղի ողոնությամբ վոչ միայն ծանոթություններ եր կապել պալատական ազգեցիկ պաշտօնյաների հետ, այլ և հույս ուներ, նրանց միջոցով, ունկնդրության շնորհ ստանալ նույն ինքն «արեթագավորից»:

Այս մարդն իրեն անվանում եր Խարայի Որի կամ Ոռի: Ասում եր, թե ունի նշանավոր ազնվական ծագում՝ հայ իշխանական մի տոհմիո, թե ինքը մեկն եր այն աշխարհական պատգամավորներից, վորոնք եջմիածնի գաղտնի ժողովի կողմից ուղարկվեցին Արևմուտք Հակոբ կաթողիկոսի հետ, բայց նրա մահից հետո չեր վերադաբել տուն, այլ յեկել եր Յեվրոպա և այժմ ուղում եր կենդանացնել Լուի 14-րդի միջոցով այն գործը, վոր ծրագրել եր եջմիածնի ժողովը, այն և Հայաստանի ազատությունը: Այս խոսքերը կարող եյին թվալ Փրանսիական արքունքի մարդկանց լոկ խանութպանի խոսքեր: Բայց պատմական պատհականությունը, այն, ինչ հայերեն լեզուն այնքան միամիտ բառակազմությամբ անվանում ե ճակատագիր, այս իսկ պերճանքի խանութպանի համար վորոշել եր խոշոր քաղաքական դեր, վորի մանրամասնություններն արդեն գրաված ունեն մի ամրող գրականություն:

Հատկանշական հանգամանք ե, վոր Որիի մասին խոսող հայկական աղբյուրներ չկան այդ գրականության մեջ: Յեվ յեթե նա այսոր ունի իր ընդարձակ պատմությունը, այս միայն շնոր-

հիմ ոտար դիվանագիտական արխիվների: Յեթե այս արխիվները պրալտողներ չինեցին, այսոր եւ անշուշտ, անհայտ կմնար այդ մարդն իրանով սկսված այն մեծ քաղաքական շարժման հետ, վոր մտցնում է հայոց պատմությունը նոր շրջանի մեջ:

Առաջին անգամ Որիի մասին բավական մանրամասն խոսել եւ ուսւ հայտնի պատմաբան Սերգեյ Սոլովիևը, պատմելով Պետրոս մեծի հարաբերությունները նրա հետ¹⁾: Նրա ամրող այս հատվածը հարազատ վերարտադրություն և արխիվային նյութերի և նույնպես ճշությամբ փոխադրել է հայերենի Այլեանդր Յերիցյանն իր «Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկողկառում առաջարկում առաջարկության առաջին իսկ գիլում²⁾», իսկ այստեղից ել անցնում եր Րաֆֆիի «Էտամսայի մելիբուրյուններ»-ի մեջ³⁾:

Սակայն ուսւական արխիվները պահել եյին միայն այն տեղեկությունները, վորոնք վերաբերվում եյին Որիի գործունեյության Ռուսաստանում, իսկ թե ինչ եր յեղել դրանից առաջ, վոչ վոք չգիտեր: Առաջին անգամ անհայտության քողն Որիի կյանքի նախառուսական շրջանի վրայից վերցնողն յեղավ Մյունիսենի համալսարանի պրոֆեսոր Հեյգելը, վոր Մյունիսենի պետական արխիվում կատարած իր ուսումնասիրությունների միջոցին գրտավ մի շարք վավերագրեր Որիի մասին և իր ուսումնասիրությունն այս մասին հրատարակեց Մյունիսենի գիտությունների ակադեմիայի ամսագրում 1893 թվականին: Այդ հոգվածի հայերեն թարգմանությունը հրատարակվեց հետեյալ 1894 թվին⁴⁾: Զորս թե հինգ տարի անցած ֆրանսիացի Մուխ Մյունին տվեց շվեյցարական մի հայտնի ամսագրի մեջ պրոֆեսոր Հեյգելի նույն ուսումնասիրության ֆրանսերեն կոմպիլացիան իր հապավումներով և հավելումներով⁵⁾: Այսպիսով Որիի կյանքի և գործի ուսումնասիրության համար առաջնակարգ աղբյուր հանդիսանում ե պրոֆեսոր Հեյգելը, վորի արժեքավոր լուսարանությունները Որիի արտասահմանյան կյանքի և պարապմունքների մասին միակն են, չփերազանցված վոչ վորից:

Հեյգելի համառոտ ուսումնասիրությունից հինգ տարի անցած, 1898 թվին, Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի հրա-

տարակությամբ, լույս տեսավ հայտնի հայ լուսավոչական ազգասենը և ցարական բյուրոկրատ Կարապետ Յեղյանի մի ստվարահատոր գործը, վոր վերաբերվում է այն հարաբերություններին, վորոնք տեղի յեն ունեցել ուսւաց կառավարության և հայ ժողովրդի մեջ Պետրոս մեծի ժամանակից մինչև 18-րդ դարի վերջը¹⁾: Աշխատությունը բաղկացած է յերկու մասից: Գնահատելի մասը, վոր և մեծագույնն ե հատորի մեջ, կազմում է արխիվային վավերագրերի հարուստ ժողովածուն, ուր հավաքված են նաև իսրայել Որիին վերաբերյալ այն թղթերի մեծագույն մասը, վորոնք պահպում են թե Մյունիսենի և թե Մուկվայի պետական արխիվներում: Այս մասից առաջ դրված է Յեղյանի մի շատ ընդարձակ ուսումնասիրությունը, վոր պիտի լինի հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը: բայց այստեղ լուսաբանությունները մեծագույն մասամբ անպետք են՝ նախ իրեն բյուրության աշխարհայացքի պատվներ, և յերկրորդ՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր Յեղյանը հնարավոր է համարել հրատարակել միայն այն տեղեկությունները և վավերագրերը, վորոնք ներկայացնում են Որիին իրեն մի ազնվական գործիչ, վոր թե անշահասեր և և շիտակ, բայց մանավանդ իդեալիստ-ազգասեր: Այսպես, միայն պրոֆեսոր Հեյգելից ենք մենք իմանում, վոր Որին յեղել ե վաճառական:

Համենայն դեպս, գործը ներկայացվում էր շատ լայն ու մեծ չափերի մեջ: Որին դառնում էր շափազանց խոշոր պատմական փաստ և նրանով զբաղվում եյին շատերը, զեկավար ունենալով վավերագրերը՝ հանդերձ Յեղյանի ազգասիրական լուսաբանություններով²⁾:

Բայց այստեղ ել կրկնվեց այն, ինչ արդեն տեղի յեր ունեցել հին հայոց պատմության վերաբերմամբ: Վավերագրերի մասին վոչ մի կասկած չկար, ամենքը հավատում եյին նրանց և ընդունում նրանց իրեն անխարդախ և զուտ ճշմարտություններ: բայց ահա Որիի վերաբերմամբ հանդես յեկավ այն քայլքայիչ քննադատությունը, վոր քարի վրա քար չեր թողել Մովսես Խորենացու գործի մեջ: Այս քայլքայիչ քննադատությունը մըտցնում էր Որիի թղթերի մեջ Աշոտ Հովհաննիսյանը, վոր արդեն մի ամրող ուսումնասիրությունուներ Որիի մասին գերմաներեն

1) Головьев — „История России“ т. 18, М. 1868.

2) «Фурд» հանդես, 1877 — 1878, № 1, յեր. 368 — 372.

3) Թիֆլիս, 1882, յեր. 28 — 32

4) Լ. Բարայմ — «Պրոֆեսոր Հեյգելը և մի հատված հայոց պատմություն» («Արձագանք» Լ. ադբ. Թիֆլիս 1-94 № 75).

5) Թարգմանված ե Լանգոնի «Եոր կյանք» թերթի մեջ 1898 թ.

լեզով¹⁾ և հետո միայն անհրաժեշտություն եր համարել նուրբ և մանրազննին վերլուծության յենթարկել Մոսկվայի արխիվում պահպատճեց թղթերը հարազատության տեսակետից և գտնում եր մի շարք կեղծարարություններ, վորոնք վոչնչացնում են Որիի բարոյական հեղինակությունը և բոլորովին այլ լուսավորության մեջ են դնում նրա գործը²⁾:

Զնայած, վոր Իսրայել Որիի մասին շատ եւ գրված, մինչև որս՝ դեռ չի հայտնագործված նրա ծննդավայրը: Ինքն Որին վոչ մի տեղ և վոչ մի անգամ չի տվել իր գյուղի անունը, թեև առիթ եւ ունեցել շատ անգամ խոսելու — իր տոհմի մասին, մինչև իսկ մանրամասն նկարագրել եւ իր հոր տուն գնալը, իր քրոջ ու յեղբայրների հետ տեսնվելը: Ուր եր կատարվում այս բոլորը — ճշորեն հայտնի չեւ: Գիտենք միայն, վոր Որիի գյուղը Եջմիածնից հեռու չեր, հեռու չեր նաև Անգեղակոթ գյուղից, վոր արդեն Հարավային Ղարաբաղին և պատկանում: Բաֆֆին անվանում և Որիին «Հնդկաստանցի հայ»³⁾: Այս պարզապես բանաստեղծություն եւ: Շատ բան չի պարզում և Որիի ժամանակակից յեղվիտ միսիոնար Կրուսինսկին, վոր գտնվում եր Սպահանում և զրելով Որիի մասին, անվանում եր նրան Կապանի⁴⁾, այսինքն՝ Ղափանցի: Գիտենք արդեն, վոր Ղափան անվան տակ այդ ժամանակ հասկացվում եր ամբողջ Ղարաբաղը, ուրեմն այս խոսքով վոչ գալառ կարելի յեւ գտնել, վոչ գյուղ:

Բայց մեզ թվում եւ, թե հանելուկը անլուծելի չեւ, և լուծման թելը մեր ձեռքն եւ տալիս ինքն Որին այնուեղ, ուր, խոսելով Նախիջևանի մասին, ասում եւ, թե այդտեղի խանն իրանց տոհմի մահացու թշնամին եւ հալածում են նրա անդամներին⁵⁾: Նշանակում եւ, թե Որիի հայրական տունը, վոր և ծննդավայրը, գըտնվում եր Նախիջևանի խանության մեջ, Դեպի այստեղ եւ տանում մեզ և Որիի տոհմային ծագումը: Նա շարունակ պնդում եւ, թե իրանց տոհմի նախահայրը հոչակավոր Պոռած իշխանն եր: Մոռիս Մյուլեն սաստիկ կասկած և հայտնում Որիի ազնվական ծագման մասին, բայց առանց փաստի, և մենք չենք հասկանում թե ի՞նչը պիտի արգելեր, վոր Որին լիներ Պոռած իշխանի հետա-

1) Aschot Johannisiān „Ysrael Ory und die arménische Freiung“ (e. 1913).

2) Աշոտ Հովհաննիսյան — «Հայութաւոր որիենտացիայի ծագման խնդիրը», Եջմիածին, 1921.

3) «Խամսայի Միլիքություններ». յեր. 27.

4) Histoire de la dernière révolte de Perse, La Haye, 1728 t. I, p. 215.

5) Esoj, c. 3.

վոր թոռներից մեկը, միթե այն միայն, վոր նա վաճառական եր: Բայց մենք շարունակ տեսանք, վոր հայ ազնվականն ինքն եւ վաճառական եր և նրա համար սովորական եր կալվածատեր բարոնից դառնալ վաճառական պարոն:

Արդ՝ վոչ մի հիմք չկա չընդունելու Որիի ծագումը Պոռած իշխանից: Հայտնի յեւ, վոր այս Պոռած Խաչենի իշխաններից եր, Խաղբակյան տոհմից, վոր տիրում եր Գանձասարից դեպի հարավ տարածված լեռնաստանին (Հավատուել և այլն): 13-րդ դարում, թաթարների ժամանակ, Խաղբակյաններն իրանց հավատարիտ ծառայությամբ յերկրի այդ նոր տերերին, ազգեցիկ դեր եյին կատարում, և Վաստի իշխանը իր տիրապետության տակ եր առնում Վայոց Չորի (Դարալագյաղի) մի մասը, այլտեղից մըտնում եր Բջնի և կառուցանում եր Կեչառուքի գեղեցիկ վանքը: Նրա վորդին Պոռած եր, իր քաջություններով հոչակավոր զորավար, վորից ինչպիս ասում է ժամանակագիրը, զողում եյին թըշնամիները: Սա շինեց Գեղարդի վիմափոր վանքը, բայց ինքը թաղվեց վոչ թե այդտեղ, այլ Կեչառուքի վանքում: Իսկ տոհմային կալվածները, ընդլայնվելով, գուրս եյին գալիս Դարալագյաղի սահմանից և տարածվում եյին հարեան ձահուեկ գավառի Շահապոնք գավառակը: Այս ել դառնում եր, Պոռածյան տոհմի ընակավայրը¹⁾: Մեծ աշխարհաքանդության դարերը, ինչպես տեսանք, մանրացրին ամեն ինչ: Մանրացավ և Պոռածյան տոհմը: Որիի հայրը մելիք եր, փոքրիկներից, կոչվում եր Իսրայել և Որին ինքն ել խոստովանում եր, թե գյուղում իր ունեցածը մանը կալվածներ են²⁾:

Արդ՝ ընդունելով Շահապոնք ավանը կամ նրա մերձակա մի այլ գյուղ իրը ծննդավայր Որիի, մենք զրա հետ ձեռք ենք բերում և յերկու կարեւոր իրողություններ, վորոնք կարող են բացատրել այդ մարդու կյանքի մի քանի հանգանաքները: Առաջինն այն եւ, վոր 17-րդ դարում Շահապոնքը հայ կաթոլիկների կամ ունիթորների գլխավոր կենտրոններից մեկն եր, և ամենայն հավանականությամբ ինքն Որին ել մեկն եր այդ ունիթորներից և հենց այս հանդամանքի հետևանքով եր, վոր մտավ Հակոբ կաթողիկոսի պատվիրակության մեջ՝ Հռոմ գնալու համար: Նույն այս հանդամանքով և բացատրվում և այն համառ անվըստանությունը, վորով հայ լուսավորչական բարձր հոգեվորակա-

1) Ալիշան — «Միսական» յեր. 479, 481. — 42. և նույնի «Այրարատ», Արեգական Հինգ գաւառի նկարագություն:

2) ԷՅՕՅ. c. 193.

նությունը վերաբերվում եր Որին իր յերկու գլխավոր կենտրոններում — Եջմիածնում և Գանձասարում։ Մեր յենթադրությունը լիովին ապացույց ե գանում Որիի գործունեցության մեջ, վոր նա ունեցավ Գանձասարում։ Այստեղ, ինչպես ինքն ե պատմում, նա, հանդիպելով համառ դիմադրության կաթոլիկությունն ընդունելու դեմ, սկսում ե մի յերկար վիճարանություն ուղղափառության մասին՝ ցույց տալու համար, թե լուսավորչականերն են խոտորվել ուղիղ հավատից, թե, ուրիշն, նրանք պիտի հպատակվեն Հռոմին և այնու Այս ապացույցները հաստատելու համար նա բերում եր վկայություններ հին գրքերից¹⁾։ Հայունի յեսակայն, վոր Որին բոլորովին անվարժ եր հայերենի գրագիտության մեջ։ Ուրեմն, նրա այս վիճաբանական կարողությունը կարող եր հետեվանք լինել ունիթորական դաստիարակության, վոր լինիւթյուն եր կատաղի կրոնական վիճաբանություններով լուսավորչականների գեմ, մի դաստիարակության, վոր միայն դպրոցներում չեր տարվում, այլ և հրապարակորեն, քարոզությունների միջոցով և վոր, անշուշտ, աեղի յեր ունենում Որիի ընտանիքում՝ նրա մանկության և յերիտասարդության շրջանում։

Յերկրորդ իրողությունը, վոր մենք հիշատակեցինք, այն եր, վոր Շահապոնքը 17-րդ դարում նույնպես կազմում եր խոջա- տական կապիտալի յերկրներից, և մենք ունենք Վենետիկում հի- շատակություններ թողած յերկու շահապոնցի վաճառականների²). բայց անշուշտ, յեղել են և այնպիսիները, վորոնք հիշատակներ չեն թողել, ի՞նչ կարող եր անել Որին, մի մանր կարվածամեր, յեթե Հակոբ կաթողիկոսի մահից հետո չուզեց վերագառնալ իր գյուղը՝ Յեղյանն ասում ե, թէ նա Կ. Պոլսից հայ վաճառական- ների հետ գնաց Վենետիկ³): Այդ մի ուղիղ ճանապարհ եր նրա համար: Յեվ այստեղ ել ու Մարկոսի մայրաքաղաքում, հայրե- նակից և այլ շահապոնցի, ղափանցի խոջաների շրջանում, տեղի ունեցավ և նրա գոյափոխությունը՝ մելիք զաղեյից խոջա: Թէ ժուր և բնաշպան գոյացավ կապիտալի կուտակումը այդ խոջայի գըպանի մեջ, մենք չգիտենք, բայց փաստը ակներև ե — Որին՝ պերճանքի վաճառական, մրանսիայի «Արև-թագավորի» ամենա- շուայլ արքունիքի ուշադրությունը գրավելու չափ խօշաբ:

1) Эзов, с. 54.

²⁾ «Ախական», յեր. 482.

3) Эзов, с. XX.

Միանգամայն հասկանալի յե դառնում, թե ինչու իսրայել
Արին Վերսայլի պալատի վոտքն եր գնացել անմիջապես։ Լուի
14-րդը շատ լավ եր ճանաչում Նախիջևանի խանության մեջ
ապրող հայ ունիթորներին, շատ սիրաշահել ու փայփայել եր
նրանց իր հովանավորությամբ։

Որին՝ մեկն այդ ունիթողներից, զուցե անզուգականն իսկ նրանց մեջ իր նշանավոր տոհմային ծագումով, անշուշտ իրավունք ուներ կարծելու, թե կուին կը նդունի և ուշադրությամբ կլսե իրան։ Յեթե իր տոհմային արժանիքների մեջ չափազանց սովորական բաներ պիտի համարվեյին նախնիքների քաջության դեպքերը, կար Պոռշյան տոհմին պատկանող մի գրեթե բացառիկ վերք, վոր սրբազն, նվիրական նշանակություն ուներ — նահատակություն քրիստոնեական հավատի համար։ Յեվ Որին արծարծում եր այդ տոհմային նվիրական պարծանքն ամեն տեղ, ուր պիտի ներկայացներ իրան։ Նա ասում է, թե Պոռշյանի հաջորդներից յերեքը նահատակվել են հավատի համար, և այդ հատկությունը քերում հասցնում եր մինչև իր հորը, ասելով, թե «իր հայրն իսկ, Մելիք Իսրայել, թունավորվել ե Պարսիկ ծեսերուն համաձայն կրակը պաշտել մերժելուն համար¹»), մի քան, վոր արդեն կատրյալ յեղերգվաքաղ եր և յեթե կարող եր վորեւե ապացույց դառնալ, այդ միայն այն բանի, վոր այս խոջան, իրան լաողների անգիտությունը շահագործելու համցը, ընդունակ եր հնարելու ամենաաղաղակող ստություններ։

Այս միայն խոջայական հատկություն չեր, այլ նույնիսկ առավելի մեծ չափերով տված եր և դիվանագեաներին, Յեվ Որին մէացնում եր իր մեջ խոջային և դիվանագեանին։ Վերջին արվեստի մեջ նա նույնիսկ մեծ ճարպիկություններ եր ցույց տալիս, քան վաճառականության մեջ։ Նստած իր խանութում, նա հերյուրում եր դիվանագիտական հնարավորություններ, թե ինչպես կարելի կլինի իրագործել արդեն Հայաստանում (գլխավորապես Եղմիածնում) արծարծված հիմնական գաղափարը, այն եւ անկախ թագավորության վերածել լեռնային Ղարաբաղի մասը կալվածատիրական կամ մելիքական ցանցը։ Յեկ արդեն կազմել եր իր ծրագիրը, այժմ ել աշխատում եր մտցնելայն կյանքի մեջ և հենց այս ակնկալությամբ ել ուղղել եր իր հայացքը դեպի Լուկ Հարդի ոսկեճանանչ արքունիքը։

1) $\overline{U_{nnk}} \neq \overline{U_{jnnk}}$

Այսպիսով յերեան եր գալիս մի ամբողջ դիվանագիտական ընդունակություն խոջայի արտաքինի տակը Պետք և հենց այս գըլ-խից բնօրոշել այդ՝ հայկական չափանիշով՝ արտակարդ ընդունակությունը նրա մի քանի առանձնահատկությունների միջոցով։ Խոջայական կապիտալն Արևմտյան Յեւլոպայում առանձնապես գործն ու ծավալուն եր 17-րդ դարի յերկրորդ կեսում, ինչպես այս պարզ ցուցադրում և այդ ժամանակ արագորեն իրեն մշակութային յերկույթ ուռուցած հայկական տպագրությունը, և այդ կապիտալից դուրս հաղիվ թե կարելի լինի գտնել մի այլ միջավայր, վոր դաստիարակած ու սնուցած լինի Որիին իրեն գործիչի։ Յեվ իր ժրությամբ, շարժունությամբ, ճարպիկությամբ, համառ ու չարքաշ տոկունությամբ նա մերկացնում եր ամենից տուաջ հարազատ խոջայական բնութագծեր։ Պարագմունքը հայթայթում եր նրան այսպիսի գործնական գիտելիքներ, վորոնք գետեղում եյին նրան խոջայական դասակարգի այն վերնաշերտում, վորին մենք ավինք «ինաելիունուտ» անունը։

Սակայն, Որիի ինտելիգենտությունը շատ բնորոշ ինքնատը պություն ուներ, նրա ամբողջ մտային կարողությունը բանավոր եր, խոսակցական։ Նրա ընդունակությունը լեզուներ սովորելու մեջ շատ զարդացած եր, և «նա տեղյակ եր խոտելիքն, ֆրանսերեն, գերմաներեն, մասսամբ նույն խակ լատիներեն լեզուներին», բայց մենք չունենք և վոչ մի հատ գրություն վորեն լեզվով (անգամ հայերեն), վոր նրա շարադրությունը լինի, թեև բազմաթիվ են նրա անունն ու ստորագրությունը կրող դիվանագիտական թղթերը կա ավելին։ Որիի գրությունները քննական վերլուծման յենթարկած հետախուզող Աշոտ Հովհաննիսյանը յեկել և այսպիսի յեղքակացության։ «Յեղքակացնում ենք այսպիսով, վոր Ռեինինքը նույնիսկ հայերեն չեր գրում։ 1711 թվին Պարսկաստանից Մոսկվա ուղարկված այն հայերեն թղթերը, վոր համապատասխանում են Յեղյանի Ն. 167—69-ին, նրա ձեռքով չեն գրված։ Վոչ մի նմանություն այդ թղթերի կանոնագոր նոտարագրերի և «Իզրել Ռոբ» մակագրության անփորձ ձեռքի միջև¹⁾։ Դուրս և գալիս, ուրեմն, վոր Որին հաղիվ կարողանում եր իր ստորագրությունը ճանկուտել հայերեն տառերով։ Այսպիսի խոջաներ լինում են շատ, բայց հետաքրքրականն այն ե, վոր այդ խոջայական պակասություններն Որիին, ըստ յերեվույթին, չեյին խանդարում լինել ճարպիկ դիվանագիտական գործիչ։ Իր բազմաթիվ

¹⁾ Աշոտ Հովհաննիսյան — «Հայության որբենատացիայի ծագման խնդիրը» Եջմիածին, 1921, յեր. 31—32.

թղթերը գրված են զանազան (լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, ուռուսերեն, հայերեն) լեզուներով, և ինքը բոլոր այս ղեապերում մնում եր թելադրող միայն, հետեւաբար ինչքան լավ հիշողության տեր պիտի լիներ նա՝ տարիների ընթացքում միանման զիծ տանելու համար, առանց խոչըր վրիալումների։

Անա ինչ տեսակ գործիչ եր հանել իր միջից հայ խոջայական կապիտալը։ Թե վորքան անզուգական եյին նրա մեջ բունավորված դիվանագիտական ընդունակությունները — մենք այս կրտեսնենք առջևում։ Յերեսույթը աչք գրավող և մանավանդ այն կողմից, վոր հայ ժողովրդի համար քաղաքական ճակատագիր գարբնելու վրա աշխատողն այլևս մի կաթողիկոս չեր կամ յեպիսկոպոս, այլ մի աշխարհական մարդ։ Որին, ճիշտ և, առաջին որինակը չեր։ Հետաքրքրական ե, վոր նրանից առաջ նույն դիվանմատիական ճանապարհը բռնողն ել, Պետիկը, նույնպես Նախիջևանի հայ ունիթորպական միջավայրից եր գուրս յեկել, բայց նրա մասին մենք զբեթե վոչինչ չգիտենք։ Յեվ ահա այստեղ մի հետաքրքրական հարց և ծագում — ինչ տարբերություն կարելի յե գտնել, համեմատական չափով, Հայաստանի ազատության համար աշխատաղ հոգեվորական և աշխարհական դիվանագետների մեջ։

Տարբերություններ կարող եյին լինել ձեւերի, գործելակերպի տեսակների մեջ։ Բայց հիմնականի մեջ՝ վոչինչ տարբերություն։ Յերկուսն ել իրարից շորերով զանազանվող հարազատ զավակներ եյին — արյունն արյունից և վոսկը վոսկրից — մինչույն հոր — հայ կեղերական դիվանագիտության, վորի հիմքերը մնում եյին անսասան չորրորդ դարից — դիմում ոտար պետական ույժին աղերսողի դիրքով, հանուն քրիստոնեյության, զինված լոկ տանջվողի իրավունքով։ Այսպես եր մինչև Որին, այսպես կարող եր լինել ինքը, Որին, և այսպես ել պիտի լինելին Որիից հետո յեկող բոլոր հայ դիվանագետները։

Որին իրեւ մասնավոր անհատ չեր գործում, այլ իրեն ներկայացուցիչ Եջմիածնի ժողովի, վորի վրայով այնքան տարիներ եյին անցել։ Հասկանալի յե, վոր նրա պաշտոնական լիազորությունները միանգամայն անբավարար պիտի համարվեյին։ Բայց և այսպես, նա աշխատում եր գոնե իմանալ, թե հող կմ հայերի այն ակնկալությունների տակ, վորոնք զբված եյին Յեղյավայի միջամտության վրա։ Այս պիտի լիներ առաջին քայլը, բայց հենց այս առաջին քայլն ել խոչըրզոտի յեր զարնվում Ֆրանսիայում։ Մոռիս Մյոււեն գրում ե.

«Որին արքունիքին մոտիկը հաստատվեցավ, Փարիզ կամ Վերսայը, և սկսակ ամեն տեսակ պերճաների տառարկաներու առուտուրը ընել Այս կերպով հարաբերության մտավ մեծ թագավորը շըջապատող պարագաներու և պաշտոնականներու հետ Հույսը անոնց վրա դրած եր իրեն ունկնդրություն մը ձեռք բերելու համար: Բայց իր ըոլոր փորձերը ի գերեւ յելան: Մեկ քանի տարի ամբողջ համար միշտ ճամբու դրվելով, առանց բնավ վճատելու, Վերջիներջու սակայն հոգնեցավ և Ֆրանսիային մեկնեցավ, վոտքերուն փոշին թոթվերով անոր հողին վրա: Ժամանակի պատմագիրներուն մեջ իզուր լուսաբանություններ փնտաեցինք՝ Ֆրանսիայի մեջ Որին պատվիրակության մասին: Չենք վխաեր թե այն թագավորը — կամ գոնե իր նախարարները — ինչու արհամարհեցին Հայաստանի իշխաններուն դեսպանը»:

Հեղինակը զանազան յենթադրություններ և անում այս առթիվ, վորոնցից զիսավորն այն ե, թե Լուի 14-րդը ատում և հայրին այն պատճառով, վոր նրանք համառ կերպով կարած եյին իրենց յեկեղեցուն և չեյին ուղում կաթոլիկանար Բայց յեթե այդ միներ պատճառը, Որին, ընդհակառակը, պիտի դրավեր «արևթագավորի» առանձին ուշադրությունը, քանի վոր ներկայացնում եր Հակոբ կաթողիկոսի միությունը հայ ունիթորների հետ, մի միություն, վոր Հայաստանում գործող կաթոլիկ պրոպագանդի մեծագույն հաղթանակն եր համարվում: Պատճառն, ուրեմն, այդ չեր Իրական պատճառն այն եր, վոր այդ ժամանակ, ինչպիս գիտենք, Հնդկաստանում և Պարսկաստանում Փրանսիական առևտրական կապիտալի դեմ մըցող անգլո-հոլլանդական առևտրական կապիտալին միացած եր և հայ խոջայական կապիտալը: Այսպիսով հայերը գտնվում եյին այն բանակի մեջ, վորի գեմ Ֆրանսիան վաճառական պատերազմները պիտի մի ամրող դարձում եր իրական արշավական առաջարկան անդամանությունը միացած էր առաջի քայլաքական անցուղարձերից խրատ վերցրած պիտի լիներ, թե իսկապես Լուի 14-րդից իրական սպասելիք ունենալ չեկարելի: Վորքան և Ֆրանսիայի «արևել» աղմուկ հանած լիներ իր խաչակրական արշավանքի պալատական խաղով, այնուամենայնիվ Փրանսիական ավանդական քաղաքականությունը նրաքմահանույքներից ուժեղ եր և քաշում եր նրան դեպի Թյուրքիան պաշտպանելու անհրաժեշտությունն այն ծանր և սասանեցուցիչ պայքարի մեջ, վոր սաստկացավ մանավանդ 17-րդ դարի յերկրորդ կեսում Միջին Յեղոպալյի և սուլթանների պետության մեջ: Այս մի ահավոր մենամարտություն եր իսլամի և քրիստոնեության մեջ — այսպիս եր հասկացվում պատերազմների այն յերկար շարքը, վորի մեջ ոսմանյան վիթխարի բանակներն ունեյին իրանց առջև մի զիսավոր թշնամի — Ավստրիան, վորին ոգնում եյին դաշնակիցները — մերթ վեհետիկը, մերթ Լեհաս-

տանը և միշտ ել Հարավային Գերմանիայի իշխանությունները, վորոնցից հիշատակում ենք մասնավորապես մեկը — Հոենոսյան Պալատինատի (Բավարիայի, կամ իսկապես Պֆալցի) կյուրֆյուրստը¹⁾: Թյուրքական արշավանքները ավերակ եյին դարձնում Ավստրիան, վերջն ել այն աստիճան աջողություն ունեցան, վոր մեծ վեզիր Կարա-Մուսատաֆան պաշարեց Վիեննան (1683): Այսպիս սովորիստոնեյական շահերի համար մարտնչողի գերը պատկանում եր ավստրիական կայսր Անդրյոնին և նրա հետ համերաշխ գործում եր Հոռմի պապը: Իսկ Ֆրանսիան, վոր պարծենում եր «Հոռմի ավագ գուտարը» տիտղոսով, այս ահավոր պայքարի մեջ խաղում եր աղվեսային գեր: Լուի 14-րդը կամ ոգնական զորք եր ուղարկում Լեոպոլդին, ունենալով իր յետին հաշիվները, կամ աշխատում եր խանգարել, վոր Ավստրիան դաշնակիցները ունենա, իսկ յերբ սաստիկ պարտություն եր կրում Թյուրքիան, Ֆրանսիան շապում եր փրկել նրան կորստից: Վիեննայի պաշարումն եժան չնստեց թյուրքերին: Քրիստոնեական բանակները միացրին եժան չնստեց թյուրքերին: Վարչությունները պարագանդը, վոր շարունակվեց իրանց ուժերը և այնուհետև պատերազմը, վոր շարունակվեց դեռ ելի 14 տարի, շատ աննպաստ եր Թյուրքիայի համար և դաշնակիցները ջախջախիչ հարվածներ եյին հասցնում նրան: Սուլթանների պետությունը սարսափելի գրության մեջ եր: Վերջանում եր ոսմանյան սուլթանների ահարկու նվաճողականության ըրջանը, սկսվում եր նրանց պետության անկումը:

Եսա հասկանալի յե, վոր քաղաքական հանդամանքները կըշուագատելու կարողություն ունեցող ամեն մեկը ըմբռնած կլիներ, վոր արեելյան գործերի և մանավանդ իսլամի ու քրիստոնեյության վեճերի ու պահանջների լուծման ամրող ծանրությունը տեղափոխված ե Վիեննա: Այսպես ըմբռնեց և Որին: Իզուր չեր վոր նրա նախորդը, Պետրիկը Վիեննա յեր ընտրել գործունեյության կենտրոն Հայաստանի ազատության հարցը դնելու համար: Յել Որին, համոզվելով, թե վորքան ապարդյուն ե Վերսայիլի արքունիքին կառչելը, ինքն ել ըստում եր Պետրիկի ճանապարհը դեպի Լեոպոլդի կայսրի կարողությունն ու տրամադրությունը:

Բայց նա ուղղակի Վիեննա չեր գնում, խրատված Փարիզի փորձից, վոր ցույց եր տվել, թե վորքան դժվար ե մուտք գըտնել թագավորական պալատները: Այս անգամ ավելի համեստ չափերի մեջ եր նա դնում իր ձեռնարկությունը և գնում եր չայսերի մեջ:

¹⁾ Այսպիս կոչվում ելին այն ավագ իշխանները, վորոնք կայսր եյին ընտրում Ավստրիայի, դրա հետ և Գերմանիայի համար, ուստի նրանց տրկում եր «Կայսրընտրիչ» տիտղոսը:

Պֆայլցի մայրաքաղաքը, Դյուսելդորֆ, ուր այդ ժամանակ իշխում էր Լեռպոլդ կայսրի մոտիկ բարեկամ և զինակից կուրֆյուրստ Հօվհան-Վիլինգը, զոր նաև կապված եր յելքոպական մի քանի արքունիքների հետ խնամիական կապերով, հետևաբար և հեղինակություն ուներ աշխարհի տերերի համայնքի մեջ:

Այժմ խոսքը տանք պրոֆեսոր Հեյդելբերգ:

«Մի քանի գրություններից, — ասում են նա, — իմանում ենք, զոր Որին յերկար ժամանակից սկսած Դյուսելդորֆում եր հաստատվել և ցորենի ու զինու առևտուրով եր զբաղվում: 1689 թ. Որին կուրֆյուրստին պատահմամբ ըողքում և Փալցի արքունական մի քանի պաշտոնյաների մասին, վորոնք իրեն զինու առևտուրի ժամանակ մի մասն և առիթ յեղակն ելին: Ինչպես յերեզում ե, այս դեպքն ե առիթ յեղակն մի ազան և փառասեր մարդ եր, կուրֆյուրստի հետ հայկական ձեռնաբության մասին խոսելու: Որին կարծիքով, այդ ձեռնաբությունը Փալցի կուրֆյուրստի փառքը շատ պետք է բարձրացներ Որին կուրֆյուրստին նկարագրեց հայոց զրությունը, կարիքն ու ցավերը և ասաց, զոր զբանք քրիստոնեայության հավատարիմ մնալու համար պարակինք մեծ նեղություններ են կրում: Որին ի միջի այլոց կուրֆյուրստին ասաց, զոր յեթե նա կարողանա հայերին անհավատների ձեռիք ազատել, այն ժամանակ հայերը իրենց աղասաւթյան վարձարության փոխարեն կաթոլիկ յեկեղեցու ծոցը կմտնեն և բավական ե զոր մի քրիստոնյա իշխան մտնե հայատան, այն ժամանակ հայերը նրան իրանց իշխան կաթոլիկն: Որին կուրֆյուրստին մատնացուց արագ այն բանի մասին, վոր ինքը՝ իշխանական ծագումից և և հայ իշխաններն իրեն պատվիրել են քրիստոնյա մի իշխան զրունակությունը և սպառագությունը նրան իր հետ հայտառան Փալցի մի սպառագությունը և սպառագությունը նրան իր հետ հայտառան կաթոլիկ կարողանա ինքն անձամբ հայերի զրության հետ ժամանար Հովհան-Վիլինգը, լուսով Որին առաջարկությունը, նրան զանազան հանձնաբարեկան ամամակներով Հայաստան ուղարկեց»¹⁾:

Յեթե հարցնենք պրոֆեսորին, թե ի՞նչպես եր, զոր դերմանացի իշխանապետն այդքան հեշտությամբ յենթարկվեց հայ վաճառականի ներշնչմանը, նա պատասխանում է այսպես.

«Հայաստանի վաճառականները հրեա և հույն վաճառականներից ավելի սրամիտ և հայրագետ ելին և 18-րդ դարում Յելքոպայի արքունիքներում նշանավոր և ազգեցիկ դեր ելին խաղում Որին, ինչպես և Միկթար Սերաստացին վաճառականներ ելին Վերջին 1712 թ. հիմնեց Միկթարյան միաբանությունը Միկթարն իրեն վաճառական մինչև իր միաբանության հիմնելը ճանապարհորդել եր յելքոպական տերությունում»²⁾:

Բավական լուսաբանություն մացնում է այս հարցի մեջ և Մոռիս Մյուսեն:

«Որի Բալատինայի մեջ. — գրում են նա, — նույն ոսկմազիտության հետեցագի, ինչպես Ֆրանսիա Դյուսելդորֆ հաստատվեցագի իրը մեծաքանակ արմատիքի և զինիքի վաճառական ժամանակ մը յետ եր, վուեն պատրվակով ինդրագիր պատաստականներուն և աստիճանն աստիճանն, իշխանին

Դերկայության ընդունվեցավ Ժան-Կիյենոմ (Հովհան-Վիլին) իշխանը, Վիլդելպատիյան առևնեն, այն առևն իրը քառասուն տարեկան մարդ մըն եր, քաջառողջ և կորովի, շատ փառասեր և շատ սկրեճասեր: Խորայիշտ հայը հոգ տարավ զինքը այդ լավ տրամադրության մեջ պահելու: Ճարտարորեն կշողոքորթեր Ժան-Կիյենոմը, անոր աշքայի կողմանը արքայական թագ մը, հավատակելով թե ծրագրյալ խաչակրությունը «Բալատինայն տան փառքը Յելքոպայի բոլոր գերգաստաններին վեր պիտի բարձրացներ»: Որի, ավելորդ և ըսել, պատմեց ի մեծ ամսթ Լուի 14-րդի՝ այդ վեհապետին ցույց տված մեղսապարտ անտարերությունը: «Ասածու մատը կա այսուհետ ըսավ: Ասոր վրա Ֆրանսիային մեկնեցա և յեկա Բալատինա հաստատվեցա: Զղջալու պատմառ չունիմ ասոր համար, ընդհակառակությունի համազարդակած եմ զոր Այսպիսի դեսպար մը պատահած եր Քրիստոնիոր Գոլումպոսին: Այդ մեծանուն նավարկուն ալ ութ տարի անցուց Ֆրանսիայի արքունիքը, խոնդրելով վոր նավ մը նվիրեն իրեն, վորով պիտի յերթար տիրեր նոր աշխարհի մը, վասկիի և արծաթի հանքերով հարաբեր կատարեր Զեր բարձրության ծանոթ են բոլոր բարիքները, զոր Սպանիա քաղեց այս վեհանձնութենեն: Կը հուսամ վոր նման որինակ փառք մը որ մը բաժինը պիտի ըլլա Բալատինայն տան, յեթե ձեր բարձրությունը համի խորհուրդներու անսալ»:

«Որի մասյ գույներով նկարագրեց իր հայրենակիցներուն կրած տառապանքները իրենց կրոնքին պատճառով: Բայց հավաստեց, զոր հայերն ազատեկներուն պիս սիրանուժար պիտի ընդունելիին կաթոլիկությունը Այս խոստումը մեծ կշիռ մը ունեցած ըլլալու յի ժան-Կիյենոմի մոքին մեծ: Ինքը արգար թանգ կաթոլիկ եր և իր այս նախանձախնդրությունը մինչի իսկ զինքը շատ տառջ տարած եր յերբեմն: Քանի քանի անգամ բողոքական յեկեղեցիներ քամանարին՝ կաթոլիկներու հանձնած եր և կողոպատած եր իր յերկրին բողոքական հասարակությանները, այնպես վոր բողոքականները խմբովին զաղթած ելին իր իշխանության որովան»³⁾:

Մյուսեյի ներկայացրած այս տեսաբանը վկայում է, զոր Որիին աված եր մի լեզվային կարողություն զեմոնական չափով: Բայց սխալ կլիներ կարծել, թե Որիի լեզուն կարող եր այդքան թուլիչ լինել Հովհան-Վիլիների համար: Յերկուսին ել, թե հայ խոչային և թե գերմանացի իշխանությունը թովողը ժամանակն ինքն եր: 1697 թիվի սեպտեմբերի 11-ին Տեսրա գետի ափին, Զելնիսի Սավուացու հրամանատարությամբ, սարսափելի ջարդ ավեց թյուրքական բանակին, 10 հազար խողովում ելին, գետի մեծ, մեացածները փախուստի ելին գիմում: Այս պարտությունը կատարարութիւն նշանակություն ունեցավ Յելքոպայության չափազանց ընդարձակված ոսմանյան կայսրության համար: Ամենուրեք տարածվում եր լքում և հուսարեկում: Թյուրքերը կար-

1) «Արձագանք», 1894, № 75.

2) Անդ.

1) «Նոր կյանք», յլր. 280.

ծում եյին, թե յեկել ե իսլամի վերջը յելքոպական հողի վրա և շտերը կ. Պոլսում պատրաստվում եյին անցնել Ասիա: Արևելյան հարցը թվում եր ճանգած իր լուծման: Հասկանալի յե, թե վորքան մեծ պիտի լիներ քրիստոնյաների վագնորությունը: Բայց առություն կազմում եր միայն ֆրանսիան, վորի «արել» խըզնուկ ջանքեր եր անում փրկելու համար իր ջախջախված բարեկամի բեկորները: Որվա հերոսը Լեոպոլդ կայսրն եր, Հովհաննելինելմի քրոջ ամուսինը: Պարտված Թյուրքիան հաշտություն եր խնդրում և նրան թելադրվում եյին անդամանատության ամենածանր պայմաններ, վորոնցից պիտի մկավեր և պատմական անխուսափելիություն գառնար Թյուրքիայի, իրքև նվաճողական բռնապետության քայլայումը: Հաշտության բանակցություններով, վորոնք տեղի եյին ունենում կարլովից ավանում, պահանջվում եր, վոր Թյուրքիան զրկվել Դանուր գետից գետի հյուսիս գտնվող մեծամեծ յերկիրներից, ինչպես նաև ուրիշ շատ խոշոր հողամասերից: Յեվ Թյուրքիան, մնանկացած ու տկար, կարող եր միայն համաձայնություն աալով փրկել իր գոյությունը:

Այսպես եյին որերը, ամիսները Զանտայի հաղթությունից հետո: Խորտակվում եր ամբողջ Յելքոպան սարսափի մեջ պահող իսլամական ուժը, վերակենդանանում եյին ընկճված ժողովությունները: Յեվ հսկայական աջողություններից հղիացած հաղթողների համար կարող եր այդ որերին լինել անկարելիություններ կայացնող մի քաղաքական ծրագիր:

Որիի դիվանագիտական ճարպիկության խոշոր մի արտահայտություններ, վոր նա կարողացավ ուստագործել հարժար բովեն և մշակել Հովհաննելինելմի միտքն այն ուղղությամբ, թե նրա համար դժվարություն չի լինի մի ազատարար արշավանք ուզարկել Հայաստան և փոխարենն ստանալ նրա թագը: Նրան տված եր սար դժվարությունները խոսքով հարթելու կարողություն, վորովհետև նրա լեզուն սանձ չեր ճանաչում: Սարքել, հերյուրել ստել անհնարին չափերով այսպես եր նա հմայում, յեվ յեթե այս հատկությունները միանգամից չեյին ծակում լսողի ականջը, պատճառն այն եր, վոր Որին լավ տեղյակ եր իր ժամանակի քաղաքական դրության և նրանից վերցրած փաստերի վրա յեր պատվատում իր սնամնջ հնարավորությունները: Նույնիսկ ըստ յերկութին միանգամայն անիրագործելի ձեռնարկությունները նա կարողանում եր հավատալի գարձնել դնելով նրանց քմահաճորեն ստեղծած կողմնակի նպաստամատուց պայմանների մեջ:

Այս մի հուժկու ունակություն եր, վոր ընությունը դրել եր

Որիի մեջ, կարծես կամենալով նրանից ստեղծել աթհեստով գիշագիտակա, դիպլոմատ մի ճարպիկ վարպետորդի, վոր հարկավոր դեպում չի քաշվում գործ տեսնել նույնիսկ կեղծ թղթերով և կեղծ կնիքներով:

«Փան-Կիյենումը — և սո եր եյականը հայ առաքյալի աչքին — հավատացայս խոսքերուն (այսինքն՝ վոր հայերը պատրաստ են կաթոլիկություն ընդունել), — այսպիս և շարունակում մեր քրանսիացի հեղինակը, — և ուշի ուշագմտիկ ըրավ իր խոսակցին, լուսաբանություններ, Հայաստան տանող ճամբանը մատին տեղեկություն հարցուց: Որին, վորուն ուղածն ամբողջ մարդկանի կողմէ իր խոսակցին, լուսաբանությունները բազմաթիվ եյին Հայաստան և բազմաթիվ շատ սակագալիքներ:

Պրոֆեսոր Հեյգելն իրավացի կերպով խրտնել եր այդ գովասանքներից և հարցնում եր. «Այդ չտվազանցությունները մեղ կառկածելի ընծայելու չե՞ն Որին»: Յեվ Մյուռեն պատասխանում եր.

«Այս առարկությունը, շիտակը, հիմնավոր չե Խրայել Որի, ասիկա բացահայտ և, դյութիչ պատկեր մը կը գծեր Հայաստանի՝ Փան-Կիյենումը մղելու համար, վոր իր խաչակրության խորհուրդը ի գործ զնեն Իշխանին աչքին պետք եր վոր այդ աշխարհակալությունը՝ հոգնությունն արժեր կը նախանք հավատառ նաև, վոր Խօրայել Որի հայրենասիրութենին մղված և վոր կը շափազացեր: Հայրենամոլությունը սուզի ծաղկի մըն ե, վոր գժրադղու և հալածված տղգերու հողին վրա կուռանան: Ինչու հայ գետպանն անկեղծ յեղած չպիտի ըլլար՝ Ավետյաց յերկրի մը պես նկարագրելով իր սիրելի հայրենիքը»:

Մեր գրանսիացի հեղինակի այս արդարացումները մենք ընդունում ենք իրքև փոքր ի շատե հասրավոր բացատրություն այն չափազանցությունների, վորոնց դիմում են աշխարհի բալոր Որիները, մտրակված դժբախտ անհրաժեշտությունից՝ լինել վորդորմություն հայցող աշխարհի հզորների առաջ: Բայց այստեղ ել չպիտք և հրաժարվել չափի զգացմունքից: Անսահման չափազանցությունները կարող են նույնիսկ սպանել գործը: Որիի չափազանցությունների վերաբերմար չի կարելի կիրառել «քիչ մը» չափանիշը: Յեթե հայրենամոլությունը (շովինիզմը) «սուզի ծաղկիկը ե, Որիի այդ ծաղկիկը, ինչպես կտեսնենք և առաջիկայում, չափազանց այլանդակ եր:

«Հափառուրգած, հափշտակված այս ճառերեն, Փան-Կիյեյում հայտարարեց Տյուռելատրֆի իշխան-վաճառականին, թե բոլոր սրապոր կը համակը հայ աղպին և խոսացավ աղաստարար շարժման գլուխն անցնել: Նախ և առաջ Որի Քալագինայի իշխանին կողմեր պատվիրակ դրկվեցավ իր հայրենակիցներուն մոտ՝ գործին նախանկան հիմքեր զնելու և հատակագիծը պատրաստելու»¹⁾:

1) Հովհաննելինելմը մի ժամանակ նամակ եր գրում կ վրաց թագավորաց գիրպին, հրավիրելով նրան միանալ հայերին:

Զանտայի հաղթությունից հաղիվ յոթն ամիս անցած, 1698-ի մայիսին, Հովհանն-Վիլհելմը նամակ եր գրում «Հայաստանի իշխաններին և տերերին» և մեծամեծ գովասանքներ անելով Որիի վերաբերմամբ, հանձնարարում եր կատարյալ վատահություն ուշնենալ դեպի նրա առաքելությունը, վոր նա կատարում եր իր, կուրֆյուրստի պատվերով և հավատալ նրա խոսքերին ու խոստումներին։ Որին շտապեց ճանապարհ ընկնել այս թղթերով դեպի Հայաստան և կարողացավ ի կատար ածել իր ցանկությունը միայն Զանտայի տարելիցին, 1698-ի սեպտեմբերին, յերբ ուղի ընկավ Դյուսելդորֆից, թեև այդ ժամանակ դեռ չելին ել սկսվել հաշտության բանակցությունները Կարլովիցում և Թյուրքիայի վրայով դեպի Արևելք տանող ճանապարհներն աղատ չելին։

Այս ամբողջ ձեռնարկության պատմությունը, տարաբախտարար մի միակ ազգյուր ունի, և այդ՝ հենց ինքն Որին և թե իր անունից և թե «Հայաստանի իշխանների և տերերի» անունից գրած նամակների մեջ, իսկ այս նշանակում ե, թե մենք յերբեք չպիտի իմանանք իսկական ճշմարտությունն իր բոլոր կողմերով։ Որին նպատակ է ունեցել հաճելի ընթերցանություն մատակարարել իր տիրոջը, պատմելով նրան ճանապարհորդական արկածներ և պաշտամունք դարձնելով նրան Հայաստանի մեջ։ Փառարանելով կուրֆյուրստին իրքև Հայաստանի թագավորության հեղինակի, նա պակաս չափով չեր փառաբանում և իրան, պատմելով իր առավելություններն, իր մեծ հեղինակությունը Հայաստանի իշխանների և տերերի մեջ, այնպես վոր միանգամայն հասկանալի յեր գառնում, թե յեթե կուրֆյուրստը անկարող լիներ միաժամանակ թագավորել թե Հանոսի ամերին և թե Դարրաբաղի լեռներում, պատրաստ եր թագավորացու այս վերջին յերկը համար, և դա հենց ինքն Որին եր։

Ենթար և բարակ մանրամասնություններով նա նկարագրում եր իր ճանապարհորդությունը մինչև Կ. Պոլիս։ Միայն Կարլովիցի հաշտությունն ստորագրելուց հետո (1699 հունվար) եր, վոր նա կարողացավ իրքև ֆրանսիացի մանել յելլոպական Թյուրքիա։ Այնքան կատարյալ կերպով եր նա իրան ցույց տալիս ֆրանսիացի, վոր, ասում եր, անգամ ֆրանսիական դեսպանը շկարողացավ իմանալ չնայած իր թխության, վոր ֆրանսիացի չե ինքը։ Մենք գիտենք, սակայն, վոր Որին այդպիսի տպավորություններով կաշառում եր Պարսիկ կառավարիչներին։

գրավորի մեջ այդ «Փրանսիացին» այնքան թույլ եր, վոր չկարողացավ գեթ ֆրանսերենով թարգմանել Դարաբաղի մելիքներին և տանուտերերի անունից Հոռմի պապին գրված հայերեն նամակը և թարգմանչի պաշտոն նրա խնդիրքով կատարում եր լինահայ կրոնավոր Ստեփանոս Ռոշքյանը¹⁾։

Իր սովորական ճարպիկությամբ Որին կարողանում եր Աղթանուպալում և կ. Պոլում մանել, իրքև ֆրանսիացի, Սուլթանի պալատական բարձր շրջանները և խոսակցություններ ունենալ որվա քաղաքական հարցերի, գլխավորապես անցյալ պատերազմի մասին։ Յեվ, ինարկե, կատարյալ գաղտնապահություն իր առաքելության նկատմամբ։ Նա չտեսնվեցավ հայ շրջանների հետ վնչ կ. Պոլում, վնչ երգումում, այլ ուղղակի դիմեց Եջմիածին։

Այստեղ այն ժամանակ կաթողիկոս եր Խանապետը։ Բայց նա չուզեց վորեւ գործ ունենալ Որիի հետ։ Յեվ պատճառն այն չեր, վոր նա փախչում եր Հոռմի պապին հնազանդություն հայտնելուց։ Ընդհակառակն, Ռոշքյանի ժամանակագրությունը հազորդում է, վոր դեռ 1698-ին Նահապետն ստացել եր իննոցնեցիսս պապից բարեկամական նամակ և ընծաներ և ինքն ել հենց այն ժամանակները, յերբ Որին գնացել եր հայրենիք, պատասխանել եր պապին կատարյալ հնազանդություն հայտնելով²⁾։ Խնդիրն, ուրեմն, կաթոլիկությունը չեր ինքն ըստ ինքյան, այլ այն եր, վոր Նահապետը չեր ուղում հետեւ Հակոբ կաթողիկոսի ունիթորա և ազատագրական քաղաքականության, այլ աշխատում եր հաշտ ապրել թե Սպահանի և թե Հոռմի հետ և յեկեղեցական հարստություններով կաշառում եր Պարսիկ կառավարիչներին։ գոյություն պահպանելու համար։

Հանդիպելով սառն ընդունելության, Որին իսկույն հեռանում եր Եջմիածնից և զնում եր իրանց գյուղը և ոթեվան եր խընդրում իր քրոջից իրքև մի ստարական մարդ։ Գաղտնապահությունն եր ստիպում նրան ծածկել թե քրոջից և թե յեղայրներից իր ով լինելը և այս ստիպ պատմում եր կուրֆյուրստին իր և նրանց մեջ տեղի ունեցած խոսակցությունները, վորոնք պիտի ցույց տային, թե վորքան անհոգող եր Որին գաղափարական գործի մեջ և վորքան անձնագոհ։

Թողնելով հայրական տունը, նա նույն որը հասնում էր իրենց գյուղից շատ հեռու չգտնվող Անգեղակոթ գյուղը, վոր

¹⁾ Տ. Ռոշքյանի «Ժամանակագրությունը» 1701 թվականի տակ (Զեսագիր վեհնայի Միթթարյան մատենապարտն)։

²⁾ Անդ, 1698 — 1699 թվականների տակ։

Նախիջևանի խանության սահմաններից գուրս եր գտնվում և պատկանում եր Հարավային Ղարաբաղի մալիքական իրականության։ Այդ գյուղումն եր Սելիֆ Սամարազ։ Որին ներկայանում և նրան և այսպիսի մի ունկնդրություն և ունենում։

«Նա, — զբում եր Որին, — մացըց ինձ իր սենյակը, ուր ասացի նրան, թէ չեմ կարող վոչինչ ասել, մինչև վոր առանձնացած չլինինք։ Առանձնանալուց հետո հարցը նրան, թէ չի ամեաշում արդյոք իսրայել Որի կոչված մեկին, վարին յև տեսել եմ Ֆըանսիայում՝ Նա պատասխանեց՝ «այս»։ Սրա վրա յի հարցը. «Յեթե տեսներ նրան, կճանաչեք»։ Նա ասաց. «Այս, նա յերկար ժամանակ ե, հեռու յի այստեղից, բայց յեթե տեսնեմ նրան, կճանաչեմ»։ Յես նրան ասացի. «Ահա ձեզ ժառան, վոր խոսում ե ձեզ հետ, նա ինքն ե»։ Նա չեր ուզում հավատալ բայց յիս ցույց ավի նրան իմ վկայականներից մեկը, վորից հետո նա ուզախացավ»¹⁾։

Այստեղից ել սկսվում և Որիի առաքելության գործադրությունը, վոր և, ըստ նրա նկարագրության, ներկայացնում ե արտակարգ զարմանալի տեսարան։ Գործողությունն, ինչպես տեսնում ենք, սկսվում ե Հարավային Ղարաբաղում։ Ամեն ինչ գնում ե լավագույն կերպով, յերթևեկությունը լեռնային անձանապարհ յերկրում կատարվում ե այնպիսի արագությամբ, վոր կարծես այդտեղ հաղորդակցության միջոցները՝ լեռնային ձին, ջորին, համետած յեղը կամ եղը չեյին, այլ այն կախարդական գորզը, վորի վրա նստում ելին՝ «Հազար և մեկ գիշերների» հերոսները և թւչում մի տեղից մյուս տեղ։ Այսպիսի արագությամբ գործելով, Որին 12 որվա մեջ վերջացնում եր իր առաքելության ամբողջ գործը, այսինքն՝ հանձն տանել եր տալիս գոնե Հարաբաղի ամբողջ հարավային մասին՝ խնդրել Հովհանն-Վիլհելմի ազատարար արշավանքը, վորի տեղ հասնելուն պես՝ ապստամբվել պարսից կառավարության դեմ։ Այս մի ամբողջ հրաշագործություն եր, յեթե, իհարկե, հավատալու լինենք Որիին։ Միարանցնել, մի վճռական կամքով կապել մի լեռնային յերկրի ավատահրական ցանցի գավառակային առանձնությունները — այսպիսի անջում եր առնվազն ժամանակ և յերկարատես աշխատանք։ Բայց Որիի առջև դժվարությունները հալվում, վոչնչանում են վայրկենապես։ Յեվ նա պատմում ե կուրֆյուրստին, իր տիրոջը այսպիսի մի հրաշագործություն, վորի կատարողն իր արտակարդ մեծ հեղինակությունն եր և աղատագրական գաղափարի ծովացումը յերկրի մեջ։

Անգեղակոթը Որիի գլխավոր շտաբն ե և Մելիք Սաֆրազը՝ նրա գլխավոր կարգադրիչը։ Որին այդտեղ ե ուզում հավաքել

1) ԵՅՕՅ, Ը. 52.

յերկրի հայ տերերին և խորհրդակցել նրանց հետ խիստ գաղտնատպահության սահմանների մեջ։ Մելիք Սաֆրազը մարդիկ ե ուղարկում, իր մոտ հրավիրում վեց տերերի, վորոնք հենց նույն որը գալիս հավաքվում են. նշանակում ե՝ շատ մոտիկ տեղերից եյին։ Հրավիրվածների մեջ չկար մեկը, նմիր Բեկը։ Պատճառն այն եր, վոր նա Մելիք Սաֆրազի մահացու թշնամին եր, միացել եր «անհավատների» (ասել ե՝ մահմեղականների) հետ և շատ վնասներ եր պատճառել մելիքին։ Որին հայտարարում ե, թե նրանք պիտի հաշտվեն, մելիքը պատասխանում ե, թե յերբեք իր կյանքի մեջ այսպիսի բան չպիտի անե։ Որին սպառնում ե թողնել ամեն ինչ և վերադառնալ իր նախկին տեղը և վերջապես հայտնում ե, թե ինքը կզնա և կհամոզի եմիր Բեկին։ Մելիք Սաֆրազը համաձայնություն ե տալիս, և Որին, միշտ նույն կախարդական արագությամբ գնում ե Եմիր Բեկի մոտ, նրա յերեսին ե բռնում նրա միությունն անհավատների հետ և բացատրում ե, վոր հանուն գործի նա պարտավոր և հաշտվել իր թշնամի հարեւանի հետ։ Եմիր Բեկը կատաղում ե «առյուծի նման», լսել անգամ չի ուզում այդպիսի խոսք։ Բայց Որին զապում ե առյուծին, շղթայի կապում նրան մինչ այն աստիճան, վոր նա համաձայնում ե իր տասը տարեկան աղջկան տալ մելիք Սաֆրազի տասն և չորս տարեկան աղային։ Յեվ այս հրաշագործությունը նա կատարում է մի գիշերվա մեջ, իսկ մյուս որը շղթայած առյուծին տանում է Անգեղակոթ։

Անգամ եր Որին կազմակերպում Անգեղակոթի գաղտնի «իշխանական» խորհուրդը, վոր Հայաստանի անունից լիազորություններ պիտի տար թե Հովհանն-Վիլհելմին և թե իրան իսկ, Որիին։ Զափազանց կարեոր կլիներ բացահայտել, թե ինչ տեսակ իշխանավորներ եյին այդ գերազույն խորհրդի անդամները, վորոնք ընդամենը տասնյերկու հոգի եյին։ Բայց Որին մարդկանց անուններ տալիս ե, իսկ աշխարհագրական անուններ տալուց միանգամայն խուսափում ե։ Մենք չդիտենք, դրանցից վարը վոր յերկրից եր և այսպիսով վորոշել, զեթ մոտավորապես, ամեն մեկի գավառատիրական ծավալը։ Յեվ անվում եր, իհարկե գիտմամբ։ Բայց բոլոր հանգամանքները ցույց են տալիս, վոր Անգեղակոթի գերազույն ժողովը խիստ նեղ տեղայնություն ուներ իր կազմի մեջ։ Կարելի յել լինում նույն իսկ յինթադրել թե այդ տեղայնությունը Սիսիանի սահմաններից շատ չեր հեռանում

Հետո, շատ տարօրինակ տպագորություն ե թողնում այն հանգամանքը, վոր յեթե ժողովին մասնակցողներն իսկապես յերկրի

տերերն են, ի՞նչու չունեն իրանց իշխանությունը վորոշող տիտղոսներ: Ամենքը, բացառությամբ եմիր Բեկի, ստորագրվում են իրեւ հասարակ, հարկատու մահկանացուներ — այս ինչ այս ինչի վորդի¹⁾: Որից ենք իմանում, վոր Անգեղակոթի Սաֆրազը մելիք եր, թե չե ինքն ստորագրվում եր «Մեջքոմի վորդի Սաֆրազ»: Այս ել մի արհեստականություն եր, վոր մացրել եր Որին, մասնակցողներից յուրաքանչյուրի իսկական դիրքը ծածկելու համար, հակառակ այն ժամանակվա տիրապետող սովորության, վոր դիրք վորոշող մականուններն անհրաժեշտարեն կպցնում եր անվան (մելիք, բեկ, յուրբաշի, քովիսա և այլն): Թե ինչ նպատակով եր արքած այս բանը, բացարություն կարող ե դառնալ հենց ինքն այդ թղթերի հրաարարակիչ Յեղյանը, վոր շարունակ անվանում ե մեր վերեւի ծանոթության մեջ հիշատակած անձանց «Դարաբաղի մելիքներ», մի բան, վոր դեռ շատ խնդրական ե:

Մոտենանք այժմ նույն այդ գերազույն խորհրդին մի ուրիշ հարցի տեսակեաից: Թե ինչ նյութական ուժ եյին ներկայացնում մասնակցողները, — մենք չգիտենք, բայց նրանց բարոյական ույժի աստիճանը վորակող ավյալներ յեթե մնացել են, — այդ նրանց ստորագրություններն են, վորոնք դրված են մի հանրագրի տակ և վորոնցից հեշտ և մակաբերել, թե ամենքն իրանց ժամանակի և մանավանդ իրանց լեռնային մեկուսացման զավակներն եյին և հազիվ թե փոքր ի շատե բարձր եյին ընդհանուր շրջապատից իրանց մտավորական կարողությամբ: Գրեթե իսպառացակայում եր նրանց մեջ զրագիտությունը. 12 ստորագրությունները յերկու տեսակ գրչով են կատարված²⁾, ասել ե թե գանվել են ամրող ժողովում միայն յերկու հոգի, վորոնք դրել են մնացածների անունն իրեւ ստորագրություն: Բայց այն ժամանակներն ընդհանուր անդրագիտության մեջ դեր կատարող ստորագրությունը չեր, այլ կնիքն եր: Յեվ իրավ, Անգեղակոթի ժողովականները մի մի հատ կնիքներով վավերացրել են իրանց փոխարեն գրված ստորագրությունները, բայց տարաբախտաբար կնիքներն ել ստույգ վավերականություն չեն արձանացնում, նրանց կարելի յեր կեղծել, և այս տեսակ մի զրադմունքի մեջ մենք շուտով կտեսնանք հենց Որիին իրան: Բացի դրանից, բոլոր ստորագրությունները չունեյին իրանց սեփական կնիքները,

1) Որինակ — Հակիմի վորդի Փիլիպոս, Ասատուրի վորդի Սարուխան, Մելքոնի Վամբար, Նարինասեկի վորդի Շահնազար, Պահումի վորդի Մելքոն, Պաղտառի վորդի Մագնաս, Ցավրի վորդի Ազատան, Նավի վորդի Հովհաննես, Պաղտառի վորդի Մելքոն, Շահիմի վորդի Սուրխան ԷՅՕՅ. Ծ. 20):

2) Աշ. Հովհ. — «Հայութու որինակ», յեր. 11:

ուստի մի յերկուսի առջև դրված են անհամապատասխան կնիքներ¹⁾: Հասկացողություններն այնպիս եյին, վոր մի ոտար կնիքն ել կարող եր վավերացնողի պաշտոն կատարել: Այս տեսակ հասկացողությունների մեջ եր հնարավոր և այն, վոր կնիք չեղած դեպքում, ինչպիս հայտնի յե և ինչպիս այս գոյություն ուներ հայ ժողովրդի մեջ մինչև 18-րդ դարի վերջը, մատն եյին թաթախում թանաքի մեջ և զրոշմում թղթի վրա, և այս դառնում եր հասատություն:

Ահա այսքան միամիտ, կարելի յե ասել՝ նախադարյան գյուղապետների և գավառակալատների մի հավաքույթ եր Անգեղակոթի գերագույն խորհրդակցական ժողովը: Խարայել Որիի համար նշանակություն չուներ, վոր այսպիս եր այդ ժողովն իր տեղում, Ղարաբաղի լեռնաստանի մի կորած անկյունում: Նշանակություն ունեցողը նրա համար այն եր, վոր կարող եր ներկայացնել այդ մարդկանց Յեվրոպային իրեւ մի կազմակերպություն, վոր բարբառում և այս լեզվով («Nous, principaux et magistrats de la grande Arménie»²⁾) («Մենք, Մեծ Հայաստանի գլխավորներս և ատենակալներս»): Ահա սնապարծության և մեծամտության ինչ խոյանքներ կարող եր տալ մի խեղճ ու աղքատ լեռնային գյուղ մի ոռմանտիկ քաղաքագետի, վորի յերազն եր մի թագավորական թագ, այն ել իր ցնորսապաշտ գլխին: Բայց թող այսպիս լիներ, թող Անգեղակոթը դառնար մեծ Հայաստան: Այսոււմնայնիվ, պետք եր բացարել և պատճառաբանել այդ «մենք, գլխավորներս և ատենակալներս»-ին, թե ինչպիս Ղարաբաղը պիտի դառնար թագավորություն: Այս մի առաջարկություն եր, վոր այլևս Հայաստանից չեր դնում Յեվրոպա, այլ Յեվրոպայից եր յեկել Հայաստան: Մի ինչ վոր բարերար իշխանի նամակն եր բերել Որին, և նրա իմաստը բացարձում եր իրեւ դրական, անվերապահ խոստում՝ թե կգա նա, այդ իշխանը, իր զորքերով և կվերականգնի հայ ժողովրդի անկախությունը, փշրելով անհավատների (ներկա գեպքում պարսիկների) լուծը: Ի՞նչպիս կարող եր վերաբերվել ժողովն այսպիսի մի առաջարկության:

Շիտակն ասած՝ մանր լեռնային գավառակապետությունը, լինելով արդյունք զարերով կուտակված տնտեսական պատճառական պայմանների, և պղպագրական առանձնահատկությունների, չեր կարող շահ տեսնել քաղաքական մի ընդարձակածավալ մեծ,

2) Անդ. յեր. 10

1) ԷՅՕՅ. Ծ. 9

միապաղադ կենտրոնացման վրա խարսխված պետական կազմակերպության մեջ: Արդեն մինք տեսանք, վոր լավագույն դեպքում լեռան պետական իդեալը գյուղական թագավորությունն եր, և այսպես եր և ուրիշ կերպ չեր կարող լինել, քանի վոր լեռնային բնությունն, իր աշխատության պատճառով, մանր դավառական անջատականության մեջ եր ամփոփում իր տնտեսական շահները: Այս ընդհանուր տնտեսական տկարությունը, միշտ սեղմված պահելով ազգաբնակությունն աղքատության նեղիկ շըջանակների մեջ, հնարավոր չի դարձնումնրա համար վոչ միայն լայն ու ընդարձակ հեռանկարները, այլ նույնիսկ և մտածողական լայնախոնությունը՝ պետական և հասարակական կազմակերպության վերաբերմամբ: Ամեն ինչ մանր եր ու տեղային՝ լեռնային տնտեսության մեջ, և մի Հովհան - Վիլհելմի թագավորությունն, վոր անշուշտ, բարձր և ընչափետ պիտի լիներ, քան եյին յերեմի հայ գյուղական թագավորությունները, չափազանց ծանր պիտի լիներ իբրև անուր լեռնային ազգաբնակության վզին: Հարկային մեծաքանակ պահանջումները կատարելապես քայլայում եյին լեռնցու տնտեսությունը և դառնում եյին նրա համար աղետ ու արհավիրք:

Որիի գալուց 15 տարի առաջ (1684-ին) և զրել վառվառեկալուր Հյուսիսային Հարաբաղում իր ավետարանը, վորի հիշատակարանից մենք մի կտոր բերինք նախընթաց գլխում, ցույց տալու համար, թե վորքան բազմամարդ եր հայ ազնվական դասը վելին Խաչենի մի անկյունում: Այժմ մեզ կարեվոր ե ծանոթանալ այդ հիշատակարանի հետեւյալ հատվածի հետ:

Են դառն և անբարի ժամանակիս, յորում նեղմք յանօրէն թունաւորաց ծանր հարկապահանջութեանց մեծապէս դաժանամբ մինչ ի յեւ շնչոյ անզերծանելի գրաւորմամբ և այս վասն բազում մեղաց մերոց զի աշխարհ ամենայն ի վրգովման և տատանման կան Ընդ որս և մեք կամք ըստ ծփանաց համայնից ալեկոծութեանց վարեալ ի մըրկէ անդի խոռվութեանց, զի ոչ հոյրապետք, ոչ առաջնորդք և ոչ կրօնավորք և ոչ ռամիկ ժողովրդականք և ոչ լինին երբէք յանդորրութեան և հանդարառութեան սակս զարտուղի գնացիցն և անըմպն ընթացիցն զոր ունին հաստատեալ յինքեանս. վասն որոյ տուժեն գիմսական հարկօք տառաելութեամբ, և ոչ որպէս սահմանեալ և կարգեալ ի յորէնսդրաց և առաջնորդաց իւրանց, այլ կմիջուցանելով սաստակապէս կեղեքին զիկեանս անխնայ որպէս ըստ օրինի չար տպրկացն անկուշտ և անյոդ լինելով¹⁾:

Ցեվ չպետք ե կարծել, թե Որիի ժամանակ այս ժողովրդական աղետն անցել եր կամ մոռացվել: Ընդհակառակն, նույն 1699-ին յերբ տեղի յեր ունենում Անգեղակոթի ժողովը, պարսից կառա-

վարությունը պատրաստում եր մի նոր աղետալի հարկահանություն, զոր այսպես և նկարագրում Գանձասարի Յեսայի կարողիկար.

«Ի տասներորդ ամի թագաւորութեան իւրում՝ Հիւսէին կոչեցեալ Շահ Սուլթանն արար հրաման՝ մարզաթիւ և աշխարհագիր առնել աղգիս հայոց և ամենայն ազգաց ընդ իշխանութեամբ իւրով եղելոց՝ որ ելեալ հրամանատարի նորին՝ արք իրու հաւատարիմք տան նորա, զրիչք և քարտուղարք, զի անսիալ և առանց թագուցանելոյ գրեսցն զամենայն հասակ ի հնգետասան ամենից և ի վեր սպառնացեալ ի հրովարտակին այսպես: Կթէ ոք գտցէ զիթագուցեալ և զդողեալ ոք, և յայտնեսցէ զայն արքայի, զլուխ զողելոյն արքայի և ինչք նորա աւար այնմ լիցի՝ որ գուշակեացն. ոք և արարին իսկ զի յոյժ յուղմամբ և նրոնմամբ զննեալ տեղեկանային պէսպէս հնարիւք և սպառնալուք ի զիւղի ուրում զանուտէք գիւղին և զքահանայսն և զնիւրընկալն (զոր զգիր ասեն) արգելուին ի տունս ուրոյն և զատ ի միմեանց և ապա ասել տային զանուանս արանց եղելոց ի զիւղին և զրէին. և բերեալ ի մի վայր, հաւատար տեսանէյին և թէ աւելի կամ պակաս տաներ զասացեալսն ի միմեանց (և զի թուղթ ևս առնուին ի բերանոյ նոցա, այսինքն մուշակա, զի թէ սուտք գոցեն այնքան տուգանս վճարեսցեն) կախելով ի փայտէ բրածեծ առնէին զարան ասացեալ սակս տուգանին. Ընդ նմին կաշառու յոլովս, և տասանորդս և զկարգեալ վարձս զինուորացն, առավել քան զչափն առնուին և ապա զգըեալն կրկնէին. ապա յետ այսորիկ՝ զրեցին և զվանորայս, զանապատս և զգիւղօրէից եկեղեցիսն, ընդ նմին և զեպիսկոպոսունս, զարեղայս և զերիցունս առ հասարակ ի թիւ արլիին. և ավարտելով զնոսա սկսան զրել և զվաճառականսն, զմանապարհորդսն և զորս սուղ ինչ առևտոյ տեսրքն էին, զամենեսեան ի համարաթիւ զրելով տարեալ ցուցին ատենի արքային իսկ անդ եղին հարկս եղին ի վերայ զրելոց զիխոցն երեքպատիկ յավելմամբ ի վերայ առաջնոյ սահմանին. և ի վերայ եկեղեցական պաշտօնէից որ յառաջնումն ոչ երեկը ընաւ տասնապատիկ առաւել քան աշխարհականց ծանր բերինս եղին և այն աշխարհագրութիւն հաղիւ մինչև յերիւ ամս աւարտեցին. զի ի 1148 (1699) թուէն սկսան և ի 1151 (1702) հրաման արարին զերեք տարւոյ զգիւահարկ ժողովրդեան զոր նոր եղին, նաև վասն եկեղեցականց և կրօնաւորաց կարգեալն ընդ նմին միահաղոյն առնուլը¹⁾:

Այսպիսով ազգաբնակությունն յինթարկված եր մի մշտատև մղձավանջային տնտեսական ահարեկման, և հասկանալի յե դառնում, թէ ինչու Որիի ժամանակ ամենուրենք այնքան ուժեղ եր պարսիկների աղետ յերկյուղը:

Արդ՝ կարող եր այսպիսի մի տնտեսական-քաղաքական միջավայր ներկայացնող և այսպիսի մի հարկային մղձավանջ տարրող յերկիր հնար գտնել գեռ մի ամբողջ սոտար, թեկուզ նույնիսկ աղատարար արշավանքներն ընդունելու և նրան ու նրա թագ վորոնող գլուխն ապրեցնելու համար: Որին, իբրև հաշվող վաճա-

¹⁾ «Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից զիկելոց յաշխարհին Ազուակ համապատակալ ի սրբազնակատար կաթողիկոսն Ազուանից ի Տէր Յեսայայ Հասան Քալակեանց» Ծուշի, 1839, յեր. 17 — 19.

ռական, ըմբռնում եր այս հարցի ծանրությունը, բայց իրեւ մի քաղաքագետ, վոր տարված եր անպատճառ մի բան սարքելու տենչով, չեր հրաժարվում սուտ ու պատիր, խարերայական մի ջոցներից: Ինչի՞ վրա յեր նա հիմնում իր բերած առաջարկության հնարավոր իրագործումը: Յեթե փորձեր ազնիվ և ճշմարտախոս գաղափարապաշտ դառնալ և բաց կերպով ասել ամենքին, թե քաղաքական անկախությունն առանց ծանր գոհարերությունների չի արվում և Դարաբաղը պիտի չխնայեր իր ամբողջ նյութական կարողությունն այդ գաղափարի համար, — նրան չեյին լիի, նրան ճամբու կղնեյին. բայց Որին այսպիսի շիտակությամբ չգնաց, — այս կղիներ անոգուտ գեղերում փշոտ կածանի վրա: Յեզ նա ինքն և իրան մատնում, թե ինչպես եր ողտագործում լունային թանձր միամտության և համասփյուռ քաղաքական անդրագիտության սիջավայրը:

Ակսելով իր գործը, Որին գիտեր, վոր առանց իր կողմը մի կտոր հոգեվորականություն ունենալու շատ չպիտի հաջողե, իսկույն և յեթ, վեց «իշխանների» հետ միասին, դիմեց Գանձառարի վանքը: Յերկու նպատակ կարող եր նա ունենալ այդ ուղևորությամբ: Մեկն եր փոխարինել Աղուանից կաթողիկոսությունը, վոր չեր ուղում հարել Որիի ձեռնարկած շարժման և զլսավորել հայերի դավանափոխությունը, վոր անհրաժեշտ պայմանն եր Հայաստանի ազատագրման, իսկ մյուսն այն եր, վոր Հյուսիսային Դարաբաղն ել միանա Հարավայինին, մի բան, վոր կարող եր տեղի ունենալ այն դեպքում միայն, յեթե Գանձասարն ել հարել Որիին, քանի վոր ինչպես տեսանք, նա յեր այն կենտրոնը, վորին հպատակվում եյին Հյուսիսային Դարաբաղի տիրողները:

«Գետք եր սպասել, վոր Որին պարզ ու մանրամասն կերպով կպատմեր Գանձասարի կաթողիկոսին, թե ինչու համար ե յեկել ինքը, թե քաղաքական ազատագրման ինչ տեսակ ծրագիր եր հղացիկ Յելլոպայում Հայաստանի համար: Բայց սրա փոխարին նա ասաց, թե ինքը յեկել և Յելլոպայի նշանավոր, ուժեղ և ազդեցիկ մի իշխանից, վորի ընտանիքը չորս թագավորող անդամներ ունի Այս հզոր իշխանը քրիստոնեյական համատի ոգտի համար մի բարեգործական գումար և ուղարկում, վոր պիտի գործադրվի յեկեղեցիների, վանքերի, մնանականուցների, հիվանդանոցների և այլ այսպիսի հիմնարկությունների վրա ըստ չափու անհրաժեշտության: Կաթողիկոսն, ի հարկե, ուրախությամբ և լուսմ այս հայտարարությունը և իր կողմից պատրաստականություն և հայտնում շնորհակալությամբ ընդունելու այդ շնորհը և գործադրելու գումարը վոր ծածուկ պիտի ուղարկվի, ըստ չափ ու անհրաժեշտության: Գումարի ծածուկ մետյու պայմանը մերժում է Որին. տակով վոր, ընդհակառակը, յեվրոպացի իշխանը գումարի հետ այստեղ պիտի ուղարկե ինժեներներ, գործակալներ, կրօնագորներ: Այս ժամանակ կաթողիկոսը կարականապիս մերժում է ըն-

դունել այդ գումարը, պատճառաբանելով, թե յերկյուղ և կրում պարսիկներից Որին անցնում է յ եկեղեցիների միության հարցին, ը որը քիւմ է կրոնական գեճ և Անգեղակոթից յեկածները հեռանում են Գանձասարից առանց վորեն հաջողություն գտնելուն:

Վոչ մի հիմք չկա կարծելու, թե Որին միայն Գանձասարի վանքում մեջ բերավ, ծախու գնելու համար, Յելլոպայից սպասվող գումարի առասպելը: Նույնը, անկասկած, գործի դրվեց և Անգեղակոթից եկեղեցույն ժողովում, այն ել, նրա համար միանգամայն ցանկալի հետևանքով: Հավատացին «Մեծ Հայաստանի գրլիավորներն ու ատենակալները», թե Որիի բերած հայկական թաղավորությունը միանգամայն ձրի յե լինելու և իրանց մնում և միայն ընդունել բարեհոգի, սրտացավ, հարուստ ու հզոր Հովհաննելինելի այդ ընծան: Այս եր ահա այն արագության գաղտնիքը, վորով Որին վերջացրեց իր առաքելությունը: Նրա արած գործը վոչինչ բարդություն չեր ներկայացնում և կարող եր կատարվել մի ժամում: Այդ այն եր, վոր նա ստանում եր յերկու հատ «Ճերմակ թուղթ» (carte blanche), այսինքն՝ մաքուր չգրված թերթեր, վորոնց վրա դրված եյին ժողովի անդամների կնիքները և «ստորագրությունները». մեկը տրվում եր Հովհաննելինելին՝ իր նոր թաղավորության պետքերին ծառայեցնելու համար, իսկ մյուսը՝ իսրայել Որիին, վորպես ապացույց, վոր նա ճանաչված ե իրըն վրուխ և հրամանատար «Մեծ Հայաստանի գլխավորների և ատենակալների»: Ահա այս յերկու հատ թերթերն եր, վոր Որին տանում եր իր հետ Հայաստանից: Հովհաննելինելի աշկարա զարմանք եր հայտնում, վոր Հայաստանի վաղվան իր հպատակացուները վոչինչ ընծան ուղարկել իրան Որիի հետ: Այս հանգամանքը, ճիշտ վոր շատ բնորոշիչ և մի աղքատ Սիսիանի գավառի համար. չե՞ վոր ինքն եր սպասում ստանալ ընծան բազմահարուստ Յելլոպայից:

Յեթե հավատանք յելլոպական արխիվներին, Անգեղակոթի ժողովն ունեցել ե մի ամրող բազմաթերթ գիւղումատիական գիւղան, վոր խմբագրել ե և ուղղել ե զանազան մարդկանց պաշտանական թղթերը: Այսպես են վկայում այն դրությունները, վարոնց տակ նշանակված ե, իրքե հեղինակման վայր, Անգեղակոթը.

1. Նամակ Հոռմի պապին.
2. Հավատարմաթուղթ իսրայել Որիին.
3. Նամակ Պապացի կուրֆյուրստ Հովհաննելինելին.
4. Նամակ ուստաց ցար Պյոտր Ալեքսեևիչին:

Մենք, իհարկե, հավատում ենք, վոր արխիվները պահպանել

են այն, ինչ հանձնվել է իրանց, բայց չպիտի հավատանք, թե այդ թղթերը գրված են կամ կարող են գրված լինել Անգեղակոթում: Բացահայտ ե, վոր նրանք գրված են Լեռնային Ղարաբաղից շատ հեռու տեղերում, չնայած իրանց կրած կնիքներին: Այս բանի մեջ վոչինչ հանելուկային հանդամանք չկար: Պարզ ի պարզո Անգեղակոթի ժողովը համաձայնում եր Որիի հետ, վոր նա չի կարող պաշտոնական պատվիրակ լինել Յեվրոպայում, չունենալով իր հետ մի կտոր հայ հոգևորականություն, և տալիւ եր նրան ո. Հակոբի վանքի վանահայր Մինաս վարդապետ Տիգրանյանին:

Սա մի կատարյալ գյուտ հանդիսացավ Որիի համար յեթե վոչ մտային կամ այլ բարեմասնություններով, գեթ նրանով, վոր գիտեր կեղծել վոչ միայն կնիքներ, այլև ամբողջ գրություններ: Ահա այդ «տաղանդի» տուրքերով ե, վոր մենք ունենք, ըստ յերեսութին, իհարկե, մի ամբողջ դիպումատիական դիվան Անգեղակոթ գյուղում:

Առանց այդ մութ գործողի աջակցության ել, սակայն, կարելի յե հեշտ կունել այդպիսի մի դիվանի անհեթեթությունը: Յերեւակայեցնք լեռնային անգրագետ մարդկանց, վորոնք աղաչում են Հոռմի պապին ազատել իրանց հերձվածողությունից և մտցնել Քրիստոսի ճշմարիտ յեկեղեցու մեջ: Յերևակայեցնք նույն այդ անգրագետ պարոններին նույն այդ որը նստած Խորայել Որիին հավատարմաթուղթ տալիս լատիներեն լեզվով: Աչքի յե ընկնում իր ընդարձակությամբ և վոճով մանավանդ այն ֆրանսերեն նաև մակը, վոր գրել ե, իրը թե, և գարճայլ միենույն որը, Անգեղակոթի ժողովը Հովհանն-Վիլհելմ կուրֆյուրստին: Պրոֆեսոր Հեյգելը չգիտենք ինչից գիտե, թե այս նամակի հայերեն բնագիրը կորած ե և մնացել ե նրա ֆրանսերեն թարգմանությունը, վոր կատարել են Որին և Մինաս վարդապետը: Բայց միենույն ժամանակ նա չգիտե, թե այդ ընագիրը կուրֆյուրստին հասցնելուց հետո յե արդյոք կորել: «Բնագիրը կորած լինելով, — ասում ենա, — չի կարելի այս գրվածքի ճշության կամ անձշության մասին ուղիղ գաղափար կազմել»¹⁾: Իսկ մենք կասենք, զուր և վորոնել հայերեն բնագիր, նա յերեք ել գոյություն չի ունեցել: Այն ժամանակիա գործածական հայերեն լեզուն, աղքատ ու անմշակ գեղջուկ կենցաղին հարմարեցված, չեր կարող ընագիր դառնալ այդպիսի մի նամակի համար, վոր վոչինչ զեղջկայնություն չունի իր մեջ, խմբագրված և մշակված ե դիպումատիական սալոնների

հոտ առած մեկի միջոցով: Վոր Որին կարող եր լինել այդ մեկը — ժողովել չի կարելի: Ուրիշ կերպ անբացարելի կմնան այն փառաբանությունները նրա անձի և տոհմի վերաբերմամբ, վոր անում ելին իրը թե «Մեծ Հայաստանի գլխավորներն ու ատենակալները»: Որիի մատն և ցույց տալիս և այն, վոր մինչդեռ նամակի մի տեղում պատմվում ե, թե ինչպես ինքը Գանձասարում հավատացնում եր, թե կուրֆյուրստը խոշոր գումար պիտի ուղղարկե Հայաստան, մի ուրիշ տեղում, վորպես թե Անգեղակոթի ժողովը գրում եր.

«Փառաբանում ենք աստծուն և շնորհակալ ենք նրանից, մեզ վոչինչ չի պակասում, մենք ունենք փող, կալվածներ, զինավարժ մարդիկ, մի խոսքով այն ամենը, ինչ հարկավոր ե այդ մեծ ձեռնարկության համար: Մեդ միայն մի գլխավոր ե պակասում, վոր մեր յերկրում առաջնորդե և կառավարել»²⁾:

Ի՞նչ եր այս: Մի կողմն այնպես խարել, մյուս կողմն՝ այսպես — ահա ինչ եր:

Մենք գիտենք, վոր Որին միայն թելագրել գիտեր: Ուրեմն մեջտեղից պետք ե վերացնել պրոֆեսոր Հեյգելից նրան, բայց մասնավորապես Մինաս վարդապետին հատկացված թարգմանչի դերը:

Այսպիսով մենք պարզած ենք համարում, թե իրեւ ինչ տեսակ ներկայացուցիչ եր Խորայել Որին Լեռնային Ղարաբաղից վերադառնում: Յեթե արդեն գրված եր Հայաստանի աղատագրման գործը, Որին այդ գործի լիակատար տերն ու տնորենն եր. խոսել, ծրագրել, բանակցել — ամեն տեղ և բոլոր հանդամանքների մեջ նա ինքնազլուս եր և ինքնակամ: Իսկ այն յերկիրը, վոր նրանով եր ներկայացվում քաղաքական աշխարհին, հեռու-հեռու մնացած լեռ եր, վոր ծխում եր նախնականության, մուացվածության թանձր մշուշների մեջ:

4.

Իսկ թե ինչպես եր կարող այդ մշուշների ներկայացուցիչը կատարել իր ինքնակալ դերը — այս մասին վկայում ե նրա խոշոր աշխատությունը, վոր նա պատրաստեց և ներկայացրեց կուրֆյուրստին՝ Յեվրոպա վերաբառնարուն պիս: Այդ՝ նրա ամբողջ քաղաքական հղացման ծրագրումն եր մանրամասն կերպով:

Յեռնարկության անունն այս եր արդին — Զինվորական արշավանք Հռենոսի ավերից մինչեվ Թալիրից: Այս մի հակայական, անհնարին ձեռնարկություն եր, և նրան պիտի ծրագրեր Դյուսելդորֆի

1) «Արձագանք», 1894, № 75.

1) ԹՅՕՅ, Ը. 15.

գինսվաճառը, հնարավոր և իրագործելի դարձներ քաղաքական, ռազմագիտական, ֆինանսական և այլ տեսակետներից: Յեզ միայն նա ընդունակ հանդիսացավ այդպիսի մի հրաշագործության, վորովհետև մի ուրիշը չեր կարող այնպիսի սանձարձակ ազատությամբ վարվել փաստերի և յերևութների հետ, ինչպես նա յեր վարվում: Ամեն ինչ կարելի և հեշտ եր նրա համար, ամեն կասկածելի հանգամանքի մեջ, ամեն խոչընդոտի առջե նրա յերեակայությունը դուրս եր հանում մի անսպառ կարողություն՝ բարեհաջող լուծումների: Եթել չափազանցնել, հնարել չեղած բաներ — ինչ դժվարություն, ինչ անկարելիություն կարող եր դիմանալ այս տեսակ հատկություններին:

Մենք պնդում ենք այս բոլորը, բայց մենք չենք կարող թագցնել մեր զարմանքն Որիի այս անհուն կարողության առաջ: Թող այս ծրագիրը Ամենի, այլ հեքիաթ միայն, բայց այս այնքան խոշոր ե իրեն հեքիաթ, վոր նրան թղթի վրա հերյուրելու համար հարկավոր եր խոշոր մտային աշխատանք: Չմոռանանք, վոր այդ մարդն ինքը չեր գրում, այլ թելադրում եր, գրել եր տալիս ուրիշն: Յեզ այս դրության մեջ հայտաբերվում եր 16 խոշոր յերեսներ ծածկող¹⁾ մի գրություն, բաղկացած 36 ծրագրային կետերից: Յեթե Որին կատարած ունի մի իսկապես խոշոր գործ, այդ հենց այս ծրագիրն է: Վոչ մի տեղ նա այնքան ուսուցիկ չափերով չի ներկայացնում իր զրական և առավելապես բացասական հատկությունները, ինչպիս այս գործի մեջ:

Միաժամանակ այս մի անդրանիկ հուշարձան և հայ ինտելիգենտական մտքի ծննդական շրջանից, յերբ նա կարողանում է քաղաքական այլ և այլ հնարավորություններ հերյուրել մի աղոյային ազատագրական շարժման գաղափարախոսություն հիմնավորելու համար: Որին այսպիսով հանդիսանում է մի նախահայր, վոր իր յեռանդի առավելություններն ու պակասությունները ժառանգություն եր թողնում հայ ազատագրական շարժման բոլոր սերունդներին: Միևնույն ժամանակ այդ ծրագիրն առաջին փորձն եր ռազմականացնելու հայ կղերական դիվանագիտությունը, այսինքն՝ աղերսանքի, կրօնակցության, արդարության և այսպիսի բաների լեզուներին զենքի լեզուն կցելու փորձը: Մենք տեսանք, վոր դեռ Հակոբ կաթողիկոսի բերանով եր արտահայտվում այդ անհրաժեշտությունը, բայց ծրագրային մանրամասնություններն առաջին անգամ Որին եր մշակում: Շարունակ ինդիքք ու պարա-

տանք եր գալ ազատել: Բայց ինչպես դաք—ահա այս նոր եր ասվում:

Ահա թե վորքան շատ կողմերից և կարենոր դառնում Որիի այս ընդարձակ աշխատառության ուսումնասիրությունը, Մենք այստեղ, իրեւ նյութ և փաստաթուղթ, կրերենք եյական նշանակություն ունեցող կետերն այն թվահամարների տակ, ինչպես նրանք գետեղված են բնագրի մեջ, վոր գրված և Փրանսերեն լեզվով 1699-ի սեպտեմբերին¹⁾:

ԶՈՒ ՀՈՎՀԱՆ-ՎԻԼԵԼՍԻՆ

Պերնապայծառ Կայսրնորից: — Եեր կայսրընտրիչ բարձրության բարձր հրահանգներին հնագանդվելու համար ե, վոր յես ինձ պարտք ևմ համարում ձեզ ներկայացնել այս հիշատակազիրը նրանց կողմից, վորոնք ինձ հանձնարարել են, վորպեսզի ամենայն խոնարհությամբ հայտնեմ ձեզ իմ մտքերս այն մեծ գործի մասին, վորն այնպիսի բնագրություն ունի, վոր հարկավոր և ուրիշ շատ շատերի մասնակցությունը Այս ե պատճառը, վոր յես պարտավորված ևմ գտնում ինձ խնդրելու ձեր կայսրընտրիչ բարձրությանը, վոր դուք ևս մասնակցելու բարությունն ունենաք:

ՑԵՐԵՑԱԿ ՆԻԶԱԿԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Նորին կայսերական մեծությունը²⁾ վորպեսզի բարեհաճե լավ պաշտպանել այնչափ բարձր կարենություն ունեցող միձեռնարկություն, այնքան շահավետ՝ սուրբ կրոնի, վողորմած՝ հոգիների փրկության, փառավանձ՝ պիկրապայծառ Պալատինյան տան և նույնիսկ Ավստրիայի ոգոստափառ տան համար, յեթե նա ուզում է ոպնել նրան, տարակույս չկա, վոր տեսնելով Հայաստանի ժողովրդի և իշխանների գրությունն ու խնդրանքները, վորոնց կցված կլինն ձեր կայսրընտրիչ բարձրության հանձնարարականն ու բարձր ինքնազիր նամակը, և լավ հասկանալով ամեն ինչ իր մեծ բարության պահանովդ չպիտի կարողանա զանցառության տալ գործը:

2. Խնկատի ունենալով, վոր մենք նամակ ունենք նույնպես մեր սուրբ հայր պապի անունով, վոր նրան ցույց և տալիս Հայաստանի իշխանների մեծ բազմանքը հպատակվելու սուրբ ամեռին, շատ նպաստավոր կլինի, յեթե այս նամակն ավելի ույժ ստանա ձեր կայսրընտրիչ բարձրության բարձր փակի շնորհիվ մի հաղորդակցությամբ և հանձնարարականով այդ սուրբ ձեռնարկության փերաբերմածը. սուրբ հայրն ևս իր կողմից դրան պիտի ոպնե, յերբ տեսնե գործը հեշտ կատարելի և գանե, վոր ինքը պարտավոր և այդ անել ի պաշտոնե, իրեւ ամրող յեկեղեցու ընդհանրական հայր:

3. Յեթե ձեր կայսրընտրիչ բարձրությունը նույնպես լավ և համարում հայցել բարձրապատիկ կայսրընտրիչ Տուքանական մոնսինիոր մեծ դքսի ոգնությունը, ավելի լավ: Կրոնի համար նրա ունեցած յեռանդն այնչափ մեծ և և նա այնչափ սիրում է ձեր կայսրընտրիչ բարձրության բարձր շահերը, վոր պիտի աջակցե իր բոլոր կամքով, ինչպես վոր նա ինձ այդ պատիվ արագ:

1) Հատվածների վերնագրերը մեզ են պատկանում:

2) Խոսքն ավստրիական կենպայդ կայսրի մտսին ե, վոր ամուսնացած Որին ավստրական կենպայդ կայսրի մտսին են և նյութ այս պատճառով Որին սպասում եր, թե նա շատ ուժեղ մասնակցություն ունենա Հայաստանի պատագման մեջ:

1) ՁՅՈՅ, Ը. 2—44.

(ինձ թվում ե) դաշնակիցներ, վորոնք հարկավոր են ձեր կայսրընտրիչ բարձրության այս մեծ ձեռնարկության համար և վոր մենք պատրաստ ենք ձեր հրամանով գնալ խնդրելու Աստուծո, ձեր կայսրընտրիչ բարձրության և ամբողջ հայաստանի անունով: Յեթե ձեր կայսրընտրիչ բարձրությունը մեզ հետմի մարդ առ, ավելի լավ: Զեր կայսրընտրիչ բարձրությունը դժվարություն չկունենա գտնելու այս յերրյակ նիդակակցությունը, վոր մեծ ոգուտ պիտի բերի ձեր գործը քաջալերելու համար, յեթե բախտը մեզ ժպատ, իսկ յեթե դժբախտաբար գործն անաջողության հանդիպե, այդ շատ կողմն ձեր կայսրընտրիչ բարձրության բարձր հոչակն ապահովելու համար, վոր բոլորովին չեղարող նաև ունենալով աշխարհի առաջին պետքի հավանությունը և նույնիսկ դաշնակցությունը:

ԽՍԱԿՐԱԿԱՆ ՈՒՂԻՆ

4. Յերբ ձեռք բերվի այս զինակցությունը, հարկավոր կլինի անցնելու անտապարհ խնդրել կենաստանի թագավորից և Մոսկովյանների մեծ գքսից թե՛ ձեր կայսրընտրիչ բարձրության և թե նորին կայսերական մեծության կողմից: Նրանք վոչ մի դժվարություն չախտի ցույց տան, վոչ մենք, վոչ մյուսը, նույն իրակ մոսկովյանները հաճությամբ կատարեն այդ, վորովհետեւ գրանում իրանց համար շահ կա:

ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԸ

5. Յերբ անցնելու համաձայնությունը արվի, ձեր կայսրընտրիչ բարձրությունը իր կողմից բավական նպաստած կլինի, յեթե տա հազար ձիավոր գորք՝ դրագոններ, հարյուր գրենադիր, քառան և հինգ թնդանոթներ, քառան և հինգ ոմբածիգներ, չորս հաս վեց կալիբրի (չափի) թնդանոթներ և յերկու հաս տասներկուանոց կալիբրի, հարյուր գնդակ, մի մորտիր հիսուն ոմբանոց, հինգ հարյուր պատրույժավոր հրացան, վորոնց համեմատությամբ և վասող, հարյուր դրոշակ, վորոնք ներկայացնեն մի կողմից խաչելությունը և մյուս կողմից սուրբ Գրիգոր Լուսավորչին և պատշաճ մակագրությամբ հայերեն լեզվով: Դրանով ցույց ենք տալիս, վոր այս լավ ժողովուրդը միշտ հուսացել և դուրս գալ գերությունից՝ խաչի զորությամբ և իր հովանավոր սուրբ Գրիգորի միջնորդությամբ Դրոշակները պիտի բաժանվեն նահանգներում Անա այն բոլորը, ինչ վոր մենք խնդրում ենք ձեր կայսրընտրիչ բարձրությունից հանուն Աստուծո և հանուն այդ բարի ժողովրդի, վոր իր բոլոր հույսը դրել և (Աստուծուց հետո) ձեր կայսրընտրիչ բարձրության բարության և շնորհների վրա:

6. Յեզ ինչ վոր պետք է մարդկանց ու ձիերի ապրուստի համար, մենք դյուրությամբ պիտի հոգանք ամեն տեղ և գլխավորապես Մոսկովիայում, ուր ամեն բան առատ և ու եժան, իսկ ձիերի համար խոտ վորքան կամեցվի:

7. Այն մասնակցությունը վոր մենք պիտի կարողանանք խնդրել նորին կայսերական մեծությունից և վորի համար մենք հայցում ենք ձեր կայսրընտրիչ բարձրության միջնորդությունը, կարող և լինել այն յերկու հազար հուսարներից, վորոնց յես տեսա Ունգարիայում իմ անցնելու ժամանակ և վորոնք կայսերականների համար հարմար մարդիկ չեն, քանի վոր ավելի վասեն տալիս դրանց, քան ոգուտ, գողություններ անելով ամեն տեղ զինվորներից, վաճառականներից և ուրիշներից: Բայց նրանք մեզ համար հարմար կլինին, վորովհետեւ աշխույժ են և ճարպիկ, ինչպես այդ նկատվել և մենում, և քաշալերելու համար նրանց, վոր մեզ լավ ծառայություն մատուցանեն, նրանց թույլ

կտրվի վորոշ չափով ազատություն անհավատների վերաբերմամբ, վոր կատակերտապես համապատասխանում է նրանց ճաշակին: Յեթե այս յերկու հազար հուսարներին նորին մեծությունն ավելացնի հազար մարդ հեծելազոր, հազար դրագոն և այնքան հրետանի, վորքան մենք ինդրում ենք ձեր կայսրընտրիչ բարձրությունից, մենք շատ գոհ պիտի լինենք:

8. Յեթե նորին բարձրություն պայծառափայլ մոնսինյոր Տուքանայի մեծ դուքսը կամենա նմանապես մասնակցել այդտեղ, ձեր կայսրընտրիչ բարձրությունը կարող է իր կողմից տալ այդչափ ավելի պակաս, իր բաժնին ավելացնելով այն, ինչ վոր նա կտա: Չնայած այս բոլորին, ձեր կայսրընտրիչ բարձրությունը կլինի գլխավորը, վորովհետեւ նրան և, վոր մենք կամենում ենք և բությունը կլինի գլխավորը, վորովհետեւ նրան և, վոր մենք ինչ լինելու յե, և վոր գոհացում տրվելու յե ու ըիշներին:

ԾԱԽՍԵՐԸ

9. Զորագնդերը պիտի հոգացվեն մեր ծախսերով, և բոլոր ծախսերը, վոր նորին կայսերական մեծությունը, մոնսինյոր մեծ գուքսը կանեն, կվերապարձնեն յեռապատիկ և ավելի, յեթե հարկավոր և՝ մի տարվա ընթացքում, առանց վեն յեռապատիկ ավելի, յեթե հարկավոր այդ գործից և վորոնք գուցե տան ուրիշ ողուաների, վորոնք պիտի առաջանան այդ գործից և վորոնք գուցե տան մեկնի հազար Յեթե հետագայում նորին կայսերական մեծությունը պետք զգա իր զորագնդերը վերադարձնելու, մենք կվերադարձնենք նույնպես յեռապատիկ կամ պիտի, ինչպես վոր իրան համենի կլինի:

10. Հըետանիի համար, վոր նորին մեծությունը կտա, մենք հույս ունենք նրան վճարել այնքան արծաթ, վորքան կարժինան նտ Բայց այս ամենը ձեր կայսրընտրիչ բարձրության համությամբ և ձեր հրանանդների համաձայն, քանի կար մենք ձեղ ընարում ենք բարձրագույն տնորեն այն ամենի վրա, ինչ վոր մենք ձեղ ընարում ենք բարձրագույն ամենի վրա (փառք Աստուծո) անհավատալի առատություն ամեն բանի, միայն թե այստեղ մարդ լինի վայելելու համար:

11. Այս առատության հետեւանքը կլինի այն, վոր հազար երյու դրամ հետագայում մեզ համար այնքան գնահատելի չել լինի, վորքան մի եքյուն՝ մեր այստեղ մտնելուց առաջ, և վոր մի թնդանոթը (նույնպես և ամեն մի ուրիշ բան) մեզ համար ավելի արժեքավոր պիտի համարվի սկզբում, քան թե հարաբը հետագայում: Վորովհետեւ հայաստանում զանգում են մեծ քանակությամբ զարը հետագայում: Վորովհետեւ հայաստանում զանգում են, զրա համար և, պղնձի և յերկաթի լավ հանքեր, վորոնք հայերի ձեռքումն են, զրա համար և, վոր յեթե ձեր կայսրընտրիչ բարձրությունը կամենա այստեղ ուղարկել ձուլող զարակետներ, կարելի կլինի անարդել հրետանի աշխատել համար:

ԾԱԶՄԱԶՈՒԻ

12. Ձեր կայսրընտրիչ բարձրություն զորագնդերը կարող են մեկնել այստեղից առաջիկա մայիսի ամսվա վերջերում, անցնելու համար Բոհեմիայի, Լիհաստանի, Կրակովիայի և Մոսկվիայի վրայով մինչև Մոսկվա կոչված մայրաքաղաքը, ուր հարմարություն կլինի նրանց նավ նասեցնել մի մեծ գետի վրայով մինչև Աստրախանի նավահանգստանը, վոր դաշնում և Կասպիական ծովի վրա: Այդտեղ զորքերը կգտնեն ամենը, ինչ հարկավոր և Աստրախանից նրանց կունդագորեն հիշալ ծովի վրա միենույն նավերում, վորովհետեւ այս ծովը մինելով վոչ խոր և վոչ լայն, իսկ հիշալ նավերն ունենալով միացյալ և լայն տակ և լինելով վերկից բաց, հարմարություն ունեն այս ծովի համար և ամեն

մեկն ընդունակ և տանելու հաղար հինգ հարյուր ձի և նույնչափ մարզ, առանց
մեկը մյուսին խանգարելու:

13. Եթե յեղանակը լավ լինի, զորագնդերը կանցնեն ծով յերկու յերեք որում և զուրս կան մի նավահանգիստ, ուր ամբողջ շրջակայթում չկա վաչքադաք, վոչ ել զյուղեր։ Այս տեղը տասը մզոնով է հնառ պարսկական հողից, քասդ, մզոնով։ Շամախուց և տասը մզոնով՝ Բագվից, ուր կան յերկու գեղեցիկ շատր վաններ, մեկն արտաքերում եւ սե յուղ (նման կու պրի), մյուսից հոսում է սպի տակ յուղ, վոր լավ է վառելու համար։ Այսակեղ է ահա Հայտանի սահմանագույնը։

ԱՌԱՍՏԵԼՆԵՐ ԼԵԶԱՍՄԱՆԻ ՅԵՎ ՌՈՒՍԱՍՄԱՆԻ ՄԱՍԻՆ

«14. Վերև ասածից յերեսում ե, վոր մի անհրաժեշտություն և հայտնել այ ամբողջ ձևունարկությունը և համաձայնությունը, վոր մենք պատիզ կունենանք կայացնելու ձեր կայսր ընտրիչ բարձրության հետ, նորին կայսերական մեծությանը, սուրբ հայր պապին և նորին բարձրապատվության Տոռքանի մեծ դքսին Բայց այս մասին չպետք և մի խոսք անգամ ասել Լեհաստանի թագավորին, վոչ եւ Մոսկովիայի մեծ դքսին, վորովհետեւ սա կըսածառի սոսկալի նախանձ նախ Լեհաստանի թագավորին, վորովհետեւ տասնեհինգ տարի առաջ նրա նախորդը կամեցավ ուղարկել յերեսուն հազար մարդ Մեծ Հայաստան քան տիրելու համար, յեթե Ղափանի գլխավորներն այդ կամենային, բայց նրանք այդ չկամեցան¹): Նրանց պատճառաբանությունն այն եր, վոր հարցուր տարի առաջ Լեհաստանի ծառայության մեջ կար մի բանակ, բաղկացած յերեսուն հազար մարդուց, ամբողջովին հայերից, վորոնց մի մասը թագավորության (Լեհաստանի) բնակիչներից, մյուս մասն ուրիշ տեղերից բիրել տվածներից: Քանի վոր հայելական այս բանակը հազթող եր, այդ հանգամանքն յերկուղ ազգեց լեհացիներին՝ չլինի թէ ժամանակի ընթացքում հայերը տեր գառնան նրանց թագավորության, այդ պատճառով մի անգամ պատերազմ ունենալով թաթարների հետ, ծածկաբար միաբանվեցին նրանց հետ, վորպեսզի բոլոր հայերին կոտորեն և այսպիսով խեղճ հայերը, մեկ կողմից յենթարկվելով թաթարների հարձակման և մյուս կողմից լքվելով լեհացիներից, գործն այնտեղ հասավ, վոր յերկու հազար մարդ հազիվ ազատվեցին: Այս ժամանակից ի վեր հայերը սարսափում ելին լեհացիներից և չկամեցան նրանց հետ գործ անել: Յերկրորդ՝ դա նույնպես մեծ նախանձ պիտի պատճառել Մոսկովյաններին, վորովհետեւ նրանց մեծ գործը, ամուսնանալով Վրաստանի մի իշխանությունու հետ հիմուն հազար մարդ տրամադրեց վրացիներին, յերբ սրանք պատերազմ ունեցին պարսիկների հետ, կամենալով տեր գառնակ Հայաստանին. բայց գլխավորները չկամեցան զիշիլ²) այն պատճառով, վոր գրանով հայերը պետք ե միանալին հունական յեկեղեցուն, վորի դավանանքը լի յի հերձածներով և հերետիկությամբ և բոլորովին հակառակ է Հայաստանի կրոնին և վորից հայերը սուկում են դպում, գլխավորապես՝ յերբ նրանք փորձով տիսան, թէ ինչ սառը կերպով հույներն ստիպում են հայերին հրաժարել իրանց հավատից, նրանց նորից մկրտելով: Դրա հետևանքն այն ե, վոր հայերն ամելի լավ են համարում

¹⁾ Ամբողջովին տասցածին և իր թե 1684 թվին տեղի ունեցած այս գեպքը: Միենույն բանն է նաև այժմ, և վոչ ավելին, այն, ինչ վոր պատահել է, իր թե, որանից հարյուր տարի առաջ:

2) Այս ել նաւարնթացի նման մի յեղջերվաքաղ է, վորի հեղինակության պատճին ամրող ջապես Որիինն է:

Յաւլ գերության մեջ անհավատների իշխանության տակ, քան լինել հռնական տիրապետության տակ:

«15. Այս ամենը չի արգելում, վոր Մոսկվիայի նոր մեծ գուշաբ մեծ հարգանք և համակրություն ունենա զեսպի հայերը, իր բոլոր գանձերը զնելով նրանց ձեռքում և նրանց շնորհելով ազատ վաճառականություն և ամեն տեղ աղաս շընելու իրավունք Յեղ այստեղից կարելի յե վասահ լինել, թե նա կը համաձայնի արգելել, վորպեսզի հուլիս ամսվա գերջերում բոլորովին նամեր անց չկենան Պարսկաստան, մինչև ձեր կայսրընտրիչ բարձրության գորադների համեմելը և հետեւքը այսակ կդանվէն ավելի քան յերկու հազար հայեր, վոր այս գեղեցիկ ձեռնարկության համար մեծ առավելություն կիրանի Յեղ յեթե ձեր կայսրընտրիչ բարձրությունն ավելի պետք ունի, Մոսկվիայի մեծ գուշաբ չի մերժի (յեթե հարլավոր լինի) քան կամ յերեսուն հազար մարդ աշքի առաջ ունենալ վրացիների համար, վորովհանու վըսաստանի բազմաթիվ իշխաններ և մեծ տերեր՝ (պարսից թագավորի անգլության պատճառով) ապաստան են գտել մեծ դքսի մոտ, և այս առիթից կողավեն, վորպեսզի նորից վերադառնան իրանց կալվածները:

ՆՎԱԶՈՂԱԿԱՆ ԲԱՆԴԱԳՈՒԹԱՆՔ

«16. Այս ամենը (ինչպես ցույց տվի վերևում) մեծ հաճույք կպատճառի Մոսկվաներին...: Յեթև ձեր կայսրնարիչ բարձրությունը կարողանա այս հանձնարարությունը շնորհ անել, վոր յես կարողանամ գնալ համաձայնվելու մեծ դքսի հետ, ձեր կայսրնարիչ բարձրությունը կտեսնի նրանից ստացած մի նամակից, թե այս բանն ինչ ուրախություն պիտի պատճառի նրան: Ուրեմն յես սպասում եմ այս շնորհը ձեր կայսրնարիչ բարձրության բարությունից, մի քիչ հետո յես պատիվ պիտի ունենամ ծանօթացնելու ձեր կայսրնարիչ բարձրությունը Հայաստանի թափափորության ուժն ու ակարությունը:

«17. Զեր կայսրնարիչ բարձրության զորագնդերը կարող են Պարսկաստան մուտք գործել 1700 թվականի հոկտեմբեր ամսվա սկզբին՝ Նրանք Բագր ցամաք իջնելով, պիտի կարողանան կարել անցըք, վորպեսզի նույն տեղից վոչ վոր գուրս չդա, այդ մասին տեղեկություն տալու անհավատներին։ Այստեղ կարելի կլինի հույսաբես քսան և չօրս ժամում հանգիստ առներ, առանց վոչն չից վախենալու, քանի վոր այդ բոլորովին մի մնապատ տեղ ե. հետո արշավել պատերազմի՝ գիշերն շտապով, լուսաբացին Շամախի քաղաքում գտնվելու համար, վոր մեծ է ինչպես Քեռնը, ամրություններ չունի։ Այստեղ կապարսիկների մի նահանգապետ Հարուստ և առեւտրական քաղաք է Շամախին, վորի մեջ վոչ մի զորագունդ չկա. միայն մի քսան մարդ կան նահանգապետի հետ։ Առաջին ովությամբ յես հույս ունեմ, վոր անհավատն երը մի ժամ չպիտի կարողանան զիմադրել, վորովհետեւ մենք այստեղ ունենք յոթը ծխական համայնքներ և քաղաքի բոլոր վաճառականները և առեւտրականները հայ են։ Հենց վոր նրանք տեսնեն ծածանելիս ձեր կայսրընարիչ բարձրության դրոշակները, վորոնք ներկայացնում են խաչը, աչքի կընկնի, վոր անմիջապես դուրս կդան այն քաղաքից տասը հազար հայ մարդիկ, ամենքն ել հեծյալ կազմ ու պատրաստ, տուանց վորքեւ անպատշաճություն գործելու անհավատաների հաշվին, վորովհետեւ յերկիրն այսպես լիքն է ձիերով և ուազմամթերքներով, վորքան կարելի յե։ Ահա տուանը ներկայացնում է Հայաստան, վոր սկսում է Շամախից։ Այստեղից տասը մզո՞ն է մինչև պարսն նմիր քեկի մոտ և անցնելով նմիր քեկի տունը, կարելի յե այստեղ թաղնել զբոշակների և գրությունների կեսը։ Շամախուց դուրս գալիս կա-

բելի յե չորս գնդերը բաժանել չորս մասի. մի մասը, վոր կարշակե ուղիղ դեպի Գանձակ ուր կա անհավատների մի նահանգապետ Քաղաքը վոչ մի ամբություն չունի և վոչ ել քաղաքապահ զորք, բացի յերեսուն մարդուց, վորոնք նահանգապետի նետ են, իսկ քաղաքի շուրջն ապրողները բոլորն ել քրիստոնյաներ են: Յերկրորդ մասը պիտի գնա ուղղակի լոռու յերկրը, ուր կա նույնպես մի մեծ ավանի մեջ մի կառավարիչ վոր վոչ մի գունդ չունի Յերրորդ մասը կերթա Ղափանի յերկրը, վորտեղ կա նույնպես մի նահանգապետ մի քաղաքում առանց ամբության և առանց զորքիր, ինչպես եյին նախորդ քաղաքները Յեկ չորրորդ մասը (վոր պիտի կազմված լինի ընտիր զորքերից) կարշակի նույնպես մեծ արագությամբ Նախիջևան քաղաքը, ուր մի նահանգապետ կա, վոր իր նետ ունի հարյուր մարդ, վորովհետեւ նա թագավորության զլխավոր զորապետն ե, և նա յե, վոր տիրում և մեր նահանգին և վոր մահացու թշնամի յե մեր ընտանիքին և ուրիշ քրիստոնյա իշխաններին, վորոնց շատ անդժարար մեղցնել և տալիս:

«18. Ահա բոլոր մեր ամենամեծ թշնամիները: Դրանից հետո մենք կնասնանք Արաքս անունով մի գետի, վոր զալիս և Թյուրքիայում յեղած երգումից, բաժանելով Պարսկաստանը Հայաստանից: Այս գետը պահպանելու հինգ անցք ունի, վորտեղից կարելի յե անցնել ծածկաբար Կարելով այս բոլոր անցքերը, մենք կթողնենք վրացիներին դեպի աջ ու պարսիկներին դեպի ձախ և այս ամենի մեջ, վոր յես ցույց տվի, զորքերը կանցնեն Շամախուց մինչև Նախիջևան առանց վորեն անհավատներ գանելու, բացառությամբ մի քանի պահների ու զյուղերի՝ այս ու այն կողմ ցրված, բայց վորոնք պատերազմի մարդիկ չեն, այլ խաժամուժ ամբոխ միայն Այս ճանապարհն անցնելիս վորտեղ վոր մարդ կապատճեն անհավատներից, նրանց ձեռաց կիջեցնեն և զինաթափակ կանեն, առանց մոռանալու հրաման տալ գնդերին Նախիջևան գոտնվելու: Կա մի քաղաք, վոր կոչվում է Որդուբաթ և նա ամբողջովին Թյուրքական ե, բոլոր վաճառականներ և առևտրականներ են, առանց վորեն նահանգապետի, վոչ զորք կա, վոչ ել ամբություն: Նրանք չեղոր են, այնտեղ կարելի յե զրանել մի գանձ, վոր թվել չի կարելի, և ուրիշ շատ ռազմամթերք, և այդ միջոցին բոլոր քրիստոնյա իշխանները, վորոնք համաձայնություն կայացրին ձեր կայսրը նարիչ բարձրության հետ, պիտի մնան յիտե, և ինչպես յիտ (վերևում) հշատակեցի ձեր կայսրնարիչ բարձրության, թե Շամախուց տաս մղոն և մինչեւ եմիր բեկի տունը, մենք այնտեղ կթողնենք զրոշակների և անհրաժեշտ գրությունների կեսը, իմացնելու համար զիխավորներին, վոր ամենալավ զընդերն ուղարկեն մեծ փութով, այնպիս լավ. պատրաստ, վոր կազմեն մի զորաբանակ Նախիջևանի նահանգում: Նրանք պիտի ուղարկեն Յերեան քաղաքը մոտ հինգ հազար մարդ. այդ մի ամրացրած քաղաք և մի փոքրիկ գետի վրա բավական մոտ այն լեռան, վորի վրա մի ժամանակ կանգնել եր նոյի տապահնը Այս քաղաքի մեջ կա մի նահանգապետ յերկոտ զինվորներով, ունեն յերեսուն թնդանոթ, առանց վահանագոր ուղընկեցի, ուղմբերի և վոչ ել հրանյութի, վորովհետեւ պարսիկների չպիտեն, թե ինչ բան և այդ, և դրանք գործածության մեջ չեն մտած այս յերկըներում: Քաղաքն ամբացված է միայն չորս պատերով, այսինքն՝ առանց վորեն խրամի, այնպիս, վոր կարելի յե թնդանոթը զուրս բերել պատերի տակը: Այդ քաղաքին կարելի կլինի տիրել առանց կրակ բաց անելու, քանի վոր վառողի պահեստը և զինանոցը հա-յերի ձեռքումն են գտնվում, վորովհետեւ պարսիկները չեն վստահանում նույն

իսկ իրանց ազգին, և այս այն պատճառով, վոր բերդը գտնվում է Թյուրքիայի սահմանագլխին. այս քաղաքում կա զբանաւություն և միայն հայերն են այդ բանի մեջ աշխատողները: Բերդում կան յերեք հարյուրի չափ հայեր, վորոնք նույնչափ պահեստների պահապաններ են և զբանաւուններ, ինչպես և արհեստավորները: Քաղաքն ունի յերկու դուռ և ամեն մի դռան վրա մի-մի պահապան, բայց պարիսպների վրա վոչ վոք չկա: Յեկ յեթի կարողանան այնպես լավ պահել զաղանիքը, վոր նահանգապետը չիմանա զորքերի համելը, կարելի կլինի գտնել ճարտարապետ նավարարին, վոր հայ և պահեստների կառավարչին, վոր նայ և պահապանների ապահանգանց միայն հայերով, վորոնց վրա պարսիկները կասկած չեն տանում:

«19. Այս դուռը զբավելուց հետո կա մի բլուր, ուր շատ այգիներ և պարտեղներ կան, վորտեղ կարելի յե տեղափորել զորքերը, հետո մտնել քաղաք, առանց վորեն վտանգի: Յեթե այս հարվածը չաջողվեց, նրանք կարող են պաշարել քաղաքը շատ քիչ զորքերով, վորովհետեւ այս նահանգը պարունակում է յերեք մեծ գավառ, վորոնց բնակիչները բոլորը հայեր են, և անհավատները շատ քիչ են, և այդ քաղաքի ամբողջ շրջակայքը, բոլոր մեծ պահներն ու գյուղերը բնակված են հայերով, և կարելի կլինի քաղաքը պաշարված պահել մինչև հրետանիների համելը: Կա մի փոքրիկ բարձրություն, վոր քաղաքին իշխում և վերակից, սամհինդ ուղմբ բավական և նրան այրելու համար, վորովհետեւ շատ փոքր և և առանց վորեն սաղմամթերքի: Ահա Պարսկաստանի բոլոր ամրությունները:

«20. Այն միջջոցին, յերբ հայկական գնդերը կդան Նախիջևան, մենք թույլ չպիտի տանք վոր նրանք արշավեն ուղղակի Պարսկաստանի թագավորության վրա, լավ կարգապահությամբ զնալով Թափեղով քաղաքը: Այս քաղաքը Նախիջևանից չորս որ հեռու յե, և քանի վոր այստեղ բոլորովին հայեր չկան և շրջակայքում ել շատ քիչ են, հարկափոր և մեծ բանակ, վոր տիրե այն կողմին: Այդտեղ կան մեծ զինանոց, թնդանոթներ, պատրութափոր հրացաններ և մի նահանգապետ, հրետանիների մի հրամանատար և ուրիշ հինգ կամ վեց մեծ իշխանավորները: Քաղաքում չկա վոչ զորք և վոչ ամրություն: Նա յերկարությամբ և լայնությամբ մի մղոն և և կառուցված և մի դաշտում շատ հոյակապորեն, մեծ պարսեղներով, շատ վահանաշան մի քաղաք և Թյուրքերը, հնդիկները, պարսիկները և մոսկովյանները առևտուր ունին այստեղու: Այս քաղաքում կան անթիվ հրատություններ և այնան կարելի յե պատրաստել հարյուր հազար մարդ իրանց շորերով ու զինքերով, առանց նեղություններ պատճառելու քաղաքին:

«21. Տեր դառնալով այս քաղաքին և վերցնելով անհավատների զորակայաններն ու բնակչները, այստեղ կարելի կլինի հավաքել ձեր կայսրականությունը բանակ յերկըների զինանոցի անցնել Սովորի քաղաքը և քանի վոր պարսկաստանցիների և սովորացիների միջև կա յերեսուն մղոն, բոլորովին ավագություն ուղարկել այստեղ կարելի կլինի ցըտեր կա, վոչ զյուղ, կարելի յե Սովորի մեջ ձմերելու կայան ընտրել. այստեղ կան ավաններ և մեծ զյուղեր, ուր կարելի կլինի ցըտապահներով ամրացնել՝ այստեղ պահով մնալու համար, և զարնանը պիտի տեսնվի թշնամիների առաջապահությունը, վորոնք չեն կարողանա մեղ վրա հարձակվել այս կողմից, վորովհետեւ պարտեր համար վոչ զույնչ չեն գտնվում:

«22. Մեղ համենելու համար նըրանց կճարկավորվի անցնել Թյուրքիայով, վոր չի աշողվի տառանց գժվարությունների, վորովինեաւ կան լեռներ ու կիրճներ, ուր պետք է կազմը խանգարել, այսպես վոր հինգ հարյուր մարդ կարող էն կասեցնել մի մեծ բանակ, և այս ժամանակի ընթացքում պետք է աշխատեն փութով ձեր կայսրանորիչ ըարձրության զնները կարգավորել և վարչեցն էլ ինչպես և հրետանին և անհրաժեշտ ուղղմամթերքները:

«23. Այս առաջնապացությունը, վորի մանրամանությունները նկարագրեցի ձեր կայսրընտրիչ բարձրության, միայն քասն և հինգ որվա զործ ե, բայց չպետք է բանակել վրաններում և վոչ ել մաս ուղղմական պիտույքների հետ, վորովհետեւ այս մի պատերազմ ե, ուր մարդ իր ասլուրն ուտում և ձիու վրա, քանի վոր տարվա այն ժամանակն ե, յերբ ժողովուրդը իր ձմեռվա պաշարն արել ե. ուր վոր ձերդ բարձրության զորքերը բանակ կդնեն, այնտեղ նրանք պիտի կարգանան իրանց վերակազմել մինչև յերեկո, վորովհետեւ յերեկոր շատ արգավանդ և և անհավատներն ունեն միծ քանակությամբ յեղներ, հորթեր ու վոշարներ՝ կերպելու համար մի բանակ մինչև տաս տարի, առանց փորեն նեղություն կրելու. բայց յերեկոյան դեմ պետք և առաջ խաղալ ամենայն շտագով, անհավատների վրա միշտ հանկարծակի հարձակվիլու համար, և յեթե հոգնած լինելու պատճառով ձիերի պակասություն զգացվի, կարելի կիմնի միշտ ձի գտնել վորովհետեւ այնտեղ առատությամբ կա:

ԹՎԱԿԱՆ ԲԱՆԴԱԳՈՒՅԱՆՔ

«24. Յես շատ լավ համոզված եմ, վոր պարսից թագավորի դորքերը վոչ ինչ չպիտի կարողանան ձեռնարկել մեզ դեմ թէ ձմեռվա սկիզբն և թէ զար- նանը. վորովհետեւ Պարսկաստանի թագավորությունը — այդ՝ Հայաստանի թա- գավորությունն և ներս մանելիս, այդ բազմաժողովուրեք և արդյունաբեր մի յերկիր ե, վոր ունի հարյուր հիսուն մղոն յերկարություն և հարյուր քսան մղոն լայնություն և պարսից թագավորի իշխանության տակ ե, չհաշվելով այն յեր- կու նահագները, վորոնք վրացիների ձեռքումն են և հինգը, վոր վրավել են թյուքերը: Ուրեմն ահա սրանք են քրիստոնյա նահանգները. 1) Շարի նահանգը, վոր կարող ե մեզ տալ սկզբում տասը հազար մարդ. այսնեղ շատ քիչ թյուք- եր կան. 2) Վարանդայի նահանգը (վորտեղ կան մի քանի թյուքեր, բայց այնպիսիները չկան), վոր պատերազմի մարդ համարվեն), կարող և պատրաստ տալ 6000 մարդ, 3) Քշթաղս նահանգ — 10 հազար մարդ. 4) Մնձ Ղափանը (ուր կայոթը գավառապեսություն) պիտի կարողանա տալ 60,000 մարդ առանց անհանգուացնելու յերկիր, վոր բազմաթիվ ժողովուրդ ունի և քիչ անհավատ- ներ Ղափանի այս նահանգի իշխաններից չորս հոգի ստորագրել են այն նա- մակը, վոր Հայաստանի իշխանները պատիվ ունեցած են գրելու ձեր կայսր- ընտրիչ բարձրությանը. 5) Սկսիանի նահանգը 6000 մարդ, 6) Գանձակ՝ 15,000 մարդ, 7) Լոռի՝ 6000 մարդ, 8) Գեղարքունի՝ 15,000 մարդ, 9) Զագյամ՝ 5000 մարդ, 10) Յերևան՝ 15,000 մարդ, 11) Դարձալազագ՝ 10,000 մարդ, 12) Նախի- չեան՝ 5000 մարդ, 13) Շարուր թյուքերով լիքն և և քիչ քրիստոնյաներ կան. 14) Շամբ 5000, 15) Յերնջակ 10,000 մարդ, 16) Ազուլիս 6000 մարդ, 17) Մեղրի՝ 3000 մարդ, 18) Դևտաթաղ՝ 5000 մարդ. Յեկանանք բոլորը համարվելով կը- կազմեն հարյուր հնասուն յերկու հազար մի բանակ:

«25. Նրանք ինձ ասացին, վոր նրանցից յուրաքանչյուրը կկարողանաքսան և չորս ժամվա մեջ վոտքի վրա կազմ ու պատրաստ կանգնեցնել իր

գունդն առաջ խաղալու վիճակում, գետ չհաշված վրացիներին, վորոնք կարող են վոտքի վրա դնել 80.000 մարդ և այն հինգ քրիստոնյա նահանգներ, վորոնք թյուրքերի տիրապետության տակ են, վորտեղ յերիտասարդությանը վոչինչ չի կամենում, բայց միայն պատերազմ քրիստոնյա հավատի համար Նըանք առույնպես ինձ վստահեցրին, թե ունեն ավելի քան ութսուն հազար մարդ, վորոնք առենորով են զբաղվում Թյուրքիայում՝ և իրանց մեջ հաշվել են և գրտել, վոր կարող են ունենալ այնքան փող Հայաստանի թագավորության մեջ, վորքան նրանք վորոնք վաճառականություն են անում թյուրքերի յերկրություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԴԱԳՈՒՅՑ

«Յես հաշիվ արի մեր այս յերկը ի փողով և տեսա, վոր այս անում և վաթ-սուն միլիոն լիվր Ազգայում յես գժվաբացա հավատալ զբան, բայց յերե վերա-դառնում եյի Թյուրքիայից, խոշոր վաճառականներն ինձ այդ մասին ապահովեց-րին, ասելով թե՝ պարսից թագավորի մի դեսպան յեկած եր կ. Պոլիս մեծ թյուրքի մոտ այն խնդրով, վոր թյուրքերի ըմբռուտցութերն Անատոլիայում վասաներ պատճառեցին պարսից թագավորին։ Պարսից դեսպանը վերադարձնե-լով Բասրա քաղաքի բանալիները, ստացավ մեծ թյուրքի մի հրամանը, վոր պարսկանայերը, վորոնք առևտուր են անում իր թագավորության մեջ, այլ ևս գլխահարկ չվճարեն։ Պարսից դեսպանի վերադարձից հետո թյուրքերը տեսան, վոր այս իրանց մեծ վաս և պատճառում, վորովհետեւ հարկանանի աված հաշ-վից յերեաց, վոր կային ու թուն հազար պարսկանայեր, վորոնք տարին մար-դագութ տալիս եյին տասն եքուու

«26. Մի խոսքով ինձ անկարելի կը ներ հաշվել ժողովրդների և հարստությունների քանակությունը, վոր կա այս յերկրներում Յես կտամ ձեր կայսրանորիչ բարձրության մի մարդու անուն, վորի մասին կարծում եմ տիկին այսրընարիչունին լսած կինի և վորին Տօսքանի մեծ ու պայծառափայլ դուքսը շատ լավ ճանաչում է: Այդ մարդը կոչվում է Ալետոն Զալարի, վոր Հայաստանի մի վաճառական և և յեղած և Զմյուռնիայում, Թյուրքիայի ծովային նավահանգստում: Թյուրքերը նախանձից լուր տվեցին մեծ թյուրքին այս հայ վաճառականի հարստությունների մասին, վորից հետո մեծ թյուրքն իր սպաններց յերեքին ուղարկեց նրան բռնելու և տանելու Կ. Պոլիս Բայց վորվհետեւ նա շատ խելոր մարդ էր, նախ լավ խոսեց սպանների հետ և նրանց ուղարկեց վերև իր սենյակը, ապա տեսնելով, վոր իր հարստությունները ներքեի պահեստներում ելին, զաղոտնի համայց իր ծառաներին բեռնել մի նավ այնչափ, վորքան կարող են: Քանի վոր սպանները չելին կամենում նրան թողնել, նա նրանց մի նվեր տվեց զբաղեցնելու համար և հետո նրանց հետ իջավ ցած և յերբ սպանները կամենում ելին կնքել նրա զուրքերը և պահեստները և սկսեցին վորոնումներ տան մեջ, այդ միջոցին նա ամեններին ժամանակ չկորցնելով, մտավ մի նավ գնալու համար Լիգուան, վորտեղ նա շինել տվեց մի գեղեցիկ շինություն ծովի ափին: Այս մարդը չկարողացավ վեցնել իր հետ իր ունեցածի և փողի կեսը, բայց և այնպես՝ կարողացավ տանել իր հետ յոթը միլիոն լիվր Հիմա նույնպես մի մարդ կա, վոր Պարսկաստանից յեկած և Վենետիկի ուր դրել և ուուր Մարկոսի բանկը յօթը հարյուր հազար գուլամ և ներկայում նա վեհնայում է, վորտեղ նորին կայսերական մեծությունից խնդրել և կոմիտ տիտղոս, վորին համաձայնել և նորին կայսերական մեծությունը¹⁾ և նա դասով պահանջում է մի կալված, վոր արժե հինգ

3) Առաքը ջուղայեցի Մարգար Շահրիմանյանի մասին եւ

հարյուր հազար ֆիորին Այս բոլոր անոգուտ առաջաբանները, վոր յես անում և՛ ձեր կայսրընարիչ բարձրության, միայն նրա համար են, վոր ձեզ ծանոթացնեմ այն հարստությունների հետ, վորոնք կան Հայաստանում: Այսպիսով չի պակասի վոչ փող և վոչ ստացվածքներ ձեր կայսրընարիչ բարձրության փառավոր ձեռնարկության ոգնելու համար, վորովճեան իշխաններն ինձ ասացին, վոր յերբ հասնեն ձեր կայսրընարիչ բարձրության զորքերը, նրանք իմաց պիտի տան այն ամենքին, վորոնք Թյուրքիայումն են, վորպեսզի վերադառնան: Այդ մեղ շատ կնպաստե մեր ձեռնարկության համար, վորովճեան նրանք, վորոնք զալիս են Թյուրքիայից, բոլորն ել հեծյալ են և լավ զինված: Միենույն ժամանակ նրանք ասացին, վոր վոտքի վրա կդնեն յերկու հարյուր քսան հազար՝ մարդ, առանց նեղություն պատճառելու թագավորության Յեթե յետ անցյալ տարի քախտ ունենայի ձեր կայսրընարիչ բարձրության կողմից ինձ հետ մի ոսպա ունենալու այս յերկրներում, նա տեսած կլիներ ժողովրդների մեծ թիվը, ստացվածքները, անհամեմատելի հարստությունները: Նա զարմանքով տեսած կլիներ այս բոլոր իշխաններին և ճանաչած նրանց մեծ բաղանքներն ու ջերմ անձնվելությունը ձեր կայսրընարիչ բարձրության համար, և այժմ նա պատիվ կունենար ձեր կայսրընարիչ բարձրության այդ մասին ինձ հետ զեկուցում տար, և նա կարող կլիներ պատմել այնպիսի զարմանալի բաներ, վոր յետ չեմ կարող արտահայտել, վոչ ել թղթի անցկացնել:

Այսքանն ենք մենք համարում իսրայել Որի ծրագրի ամենապլիսավոր և եյական մասը: Մնացած յերկարաբան մանրամասնությունները, վորոնք վերաբերվում են Պարսկաստանի զինվորական դրության, Թյուրքիային, Վրաստանին և Յեվրոպայի քաղաքական խնդիրներին, կարող ենք մի կողմ թողնել: Ավելացնենք միայն այն, վոր հայ քաղաքական գործիչն իր բանդագուշանքների մեջ հասնում եր այն աստիճանին, վոր հավատում եր, թե ամբողջ Յեվրոպան պիտի աջակցե Հայաստանի համար սկսվող այդ պատերազմին, քանի վոր այդ մի խաչակրական արշավանք ե, մի սրբազն պատերազմ: Այսպես, նա հավատում եր, թե սպանիական և փորթուգալական ուղղմանավերը, հայերին աջակցելու համար, կմտնեն Հորմուզի ծոցը և քարուքանդ կանեն Ինդիա-Արբաս նավահանգիստը:

Բայց այսքան վոգեսությամբ հորինված ծրագիրը վոչ մի իրական արժեք չունեցավ: Յեկ այսպիսի յելքի առաջին պատճառն ինքն եր, Որին: Բանդագուշանքների մի ամբողջ տեսարանացույց, ում կարող եր նա լրջորեն զրադեցնել: Մի յերկիր, վոր կարող ե 200 հազար մարդ դնել զինքի տակ, բայց վորի վրա տիրողները միայն մի քանի հարյուր զինքոր ունեն: Յեկ այսպիսի մի ույժ խորտակելու համար եր, վոր Յեվրոպայից, յերեք պետություններ կոխ տալով, խաչակրաց արշավանք պիտի գնար: Որին ամեն ինչ հեշտացնում եր ստեր հերյուրելով մեկը մյուսից անհեթեթ և այս ուղղությամբ սանձակուոր տանում եր իր ծրա-

գիրը մինչև ծաղրելիություն: Միայն ծաղրելի կարող եր լինել ոյն բանը, վոր Որին ամենայն առատաձեռնությամբ հանձն եր առնում վճարել յեվրոպական արշավանքի բոլոր ծախսերը յեռապատիկ չափով անգամ, և յերբ հարկ եր լինում մատնանիշ անել, թե ուր և Հայաստանի այդ գանձը, նա ցուցյ եր տալիս... հայ վաճառականների գրպանները: Յեթե մի Շահրիմանյան ունի վենետիկի բանկում 700 հազար գուկատ կամ մի Անտոն Զելերի ապարանք ունի կառուցած Լիվոնոյի ծովափին, միթե այս չեր նշանակում, թե Լեռպոլդ կայսրը իր տված յուրաքանչյուր թնդանոթի յերեք զինը կստանաը:

Յեկ դեպքը ծաղրում եր նրան հենց 'Իյուսելգորփ հասնելուն պիս: Պրոֆեսոր Հեյգլը պատմում ե, վոր Հովհան - Վիճելմ կուրֆյուրստը զարմանք հայտնեց, թե ինչպես ե, վոր Որին, գալով 10 հայ իշխանների մոտից, իր համար ընծաներ չի բերել: Այս բանն, ինչպես յերենում ե, հայտնի յեր գառնում Որիին, և նա հետեյալ նամակն եր գրում կուրֆյուրստին.

«Խսկապես յես ձեր կուրֆյուրստական (կայսրընարիչ) բարձրության ընծաներ պետք ե բերած լինելի, բայց չկարողացա, վորովճետ ճանապարհորդության ժամանակ շատ անհերթ ուշացել եմ, և բացի գրանից, թյուրքերի ազգությամբ այժմ Անտոնլիայում անկարգություններ ու ավաղակներ են տիրում: Պարոն Սաֆրազը և մյուս բոլոր իշխաններն առանց բացառության շատ թանկացին բաներ, ձիաներ և ուրիշ գանձեր, վորոնցից զուք ել կունենար, իմ իրավասության տակ են դընել, վարպեսզի ձեր բարձրության վառքի տակ ձգեմ. յես ել ունեմ մի բանի հիանալի ձիաներ և ուրիշ շատ բաներ և պատմիթել եմ ընկերներին այստեղ ուղարկելու: Այդ սպառնքները հոկտեմբերի ակզրին մեր յերկիրց գուրս կգան և հրամայել եմ, վոր զրանք Զիքենբուրգի Քրոնշտադտ քաղաքը տանեն, թող ձեր բարձրությունը բարեհաճի այնաեղ մի անցագիր ուղարկելու»¹⁾:

Յեթե այս որիական վոճը ճշմարտություն ել պարունակեր իր մեջ, չե կարելի կարծել, թե այդ ընծաներն Անգեղակոթից եյին ուղարկված, վարպետեան այդ 10 իշխան անվանվածներն այնքան ունենոր չեյին, վոր Յեվրոպա ուղարկեյին առանձնապես գնահատելի ընծաներ:

Բայց յեթե Որին ուրիշ, ավելի իրական և պարկեշտ չափերով ծրագրելու ընդունակություն ել ունենար, այս չեր նշանակի, թե անպատճառ ավստրիական հուսարները քառամբակ արշավ եյին սկսելու գեալի Հայաստան: Հարցը ծրագրի ընույթն ու բովանդակություններ չեր: Հարցն այն եր, թե կային մի կամ մի քանի կարող պետություններ, վորոնք անմիջապես շահագրգոված լինեյին

¹⁾) «Արձագանք» լրագիր, Թիֆլիս, 1894, № 75.

Հայաստանի ազատագրության մեջ: Հարցը դրված եր միջին Յեղապայում, և այդտեղ այդպիսի պետություն չկար:

Յեթե Թյուրքիայի ջախջախումը 1698-ին Հռենոսյան Պալատինատի իշխանական պալատում կարող յեղավ նոր հմայք տալ շատ հին խաչակրական գաղափարին և կապել նրան կայսր ընտրող իշխանի փառասիրությունը բորբոքող հայկական թագի շողջողոցների հետ և դառնալ այսպիսով ժամանցը հաճելի դարձնող գործողությունների առարկա,—հետեւալ 1699-ին, յերբ Որին վերադառնում եր Յեղուպա, քաղաքական շահերն արգեն բոլորովին այլ դասավորություն եյին ստացել: Լեռպոլդ կայսրը, վորին կամենում եյին հատկացնել ղեկավարողի գեր հայկական խաչակրության մեջ, այժմ պատրաստվում եր պատերազմի Լուի 14-դի դեմ սպանիական ժառանգության համար, վոր մի ահազին վեճ եր, թե ո՞վ պիտի լիներ Սպանիայի տերը նրա անժառանգ մեռած թագավորից հետո — արդյոք ֆրանսիական թագավորի թե ավտրիական կայսրի վորդին: Լեռպոլդ կայսրին այժմ հարկավոր եր Թյուրքիայի բարեկամությունը, և այս պատճառով նա չեր կարող, յեթե ուգենար իսկ, խրախուսել Արևելքում այնպիսի մեշարժում, վոր գրգռեր Թուրքիայի թշնամությունը:

Ինչ վերաբերվում եր կուրֆյուրստին, նրա առանց այդ ել վոչ ընդարձակ սազմական միջոցները պիտի կլանվեյին ավտրուֆրանսիական պատերազմով, հետևաբար նա կարող եր այժմ հանձնարարել Որին յեթե վոչ իսպառ հրաժարում գաղափարից, գեթ նրա հետաձգում: Բայց մարդկային փասասիրությունն ու շահամությունը միշտ թշնամի յեն տարրական շիտակության: Կայսրընտրիչը ամենայն սիրով ընդունեց Որին, ընդունելի համարեց նրա առաջարկությունները և հենց նրան հանձնեց այդ առաջարկությունների առաջին կետի կատարումը, վոր վերաբերվում եր դաշնակցություն կազմելուն: Ծանրաբեռնված նրա հանձնարարական նամակներով, Որին սկսեց մի գիվանագիտական նաև նապարհորդություն, վոր սաստիկ հիշեցնում ե յերկու Թյուրքահայ յեպիսկոպոսների գիվանագիտական շրջագայությունը Յեղուպայում 1877 թվին, Բեռլինի կոնգրեսից առաջ: Որին գնաց նախ Հռոմ, ընդունվեց պատի մոտ, վոր մեծ համակրությամբ վերաբերվեց Հայաստանի ազատագրության ծրագրին և խոստացավ իր կատարյալ աջակցությունը նրա իրագործման¹⁾: Նույնպիսի ընդունելություն դտավ և նույնպիսի դրական խոստում ստացավ նա և Ֆլորենցիա քաղաքում, Տուքանայի մեծ դքսից:

¹⁾ Անդ:

Մնում եր Լեռպոլդ կայսրը, վորի վարժունքն ավելի և հիացուցիչ եր հայ գիպոլմատի համար: Ճիշտ ե, նա չընդունեց ոգնություն տալու և անմիջապես արշավանք սկսելու առաջարկը, բայց և այնպես չցույց տվեց իրան, թե այդ հարցը գոյություն չունի իր համար: Ընդհակառակը, նա հուսագրական նամակ գրեց Դարաբաղի մելիքներին, խրախուսեց Որին շարունակել գործը և խորհուրդ ավեց գիմել ոռւսաց ցարին, առանց վորի համաձայնության և թույլատվության չե կարելի զորք ուղարկել Հայաստան:

Դրությունը փոխվում եր, Որին կարծում եր թե 1700-ին կը վերջանս Հայաստանի ազատագրության ամբողջ գործը, իսկ այժմ տեսնում եյին հատկացնել ղեկավարողի գեր հայկական խաչակրության մեջ, այժմ պատրաստվում եր պատերազմի Լուի 14-դի դեմ սպանիական ժառանգության համար, վոր մի ահազին վեճ եր, թե ո՞վ պիտի լիներ Սպանիայի տերը նրա անժառանգ մեռած թագավորից հետո — արդյոք ֆրանսիական թագավորի թե ավտրիական կայսրի վորդին: Լեռպոլդ կայսրին այժմ հարկավոր եր Թյուրքիայի բարեկամությունը, և այս պատճառով նա չեր կարող, յեթե ուգենար իսկ, խրախուսել Արևելքում այնպիսի մեշարժում, վոր գրգռեր Թուրքիայի թշնամությունը:

Բայց Որին խոստացել եր Անգեղակոթի ժողովին: Այժմ ինչ պիտի ասեն: Յեթ ահա 1700 թվի հոկտեմբերին կուրֆյուրստը, թե իր և թե իր բարեկամ Որիի պատիմը ու համբավը Հայաստանում պահպանելու համար, գրում եր մի նամակ Դարաբաղի մելիքներին, իբրև պատասխան նրանց գիմումին, վոր բերել եյին Որին և Մինաս վարդապետը:

«Հայաստանի ամենասիրելի իշխաններ և տերեր, սիրելի հայեր, — ասված մը այդ նամակի մեջ. — ձեր սիրելի նամակները մեզ հանձնեցին պարոն Խորացի Որին, վոր մեր և ձեր ազնիվ հավատարմատարն ե և նրան ընկերացրած Մինաս վարդապետը. և. Հակոբի մեծ վանքի արքանայը մի առանձին ունկընդության ժամանակ, վոր նրանք խնդրեցին մեզանից և մենք շատ սիրելաբամ շնորհեցինք: Այդ ունկնդրության միջոցին մեզ ըերանացի հավատիացրին այն հավաքը, վոր ձեր պարոնություններն ունեք գեղի մեղ: Ընդունում ենք այս հավատիացումը մեր որտի խորքում և խնդրում ենք, վոր բարեկամությունը մեր մեջ միշտ անխղելի մնա, վորի վերաբերմամբ պարոն Որին և արքա Մինասը բավականաշափ հուսագրեցին Խոստանում ենք ձեր պարոնություններին, վոր ամեն փութաջանություն կգործադրենք, վորպեսզի աղնիվ մատղրությունները հայտնի չգառնան վոչ վորքի, այլ պահպեն վորպես մեծագույն գաղտնիք: Միաժամանակ հուսագրում ենք ձեր պարոնությունները, որ ձեր մտադրված ամենաքարեպաշտ գործի կատարելության համար ամեն տեսակ ոգնություն, վորքան հնարագոր ե, կանենք թե մենք ինքներս անձամբ և թե մեր մյուս դաշնա-

կեցների միջոցով, վորոնց՝ ամենամեծ ջանաւիրությամբ՝ պիտի խնդրենք ռազմության գալ արդան մեծ մի գործի մեջ, վորպիսի գործից այնքան սպուռ կա, այնքան միլիոն հոգիների փրկությունը կաճե, վորոնք այժմ անհամակաների լուծի տակ են հեծում Բակ այս գործը կատարելու համար հանաչելով, թե ինչ ենք մենք պարտավոր անել, յերբ տեսնում ենք ձեր պարոնությունների այնքան հավատը դեպի մեզ, մենք ամեն ինչ բերանացի հայտնեցնք պարոն Որին և Մինաս արքային, վորոնք իսկապես շատ լավ մարդիկ են, մանավանդ պարոն Որին, ամենահավատարին և անձնվեր մարդը, վոր այս մեծ գործը Աստծու ամենակարող ոգնությամբ կատարման կհասցնե և իսկապես պատշաճում և նրան, վոր ամեն բանի մեջ հավատաք նրան, և նրա խելքին, և նրա կարողության և նրա հոյակապ գործունեյության Աստված ընտրել և նրան մի այսպիսի վախճանի համար, վորի կատարումն այնքան համապատասխան կլինի Աստուծու փառքին, հոգիներին փրկությունն կը երի և բարորությունը բրիտանիական հավատին և ձեր վողջ Հայաստանին: Հավաքվեցինք մենք և միասին խորհուրդ արինք այս մեծ գործի շուրջը. ինչ կերպով սկսենք, ինչ զգուշություններ, ինչպիսի կարգ: Այս պատճառով ձեր պարոնություններին ուղարկում ենք այն խոսքերին, վոր պարոն Որին և Մինաս արքան այս մասին կասին և խնդրում ենք, վոր ձեր պարոնությունները հավատան այն ամենին, ինչ նրանք կասին Ընդ մմին աղաջում ենք ձեր պարոնությունները, վոր դուք բոլորին հուսադրված լինեք, թե մեղանից սիրված եք և ամբողջ սրտից վողջագուրված, և մենք պատրաստ ենք ամեն բան անել ձեր հավիտենական փըրկության համար, ձեր ողափին, խաղաղության և ժամանակավոր յերջանկության համար: Այս բոլորը մենք ցույց կտանք գործով¹⁾:

Պրոֆեսոր Հեյզելը գրում է.

«Որին համոզեց կուրֆյուրսարին, վոր նրա սպաները կամ գեներալները թեև քաջ մարդիկ են և կարող են կռվել, բայց վորպիսեան դրանք Հայաստանի անդական պայմանների հետ ծանոթ չեն, դրա համար նրանք մեծ ոգուած են կարող տալ և այդ պատճառով զորքի առաջնորդությունն իր վրա հանձ առաջ Որին, խոստանալով կուրֆյուրստի իր վրա տածած հույսերն արդարացնել»²⁾.

Ել ուրեմն ինչ եր մնում, վոր պակասեր Հունոսյան Պալատինայում պատրաստվող հայ թագավորացուին: Պատրաստողը, հենց ինքը, Հովհան-Վիլհելմն եր, քանի վոր հետզհետե, յերեի, պարզվում եր նրա համար, վոր Հայաստանն իր թագով չափազանց հեռու յեր նրանից:

Բայց այս բոլորը խոսքեր եյին: Իսկ գործն առջեռումն եր, վոր հենց այս ժամանակից եր իրբեւ անեղ անխուսափելիություն, տնկվում եր հայ ժողովրդի ճակատագրի մեջ, — այն, վոր չե կարող լինել Հայաստանի ազատություն, առանց ցարական Ռուսաստանի կամեցողության և մասնակցության:

Յեկ Որին գնում եր դեպի այդ անխուսափելիությունը:

¹⁾ ՅՅՕՅ, ց. 37—38.

²⁾ «Արձուանք», 1894, № 75.

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՑԱՐԸ ՑԵՎ ԽՈԶԱԿ

1.

Վոչ Անգեղակոթի ժողովում, վոչ մի այլ տեղ Իսրայել Որին խոսք չեր ունեցել Ռուսաստանին զիմելու մասին: Ընդհակառակն, իր ծրագրի 14-րդ հոդվածում նա ասում եր, թե հայերը սարսափում են հուսադրվանների, հետևաբար և ուուների տիրապետությունից և ավելի գերադաս են համարում մնալ գերության մեջ, քան պատվել հուսադրվանների ձեռքով: Միանգամայն, ուրիշն, հետևողական կինի ընդունել, վոր վոչ Անգեղակոթի գնալիս, վոչ մանավանդ Անգեղակոթից զուրս գալիս, Որին չուներ իր գրադանի մեջ վոչ մի առաջարկություն և վոչ ել նրանից բըդիսող լիազորություն առանձնակի և անկախ զիմում անելու նաև Մոսկվային, վորի մասին Որիի խմացածն նույն իսկ այն ել չեր, թե նրա տերը «մեծ դուքս» չեր կոչվում, ինչպես նա շարունակ անվանում եր, այլ «ցար»:

Ցայց ահա փլվում եր նրա ծրագրով նախատեսված յերրյակ զինակցությունը (կուրֆյուրստ, կայսր և Տօսքանայի մեծ դուքսը) և ծառանում եր անհամենշտություն՝ զիմելու ուուներին: Որին իրքի դիվանագետ, բոլորովին չի ել մտածում, թե առաջ ինչ կարծիք ու դավանություն և ունեցել և արագ սկսում եւ պատրաստվել այս նոր առաքելության: Պետք եր մի զիմում Ղարաբղյի մելիքներից, և այսպիսի մի թուղթ, ինչպես ցույց եւ տվել քննադատությունը¹⁾, սարքվում եւ Յեկուպայում, անշուշտ, Մինաս վարդապետի ձեռքով²⁾:

¹⁾ «Հումա» հանդիս, թիֆլիս, 1899, Ա, յեր. 253:

²⁾ Կեղծիքն ակնհայտ և զարձնում մանավանդ ծրարի հասցեն, վորի մեջ մի առ մի հիշած են ուուսաց ցարի անթիվ տիրոպոնները, վորոնցից և վոչ մի

Այս թուղթը կրում է նույն թվականը (1699 ապրիլի 29), ինչ ունի դարձյալ իր թե Անգեղակոթում մելիքների անունից կուրֆյուրստին ուղղած դիմումը։ Միևնույն նյութին վերաբերվող և իր թե միենույն որը զրված այս յերկու գրությունները տարբերվում են իրարից վոչ միայն արտաքինով (կուրֆյուրստի նամակը Փրանսերեն ե, իսկ ոռուսաց ցարինը — ինչու, չգիտենք — հայերեն ե), այլ բովանդակությամբ։ Ռուսներին մելիքների անունից աղերսանք եր ներկայացվում լոկ աղատազրության գործ սկսելու մասին և այլևս խոսք չկար, թե հայերը զրա փոխարեն կրօնափոխ կլինեն։ Աղատազրությունը պիտի կատարվեր հայոց թագավորությունը վերականգնելու միջոցով, բայց թե ում պիտի պատկաներ Հայաստանի թագը, — այս մնում եր անորոշ, մինչդեռ, ինչպես տեսանք, կուրֆյուրստն ուներ աներկբա հավաստիացում, թե ինքը կլինի Հայաստանի թագավորը։ Ռւշադրություն գրավում ե այն հանգամանքը, վոր չմատնանշելով թագի մի վորոշ թեկնածու, ոռուսներին ուղղած թուղթը դարձյալ և դարձյալ վեր եր հանում Որիին, փառարանում եր նրա հոչակավոր ծագումը և շարունակ շշտում եր, թե նրան են իրանց գլուխ ընտրել հայ մելիքները և նրան պիտի հպատակվեն։ Այսպիսով ստացվում եր տպագորություն, թե աղատված Հայաստանում ել նա պիտի գլուխ լինի։ Յեվ վորովհետեւ հետագա բանակցությունների մեջ Ռուսաստանին արգում եր Հայաստանի տերը լինելու և նրան իր զորքերով զրաված պահելու դիրքը, ուստի մենք կարող ենք յենթագրել, վոր Որիի փառասիրությունը հասնում եր զուցե Ռուսաստանի թեարկության տակ դժուվող մի թագավորության զլիսի աստիճանին։

Այսպիս թե այսպես, 1701 թվականի հունիս ամսին Որին գտնվում եր Մոսկվայում՝ Մինաս վարդապետի և Նազար Ռեխիսլի անունով մի լեհահայի հետ, վոր կատարում եր թարգմանի պաշտոն։ Նա ընդունվեց իրեւ Պահայցի կուրֆյուրստի կողմից յեկած պատգամավոր, ստացավ ոռուս կառավարության կողմից իր այդ դիրքին պատշաճող կեցության պայմաններ — առանձին տուն և լավ սնունդ։ Չորս որ անցած իր տեղ հասնելուց՝ Որին կանչվեց տերության առաջին պաշտոնյա բոյարին Գոլովինի մոա և հարցաքննության յենթարկվեց, թե ինչ նպատակ ունի իր տռաքե-

հատն անգամ չեր կարող հայտնի լինել Անգեղակոթի մեջ և վորոնք պարզապես, թարգմանված են լատիներենից։ Լատիներենի ձև ունի և ցարի անունը՝ «Գեարոս Ալեքսանոս», Զկա և «ցար» անունը, վորը փոխարինված և «սուզար» անունվ։

լությունը։ Որին փորձեց խնդրել ունկնդրություն Պետրոս թագավորի մոտ, բայց չստացավ։ Քաղաքական մոմենտը անհարմար հանդիսացավ Որիի բանակցությունների համար նաև Մոսկվայում։ Յեթե արևմուտքում պատերազմ կար սպանիական ժառանգության համար, այստեղ, հյուսիսում եւ բորբոքվել եր մի պատերազմ՝ մի կողմից Եվեցիայի և մյուս կողմից Ռուսաստանի, և հաստանի և նորվեգիայի մեջ, վոր հենց այդպիս ել կոչվեց — «Մեծ հյուսիսային պատերազմ» և տեսեց 21 տարի (1700—1721)։ Այս պատերազմը Ռուսաստանի վերանորոգիչ Պետրոս Մեծի համար կյանքի և մահվան չափ կարուրություն ուներ, վորովհետեւ այդ պատերազմի հետ եր կապված Ռուսաստանի համար կարեւրագույն տնտեսական քաղաքական շահը — հանել Եվեցիայի տիրապետության տակից Բալթիկ ծովի արևելյան ափերի մի մեծ հատվածը և այդպիսով ամրողացնել մեծ ջրային ճանապարհի, իրեւ միջազգային առևտրական յերակի դիրքը։ Հեշտ չեր այս նվազողությունը, վորովհետեւ Եվեցիան ժամանակի ուժեղ պետություններից մեկն եր և վերագանցում եր Ռուսաստանի իր մշակութային զարգացմանը, և Պետրոսը պատերազմի սկզբում պարտություններ եր կրում շվեդացիներից, բայց չեր հուսահատվում, այլ ընդհակառակն, ասում եր, թե հետամնաց Ռուսաստանը պարտությունների միջոցով պիտի սովորե պատերազմելու յեվրոպական յեղանակները։ Իսկ սրա համար հարկավոր եյին բարենորոգումներ և վերակազմություններ, վորոնց և ամենայն յեռանգով նվիրված եր վերանորոգիչ ցարը։

Շատ հասկանալի յե, վոր այնպիսի արտակարգ կարեւր հանգամանքների մեջ Որին, ունենալով հանգերձ կուրֆյուրստի, և պոպորդ կայսրի և կենաստանի թագավորի հանձնարարականները, շատ կարգով չեր ընդունվում ցարի ունկնդրության, մանավանդ, վոր նրա գիվանագիտական առաքելությունը արտակարգ բնավորություն չեր կրում։ Այս պատճառով ոռուսաց կառավարությունը գնուց նախապես մանրամասն և հանգամանորեն հարցուփորձերի միջոցով իմանաւ, թե ինչ են ուզում հայերը։ Պետրոսի ուշադրությունից՝ բազմաթիվ ծանր զբաղմունքների մեջ՝ չխուսափեց այն հանգամանքը, վոր իրան խնդիրք ուղարկողները, իրանից ոգնություն և աղատություն աղերսողները հայերն են, վորոնց նա լավ ճանաչում եր իրեւ ընդունակ վաճառականների, վորոնք այնքան ազգեցիկ դիրք ունեն Պարսկաստանում և Թյուրքիայում։ Հայ խոջայական կապիտալը գեպի Ռուսաստան գրավելու համար նա չեր խնայել թույլատվություններ և

արտոնություններ, մինչև իսկ պարսկական առևտրի համար հաստատատել եր ճանապարհ Աստրախան—Արխանգելսկ և այժմ ել պատերազմում եր՝ այդ ճանապարհը կրծատելու և ավելի հարմար դարձնելու համար։ Արդ՝ նույն այն խոջաները, վորոնք Մոսկվա եյին գալիս արտոնությունների համար, հրավիրում եյին նրան իրանց յերկիրը զրավելու, աղաջում եյին հանուն քրիստոնեալության աղատել իրանց «անհավատների» լուծից։

Մանավանդ այս աղաջանքները, այս քրիստոնասիրական մըրամունջները Պետրոսի համար այնպիսի բաներ չեյին, վորոնց կարելի լիներ արհամարհեր նա հիմնում եր մի իմակերիալիստական կայսրություն, նրա հիմքում դնելով քրիստոնյա ժողովրդների տանջանքների շահագործումն իրեւ նվաճողականության հատու զենք և արդեն ինքն իսկ Բալկանյան թերակղզու քրիստոնյաների մեջ իրան հայտարարում եր իրեւնրանց աղատարարը թյուրքական լուծից։ Ռուսական իմակերիալիզմի այս ամենախոշոր առանձնատկությունը դեռ իր ամենավաղ մանկության հասակից եր լսում հայերի քրիստոնասիրական պաղատանքները, այն ել կասպից ծովի ափերից, վորոնք Պետրոսի վաճառականական յերազն եյին կազմում և վորոնք իրանց հերթին եյին սպասում՝ Բալթիկ ծովի ափերի նման ցարական կայսրության մասնիկ դառնալու համար։ Դեռ հյուսիսի գործը չվերջացրած, ոռուսական իմակերիալիզմը յերեսը դարձնում եր դեպի հարավ, վորպեսզի դեմառեմ հանդիպի դեպի իրան յեկող հայ կղերական դիվանագիտության։

Այս հանդիպումը մի պատահականություն չեր, անցողական մի յերեսություն։ Այս հաստատ հիմնավորված սկզբնավորություն եր գարավոր մի անփոփոխության, վոր պիտի կլաներ հայ ժողովրդի կյանքն ամրողջովին, մինչև վոր չվերջանար 1915—1920-ի կատաստրոֆով։ Պետրոսը, «մեծ» կոչված իր իսկապես մեծ զործունեյությամբ, հայ կղերական դիվանագիտությունն իր ձեռքից բաց թողողը չեր և վերջինս ել իր հերթին ցարականությունից ձեռք վերցնելու կարողությունից ընդ միշտ զրկեց իրան։ Յեզ առաջին իսկ հանդիպումից, առաջին իսկ վողջույն-բարեկց վորոշում և անշարժանում եյին, ամբողջ յերկու դարի համար, փոխադարձ հարաբերությունները յերկու կողմերի մեջ։ Պետրոսը, մեծ զործիչ, բայց և մեծ բռնակալ, կոպիտ, գրեթե վայրենի վարք ու բարքով, վոր Արևելքի մեծ բռնակալների նման կանդ չառավ նույն իսկ իր հարազատ վորդու մահացման վոճիրի առաջ, վոչ մի դապանակ չեր ճանաչում մանավանդ գիվանագիտության մեջ, և խարել, ստել, դապանակել նույն իսկ ամենա-

ստոր միջոցներով, նրա համար ավելի սովորական ու թույլամբնի բաներ եյին, քան ուրիշ գիվանագիտների համար։ Իսկ ցարականության այս ամենացայտուն արտահայտիչ առաջ՝ հայ կղերական գիվանագիտությունը — աղաչափոր, քծնող, ստորաքարշ, կամ արտահայտվելով մի հատ բառով — ցարապաշտ։

Հետևենք այն բանակցություններին, վորոնք սկսվեցին սուսաց կառավարության և Որիի մեջ վերջինիս Մոսկվա ժամանելուց հետո անմիջապես, և մենք նրանց մեջ կտեսնենք արդեն իսկ սկզբ առաջ այն մշտնջենական անփոփոխականությունը, վոր մենք շեշտեցինք վերենում իրեւ ճակատագրական հատկանիշ աղատագրական շարժման ամբողջ տեղության ընթացքում։

2.

Չսահնալով ունկնդրություն՝ անձամբ ցարին բացատրություններ տալու համար, Խորայել Որին հուլիսի 14-ին ինքն երբաց անում գրավոր բանակցությունները, դիմելով Պետրոսին մի աղերսագրով, վորի մեջ նախ իր շնորհակալությունն եր հայտնում այն գեղեցիկ ընդունելության համար, վորին արժանացան Մոսկվայում թե ինքը և թե իր հետևորդները և ապա դիմում եր իր առաքելության նպատակին։ Այստեղ ահա Որին հանդես եր ըերում նոր, միջավայրին հարմարեցրած դիվանագիտական մի յելույթ, վորի մեջ արմատական փոփոխության եր յենթարկվում և այն խաչակրական արշավանքի պատկերը, վորի մանրամասնություններն այնպիսի խնամու ճարպիկությամբ նա մշակել եր Պֆայլցի կուրֆյուրստի գործադրության համար։ Այժմ, բնականարար, գերերը փոխվում եյին, և գործադրողի պատիվը Հովհաննվիլիներից անցնում եր Պետրը Ալեքսեևիչին։

«Եեկանք մենք արտական ասում եր Որին այդ աղերսագրի մեջ, — վորպեսզի ընկնենք ձեր արքայական մեծության գոտները, և մեզ այստեղ ուղարկողների կողմից իննդրինք վողորմություն ոգնելու մեր խզնուկ ժողովը պին, վոր սաստիկ տանձգում և անհավատների բանության տակ։ Զենք կասկածում, վոր ձեր արքայական մեծությանը հայտնի յե, թե հայոց յերկում սրանից տուած, հին ժամանակներում, յեզել են թագավորներ և քրիստոնյա իշխաններ, բայց հետո, նրանց անմիաբանության պատճառվ տեղի ունեցավ այն, վոր հայոց այդ ամբողջ թագավորությունն ընկավ անհավատների լծի տակ։ Յեզ ինչպես Աղամի վորդիները հուսով սպասում եյին Մեսսիայի գալստյան, վոր պիտի աղատեր նրանց հավիտենական մահից, այնպիս ել այս խեղճ ժողովուրդը միշտ ապրել և և այժմ ապրում և այն հուսով, թե ոգնություն կատանա ձեր արքայական մեծությունից։ Նրա մեջ կա մի նախագուշակություն, թե վերջին ժամանակներում անհավատները կդառնան խիստ կատապի և կսկսն հարկադրել քրիստոնյաներին ընդունել իրանց ամենագորշելի որենքը, և այն ժամանակ կըս Մոսկվայի ոգոստափառ տանից մի մեծ իշխան, վոր Ալեքսանդր Մեծից ել

շատ քաջ կմինի և կվերցնի հայոց թագավորությունը և կազատե քրիստոնյաներին: Այս մարգարեցության հավատում եյին մինչև այժմյան ժամանակը և հավատում են այժմ ել, վորովնետե իսկապես տեսնում ենք, վոր անորեններն այն աստիճան չարության են հասել, վոր քրիստոնյաներին մեծ հարկերով և բռնությամբ հարկադրում են ընդունել Մուհամեդի հավատը, իսկ մյուս կողմից տեսնում ենք այն բնական վառ ձգումը, վոր ունի ձեր արքայական մեծությունը քրիստոնեյական հավատը մեծացնելու և բազմացնելու համար, ինչպես և ձեր համարին խոսումը պատերազմելու անհավատների դեմ, վորովը յեթեք այսքան թույլ ույժ չեն ունեցել, ինչպես այժմ, վորովնետե 70 և ավելի տարի յէ, ինչ նրանք մի հատ նշանավոր պատերազմ չեն ունեցել¹⁾:

Յեթե ընդունենք, վոր այս առաջին քաղաքական աղերսակիրն եր, վոր մատուցվում եր ոռուսաց ցարին, հեշտ կլինի տեսնել և այն, վոր այնուհետեւ միշտ ել, այն անթիվ դիմումներն ու աղերսանքները, վորոնք ուղղվում եյին մինույն ցարական հասցեյով, մինչև վերջը՝ մինչև Գեորգ կաթողիկոս Սուրենյանը, ունեյին միենույն Որիական խոսելակերպը, վոճը, պատճառարանական իմաստը և ակնկալական հիմքերը: Հետագա բանակցությունների մեջ մենք պիտի տեսնենք ոռուսաց քաղաքականության ուրիշ շատ ընորոշիչ դիմագծերը, վորոնք պահպեցին մինչև ցարականության անհետացումը: Շատ բարդ և նրանիուս եյին այն քաղաքագիտական կումանները, վորոնց մեջ մտցվում եր նսրային Որին, և սրա դիվանագիտական ճարպիկությունն եր միայն, վոր կարողացավ տանել բանակցությունների նավա անվաս՝ բազմաթիվ ստորջրյա քարերի միջով:

Մոռաց կառավարությունն առաջարկեց Որիին հետեյալ հինգ հարցերը. 1) Վարքան զորք և մտադիր տալ Պֆայլցի կուրֆյուրստը և առհասարակ ուրիշ ինչ գերմանական իշխաններ պիտի ոգնեն և վարքան զինվոր պիտի տան: 2) Այդ զորքերն ինչ ճանապարհով և ինչ պատրվակով պիտի անցնեն Ռուսաստանի վրայով և ո՞վ պետք է պարենավորեն նրանց. 3) Մոռաց թագավորի հողերով արշավելիս, զորքերը չեն վնասի ցարի հպատակներին և ինչպես զրան հավատալ. 4) Յեթե ամենակարող Աստվածը բախտ շնորհե և տեղեր զրավեն, ում անունով պիտի պահվեն նրանք և ում զորքերը՝ ինչ քանակությամբ պիտի մնան այդ տեղերում. 5) Զինվորական արշավանքը վերջացնելուց հետո, վոր տեղերում կլինի զորքերի ձմերոցը և ում հաշվով կպարենավորվեն:

Պատասխանելով այս հարցերին, Որին ասում եր.

1)Կուրֆյուրստի զորքերը մեզ հարկավոր չեն. պատերազմի առաջին տարում հարկավոր չեն ուրիշ զորքեր, բացի ոռուսաց

զորքերից: Յեվ մենք զորքեր չենք ինդրել կուրֆյուրստից, այլ միայն ոգնություն, քանի վոր նա բարեկամություն ունի յեվրոպական շատ վեհապետների հետ: Մենք ոգնություն ինդր եցինք, վորպեսզի, յեթե Թյուրքիան մեզ գեմ պատերազմ սկսե, Յեվրոպան այդ ժամանակ ոգնե մեզ ծովի և ցամաքի կողմից:

Բայց, վորովնետե կուրֆյուրստն այնպիսի մի իշխան է, վոր ուղղում ե մաս ունենալ այս փառավոր զործի մեջ, ուստի նա խոստանում եր իր զորքերը, և յեթե հաճո լինի ոռուսաց թագավորին, կտա ոգնություն և ուրիշ բաներով: Բացի կուրֆյուրստից և կայսրից, մենք գերմանական ուրիշ իշխանների չենք հայտնել մեր նպատակը: Իսկ կայսրն ել խոստանում ե ոգնություն, յեթե այդ կամենա ցարը: 2) Զորքերը Ռուսաստանի միջով անցնելիս ամեն ինչ կառնեն փողով, կվճարեն նույնիսկ ձվի գինն ել. նրանք անցնում են ոռուսաց հողերով, ուստի ոռուսաց թագավորի անվան տակ: 3) Յեթե ցարը թույլ տա զորքերին անցնել իր յերկրով, ամեն տեսակ ապահովություն կտրվի, վոր բնակիչները վոչինչ վնաս չեն կրի, ընդհակառակն, ոգուտ կստանան զորքերից: 4) Յեթե Աստվածը բախտ կտա, բոլոր գրավված բերդերը ցարի իշխանության տակ կմնան և այնտեղ ոռուսական զորքեր կպահվեն. 5) Զինվորական արշավանքը վերջացնելուց հետո, ցարի զորքերը կձմերին հայոց թագավորության մեջ և կկերակրվեն հայերի հաշվով: Յերկիրն այնքան պաղարեր ե և հարուստ, վոր նրա յուրաքանչյուր նահանգը կարող ե 100 հազար զինվոր կերակրել առանց դժվարությունների: Ամենազիստավորը, —ավելացնում եր Որին, —այն ե, վոր թագավորն ընդունե մեր խնդիրքը և համաձայնվի դառնալ մեր յերկրի տեր: Հետո կիմանա նորին մեծությունը, թե դրանից ինչ մեծ շահ կունենա: Բավական ե, վոր միանգամից 10 կամ 20 հազար զինվոր մտնե անհավատների յերկիրը, և ցարը կտեսնե, վոր 10 որվա ընթացքում 100 հազարից ավել հայ կըմոնե նրա իշխանության տակ: Մեծ պատրաստություններ հարկավոր չեն, հայերը մեծ բանակ չեն պահանջում, այլ խնդրում են միայն 10—20 հազար զինվոր, վորովնետե իրանք ել պատրաստ ունեն մեծ քանակությամբ զինված մարդկել¹⁾:

Առաջարկությունները հրապուրիչ եյին, մանավանդ վոր Որին, ինչպես տեսնում ենք, չեր սթափվել գես ևս իր բանդագուշանքներից: Մոռաց կառավարությունն ավելի ևս ուշադիր զարձավ և սկսեց ավելի մանրամասն տեղեկություններ հավաքել: Բացատրությունները շատ հաճախ բերանացի եյին լինում, և մենք

1) ԷՅՕՅ, Ը. 13—14.

տեսնում ենք հուլիսի յերկրորդ կեսում բանակցությունները շատ աշխուժացած: Որին սասարկ աշխատում եր, վոր այդ բոլորը կատարվի գաղտնի, վորովհետև յեթե մահմեղականներն իմանան, թե ինչ է կատարվում, հայ ժողովրդի դրությունը վտանգված կը լիներ: Հակասություններից հյուսված դիմանազիտության սպառավորը յերեխ չեր ել նկատում, թե ինչ հակասություն կար իր վախի և այն արհամարհուա վերաբերմունքի մեջ, վոր նա ցուցադրում եր զեպի նույն այն «անհավատների» ուժն իր ծրագիրների մեջ: Ծայրահեղ զգուշությունը հարկադրում եր նրան չնավատալ նույն իսկ իր թարգման Որեխովիչին, նկատի առնելով նրա յերիտասարդ հասակը: Ուստի կառավարությունը թարգմանի պաշտոնը հանձնեց իր ծառայության մեջ գտնվող նույն Նիկոլայ Սպարտիոսին, վորի հետ Որին խոսում եր թուրքերն լեզվով: Այս մարդուն, վոր զրադվում եր զրական աշխատություններով, վիճակվում եր Որիի դործի մեջ գրեթե նույնքան նշանավոր գեր, ինչ նա կատարում եր հունաց պատրիարքների և ուստաց կառավարության զաղանի հարաբերությունների մեջ¹⁾:

Մի շաբաթ նիստեր տեղի ունեցան Որիի, Սպաթարիոսի և մի ուստի պաշտոնյայի մասնակցությամբ: Այդ նիստերի արձանագրությունները ցույց են տալիս, վոր ուստաց կառավարությունը աշխատում եր վորքան կարելի յե շատ մանրամասն և բազմակողմանի տեղեկություններ ստանալ հայկական շարժման մասին, մանավանդ կամենում եր պարզել, թե ինչ դեր են կատարում այդ շարժման մեջ Արևմտյան Յեվրոպայի իշխանները: Հասկանալի յի այն կասկածամտությունը, վոր հարկադրում եր ցարական կառավարությանը՝ մանրակրկիտ հարցուփորձերի մեջ մասնել: Որիից պահանջվում եր բավականաչափ դիմանազիտական նրբամտություն, վորպեսզի այդ կասկածամտությունը չթելազրեր այնպիսի միտք, վոր իրը թե հայոց հարցը սարքված ե Յեվրոպայի մեջ, ուստական շահերը վնասի յենթարկելու համար: Այդ պատճառով ել Որին աշխատում եր համոզել, թե հայերն իրանց նույսը գրել են միայն նուսաստանի վրա, վոր արևմտյան քրիստոնյա վեհապետների կողմից լոկ համակրության ցույցեր են յեղել մինչև այժմ, իսկ գործից սպասվող բոլոր քաղաքական ոգուտները միայն նուսաստանը պիտի վայելեն Նրան հարկադրեցին անել շարժման ամբողջ պատմությունը, սկսած Հակոբ կաթողիկոսի ժողովից Խոսք յեղավ, թե ինչու հայ մելիքները և մասնավորապես Որին

¹⁾ Ю. Арсеньев - «Новые данные о службе Николая Спафарии в России», М. 1900:

ընտրեցին նախ ուղղակի Յեվրոպային դիմելու ճանապարհը: Հայ պատվիրակը պատրվակ գտավ, թե պարսիկների ահն ստիպեց այդպես անել: Համոզված լինելով, վոր պատերազմական զործողություններ սկսելու ամենալավ ժամանակն ե, Որին թախանձում եր, վոր իր զեկուցումները շուտ հայտնվեն ցարին, վոր Պետրոսն ընդունե հայերի ուղարկած խնդիրքը և խոսք տա, թե հանձն և առնում զլուխ բերել նրանց ազատության գործը: Այդ անելուց հետո, ցարը, ինչպես խնդրում եր Որին, պիտի կայսրի և կուրֆյուրստի նման հուսադրական թուղթ զբեմ մելիքներին, վորոնք սպասում են պատասխանի: Նա մտադիր եր այդ բոլոր թղթերն ուղարկել յերկիր՝ հատուկ սուրհանդակի ձեռքով, Աստրախանի վրայով: Իսկ պատերազմական գործողությունները, ասում եր նա, պետք եր սկսել խակույն և յեթ, նույն 1701 թ. հոկտեմբեր ամսից վոչ ուշ: Յեզ վորպիհետև շվեդական պատերազմը կարող եր համարվել մեծ արգելք պարսկական պատերազմ սկսելու գեմ, ուստի հայ դիմանազեան ապացուցում եր, թե սխալ կլիներ մի այդպիսի մտածություն, թե պատերազմը վոչ մի արգելք չեր կարող հարուցանել պարսկական արշավանքի գեմ, վորպիհետև նուսաստանը Կովկասին սահմանակից յերկրներում ունի կողակների խոշոր զորքը, կարող ե այդ կողմերում զորածողով լինել այն պատրվակով, թե կողակներն ուղարկվում են շվեդական ճակատ, ըայց հանկարծ դարձնել նրանց արշավը պարսկական սահմանների գեմ, առանց նույն իսկ ազմուկ հանելու:

Իսկ արշավանքի մանրամասն ծրագիրը նա տալիս եր մի ընդարձակ զեկուցման մեջ, վոր նա արավ հուլիսի 25-ին և գրի անց կացվեց Նիկոլայ Սպաթարիոսի ձեռքով: Այդ նույն ծրագիրն եր, վոր նա ներկայացրել եր Հովհան-Վիլհելմին, ըայց համառոտած և այն տարբերությամբ, վոր կուրֆյուրստի և նրա յերկու դաշնակիցների զորքի մասին խոսք անդամ չկար: Արշավանքը կատարում ելին 25 հազար կողակներ յերկու ուղղությամբ: 10 հազարը Աստրախանի կողմից նավերով գալիս եր Նիկովոյ անունով նավահանգիստը և այստեղից արշավում եր Շամախու վրա, իսկ 15 հազարն անցնում եր Կովկասյան լեռների մյուս կողմը, ճանապարհ բռնելով այժմյան Պյատիգորսկից գեպի Վրաստան, ասել ե՝ Դարյալի կիրճով: Այդպիսով Վրաստանն ել մտնում եր պատերազմական գործողությունների շրջանի մեջ, և նա ել ապատարքում եր պարսկական լուծիք: Այս հայ-վրացական գործակցությունն ազատագրական շարժման մեջ Որին նկատի յեր ունեցել գեռ Դյուսելդորֆում զտնված ժամանակ և Հովհան-Վիլհելմից նա-

մակ եր տարել նաև թագավորազն Գիորգիին։ Գնալով Մոսկվա, նա մոտիկ հարաբերություններ սկսեց այնտեղ պարսիկների ձեռքից փախած Արչիլ թագավորազնի հետ, վոր համաձայնություն տվեց միասին գործելու։ Այս պատերազմական ծրագիրն ել, յերեկի, կազմված եր Արչիլի հետ խորհրդակցելով։

Ռուսական արշավանքի համար ել Որին վերջնական կետ նպատակի յեր ընտրում Թագրիզը։ Աջողությունն այս անգամ ավելի ևս արագընթաց եր։ Որին հավատացնում եր, թե ամբողջ ձեռնարկությունը, այսինքն՝ պարսիկական Այսրկովկասի ծայրե ծայր նվաճումը վերջացած կլինի մի 15 որում, հիմնվելով գարձյալ այն բանի վրա, վոր պարսիկները վոչ մի տեղ աչքի ընկնող զինվորական ույժ չունեն։ Գործը հեշտությամբ կատարելի լինելու կերպարանքի մեջ ներկայացնելու անհեթեթ մարմանն այստեղ ել նույն անհետեղականությունը, նույն հակասական գրություններն եր առաջ բերում։ Այսպես, Որին ոռւսներից խնդրած գորքերի թիվը յեթե մի տեղ վորոշում եր 25 հազար, մի ուրիշ տեղ իշեցնում եր 10—20 հազարի, իսկ մի անգամ ել ասաց, թե բավական ե և 5 հազար մարդ։ Յեկ բնական եր, վոր այդ անշափու անսահման հեշտացումը վորոշ կասկածներ և վերապահումներ ներշնչեր ոռւս կառավարության, վորքան և նա հետաքրքրված լիներ պարսիկական արշավանքի մտքով, վոր միայն Որիինը չեր, իրանն ել եր։ Համենայն դեպս, նա չշտապեց մի յերկըորդ ռազմակատ ել դեպի հարավ բաց անել ինչպես խնդրում եր հայ պատգամավորը։

Այս բոլորը նախնական բանակցություններ եյին։ Որիի գեկուցումները համում եյին Պետրոսին, վորը, վերջապես, ունկնդրություն շնորհեց Որիին հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբին։ Նա ներկայացավ ցարին իրոք Պայալցի կուրֆյուրստի դեսպան և ընծաներ մատուցեց։ Ընդունելությունը միանգամայն գոհացըց Որիին, իսկ նոյեմբերի 19-ին ցարի անունից հայտարարվեց նրան ոռւսական կառավարության պատասխանը, վոր շատ հուսադրական եր։ Ամենազլխավորը, վոր ուղում եր իմանալ Որին, այն եր, թե արդյոք ցարը համաձայն ե ընդունել հայոց գործն իր հովանավորության տակ։ Նրան պատասխանեցին, թե ցարը «հակված ե» ընդունել բայց շվեյսական պատերազմը թույլ չի տալիս, վոր նա ամբողջ գործն իր վրա վերցնի։ Ուստի առաջարկում եր Որիին գրել կուրֆյուրստին, վոր նա, ինչպես խոստացել եր, ուղարկել յերեք կամ չորս գունդ զինվոր, վորոնց Ռուսաստանի հողով անցնելու մասին առանձին կարգադրություն կանվի։ Բայց,

միաժամանակ ոռւսաց կառավարությունը չեր ուղրւած գործը հիմնել սոսկ Որիի տեղեկությունների վրա։ Դրանից առաջ Պարսկաստան եր ուղարկվել վոմն Վասիլի Քուչուկով՝ պարսկական գործերին մոտիկուց ծանօթանալու համար։ Ինչպես յերկում ե, այդ Քուչուկովի հավաքած տեղեկություններն այնպես չեյին ներկայացնում իրանի դրությունն, ինչպես նկարագրել եր Որին։ Ուստի վճռված եր, նախ քան գործն սկսելը, մի ուրիշ մարդ ուղարկել Պարսկաստան, վաճառականի անունով, ավելի մանրամասն և հաստատ տեղեկություններ հավաքելու համար։ Ցանկալի յեր, վոր այդ մարդու հետ գնար նաև մի յելլուպական հմուտ ճարտարապետ, վոր կազմեր պարսկական բերդերի հատակագիծը և Որիին առաջարկվում եր խնդրել կուրֆյուրստից մի այդպիսի մասնագետ։

Այսպիսով ահա, հայերին իբր թե այնքան սիրող և հուսադրող Հովհանն-Վիլհելմից եր կախված գործը։ Ռուսաստանը, սուտ թե ձիշտ, թույլավություն տալիս եր և մնում եր, վոր խաչակիր գնդերը սկսելին իրանց շարժումը։ Բայց այս բանը չկայացավ։ Յեկ պատճառը, պետք ե ասել, միայն այն չեր, վոր կուրֆյուրստը պարտավոր եր կայսրի հետ մասնակցել Սպանիայի ժառանգության համար բացված պատերազմին։ Յեթե շիներ ել այդ պատերազմը, ինչպես պիտի արշավանք սկսելին կուրֆյուրստական զորքերը, ուր եյին այն զրամական միջոցները, վոր այնպիսի շուայլությամբ խոստանում եր Որին։ Առաջին անգամն եր, վոր քաղաքական ոռմանտիպմը հարվածում եր հայ գիվանագիտական գործիչին, և նա դուցե զգում եր, թե վճրքան խախուտ հիմքեր են սուտ ու պատիր խոսքերը։ Այս եր, յերեկ, պատճառը, վոր ոռւսաց կառավարության պաշտոնական թույլավությունն ստանալուց հետո, նա, փոխանակ թե առնելու և Պալատինատ թոշելու, միայն հանձն եր առնում զրել այդ մասին Հովհանն-Վիլհելմին, առանց, սակայն, ճարտարապետի վերաբերմամբ խոսք անելու, վորովհետև, պատճառարանում եր, կուրֆյուրստը միայն իրան, Որիին եր հավատում և մի ուրիշին չի հանձնի այդ գործը։ Միաժամանակ նա միջնորդում եր, վոր իրան ել մտցնեն այն դեսպանության մեջ, վոր ծրագրվում եր ուղարկել Պարսկաստան։

Բանակցությունների այդ դրության մեջ շվեյսական պատերազմի ընթացքը հանկարծ կլանեց ոռւսաց կառավարության ամբողջ ուղարկությունը։ Դեկտեմբերին ոռւսներն առաջին հաղթությունը տարան, ջարդելով շվեյսական բանակը։ Որին, իհարկե, ստիպված եր դրագրեցնել բանակցությունները, բայց շարունակ

գրություններով հիշեցնում եր բոյարին Գոլովինին իր ներկայությունը Մոսկվայում, մերթ խնդրելով, վոր ինքն ընդունվի զինվորական ծառայության մեջ, մերթ առաջարկություն անելով, վոր իրան թույլատրվի մարդ ուղարկել կուրֆյուրստի և մելիքների մոտ:

1702 թ. մարտ ամսին Պետրոսը հրամայեց նորից հուսաղբել Որին, թե շվեդական պատերազմը աջողությամբ վերջացնելուց հետո, ինքն անպատճառ իր ձեռքը կառնե այն գործը, վորի համար ուղարկված են նա: Այս մի հաղթող թագավորի հաստատ խոստումն եր, վոր ամենից առաջ աղատում եր թե իրան, Որին և թե մանավանդ նրա սրտակից կուրֆյուրստին ծանը, համարյա անիրազործելի հոգսերից, վորոնք կապված եյին միջին յեվրոպական մի խաչակրային բանդագուշանքի հետ: Ռուսաց ցարն իր խոստումը կկատարեր իր սեփական միջոցներով, և մեկն այլիս չեր մտածի իր գորքերը մի հեռավոր արկածականդրության մատնելու, մյուսն՝ այդ բանի համար ահազին գումարներ գտնելու մասին: Հասկանալի յե, թե վորքան մեծ պիտի լիներ նրանց ուրախությունը: Դեսպանական Պրիկազում Որին և Մինաս վարդապետը, լսելով ցարական հուսաղբումն, «արտավելով խոնարհ շնորհակալություն հայտնեցին, — ասված ե պաշտոնական թղթի մեջ, — նորին ցարական մեծության, վոր նա չմերժեց իրանց խնդիրքը, այլ թագավորական խոսքով և խոստումով հաստատեց և ուրախացրեց իրանց»¹⁾: Այս ուրախությունն Որին շտապեց հազորքել Պաֆյլցի կուրֆյուրստին, նրա մոտ ուղարկելով իր թարգման նազար Որեխովիչին: Կուրֆյուրստն ել, ինարկե, պարտքի տակ չմնաց, և նույն տարվա աշնան Որին ստացավ նրանից մի նամակ, լեփ լեցուն բարեկամական գեղումներով, բարյացակամ մաղթանքներով, հուսաղբություններով, խոստումներով և այլն և այլն: Այդ պալատական սնամեջ շողոքորթություններով մենք, հասկանալի յե, զբաղվել չենք կարող: Մեր առջև կա մի ավելի հետաքրքրական գործ, վոր սկսեց Որին:

Նույն ցարական «վողորմած» խոստումը նա հաղորդում եր և Դարլարաղի մելիքներին մի հատուկ սուրհանդակի ձեռքով, վորի անունն եր Միրոն Վասիլիին: Այս Միրոնը հայ եր, 30 տարուց ի վեր ընակություն ուներ Մոսկվայում, ընտանիքի տեր եր, ծառայել եր ռուսաց զորքի մեջ, ստացել եր կապիտանի աստիճան: Այս բոլոր հանգամանքները Որիի համար յերաշխիքներ եյին, թե Միրոնը հավատարմությամբ, զգուշավոր զաղանապահությամբ կը

կատարեն իր փափուկ պաշտոնը: — 1702-ի ապրիլին նա գնաց Աստրախան կարեսոր թղթերով և ափ յելնելով կասպիական նավահանգիստներից մեկում, գնաց դեպի յերկիր, ուսկից վերադարձավ 1703 թվին:

3.

Միրոն Վասիլեի ճանապարհորդությունը կատարվում եր այնպիսի մի ժամանակ, յերբ ամենից լավ կարելի յեր տեսնել թե ինչ իրավական և նյութական ույժ եր ներկայացնում այն յերկիրը, վորի անունից այնքան վեհորեն, այնպիսի սնապարծ հոխորտանքներով խոսում եր իսրայել Որին իր թղթերի և բանակցությունների մեջ: Մենք ունենք նույն այդ տարվա (1702) նըկարագրությունը, վոր շատ մոայլ գույններով արել ե ականատես Յեսայի Աղվանից կաթողիկոսը: Վերևում մենք բերինք նրա նըկարագրությունից մի կտոր, վոր ցույց ե տալիս, թե ընդհանուր հարկահավաքի համար ինչ պատրաստություններ եր սկսում պարսից կառավարությունը Շահ Հյուսելին-Սևլիքանի հրամանով 1699 թվականից, այսինքն այն իսկ ժամանակից, յերբ իսրայել Որին Անգեղակոթում ժողով եր անում Հայաստանի աղատության շուրջը խորհրդակցություն ունենալու համար: Ինչպես տեսանք, այդ պատրաստությունն իսկ, վոր արտահայտվում եր մարդահամար կաղմելու մեջ, արդեն իսկ մի ժողովրդական աղետ եր: Բայց ահա 1701-ին վերջ են ստանում բոլոր նախապատրաստությունները և հաջորդ տարվանից սկսվում ե բուն հարկահավաքությունը, վորի սարսափները ներկայացնելու համար խոսքը տալիս ենք նույն Յեսայի կաթողիկոսին:

«Ապա ել, ասում ե նա, — մեծ վեղիրն Ատրագատականի, որոյ անունն եր Միրզաքահիր, 1100 արամքը և եկն յերկիրս Դարաբաղու և ի Գանջայ քաղաք և սկսաւ առնուլ յոյժ աւելորդօք քան զգբեանն եւ ցրուեցան զօրքն ընդ երկիրս և ընդ գիւղօրայս ի թիւ արկեալ գրովն և քանզի յոյժ ծանը եր լուծն, և ոչ կարէին առնել, վասն որոյ չարչարէին, կեղերէին և ջարդելով առնուին ըստ շափու իւրեանց ի յոլովիցն յոլով և ի փոքրունցն փոքր, զի գեղն 150, 100 կամ 50 թուման և յոյժ փոքրն 30 կամ ի 40 թումանէ չէր պակաս: Նույնպէս ի վաճառականաց յամենայն արուեստառացն առին, և այսպէս ամի ամի զգլուխուն համարէին և հարկահանքն եկեալ ճշտիւ առնուին Յետ այսորիկ միւս ևս կերպիւ հարկս եղին և անուանեցին զայն ապիքուրան, դարձեալ միւս ևս եղին և զայն ասացին շահպատի ախլաջաթ, միւս ևս յաւելին և անուանեցին շնչարինար և զայս երեքպատկեցին և դարձեալ կըկին ևս եղի հրաման ելանել և զբել զամենայն սահմանաց երկիր գիւղօրէից և աղարակաց, զնող զջուր, զայգի, զանդաստան, զծառ, զտունկ և զամենայն ինչ որ պիտոյ է մարդկանց, առհասարակ զամենայն գընցին թէ՛ հայոց, և թէ այլազգեաց

¹⁾ ԷՅՕՅ, Ը. 111.

այլ և վրանաբնակաց և խաչնաբածաց, առդ մի, որ թարաքամայ առնեն, զնոցին ևս զանգեայս և զհօտս, զջոկս և զերամս ամենայն անասոնց չորբատանեաց ի թիւ արկին և յառաջնոյն վերայ կրկին յաւելին զնարկս: Զայս ամենայն զոր գրեցաք նորանար չարիք եր, զոր եղին ի վերայ առաջնոյ սահմանեալ հարկացն որ և յառաջին ևս ծանրագույն էը բեռն ի վերայ ժողովրդեանն: այժմս փոխանակ թիշեացուցանելոյ, զայսքան ևս յաւելին ի վերայ Եւ դարձեալ որպես սովորութիւն է պարսից իշխանութեան՝ յամենայն քաղաքս տէրութեան իւրեանց և ի վերայ ամենայն հրկիք, պետս և զիսաւորս զօրաց կացուցանել, որպես խան, սուլտան, ղուլբէկի, վէզիք, զարուշայ և թուքտար Յառաջնուում որոց մի անգամ այսպիսիթեանցս իշխանութիւն ինչ տային, ոչ դիւրեաւ փոփոխէին և առնուին ի նմանէ: բայց թէ մեծ յանցանք ինչ և կամ վաս առնն յայտնիւր և կամ վասն զրկողութեան և ազանութեան զանգատողք և գատախազք երթային ի դուռն արքայի և զյանցանս առնն յայտնի կացուցանէին, և ապա հազիւ ուրեմն առնուին յանէն յայնմանէ իշխանութիւնն զայն: Իսկ այժմս և այսու թագաւորաւս ոչ այսպէս, այլ թագաւորն և սահարարք իւր կաշտակուր լիալ փոյք ընդ փոյք փոփոխեալ հանէին և ի միում ամի 2 և 3 տեարս և իշխանս, ի միում քաղաքի և գաւառի զինի միմեանց առաքէին: և նորա եկեալ որպես և ինքեանք կաշառօք ստացեալ էին զիշխանութիւնն իւրեանց, նոյնպէս և նորա այնպէս ամենայն զդատ և զիրաւունս ժողովրդեան ի բաց եղեալ կեղեքէին, կողոպտէին զնապանդեալս իւրեանց, այնպէս առնէին և օրինապան դոմիք նոցա այսինքն դատաւորք, շխալիսլամք, շելք և որոց զազիս ասեն: Դարձեալ յաւելին միւս ևս շարիս, զի որք միանգամ տեարք էին զիւղից և ազարակաց, նաև վարձուորք (այսինքն զօնըուղ հատեալ զօրապետք և զորք) որքան զրամոյ չափ որ ոք և ունէր, զնորին տասանորդն ևս հատին և թագաւորական արարին: իսկ նորա ոչ յիւրոց դրամոցն առային, այլ զայն ևս յաւելին և եղին ի վերայ իւրաքանչիւր հնազանդելոցն և այնպես առնէին: Նմանապես և այլ բազմայոյլ չարիս յորդեցին, ուստերս և զստերս ուժգին քարշելով, զարս և զկանայս բռնի ուրացուցանելով և զյեամանացելոց զինչսն և զստացուածնն և զանձս յափշտակելով և ուրացողացն տալով, որպէս և որքան դօվլաթաւորք և մեծատունս աչօք մերովք տեսաք ի Զուղայ և յերեան որ ի վերջին աղքատութիւնն և թշուառութիւնն հասեալ էին: և հարցեալ զպատճառն տեղեկացաք, որ վասն ուրացողացն և յափշտակութեան ընչից իւրեանց եղեալք այնպէս¹⁾):

Այս նկարագրության մեջ մեզ ներկայանում և պարսկական Անդրկովկասը խաղաղ առորեյության մեջ, այսինքն՝ այնպիսի մի ժամանակ, յերբ վհչ արտաքին թշնամիներն ու գիշատիչներն են պատերազմ, թալան, կոտորած և գերեվարություն. կատարում, վհչ ներքին խոռվալթյուններն են ամեն ինչ տակն ու վրա անում, վոչ ել տարերային պատահարներն են քարուքանդություն ժողովրդական անտեսության մեջ: Պարզ և սովորական մի պետական կեղեքում, վոր, ընդհանուր առմամբ, հավա-

¹⁾ «Պատմութիւն կամ Թիշատակ ինչ ինչ անցից դիակից յաշխարհին Աղուանից, համառօտագրեալի սրբազնակատար կաթողիկոսէն Աղուանից ի տեր եսայեայ Հասան Զալալեանց», Շուշի, 1839, էր 19—23:

սարաչափ ընկած և ազդաբնակության բոլոր խավերի վրա, առանց խտրության կրոնի և ազատության: Ամրողջ յերկիրը միենուույն է պարոից Շահի համար, ամենքից ել առնում և, ամենքին ել խեղդում և վարչական միատեսակ մամուլի տակ:

Բայց այս կեղեքովող տարածությունների մեջ և Ղարաբաղը, ուր կան իշխաններ, վորոնցից լիազորված լինելու պատիվ եր ներկայացնում Խորայել Որին արևմտյան և հյուսիսային արքունիքներում: Արդ, պետք եր վոր այդ իշխանները իրավական այնքան ուժեղ և հաստատուն դիրք ունենային պարսից կառավարության աչքում, վոր նրանց կառավարած գավառները ինքնավարական կուռ գույն ունենային, այսինքն վորեւ արտոնական առանձնահատկություններով տարբերվելին իրանց շրջապատող ընդհանուր պարսկական իրականությունից: Այսպիսի բան մենք չենք տեսնում: Ընդհակառակն, հայերի համար կային հատուկ հարստահարություններ, որինակ, բռնի կրոնափոխություններ և զրանց հետ կապված կալվածական հափշտակություններ: Յեկ Յեսայի կաթողիկոսը, ինքն ել իշխանական տոհմից, պակաս դառնությամբ չե վողբում ժողովրդական թշվառությունը, քան այդ կարող եր անել որինակի համար, Յերեանի դաշտի մի բոլորավին իշխանազուրկ վայրի հայ բնակիչ:

Ի՞նչ ե այս ցույց տալիս: Այն, վոր Ղարաբաղի լեռնաստանում տեղական մանր հայ իշխանները (մելիքները) ճիշտ վոր ներկայացնում եյին լեռնային ժողովրդական ինքնավարություններ, բայց այն չափով և ծավալով, ինչ կհաճեր տալ նրանց պարսկական այս կամ այն Շահը: Վարդ կրծատում եր լեռնային ինքնավարությունը մինչև հասարակ գյուղապետություն, և այսպիս եր, անշուշտ, սութ ֆանատիկոս բռնակալ Շահ—Սուլթան Հյուսեյինը, վորն ել թույլ չեր տալիս, վոր ինքնավարությունն ընդգրկե իր հին ավանդական բովանդակությունը, վոր մոտեցնում եր նրան նախարարական դրության: Իսկ յերբ շահական իշխանությունն իրանում ջլատվում եր այդ յերկիրն այնքան հաճախ այցելող անիշխանությունից, այն ժամանակ վոչինչ արգելք չես մնում, վոր մելիքները դառնան նույնիսկ անկախ իշխողներ իրանց զավառական խեցիի մեջ:

Այսքան առաջգական եր, ըստ տեղի և ժամանակի, Որիի հանձնագրատու մելիքական իշխանության իրական բովանդակությունը:

Յեսայի կաթողիկոսի նկարագրությունը տալիս և մեզ և բավական հաստատուն կովան՝ վորոշելու համար մելիքական յերկրի

անտեսական ույժի չափը: Յեվ մենք տեսնում ենք, վոր այդ այնքան հաճախ ել բարձր չեր, գոնե այն աստիճան, ինչպես ներկայացնում եր Որին: Պարսկական չափազանց հարկապահանջության անհանգուրժելի աղետային բնավորությունը ցույց տալու համար Յեսային ասում ե, թե մեծ գյուղերին հարկաբաժին ընկնում եր, նայած յուրաքանչյուրի մեծության, 100—150 թուման (1000—1500 բուրլի վոսկով), իսկ փոքրերին՝ 30—40 թուման (300—400 բուրլի): Վճարելունակության այս ծայրահեղ լարման չափանիշը վկայություն չե, վոր ժողովրդական տնտեսությունը հարուստ կռչվել կարող եր: Թեև այն ժամանակ տիրում եր բնական տնտեսությունը և դրամի պակասությունն եր դժվարացնում դրությունը, բայց չպիտի մոռանանք, վոր պարսկական հարկանանության սխտեմի մեջ լայն կիրառություն ուներ հարկերն ու տուրքերը բնական բերքերով գանձելու սկզբունքը: Ահա ինչ եր իսկական դրությունն այն յերկրի, վորի մասին Որին ասում եր, թե նրա յուրաքանչյուր գավառը կարող է կերակրել, առանց որևէ դժվարության, 100 հազար մարդուց բաղկացած մի բանակ: Յեթե իսկ վոր գոյություն ունենար այդպիսի մի ուղղակի առասպելական առատություն, նա ի վիճակի կլիներ ծծելու իր մեջ և աննկատելի դարձնելու Շահ-Սուլթան-Հուսեյնի ամբողջ առահությունը, վոր Յեսայի կաթողիկոսի նկարագրության մեջ ներկայացվում է իրեւ յերկնային արհավիրք:

Գանք այժմ Միրոն Վասիլեին: Վերադառնում ե նա Մոսկվա 1703-ի ամառը, բերելով իր հետ միայն մի գրություն Աղվանից Յեսայի կաթողիկոսից (մեր վերոհիշյալ պատմագրից) և պատմում ե, թե ինքը Շամախու վրայով գնացել է Գանձակ և այստեղից Զարդախու գյուղը, ուր գտնվում եր Աղվանից Սիմեոն կարողիկոսը, վորին և հանձնել ե Որիի և Մինաս վարդապետի նամակը, ապա շարունակել է ճանապարհը, հասել է Յերևան, ուր հիվանդացել է յերկու ամիս, բայց հանձնել է Եջմիածնի Նահապետ կարողիկոսին գարձյալ Որիի և Մինաս վարդապետի գրած նամակը: Վերադարձին նա նորից մտել է Զարդախու գյուղը, բայց այդտեղ այլևս կինդանի չե գտնում Սիմեոն կաթողիկոսին, վորին հաջորդած Յեսայի կաթողիկոսը տալիս ե նրան այն գրությունը, վոր նա բերել ե:

Յեթե վոչինչ ստություն չկար Միրոնի այս պատմության մեջ՝ մանավանդ Եջմիածնին համար վերաբերմամբ, նշանակում ե, վոր նա վերադարձել եր ձեռնունայն, չըերելով և վոչ մի պատմասխան, վորովհետև Յեսայի կաթողիկոսի գրությունը վոչինչ

վերաբերմունք չուներ Որին և պարզապես որ հնության մի կոնդակ եր, ուղղած Աստրախանի և Մոսկվայի հայերին, վորոնց ծանուցանում եր Սիմեոնի մահը և իր կաթողիկոսացումը:

Այս իրողությունը բարձրացնում եր մի փոքրիկ անկյունն այն վարագույրի, վորի յետևում Որին ծածկել եր իր ձեռնարկած ազատագրական շարժման հիմքերը, հյուղած արհեստականությունից: Հարավային Ղարաբաղի մի քանի մելիքների «Ճերմակ թուղթը», վոր տրվում եր Որիին, վորպեսզի անե, ինչ ուզում ե — ահա ամրող գործը, վոր կատարվել եր յերկրում և վոր արդեն մոռացվել եր, յերբ Միրոն Վասիլեն առաջին անգամ յերեվան յեկավ Շամախում: Յերկիրն ապրում եր այն ծանր տնտեսական ճգնաժամը, վորի պատկերը մեղ տվեց Յեսայի կաթողիկոսը, և բնականաբար հարավային Ղարաբաղում, ուր գործել եր Որին, վոչ վոք այլևս չեր մտածում, թե ուր մնացին այն ողեղեն ամրոցները, վորոնք կառուցվում եյին Անգեղակոթի ժողովում: Այսպես հարավային Ղարաբաղը: Իսկ հյուսիսայինը, բայց նրանից, վոր տագնապում եր պարսկական անչափ հարկանավաքումից, ուներ և այն առանձնահակությունը, վոր դեռ չեր ել հետաքրքրվել Որիի ծրագիրներով:

Այսպես եր յերկրի դրությունն ու տրամադրությունը: Ի՞նչ պետք եր ասել ոռաւաց կառավարության՝ ի պատասխան նրա հայտարարած դրական խոստման:

Բայց մենք գիտենք, վոր Խարայել Որին հրաշալի ունակություն ունեցավ գլխովին անզրագետ Անգեղակոթը գնել լատիներեն և Փրանսերեն գրությունների մեջ ու այդպես տանել Հունոսի ափը: Նույն ունակությունն ել այժմ չեր ընկճվում Միրոն Վասիլեի բերած իրականությունից: Մինաս վարդապետը մի պատասխան-թուղթ է կեղծում, իբր թե Եջմիածնի աթոռակալ և իր անվանակից Մինաս վարդապետի անունից¹), դնում է այդ կեղծվածքի մեջ ուրախություն եջմիածնականների կողմից Պետրոս ցարի խոստման առիթով և ասում եր՝ պարսիկների ահը չի թողնում, վոր զբեն մանրամասն իրանց նվիրական մտքերը Միրոնի ձեռքով և խոստանում եր զբել հետո և ուղարկել մի ուրիշ մարդու հետ:

Այս խոստումն ել կատարվում եր, բայց դարձյալ Մոսկվա գետի ափին, այս անգամ ավելի խոշորկել չափերով, վորոնց ծայրերը գնում հանգում եյին քրեյապես պատժվող կեղծարարու-

1) Ա. Հովհաննիսյան — «Հայ — ոռու. որիհնատացիան», յեր. 37—42.

թյան։ Կեղծվում եր մի ամբողջ մելիքական ժողով՝ Գանձասարի վանքում, վոր իրը թե նամակ եր գրում ցար Պետր Ալեքսեևիչին, հայտնելով նրան իր մեծ խանդավառությունը, վոր նա հաստատ վճռել և ազատել հայ ժողովուրդն անհավատների լուծից¹⁾։ Միաժամանակ այս իրը թե ժողովը վորոշում է կաշառել բոյարին Գոլովինին և թարգման Նիկոլայ Սպաթարիոսին, տալով առաջինին 20 հազար վոսկի և յերկրորդին 4 հազար վոսկի։ Բայց փող, իհարկե, չկա, ուստի նա փոխարինվում է խոստումով վճարել այն ժամանակ, յերբ զործը վերջացած կլինի, այսինքն՝ յերբ Հայաստանը աղատված կլինի։ Յեվ իրու «աղնիվ կաշառատուներ», ժողովի անդամները գրում և կնքում են պարտամուրհակներ։ Ահա, որինակ, ինչ եր գրված Գոլովինի պարտամուրհակի մեջ՝

«Մեք մեծ հայաստանյաց մելիքքս խոստացինք վոր տանք Ֆեղը Ալեքսեովին կուլին վոր ևս աջորդ մեծին Մոսկովի թաղավորին իո (20,000) վոսկի վոր կանե բոլն (2400) թուման ինչ ժամանակ վոր այս խորհուրդն մեր կատարի աստուծով անպատճառ տամք և այլ ավելի ընծա շնորհակալությամբ շնորհեմք քո մեծ բարությանդ փոխարեն վոր կառնես այս նեղ ժամանակին վասն մեր (կնիքներ)։

Թվ. ոնձք (1152—1703) մայիս 27, ի զավառն Աղվան (8 ստորագրություն²⁾)։

Յեվ այս բոլոր կեղծիքները³⁾ տեղ անցան Ռուսաց կառավարությունը հավատաց, թե թղթերն եւ պարտամուրհակներն ել Աղվանք զավառումն են գրվել և յերկար ճանապարհ կտրել՝ Մոսկվա հանելու համար։

Այս մի խոշոր հաղթանակ եր Իսրայել Որիի համար, վորի վրա հենվելով, նա մեծացնում եր իր պահանջները և ավելի ընդունակական արկածախնդրական տարրեր եր մտցնում եր դիվանագիտական ձեռնարկության մեջ։ 1703 թվականը վճռական տարի յեր Պետրոսի համար Շվեդական պատերազմի աջող ընթացքն այնքան եր առաջ տարել նրան գեպի բալթիական ծովեղերքը, վոր նա այդտեղ, նեվա գետի վրա, հիմնարկեց իր համար մի նոր մայրաքաղաք, Պետերբուրգը։ Իսրայել Որիի համար ել կեղծիքներով պատրաստված այդ նույն տարին վճռական եր Այժմ նա մտքում դրել եր դնալ Պարսկաստան, բայց վոչ թե իրրե կեղծ անդամն տակ ծածկված մի անդամ այն գեսպանության, վոր ուսաց կառավարությունը մոտադիր եր ուզարկել այդ յերկիրը, այլ ինքն իսկ գեսպան իր սեփական անունով։ Այդ մի սովորական

1) ԹՅՕՅ, ս. 162—163.

2) Ibid. c. 168.

3) Ա. Հովհաննիսյան, անդ, յեր. 44.

առորյա դեսպանություն չպիտի լիներ, այլ մի ամբողջ արտակարգ յերկույթ, ընդունակ շամեցնելու Արևելքը։ Դրա համար Որին խնդրում եր Պետրոսին նախ և առաջ տալ իրան գնդապետի աստիճանն և ապա թույլատրել վոր ինքը գնա Ցեվրոպա և այստեղ, իրեւ արդեն զինվորական, բանակցություններ վարե զինվորական և այլ կարգի մասնագետների հետ, թե դեսպանության միջոցին Պարսկաստանում ինչ հարցեր պետք կլիներ ուսումնասիրել ծրագրված ուսւական արշավանքի աջողության համար։ Բայց այս կարող եր չհամարվել բավականաչափ զորեղ հիմք՝ այդ խոջային զինվորական բարձր աստիճան տալու համար։ Ուստի Որին գրում եր։

Եթե չեմ խնդրում վոր զինվորական մի գունդ հանձնվի իմ հրամանատարության տակ, այլ խնդրում եմ միայն գնդապետի աստիճան, վորպետի արդիքանուց շարունակել մեր գործը համաձայն վեհափառ ցարի մտքին։ Խնդրակետության աստիճան շնորհելու մեջ թե հայերը և թե ողոստափառ կայսը և թե պայծառափայլ կուրֆյուրստը կտհանեն ցարի վորմածության և համակրության նշանը¹⁾։

Բացի այդ բոլորից՝ գնդապետությունը հարկավոր եր և այն պատճառով, վոր Որին մտադիր եր, Պարսկաստանից վերադառնալուց հետո, Աստրախանում իր հաշվով կազմել մի հայկական գունդ և զնել այն ցարի արամադրության տակ։

Պետրոսը կատարում եր Որիի յերկու խնդիրքներն ել և սա 1704 թվի փետրվարին ուղերձում եր Ցեվրոպա արդեն ուսւաց գնդապետի աստիճանով։ Գնալուց առաջ նա զրում եր կուրֆյուրստին, թե ցարն իրան ասել ե, թե ինքն ացրեն կարգադրել և 300 նավ կառուցանել Աստրախանում և պատրաստ պահել սահմանագլխի վրա յեղած զորքերը։ Ուրեմն հեռու չեր ազատարար արշավանքի իրականացումը, և Որին շտապում եր կազմակերպել իր գեսպանությունը։ Հարց եր, թե ով պիտի գեսպանի պաշտոն տար Որիին։ Ավատրիայի կայսը հրաժարվեց նույն իսկ հանձնարական նամակ գրել պարսկա Շահին, վորպեսզի Որիի գեսպանությունը քաղաքական բնույթ չստանա։ Միակ հարմար պատրակն այն եր, վոր Հոռմի պապը գեսպան ուղարկեր Որիին Շահի մոտ, տանելու համար նրա նամակը, վորի մեջ, նախկին տարիների որինակով, խնդրվածք կլիներ հովանավորելու Պարսկաստանում ապրող կաթոլիկ քրիստոնյաներին։ Հովհաննիհելմը հատուկ այս նպատակով Հոռմ եր ուղարկում իր խոստովանահորը, վոր և աջողեցնում եր Որիի գեսպանությունը։

1) ԹՅՕՅ, ս. 176.

Բացի գրանից՝ նա հանձնարարական նամակ եր գրում Շահ-Սուլթան-Հյուսեյնին:

Ակսվում եյին անուհետեւ այս նորելուկ դեսպանի մեծածախս պատրաստությունները: Ամստերդամում գնվում եյին զենքեր և ռազմական հանդերձանքներ այն գնդի համար, վոր Որին պիտի կազմեր Աստրախանում և այդ բոլորն ուղարկվում եր Մուսկվա: Մեծամբոխ և բազմալեզու յեր և դեսպանական շքախումբը. նրա մեջ ներկայացած եյին բազմաթիվ ազգություններ—հայ, ոռու, ֆրանսիացի, շվեյցարացի, գերմանացի, հոլլանդացի, լեհացի և այլն: Զանտգան եյին և այդ մարդկանց դիրքերն ու պարապմունքները: Կային զինվորականներ, դերձակներ, ծառայողներ. մեկը մինչեւ անգամ տանում եր իր հետ իր կնոջը: Այդ ամբողջ խումբը, մոտ 50 հոգուց բաղկացած, միանման համազգեստ գններ հագած Որիի առատաձեռնությունից:

4.

Այստեղ ծագում եւ մի շատ կարեոր հարց—վոր տեղից եր Որին վերցնում փող՝ այդքան մեծ ծախսեր անելու համար: Կարելի յե վստահաբար ասել, վոր Անգեղակոթի ժողովը, բացի մաքուր թղթի վրա ճխտած կնիքներից, վոչինչ չտվեց և չուներ ել տալու իր դեսպանին: Իր հայրենիքում Որին, չնայած վոր փառաբանում եր իր իշխանական նշանագոր ծագումը, ուներ, ինչպես ինքն եր խոստովանում¹⁾, փոքրիկ կալվածներ, վորոնցից վոչ մի արդյունք չեր ստացել 26 տարիներից ի վեր: Յեվ սակայն, միայն Ամստերդամում գնած զենքերն ու հանդերձանքները նստել եյին 15—20 հազար բուրլի: Հասկանալ այս յերևույթն անկարելի յե, առանց ընդունելու, վոր Որին ունեցել ե մի կապիտալ, վոր նրան խոշոր շահեր եր տալիս՝ այդ աստիճան առատաձեռն լինելու համար:

Ճիշտ ե, Որին գրում եր կուրֆյուրստին, թե իր մեծ նպատակի համար նա ծախսել ե իր ունեցածը, պարտքեր և արել և վոչինչ չե թողել իր «խեղճ յերեխաներին» (ուներ յերկու տղա²⁾), բայց այս բոլորը բավական չեր ծածկելու համար այն դեսպանական շուրջն ու շքեղությունը: Պետք եր, ուրեմն, ուրիշ աղբյուրի ողնության դիմել: Խսկ այդպիսի աղբյուր կարող եր լինել միայն այն պարապմունքը, վորին նա նվիրված եր թե Փարիզ—Վերսայլում և թե Դյուսելդորֆում իր դիվանագիտական աստանդականությունից առաջ—վաճառականությունը: Շատ կարելի յե,

վոր հայրենիք գնալու համար և գրանից հետո յել նա մի առժամանակ ինքն անձամբ չեր վարում առևտրական գործերը, բայց այս չեր խանգարում, վոր նա մասնակցե այդ գործերին ուրիշ ների միջոցով, ընկերովի: Այսպիս ասելու կովան մեղ տալիս են այն սերտ հարաբերությունները, վոր նա ուներ Յեվրոպայում առևտուր անող զոկական կապիտալի հետ: Չորս յեղբայրներից բաղկացած մի առևտրական ընկերություն, «Գողթան գավառի Ազարակ գյուղից Գապարի վարդիք Մելքոն, Բաղդասար, Թարիդուլի յել Հարուրյուն»¹⁾, լույս ե գալիս պատմական փաստաթթվերի մեջ՝ չնորհիվ այն հաշիվների, վոր նա ուներ Խորայել Որիի հետ: Այս կողմից աչքի ընկնող և մանավանդ Թարիդուլին կամ Թարզուլին, վոր բարեկամացած եր Որիի հետ և շատ գովզում եր Մինաս վարդապետի կողմից: Հայտնին այն ե, վոր Թարզուլին փող եր պարտք տվել Որիին, բայց, ինչպես պարզ յերեւում ե, այս սոսկ մի դրամական փոխառվություն չեր, այլ մի պահանջ, վոր բղանում եր առևտրական հաշիվներից: Ահա 1705-ին Թարզուլին գնում ե Դյուսելդորֆ, գանգատվում է Որիի վրա, վորին և բռնում են²⁾, մինչև վոր նա կես գնով վերջացնում է պարտատիրոջ պահանջը և սա, բավականանալով այդքանով, գնում է իր առևտրին, Թրանսիա: Սակայն այսքանով չեցին վերջանում Որիի հարաբերությունները գոյթնեցի Գապարի մնացած յերեք վորդիների հետ: Հաշիվները մաքրելու համար Որին յերեքին ել վերցնում եր իր զեսպանության մեջ, վոր արդեն գերազանցորեն վաճառականական մի ձեռնարկություն եր:

Միայն 1706 թվի աշնան եր կարողանում Որին վերաբառնալ Մուսկվա իր զեսպանական ճանապարհորդությունն սկսելու համար, բայց ելի մի քանի ամսով ուշացավ: 1707-ի ամառն եր, յերբ Որին, վերջապես ճանապարհ ընկավ: Նրա զեսպանությունն ուժիցանում եր մանավանդ մի հանդամանքով, այն, վոր պարսից Շահին հանձնարարական նամակ գրում եր և ոռուաց ցարը, այն իսկ Պետրոսը, վոր արդեն ուչակ եր ստացել Արևելքում իր հաղթություններով շվեդացիների վրա: Այս նամակն այլ ևս յերկորպական եր գարճառում Հոռմի պապի նամակը, և Որին իրան ամեն տեղ ցուցադրում եր իրեկ ոռուաց դեսպան:

Ռուսաց արխիվներում պահվել ե այդ նամակի որինսակը, զըրված պարսկերեն լիզվով և մենք տալիս ենք այստեղ նրա հայերեն թարգմանությունը³⁾:

1) Ա. Հովհաննեսյան, անդ, յեր. XV., 2) Անդ.

3) Ռուսերենը տ. ԷՅՕՑ, ս. 224:

« Թովյալն ու բարձրյալն Աստուծո ողնությամբ և վողորմությամբ, մենք վեհափառ, հզոր և մեծափառ թագավոր և մեծ իշխան Պետրոս Ալեքսիկիլին ամբողջ Մեծ և Փոքր և Սպիտակ Ռուսիո ապավենը, Մոսկվայի, Կիևի, Վա-դիմիրի, Նովգորոդի և Կազանի թագավոր և Աստրախանի արքա և Սիբիրի խա-քան, և Վիտակայի թագավոր և Մոլենսկի մեծ իշխան և Տվերի, Յողուրի, Վիտորի, Բուլղարի և այլոց և Նովգորոդի թագավոր և մեծ իշխան, և ցածր կողմի և Զերնիգովի և Խյազանի և Ռոստովի և Յարոսլավի, Բելգովերդի և Ոգուրի և Որբուրի և Կոնդոնի և ամրող հյուսիսային կողմի թագավոր և ուրիշ շատ յերկրների և հո-դերի, արևելքի, հյուսիսի արևմուտքի ի նախնյաց անտի թագավոր և ինքնակալ, արևելցի կողմանց նվիրական և բարձր յերկրակալ, բարձր առաջել հաստատուն և, մշտապես յերկրատես լինի, և մեծափառ վաղեմի պարսիկ խաթանների ընդարձա-կության և ծավալման... և ինքնակալը և մյուսլիման սուլթանների մեջ յերեկին հմեծարուն և շատ մյուսլիման աղքերի հրամայովը, և Պարսկաստանի և Շիրվանի շրջակայից մեծափառ և բարի մեր հարևան Հյուսեյին Շահի մեծության իսկա-կան բարեները մատուցանելով, մեզ, վեհափառ թագավորին մեծության պաղա-տանոք հյայտաբարելու պատճառով, նախապես մեր ծառայության մեջ գանվող գնդապետ (բոլուք բաշի) Խորայի Որի անուն (անձը), Կըզը Ալմայի (իմա չուսմի) պապից ձեր վեհափառության մեր յեղբայր Շահի մեծության ուղարկ-ված մի քանի հարցերի մասին հատկապես քրիստոնյա հոգատակներից ձեր յերկում ընակողները, վորպեսզի նրանց վրա գութ ունենաք և հիշյալ անձը մեզ, վեհափառ թագավորի մեծության անարգանոք (ՏԸԸ) և նվաստությամբ խնդրելու և ազերսելու պատճառով, վորպեսզի մենք, վեհափառ թագավորի մե-ծությունս հատուկ մի նամակ ունենել ու շնորհել և Շահի մեծության ուղարկել և անկեղծ սիրելի ու հարևան լինելու պատճառով, հրամայեցի վոր այս նա-մակը արվի և իր աղաշանքն ըստ հարկին կատարել ընդունելի յեղավ մեզ մոտ: Ձեր վեհափառությունից փափառ ու ցանկությունս այս ե, վոր՝ ինչպես պետք է, մեր նախնյաց և մեր միջն յեղած ամրապինդ բարեկամության հիման վրա, մեր եղբայր Շահի մեծությունից խնդրում ե, վոր հիշյալ գնդապետ Խորայի Որի անուն (անձը) մեր այս նամակով ըստ արժանվույն հարգվի և վեհափառ գահի առաջ պատասխանը ընդունել հրամայի և մոտը գտնված նամակը բարե-կամարար հասկացվի և հիշյալ Խորայի Որիի վրա ուղություն և վողորմություն չխնայիլ: Մեղ վեհափառ թագավորի մեծության համար հայտնելու և հիշյալի վրա իր գերդաստանի համաձայն շնորհ անելու մասին. մենք, մեծափառ թա-գավորի մեծությունս, մեր յեղբայր Շահի մեծության յեթե մազ վերաբերյալ մի այսպիսի հարց ծագի, վարձարությունը վորոշված ե (իմա ի փոխարեն պատրաստ ենք մեզ վերաբերյալ նման հարցերը կատարելու):

« Գրված և մեր մայրաքաղաքում, աստվածապահ մեծն Մոսկվա, Քրիստոնու ծննդյան 1707 թվին, փետրվար ամսի ոկտոբերին, մեր թագավորության սկսելու 25-րդ...²⁾:

Աստրախանում դեսպանությունը նստում եր հատուկ նավի մեջ, վոր նրա արամաղրության տակ եր զրված Պետրոսի հրա-մանով: Ցերեք նա ափ իջավ Նիզովոյ նավահանգստում, ոռու նաս-

¹⁾ «Վալիրագրեր հայ-պարսկական հարաբերությանց մասին, ընդորինակեց, տառակարծրեց և թարգմանեց Հ. Անառյան», Յերեման, 1927, Համալսարանի պահպանից, յեր. 89—93:

վաստիները հետևեցին նրան մինչև Շամախի, ավելացնելով այս-պիսով նրա շուրջը: Այսքան հաջողությունները գլուխ պատեցնող եյին ամեն մի փառասերի համար, ուր մնաց Որին, վոր առանց այդ ել լի յեր բանդագուշանքներով և ձեռք եր բերել այս ամ-բողջ փայլն ու համարումը ամենահեշտ միջոցով, այն եւ մի քա-նի թղթեր կեղծելու միջոցով: Ցեվ հասկանալի յեր, վոր այսպիսի մի մարդ գրգորիչ հանգամանքները շատ հաղորդեր իր հաղթական գնացքին գեպի այն յերկիրը, վորի ազատարարը պիտի հանդիսաւ-նար ինքը, գուցե նույն իսկ և թագավորը: Ցեվ իրավ, դեսպա-նությունը աղմուկ եր հանում Արևելքում սկսած Աստրախանից, Այդ աղմուկն եր, վոր ստիպեց նրան յերկար ժամանակով կանգ առնել Շամախում:

Սահմանագլուխի այս չափազանց կարևոր և հոչակված քաղա-քում ահագին տպագորություն թողեց Որիի գեսպանությունն առաջ ու առաջ իր բազմամարդությամբ, վորի նմանը, գոնե այլ-տեղ, զեռ չեր տեսնված: Դրա չափ, գուցե և ավելի ազգու և ան-սովոր եր այն հանգամանքը, վոր գեսպանության գլուխը մի հայ եր, այն ել պարսկաստանցի հայ: Ցեվ այս հայը ոռւսաց հոչակված թագավորի գեսպանն եր: Տեսակ տեսակ կասկածու-ցուկներ տարածվեցին Շամախում, վորոնք զանազան բացատ-րություններ եյին առաջացնում: Մահմեղականներն ուղում եյին հասկանալ, թե ինչ իսկական նպատակ ունի այդ արտասովոր գեսպանությունը. նրանց համար խորհրդավոր նշանակություն եր ստանում մանավանդ այն, վոր ոռւսաց թագավորի ներկայա-ցուցիչը հասարակ հայ ել չեր, այլ հին հայ իշխանների տոհմից եր սերված: Սպահանի կաթոլիկ միսիոնարներից մեկը, յեղվիտ Կրուսինսկին, միակ ոտար հեղինակն ե, վոր մանրամասն և հե-տաքրքրական տեղեկություններ և հաղորդում Որիի գեսպանու-թյան մասին: Նա հավատացնում ե, թե ինքն Շամախում արտա-սանել եր մի ճառ, վորի մեջ ասել եր, թե ինքը հայոց թագա-վորի սերունդ եւ): Այս խոսքերին առանձնապես խորհրդավորու-թյուն եյին տալիս մանավանդ Որիի հետ Շամախի գնացած ոռւս նավասահները:

Այս բոլոր արտասովոր հանգամանքները հարկադրեցին Շա-մախու իանին պահել գեսպանությունն այն քաղաքում մինչև Սպահանից թույլտվություն ստանալը: Իսկ Սպահանում, ինչպես վկայում ե նույն ականատես յեղվիտը, Որիի գեսպանության

²⁾ «Histoire de la dernière Révolution de Perse» t. I, La Haye, 1728 p. 215.

փայլը, բազմամարդությունը մեծ և զրեթե անորինակ իրարանցում պատճառեցին։ Աչքի ընկնող հանգամանքն այն եր, վոր ամենից շատ հուզվողները Սպահանում ապրող Փրանսիացիներն եյին, վորոնց զվարակությունը Սիրիական առաջնորդ մեկը, վոր Լուի 14-դի առևտրական գործակալն եր պարսից արքունիքում։ Յեկ վորովնետե առևտրական գործակալներ եյին նաև «հոգի փրկող» միսիոնարները, ուստի հասկանալի յէ բոլորի միաբանությունը Միշշի հետ այս հուզմունքի մեջ։ Սրանց առաջին գործն ե դառնում տեղեկություն հասցնել պապին, թե նրա դեսպան Որին Պարսկաստանում հալածում ե կաթոլիկներին¹⁾, Նպատակն ինքն ըստ ինքյան հասկանալի յէ—հետացնել Որին։ Այս միջոցով շատ հեշտ եր ազատվել հայ դեսպանից։ Բայց նա ուռաց ցարի դեսպանն ել եր Կաթոլիկությունն այստեղ ոգնել չեր կարող։ Ուստի Միշելը ձեռնարկում եր մի ամբողջ պլրոպագանդի՝ պարսից կառավարությունը ահարեկելու և այդ ճանապարհով Որիի դեսպանությունը վիժեցնելու համար։

Միշելն ամեն տեղ ասում և քարոզում եր, թե հայերն իրենց հին դիվաններում գտել են գուշակություն, վոր հայկական թագավորությունը պիտի վերանորոգվի Մոսկովյաների ձեռքով, թե նրանք համարում են, վոր այժմ յեկել հասել և այդ մարգարեյության կատարման ժամը։ Այս պատճառով բոլորովին անխորհուրդ չեն այն մեծ շուքն ու փայլը, վորոնցով ցարը շրջապատել և այդ հայի դեսպանությունը։ Յեկ Միշելն առանց այնայլության հավատացնում եր ամենքին, թե Հայաստանի թագավորը լինելու յենց ինքն Որին։ Յեկ իր այս գյուտը «լուսավորված» Փրանսիացին ապացուցում եր մի հիմար խաղով, վոր պիտի, իրը թե, սաստկացներ տգետ և նախապաշարված պարսկային մտքի ահարեկումը, դառնար մի հարկադրանք, վոր Որին Շամախուց վերադառնեն Ռուսաստան։ Այդ խաղն այն եր, վոր նա վերցնում եր Փրանսերեն *il sera roi* (սա կինի թագավոր) դարձվածքը և ցույց եր տալիս, վոր նրան կազմող բոլոր տառերը կան *Israel Ori* անվան մեջ։

Միշելի այս պլրոպագանդը, սակայն, բոլորովին հակառակ հետեանք ունեցավ։ Պարսից կառավարությունը գտնում եր, վոր Որիի ազգած յերկյուղն ինքը հարկադրում ե, վորքան կարելի յե, շուտ ընդունել և շուտ ել ճանապարհ դնել նրան։ Անկարելի յեր ճանապարհից յետ դարձնել մի դեսպանի, վորի ձեռքում գտնվում

¹⁾ M. Michel Tamarati — L. Eglise Géorgienne, Rome. 1910, p. 610—611.
Միշելինը վկայում է և Կոռուսիսկին («Hist.» etc. 215—216).

նը ոռւսական ցարի պես մի հզոր թագավորի նամակը¹⁾)։ Այդ պատճառով նա հրամանագրեց Շամախու խանին, վոր թույլ տա ուռաց դեսպանին շարունակել իր ճանապարհը զեպի Պարսկաստանի մայրաքաղաքը։ Յեկ Որին գնաց։ Բայց Շամախու նա մնացել եր արգեն մոտ յերկու տարի։

Ի՞նչ եր անում նա այդքան ժամանակ։ Այս մի հարց ե, վոր կարող ե բանալի դառնար Սպահանի Փրանսիական հուզմունքների գաղտնիքը բաց անելու համար։

Մենք կատարելավես վոչ մի բան չգիտենք այն մասին, թե ինչ արավ Որին այդ յերկու տարվա ընթացքում իր քաղաքական ձեռնարկության համար Ղարաբաղի վերաբերմամբ, վոր այնքան մոտ և Շամախուն։ Հավանական ե, վոր վոչինչ չարավ, յեթե արած լիներ, վորևէ հետք թողած կլիներ։ Միակ բանը, վոր կարող ենք արձանագրել այն ե, վոր Պարսկաստանից վերադառնալիս նրա հետ միացած ենք տեսնում Գանձասարի Յեսայի կաթողիկոսին։ Այս ել ինչպես հետո կտեսնենք, մի խոշոր ձեռքբերում եր. բայց բանն այն ե, վոր մենք չգիտենք ուր և ի՞նչ պես տեղի ունեցավ այդ բանը—վոչ արդյոք Գանձակում, Պարսկաստան գնալու կամ, վոր ավելի հավանական ե թվում, այնտեղից վերադառնալու ժամանակ։ Համենայն դեպս, Շամախում անցկացրած յերկու տարին չե կարելի։ Եցնել այդ մի հատիկ գործով, և մենք պիտի վորոնենք, թե ի՞նչ աղբյուրից եր Որին կերակրում բազմամարդ շքախումբը և Արևելքը, Ալաղնող պերճանք պահպանում։ Ուրիշ աղբյուր չկար և չեր կարող լինել, բացի այն մեկից, ինչ տալիս եր Շամախին,—բացի վաճառականությունից։ Յեսայի կաթողիկոսն անվանում ե Շամախին «ամենափարթամ մայրաքաղաք» և գրում ե. «Զի էր պահտար (Նավահանգիստ) կասպիական ծովուն և յամենայն կողմանց վաճառականցն տեղիք ընակութեան և վաճառի և շահաւետութեան ի Հնդկաց, ի Հունոց, ի Հռուսաց և յամենայն երկրէ։ և այսպէս լի էր ամենայն ըստացուածովք և գանձիւք»²⁾։ Այդ փարթամության ծնունդ եր Ղարալա զյուղի թյուրք մելիքը, վոր միլիոնատեր եր և այդ վկայում եր, թե առևտրական կապիտալն ինչ խոշոր կուտակումներ եր զոյացըրել վոչ միայն քաղաքում, այլ և գավառում։

Որին վաճառականություն եր անում, ամենեին չքաշվելով իր

¹⁾ «Hist. de la der. Rêv. de Perse» I, p. 217.

²⁾ „Պատմութիւն կամ Յիշատակ“, յեր. 41:

զնդապետական աստիճանից: Յեղվիտ կրուսինսկին ասում է, թե Որին ավելի վաճառական եր, քան գեսպան: Յեվ այս միանգառ մայն ճիշտ է: Յետեսից հարյուրավոր մարդիկ զցելով մի ահագին ճանապարհ անցնել յերկրից յերկր թե ինչ ե՞նամակ պետք է տանել վոր քրիստոնյաներին հովանավորեն,—այս՝ իրք միակ նպատակ՝ բոլորովին համոզիչ չե: Համոզիչ չե ամեննեին և այն, վոր Պետրոսի պես մի ցար շվեդական պատերազմի ամենայեռուն միջոցին միտք ունեցած լինի միջնորդություն ուղարկել Պարսկաստանում ապրող քրիստոնյաների համար: Զպետք և լուրջ բան համարել և Որիի այն միտքը, թե իր դեսպանության միջոցով մասնագետները պիտի ուսումնասիրեն և ծրագրեն ուսուների պարսկական արշավանքը, վոր պիտի վերջանար Թավրիզում և յեթե սա լիներ միակ նպատակը, կարիք չեր մնա այնուհետեւ շարունակելու ուսումնասիրությունը մինչեւ հեռավոր Սպահան:

Մնում է միակ հիմնական դրդապատճառ—դեսպանությունն իրք առևտրական քաղաքականության հանձնակատար իրա համար հարկավոր եր, վոր ինքը՝ դեսպանությունն ունենար առևտրական կարավանի կերպարանք: Որին, իրք դեսպան, իրավունք ուներ Պարսկաստան ներմուծել ամեն տեսակ ապրանք առանց վորեւ մաքսի: Այս իրավունքը նա գործադրում եր լայն չափերով, և նրա առևտրական կարավանն ել գնալով մեծանում եր, այնպես, վոր Սպահան նա մտնում եր, ունենալով իր հետ արդեն 200 մարդ:

Վոր սուսաց ցարը առանց վորոշ անտեսական հրահանգների չեր ուղարկել Որիին Պարսկաստան, այս յերեսում և հենց այն բանից, վոր վերադարձին նա, Պետրոսի հանձրարարությամբ, Ռուսաստան եր տանում քսան հայ արհեստավոր ընտանիքներ՝ մետաքսից զանազան կտորներ գործելու արհեստը ուսուներին սովորեցնելու համար Ավելին մենք չգիտենք, բայց կարող ենք կունի այն մեծ պայքարից, վոր հենց այդ ժամանակ ծավալել եր Սպահանում յելքուղական կապիտալը և վորի մասին մենք արդեն խոսել ենք:

Միամտություն կլինի կարծել թե ֆրանսիացի Միշելին անհանգստություն պատճառողը հայկական թագավորության վերանորոգումն եր կամ Որիի թագավոր դառնալն եր: Իսկական անհանգստություն և նույն իսկ յերկյուղ պատճառողը ֆրանսիացի վաճառականի շահն եր: Այդ Միշելը հենց այն Միշելն եր, վոր անգլո-հոլլանդական կապիտալի ընդիմադրությունների գեմ կովերով, 1708 թվին կարողանում եր դաշնագրություն կնքել

առարսից կառավարության հետ¹⁾) և կոնցեսսիաներ ստանալ ֆրանսիական առևտրի համար: Պայքարը, ինչպիս գիտենք, առևտրական ճանապարհների համար եր: Անդլո-հոլլանդական կապիտալը տանում եր պարսկական առևտրական ովկիառնու և նրա հետ այս բանի մեջ միացած եր հայ խոջայական կապիտալը Զուղայի խոջայական կապիտալը, բացի զբանից,—մենք այս և տեսանք,—ոտանձնել եր և դրեթե միայնակ վարում եր և այն դերը, վոր պարսկական առևտրարը տանում եր Կապովից ծովի վրայով Ռուսաստան, մի հանգամանք, վոր այնքան մեծարելի յեր դարձնում այդ կապիտալը ցարական կառավարություն աչքում: Պետերուրդի հիմնարկությունը Ռուսաստանի ամենախոշոր անտեսական շահերը Սպիտակ ծովի ափերից փոխադրում եր Բալտիկ ծովի ափերը: Այս մեծ կերպարանափոխությունը բավական խոկ և բացտարելու համար, թե կնչպիս եր, վոր Պետրոսի այնքան շոյում, վայխում եր Որիին: Սրա միջոցով նա ուզում եր իր ձեռքն առնել ամրող խոջայական կտպիտալը Պարսկաստանում: Յեվ իրավ, 1710 թվականին, նա, ինտրիկ, վոչ առանց Որիի մասնակցության, դաշինք եր կապում Զուղայի հայ վաճառականների հետ, վոր նրանք պարսկական ամրող մետաքսը վաճառելու տղնին միմիայն Ռուսաստան և իր կողմից արտօնություններ եր տալիս նրանց մաքսի վերաբերմամբ²⁾:

Ահա ինչու յեր հուզվում, հիմարական ցույցերի մեջ ընկնելու չափ բորբոքվում էուի 14-րդի գործակատար Միշելը: Հայրոջայական կապիտալի թշնամին եր նա և աշխատում եր վոր չխցիլի Մարսիկի, իր հայրենի քաղաքի, ճանապարհը, իսկ այս առաջացնում եր միջազգային մրցակցության սամուկացում: Ռուսաստանն ել մրցող եր, և հասկանալի յե, վոր ֆրանսիական ազգեցության ուժեղացումը Սպահանում պիտի տառջ թերեր շահազրոված հակառակորդների կողմից ճնշում թույլ և ապիկար Շահ-Ռուլիման Հուսեյնի վրա: Պետրոսի համար ափելի ինչ հարմար առարկա Շահին վախեցնելու համար, քան Հայաստանի ազգատպարումը, վոր Խարայի Որիի կրած գաղափարն եր: Աւստի և նրա դեսպանությունը, վոր այսպիսով գերազանցորեն առևտրական բովանդակություն ուներ, սունառ եր այնքան արտակարգ

1) Maurice Herbelot - „Une Ambassade persane sour Louis XIV“, Paris 1907, p. 10-11.

2) П. Г. Бутков — „Материалы для новой истории Кавказа“, ч. I, Сп^с. 1899 с. 4.

կերպարանք: Յեվ պետք է ասել, զոր Որին լավ կարողացավ խաղալ Շահի պալատում վախեցնողի դերը: Այսպես և հավատացնում միշտ միևնույն միակ ազգյուրը հանդիսացող յեղվիտ Կրուսինսկին: Ահա ինչ է գրում, հիմնվելով նոր «Հիշատակների» վրա, մեր վաղածանոթ Մոռիս Մյունին:

«Զարին պատվիրակն իսպահան մատվ՝ 200 Մոսկովի և հայու հետեւորդ խմբով մը: Եթ իշխանական կարծեցյալ ծագումը և իր գնդապետի աստիճանը խըստաբար կը հիշեր միշտ ամեն առնդիվ: Առաջին տեսակցութենեն իսկ շատ բարձրեն վարդեցակ պարսիկ վեհապետին հետ: Ասոր հայրանեց—կամ հիշեցուց —թե հայածանըներեն փախտական հազարավոր հայեր ամեն տարի Յեվրոպա կապատանելին: Շահը շեր ըմբռներ, թե այդ անդուլ գաղթականությունը տէարացման անդարմաննելի և արագ պատճառ մըն եր իր կայսրության համար: Յեվրոպայի վեհապետները, ամենցուց Որի, համոզած եյին, թե Շահը կանգիտանար իր պաշտոնյաներուն զեղծումները: Հիմակ զոր ամեն ըան գիտեր, պետք եր փութալ վերջ մը դնելու Ռւ ձարին պատվիրակը արդարացի կերպով դիսել տվակ արևելյան վեհապետին, թե յեվրոպացի վեհապետները բնակվ չեմին բռնադատեր իրենց յերկրներուն մեջ քնակող մահմենգականները՝ քրիստոնեայիւն ընդունելու Խնչ կնշանակելին այդ բռնի կրոնափոխությունները: Հավատարապես անպատճառեր եյին թե բռնադատողներուն և թե կրոնափոխներուն:

«Հյուսելին շահը, վարուն ուղղված եյին այդ խոսքերը, հասկցավ այս հառը, զոր զուցի շատ փիլիսոփայական եր իրեն համար, չենք զիտեր Բայց զիտենք զոր այս խոսքերը հասկցվեցան այն կերպով, զոր սարսափեցուցին իսպահանի արքունիքը Շահը մտածեց, թե Որիի ուղեկից 200 մոսկովյանը և հայերը: Պարսկաստան արշավելու պատրաստ զորաբանակի մը հառաջընթաց հետազոտիչներն եյին: ...Հյուսելին շահը զվարած մեացած եր Զարին զենուանը վոնդել չեր համարձակեր Մյուս կողմեն կը կռաներ, թե այդ մարդը լրտես մը ու վտանգավոր թշնամի մըն եր: Եթ տկարությանը զիտակից, խոհմությունը կտրուկ զրոցումն մը նախամեծար համարելով, չար բարդին բարի յերես ցուցուց կրցածին չափ շոյեց փայփայեց իսրայել Որիին, առանձնաշնորհութերով վողողեց զանի և զեղեցիկ խոստումներով որորեց: Զարին դեսպանը շահագիտությանց ախորժք պահած եր իր վաճառականության ժամանակին Զեր անգիտանար, թե իր դիվանագետի գերքը իրեն թող կուտար Պարսկաստան մըտցնել ամեն տեսակ ապրանք առանց վոնեն մաքս վճարելու: Պարսիկ իշխանությանց պաշտպանությամբը և քաջալերությամբը, լիուլի ոգուիցակ իր պաշտոնին հատուկ առանձնաշնորհութերեն: Սովորական „պայուսակը“ գարձաւ յեղակ ճշմարիտ սայլ մը, վորչափ ատեն զոր իր պաշտօնը տեսց Պարսկաստան, Հակերով ապրանք երեր կուտար Ռուսիային և Իսպահանի մեջ կծախեր խոշոր շահով: Որի այդպես մեծ հարբառություն դիզեց շուտով¹⁾:

Մեր քրանսիացի հեղինակը, սակայն, ուրիշ ազգյուրներից տեղեկություններ չունի Որիի դեսպանության վերջի մասին, ուստի և չգիտե, զոր Որին կարճ ժամանակ մեաց Սպահանում: Հյուսելին Շահն շտապեց շուտ ազատվել ուսւական դեսպանի ներկայությունից, վորովհետեւ գտնվում եր քրանսիական աղդե-

ցության տակ և շարունակ մտածում եր մի հասուլ զիսպահության միջոցով խնդրել Լուի 14-դի պաշտպանությունն իր բոլոր հակառակորդների գեմ²⁾): Այնպես զոր տեղեկություններն Որիի առևտուի մասին չեն կարող վերաբերվել միայն գեսպանության Սպահանում մեացած ժամանակին, այլ պիտի վերաբերվեն այն ամրող ժամանակին, զոր Որին անցկացրեց Պարսկաստանում:

1709 թվի ամառվա վերջերում Հյուսելին Շահը պատասխան եր զբում Պետրոս ցարին, մի առ մի կրկնելով նրա բոլոր տիտղոսները և հայտնում եր, թե ստացել է պապի և նրա նամակներն իշխանավոր Իսրայել Որիի ձեռքով, զորին և պատվել եւ Խնդիրը, ասում եր, իմ պետության մեջ ազգով քրիստոնյաների մասին ե: Յես նրանց մեջ յեղած անհնագանդներին, ինչպես այս անվում է ամեն տեղ, ըստ արժանույն, մահվան պատժի յեմ յենթարկում, բայց այժմ, ձեր ամենաբարձրագույն մեծության նամակն ստանալով, ներեցի նրանց²⁾):

Նույն 1709 թվին Որին Շամախում եր: Այստեղ ևս մեաց ամրող մի տարի՝ մի մեռած ոռւս վաճառականի զործերը կարգավորելու համար: Վերջապես նա հասնում է Նիգովոյ նավահանգիստը, վորտեղից պետք եր նավ նստել՝ Աստրախան դուրս գալու համար: Բայց հենց այստեղից ել սկսվում եյին ձախորդությունները, վորոնք վերջիվերջո պիտի դնելին Որիին սնանկացած վաճառականի զրության մեջ: Բացի մեծաքանակ հետեւողներից, վորոնց թիվը հասնում եր 200-ի, Որին տանում եր իր հետ նաև մեծ քանակությամբ ապրանքներ, զլխավորապես, իհարկե, մետաքս և մետաքսի զործվածքներ: Այդ հարստության աչքի ընկնող մասը կազմում եյին 25 ձիանները, զոր Որին հատկապես տանում եր Պետրոսի համար: Այս բոլորն Աստրախան տեղափոխելու համար հարկավոր եր չորս նավ, և այսպիսի պահանջ ել ուղարկված եր Աստրախան, բայց Նիգովոյ յեկան միայն յերկու նավ: Այսպիսով ստիպված լինելով 25 ձին ուղարկել ցամաքով, Որին մեացած իր գեսպանությունը և նրա գույքերը տեղափոխում ե յերկու նավերի մեջ և ճանապարհ ընկնում: Մի նավը հասնում է Աստրախան, իսկ մյուսը, զորի մեջ եր և ինքը, Որին, փոթորիկի յի բոնվում և յետ մղվելով դեպի ափը, զարնվում է Ժայռերին և ջարդվում: Բայց ճանապարհորդներն ազատվում են և ստիպված են լինում ձմեռել Նիգովոյում: Իսկ Աստրախան հա-

¹⁾ Heribett-, p. 10.

²⁾ Էզօն, с. 247.

սած նավի ապրանքներն արգելքի տակ են դրվում տեղական իշխանության կարգադրությամբ, մաքս պահանջելու համար: Վոչ չինչ ոգուու չեն բերում Որիի և նրա հավատարմատար Մինաս վարդապետի դիմումներն ու գանգստները: Կոչինչ չե կարողանում անել անձամբ և ինքը Որին, յեր 1714 թվի ամառը հասնում եր Աստրախան: Մյուս կողմից ել նրա հետ յեղած մարդիկն եյին բողոք բարձրացնում նրա դեմ, պահանջներ անում: Այս բոլորին պատրաստվում եր պատասխանել Որին և միաժամանակ շտապում եր գնալ Մոսկվա՝ իր վերջնականապես քայլքայված գործերը վերտկենդանացնելու և Պետրոս թագավորին իր դեսպանության հաշիվը ներկայացնելու համար: Բայց ոգոստոս ամսին մեռնում եր Աստրախանում գրեթե աղքատության մեջ:

5.

Մենք աշխատեցինք, վորքան հնարավոր ե, լիակատար լուսավորության մեջ ներկայացնել Խորայիլ Որիի կյանքն ու գործը, և այս պատճառով անուշադրության չտվինք և վոչ մի գիծ վոր շեշտում և բացասական հատկություններն այդ բնավորության մեջ նեկ այդ տեսակ զեկըն այնքան տուատ են, վոր, որինակ, պրոֆեսոր Հեյգելն ուրիշ մի բացատրություն չե զբոհ նրանց համար, բացի այն բանից, վոր Որին պարզապես մի խարերա յեր, իսկ Հ. Ալիշանն անվանում է նրան «բաղդախնդիր»¹⁾: Բայց զերմանացի պրոֆեսորին զեւ հայտնի ել չեյին այն մերկացումները, վոր արագ հայ քննադատությունն Որիի կեղծումների շուրջը, մերկացումներ, վորոնք բոլորովին կերպարանափոխում են նրա կատարած գործի պատմությունը, խլելով նրանից յեթե վոչ լայն ժողովրդական, գոնե վորոշ դասակարգային շարժման հմայքը և թողնելով լոկ անհատական ձեռնարկության արհեստականությունը միայն Յեթի այս բոլորը հայտնի լիներ ոտարազգի հետազոտողներին, Որիի գատապարտությունն անկասկած անողործ կիրներ ավելի մեծ չափերով:

Մենք, սակայն, չպիտի խորշենք ամենաածանը, ամենաանողորմ դատափետություններից անգամ ու զեն զցենք այդ դործիչին, իրին անհիտաքըքրական մի իր: Խորայիլ Որին և և կիմա, բնդհակառակն, խորին ուշագրության և հետաքրքրության արժանի տառեկատ Այդ մի պատճառականություն չեր, վոր կյանքի ծովը հանկարծակի դուրս և շպրտում ափը այդտեղ ել անհայտացնելու հա-

մալ, այլ մի մարդկային փաստագիր, չափազանց կարեռ հայ հասարակական մտքի զարգացման պատմության համար, վորովհետեւ սա հրապարակի մեջ յերեան և գալիս իրը հայ հասարակական մի նոր կաթեզորիայի անդրանիկ ձեավորում: Յեկ ահա ինչպիս:

Մենք ահսանք, վոր 17-րդ դարի յերկրորդ կեսից սկսվում է մի տեսակ մտավոր շարժում, վորին կարելի յե տալ վերածնություն անուն: Վերածնվողը միջնադարյան կղերայնությունն եր, բայց նրան քաշողն ու դրամավորողն առետրական կապիտալն եր, վոր և հրում եր նրան դեպի աշխարհականացում: Այս պրոցեսի մեջ առետրական կապիտալը չեր կարող լոկ մեքենայի դեր կատարել այլ ինքն ել յենթարկվում եր կերպարանափոխության, ինքն ել յուրացնում եր մտավորական շահեր, մեալով, իհարկե, աշխարհականության հողի վրա: Այս կերպով առետրական բուրժուազիայի մեջ հետզհետե զոյանում եր մի նոր տրոհում—մտավորականություն: Մենք ունենք այսպիսով մի նոր հասարակական շերամավորում—բուրժուական ինստիտուցիա:

Մենք ունենք նույն այդ դարի յերկրորդ կեսում այդ նոր ծնվող շերամավորման յերկու խոշոր և անդրանիկ նախատիպերը, վորոնք և ներկայացնում են ինտելիգենտական մտքի յերկու տարրեր և խիստ բնորոշ բնակավառները: Այդ նախատիպերից մեկը տալիս և արևմտահայությունը—Յերեմիա Զելեպի Քյումուրնյան (Կ. Պոլսում), իսկ մյուսը—արևելահայությունը—Խորայիլ Որի: Յերկուսի մեջ կա այն նմանությունը, վոր յերկուսն ել մի արդանդից են—առետրական կապիտալից: Քյումուրնյանը, թեև քահանայի վորդի և ինքն ել հոր ձեռքով քահանայության պատրաստված եր, բայց մեծացել և սնվել եր իր մորեղբոր խնամակալության ատկե ուր արդեն ամերայական կապիտալն եր միջավայր կազմողը: Իսկ Որին ինքն իսկ արևելյան (խոջայական) կապիտալի գործիչներից մեկն եր: Հետո՝ այդ յերկուսին ել վոգեսող զաղափարը մինուսյունն եր—հայրենասիրությունը կամ, ավելի ճիշտ ասած, աղգասիրությունը, ինչպիս վոր այն ժամանակ արդեն կաղմակերպված և գործածական ե այս բառը, վոր փոխարինում և հայրենասիրություն հասկացողությանը, քանի վոր հայությունը ցրված և ամեն տեղ, հետևաբա նրա համար հայրենիք ե և ամեն մի ուսար յերկիր, ուր նա հաստավում եր բնակվելու համար: Այդ ընդհանուր գաղափարն ել—աղգասիրությունը—տեսնում ենք, վոր բուրժուական ինտելիգենցիային տարբեր գունավորումներ եր տալիս՝ հանձին հենց այս յերկու նախատիպերի:

1) „Խիստական”, յեր, 219:

Յերևմիա Զելեպիի ազգասիրությունը խաղաղ զարգացումն ունի իրեւ պաշտամունք։ Նա գրող ե իր ժամանակի չափանիշով, բավական լայն գիտական զարգացման տեր ե, գիտե լեզուներ, հասարակական գործիչ ե, հրապարակախոս, բեղմնավոր հեղինակ ե և թարգմանիչ, նույնիսկ և բանաստեղծ, ազգության հիմք համարում ե յեկեղեցին, կրոնասեր ե, նույն խակ կրոնամոլ, բայց այս չե խանգարում նրան կովել իր ժամանակի հոգեորականության անորինակ ընկած և փչացած բարքերի դեմ, մի խոսքով նա հանդիսանում եր նախատիպ մարմնացում այն մտավոր շարժման, վոր այնուհետեւ սեփականում եր արևմտահայությունը, կենտրոն ունենալով գրեթե բացառապես կ. Պոլսի գաղութը։

Քանի վոր մենք այստեղ գործ ունենք հայ ինտելիգենցիայի, իրեւ հասարակական շերտավորման, սկզբնավորման հետ, մենք պարտավոր ենք գտնել յերկու տիպերի—արևմտյանի և արևելյանի—հատկանշական տարրերությունների հիմքերը, վորոնք խարսխված եյին յերկու խոշոր ազգային հատվածները վարող արևատեսական ույժերի վրա։ Մենք տեսանք մինչև այժմ, թե արևելքում այդ ույժը խոջայական կապիտալն եր, ասացինք և այն, վոր արևմուտքում տիրողն ամիրայական կապիտալն եր Խոջայական կապիտալի ծննդաբանության հետ մենք արտեն բավականաչափ ծանոթ ենք, և այս մենք միջոց կտա հասկանալու՝ հանձին Որի՞ նրա ստեղծած ինտելիգենցիայի—այսինքն արևելյանի—բնութագծերը։ Մնում ե միքիչ ել ծանոթանալ ամիրայական կապիտալի ծննդաբանության հետ, վորպեսզի միևնույն միջոցը կիրառենք արևմտյան ինտելիգենցիայի վերաբերմամբ։

Արդ՝ ամիրայական կապիտալը ներկայացնում եր մի զուտ թյուրքական հիմնարկություն, բղիսած թյուրքիայի, իրեւ մի խոլամական պետության, եյությունից։ Խոլամի այն որենազիրները, վորոնք վոչ-խոլամ հպատակներին հավասարեցնում եյին դրեթե ստրուկների վիճակին, ապրում եյին մի ժամանակ, յերբ տնտեսությունը զանգված եր նահապետական՝ տոհմատիրական դրության մեջ, յերբ դրամական տնտեսությունը չափազանց թույլ եր, զրեթե վոչինչ նշանակություն չուներ վաչկատունցեղային կյանքով ապրող Արաբիայում։ Քաղաքակրթության ստորին աստիճանների վրա կանգնած ժողովուրդները մեծ պահանջներ ունենալ չեյին կարող։ Ումար խալիֆան, վոր առաջինն ե յեղել խոլամների և վոչ-խոլամների մեջ անհավասարության խոր խրաժներ փորողներից, ապրում եր, չնայած վոր մի մեծ նվաճող

եր, ովարդ ակյաց բևզուինի նման և նրա ամբողջ խոհանոցը կազմում եր արմավերով լիքը մի պարկ։

Այսպես եյին և ոսմանյան առաջին սուլթանները—սակալաւոկան հովիպներ։ Բայց յերբ նրանք հաստատվեցին յեվրոպական հողի վրա, մտան Յեվրոպայի տնտեսական սայմանների մեջ, վայելելու համար ժառանգեցին բյուզանդական քաղաքակրթությունը, վորի մեջ նրանք մազի չափ մասնակցություն չեյին ունեցել, այն ժամանակ եր ահա, վոր բեղուինական կենցաղն ու հասկացողությունները դարձան նվիրական ավանդություններ, վորոնց կարելի յեր հարգել ու պաշտել, բայց վորոնց չեր կարելի այլևս հետեւ։ Ոմարի և ուրիշների որենսդրությունները դարձալ անխախտելի և հրամայող են մնում թղթի վրա, իսկ կյանքի մեջ մահմեդական մեկուսացումն ու ինքնամփոփումը մեծամեծ ճեղքեր են գոյացնում, վորոնց միջով ներս եր խուժում ստիպուղական պահանջը—փողը՝ պետական կյանքը կարգավորելու և աշխարհի բարիքները վայելելու համար։ Յեկ այստեղ ե ուժեղ ու հաղթական, ինչպես ամենուրեք, կապիտալը։ Այդ ույժի առաջ զլուխ ե իջեցնում ոսմանյան գուսող ու հղիացած նվաճողականությունը։ Սուլթանն «Ալլահի ստվերն» ե այս աշխարհում, բայց Ալլահի ստվերն անդամ չի կարող ապրել առանց փողի. դրա առաջին պատճառը հենց այն ե, վոր «Ալլահի ստվերը» լայն ծավալել ե Յեվրոպայի հողի վրա, խրվել ե Յեվրոպայի տնտեսական կյանքի մեջ, ուր տերն ու կարգադրիչն առևտրական կապիտալն եր։

Յեկ այդ կապիտալն ե ահա, վոր դառնում ե մի սանդուղք, վորի վրայով անարդ ռայալի անդամները բարձրանում են իրանց անկման փսոերից մինչև այնպիսի զաղաթներ, ուր նրանք արդեն կամք թելադրողներ են, ուր նրանց հետ հաշվի յե նստում նույն իսկ սուլթանը, ինքն «Ալլահի ստվերը»։ Այստեղ, բարձրերում, նա, ինարկե, չի դադարում «անհավատ քաֆիր» և ուրիշ այսպիսի բազմաթիվ արհամարհական և հայնոյական անուններ կրող ստրուկ լինելուց, բայց այստեղ նա և «սառափ» ե, փողատեր, տոկոսներով առևտուր անող, և այս բնագավառի մեջ ստըր կատերը կամա ակամա ստիպված ե զլուխ իջեցնել իր ստրուկի առաջ։

«Սառափ» նշանակում ե լումայափոխ, յեվրոպական առումով նա համապատասխանում ե «բանկիր» բառին։ Ասել ե, մենք մեր առջև ունենք վաշխառուական կապիտալը, վորից պարտք վերցնողների շարքում հաճախ կանգնում ե և ինքը պետությունը։

Կ. Պոլիսը, վորակես մայրաքաղաք և առևտրական կենտրոն, սառափական մեծ գործառնությունների հբապարակն եր, ուր յերեվան եյին գալիս և հույնը, և հրեան, և յեղոպացին։ Բայց առանձին հոչակ և անդիմազրելի ույժ ձեռք բերողները հայերն եյին, այնպես վոր սառափությունը համարվում եր հատուկ հայական զրադարձունք։

Հայ սառափի, սեղանավորի զասական հայրենիքը Ասիական Թյուրքիան եր և մասնավորապես Ակն քաղաքն ու նրա շրջակաները, Այդտեղ, հայրենիքում, նա գեռ-դարգացման առաջին աստիճանումն եր—չորսամի, մանր կեղեքիչ Ընկնելով մայրաքաղաքի շրջանները, նա մտնում եր կերպարանավորման յերկրորդ աստիճանը—սառափ եր սկզբում, իհարկե, փոքր չափերով, բայց հետզհետե նվաճելով հարստության վերիլքները։ Յեղոպացի մի հեղինակ հավատացնում է, վոր հայ ամենահարուստ սառափի կարողությունը կարելի յե հաշվել մի միլիոն ֆունտ սատերլինդ¹⁾, վոր անում և մոտավորապես 10 միլիոն վոսկի բուրլի։ Այս մի խոշոր ույժ և յեթե նկատի առնենք, վոր նույն նեղինակի կարծիքով հայ սառափների թիվը հասնում եր մոտ 100-ի, այն ժամանակ մենք մի մոտավոր հասկացողություն կլազմենք այն դասակարգային հավաքական ույժի մասին, վոր դործագրում եյին հայ սառափները, յեթե նույն իսկ նրանք կանգնած լինեյին անհատական հարստության զանազան աստիճանների վրա։

Փութանք, սակայն ասել, վոր վաշխառուական կապիտալ ամեն տեղ կար, Յեղոպայում ել Ասիայում ել, և սպական չափերով չեր լծորդված հայ խոշայական կապիտալի հետ Խնչպես եր, վոր առանձնահատուկ, բացառիկ գծեր ընդունում եր այն սառափությունը, վոր գործում եր Թյուրքիայում։ Պատճառն այն եր, վոր Թյուրքիայում սառափը պետական մեխանիզմի մի շատ կարեռ մասն եր կազմում, առանց վորի չեր կարող պահվել վարչական սիստեմը։ Այս սիստեմը կառուցված եր կեղեքման սկզբունքի վրա, իսկ կեղեքման ամենահզոր գործիքը վաշխառուական կապիտալն եր։

17-րդ դարում Կ. Պոլսի մեջ դեսպանի պաշտոն վարած մի լավագույակ անգլիացի պատմում է, թե Թյուրքիայի բարձր կառավարությունը պետական անհրաժեշտություն և համարում, վոր հպատակ ազգաբնակությունը մշտապես կեղեքված ու աղ-

1) Յ. Մ.—«Մասնակի պատմություն հայ մեծատուններու», Կ. Պոլս՝ 1910, յեր. 118.

քատ լինի, վորակեսզի չմոտածե ապստամբվելու մասին և մուա միջտ հլու հավատարիմ¹⁾։ Յեվ ահա ինչպես եր տարգում կեղեքման սիստեմը։

Թյուրքիայում բոլոր պետական պաշտոնները գնովի եյին։ Այս կամ այն յերկրամասի կառավարիչ վաշան պիտի տար սուլությամբ հանձններ պետական գանձարանին, և, վորովհետև պետությունը վստանություն չուներ իր պաշտոնյայի վրա, ուստի պահանջվում եր նրանից յերաշխավորություն, թե հավաքած դումարներն անկորուստ տեղ կհասնեն։ Այս գեռ բոլորը չեր։ Իր պաշտոնում հաստատ մնալու համար, վաշան տարին մի անգամ պիտի դրամական նվեր ուղարկեր սուլիմանին։ Այսքան պահանջները լրացնելու համար վաշան չուներ սեփական միջոցներ, ուստի դիմում եր սառափին, վոր սովորաբար հայ եր լինում, և հոժարությամբ հանձնն եր առնում տալ նրան դումարներ՝ կաշառքների համար և յերաշխավոր լինել՝ նրա վոխարեն՝ դանձի առաջ։ Այսուհետեւ վաշան բոլորսին մտնում եր սառափի արամադրության տակ, ամբողջովին փաթաթված իր պարագերի և հաշիվսերի ցանցի մեջ։ Բայց կեղեքվողն ինքը վաշան չեր, իհարկե, այլ նրա կառավարության հանձնված ազգաբնակությունը, լիներ նա հայ, թյուրք, հույն, սլավոն թե մի ութիշը «Փաշաները,—ասում և 19-րդ դարի պարի պատմագիրներից մեկը,—իրանց տեղերը գնելու ժամանակ դառնալով պարտականներ հայ վաշխառուների, քաղցած գայլերի պես հարձակվում եյին զավառների վրա»²⁾։

Հասկանալի յե ուրեմն, թե ինչեր պիտի տեղի ունենային հարստահարությունների այսքան լայնածավալ հնարավորությունների մեջ։ Կառավարիչ վաշան պիտի կեղեքեր վոչ միայն իր սեփական, այլ և իր վաշխառու տիրոջ փորը կուշտ պահելու համար։ Վաշխառուն մշտապես նրա հետ եր, համրում եր նրա կերած յուրաքանչյուր «թիքան», ըշտում եր նրա կողերը և ասունում եր իրանը։ Ահա ինչպես և նկարագրում նրա գործունեյությունը մի այլ լավատեղյակ անգլիացի, գարձալ Կ. Պոլսի անգլիական գետպանատնից, այս անգամ արդեն 19-րդ դարի սկզբում։

1) Ricaut —, Histoire de l'état présent de l'Empire Ottoman, Paris, 1670 chap. XV.

2) Г. Гервинус—„История девятнадцатого века”, СПБ. 1868, с. 5.

«Հայերը եցին և են թյուրքիայի տմենավաճառ և տմենահարուսա ժողովով, վորով և լավագույն յերաշխավորությունները յեղած են առաջի թ. Դրան, ըլլալով ներուն թյուրք լեզվին, ըլլալով նաև հավատարիմ բայանիր՝ կը մատուցանեն պաշտոնատար փաշաներու բոլոր այն պետքերը, վոր հանձնարարելի կը նեն իրենք թյուրք վարչապետի մը հանդեպ, իբրև կարող ու ժիր մարդ գործի, իբրև ամուր սեղանավորներ, իբրև հլու փարկատու Հարկերը գանձվելով ընական նյութերու ձեին տակ, հայերուն տաղանդը, իբրև փաճառական և սեղանավոր, կրկնապես ոգտակար կը դարձունե անոնք և կը նշայի անոնց շատ առիթներ արագ արագ գիղերու մեծ հարստություններ ինք վեհ, ուութանն ալ հաշտ աչքով կը նկատե անոնց բարեբաստ հաջողությունները այնու մահավանդ, վոր անոնց հարստությունները այլ հոգածությամբ կը պահվին կը մնան իրենց զբանարկերուն մեջ, մինչև վոր կառավարական կամք մը կամ պետք մը դուրս բերե անոնք աճեցնելու համար միրի հասույթները... Յեթի իրենք (սառափները) մերժեն յերաշխավոր ըլլալ թյուրք կառավարչի մը համար, այդ կառավարիչն արժեք չունենար հաշու կառավարության պարզ անհատ մը պեղի, վորով այդ սառափներն են իրավես զավաներու վարիչներն ու կը փարեն ըստ հաճույք և ի շահ անձանց. նույն իսկ վերջին ատենները այնքան հզորեցուցած են իրենց կշիռն, վոր վոչ մեկ սեղանավոր կը հավանի սառափն ըլլալ-փաշայի մը (վոր բարձրացած և այդ աստիճանին՝ կրնանք ըսել՝ բարեհաճությամբ սառափին), յեթի փաշան ճամբը վկայագիր մը անոր նախորդ սեղանավորն՝ հաստատելու համար թե վճարած և անոր իր ըուրոր պարտքը

«Յենթապենք վոր փաշային վճարելիք գումարն առ կառավարությունն ըլլա 500,000 զրուշ (5000 վոսկի) վճարյալ քառորդ մասամբ, սեղանավորը նույն հետայն միկ անգամն պարզեատվությամբ մը կառնե փաշային ընկալագիր մը տմբողջ այդ գումարին համար, և այս ընկալագիրն կը բերե իրեն առ նվազն յերկու առ հարյուր (ամսե ամիս) առկոսիք մը Ապա պետք և հայթայթել փաշային գենք, շալեր, չխպուքներ, ձիեր, վորոնց համար սեղանավորը կառնե 10 տոկոս հանձնարարագիրն մըն աւ Փոխարքին սատակները պետք և գնարին յերկու, չորս և վեց ամսվան միջոցներուն. բայց ինք անմիջապես կառնե փաշային ընկալագիր մը ամբողջ գումարին համար, մյուս ընկալագիրն նման տոկոսիք յենթարկյալ Յերբ թիշ ատենին փաշան հասնի նշանակյալ զավարը պարտի զրկի սեղանավորին նվեր մը հասարակաց հասնի հարյուրին տասը կամ հինգ արժեքով, իբրև որինավոր խայրիք իր պաշտոնին, նմանապես նվեր մը սեղանավորին գործակասարին ալ՝ իր զավասին պես պես արտադրություններեն. Բայց յերբ սեղանավորն իմանա իր գործակասարեն, թե փաշան դրամ կը զրկի անմիջապես կը զրկի անոր ծանուցագիր մը սա ձեռվ. «Դժբախտաբար ձեր բարձրության դեմ տրոտունջներ հասած են հոս, բայց յես լուցուցի անոնք ճարտարմությամբ. Այս գործ 10,000 զրուշի մը ծախք պատճառեց ինձի, վոր անցուցի ձեր հաշվին, խնդրեմ հանցեք անցունել զայն պահանջիս կողմը»: Կրնա ըլլալ, վոր այս ծախքն իրավ յեղած ալ ըլլա, բայց և իբրև հաճախ շինդու կըլլա, Թերես կարծվի աւ վոր յեթե յերեք այսպիսի փաշա սատրազամ ըլլա՝ պիտի ջանա վրեժն աւենել այսպիսի անիրավության մը, բայց բնավ արդպիս չե. հայերն իրենց հարստությամբն հայթայթած ալ են իրենց բարափներ (կողմանակիցներ), ճարպիկ միջոցներ ու բարկան հզոր ազգեցություն մը նպաստավորելու համար սատրազմին անվանութիւն իսկ և գործի վրա գտնվող թյուրքերը կը համարին սեղանավորին հարստահարություններն

իրրե հարկավար չարիք, վոր և աղբյուրներ ևն իրենց ալ հարստության. Սատրազամ ընարյալն ալ ունի ուրիշ շահ մը և խնայելու իր սեղանավորին. նա կընդունե անկե կը պարտքերուն չնչումը ի վարձ պաշտպանությանը, զոր կընձեւն սեղանավորին ընդգեմ ներհակ ազգեցությանց մյուս փաշաներուն. Ամենին հարուստ սեղանավորին ունեցածը կընթանք յենթաղը մեկ միլիոն լիբա սթերլին մը. բայց և այսպիսի իրենք միշտ անակնկալով մը ամեն ըան կորունցունելու վահանգի մեջ են:

«Դավառներու մեջ փաշայի ընկերացող խորհրդական գործակատարն հաճախ կառնվի սառափին ազգականներին և բոլոր զբամական գործերը կըլլան անոր ձեռքով. զբամին սակին ու հանձնարարողչերը շատ աչքի զարնող գումարներն են. Վյո գործակատարն ե, վոր կը հավաքե զավախին հասույթները. վարոնց հանդեպ իր ներկայացուցած տունն յերաշխավորը յեղած և և այդ հասույթարդյանց վրա շահավաճառներ կընե շատ վիճով մը ձեռք բերել հնարելով ամեն ըան. ըստ այսմ ամեն փաշայի կցորդ կընթանա վերատեսուչ մը ինչպիս սրացող ձուկերուն խեցիմորթ մը, վորմէ չկընար պրծիլ բովանդակակ ճիկերովին անգամ. Փաշային բոլոր շարժումները կը հսկվին. անոր բոլոր յեկամուններուն տերի պես և վերատեսուչը, և կը մղե զան բանական ու հարստահարիչ գործերու՝ չը թողով, վոր ստանա նա իր ամբողջ հասույթը. Փաշան չը կրնար ճամբու դնել զայն, վասն զի կապած և անոր տիրոջ յերաշխավորության իր պաշտոնին բովանդակությունը¹⁾»:

Բայց սառափական կեղեքումների ասպարեզը միայն գավառները չեյին: Սուլթանների մայրաքաղաքը գավառներից պակաս չեր հապատակված նրանց: Ահա ինչ լրացուցիչ մանրամասնություններ և տալիս մի ուրիշ, նույնպիս շատ լավառելյակ յիշրոպացի մի հեղինակ.

«Մեծ վլոգիրը, մինխստրներից յուրաքանչյուրը ունին սահափները Սրանը են, վոր հետեւում են իրանց տերերին պատկանող գումարների զանձման, կանինիկ տալիս են այն գումարն սեղանավորը, վորոնց պետք ունեն սրանք, հոգում են նրանց տան ծախսերը, առանց վորի փաշան կամ եփենդին մտածեր յերեք ստուգել նրանց հաշիվները, մինչև իսկ ընկալագիր ստանալ նրանցից այն գումարների մասին, վորոնք զանվում եցին նրանց ձեռքին:

«Դարձյալ այս սառափներին եյին զիմում, թյուրքերի միջից այն սոսկական անհատներն ամեն անզամ, յերբ փողի կարոտություն ունեյին: Յեթե այսպիսիները չունեն անշարժ կարգաներ զբավ զնելու համար, այդ զեպքում նրանց ձեռքն են տալիս արժեքավոր իրեր, վորոնք սառափների կողմից զերադասելի յեն համարվում անշարժ կայքերից, վորովհետեւ այդ իրերին նրանք տիրանում են չորս-հինգ տարբանական անշարժերում անշարժ առաջարկություններում միջոցով:

«Այն վարկը, վոր վայելում են սառափներն իրենց հովանավորների մոտ, նրանց համար շահի մի տառա աղքյուր և Ամեն անդամ, յերբ մի անհատ, լինի նա սատրեկրացի, լինի տեղացի, մի շնորհ և աղերսում մի մինխստրից կամ Բ. Դրան մի մեծավորից, սա դիմում և իր սառափին, վորի միջնորդությունն, նման զեպքերում, ինչպիս նակա այս վարկավորը, վայելու միջնորդությունն անշարժ տոկոսներ բարդելու մի-

1) Յ. Գ. Մ.—«Մաս. պատմ. հայ մեծատուններու», յեր 116—119.

նվիրագործել և սովորութը՝ հաճախ նույնիսկ բախչիչ գումարը, վոր փոփոխված և գործի կարեռության նայելով, բաժանվում և այդ միջնորդի և նրա նովանավորի մեջ։ Այժմ հասկանալի յէ, թե ինչպես Թյուրքիայի մետաղական կապիտալի մեծագույն մասը գտնվում է այսոր հայ սառափների ձեռքում¹⁾։

Այսքանը մենք բարձրականք ենք համարում բնորոշելու համար սեղանավորական կամ վաշխառուական կապիտալը արևմտյան հայության մեջ։ Մեր առջև են բարձր դասակարգի մարդիկ, վորոնք հայ իրականության մեջ եւ, ինչպես և պետական կյանքի մեջ, անզուգական դիրք ունեցին և այդ պատճառով ստացել եյին իրանց աղդակիցներից «ամիրա» (տեր, իշխան) անունը, վոր միանգամայն համապատասխանում եր նրանց դասակարգային դիրքին։ Թեև ամիրայական դասակարգը բացառապես սառափներից չեր բաղկացած, թեև առևտրական կապիտալի մյուս ճյուղն ել—ապրանքավաճառը նույնպես գոյություն ուներ Թյուրքիայում²⁾, բայց վոչինչ չեր կարող համեմատվել այն նշանակության հետ, վոր ունեցին սառափ ամիրաները, վորոնք և իսկապես ներկայացնում են ամբողջ ամիրայական իրականությունը։

Այդ ինչպես տեսնում եք, մի վիշապ-դասակարգ եր հարյուր զիմանի, վոր ծծում եր առաջին պետության կենսական հյութերը և նրանցից իր համար միլիոններ եր դիզում հոսքորի ափերին Իշխողը, կառավարողը թյուրք մեծավորը չեր—վոչ բազմահոչակ փաշան, զորքերի ու լայնատարած նահանգների գոռող, ինքնակամ փաշան կամ անգամ սուլթանն ինքն, —այլ իր սնդուկի առջև ծալապատիկ նստած և իր վոսկիները զարսող հայ վաշխառուն։ Այսպիս եր տնօրինել պետական կարգը։ Վաշխառուական կապիտալը խրված եր պետական գոյության մեջ իրեն նրանից ծնված, նրանով օնվող և նրան սնուցանող մի անհրաժեշտ մասնիկ։ Մեկն առանց մյուսի—պետությունն ու սառափ—ապրել չեյին կարող նրանք հոժարակամ բաժանել եյին իշխանությունն իրանց մեջ և այյուծի բաժինն ընկել եր վաշխառուին։ Յեվ այս, ինարկե, չեր վեասում պետականության իրար հետ մերված, իրար կյանք ավող դաշնակիցներ, ապրել եյին նրանք դարերով, և սրանից ինչ վեաս։ Վնասվողն աղդաբնակությունն եր, բայց հենց այս ել հարկավոր եր այն վարչական իմաստության, վոր ընդզերել եր ոսմանյան պետականությունը—մշտապես կեղեքվող մասսաներ,

1) A. Ubicini — «Lettres sur la Turquie», t. II, Paris, 1856, p. 313

2) Ամիրայական և վաճառականական դասակարգերի ուսումնասիրությունը ու. իմ «Հայ հասարակական շերտավորումներ և շարժումներ» անդիպ աշխատության մեջ։

իրեւ առաջին յերաշխիք նրանց հլու հպատակության։ Այսպես եր հին Թյուրքիան և հենց նրան ել մարմնացնում եր հայ ամիրայությունը։ Նրա դարավոր զոյությունը պիտի փշուր փշուր զտոնար հնաց այն տուածին որը, յերբ Թյուրքիան ըաց կաներ իր գոները՝ մի նոր կարգ, մի ուժորմ ընդունելու համար։

Յեթի համապետական չոփանիշով այսքան բռնակալ ույժ եր հայ ամիրայությունը, հասկանալի յէ, թե ինչ կլիներ նա իր ազգակից համայնքի մեջ։ Այստեղ նրա տիրապետությունն անսահմանափակ եր և կատարյալ, նա միայն վայելող չեր, այլ և կարգադրող, որինսդիր՝ կյանքի բոլոր պայմանների մեջ։ Յուրացնելով թյուրք պետականության կարգերը, սովորությունները, գիւղնագիտական ձևերն ու ճարտարությունը, նա առզորվում եր տմրողնովին և թյուրքությամբ, սեփականում եր նրա նիստն ու կացը, հասկացողություններն ու հայացքները, լիզուն, հարեմական իուկայները, և այս կողմից որենադիր եր հանդիսանում ամրող հայ համայնքի համար, վոր և ժամանակի ընթացքում կարգին թյուրքանում եր մինչև այն աստիճան, վոր 19-րդ դարի 30-ական թվականներին զերմանական հոչակավոր սազմակետ Մոլյենի դրում եր կ. Պոլսից, «Հայերն ընդորկել են նվաճող ազգի (այսինքն թյուրքերի) բարքերը, նույն իսկ և լիզուն այն աստիճան, վոր նրանց կարելի յե անվանել քրիստոնյա թյուրքեր¹⁾։

Ահա այս «քրիստոնյա թյուրքությունն» եր, վոր ամուր կապում եր ամիրայությունը լուսավորչական յեկեղեցուն։ Կ. Պոլսում լուսավորչական յեկեղեցին ուներ ամիրայության համար շատ գրավիչ արտոնություններ և շահեր—պատրիարքական աթոռ, իրեկ ամրող թյուրքահայ ժողովրդի ազգային բարձրագույն իշխանություն, վորին սուլթանական ֆիբուններով հատկացված եյին բարձրական ընդարձակ վարչական, գատաստանական և գիւղնական գործառնություններ։ Վերջին կարգից եյին այն տուրքերն ու հասույթները, վոր հավաքում եր պատրիարքարանն իր զոյությունը պահպանելու համար, բացի դրանից, նրան եր հանձնված կառավարական «մոլիսաթյա» անունով հարկի գանձումն ամրող թյուրքահայ ժողովրդից²⁾, Պատրիարքարանի հրամանի տուկ եյին և կ. Պորի բազմաթիվ հայ յեկեղեցիներն իրանց հարաբություններով։

1) «Lettres du Maréchal de Molté sur l'Orient», Paris, p. 31.

2) Սիմեօն Կաթողիկոս Երևանցի - «Զամբռ», Վաղարշապատ, 1873, եր. 56.

Ահա թե վորքան գտյթակիություններ կային ամիրայական դասակարգի համար հայշլուսավորչական յեկեղեցու մեջ: Տիրանալպատրիարքարանին կնշանակեր տիրանալնրա նիրկայացրած արտօնություններին, նրա ամբողջ իշխանության, մանավանդ դրամական շրջանառություններին: Յեզ մենք տեսնում ենք մի շարունակական և անգուլ ձգուում տիրանալու պատրիարքության հենց այդ շահագիտական նպատակով: Ինքն ըստ ինքյան այդ մի գժվար բան չեր: Բավական կլիներ ձեռքի մեջ առնել պատրիարքին: Բայց այս չափազանց հեշտ զործը չափազանց գժվարացնում եր այն հանգամանքը, վոր ամիրայությունը միապաղաղ միություն չեր, այլ բաժանված եր, համաձայն՝ շահերի մրցակցության, զանազան կուսակցությունների կամ, ավելի ճիշտ, թայֆաների: Յեթե այս հանգամանքը պետական ընդհանուր զործանության մեջ արտահայտվում եր պայքարների մեջ, վորոնց վերաբերմամբ մեղմացնող դեր կատարում եր փաշայական միջավայրը, հայ համայնքի շրջանում թայֆայական պայքարներն ընդունում եյին սանձարձակ և խայտառակ չափեր: Մըցող կողմերն ունեյին իրանց պատրիարքացուները, պետք եր մեկին վար առնել, մյուսին նրա տեղը նստեցնելու համար: Յեզ այս կատարվում եր ահազին խառնակություններով, վորոնք մի որ չեմի որ փոխվում եյին ամբողջ ազգամիջյան արյունահեղ պատերազմների: Այդ կոիմներն ամիրայական ույժի անհեթեթությունն եյին ցուցաբերում, բայց հետզհետե, ժամանակի ընթացքում, դառնում եյին հայտարաներ, վոր նույն այդ անհեթեթ ույժի խորքերում գոյություն են առնում տարբեր, վորոնք պիտի զարդարացին նույն այդ բոնության գեմ պայքարելու վոզով: Այսպես եր, վոր պատրիարքարանի շուրջը մղվող կոիմները թայֆայականից յեկելով, դառնում եյին դասակարգային: Արհեստավորների (հանաճ) դասակարգը և նրանից ստորադաս հասարակական խավ կազմող գավառացիները, վորոնք դալիս եյին Կ. Պոլիս ժամանակավորապես, սև աշխանտաքով մի կտոր հաց աշխատելու համար, մի ժամանակ նետվում եյին կովի դաշտը, ահազին կորուստներ եյին կրում, անդամ զոհում եյին իրանց կյանքը՝ կովող կողմերից մեկն ու մեկին հայրենակից, կուսակից, այս կամ այն միջոցով վաճառված համակրություն լինելու դատաստով: Բայց հետզհետե այդ անդիտակից զանգվածների մեջ զարթնում եր աշխատավորական շահերի ինքնազգացումը, վոր և առնում եր պատրիարքարանի միջոցով շահագործվողներին շահագործողների գեմ: Այս յերեսությն արդեն հասունացած փաստ եր Կ. Պոլու

18-րդ դարի վերջին քառորդի մեջ և ավելի լայն ծավալ եր ստանում 19-րի մեջ, առաջ բերելով մեծամեծ հասարակական շարժումներ, մեծամեծ վոչ միայն մայրաքաղաքի դաղութային չափանիշով, այլ և ընդհանուր թյուրքահայկական, անգամ համահայկական չափանիշով:

Այս դասակարգային պայքարումը, չափազանց ինքնուրույն այն տեսակետից, վոր տեղի ուներ բացառապես ազգային հողի վրա, քանի վոր չկար մի այլ հող, վոր կարողանար արգասավորել նրան իր մեջ, առաջին յերեսությն և հայության մեջ և յեթե պատկանում ե ամբողջովին Կ. Պոլսի հայ գաղութին, այս այն պատճառով ե, վոր այստեղ եր հայ ամիրայության աթոռանիստը: Ամիրայական դաժան դաստիարակությունն այնպես չեր, վոր այդ շարժման մեջ լիներ քաղաքական տարր, հակաթյուրք կամ հակախլամական բովանդակությամբ: Ընդհակառակին, յերբ թուրքն ասում եր «հավատարկմ ժողովուրդ», ամենքը հասկանում եյին, վոր այդ հայ ժողովրդի հատուկ անունն ե: Յեզ այդ անունն ամիրայությունը պահեց հայ ժողովրդի վրա մինչեւ իր, իրեն դասակարգի, անկումը: Մնում եր, ուրեմն, վոր հասարակական շարժումն իր համար ուղիներ բաց աներ, ինչպես ասում ե, նվազագույն դիմադրության կետեր ներկայացնող զծերով: Պայքարումը միանդամից չծնվեց և նրա համար պատրաստի ձևեր չկային, վորպեսզի նրանց մեջ մտներ: Հասարակական յերեսությները պատրաստվում են յերկարատե ժամանակում: Մեր այս դեպքում ել անհրաժեշտ եր զարգափարական խմորում, և արևմտահայերի մեջ այդ խմորումն ընդունում ե զերպանցորեն զրական արտահայտություն, վոր և մշակում եր ինքնուրույն դպրոցը: Զկարողանալով պատավել նախկին յեկեղեցական-ազանդավորական կապանքներից և մնալով զլիսովին գերի լուսավորչական ուղղափառության, այդ դպրոցը, այնուամենայնիվ, առաջադիմություն եր իրեն աշխարհական կրթված անհատների, ինտելիգենցիայի վերաբերմունք դեպի հասարակական բարեփքը, իրեն զատապարտություն վայրենացած բարքերի և կոպիտ հարստահարությունների: Այս, իհարկե, իր եյությամբ պայքար եր յերեսու տիրող զասակարգերի՝ ամիրայության և հոգերականության դեմ: Բայց այս չեր նշանակում անողոք կոիմ մինչեւ յերկու դասակարգերը վերացնելը: Ընդհակառակը, յերկուսի մնալն անհրաժեշտ եր համարվում, միայն թե բարեփոխված: Այս նպատակով եր, վոր այդ արևմտահայ գրական դպրոցը կոթնում եր յեկեղեցական լեզուների և զիառության յուրացման վրա:

Այս աշխարհական մտավորականության լավագույն արտահայտությունն - եր ահա Յերեմիա Չելեպի Քյոմուրճյանը: Այս ըեղմնավոր զրոդի բոլոր աշխատությունները չեն տպված¹⁾: Վենակութիւնի Մխիթարյանների վանքում գանգում են նրա մի քանի ձևոտգիրները, վորոնց ուսումնասիրությունը՝ ժամանակին մեզ շատ հաճելի հանկացողություն և տվել այս առհասարակ սակագումանություն, և անկեղծություն, և ուշադիր վերաբերմունք դեպի ընդհանուրի շահը, և ազգասիրություն հանդերձ, ինարկե, յեկեղեցասիրությամբ: Յեվ քաղաքականատես և անտարեր չելողել այդ գրչի մարդը, կոկիծով նկարագրել և կառավարական բոնությունները և առանձին զգվանքով՝ սուլթանի արվամոլությունը...:

Այլ եր Խօրայել Որի ազգասիրությունը: Յեվ այս այն պատճառով, վոր նա արդյունք եր հայ խոջայական կապիտալի, մի համաշխարհային շըջուլիկի, վոր ամիրայական կապիտալի պես փակված չեր տեղայնության մեջ իրեւ միալար և միագույն անշարժություն, վոր խորթ եր ամեն՝ մի ոտար սկզբունքի և ամենից շատ՝ միջազգայնության, այլ ապրում եր ազգերի և յերկիրների հետ շփվելով, փոխ տալով և փոխ առնելով, ամեն տեղի գունավորումներ ընդունելով, աշխարհաքաղաքացիությունն անգամ, գաղափարական հիմունքներ յուրացնելով և այսպիսով ներկայացնելով՝ մի գույնզգույն բազմատարբություն, սկսած բութ պահպանողականությունից մինչև քաղաքական սահմարձակությունը, վորի որինակն և Խօրայել Որին:

Յերեմիա Չելեպին բացառապես զրքի մարդ եր, Որին բոլորին զրբծ չուներ զրքի հետ, վոչ ել հավատ, թե զրքով կարելի յե վորեն բան անել հայ ազգի փրկության համար: Այս կողմից նա նախատիպ մարմնացումն եր արեւլյան հայության, վորի շարժումը, մանավանդ 18-րդ դարում և համարյա մինչև 19-րի կեսը զրեթե բացառապես, առանց զրականության մասնակցության, քաղաքական եր, և միայն 19-րդ դարի յերկրորդ կեսից եր, վոր քաղաքական շարժումը գուզորդվում եր զրական շարժման հետո երբեն նախատիպ և սուաջին ռահվիրա՝ Որին մի զեմք և, վոր անհամեմատ պայծառ կերպով և լուսավորված, քան նրա ժամանակակից Յերեմիա Չելեպին, վորի կյանքի մանրամասնու-

1) Հրատարակված և նրա մի վառանավոր աշխատությունը — «Յերեմիա Չելեպի» Քյոմուրճյան Առամազոր Պատմաթյուն, դոկտ. Վ. Թորգոմյանի ծանոթություններով, Վեհենսա, 1918.

թյուններից մենք շատ բան չգիտենք և ունինք մեր առջև միայն միալար գովասանքներ նրա մասին: Բարեբախտաբար, այդպես չե Խօրայել Որին, բարեբախտաբար, մենք շատ բացասական գծեր ունինք նրանից մեր ձեռքի մեջ և այսոր կարող ենք պարզ հաշվառության յենթարկել, թե զրանցից քանիսն են հարազատ ստացվածք հայ բուրժուական ինտելիգենցիայի առհասարակ և քմնիսը մասնավորապես այն ինտելիգենտական հոսանքի, վորի նախայայըն եր Որին:

Արդ՝ իրեւ նախահայը, Որին իրանից ներկայացնում եր հայ քաղաքական գործիչ ինտելիգենցիան, վորի բարձրագույն իդեալն եր՝ ունենալ մի հայ թագավոր Հայաստանում: Բայց այս բնորոշումը բավական չե: Գործի ինտելիգենցիա, ծրագրող ինտելիգենցիա, ուազմական խառնվածքով, այսինքն այն, ինչ հետո ստացավ հեղափոխություն անունը: Որին առաջին հեղափոխական ինտելիգենտն եր հայերի մեջ: Դիվանագիտական գավանանքներով «ոսկը յուկերէ և արիւն յարենէ» հայ կղերական գիտլումատիայից: Նա յերազում եր մի խաչակրություն, վոր Հայաստան մանելուց հետո հարուցանում եր հայերի զինված ապատամբություն: Այս մի շատ մեկին, անրարդ, ուղղագիծ ծրագիր եր, բայց պատմությունն, աշխարհապրությունն այնպիսի հասուկ պայմաններ եյին ստեղծել Հայաստանի համար, վոր այնքան պարզամիտ, տրամաբանութեն հետեղական մի խնդիր լուծել կարելի յեր լինում թղթի վրա, այն ել բանդագուշանքների միջոցով: Մենք տեսանք այդ բանդագուշանքները: Վոչինչ չկա նրանց մեջ, վոր ոտար ու խորթ մնացած լիներ հայ ազատագրական մտայնության մինչև նույն խկ վերջին ժամանակներս — վոչ Որիի սնապարծությունը, սեփական ույժի անշափ բարձրացումը և վոչ ել կատարյալ արհամարհանքը զեպի թշնամու ույժը: Ահա նրանից հետո անցնում են յերկար և յերկար ժամանակներ, գալիս են շատ և շատ անվանի գործիչներ, վորոնք աղատադրական պրոպագանդ են մզում, կամ իրանք հենց շարժման առաջնորդներ են — Հովսեփ Եմինը, Շահամիրյանը 18-րդ դարում, Գրիգոր Արծրունին, Ռաֆֆին, Գալաթաբիպան, «Ճնշակը», «Երանեկը» 19-րդ դարում, ինչով են սրանց բանդագուշանքները պակաս սահմակոտոր կամ ավելի համեստ որիական բանդագուշանքներից: Դեռ Որին ամբողջ գլխով բարձր եր իր հաջորդներից նրանով, վոր հախուռն աղատամբության առաջյալ չեր, ուներ շըջահայեցողություն, զգուշավորություն, զիտեր, վոր հայ ժողովուրդը կարող եր սարսափելի կերպով զլասվեր մենակ մնալով զեմ առ զեմ իր թշնամիների հանդեպ, ուստի

բացի այն, վոր հայերի ապստամբությունը ծրագրում եր միայն աղասիչ պետության զորքերը Հայաստան մտնելուց հետո, նո միաժամանակ աշխատում եր, վոր հայերն իրանց աղասագրական պատերազմի մեջ դաշնակից ունենան իրանց զբացիներին: Այսուղից՝ նրա շատ գնահատելի ջանքերը, միություն ստեղծելու բախտակից վրացիների հետ, մի գաղափար, վոր հետապայում, ինչպես կտեսնենք, պաշտամունքի պես մի բան դարձավ հնդկահայ կապիտալի համար: Յեվ, առնասարակ, Որիի գործադրած քաղաքական սկզբունքների մեջ մենք չենք գտնում այսպիսիները, վորոնք մեռած լինելին նրա հետ և վորդեգրված չլինելին, անկախ նույն իսկ նրանց վասակարությունից, հայ աղասագրական շարժման մեջ:

Ե՞նչն եր իսկապես իսրայել Որիի քաղաքական ամբողջ քեալ ժառանգությունը: Մենք ասացինք արդեն: Ռուսաց նվաճողական խմբերիալիզմը, հենց վոր իր յերեսը դարձեց դեպի հարավ, յերես առ յերես հանդիպեց հայ բազկատարած կղերական դիվանագիտության, վոր իսրայել Որիի բերանով ինքն իրան ուխտում եր լինել նրա ծառան և գործիքը: Բայց ծառայի դերն ել մի չափանց մեծ դժբախտություն եր, վոր այդ դիվանագիտությունը հենց իր առաջին քայլից գնում եր հայ ժողովրդի վզին: Վերին աստիճանի նշանակալից եր այն վերաբերմունքը, վորին հանդիպեց Որիի դեսպանությունը Սպահանում: Միայն ֆրանսիացի Միշել չեր, վոր աջ ու ձախ քարոզում եր, թե հայերը բերում են ոռւսներին՝ Պարսկաստանը նվաճելու համար: Այս՝ յեվրոպացու կարծիքը եր: Բայց մահմեդական Արևելքն ել հենց միննույն ըոպեին միանում եր յեվրոպական կարծիքին: Այդ ժամանակ Սպահանում գտնվող հոչակավոր ավղանցի Միր-Վեյսը, վորի վորդի Մահմետը պիտի նվաճեր Սպահանը և վերջ տար Սեֆելիների դինաստիային, ամենայն ճարպիկությամբ մերկացնում եր Որիի բանակցությունները ուս սների և վրացիների հետ, ապացուցում եր, թե այդ գաղտնի հարաբերությունների միակ նպատակն իրանի կործանումն ե:

Այսպիսով սկիզբ եր դրվում այն անասելի աղետավոր համբավի, վոր հայ ժողովուրդն ստանում եր իրան չորս կողմից շրջապատող մահմեդական աշխարհում և ճշմարտություն եր գտնում նաև յեվրոպական դիվանագիտառության համար, այն ե՞ թե հայերը տանում են ոռւսներին մահմեդական յերկիրներն Արևելքում նվաճելու համար: Այս ժժիսեմ համբավը դարերով անշարժացած մնաց հայ ժողովրդի վրա, և պատմությունը չի ել կարող

թվի ու համարի տակ գցել, թե վորքան և վորքան արյան գետեր են ծնվել այդ ժողովրդի գոյությունը մաշեցնելու համար հենց սոսկ միայն այդ խոսքերից՝ «հայերը բերին», «հայերը բերում են», մինչդեռ կոտորվողն ու վոչչացողը, վոր ժողովրդի զանգվածն եր, մաս չուներ բերելու մեջ, այլ այդ բանով զբաղվողը հայ կղերական դիվանագիտառությունն եր, ինչպես կտեսնենք շարունակ:

Կրկնենք, ուրիմն, վոր իսրայել Որին միայն 17-րդ դարի յերկրորդ կեսից առաջացած տնտեսական զարգացման արդյունք կարող եր լինել իբրև այդ զարգացումը հայտարերող հասարակական նոր կաթեզորիայի—բուրժուական ինտելիգենցիայի և մասնավորապես նրա հեղափոխական ճյուղի շատ բնորոշ և տիպիք ցուցադրիչ: Յեթե հայ նորագույն պատմության ամենագլխավոր բովանդակությունն աղասագրական շարժումն ե, այս նշանակում ե, թե Որին ե այդ պատմության անզրանիկ դերակատարը, վոր անզրադարձել ե իր մեջ, ինչպես կախարդական մի ֆոկուսի մեջ, հայ աղասագրական շարժման բոլոր, յեթե կարելի յե ասել զուտ հայկական առանձնահատկությունները, դրական և բացասական: Յեթե բացասականները դրականներից շատ են, այդ, իհարկե, չպիտի նշանակե, թե Որին այդպես կամեցավ և այդպես ել յեղավէ կամեցողն ել հրամանագրողն ել ինքը կյանքն ե իր զարգացման առանձնահատուկ պայմաններով, վորոնց մեջ խոսում են հասարակական ույժերի փոխարաբերությունները: Չե վոր ինքն Որին ել այդ փոխարաբերությունների արարերած զարգացման մի փաստ եր: Մի դար առաջ իսրայել Որի չեր կարող լիներ վորովհետև այն ժամանակ հայությունը մի անձուկ ճահճացած կրոնական աղանդավորությունն եր միայն: Պետք եր վոր հայ խոջայական կապիտալը գուրս գար Արաքսի ձախ ափի ժայռերի ծերպերում իր համար փորած մորմի բույներից, ստեղծեր նոր Զուղա, տարածվեր Յեվրոպայի և Հնդկաստանի մեծամեծ շուկաներում, գառնար քաղաքական ույժ, մտներ միջազգային մրցակցությունների ասպարեզը, դեսպանական հանձնառություններն իսկ մտցներ իր զբաղմունքների շրջանակի մեջ, վորպեսզի այդ ձեւափոխությունների մեջ մշակվեր և կյանքի մեջ յերևան յելներ մի իսրայել Որի:

6.

Որին չկա, բայց մենք նոր գլուխ չենք բաց անում՝ հետագայեղելությունները ներկայացնելու համար, վորովհետև ներկա զլուխը շարունակվում ե և նրա մահից հետո, քանի վոր կենտրո-

նական աճնձը, վորից կախված եյին գործերն ել, գործիչներն ել, մտում եր միենույնը—Մեծ անվանված Պետրոս ցարը:

Որին փոխարինում եր նրա ընկեր Մինսս վարդապետը, վորի ընդունակությունները, սակայն, կնիքներ և թղթեր կեղծելուց շատ հեռու չեյին գնում: Ամբողջ յերեք տարի նա զբաղված եր Որի գույքերի մասցրդների փնտություն հաշիվների ստուգմամբ, պարտականների հետ համաձայնություն կայացնելով և այլն: Այդպես ել ոռւսաց կառավարությունը մոռացման տված կլիներ հայ շարժումն եր նրա վարդապետին եր յեթե իրանը, հիմար և ապիկար Շահ Սուլթան Հյուսեյինի կառավարության տակ, հետզհետե, ավելի ու ավելի աճող չափերով, չցուցադրեր քայլայման տեսարան:

Այս պետության մեջ յերեք ել չեյին պակասել ապստամբությունները, բայց ուժեղ շահերը միշտ ել կարողանում եյին զսպել ու խեղին նրանց: Այսպես չեր այն բութ կրոնամոլ շիա Սեֆերին, վոր ամեն ինչ հանձնել եր իրանից ել հիմար վեզիրին և պալատում վխտացող անթիվ ու անհամար մոլլաներին, իսկ ինքը զնում եր տեսնելու, թե ինչպես են վորմազիրները շարում Սպահանից դուրս իր ձեռնարկած մի շինության պատերը և մի անդամ մի ազուազ սպանելով, այնքան մեծ քաջություն եր համարել արդ, վոր հրամայել եր այդ առիթով վողորմություն բաժանել աղքատներին: Ամենից վտանգավոր հանդամանքն այն եր, վոր ներքին խոռվությունները կրոնական կերպարանք եյին ընդունում Խոլամի յերկու հատվածների—շիաների և սյուննիների մեջ: Շիաների ահեղ թշնամի յեր հանդիսանում մանավանդ պարսկական նահանգներից մելք կազմող կիսավայրենի և սյուննի Ավղանիստանը: Վերեռում մեր հիշատակած Միր-Վեյթը և նրա վորդի Միր Մահմուդը վոչ միայն վոչնչացրին պարսիկ իշխանությունը Ավղանիստանի մայրաքաղաք Ղանդահարում, այլև աշշավանքներ սկսեցին դեպի իրանի ներսերը: Այս պատերազմը, վոր տարիներ տեսեց, շարունակ բորբոքում եր շիա-սյուննի թշնամության կատաղությունը և շարժումներ եր պայթեցնում Շահերի պետության այս և այն կողմերում: Այսպես, նույն այս կրոնական հրդեհի բոնկումից զերծ չեր մնում և պարսկական Այսրկովկասի հյուսիսակողմը և հատկապես Շիրվանի խանությունը, վորի մեջ ապրում եյին և բազմաթիվ սյուննիները: Շամախու խանի խժությունները սյուննիների դեմ, արձագանք եյին դանում Դաղստանի դիշատիչ ցեղերի և գլխավորապես լեզգիների մեջ, վորոնք իրանց դավանակիցների վրեժն իրանի կառավարություն-

նից հանելու համար՝ ահազին քանակությամբ իշնում եյին իրանց ձյունեղին բարձրություններից և հրաբղիային լավայի պես տարածվում եյին հարավային Կովկասի պարսկապատկան հովիտներում ու դաշտավայրերում, ամեն տեղ սփուելով մահ ու ավերանք:

Մուսաց կառավարությունն ուշի ուշով հետևում եր այս շարժումներին, վորոնք շոշափում եյին նրա նկատառումները մերձկասպիական յերկիրների վերաբերմամբ: Վատանգավոր եյին այդ շարժումները մանավանդ այն պատճառով, վոր նրանց մեջ ուսւներն իրավացի կերպով տեսնում եյին թյուրքիայի մատաք: Ակնհայտ եր, որինակ, վոր Դաղստանի հոչակիած առաջնորդներից մեկը, Դուստր բեկ անունով, շարունակ հարաբերությունների մեջ եր ոսմանյան կառավարության հետ և իր արշավանքները տանում եր նրա ցուցմունքների համաձայն: Յեկ ոուսական դիվանագիտությունը բոլոր հիմքերն ուներ սպասելու, վոր մի որ չեմի որ կասպիական յեղերքներում ոռւսաց տիրապետությունն իրան կանխած կտեսներ ոսմանյան տիրապետությունը: Ուստի գործի զցեց իր միջոցները: Իսկ այդ միջոցների մեջ վերջին տեղը չեր բռնում հայոց հարցը:

1715 թվին Պետրոսը Պարսկաստան եր ուղարկում մի նոր գեսպանություն: Դեսպան Արտեմիի Վոլինովին հրաման ուներ հետազոտելու պարսկական բոլոր դորձերը, յերկրի աշխարհագրական դիրքը, զինվորական ույժերը, սազմական ճանապարհները: Այսքանն, իհարկե, գաղտնի պիտի կատարվեր: Իսկ գեսպանության աշկարա նապատակ հայտարարվում եր առևտրական դաշնակիր կնքելը պարսից կառավարության հետ: Դեսպանին տրված հրահանգների մեջ կար և այս կետը: «Տեղեկություններ հավաքել հայ ժողովրդի մասին, շատ և նաև և ինչ տեղերում ե ապրում: Հայերի մեջ կամ նշանավոր մարդիկ աղնվականներից կամ վաճառականներից և ինչպես են նրանք վերաբերվում դեպի ցարական մեծությունը, սիրով և քաղցրությամբ վարվել նրանց հետ և բարեկամություն հաստատել¹»: Այդ բավական չեր: Ինքը ցարն ել քայլեր եր անում հայերին իր հետ բարեկամացնելու համար: Յեկ այդ նպատակով արխիվից հանել եր տալիս Որիի ծրագիրը:

1716 թվին Մինաս վարդապետը հրաման եր ստանում գնալ Հայաստան և անձամբ տանել այնտեղի վլխավորներին ցարի հուսադրական խոստումը և առաջարկություն՝ վոր յերկիրը պատրաստ լինի ուսւների աղատազրական արշավանքին, վորին նա

1) С. Соловьев — «История России», М. 1868, т. 18, с. 28.

յերկար չպիտի սպասե: Վարդապետը նախ գնաց Եջմիածին, բայց այդտեղ հուսակուռը յեղավ: Համադանցի Աստվածատուր կարողի կոսք չուզեց լքել իր նախորդների չեղոք դիրքը:

Ուրիշ եր վերաբերմունքը Գանձասարի վանքում: Յեսայի կաթողիկոսը գրկարաց ընդունեց Մինաս վարդապետին, վոգնորվեց նրա բերած ցարական պատգամով և այդ որից իսկ դարձավ իսկական աղատագրական գործիչ, վոչ թե դիվանագիտական իմաստով, ինչպես Որին եր, վոր և մնաց անգերազանցելի, այլ կազմակերպչական բուռն յեւանգով, վորի կողմից շատ գերազանցեց Որիին... Նա շտապեց իր ցարասիրական ջերմեռանդությունն սփուել «Պետր Ալեքսեյիչ մեծի թագավորի» առաջ մի կոնդակով, վորի պատմուղական մասը հետեւյան եր.

«Եւ ընդ այս յուշ լիցի մեծի տէրութեանդ զի յառաջ քան զայս առաքեալ ի քումէ: Թագաւորութենէդ Իորայէլ Օրի գեսպանն եկն երկիրս հայոց և զնամբաւ բարեյադթութեանդ սփուեալ տարածեաց ի լսելիս մեր ամեննեցուն. և այնքան յորդուրեցաք ի սէր քո, մինչ ես իմովք միաբանիւք ելեալ ընդ նմա հանդերձ սուր ինչ ընծայիւք ելինք մինչեւ ի Յաշտարիան քաղաք, առ ի տեսութիւն մեծ և բարձր թագաւորութեանդ. ապա վասն մեր մեղացն չեղի կատարումի խնդրուածոց մերոց. վասն զի զենապանն անդ մեռաւ և զամենայն ինչս նորս և մեր ցիր և ցան արարին. և ոչ ոք չունէաք ասպնջական և ծանօթ, գարձեալ դարձաք յետո և եկաք յերկիրս մեր Իուլ այժմ կրկին առաքեալ ի մեծ թագաւորութենէդ եղբայրս մեր Մինաս վարդապետս որ ի յազգէ մերմէ եկն ենա յերկիրս մեր և առ մեղ և զբարի և աստուածանոյ կամք և խորհուրդ քաջազօք թագաւորութեանդ ծանոյց մեղ. և մեր լուելոյ զուարձացաք և ցնձացաք ի հոգի և ի մարմին. և յօժաք սրախ կամիմք ընդ հովանեսաւ թեոց քոց մինիւ. եթէ հաճնցի տէրութիւն քո ի մեղ, և զթասցիս ի վերայ թշուառութեան մերում, մեք պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմում կարողութեանս և մեք նահանգիս միլիքովք մեծամեծով և փոքրութք և ցործամ կամեսցի հզօր և մեծ թագաւորութիւնդ յաճապարի այսր կամօքն Աստուծոյ, յորժամ զնշան գործոյն խնդրեմք ցուցանել մեզ, զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս և աւա զամենայն հանգամանօք երկիրս ծանուացուք առաջի քո, բայց այժմ ևս փոքր ի շատէ առ բերան ասացեալ եմք Մինաս վարդապետիդ և ինքն ևս ականատես եղեւ ամենայն որսիսութեանց տեղեացս, որը յայտնելոց է տառաջի մեծի թագաւորութեանդ. և տերութիւն քո եղիցի ողջ ընդ երկոր աւուրս և հաստատուն ի փառս Քրիստոսի և ի պարծանս մեր. Ամեն. 1716 թ. սուսասոսի 10¹⁾):

Այս մի ամբողջ զինվորական պայմանադրություն եր, բայց միակողմանի. Յեսային իր վրա վերցնում եր մի շարք պարտավորություններ, բայց անհայտ եր մնում, թե ինչ եյին մյուս կողմի պարտավորությունները: Անորոշմշուշային եր մնում «հավանակոր քելերի» արտահայտությունը, վորոնք, իհարկե, ուռսական

1) ԹՅՈՅ, ս. 315—316.

թևեր եյին, բայց խնդիր եր, թե ի՞նչպես պիտի նրանք տարածվելին Հայաստանի վրա:

Այս միակողմանիությունն ու անորոշությունը հատկանշական են հայ կղերական դիվանագիտության համար: Առաջին անգամն ե, վոր մենք ունենք մի հայ կաթողիկոսի քաղաքական գրությունը ուռսաց ցարին, մի զրություն, վորի մեջ լուրջ և մյուս կողմի համար չափազանց զնահատելի առաջարկություններ կային: Յեղ, այնուամենայնիվ, այդ մի աղաչական զիմում ե, վորությունն և գթություն աղերսող մի խնդրագիր: Գանձասարի կաթողիկոսն այդ գրությամբ մտցնում եր իրան, հետեւաբար և ամբողջ Հյուսիսային Դարաբաղն պատագրական շարժման մեջ, մի բան, վոր չեր աջողվել Որիին: Իսկ Մինաս վարդապետի միջոցով ուռսաց կառավարության բերանացի հաղորդած տեղեկությունների մեջ Յեսային ասում եր, թե յերկու կաթողիկոսական թեմերը (Եջմիածնի և Գանձասարի) կարող են տալ 200 հազար զինված մարդ: Այս Որիի բանդապուշանքի կրկնությունն եր: Բայց խնդիրն այս չե, այլ այն, վոր մի այսպիսի պատկառելիութ (մանավանդ այն ժամանակների համար) առաջարկելն ել չեր կարողանում գոնե մի քիչ բարձրացնել հայ կղերական դիվանագիտությունը գետնամած, սողուն խնդրողի գիրքից: Այդ գիրքում ել նա մնաց միշտ:

Թագաքական ակնկալություններից ավելի վաղահաս եր այն ոգուար, վոր ստացան Յեսայի կաթողիկոսն ու Մինաս վարդապետան իրանց տեսակցություններից: Գանձասարի կաթողիկոսությունը ստանում եր մի նոր թեմ, կազմված Ռուսաստանում տպող հայությունից և նրա առաջնորդ նշանակվում եր Մինաս վարդապետը, վորին կաթողիկոսը տալիս եր արքեպիսկոպոսության աստիճան:

Ռուսաստան վերադառնալիս Մինաս վարդապետն իմացավ, վոր դեսպան Վոլինսկին դեռ Պարսկաստան չեր զնացել և գեռ գտնվում եր Շամախում: Ուստի, հարկավոր համարելով տեսակցություն ունենալ զեսպանի հետ, նա իր հետ վերցրեց Գանձասարից մի յեպիսկոպոսի և մի աշխարհական նշանավոր մարդու, վորպեսզի նրանց ել ներկայացնե զեսպանին: Այս բանն անհետվ, վարդապետը մտածում եր, թե թագավորի ներկայացուցչի ընդունելությունը մի լավ ապացույց կլիներ հայերի համար, թե Ռուսաստանը շարունակում է հայերի պաշտպանը հանդիսանալ և չե մոռացել իր խոստամեները: Բայց Շամախում Վոլինսկին, չնայած վոր հրաման ուներ իր կառավարությունից ամեն աջակ-

յություն ցույց տալու Մինաս վարդապետին, շատ սառն կերպով ընդունեց նրան և չուզեց իսկ՝ հետը խոսել: Դա մի գոռող և ինքնահավան մարդ եր: Մինաս վարդապետն ստիպված յեղավ իր հետ յեկածներին յետ դարձնել առանց դեսպանին տեսնելու, ասելով թե ինքը թուղթ կստանա ոռւսաց թագավորից և կուդարկե կաթողիկոսին:

Հետեւյալ 1717 թվականի մարտին Մինաս վարդապետը Մոսկվայումն եր և հաշիվ ներկայացրեց ոռւսաց կառավարության իր ճանապարհորդության մասին Այստեղ եր, վոր նա, անշուշտ, Յեսայի կաթողիկոսի հանձնարարությամբ, հայտարարում եր, թե հայերի թիվը պարսկական կովկասում 200 հազար է: Նկատ առնված եյին միայն չափանաս և ռազմունակ տղամարդիկ, վորովհետեւ դրանց մասին ասվում եր. «Յեվ բոլորը—վաճառականներ և զյուղացիներ, և յեթե դեպքը բերե պատերազմ պարսիկների հետ, նրանք բոլորը, ինչպես նաև (վարդապետն) ակնկալում ե, կլինեն հակված թագավորական մեծության կողմը»¹⁾: Բայց այսպիսի թիվը ունենալու համար պետք է, վոր Մոսկաստանին նվիրված լինեն հայոց յերկու կաթողիկոսներն ել: Սակայն չե կարելի հույսեր դնել եջմիածնի կաթողիկոսի վրա, վոր թեև խոսքով ասում է, թե համակրում ու ոռւսներին, բայց իրոք սաստիկ վախում է պարսիկներից: Գանձասարի կաթողիկոսն և միայն, վոր անկերծորեն նվիրված է Մոսկաստանին:

Գրեթե միաժամանակ դեսպան Վոլինսկին մուտք եր գործում Սպահան, ուր սկզբում լավ ընդունելություն դտավ: Պարսից կառավարությունը դեռ պաշարված եր այն յերկուդներով և կասկածներով, վորոնք առաջ յեկան Որիկ ժամանակ: Մոսկովյան ույժն Արևելքում առասպելական գույներ եր ստացել Պետրոսի հաղթությունների շնորհիվ և ոռւսական մոտալուս արշավանքի ուրվականը արդեն մղձավանջ եր դառնում պարսիկ կառավարիչների համար: Թեև այսպես, բայց ոռւս դեսպանի ամբարտավան և գրգռիչ ընավորությունն այն աստիճան անտանելի յեր, վոր նույնիսկ խզուկ Շահ Սուլթան Հյուսեյնի կառավարությունն ել վրդովից և մինչեւ իսկ բանտարկեց նրան և ապա սկսեց ստիպել նրան, վոր հեռանա մայրաքաղաքից: Իզուր դիմադրում եր Վոլինսկին, պատճառ բերելով, թե իր ներկայացրած առաջարկությունների վերաբերմամբ դեռ բանակցություններ ունի: Նրան խոստացան կատարել բոլոր առաջարկությունները հետո, միայն

թե նա հեռանա Սպահանից: Յեվ Վոլինսկին ստիպված յեղավ տեղի աւալ այդ ստիպողական պահանջին և ուելտեմբերին ճանապարհվեց Սպահանից: Սակայն այն՝ մի քանի ամիսն ել, վոր նա անցկացրեց պարսից մայրաքաղաքում, միանգամայն բավական եյին, վոր նա համոզվեր թե իրանի թուլության վերջին ժամն եր հասել, թե այդ անընդունակ և անխելք Շահը վերջինն ել լինելու իր տոնմի մեջ: Հաղորդելով մանրամասնորեն իր դիտողություններն այս մասին իր կառավարության, Վոլինսկին առում եր, թե հիմա նվաճումներ անելու ամենահարմար ժամանակն է, և այդպիսի մի ձեռնարկության համար չի ել պահանջմի մի մեծ զորաբանակ, բավական կլինի և ավելի փոքրաթիվ զորք: Զեսքից տալ այսքան բարեպատեհ առիթ կարող եռ ունենալ և այնպիսի հետևանք, վոր յերեան կզա մի ուժեղ և ընդունակ Շահ, վորի հետ արդեն դժվար կլինի զործ ունենալ:

Ընդհանուր առմամբ, Վոլինսկու դիտողություններն ու յեղակացությունները շատ ճիշտ եյին: Բայց այդ բոլորը ոռւս բյուրոկրատի սեփական գյուտերը չեյին: Ամեն մեկը տեսնում եր իրանի գրությունը և գալիս եր, սկսած Որիկց, այն յեղրակացության, թե հասել է ժամանակը՝ հոշոտելու իրանի դիրքի և վեցցնելու իր բաժինը: Այդ ընդհանուր տրամադրությունն եր, վոր ամեն կողմից փոթորիկներ եր հարուցանում իրանի գլխին: Ամենամեծ և կորսարեր փոթորիկը պատրաստվում եր արեելքում, Ավղանսիստանի կողմից, վոր և հրահրում եր ապստամբությունների և աշխարհակործան արշավանքների հրդեհների Քրդիստանի լեռներից մինչև Խաղատան: Ամեն ինչ շարժվում եր, ամեն ինչ շտապում եր ուշ չմնալ: Ժամանակ ե... Այսպես եր և Վրաստանի մի մասի, այն և՝ Քարթալինիայի մարտական կոչը, վոր զնում եր առաջին անգամ հնչելու Շամախում, դեսպան Վոլինսկու ընդունարանում:

Այդպես անողը Փարսեղան բեկն եր, վոր թեև անվանված ել վրացի, բայց մենք կարծում ենք, վոր դա նույն թիֆլիսնցի հայ Փարսադան: Բեկն եր, վորի մասին տեղեկություններ տալիս և Աստրախանում վերջին ժամանակներս հայտնաբերված գրչագիր ավետարանի հիշատակարանը¹⁾: Այս մարդը իր վորդիներով հանդերձ վրաց զինվորական ծառայության մեջ եր գտնվում և, ինչպես յերեւում ե, առանձին մտերմություն ուներ Քարթալինայի

¹⁾ Մեսրոպ յեպիսկոպոս—«Զարքարա նկարչի ձեռագիրը և Դավիթ-բեկի մասին հիշատակարան» («Բանքեր Հայաստանի գիտական ինստիտուտի» Գ. Ա.—Բ, 1921—1922, յիշ. 135):

թագավոր Վախիրանգ 6-դի հետ։ Հայտնի յեւ այս թագավորն իր շատ գնահատելի մշակութային գործունեյությամբ վրացիների մեջ, բայց պակաս հետաքրքրական չեւ և նրա ճակատագիրը։ Մեկն եր դա իր ժամանակների հազվագյուտ վրացական թագավորներից, վրոնք գահակալեցին, մնալով քրիստոնեական կրոնի մեջ, առանց ընդունելու մահմեղականություն, ինչպես վոր այս անպայման պարտավորություն եր դարձրել Շահ-Աբբաս առաջինը։ Սակայն, քրիստոնյա մնալը նշանակում եր հաստատություն չդանել Շահի կողմից, և Վախիթանգն, այդպիսի հաստատություն ստանալու համար, գնում եր Սպահան, բայց այստեղ նրան ստիպում եյին մահմեղական դառնալ Հյուսեյին—Դուլիշան անունով, գահազուրկ եյին անում և նշանակելով պարսից զորքերի հրամանատար, ուղարկում եյին պատերազմիկու ավղանների դեմ։ Վախիթանգը ակամա յեր կրոնափոխ յեղել, առում եր պարսիկներին և միշտ այն մտքին եր, թե պիտք ե ոգուտ քաղել պարսից պետականության անկումից և ազատել Վրաստանը պարսկական բռնակալությունից ու վերականգնել նրա նախկին անկախությունը։ Բոլոր այսպես մտածող վրացիների հետ նա ել իր հույսը զրել եր Ծուսաստանի վրա։ Պետրոսի արևելյան քաղաքականությունը կարող եր միայն վառել նրա հույսը և նա դառնում եր ջերմեռանդ և զոգեռված ուռւսաեր, մանավանդ Վոլինսկու դեսպանության ժամանակ, յերբ ամինքի համար անժխտելի յեր դառնում, թե յեկել հասել և աշխատելու ժամանակը։ Յեվ Վախիթանգն ինքն ել աշխատում եր մի կողմից պարսիկների մոտ՝ իր կորցրած գահը յետ ստանալու համար՝ իսկ մյուս կողմից ել ուսւների հետ խոսելու և պայմանավորվելու համար։ Ահա այս մասին եր փորձում Փարսադան բեկը խոսք բաց անել դեսպան Վոլինսկու հետ։

Փարսադան-բեկը¹⁾) ծառայում եր Վախիթանգի մոտ և մի անգամ ել Սպահանում եր տեսակցել Վոլինսկու հետ։ Շամախի գնալու պատրիվակը բավական անմեղ եր։ Փարսադան բեկը առաջ ու առաջ շնորհակալություն եր հայտնում սուսաց ցարին, վոր նախամք և տածում դեպի Վախիթանգի ազգականները, վորոնք ապրում եյին Մոսկվայում։ Ասլա Վախիթանգը խնդրում եր, վոր որթողոքս յեկեղեցին իրան չանիծե մահմեղական դարձած լինելու համար։ Աշխարհային փառքի, վոչ ել ապականացու հարստության համար չեւ, — ասում եր նա, — վոր յևս ընդունել եմ մահմեղական զգվելի որենքը, այլ իմ ընտանիքն ազատելու համար։ Նա հույս

¹⁾ Մուսերենի մեջ (С. Соловьев—„История России“ т. 18 с. 31) միշտ է Փարսեղան-բեկ։

ուներ, վոր չուտով ելի կվերադառնար քրիստոնեյության և այս ցարական մեծության ողնությամբ։ «Ժամանակ և պետական գործեր կատարելու, — ասում եր Փարսադան-բեկը։ — գրիր իմ միջոցով Վախիթանգին թե ինչպես նա վարվի պարսիկների հետ, իսկ յեթե դու այստեղ, Շամախում, կմնաս մինչեւ աշուն, Վախիթանգը մինչեւ այդ ժամանակ բոլորովին գլուխ կհաննե ամեն ինչ»։ Դեսպանը պատասխանեց նրան, թե ինքը պատերազմի համար չեւ ուղարկված, այլ խաղաղության համար։ — «Պարսկաստանում այդպես չեն մտածում, — ասաց Փարսադան-բեկը։ — ասում են թե դու այստեղ, Շամախում, քեզ համար քաղաք ել ես շինում։ Յեվ շարունակելով խոսակցությունը, նա ավելացրեց. «Ժամանակ ե, վոր քրիստոնյաները հաղթեն մահմեղականներին և բնաջինջ անեն նրանց»։ Վոլինսկին, սակայն, զգուշացավ նրա հետ քաղաքական խոսակցություն ունենալուց։

Հայերը միանգամայն անբաժին չեյին մնում այս ընդհանուր ակնկալությունների մեջ։ Այս կարելի յեւ հաստատապես ասել յեռնային Ղարաբաղի վերաբերմամբ և մասնավորապես նրա հյուսիսային մասի վերաբերմամբ, վոր յենթարկված եր Գանձասարի հրամանին։ Ահա ինչ եր գրում այդ հրամանի տեր Յեսայի կաթողիկոսը Մինաս վարդապետին 1718 թվի սեպտեմբերի 24-ի իր կոնդակի մեջ¹⁾։

«Հայտարարում ենք ձեզ, վոր ձեր բոլոր խոհական և խելացի նամակներն անկորուստ հասել են մեզ և նրանց կարգալով և ամենաբարձրագույն (ցարական) կամքն իմանալով, ուրախացանք մեծ ուրախությամբ Ո՞հ, յեթե կատարվեր այն գործը մեր ցանկության և զիտավորության համաձայն, վորպեսզի աղտավեր մեր խեղճ ժողովուրդը բռնավորական ձեռքերից։ Իսկ դուք սիրեցյալը, վորքան կարող եք, ամոռզ ձեր ուժերով աշխատեցնեք ամեն կերպ, վորպեսզի մենք մեր կենցանության ժամանակ՝ մեր աշքերով արժանանանք տեսնեմ վորովնեան հայոց անկալ ժողովրդի մեջ ամենքը, թե փոքր և թե մեծ, ուզում են ազատություն, իսկ ինչ ույժեր վոր ունեն նրանք բոլորը պարասատ են և սպասում են տեսնել այն որը, յերբ նոր, վաղուց սպասված աղտավորթյունը կստանան ամրող օրաով։ Այս յերկը անորեն իշխանավորների հակառակորդները կողմներից շրջապատել են, առավելապես ներքին թշնամիները, ինչպես են զանգահարցիները, վորոնք ներս են զնացել, 25 գիշերոթի և 5 կամ 6 սարգարների նրանց զնների հետ չարդել են և բանակները նրանց բոլոր հարստություններով հափշտակել են Ուղբեկների յերկը ինչպես Մեշեղի մոտ ամեն ինչ ավերել են։ Քրդիստաննից վոտքի յեն կանգնել ապստամբերը և սահմանակից Արարատյան նահանգը Յերևանի հետ և Սալմաստն ավերել են։ Մեղ մոտ, Երվանում, Աղվանից աշխարհում, Ղարաբաղում, Վրաստանում անթիվ տեղեր քարուքանդ են արեւ վորի պատճառով պարսիկ ժողովուրդն այժմ մեծ մոլորության մեջ և գտնվում են յեկել իր զորքով։

¹⁾ Թարգմանում ենք սուսերենից։

Նազըին, վորտեղից մտադիր և գնալ դեպի Մեշեդ, իսկ այստեղից ել զորք ուղարկել Ղանդահար, և թե ինչ կպատահի, Աստված գիտեն Կախթանգ սպասարք, վոր գտնվում եր Թավքիզում, նրան վերցը ել են Դազըին և այժմ լովում ե, թե նրան այդ աստիճանից զցել են, իսկ այժմ առում են, թե նրան վոչնչացը են, բայց մենք իսկական տեղեկություններ գետ չունենք, իսկ մեացածների մասին Այլվազը ձեղ բերանացի կղեկուցե, միայն այստեղ դրությունն այնպես է, ինչպես զըել ենք Յեզ ուզում եյինք մենք զըել պաղատունամակ, բայց յերկուուղից չնամարձակվեցինք շատ դեպքերի համար, այսքանն ել զըեցինք Արվազի խնդրանքով, վորին յերգվեցնելուց հետո հավատացինք, վործը համառոտակի նշանակեցինք Այս պատճառով ամեն մի վնասից խուսափելու համար, զուք, սիրեցյալ վարդապետ, աշխատեցեք լցնել պակաս տեղերը, ինչպես վոր ձեղ ամեն բան պարզ ե, վոր մենք ոձերի մեջ ենք ապրում և հայ ժողովրդի մեջ վոմանք զբարտում են իրար թշնամուրար և մանավանդ մենք ունենք մի քանի թշնամիներ և յեթե այս նամակների և այն մյուսի մասին, վոր զուք ձեղ հետ վերցը իր, մեր ժողովրդի միջից մի չար մարդ կամ լրաւս նկատե կամ լսե, իմացեք, վոր մեր վերջը կլինի, իսկ այս ուռնը հիմնահասակ կբանդիլ Ռւստի զուք հանցեք ձեր աշքերը իմաստությամբ բանալ, զեկավարել և մեր զաղանի գործը պինդ պահել, վոր վոչվորին տեսանելի չլինի, նորից կրկնում եմ, վոր հայտնի չզառնա. զուք ել զիտեք վոր մեր թշնամիներից ամեն տեղ կան շատերը պատրաստ Կրկին հավատարմացնում եմ ձեղ, վարդապետ, վոր յեթե իմանան այս նամակների մասին, մեզ կփչացնեն: Բայց զուք գործն այնպես տարեք, վոր մեր մահից հետո յել չիմացվի և Աստուծու կողմից սրա համար վոլորմություն լինի մեզ վրա Դուք ինքներդ ել տեղյակ եք, վոր ջուղայեցիներից ել գանվում են վոմանք չարամիտներ, այլ և հջմիտնական բնակիչներից ել լրտեսներ են բնակվում Շամախում ծակուծուկ անելու համար. նույնպես և ուրիշ պարապներ, իմանալով այս բանը, չեյին զրի դեպի այս կողմերը, վորից մեծ զժվարություն և հակադրություն կարող և առաջ զար ուստի բոլոր խոսքերն ու մտքերը, վորոնք կան թափախրի հրովարտակի մեջ, յերկուուղից մենք չզցեցինք, բայց ինչ վոր զուք զիտեք, հայտնեցիք: Աստրախանի մասին մի մոռանաք, վոր այնաեղի հայ բնակիչները և յեկվորները թե դնացողները, վորոնք ապրում են նորին ցարական ամենապայծառ մեծության տերության մեջ, նորին տերութենական հրամանով լինեն ձեղ ամենը հնագանդ, վորովհետեւ այստեղի յերկիքներում չարամիտ մարդկանցից շատ լիսաներ են լինում: Մենք հույս ունենք մեծագույն ողնության վրա, և այն գործն ինչպես վոր նորին մեծությունը վազորմածարար կբարձանձեւ զուք մեզ տեղեկություն ավելի, վորպեսզի, լսելով այս մասին, ավելի և ուրախանանք և պատրաստ լինենք¹⁾:

Ցաւել կարելի յե, վոր մենք չունինք այս վավերագրի հայերեն բնագիրը: Յեսայի կաթողիկոսն սկսել եր իր կազմակերպչական գործունեյությունը, վորի մասին արժեքավոր ծանոթություններ եր դրել իր այս գրության մեջ, սակայն հայերենին անծանոթ և դիվանական ուռւսերենը միայն իմացող թարգմանիչն այնքան մթացրել և բնագրի ցուցմունքները, վոր շատ տեղ նրանք

¹⁾ ԷՅՈՅ, ս. 326—327.

մնում են զրեթե անհասկանալի: Այնուամենայնիվ, բավական բան մնում և հասկանալու համար, թե ինչ եր կատարվում հայերի մեջ պատմական այն մեծ վայրկյանին, յերբ Պարսկաստանը յերկունքի մեջ եր, կանգնած մի ահավոր և տագնապալից պետական հնդաշրջման գուների մոտ և յերբ, ինչպես ասացինք, ազատություն վորոնող ամեն մի պետական հատված ասում եր՝ ժամանակ և վոտքի յելնելու:

Յեսային ասում եր, թե «ամենքը, փոքր թե մեծ», ազատություն են ուզում: Բայց այս միայն մի զեղեցիկ խոսք եր, այս «ամենքը»: Բանից գուրս եր գալիս, վոր ամենքը չեյին ուզում ազատություն, և վոչ միայն չեյին ուզում, այլ և աշխատում եյին, վոր չինի ազատություն: Յեսային պաշարված և յերկուուղներով և շարունակ այս մասին և խոսում, զգուշացնում: Զարակամներ, թշնամիներ, լրտեսներ ամեն տեղ են: Յեկ գլխավոր թշնամություն, ինչպես երեւմ ե, այն կղերական դասից եր, վորին պատկանում եր և ինքը, Յեսային: Լրտեսների մեջ նա հականե հանվանեց ցույց եր տալիս «Եջմիածնական բնակիչներին»: Յեկ իրավ, յեթե նայենք այդ ժամանակի յեկեղեցական պատմության, կըտեսնենք սովորական կազ և կոիկ կղերական տիրապետության, յեկամուտների համար, այս անգամ Եջմիածնի և Գանձասարի մեջ: Կովի գլխավոր առարկան հարուստ և վաճառաշահ Շամախին եր, վորն իրեւ իր թեմ եր ուզում ունենալ Եջմիածնը, ուստի և նստեցը եր այստեղ իր գործակալներին, վորոնք և ահարեկում եյին Յեսայուն իրանց լրտեսություններով: Յեկ վորովինետև այդ լրտեսությունների միակ առարկան կարող եյին զառնալ զաղտնի հարաբերությունները ուսւսների հետ, ազատագրական շարժումը և այլն, ուստի կարելի յե կղուագատել, թե վորքան պժգալի հանցագործության եր հասնում Եջմիածնի շահամոլությունը:

Պակաս քստմնելի չեր և այն կղերական շահատակությունը, վոր բույն եր գրել Գանձասարի կողքին, Զրաբերդ գավառում, ուր 17-րդ դարի վերջերում Մոավ լիուան թանձրախիտ և անլույս անտառների մեջ մի փոքրիկ վանք եր շինվել և այդտեղ գրվել եր մի կաթողիկոսական աթոռ, հակառակ գանձասարի: Յերկու հակառակորդների մեջ, իհարկե, իսկույն սկսվեց գոտեմարտը: Նոր կաթողիկոսությունը, վորի վանքը կոչվում եր Յերից Մանկանց, իր գոյությունը պահպանելու կովան եր դարձրել պարսից կառագարության հաճոյանալը, ուստի և հասկանալի յե, թե Յեսայի կաթողիկոսի ընտարած քաղաքական վարքագիծը վորքան ձեռնոտույթը նրա համար՝ իր դիրքն ամրապնդելու համար, իբրև կառա-

վարության առջև շահագործելու նյութ։ Կղերական դիմակրությունն այն աստիճանին եւ հասնում, վոր մի ինչ-վոր յեպիսկոպոս հաստատվել եր կազման քաղաքում լրտեսություն անելու համար, այնպես վոր թե Յեսայի կաթողիկոսը և թե Մինաս վարդապետն ստիպված յեղան դիմելու Պետրոս ցարին և խնդրելու, վոր կազմանից հեռացվի այդ սրբազն լրտեսը¹⁾։

Ընտանի և դրախ այս խոչընդուաները չհուսահասաեցըին Յեսայի կաթողիկոսին։ Թե Եջմիածնի և թե Յերից Մանկանց վերաբերմամբ նա ըսնեց հաշտեցնող ուղղություն, մի քանի անգամ զնաց Եջմիածնին և կարողացավ այնքան աջողեցնել բանակցությունները իր կողմից արած զիջումների միջոցով, վոր յետ ստացավ նույնիսկ և Շամախու թեմը, — մի շատ կարևոր աջողություն իրեւ նյութական միջոցների հենարան աղատագրական շարժման կաղմակերպման համար։

Խոկ Պետրոսի քաղաքականությունը դեպի հայ խոջայական կապիտալն ավելի և ավելի փաղաքական-գրավչական եր դառնում զուգընթացաբար այն բարեհան ուշադրության, վորի առարկան եր նա դարձրել հայերի քաղաքական ձգտումը, մի ուշադրություն, վոր, ինչպես տեսանք, հետևանք եր Պարսկաստանում տեղի ունեցող դեպքերի։ 1717 թվականին, Մինաս վարդապետին Հայաստան ուղարկելու հետ միասին, Պետրոսը մի համարյա բացառիկ շնորհ եր անում Զմյուռնիայում կենտրոնացած մի խոշոր խոջայական կապիտալը Ռուսաստան գրավելու համար։ Այս նպատակով նա հրատարակում եր մի շրջաբերական հրովարտակ, ուղղված էկառավարիչ Սենատին, նահանգապետներին, փոխ-նահանգապետներին, զինվորական հրամանատարներին, լանդրատներին, ամեն աստիճանի զինվորական և քաղաքացիական վարիչներին և քաղաքների մեջ տեսուչներին, քաղաքապետներին և մաքսային ծառայողներին։ Այս հրովարտակի մեջ նա ասում եր²⁾։

Երբոր Հոլունատիա եյնք, Հայկազն Պետրոս (Փիթեր) Ապրո խոնարհաբար մեղի աղերսագրով մը իմացուց թե ինքը և յերկու յեղաբքը Աքահամ յի Սովորան Ապրո ընակիչը Զմյուռնիո, մեծ փանականութիւն ունին Հնդկաստան, Պարսկաստան, Տաճկաստան և այս կողմերու եվրոպական թագավորութեանց մեջ, և իրենց փանականութեան մեծ մասը մետաքս է ուրիշ պար-

¹⁾ ԷՅՕԲ, Ը. 328—330.

²⁾ Собрание ак. отн. до обоз. истории арм. народа, ч. I, с. 158—160 Մինք տալիս ենք այն թարգմանությունը, վոր արել և «Մասյաց Աղավնի» ամսագլը (Փարիզ, 1857, յեր. 236—237)։ Այդաեղ ել տպված են տեղեկություններ այս խոչոր առևտրական տան ծագման մասին, վոր, ըստ սովորականին, հասցեամ եր մինչև Անիի Բագրատունիները

սից և ոսկեթից (օСТИНСКИХ հավանաբար օСТИНДСКИХ) ըկրքեր և միանգամայն մեծ ակնածութեամբ առաջարկեց մեղի թէ ինքը և իր երկու եղաբքը, իրենց այնպիսի վաճառաշահութիւնը տառջ տանելու համար կուգեն մեր թագաւորութեան և զավաճներու մեջն անցնելով Պարսկաստան երթալ և անկէ երկրին վաճառքները այս սահմաններս ըերել և անոնցմով տուտուր ընել, մեր Աժտիրխան, Յարոսլավ, Արքանկեր Մուրզի քաղաքներ և մեր կայսերանիստ Փեթրպուրկ քաղաքը անցնելով։ Նույնպէս մեր թագավորութեանը զավառելու մեջ տեսակ-տեսակ վաճառքներ ծախել՝ արժան յեղած մաքսը հատուցանելով։ Միայն թե կրամայիմք, վոր այն վաճառքներէն որ իրենք և իրենց գործակալները Պարսկաստան և կամ ի պարսից մեր կայսերութեանը մեջ մեր վորեկցէ քաղաքները և նախանձիքներու և ինչ ճանապարհով ալ որ ուզեն տանել կամ մեր թագավորության գավառներուն մեջ միայն ծախել, և կամ միայն անոնցմէ անցնելով այս սահմանները ըերել ուղենան, մաքսին տուրքը անոնցմէ ըոլորովին՝ այն որինոքն առնվի, որն որ պարսից արերութեանը, հպատակ յեղադ ջուղայեցիքը կատաւցաննեն, և այս ըանիս համար ինքը մեղմէ խոնարհութեամբ արտոնութիւններ և հրամաններ ինդրեց։ Անոր համար մենք ալ մեր կայսերութեանը և զավառներուն մեջ վաճառականությունը ծաղկեցնելու համար, ոչ միայն ըստ ամենայնի իր խնդրոյն հավանեցաք, հապանակ այս մեր հրովարտակը և արտոնութիւնը անոր տալու հաճեցանք հրամայելով վերոյիշատակեալ ծերակուտին, կուսակալներուն և անոնց փոխանորդներուն, հրամանատարներուն, խորհրդականներուն և զինվորական և քաղաքացիական ուստիչներուն և մաքսի պաշտոնականներուն, որ եր Պետրոս և Ազրահամ և Ստեփան Ապրո մեր այս հրովարտակովս վաճառականութիւն ընելու համար ձամբորդութիւն մը ընեն և կամ իրենց կողմանէ վաճառքներով գործակալներ զրկելու ըլլան, ամեն տեղ ազատ և անարգել ըլլան թէ ծովով եղեք է թէ ցամաքով, որ ճամբով ու որ քաղաքեն որ ալ ուղելու ըլլան յերթալ իրենց մարդիկներովն ու կամ կարասիքով թողուկ զիրենք, առանց ամեննեին զրկութիւն և խափանում մը ընելու, այլ մանավանդ իրենց ինդրին համեմատ ամեն ողնութիւն անսոնց ընել։ Բայց իրենց հետ գտնված և կամ իրենց գարձակալներուն հետ զրկած վաճառքներէն կը հրամայեմք որ մաքսապետները, քաղաքապետները և ուրիշ պաշտոնականները այն կերպով առնուն տուրքը, և զավարիքած տեղը ըերգած դրամքը՝ մեր թագավորական գանձը, որ ըոլորովին նման ըլլա պարսից հպատակ ջուղայեցի հայերէն առնվածներուն՝ իրենց հետ գրված պայմաններուն համեմատ, անկէ ի գատ մեկը չի համարձակի բան մը պահանջել թէ իրենցմեն և թէ իրենց գործակալներէն և անոնց վրայ տուրք ձգել և մեր հպատակներէն չըլլա ոչ մեկը անոնց գալչի, այլ վախնա մեր բարկութեան սաստիկութենէն և սաստիկապահանց տուրքներէն

«Եվ այսպէս մենք, մեծաղոր ինքնակալ, մեր արքայական մեծութեամբը մարդասիրաբար կը հաճիմք և կը հավանիմք անոնց և իրենց գործակալներուն մեր աթոսանիստ Սենքթ-Պետրովուրբի մեջ և ուրիշ վերը հիշատակած քաղաքներուն մեջ աղատարար ընակելու և վաճառել ամեն տեսակ վաճառքներ, միայն թե պատվիրանով արգելած չըլլա և վաճառականութեան պատճառով մեր և ուրիշ տերութեանց քաղաքներ քալել և իրենց վաճառքով, հատուցանելով, ինչպես որ վերը ըսինք պարտապաշտան եղած տուրքը պարսից հպատակ եղող հայոց տված տուրքին պես Այլ և կը հրամայեմք որ նույն Պետրոսի Ապրո և իր եղաբքըն ու գոր-

ժակալներուն ամենէն ավելի հոգանավորութիւն և ոգնութիւն ըլլվի, վորսէն զի իրենց ուրիշ հայկակեան եղբարքը տեսնելով զայն, ինչպէս նաև ուրիշ ազգէ վաճառական մարդիկ հորդորվին նոյնպես մեր և պարսից երկրին հետ առուտուր ընկլու Այս բանիս հաստատութեանը համար մեր ձեռքովը ստորագրեցինք և կայսերական կնիքով դրոշմելու հրամայեցինք և մեր այս հրովարտակը տոջի սովորութեանը պես զրի անցնել տալով, իրենց կամ իրենց գործակալներուն աւանդել այն քաղաքներուն և այն տեղերուն մեջ ուր որ օրին և տուրք առնուր եղ թէ որ իրենցմէ կամ գործակալներէն մեկն առանց այս հրովարտակիս ալ այնպիսի վաճառականութեան համար մեր տերութեանը մեջ գալու ըլլա՝ հրաման ունենա, և այս բանիս վկայութիւն համար էի, երբ որ հրովարտակիս որինակը Ապրո Պետրոսին ստորագրութեամբը և կնքովը ցուցնեն և այնպիս կատարվի ամեն բան, ինչպիս թէ մեր այս բուն իոկական հրովարտակիս մեջ բերվեր»:

Մեզ հասած բոլոր արտոնական վավերագրերի մեջ հաղիվ թէ լինի մի ուրիշը, վոր Պետրոսի այս հրովարտակի չափ լրիվ, ընդարձակորեն և ուռուցիկ կերպով ներկայացներ այն խկապես փայփայված դրությունը, վորի մեջ դրել եր այս ցարը պարսկական առետուրը Ռուսաստան բերող խոջայական կապիտալը: Յեզ վորովինետև Արրո յեղբայրները իրեւ իրանց արտոնությունների ծայրագույն աստիճան հավասարեցվում եյին ջուղայեցիներին, ուստի պետք և ընդունել վոր միենույն փայփայված և հովանավորված դրությունը վայելում եյին Ռուսաստանում և ջուղայեցի խոջաները:

Բայց ահա այս խոջաները մոռանում են իրանց պարտավորությունները, վոր հանձն եյին առել 1710-ի պայմանագրով: Նրանք մետաքսն այլևս բացառապես Ռուսաստան չեն տանում, այլ և թյուրքիա և այլ տեղեր: Բացի դրանից, Ռուսաստան տարած մետաքսը մեծաքանակ վաճառքի չեն յենթարկում, ինչպիս պայմանագրված եր, այլ իրանք խանութներ են բաց անում և մանրավաճառի տակ դնում: Այս պատճառով 1719 թվին Պետրոսը կարճում եր ջուղայեցիներին տված արտոնությունները: Բայց այս դրությունը մի տարուց ավել չտեղյ և 1720 թվին վերանորոգվեց 1710-ի պայմանագրը¹⁾:

Այսքան խոչը եր խոջայական կապիտալի նշանակությունը Պետրոսի համար: 1721 թվականի յերկրորդ կեսում նա շտապում եր վերջնական հաշտություն կնքել շվեդացիների հետ, վորովինետև այսպես եյին պահանջում հանդամանքները: Վերջանում եր «հյուսիսային» կոչված պատերազմը, վորպեսզի իսկույն սկսվի հարավային մի պատերազմ, վոր յերեան պիտի հաներ Պետրո-

սին, այժմ վոչ միայն ցար ըստ ժառանդականի, այլև իրան համառուսական կայսր հրամարակած, կասպիական հորիզոններում: Լեռնային Ղարաբաղը նոր հնարավորությունների դեմ առ դեմ եր կանգնում: Յեվայս հնարավորությունների մեջ տերն ու տնուրինողը ուրիշ վոչ չեր, բայց միայն նույն այն խոշոր ույժը, վոր այնքան կարեոր նշանակություն ուներ նորաթուխ կայսրի աչքում—հայ խոջայական կապիտալը:

7.

1719 թվականին Վախթանգ վեցերորդը, դեռ ևս մահմեդական, վերստին ստանում եր իր Քարթալինիայի թագավորությունը և գալով հայրենիք, վերսկում եր իր յեռանդուն շինարարական աշխատանքը, վորի նշանագոր յերկույթներից մեկն ել այն յեղավ, վոր նա մի ամրող նոր դարագլուխ բաց արավ Ղարաբաղի հայոթյան համար:

Ինչպիս զիտենք, Վախթանգին վոգենորող զլիսավոր միտքն եր ոգտագործել Պարսկաստանի անկումը՝ Վրաստանի քաղաքական ազատագրման համար: Հաստատվելով Թիֆլիսում, նա հետեւում եր հետզհետե զարգացող անցքերին և իր պատրաստություններն եր տեսնում: Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր այսպիսի մի աշխատանքի հիմքը պիտի կազմեյին բանակցությունները ուսւաց կառավարության հետ: Բայց այս մի նոր ճանապարհ չեր և նրանով գնալ վրաց պետական մարդիկ սովորել եյին վաղուց: Հետաքննականը, նորանշանն այն վերաբերմունքն եր, վոր Վախթանգն ան կեղծորեն ընդգրկեց հայերի վերաբերեամբ: Նա յեր զբեթե առաջինը վրացի թագակիրներից, վոր ըմբռնեց յերեկու վիճակակից, քաղաքական շահերով իրար հետ ամուր կապված ազգերի—հայ և վրացի—միաբան գործակցության ստիպողական անհրաժեշտությունը, վորի տեսակետից անխուսափելի պահանջ եր դառնում հայերին կազմակերպելն իրեւ զինվորական ույժ և այսպիսով ստեղծել մի հայ-վրացական միացած բանակ, վոր և զլուխ կրերեր, միացած ույժերով, յերկու ժողովուրդների համար ել ազատություն:

Անվանելով այս տեսակ ըմբռնումը զրեթե առաջին պատմական որինակ, մենք չենք մոռանում վիրահայկական բանակի միացման այն փաստը, վոր տեսակ 12-րդ դարը (Թամար թագուհի և Զաքարյաններ), բայց այն ժամանակ զրությունն այլ եր: Վրացիները վիճակակից չեյին հայերին, ունեյին ուժեղ պե-

¹⁾ Бутков—«Материалы для новой истории Кавказа», I, с. 4.

տություն, վոր նույն իսկ նվաճողական պատերազմներ եր սփռում իր չորս կողմը, մինչդեռ Վախթանգ թագավորի ժամանակ Արեւիլյան Վրաստանը (Քարթալինիա և Կախեթ) պարսկական մի նահանգ եր, յենթարկված ծանր և ստորացուցիչ հպատակական պայմանների, ասել ե՞ այս կամ այն չափով բախտակից եր հայերին. Այս մի եր, վոր յերկու ժողովուրդների առջև միանման մեծ և զժվարին ջանք կար աղատություն գտնելու համար. Այսուղից ահա Վախթանգի կազմակերպչական ըմբռողության բարձր դաշտավարականությունը:

Էմբռումը, սակայն, բավական չեր, պետք եր գործնական կազմակերպման շնորհք: Այս կողմից ել այնքան հարուստ ընավորություն եր Վախթանգը, վոր բոլոր ժամանակակից հայերը հիացմունքով եյին լցված դեպի նրան: Առաջ ու առաջ նա զինվորագրման փորձը կատարում եր հենց իր, Թիֆլիսի հայերի վրա: Կատարյալ անակնկալություն են յերեսում Յեսայի կաթողիկոսի հետեւյալ խոսքերը. «Նա (Վախթանգը) ժողովեաց զօրս իւր մանաւանդ զքաղաքացիսն, զհայազուն քաջամարտիկ զօրականսն, որք զհոզիս և զորդիս, զինչս և զանձինս եղեալ էին ի վերայ նորա յօժար սրտիւ»¹⁾: Այսպիսի զինվորական վոզի Թիֆլիսի հայ մոքալաքների և արհեստավորների մեջ ըացառիկ ե իրույ յերեսույթ, վոր կարող եր հիմնավորվել ժողովրդի և նրա զլիսավորի մեջ հաստատված սերտ մտերմական հարաբերությունների հողի վրա: Յեթե ժողովուրդը պաշտում եր Վախթանգին, պատճառն, անշուշտ, մի ուրիշ բան չեր, յեթե վոչ այն, վոր Վախթանգն ել նրան եր սիրում: Կարենը եր հայերի համար մանավանդ այն հանգամանքը, վոր Թիֆլիսի այդ առևտրա-արհեստավորական զինվորաւթյունը միայն տեղական, զուտ վրացիական պետքերին չեր ծառայեցվում, այլ տալիս եր նաև կադրեր՝ նախ Հյուսիսային, ապա և Հարավային Ղարաբաղում զինվորական կազմակերպություններ և զինական շարժումներ առաջ բերելու համար: Այս որինակը մենք շուտով կտեսնենք վիրոհիցալ Փարսադան բեկի և նրա ընտանիքի վրա: Այնպես վոր Վախթանգ վեցերորդն ե իսկական նախաձեռնողն ու զլիսավոր հրամանատարն այն զորական ուժեղ խմբավորումների, վորոնք գոյություն ստացան Ղարաբաղի լեռներում և վորոնք ահա շուտով պիտի դուրս գան պատմական ասպարեզ: Բայց թե ինչու այս յերեսույթը տեսնվում եր միայն Ղարաբաղում, — այս ել հասկանալի յե. վորովեատե այդտեղ կային հում նյութեր հանձին իրարից ան-

ջատված, ցաք ու ցրիվ, իրար հետ վոչ միայն չկապված, այլև հաճախ իրար հակառակորդ գավառակային, մելիքական գորախմբերի:

Այսպես եյին պատրաստվում պարագաները՝ ընդհանուր մի ռազմական նպատակ իրագործելու համար հեռաստաններ կազմող հակատների վրա: Յեկ ալեկոծված ծովի նման տատանվող մահմեդական Արևելքն իր ահ ու սարսափով ժողովրդականացնում եր հայերի մեջ Վախթանգի սկսած ձեռնարկությունը: Իզուր չեր Թիֆլիսի հայոց առաջնորդ Մինաս վարդապետ Փարվեզյանը դրում Որիի ընկեր Մինաս վարդապետին.

«Եւ Աստուած զարթոյց ազգին քրիստոնէից զբարի հովիւն և զքաջապիտ Վալին Վրացանու, որ իւր խոհեմութեամբն և հանճարեղութեամբն հաւաքեաց զմացեալ և զցրուեալ ազգս հայոց և ի տեղիս տեղիս ամրացոյց և խնամարկեաց և եղ պահապան յամենայն ուրեք ի վերայ նոցա»¹⁾:

Ուրիշ վելարերմունք դեպի այդպիսի մի խնամարկու գործիչ, վորպիսին եր Վախթանգը, չեր կարող լինել պարսկական Այսրկովկասի պես մի յերկրում, վորի վրա բացի պարսկական անկարգություններից, տասը տարուց ավելի յեր, ինչ բռնացած եր Դաղստանի մզձավանջը, և տարի չեր անցնում, վոր լեզգիական լավան չավերեր դժբախտ յերկրի այս կամ այն մասը: Այսպես, 1720-ին լեռնցիների մի հրոսակ, Սուրխայի առաջնորդությամբ, անցնելով կախիթը, Թիֆլիսի մոտով մտնում եր Սոմխեթ, ավերակ եր դարձնում կոռու ամրող ձորը, կոտորածներ անում և գերիներն ու ավարը Դաղստան ուղարկում: Մինայն ամառը նույն Սուրխայը, միացած մյուս դաղստանցի հոչակված գիշատիչ Դոռագ բեկի հետ, պաշարում եր Շամախին, բայց, ներսից խիստ զիմագրության հանդիպելով, յետ եր քաշվում: Փորձը կրկնվում եր ճիշտ մի տարուց հետո, զարձյալ ոգոստոսին և այս անգամ պսակվում եր աջողությամբ: Մեծափարթամ առևտրական կենտրոնը հանկարծակի յեր բերվում և ընկնում եր յերկու հոչականուն գիշատիչների ձեռքը: Այս ցնցող զեպքն եր, վոր հարկադրեց Պետրոս Մեծին վերջացնել շվեդական պատերազմը՝ հարվում ազատ ձեռքեր ունենալու համար:

Կուսացավ ամբողջ Պարսկաստանի, հետեւարար և նրա կովկասյան մասի համար չափազանց նշանավոր 1722 թվականը: Վաղ գարնանից այդ պետության մեջ նկատելի եյին դառնում յերկու շարժումներ: Արևելքից առաջ եր խաղում աղվանական բանակը, Միք-Մահմուդի առաջնորդությամբ, ուղիղ Սպահանի վրա:

1) ՑԵՐ. 64.

Գյուլնաբաթ գյուղի մոտ շահական զորքերը, վորոնց առաջնորդում երին մոլլաները, ջարդվեցին և փախան, և Միք-Մահմուղը մարտի 11-ին զրավեց Նոր Զուղան: Այնուհետև սկսվում եր Սպահանի հոգեարքը, վոր պիտի տևեր մինչև աշուն: Շահ Սուլթան Հյուսեյինը փակվեց Սպահանի բերդում, նրա վորդի Թանմազը փախավ Պարսկաստանի հյուսիսային մասերը, ուր և իրան շահնրատարակեց, վորպեսզի այդպիսով կարողանա զորք հաւաքել և գնալ ազատելու իր հոր մայրաքաղաքը:

Մյուս շարժումն ավելի մասնավոր և առորյա տեսք ուներ: Իջնում եր հյուսիսից, Դաղստանից, բաղկացած եր դարձյալ լեզզի խաժամուժից: Բանակը կանգ առավ կուրի և Արաքսի միախառնման վայրում՝ վորոշելու համար, թե ինչ ուղղությամբ տանել հերթական խժոժությունների ճանապարհը: Ապա սկսում եք շարժվել Արաքսն ի վեր, ձախ ափով: Նշանակում եր վոր հերթն այժմ Ղարաբաղին եր: Մտնելով Բարդուշատի գավառը, լեզզիները փախուստ դարձրին պարսիկ խանին, վոր զորքերով զրված եր այդտեղ՝ իբր թե յերկիրը պաշտպանելու համար. ապա, կատարելով իրանց սովորական գործը, այսինքն քար քարի վրա չթողնելով, յերեսները դարձրին դեպի հյուսիս և մարախի պես թափեցին Դիզակ գավառի վրա, վորի թալանման զործն ել վերջացնելով լեզզիարար, լուր ու մունջ անցան հետեւյալ գավառի, Վարանդայի միջով, վորովհետև այդտեղի Մելիք-Բաղիրը կարողացել եր ընծաներով և կաշառքներով փրկություն գնել իր յերկիրի համար:

Իսկ Խաչեն գավառը մնաց անտեր: Յեսայի կաթողիկոսը, փոխանակ Վարանդայի որինակը կրկնելու, փախավ բարձրացավ Գանձասարի վերեւում յեղած լեռան գլուխը և այդտեղից, իրրեապահով դիտարանից, տեսնում եր, թե ինչպես լեզզիները քշում տանում են Խաչենի գերությունն ու թալանը:

Ենք անտի հայեցեալ, - գրում են նա, — տեսանէաք գեղելոցն իրազործութիւնը, և այս եղելի 1171 (-1722) թուրին, ապրիլ ամսոյ 20, յաւուր աշխարհաստրան կիւրակէին: Աստանոր տեսանելի է զաղէտս յետամացելոց զուրկ կոտրելոցն և զաշիստ գերելոցն, զկսկիծ մարցն և զաղէտս գերեռէ զաւակացն, զողըումն որը մատցելոցն և զաւարառութիւն ընծիցն, զձայն լաւ կանացն խառնեալ ընդ վայր միջակտուր արանցն. արզարի զբնութիւնն լերանց և կարծը վիմաց փոփոխեալ ընդ ինքեանս սպակից իւրիանց առնէին իսկ զօրք թշնամեացն աարեալ զաւարն և զգերին, խառնեցին ի բանակն իւրիանց և չուեալ ի Տէրնակերտու, բանակեցան ի վերայ զետոյն Դրդու, որ այժմ թարթառ. կոչեմք ըստ պարսկականին, ի վերայ կամլ ջին, որ Դասիքորքի ասենա¹⁾։

1) Ցեր. 46.

Այստեղ արդեն Զարաբերդ կամ Զրաբերդ գավառն եր: Յեկայստեղ Դաղստանի գիշատիչները տեսան իրանց առաջ վախթանդ թագավորի անդրանիկ հիմնարկությունը — հայ մեծաքանակ զորքերի առաջին կամ Մեծ կոչված Սլնախը Մասկ սարի վրա: Հայ զինվորները, զրպովելով գերեն վարության աղետալի տեսարաններից, հարձակվեցան լեզզիների վրա, բավական մարդ կոտորեցին, բայց, ինչպես յերևում ե, լեզզիները շատվոր ելին և կարողացան շտապով հեռանալ, տանելով իրանց հետ գերությունն ու ավարը:

Չորս հոգի Մոավի մեծ Սլնախի գլխավորներից, մեկը մելիք յերեքը յուղաշի, հայ զինվորության հանդիպումը լեզզիների հետ, կրած տպավորությունները, կատարած առաջին ուղմական քայլերը պատմեն են Պետրոս կայսրին մի անթվական նամակով, շատ հետաքրքրական ե թե առհասարակ իր բովանդակությամբ, վոր Ղարաբաղի հոչակավոր ամրացրած բանակետների կամ սղնախների սկզբնավորման պատմությունն ե և թե մանավանդի րլեզզով, վոր ժամանակի աշխարհաբարն ե, զործածական՝ պաշտոնական գրությունների մեջ և պատկերացնում և ժողովրդի վլուս յեղածների մտավոր կարողությունը: Ուստի բերում ենք նրան ամբողջովին, պահպանելով և ուղղագրությունը.

«Կայունակապ նմանն մեծին տպկարու և կոստանդիանոսի շքեղակապ գարդարեալ փառօք տիեզերակալ թագաւորին հիւսիսայու Տէր Պետրէի:

«Արզ իլի ի հողոյն գարշայպարի ծառայեակցացն ծառայ եսայէ որ եմ ի երկրէն պարտայու ի գեռուղէն որ և կոչչ գուլստան համակատարած տանս Աղուանից, որ և լալի աչօք և արտասուայթու սրտիւ տոչորմամբ լանճօք ծունկս անկեալ աղաչօք արզ արարից մեծի տէրութեանդ, որ և թէ ի գուլի մեր քանիցու անբժշկելի պատուհաս եկաւ որ և այժմուս գալիս է ի ձեռս անօրինաց լազկացն կամ թէ տեղոց բանայկալացն քանիցու անզոյ զօշուն ելավ ծու. (50,000) կո. (60,000) գանձու վերայ և թէ պարտու վերայ աղաջին և ամենայն տանս Աղուանից. թէ նորայ որչափ կոտորումն առնէին այս առավեալ քրիստոյնէիցն, մարդիքն ամէնն սրայիսովող առնէյին, կանայքն և երախայքն աղջկունէն ամէնն քշելով առնէյին դէպի զաղստանն. ետուսս սուր ի առաջուստ կուր կէտն, որն կամին մտանէր, որն ձից ագի քունելով, որն թափու էր երես ջրոյն. ճուրն արունախառն, երախայքն ամէնն թափելով կետն տանէր որպէս ենիւ զառնանային, ևս որժամ անցուցանէին այս կողմն եսիրըն ամէնն որժամ բաժին բաժին եսոնէյին լազզիքն այս խղճուկ քրիստոնեայքն, կանայք, յերեխայք, աղջկունք, մայրն մեկ լազզոյ բաժին անկանէր, տղան մեկը որիշ լազզիկն անկանէր, աղջիկն մէկին անկանէր, որժամ միմեանց զիրկը արկանէլով սուր պաղակ բառնալով կոչեցուցանէյին ոչ տեսանէ աչ մարդոց և ականճն ոչ լու ծայն արտավայլից սպոյն. ժ. (10) և մեկ տարի է որ երկիրս Աղուանից զերի է ձեռս լազզաց. նորայ կոտորէյին և հսիրն առնէյին, ետ մնացածն ուղոյու բոնակալաց թուրքերն այրելով, խորովելով հարկս բահանջէ ամէնն թափու թալան յափշտակէին և մերումն անճար մնալով ծեռս տուվաք միմեանց. եւ

ծառայից ծառայ նուայիս և այլ ոմն շիրվան անուն և սարգիս անուն որ այս երկուքս ի չարապերթու են, ևս նուայիս Պարտայու և մէլիք Յովսէփի ի դանայու. միմնանց ծեռ արկաք ժ (10) և ժր (12,000) մարդ ժողովեցանք պատերազմ մտանք կամ թէ լազկոյ հետ կամ թէ տան Աղուանից թուրքաց հետամուք ծայրս քարանց սընաղ կապեցանք ի մեծիթագաւորիդ սուրբ աղօթիւն շատ կոտորումն և յաղթութիւն եմք առեալ ի վերայ թուրքաց. մասցեալ եմք տարածեալ ձեռու մեր առ Աստուած վասն մեծի տիեզերակալ թագաւորիդ: Եւ Տիկիսու վախթանկ խանն շատ օգնութիւն ենաս մեզ անթվելի որ զորվ չէ պատմելոյ. և մեծաւ աղաջանօք հայցեմք ի մեծի տէրութենէդ որ և ես հոդ և մոխիր նուայիս Պարտայու շրվանն և սարգիս չարայպերթու, մէլիք յօսին ի գանձայու այս դ. (4) սարգիկանց յատուկ յատուկ կուաղամ գրեալ և կնքեալ շնորհեա վասն մերում անուանայտեր երկրացս որ հասանէ մեզ և մեք ի զօրութիւնէդ քումմէ: առնումք զօրութիւն և կապեմք զրէն, մենայմարտեմք թշնամոյն մինչև ի գալուստ թագավորին կրկնակի խնդրեմք կրկնակի արզ աննմք ոսացդ հոդն նուայէս, շրվանէս սարգիսէս, մէլիք Յովսէփէս, որկ ազգս քրիստոնէց գերիգնաց, թագավորի գալուստն շուտով լոի, եթէ համեսցի գալուստ թագաւորին խնդրեմք որ իուաղամ ուղարկէք վախթանկ խանին որև զօշուն կապէ գայցէ ի քաղաքն գանձայ նսացէ, մեք և հեծեալ նորայ հաղթեմք թշնամոյն մինչև գալուստ թագաւորին. և ապա մահամադ զուլի խանն թշնամի է դարձել վախթանկին և մերում ազգիս քրիստոնէիցան. խիստ անողորմ յաւեցուցանում է հայկական ցեղու և նորայ խրոխտ պիտի և դատապարտեալ ի թագավորիդ¹⁾

Ինչպես յերեսում ե, հայոց այս առաջին Սղնախի գլխավորները միայն այս չորս հոգին չեյին: Յեսայի կաթողիկոսը, խոսելով միենույն առարկայի, այսինքն հայ զինվորության կազմակերպման մասին, նույնպես չորս անուն ե բերում, բայց դրանցից միայն մեկն ե, վոր գտնվում ե այս թուղթն ուղարկողների մեջ այն ե՝ Շրվանը, իսկ մնացած յերեքը այլ են—Ավան, Շահնի և Սարուխան, ամենքն ել յուղբաշի²⁾): Այս բոլոր հիշածների մեջ հոչակավոր ե հանդիսանում, իրեն հայ զինվորության առաջնորդ, միայն մեկը—Ավան յուղբաշին, ինչպես կտեսնենք իր տեղում:

Զրաբերդից և Բարգայից (Գյուլստանից) յետ շպրտված լեզուիները պաշարում են Գանձակը, բայց բնակիչների ցույց տված զիմադրության պատճառով չեն կարողանում վերցնել այն: Ահարկու և թշնամուն թե քաղաքից և թե յերկրից հեռացնելու համար հարուստ գանձակեցիներից մի քանիսը զնում են թիֆլիս և ոդնություն են խնդրում Վախթանգից, վոր և, ընդունելով այդ հրավերը, արշավում ե դեպի Գանձակ 40 հազար զորքով: Լեզուները համարձակություն չունեցան կովի բռնվելու այդ ույժի հետ և ցրվեցին անհայտացան նրա առջնից և Վախթանգը գրավեց Գանձակը: Սակայն հեշտ բան չեր այդքան զորք բերելը և առանց

¹⁾ ԵՅՕՅ, ս. 340—341.

²⁾ Ցեր. 53:

պատերազմի յետ դարձնելը: Գետք եր վարձատրել այդ զուքը, իսկ վարձատրությունը կայանում եր պատերազմական ավարի, կողոպուտի մեջ: Յեվ գանձակեցիները, վորոնք մեծ գումարներ եյին խոստացել Վախթանգին, խորհուրդ տվին նրան թալանի միջոցով ստանալ այդ վարձատրությունը: Վորոշվում եր, վոր թալանն ընդհանուր չլինի, այլ պայմանական: Պիտի թալանի յենթարկվեյին նախ և առաջ լեզգիների կողմանակիցները և կրոնակիցները, այսինքն սյուննի մահմեղականները, բայց վորովհետև այդ քիչ կլիներ, ուստի ավելացրին նրանց վրա դար գնացող (մայիս ամիսն եր) թարաքամաներին: Սկսվեց ավարառությունը: Բայց խել-գեռփելու կիրքը յերբ բորբոքվեց, ազգային կրոնական խորություններն խսպառ մոռացվեցին և հայոցուղերն ել մերկացվեցին անխնա: Յեվ զարձյալ Յեսայի կաթողիկուն և նկարագրողի տիսուր դերի մեջ:

«Սփուեցան,—ասում ե,—ի լերինս և ի ծորակս և յարձակ վայրս յերկրի Զակամու, Շամբորայ, Գանջապատանու, Ուկնապատու, Քուրաքչայու և Պարտայու մինչև ի Գյուլստան գեղն և ի գետն Դրդու: Եւ թէպէս սպանութիւն և գերեվարութիւն ոչ այսնքան արարին, սակայն զորինչ տեսին աչք նոցա չորբուանի անասուն, մինչև ի հաւ, և ցկատու և ցշուն: Իսկ անշնչց ոչ է ասելի զի մինչև փայտեղէն և բրդեղէն և խեցեղէնն տարան: Եւ եթե այս այսպէս և զինչ զբեցից սակս պիտոյ և պատուական ընչից և գոյիցն ոսկեղէն և արծաթեղինացն և այլ ազգի ազգի կանուց և կարասիացն, և զի ասելի թէ ի բազմութենէ աւարին այսինքն պղնձոյն, երկտին և շորեղենին ոչ բաւէին բեռնակիրք, այլ սայլիկըն որ ընդ ինքեան՝ այսու կրէին ի բանակս իւրեանց որ էր մերձ Գանջայու, ի Զօլակ անուանեալ վայրն եւ զայս ոչ թէ միայն յառասացեալ մահմետականցն արարին, ոչ այլ լնդ նոսին խառնեալ և զամենայն գաւառս հայոց վերոյթեալ յերկուն միահաղոյն աւարի առին զշարժուն և զանշարժուն: և զի լինէր երբեմն զունդ ինչ գորացն վրաց դիմէին ի գեօդ ինչ քրիստոնէի և նորա քանանայիւք և ժողովրդոք ընդ առաջ լինէին նոցա խաչուք՝ շուրջառոք՝ զանգակօք՝ և մոմեղինօք իրեք զքրիստոնէին իսկ վրացին ի վերայ անկեալ կողոպտէին զգեստն և զեկեղեցին, զգիրք և զամենայն ինչն մերկ ի մօրե կողոպտեալ և աւարի առեալ գնացին. և այսպէս զամենայն գաւառս և զեկեղեցին կողմանցն Գանձակու աւեր և թափուր արարին յամենայն ընչից և լցին զբանակս իւրեանց: այլ զիթիւ հօտից և անդէսց և առջասոց և կարէ ասել: քանզի կարգ և սովորութիւնն է նոցա յամենայն աւարէ զատասանորդն տալ զիլաւորին իւրեանց: այժմ ասէին զբաժին նորա ի յոշարաց 25,000 և յառջառոց 9000 և զայլն մտօք զննեսցնա¹⁾:

Իսկ ինչ եր անում Վախթանգը: Յեսային, վոր նույն այդ միջոցին գտնվում եր նրա բանակում, շարունակում ե.

«Եւ գիտելի է՝ զի թագաւորն Վախթանգ էնքն այր բարեսէր, երկիւղած յԱստուծոյ և քրիստոնէասէր և անյիշաշար էր, որ և յոլով անդամ պատուիրէր և

¹⁾ Ցեր. 51—53:

տպառնայր գորացն ոչ առնել այնպէս զըրիսուննեայսն որպէս վասն սպանութեան և գերութեան, իոկ նոքա ոչ տնօտային և ոչ լսէին հրամանի գլխաւորին իւրեանց:

Վորքան և մեծ լիներ ավարառությունը, բայց նա չփչացրեց այնքան մտերմական կերպարանք ընդունած հայ-վրացական հարաբերությունները. Առաջին պատճառն, իհարկե, Վախթանգի անձնավորությունն եր և նրա հետ այն գործը, վոր արդեն մարմնացել եր Մոավ լեռան—Հայկական Սղնախի կերպարանքի մեջ: Արդեն այդ բանակի զլիավորների նամակը ցույց եր տալիս, վոր վախթանգյան կազմակերպությունը սպասում եր ոռւսաց կայսրի գալստյան, վորի համար Աստրախանում կատարվող շտապ պատրաստություններն, իհարկե, հայտնի եյին Այսրկովկասում: Յեվ Յեսային ել, անշուշտ, լոկ ականատես լինելու բավականության համար չեր գտնվում Վախթանգի բանակում, այլ ընդհանուր խորհրդակցությունների և կարգադրությունների համար: Առաջիկա գործի կարեռությունը բնական ե, վոր յեթե վոչ ջնջեր հայ գյուղերի թալանման տպավորությունը, մանտվանդ վոր աղեաը տեղի յեր ունեցել գրեթե Դարաբաղի սահմաններից դուրս և այնպիսի գավառներում, ուր հայ աղգաբնակությունը մեծամասնություն չեր կազմում, հետևաբար թալանված ընդհանուր աղգաբնակության համեմատությամբ մասնավոր յերևույթի վիճակումն եր:

Ինքը Յեսային ել հաստատում է մեր ասածը, հայտնելով, թե ինքն ել Վախթանգի հետ գնաց Թիֆլիս, ուր մնաց չորս ամիս: Թեև իր «Պատմության» մեջ ասում ե, վոր զրա պատճառն այն եր, վոր յերկիրը մնացել եր «անտերունջ և անզլիսավոր», այսինքն մատնվել եր անիշխանության, բայց Թիֆլիսից ոգոստուին գրում եր Մինաս Վարդապետ Տիգրանյանին, թե յեկել ե Վախթանգի հետ խորհրդակցություններ անելու առաջիկայում գործելիքների մասին: Իսկ գործերը, իսկ վոր, շատ խոշորացել եյին: Վախթանգի արշավանքը Գանձակի վրա և լեզգիներին փախցնելը հասել եր Շահ-Հյուսեյինին՝ պաշարված Սպահանում, և այնքան ուրախացրել եր նրան, վոր նա նշանակել եր Վախթանգին Ատրպատականի բոլոր զորքերի զլիավոր հրամանատար և հրամայել եր նրան հաստատվել Գանձակում և պաշտպանել յերկիրը թշնամիներից: Բայց Վախթանգին ուրախացնողն այս չեր, այլ Պետրոս կայսրի նամակը, վորով առաջարկվում եր նրան հոկտեմբեր ամսին գտնվել Շամախում իր զորքով՝ ուստական բանակի հետ խառնվելու համար:

Յեվ Վախտանգը ծրագրում եր սեպտեմբերի վերջին դուրս գտալիքից դեպի Գանձակ իրը թե Շահի հրամանը կատարած լինելու համար, այնտեղից շարժվել դեպի Շամախի, իրը թե լեզգիների դեմ գործելու համար, բայց իրավես Պետրոսին դիմավորելու և նրա ձեռքի տակ մտնելու համար:

Հաղորդելով այս մասին Մինաս վարդապետին, Յեսային ավելցնում եր, վոր հայերն ել պատրաստ են ընդառաջելու ուստաց կայսրին և մտնելու նրա հրամանի տակ, վոր հայերն ունեն արդեն պատրաստ 40,000 զինվոր և կարող են պատրաստել ելի 40,000¹): Որիական տաքտիքը չեր մոռացվում—անչափ ուսցնել թվանշանները: Նույն Յեսային գրում եր իր «Պատմությունը» վճի թե Պետրոս կայսրին զարմացնելու կամ, ավելի ճիշտ ասած, խարելու համար, ուստի հայ զինվորության թիվը վորոշում եր, ինչպես և Սղնախի վերոհիշյալ չորս զլիավորները, տասներկու հազար²):

Վոգեռության որեր եյին, և միայն թվանշանները չեյին, վոր ուռչում եյին 3—7 անգամ: Վոգեռության ամենավառվուն որինակը տակս եր ինքը, Վախթանգը: Վառվում եր սա հյուսեային ազատարարի տեսիլներով մինչ այն աստիճան, վոր մռանում եր զգուշությունը և շրջանկատությունը: Խնչպես յերեւում ե, նա հենց այս ժամանակ հրապարակորեն հայտարարեց թե ինքը քրիստոնյա յե³), ասելե՛ իր վրա վեցըրեց մահմեդական հովատուրացի դրությունը, վոր սպանությամբ պատժվող մի հանցանք եր մահմեդական որենքով: Մոռացավ նա, վոր շրջապատված ե թշնամիներով և զրանց մեջ ամենակատաղին իր դրակիցն եր և մոտիկ աղգականը, կախեթի թագավոր Կաստանինը, վոր մահմեդականացել եր Մոհամեդի Ղաւլի անվան տակ և մի գոռոտ, հանդուգն և արյունաբրու մարդ եր⁴), մի ֆանատիկոս մահմեդական, վորի ձգտումն եր վոչնչացնել Վախթանգին և իր ձեռքը զցել նրա Քարթալինիան Թիֆլիս մայրաքաղաքով: Հասկանալի յե, վոր Վախթանգին՝ իր հանկարծակի հրապարակային ցույցով հոգուտ քրիստոնեյության՝ ամենավտանգավոր զենքն եր տալիս իր արյունուուշտ թշնամու ձեռքը:

Բայց սրբ զեռ վոգեռությանն եր պատկանում: Անպահմըերի

1) ԷՅՕ. ս. 333.

2) Յեսայի, յեր. 57:

3) Եստկո 2, ս. 51.

4) Պ. Իօսելիան—«Истор. взгляд на состояние Грузии под властью царей-магометан», Тиф. 1849, с. 123.

կեսին Վախթանգը մեծ հանդիսավորությամբ դուրս եր տանում իր բանակը Թիֆլիսից գեպի Գանձակ: Ճանապարհից նա առաջ եր ուղարկում Յեսայի կաթողիկոսին, վոր դնա Ղարաբաղի հայ զորքը տանի Գանձակ, ուր նա պիտի խառնվեր վրաց բանակին: Հետևյալ Նկարագրությունը ցույց է տալիս, թե վորպիսի վոգե- վորությամբ տեղի ունեցավ յերկու ժողովուրդների զինական յեղբայրակցության հանդեսը:

«Եւ ըստ հրամանին,—գրում ե Յեսային, —եկեալ մեր յարդարեցաք զնոսա- ըստ օրինի զորաց իշխանաց, վասն զի անվարժք էյն զինուորական սպասա- որութեանց և այսպէս բովանդակեալ զամենայն իբրև տասն հազար արք ըն- տիրն և սպասազէնս: ընդ որոց և զդասս քահանայից և պաշտօնէից մերոց առնալ մեծաւ ճոխութեամբ և խնջոյիւք համարելով նոր նորոգեալ զիշխանու- թիւն հայոց և զնացեալ իշաք մերձ ի քաղաքն Գանջայ Զօլակ անուն վայրն յաւուրի Յ: Քանզի և թագաւորն Վախթանգ բանակեալ էր յայն կողմն քաղա- քին ի վերայ ջրոյն որ Ղօզզարի գետ և Ղարա-արփասեն, և զկնի երից աւուրց ապա հրամանարք զնալ առ ինքնու Որ և եկեալ զնացաք և ի մերձենալ բանա- կի նորին, ինքն իմ հրաման արքը զօրաց իւրոց ընդ առաջ լինել մերայնցն իրեւ ողջամբ ընդունել զնոսա Եւ այսպէս մեծաւ շքով հանդիպի միմենանց երկուց կողմանց զօրացն: և իրեւ զօրէն պատերազմի ոսղմ կարգեալ հակառ առ հակառ և քաջամարտիկ մանկունք մերոյս զիմաց յառաջ խաղացեալ հախր առեալ քաջընթաց երկարօք և զինակազմ զրահիւք պարէին յանդիման հակա- տաւն: և ի ձայնէ հրացանացն որոտայր և թնդայր վայրն այն և փոշեիտան ծուխ նորին, իրեւ զկայծակնափայլ ամպ արգել զնառազայթս արեգականն մինչ զի զմիմենան հազիւ տնսանէաք Եւ այսպիսի խրախութեամբ հասեալ իշաք մերձ առ բանակի նոցին, զոր տեսեալ Վախտանկին այսպիսի յառաջա- պիմութիւն մերայնոց, ցնծացաւ ի հոգի և ի մարմին իւր Եւ նոյն ժամայն յդեալ կոչեաց ու ինքն զմեզ և զգուի կարգեալ տղայսն և զմելիքն և յոր- դորական ըանիւ յուսազրեաց և զօրացոյց ասելով՝ այսունետե զօրասնիք և քաջ էրուք իրեւ յորդիս զօրութեան և յուտեքէ և յումեքէ մի երկնչցիք զի տես հասեալ է ժամանակ փրկութեան քրիստոնէից: Եւ դարձուցեալ վրանն առ մեզ և յոյժ շնորհակալ եղի ի մէնջ: և ի վաղիւն զամենեսեան զզլիտուրուն եթիայնաց և այսպէս մնացաք առ նմա զաւուրս իրեւն զօնտ Եւ պատմառ սորին այսպէս մէր առնելոյն ընդ մեզայն է առաջինն՝ զի բնական սէր ունէր ընդ ազգի հայոց և ոչ այնքան հաւատայր ազգին իւրոյ վրաց, զոր միշտ նենգաւորք և խօրամանկը են: վասն այս կամէր այս զօրս մանաւանդ ազգս հայոց իւրն սեփ- հականացուցանել որպես տիփլիզեցիք: Եւ երկրորդ՝ զի յատկացեալ և ստո- ւեալ էր գալուստ մեծի կայսերն ըսուսաց Պետրոսի և կամէր հայ և վրացի- զօրօք ձոխ և շքեղ ընդ առաջ ելաննէ նմա»¹⁾:

Մի ուրիշ, նույնպես հոգեուրական ականատես, վերեւում մեր հիշած Մինաս վարգապետ Փարվեզյանը, այսպես և հրճվանք զեղգեղում նույն այս հայ-վրացական զինակցության առիթով- և եւ եկն համբաւ աւետեաց թէ գալոց է վերոյգրեալ թագաւորն հանգերձ:

1) Ցեր. 58—60:

ազում զօրօք յազատութիւն և յօդնութիւն քրիստոնէից, և սա ևս (Վախթան զը) բազում պատրաստութեամբ և բազում ընծայիւք, եղբարբք և որդովք և բա- զում քրիստոնէիւք հանգերձ 2 կաթողիկոսօք, բազում եպիսկոպոսօք և եկե- ղեցական դասիւք, եկինք դեմ ընդ յառաջ, խրախոյս բարձեալ ձայն: արձակե- ցինք ընդ միմենան թէ գալոց է փրկիչն քրիստոնէից, որպէս ճշմարիտ փրկիչն մեր Քրիստոս եկն ի յաւուր ծաղկազարդին ի յերուսաղէմ քաղաքն, և ման- կունք մեր ովաննայ ի բարձունս գոչէին: և մեք իւրաքանչիւրս զձարձու- պատրաստ ունէինք ձգել առ յուս վերոյգրեալ թագաւորին, ասելով օքնեատ եկեալ յանուն տեառն օրնութիւն որդույ Դաւթի և փառք ի բարձունս: երկու ամիս զօրաժողով արարինք և մնացինք ի Գանձակ քաղաքն»²⁾:

Ինչի՞ եյին այդքան յերկար սպասում: —Վոր առջևից զա- փրկիչը: Բայց փրկչի տեղ յեկալ մեծ պատրանքը:

Բայց, նախ քան այդ պատրանքին դիմելը, հարկավոր և այսո- տեղ հիշատակել վոր վեց ամսվա հայ-վրացական ազատագրա- կան շարժումները և փայլուն ակնկալությունները ծավալեցին հայ զինվորությունը, մտցնելով նրա մեջ և Ղարաբաղի ուրիշ- մասերը: Այսպես, բացի Մուհի Մեծ Սղնախից կազմակերպում եր և Փոքր Սղնախ՝ Քիրսի լեռնաշխարհում, Շուշի քաղաքին մոտ: Այս մի ինքնազլուխ բանակ չեր, այլ կազմում եր Մեծ Սղնախի բաժանմունքը, մինչդեռ տեղագրական հանգամանքների հետևանքով այդ յերկուսից անջատված դրության մեջ եր յեր- րորդ հայկական բանակը, վոր նույն այս 1722 թվին, նույն այս պետրոսյան խաչակրական ակնկալությունների տակ կազմակերպ- վեց Հարավային Ղարաբաղում: Այս բանակն իր ծագումով և զոր- ծողությունների գլխավոր վայրերով պատկանում եր Ղափանի այն մասին, վոր, ինչպես տեսանք, խոջայական կապիտալի մի- ջավայրն եր կազմում: Նույն այս 1720-ական թվականներին վերա- բերվող մի տեղեկությունից մենք իմանում ենք, վոր Ղափանը տարբերվում եր Հյուսիսային Ղարաբաղից թէ նրանով, վոր ավե- լի ստվար հայ ազգաբնակություն ուներ և թե մանավանդ նրա- նով, վոր այդ ազգաբնակության մեծ մասը պարապում եր վա- ճառապահությամբ²⁾: Գիտենք արդեն, վոր զափանցիների խոջա- յական կապիտալը միայն տեղական կուտակումներ չեր արտադ- րում, այլ հզոր եր նաև միջազգային կուտակումներով: Ղափանցի- ներն առետրական տներ ունեյին Զմյուռնիայում, Կ. Պոլսում և այլ տեղերում: Բայց առանձնապես հայտնի յեր այդ կապիտալը վենետիկում: Մենք հիշատակել ենք արդեն Վոսկան Շահումյա- նին, վոր 17-րդ դարի կեսից սկսել եր միլիոնավոր Փրանկի շրջա-

1) ԷՅՕՅ. ս. 336—337.

2) ԷՅՕՅ. ս. 388.

առոռություն ունեցող առևտուր Դամասկոսի կերպասներով, հայելիներով և այլ թանկարժեք ապրանքներով¹⁾: Այս վոսկանի յեղբոյրդի Ստեփանոս Շահումյանը, ինքն ել վաճառական, Մեղրիի շրջանի Յեղաստան գյուղից, հայ զինական շարժման նախաձեռնող և հանդիսանում է գնում և Թիֆլիս՝ կազմակերպչական միջոցներ խնդրելու համար: Այդ, յերեխ, այն ժամանակ եր, յերը վախթանգն արդեն մեկնել եր իր զորքով դեպի Գանձակ, ուստի Ստեփանոսը գնում եր Մցիսիթ, Վախթանգի վորդի Բակուրի մոտ, վոր կոչվում եր Շահ-Նավազ և գտնում ե այնտեղ արդեն մի ամբողջ պատրաստի ձեռնարկություն, վոր, յերեխ, գործադրության մեջ կմտցվեր, յեթե Շահումյանը գնացած ել Հիներ խնդրելու:

Դափանին տրվում եր, իբրև կազմակերպչական կորիզ, հայ զինվորական մի փոքրիկ գունդ, բաղկացած մոտ 400 հոգուց²⁾: Այս ուցմի հոգին դառնում եր մեկ ծանոթ Թիֆլիսեցի Ղուղանենց Փարսադան բնելը, վորի վորդիներից մեկը, Աբամասին անունով, մեկն եր այն յերեսուն Թիֆլիսեցի գլխավորներից, վորոնք պիտի հրամանատարներ լինելին Ղափանում: Իսկ գլխավոր հրամանատարությունը Բակուր-Շահ-Նավազը հանձնում եր Ալիխանի վորդի Կալիր-բեկին, վոր նույն Փարսադան-բնեկի փեսան եր³⁾ և կարող եր հենց ինքն ել լինել Ղափանցի: Այսպիսով Ղարաբաղի զինվորական խմբավորումներից այս յերրորդը, յեթե պիտի գործեր մի միջավայրում, վոր գլխավորապես խոջայական կապիտալին եր պատկանում, նրա համար Վրաստանի տված կազրերն ել մեծագույն մասամբ Թիֆլիսից եյին, վոր նույնպես խոջայական կապիտալի միջավայր եր գերազանցորեն:

8.

«Գալոց է փրկիչն քրիստոնէից»... Այս մի աղաղակ եր, վոր արձակում եյին Արենքի հեծող ժողովուրդները, գրանց մեջ համախաղույն և հայերը, դարերից ի վեր: Այժմ եր, վոր հայերի համար վորոշ թանձրացեալ մարմին եր դառնում այդ աղաղակը: Հորիզոնը վրա գծագրված եր այդ կերպարանքը, վոր խոստացե-

1) Հ. Ալբան—ՀՍԽՍԱկան», յեր. 455:

2) «Թաւիթ բեդ.—Ընտիր պատմութիւն Դաւիթ բէզին և պատերազմաց հայոցն Խափանու», Վաղարշապատ, 1871, յեր. 6:

3) Մերոպ յեպիսկոպոս, Բանբեր էջմ. Գիտ. Խստիառատի, յեր. 135:

եր փրկել և կարծես գալիս եր փրկելու: Այս Պետրոսն եր, առաջին անձնավորումը Այնուհետև ել հայ ժողովուրդն ունեցել ե շատ այդպիսի անձնավորված տեսիլներ իր հորիզոնների վրա, ամենքն ել «գալոց է փրկիչն»: Պետրոսը դրանց բոլորի նախակարապետն եր, դրանց բոլորի ճիշտ որինակը, սպառիչ բովանդակությունը: Յեվ այժմ ե, վոր պատմությունը պիտի կատարե իր կարեռագույն պարտավորություններից մեկը—ցույց տալ, թե ի՞նչպես եր գալիս այդ «փրկիչը»: Դրա համար մեղ հարկավոր ե, գեթ առժամանակ, թողնել միամիտ մարդկանց մանկական հավատավորությունն ու այստեղից առատորեն հոսող հրճվանքները, աղոթքները, մի խոսքով ամբողջ քաղաքական յերազատեսությունը և մտնել փաստերի, վավերաթղթերի մեջ:

Մենք արդեն տեսանք, վոր Շամախու գրավումը, 1721 թվի ամառը, Դոուղ-բեկի և Սուրխայի ձեռքով՝ այնքան շփոթեցրեց Պետրոսին, վոր նա շտապեց վերջացնել շվեդական պատերազմը և հրամայեց իսկույն պատրաստվել պարսկական արշավանքին: Յերկու քաջարի դաղստանցիները, տիրանալով Շամախու անհուն հարստություններին և իրանց նստոցը հաստատելով այդ քաղաքում, լայնարձակ հնարավորություն ստացան տարածելու իրանց արշավանքները դեպի պարսկական այն քաղաքները, վորոնք գտնվում եյին Կասպից ծովի վրա և նույնպես զցել նրանց իրանց ձեռքը: Առաջին հերթին վտանգ սպառնում եր Դիրքենահին: Իսկ այս քաղաքի անկումը կնշանակեր, թե կասպիյան այս ծովափնացնում եր ոսմանյան թյուրքերին, քանի վոր Դոուղ-բեկն ու Սուրխայը համար վում եյին նրանց գործակալները: Իսկ այսպիսի մի կարելիություն պիտի փչացներ Պետրոսի ամբողջ ծրագիրը Պարսկաստանի վերաբերմամբ, վորի գործազրության համար նախապատրաստություններ նա սկսել եր տվել դեռ 1720 թվականից: Մեղ արգեն ծանոթ դեսպան Վոլինսկին, ինչպես զիտենք ժամանակը հասած եր համարում, վոր Ռուսաստանը գրավե Կասպիական ծովի հարուստ ափերը և մանավանդ Գիլանը, վոր պարսկական մետաքսի հայրենիքն եր համարվում: Տալով իր համաձայնությունն այդ առաջարկության, Պետրոսը նշանակում եր Վոլինսկուն Աստրախանի նահանգապետ, վորպեսզի նա զաղանի պատրաստություններ տեսնե: Այդ պատրաստությունների մեջ եր և այս հրահանգը, «Թեքել Քարթալինիայի թագավոր Վախթանգ զին և մյուս քրիստոնյաներին դեպի Ռուսաստանի ոգուաները, հավատացնելով նրանց, թե Պետրոս 1-ը բարեհաճ և տրամադրված դեպի նրանց և հուսադրելով, թե նրանք կունենան թագավորի»

հօգանավորությունը¹⁾: Յեկ վորովհետև այսպիսի մշուշապատ խոսքերով հեշտ չելին դրավվի և Արևելքի միամիտ ժողովուրդներն, ուստի Վախթանգը 1721 թվականին ոռւսաց բանակի զվարակությունունք հարցմունք եր ստանում, թե ոռւսական վորքան զորք ե հարկավոր, վոր Վրաստանն ազատվի պարական լուծից և պատասխանում եր, թե բավական ե ոռւսական 10 հազարանոց մի ոժանդակ զորաբաժին, վորպեսզի ինքն ազատե քրիստոնյա ժողովուրդը գերությունից: Այսքանը բավական եր, վոր Վախթանգը արամադրվի այն մտքով, թե ոռւսներից պիտի ստանա ոժանդակ զորաբաժին. Վախթանգը, ճիշտ վոր, այդպիսի հավատ կազմեց իր համար և մի աղերսագիր ուղարկեց Պետրոսին, հայցելով նրա ոգնությունը: Գործն այսքանով ել արքած վերջացած եր: Մեկ հայտնի թղթերից վոչ մեկն ել չեպարունակում Պետրոսի վորոշ և դրական խոստումը: Բերանացի, յերկդիմի, վոչնչի չպարտապորեցնող խոսքեր անհնարին չեր վոր չինելին: Նպատակն իրագործված եր լիովին.—Վախթանգն ընդմիշտ հակեցված եր Ռուսաստանի ոգուտների կողմը:

Պարսկական արշավանքը Պետրոսը նշանակել եր սկսել 1723-ին: Բայց Դուղերեկը և Սուրբայը շտապեցրին նրան: Նա յերկյուղ եր կրում, վոր յեթե ուշ գնա, կասպիհական յեղերքներին կտեսնե իրան կանխած ոսմանցիներին: Բայց, վորպեսզի թե ոսմանցիներին և թե նույն իսկ պարսիկներին կասկածների տեղիք չտա, Պետրոսը նախապես բանակցություններ եր սկսում յերկու կառավարությունների հետ՝ հավատացնելու համար, թե իր արշավանքը Պարսկաստան՝ նվաճողություններ անելու համար չե, այլ միակ նպատակ ունի պատժել ապստամբներին, այսինքն լեզգիներին: Այսպես ել հայտարարում եր Արևելքի ժողովուրդներին ուղղած իր մի մանիքեստով, վոր հրատարակում եր Աստրախանում, իր այստեղ հասած որը, հունիսի 15-ին, վոր գրված եր պարսկերեն, թյուրքերեն և թաթարերեն լեզուներով հետեւյալ բովանդակությամբ.

«Վորովհետև 1721 թվականին լեզգիների տիրապետող Դուղերեկը և Ղազգումուխի տիրապետող Սուրբայը, վորոնք ապստամբած են շահի, իրանց թագումորի գեմ, զրոնվ վերցրել են Շամախին և այնտեղ առետուր անող ոռւս մարզկանց կոտորել են և նրանց ինչըլը չորս միլիոն արժողությամբ հափշտակել են և պահանջը, վոր այս ապստամբներից ապահովություն ստացվի, Շահը շի կատարել, ույժ չունենալով, ուստի մենք ինքներս, համարելով շափազանց վիրափորձած կայքի և պատվի կողմէց, վնասցինք պատժել այդ ապստամբներին, վորոնք պասակար են յերկու կողմերին եր Շահի այս բոլոր յերկիրներ

թուժ ապրող հպատակներին հռապրում ենք, վոր վոչ գորի ամենափոքր վասք թե անձի և թե սեփականության վերաբերմամբ չի հասցվի, միայն թե նրանք անդիսա մասն իրանց բնակարաններում, հանդուղն կողոպտիչներին չկցվեն և նրանց, ծածուկ թե հայտնի, չոզնեն փողով կամ ուտելիքներով, իսկ սրտն համակվողները մեր թշնամիներ կճանաչվեն և նրանց հետ կվարվենք առանց գթության Բ. Դրան բոլոր հպատակներին, վորոնք գտնվում են այս մարզերում առևտուրական կամ այլ գործերով, ինչպես այս պահանջում և յերկու պետությունների մեջ կնքված համբաւենական հաշտությունը, տրվում ե հուսադրություն, թե նրանք սուսական զորքերից վախելու վոչ մի բան չունեն, միայն թե մասն հանդարտ ու հանդիսաւ»¹⁾:

Յեկ ահա կովկասյան քրիստոնյաների «Փրկչի» առաջին համակությունը.—Նա պարսից Շահի բարեկամն ե, գնում ե նրա դեմ ապստամբներին պատժելու: Յեկ բոլորովին զուր են արված Շամախու, Դուղերեկի, Սուրբայի անունները, բոլորովին անտեղի յեն ոռւս վաճառականների, նրանց և միլիոնանոց գույքի հիշատակությունը: Այդ բոլորից և վոչ մեկը չե արշավանքի նպատակը: Ահա Աստրախանում նա նոր միայն ստանում ե տեղեկություն, թե ավղանները գրավել են Զուլան: Յեկ իսկույն նրա մտքի մեջ ծնունդ ե առնում քաղաքական առևտուրի նոր, ընդարձակ ծրագիր: Նա միայն յերկու դաշտանցիներին չե գնում պատժելու, այլ ավելի հեռու դեպի հարավ, մինչև Սպահան, Միր-Մահմուդին վոչնչացնելու և Շահ-Սուլթան-Հյուսեյնին ամուր կերպով իր գահի վրա հաստատելու համար: Միայն թե դրա համար վճարեն իրան, լավ վճարեն: Յեկ այս եր, ինքն իրան Պարսկաստանի վատթարագույն մոլլա Շահին վաճառող քաղաքական վերեղակը, վոր նույն այդ Շահից պիտի խելը Վրաստանն ել, Հայացտանն ել:

Սպահանի պաշտաման լուրին իբրև պատասխան՝ կայսրը հանձնարարում եր Պարսկաստանի իր հյուպատոս Ավրամովին հետեւյալը.

«Աշխատել տեսնել հին թե նոր Շահին և առաջարկել նրան թե գնում ենք գեպի Շամախի վոչ թե Պարսկաստանի հետ կովկելու համար, այլ տապտամբներին նվաճելու համար, վորոնք մեզ վիրագորել են, և յեթե Շահին հարկագուր ե մեր ոգնությունը, մենք պատրաստ ենք նրան ոգնելու՝ մաքրել յերկերը բոլոր թշնամիներից և նորից հաստատել ներկա կառավարությունը Պարսկա կատարած միայն այս պայմանով, վոր Շահը զիջե մեզ դրա փոխարեն մի քանի մարզեր կասպից ծովի վրա իսկ յեթե նա իր ներկա թուլության մեջ կթնաւ—այս առաջարկությունը չի ընդունի, այն ժամանակ թյուրքերն անպատճառ ենք կցցեն ամբողջ Պարսկաստանը, մի բան, վոր մեզ հակառակ ե և մենս շինք սւզում վոր գոչ նրանք աիրեն, վոր ինքներս, բայց չունենալով Շահի հետ

¹⁾ Եղիկօս, I, c. 6.

¹⁾ Եղիկօս, c. 17.

գաղինք, չենք կարող նրան պաշտպանել այլ միայն ծովին մոտիկ հողերը կը գերցնենք, վորովհեան չենք կարող թույլ տար, վոր թյուրքերը մասնեն այնտեղ՝ և յեթե այն հաճելի կլինի Շահին թող անհապաղ դեսպան ուղարկել մեզ մաս դաշնագիր կնքելու համար, ուր վոր կատանվենք մենք Կասպից ծովի տփին։

Ավրամովը պատասխանում եր նրան.

«Ճահի դեսպանը շուտով կդա»¹⁾։

Այսպես Պարսկաստանի հետ իսկ հուլիսի 2-ին Աստրախանից ուղարկվեց Վրաստան, Վախթանգ թագավորի մոտ, դեսպան Բորիս Տուրկեստանովը, վորի հետ կայսրը զրում եր թե հույս ունի, վոր դեսպանի տեղը հասած ժամանակ ինքն արդեն մտած կլինի Պարսկաստանի սահմանները.

«Նոր քրիստոնեյության ոգուոր, ամրապնդված ոլրինցի (Վախթանգի) խռովածով, պահանջում ե, վոր նոր զորքերը միանան ուստական զորքերի հետ յերբ այս վերջինները տեղ կ'ամսնեն։ Վախթանգը պարտավոր եր հարձակում գործել լեզվինների վրա, վորոնք մասսարեր են թե Ռուսաստանին և թե նրան, և վորքան շուտ կատարվի այդ, այնքան լավ։ Այդ ժողովուրդների հետ գործ ոկտելուց հետո պետք եր իմաց աալ թագավորին, վոր և այն ժամանակ կնշանակե տեղ, ուր պիտի գար պրինցը՝ նրա հետ տեսնվելու համար իսկ յերբ գրացական բանակը կմտնե Պարսկաստան մերինի հետ միանալու համար, այն ժամանակ բնակիչներին վոչ միայն չպետք և նեղացնել այլ ըստ կարելույն հուսադրել, վորպեսզի բնակիչները շփախչեն և մենք ամենքին շղաւացնենց և այդպիսով չկորցնենք ամեն ինչ»²⁾։

Վախթանգը պատասխանեց կայսրին մի նամակով, վորի մեջ շուայլում եր ամեն գովասանքներ և հաճոյախոսություններ նրա հասցեյին, իսկ իրան անվանում եր «ձեր մեծության հովանավորության և պաշտպանության վրա հույս զրած ձեր դրան ծառայող՝ քարթալինցիների թագավոր Վախթանգ», ապա զրում եր.

«Ենք զեկուցում հենք ձեր մեծության, վոր մենք սրանից առաջ զրել ենք ձեզ մեր խնդիրը լատիներեն այն նամակի մեջ, վոր զրել եր կաթոլիկ մի քանանա այն պատճառով, վոր մենք ուրիշ վոչ վոքի չերինք հավատում Մինչե այժմ մեզ չհայտարարից ձեր վոչ մի հրամանն ի պատասխան այդ զրության և մենք գանվում եյինք սպասողության մեջ ինչպես Արքամը, մեր նախահայրը սպասում եր Թբիստոսից ազատություն դժողքից։ Այժմ մենք տեսանք այդ հրամանը և ստացանք իշխան Բորիս Տուրկեստանովի միջոցով նամակը և ակնածության արժանի հրովարտակը, վորի մեջ ամփոփված եյին հոգու և մարմնի համար բուժիչ խոսքեր, մենք ուրախացնք և որհնեցինք ձեր թագավորության հզորությունը, մենք լույսի վորդիներ՝ թողված խավարի մեջ։ Սո ըս ավետարանն ասում ե. «Ով վոր խմելու ցուրտ ջուր կը տա հանուն առաքեալի նրա վարձը չի կորչի»։ Բայց այն բարի հովիվը, վոր կվերադառնե մեզ կրած վոչխարը, վորին հափշտակել եր անազորույն գաղանը, աղատե և աանե

1) Бутков, I, с 18 - 19

2) Переписка, на иностранных языках, грузинских царей с российскими государствами, СПБ. 1861 с. LXXV.

յերկնավոր հոր մոտ, նրա այս գործը վորքան բարձր և չուր տալուց Հետո մենք, բոլոր քրիստոնյաներ մեր հողերով և զորքով նպատակվել ենք ձեռնության և պատրաստ ենք մեր զուտիւ զնել՝ ձեզանից դժբախտությունը հեռացնելու համար։ Այն իսկ ժամանակ, յերբ մենք ստացանք ձեր մեծ հրամանները, մեզ մոտ յեկավ Շահից ուղարկված սուրբանդակը, վորի միջոցով նա հանձնում ե մեզ գլխավորությունը Աղբբեջանի վրա և գրում ե, վոր մենք գնանք լեզվիներին պատմելու Այս պատմառով մենք զորքեր ժողովեցինք և Աստուծու ոգնությամբ ոգուստոսի 20-ին կմտնեանք Դանջային Այստեղի բուլոր հայերին և թյուրքերին մենք կմիացնենք Շահի զորքերին և այստեղից կը սկսենք պատերազմական զործողությունները լեզվիների գեմ, սպասելով ձեր մեծ հրամաններին»¹⁾։

Այժմ դիմենք բուն արշավանքին։ Աստրախանում հավաքված եր Արևելքի համար մի շատ պատկառելի բանակ—30 հազար կանոնավոր և մոտ 70 հազար անկանոն զորքեր։ Հեծելազորքը ցամաքով գնաց գեպի կովկասյան լեռները, մնացածները նավ նըստեցին հուլիսի 18-ին։ ինն որից հետո նավերը մոտեցան ափին, հասավ և ձիավոր զորքը և ամբողջ բանակն սկսեց առաջ խաղալ։ Մինաս վարդապետն ել զորքերի հետ եր Ոգուստոսի 3-ին Աղբախան գետի ափից Պետրոսն իմաց եր տալիս Վախթանգին իր գալուստը բանակի հետ, վոր գտնվում ե Թարք տանող ճանապարհին, վորտեղից կերթա Դերբենտի և Բաղմի վրա։ Կայսրը պահանջում եր վճռական պատասխան՝ կարող և Վախթանգը հարձակում գործել ապստամբ Դոուլ-բեկի վրա։ յեթե կարող ե, հարկավոր ե, ուրեմն, իսկույն գնալ նրա զեմ, իսկ յեթե չե կարող, պետք ե միջոցներ գտնե ուղաց բանակի հետ միանալու համար։ Միացման տեղը պիտի վորոշեր Վախթանգը և հայտներ Պետրոսին, վորի կարծիքն այն եր, թե այդ միացումը հարմար կլիներ, վոր տեղի ունենա Դերբենտի և Բագմի մեծանեղերը։ Այդ բոլորին Պետրոսն ավելացնում եր, վոր յեթե խոռվարաները (լեզվիները) փակվեն մի բերդի մեջ, պետք ե պաշարել այդ բերդը և իմաց տալ իրան, Պետրոսին»²⁾։

Ռուսական արշավանքը, սակայն, չհանդիպեց վոչ մի արգելքի և ստացավ զինվորական զրուանքի կերպարանք։ Տեղային լեռնցի լշխողները միմյանց յետելից հնազանդություն հայտնեցին Պետրոսին։ Մեկն եր միայն, վոր աննշան դիմազրություն ցույց տվեց և զրա համար ել սաստիկ պատժվեց։ Ռուսները մոխիր դարձրին նրա վոստանը կազմող գյուղաքաղաքը, վոր բաղկացած էր 500 տնից։ Այս հարվածը չմոռացան դաշտանցի-

1) Там-же, с. 139.

2) Там-же с. LXXVI.

Ները և նրա վրեժը հանեցին, ինչպես կտիսնենք հետո, սուկալի կերպով, բայց վաշ թե ոռուներից, այլ տեղացի հայերից, իբրև «սարի գյավուրներին» (շեկ զյավուրներին) բերողներից։ Ոգոստոսի 23-ին Դերենստը, առանց նույն խել մի հատ զնտակ արձակելու, անձնատուր յեղավ։ Նրա նախը, ծունկ չոքած, մատուցեց նրա արծաթի բանալիները հյուսիսային կայսրին։ Բազվի խանն ել հայտնեց, թե պատրաստ և նույնպես հպատակներու։ Մնում եր ուրեմն, վոր զինվորական զբոսանքն իր քայլերը դարձնե դեպի Շամախի։ Սակայն այսպես չեղավ։

Հասկանալի յե այս հաղթական առաջիսաղությունն ինչ ահազին տպավորություն պիտի թողներ մահմեղական Արևելքում։ Թյուրքիան նույնպես վոտքի կանգնեց։ Այժմ այլևս գաղտնիք չեր, վոր Ռուսաստանը գնում եր նվաճելու Պարսկաստանը։ Բայց այս բանը նույնքան անթույլատրելի յեր Ռուսանական կառավարության կողմից, վորքան Պետրոսն եր անթույլատրելի համարում, վոր Թյուրքիան տիրանա Պարսկաստանին։ Յերբ Հյուսին-Շահը, Միր-Մահմուդի արշավանքը կանգնեցնելու համար, զիմեց սուլթանին և ոգնություն խնդրեց, Ստամբուլում նրա դեսպանին հայտնեցին, թե կարելի չե ոգնել մի շիայի՝ կրվելու համար ընդդեմ մի սուննիի։ Այժմ, յերբ սուննին եր հաղթել և այդպիսավ շիա Պարսկաստանը, Թյուրքիայի այդ մշտական և անհաղթ թշնամին, վոչնչանում եր, դառնալով մի ժառանգություն Ռուսանցան պետության համար, դուրս եր յեկել մի յերրորդ մեծ պետություն, վոր գնում եր, շիա Պարսկաստանը վերականգնելու պատրակով, նվաճելու կասպիական նահանգները։ Այս վտանգի դեմ Թյուրքիան գործել սկսեց ամենայն յեռանդով։ Երզրումի փաշան հրաման ստացավ անմիջապես պատերազմական պատրաստություններ տեսնելու արագույնիստ։ Յեզ իր այս հայացքներն ու կարգադրությունները թյուրք կառավարությունը չծածկեց կ։ Պոլսի ոռուական դեսպանից։ Ինչպես յերեսում ե, նրան շատ լավ հայտնի յեր արդեն, թե ինչ շարժում է պատրաստվում պարսկահպատակ վրացիների և հայերի մեջ և կարծում եր, վոր ոռուաց զրաքերի յերեսն զալն Անդրկովկասում առիթ կտա, վոր թյուրքահպատակ հայերն ու վրացիներն ել վրուխ բարձրացնեն և միան ոռուսներին։ Յեզ այսպես պատրաստվում եր մի նոր ոռություրքական պատերազմ՝ պարսկական ժառանգության համար։ Պետրոսն, իհարկե, չեր կարող չկշռադատել այս բոլոր հանդամանքները, վորից նա հանգեց այն յեզրակացության, թե պարսկական արշավանքի հայտնաբերած հանդամանքներն անհրաժեշտ

ոռություն են դարձնում փոփոխության յենթարկել ծրագրի գլխավոր հիմքերը։ Ձեսնարկությունը յեթե յերկյուղ եր տարածում, պատճառն այն եր, վոր նա սկսված եր շատ ընդարձակ ծավալով, վոր պահանջում եր խոշոր զորական մասեր տանել դեպի հեռավոր և սակավածանոթ յերկիրներ, ուր, սակայն, չկային այդ մեծածախ շարժումներին համապատասխանող իրական պահանջներ։ Դերենստի գրավումը ցույց եր տալիս, վոր ամբողջ ձեռնարկությունը կարելի յեր գլուխ բերել և ավելի փոքր զորաբաժիններով, այն ել խարիսխ ունենալով վոչ այնքան թնդանոթները, այլ առավելապես դիվանագիտական գործողությունը։ Այս նոր մտածողության աեսակետից ավելորդ ել եր դառնում, վոր այդքան մանր գործողությունների պատճառով կայսրը յերկար ժամանակով հեռու գտնվի իր պետությունից։

Այսպիսով նա վճռում եր վերադառնալ տուն և վերադառնել նաև բանակը։ Բայց բանակի առջև այսպիսի հանկարծական վճիռը հիմնավորելու համար պիտք եր վեր հանել և պատերազմական անհրաժեշտությունը։

Յեզ Դերենստ մանելուց վեց որ միայն անցած Պետրոսը պատերազմական խորհուրդ հավաքեց, ուր և հայտարարեց, թե ձեռնարկությունը պետք ե վերջացած համարել, քանի վոր պայմաններն աննպաստ են նրան շարունակելու համար։ Այդ պայմաններից զլխավորը պարենավորման հարցն եր, վոր դժվարության եր հանդիպել Աստրախանից ուղարկված 12 նավ ալյուրը, հյուսիսային սաստիկ քամու պատճառով ծովային արկածի յեր յենթարկվել և թրջվելով մեծ մասամբ փչացել։ Հույս չկար նույնպես, վոր մթերեզենի մյուս կարավանը, վոր կազմված եր 30 նավերից, անվասա կզա կհասնի Աստրախանից։ Աննպաստ եյին և կլիմայական պայմանները, շոգերի պատճառով հեծելազորքը շատ ձիաներ և կորցրել և զինվորներն ել չեն կարողանում հեշտ տանել կլիմայական պայմանները։ Այսպիսով հիմնավորելով Աստրախան վերադառնալու անհրաժեշտությունը, Պետրոսն, այնուամենայնիվ, չեր լքում իր կասպիական ծրագիրը և Դերենստն իր ձեռքում պահելու համար թողնում եր այստեղ ուղարկան կայազոր։ Անհրաժեշտ եր համարու նաև հավշտակել Բագուն, բայց ասում եր, թե այդ բանն այժմ չպետք ե անել, այլ մի առանձին զորաբաժին ուղարկելով Աստրախանից։ Զորքն, այս խորհրդի ընդունած վճիռների համաձայն, սկսեց նահանջել դեպի Աստրախան նախ ցամաքով, ապա և ծովով։ Նահանջն սկսվեց սեպեմբերի 7-ին¹⁾։

1) Бугков, I, с. 29—30. Соловьев, п. 18.

Հոկտեմբերի 4-ին կայսը հասավ Աստրախան և կազմակերպելով յերկու առանձին զորաբաժին, մեկը հանձնեց գեներալ Մատութելինին՝ Բագուն վերցնելու համար, իսկ մյուսը, գնդակիս Շիպովի հրամանատարության տակ, հրաման ստացավ գնալ կապից ծովի հարավային ափերը և գրավել Ռաշտ քաղաքը։ Պատրիակին եր պաշտպանել Գիլան նահանգը ապստամբներից (ավտանաբից), բայց իսկական պատճառն եր հափշտակել մի շատ հարուստ նահանգ, վոր միայն մետաքս տալիս եր տարեկան 70 հազար ֆութ¹⁾։ Այս համեզ պատառի յետելից ուղարկվող զորաբաժինը նոյեմբերի սկզբին անձամբ ճանապարհ եր դնում ինքը Պետրոսը, վորից հետո գնում եր Մոսկվա։ Շիպովը կատարում եր նրա հրամանը ճշառությամբ և նոյեմբերի վերջին իր զորքով նստած եր Ռաշտում։ Իսկ Մատյուշկինը Բագուն կովով վերցրեց 1723-ին։

Իսկ ի՞նչ եր անում պարսից կառավարությունը։

Թահմազ Շահը իր հոր նման անընդունակ մարդ եր։ Թափառելով քաղաքից քաղաք Հյուսիսային Պարսկաստանում, նահաղիվ կարողացավ հավաքել իր շուրջը 400 հոգի։ Իսկ Սպահանում փակված հայրը վերջին հուսահատության եր հասել։ Այս անձարության մեջ եր Թահմազը, յերբ հյուպատոս Ավրամովը առաջարկեց նրան, Պետրոսի հանձնարարությամբ, ոռուսական դղնություն՝ մեղ արդեն հայտնի պայմաններով։ Թահմազը համաձայնություն տվեց և իր կողմից դեսպան նշանակեց Իզմայիլ բնի անունով մեկին, լիազորելով նրան կնքել ոռուսակարսկական դաշնակցություն։ Իզմայիլ բեկը՝ ցամաքով ճանապարհ ընկավ դեպի Դերբենտ՝ կայսրին հանդիպելու համար, բայց նորից վերադարձավ Ռաշտ, կամենալով ճանապարհորդել այն նավերից մեկով վորոնք տարել եյին Շիպովի զորաբաժինը։

Իսկ այդ ժամանակ վորոշվում եր Սպահանի վիճակը։ Շահ Հյուսիսինը, անողնական և ամենքից լքված, անձնատուր եր լինում Միր-Մահմուդին, վոր սկզբում ընդունում եր նրան շատ լավ, սակայն այս չեր խանգարում, վոր նա վերջ դնել Սեֆելիների դինաստիային և իրանով սկսե շահական մի նոր դինաստիա, ավագանականը, մայրաքաղաք ունենալով դարձյալ Սպահանը։ Թահմազին յեթե մի բան մնում եր Պարսկաստանից, այդ ել մի քանի յերկիրներ եյին հյուսիսում։ Ինչպես կարող եր այդ յերկիրների մի նշանավոր մասը տալ ոռուներին։ Նա փոխում եր իր միտքը

ունշնագրի մասին, քանի վոր նրա պետությունը Աստրապատականի մի մասից եր բաղկացած, մեկ ել Այսրկովկասի պարսկական մասից։ Ուստի Շահ-Թահմազը, հայտնում եր Շիպովին և Ավրամովին, վոր բանակցություններն այլևս ավելորդ են և ինքը յետ ե կանչում Իզմայիլ բեկին։ Բայց ոռուները, վորոնք, ինչպես յերեռում ե, արգեն կաշառել եյին գեսպանին, հենց վոր վերջինս վերադարձավ Թալիշից, իսկույն նավով ուղարկեցին Աստրախան և նա դնաց, իբր թե վոչինչ չիմանալով, իր նախկին լիազորությունն իրագործելու համար¹⁾։

Յեվ ահա այսպիսի մի օգեսպանից հետ եր, վոր 1723 թվականի սեպտեմբերի 12-ին Պետրոսը կնքում եր մի գաշնագիր, վորով պարտավորվում եր զինվորական ուժով պաշտպանել Շահ-Թահմազին բոլոր այն ապստամբներից, վորոնք զլում պարսկանից գահի վրա պահելու համար, բարեհանում ե, վորքան այդ կարելի յե անել շուտով, հարկավոր քանակությամբ հեծելազորք և հետևակազորք ուղարկել պարսկական պետությունը, որը ծեղ նորին շահական մեծության այդ պահտամբների դեմ և անել ամեն ինչ նրանց խորտակելու համար, վորպեսզի նորին շահական մեծությունը մնա պարսից գահի հանգիստ աիրապետողը։

Յերկրորդ կետն ասում եր.

«Երա զիմաց, նորին շահական մեծությունը զիջում և նորին համառուսական կայսերական մեծության ի հավետնական տիրապետություն Դերբենտ, Բագու քաղաքները, նրանց բոլոր պատկանող և Կասպից ծովի վրա գտնվող հողերով, ինչպես նաև Գիլան, Սաղանդարան և Աստարաբադ նահանգները, վորոնք այսունեաւ պիտի մշտնջենապես նորին համառուսական կայսերական մեծության կողմում զտնվեն և նրա հպատակության մեջ լինեն, վորսլիսի տեղերն ու նահանգները նորին համառուսական կայսերական մեծությունն այն պատճառով և ուզում վոր իրան ընծային, վորպեսզի նրանցով պահի այն զորքը, վոր նորին կայսերական մեծությունը նորին շահական մեծության ուղություն և ուղարկում նրա ապստամբների գեմ, և զրա համար ել դրամական ուժանդակություն այդ զորքը պահպանելու համար նորին շահական մեծությունից չե ուզում։»

Իսկ վերջին, հինգերորդ կետը պարունակում եր իր մեջ հետևյալը։

«Յեվ խոստանում ե նորին կայսերական մեծությունը, թե նա միշտ բարեկամ կլինի նրանց, վորոնք Շահի և պարսկական պետության բարեկամ են

1) Բուգկօ, 1, ս. 38.

և թշնամի նրանց, վորոնք Շահին և պարսկական պետության թշնամի յեն-
տարող պարսկական պետության մեջ, յեթե վոր և իցե մի կողմից թշնամական
գոծողություն լինի, կայսրը պիտի ողնե այդ թշնամությունները դադելու հա-
մարձ¹⁾:

Շահ-Թահմազը չվավերացրեց այս դաշնագիրը, հայտարա-
րելով թե ինքը կարոտ չե արտաքին ողնության, և յեթե ոռո-
սաց կայսրը ճիշտ վոր բարեկամական վոր և և դղացմունք ունի
դեպի Պարսկաստանը, թող վերադարձնե նրան այն յերկիրները,
վորոնք գրավված են նրա զորքերով²⁾): Իսկ իզմայիլ բեկը, Ռաշտ-
վերագառնալով, տեսավ վոր պարսից կառավարությունը վերա-
րերվում ե նրան իրքն դավաճանի, ուստի ապրում եր ոռոսաց
զորքի հովանավորության տակ: Ուսմանյան կառավարությունն ել
վճռականապես հրաժարվեց ճանաչել Պետերբուրգի դաշնագիրը,
հայտարարելով թե Շահ-Թահմազը դաշնագիրներ կնքելու իրա-
վունք չունի, քանի վոր Պարսկաստանն այժմ պատկանում ե աղ-
վաններին: Բայց ցարական խմբերիալիզմն ամուր նստած եր
իր հափշտակած տեղերում և հայտարարեց, թե չի թույլ տա վոչ
կոքին մտնել այլտեղ:

Ահա Պետրոս կայսրի պարսկական արշավանքի իսկական պատ-
կերը: Այսպիս եր նա փրկիչ դավանվում կովկասյան լեռնազդթյի/
հարավում ապրող քրիստոնյաների մեջ: Նրան ուզում եյին ըն-
դունել ովսաննաներով, ինչպես մի նոր Քրիստոսի: Բայց յեթե այդ
Քրիստոսի մեջ լիներ իր ստորագրությունը հարգելու չափ աղ-
նվություն, ամենից առաջ իր զենքը պիտի դարձներ հենց նույն
այն վրացիների և հայերի դեմ, վորոնց խոստացել եր աղատել
պարսկական լուծից և այդ խոստումով ել «փրկիչ» մկրտվել, քանի
վոր վրացիներն ու հայերն իրանց անջատական, զինված շար-
ժումներով պակաս թշնամի չեյին պարսկական գահին, քան
մի Դոռւդ-բեկ կամ մի Միր—Մահմուդ, իսկ Պետրոսը գրավոր
խօսք եր տալիս լինել թշնամի Պարսկաստանի բոլոր թշնամի-
ներին:

Բայց այսքանը գեռ Պետրոսի «փրկչական» գեմքի ամբողջու-
թյունը չեր: Շուտով կտեսնենք այդ գեմքի վրա դիշտիչի ավելի/
և գարշելի գծեր: Այժմ մեզ հարկավոր ե գնալ Գանձակի տակ
հրճվանքից պարող վիրահայկական բանակը:

1) П. Юзефович—«Договоры России с Востоком», Спб. 1869 с. 186—189.

2) Ա. Հովհաննեսյան—«Պետրոս դի Սարդիս Գիւանենց», Եջմիածին, 1916—
յեր. 16:

9.

Յեսայի կաթողիկոսը, մի ճշմարտապատում ականատես, պատմում
ե, թե Վախթանգ թագավորը իր զորքով Թիֆլիսից ճանապարհ-
վեց ս. Խաչի տոնի մոտերքը, ասել ե՝ մոտավորապես սեպտեմ-
բերի կեսին: Իսկ մենք արդեն գիտենք, վոր ոռոսական զորքի
նահանջը Դիերենտից գեպի Սատրախան սկսվեց սեպտեմբերի
7-ից: Վախթանգն այս մասին տեղեկություն ստացավ շատ ուշ,
այնպես վոր հիշատակություն կա, թե նա մնաց Գանձակի տակ
յերկու ամիս, ուրեմն մինչև նոյեմբերի 15-ը: Ի՞նչ եր անում նա
այդքան ժամանակ: Անշարժ նստած՝ սպասում եր Պետրոսի կար-
գագրություններին, վորպեսզի զնա նրա հետ միանալու: Հոկտեմ-
բերի 4-ին, այսինքն այն իսկ որը, յերբ Պետրոսը հասել եր Սա-
տրախան, Վախթանգը գրում եր նրան, ընդունելով, վոր նա դըտ-
նվում ե Կասպիական ծովի կովկասյան յեղերքում.

«Զեկուցում եմ ձեր մեծ գրան առաջ, վոր արշավանք սկսելու և լեզվիներին
պատերազմ հայտարարելու հրամանի հետևանքով մենք ճանապարհիմ ենք և
ահա բավական յերկար ժամանակ ե, վոր գոնվում ենք Ղարաբաղում: Այստեղ
ինչ եղագիներ ել վոր կան, վախից վոչ վոր նրանցից չի համարձակվում զութիւ
դուրս հանել տանից: Սուլթանը — նա անգամ խնդրում է հաշտության մասին
բայց Կախեթի թագավորը, մեր թշնամին և հակասակորդը, չկամենալով վոր
մենք վորեն ծառայություն մատուցանենք ձեզ. թագավորիդ, հակասակում և
մեզ, խանգարում ե մեզ, բայց մենք հույս ունենք, վոր Աստուծու ոգնությամբ
և ձեր բարերարությամբ մենք չենք թողնի, վոր նրանք հաղթանակ տանեն մեզ
վրա Մինչև մինչև այժմ արգեն դուրս յեկած կլինելինք Շիրվանից, բայց մեզ
պահում ե այն, վոր մենք չենք ստացել ձեր հրամանները Սյում, թեն անքա-
ղաքավարություն ե, վոր մենք խորհուրդներ տանք և մեր կարծիքն արտա-
հայտնիք, բայց վորպիհան մեզ հանձնված և նվաճել այս յերկիրները, ուստի
և համարձակվում ենք զեկուցել ձեզ, թե այս կողմերում չպետք ե զանգաղել,
վորովհետեւ այստեղի գործերը շատ խառնված են և Աստված շանի վոր այն-
պիսի մի բան գուրս գա, վոր կիշացներ նրանց: Ցեթե թագավորն այդտեղի
գործերի պատճառով ազատ ժամանակ չունի և յեթե այդ գործերը պիտի պա-
հեն նրան այստեղ գտնուց, թող պարեհանն գոնե հրամայել իր զորքին գնալ
Շիրվան, մենք կանապարհինք այստեղից, կմիանանք, իսկ հետո գործը կը
շտկի Աստուծու ոգնությամբ: Մինչ կափենք բոլոր հոգերին մինչև Յերևան
և կաշխատենք վերեանն իոլի: Իսկ յեթե թագավորը շուտով կճանա-
պարհիք, մենք նույնական կմիանանք նրան: Համենայն զեպս ուր և լինենք
պատրաստ ենք զութիւ գարեն ծառայելու համար և կատարելապես նրան
ենք պատկանում²⁾).

Մինչդեռ Վախթանգը Գանձակի տակ եր սպասում տեղեկու-
թյուններ ցարից, Թիֆլիս ժամանեց սպա Խվան. Տօլսուր յերկու
հայերի ուղեկցությամբ: Նրանք բերել եյին թուղթ կայսրի կող-

1) „Переписка грузин. царей“, с. 142—143.

մից և՝ տեղեկություն՝ նրա վերադարձի մասին։ Դեսպանին ընդունեց Վախթանգի վորդի վախուցքը, վոր կառավարում եր յերկերը հոր տեղի Նա վճառությամբ լսեց, վոր կայսրը Ռուսաստան եր վերադարձել և այս բոթն ուղարկեց իր հորը, Գանձակ։ Հասկանալի յե այստեղ, վրացիների և հայերի միացած բանակում, վորքան մեծ պիտի լիներ հուսախարությունն ու լքումը։ Աղատության համար զեռ մի հատ զնդակ չարձակված, ամբողջ շարժումն աղետալի կացության մեջ եր ընկնում, մեն-մենակ կանգնած մնալով մահմեղական վառված վրեժինդրության առջև։

«Զինի հոլով ակնկալութեան, — զբում և Յեսային համառախոսությամբ, կարծես կարկամած լնդվագ, — և սպասաւորելոյ համբաւոյ դաշտեան նորին, մեղք մեր յառաջընթաց եղն քան զնած¹⁾։»

Վորքան դյուրավառ եր հայ կղերական դիվանագիտության հորթային հրճվանքը, այնքան ել աղմկարար եր նրա ծայրահեղ հակադությունը — լքումը Յեսային զեռ շատ ճիշտ տեղյակ եր այն պայմաններին, վորոնք հարկադրեցին Պետրոսին վերադարձնել իր բանակը Աստրախան, ուստի և զսպված եր պահում իր մտությունները։ Բայց ահա թիֆլիսի առաջնորդ Մինաս վարդապետ Փարվեզյանը, մի տիպիք հատոր հայ կղերական դիվանագիտության, այն եւ մի մեծահասակ մանուկ քաղաքականության հողի վրա։ Մեր վերեւում հիշատակած նամակի մեջ նա գրում եր Մինաս վարդապետ Տիգրանյանին։

«Երկու ամիս զորաժողով արարինք և մնացինք ի Գանձակ քաղաքն և յետոյ լուաք զլուր թէ թագաւորն յետս չոքաւ, և ազդն լնդրաց այլ և այլ բանս տարածեցին աշխարհը ամենայն իրը թէ թագաւորն ի փախուստ դառաւ, զի քաւ և մի լիցի, Աստուած մի արացէ, չոքանայ այնպիսի լեզուն և մինչ մնացինք շուարած և զլուխ ի կոր դառանք, և լալ աչօք իւրաքանչիւր ի բնակութիւնս զնացին, սրաքարեկեալ և տարակուսեալ։ Եւ մեք հանդերձ Վախանգ պարունիւս եկինք Վրացուուն, գահինք զառաքեալքն ի թագաւորէն էլչիքն առ Վախթանգ պարուն և առ ազգս մեր Բայց լուր եղն առ յամենայն ազգս բարբառաց, թէ հայր և վրացիք Մոնկովու թագավորէն թապին դառան և մահմեղակինացն թուր են տալիս։ Նոքա ևս յամենայն կողմանց թշնամի դառան Վախթանգ պարունին և մեր խեղճ ազգին։ թէ՝ օսմանլուն հոսմոց տանէն, թէ՝ պարսից ազգն և թէ այս անօրէն ազգն լեզուն։ յայժմուս մնացինք մեր խեղճ ազգովն որպէս բնեկեալ նաւել մեջ ծովուն։ այլ ոչ ունիմք յոյս և ապաւէն յումէքէ, նախ յևսուած եմք յուսացեալ և ապա առ վերագրեալ թագաւորդ, ևս առաւել քո եղբայրութիւնդ ով վարդապետ, մին ձար արէք Աստուածոյ խաթրի և ի սէր խաչելոյն Քըլիսուի, շուառի և փութով զթագաւորն Շամախի հասուր, միայն նորա անունն լինի և առին տեղն հասնի 100,100 հայազգ զինուորք առ ուս նորա կուգամք. և թէ յետոյ մինչի մարտի ամիսն եկիք ոչ՝ զմեր ազգն բնաջինջ կանեն և զիուսաւրչի հաւատ՝ պաթակ կանեն, ձեր աշխատանքն այլ փուշ

կու դասնայ, մեր աշխատանքն այլ յունայն կուղանակ անհոգս լինի թագաւորն այլ զուն այլ մեր վալի Վախթանգ խանն զլամովին կանգնած է մինչեւ զման որդովքն եղբոր որդովքն և մեր ազգն խիզանով, որդովք և զստերօք, եպիսկոպոսը և քահանայիւթ զասուց, ստի տակը մատաղ կու լինեմք, բայց միայն այս, որ մինչի սուրբ զատիկն կու համբերեմք, ինչ փորձանք որ գայ մեր դլխոյն, դուք ևս շտապեցէք բարով թագաւորն Շամախի գայ, մեք գիտեմք ու այլազգիքն, և բոլոր Հայաստան զենահամ որ այլ յետ հնկնինք, ոչ մեղ ողնութեան համանէք։ Աստուած թագաւորին յաջողումն տայ և բարի ձանապարհ, արնաշէն ի յԱստուածոյ հրամայիալ եւ ով կարէ գեմ ունել, աստուածամարտք կու լինին, անօրէնքն իրըն զկաթիլ մի ի գուլ էին համարեալ, այսքանն ըաւ է յիմաստութեան քում, վերջն այս ե, մեր ձեռքն և ու ձեր եախէն, զպատճառն ձեր գայն, մեր ազգն յարեան ծովաւ մեջն մնաց Քրիստոսի գատաստանին պարապական կու մնաք այսքան քրիստոնէից աղպին, դուք զիտէք, ճշմարիտն այս է, որ ես արդ պրարի, թէ մինչի մարտի ամիսն կամ 20—30 հազար զօրք ի Շամախի չեկիք ոչ համ մեր բանն ու մասլահաթն կու աւերվի, մանաւանդ թագաւորին բանն այլ գժար կու լինի, թէ ասես ինչպէս օսմանլուն կու շարժի, Աստուած մի արացէ, զերեանու երկիրն զալթ կանէ, վերջն նեղութիւն շատ կրեմք, և խզապաշն կու զօրանայ, մեր աղջն կու վշացնէ, հաղիւ 3—4 տեղ զլուխ են աղել, միաբանել են նոցա զլխու գլուխն և զմիաբանութիւն կու ցրվին, ևս յերեան իրանու երկրին բանալիքն է քիչ ևս զահիր է մեր մաթլապն այս է, որ երեանն ձեռք քերեմք. այլ օսմանլուն և խզապաշն ոչ ինչ կարել չեն պաշարում, այս բաներուն թագաւորէն առաքեալ սինեու յիշան Անդրին այլ տեղեկացաւ, որ ճշմարիտ է ահա Ղարապաղումն կամ Շամախնու երկիրն միաբանեալ հայքն յուրուրէք որ թուրք զոնում են, զամենն անխնայքար կոսորում են, բայց զիւրեանքն պահում են. բայց զլուխ և տէր չունին Աստուած առաջնորդէ, որ աստուածարեալ և աստուածապակի իւրօյգիքեալ թագաւորն Շամախի համանի, Աստուածով ամենայն ինչ կատարեալ է. բայց և վեն իմաստութեանդ¹⁾։

Իր վոճով, պահանջկոտությամք մի կատարյալ յերեխայական վավերակիր հայ կղերական դիվանագիտության գանձարանից։ Այսպես և նա յերեւում Բայց նրա զինը վոչնչություն չի։ Ծիծաղելի յե, արդարի, այն, վոր մի Մինաս վարդապետ, Որիի ընկերակիցը, ամենայն շտապողականությամք, մինչեւ մարտ ամիսը, Շամախի ուղարկե Ռուսաստանի մեծահոչակ կայսրին։ Բայց ինչ կարելի յե ասել, յերը ինքն այս մեծահոչակը պահում եր իր ծիծաղը, վոչ միայն անհետեանք չեր թողնում այդ գրությունը, այլ ստանալով նրա ոռւսերեն թարգմանությունը, հրամայում եր Փարվեզյանին շատ զրական և լուրջ վոճով հուսադրություններ, թէ ինքը չի թողնի վրացիներին և հայերին անպաշտապան, թէ պետք և պինդ պահնդիւղ Վախթանգի հիմանդրի հետ միասին։ Այս միւնիույն հրամանգը Պետրոսի անունից հայտարարվում եր և Պետերբուրց գումարող հայ «յերեւելիներին»։ Փարվեզյանին արված պա-

¹⁾ Ցեր. 60.

¹⁾ ԹՅՕՅ, ս. 337—338.

տասխանի մեջ ասված եր, թե ումանյան կառավարությանը պահանջել եր կայսրից հանգիստ թողնել լեզգիներին, ձեռք վեցնել նըանցից, իսկ կայսրը պատասխանել ե այդ առաջարկության, թե ինքը համաձայն ե, միայն այն պայմանով, վոր հանգիստ թողնվեն նաև Պարսկաստանում ապրող քրիստոնյաները, վոր նրանցից ել ձեռք վեցնեն: Բայց վորովհետև թյուրքերն, այնուամենայնիվ, դորքեր են ուղարկել դեպի Վրաստանի սահմանները, ուստի կայսրը կարգադրել ե, վոր ոռւսական գորք ուղարկվել Վրաստան՝ նրա պաշտպանության համար:

Բայց ինդիրը միայն պաշտպանության մասին չեր: Թեև Փարվեպյանն աղաղակ եր բարձրացնում, թե հայերին ընաջինջ կանեն, բայց այդ հավարի մեջ զնում եր և մի խոշոր նվաճողական ծրագիր—վերցնել Յերևանը, վոր այն ժամանակվա պայմանների մեջ նշանակում եր պատերազմ հայտարարել վոչ միայն Պարսկաստանին, այլ և Թյուրքիային: Թեև այնպես կարելի յե կարծել, թե այդ «Ճասլահաթը» յերկու Մինաս վարդապետների հղացվածքն ե, բայց վոր այս այսպես չեր, ցույց ե տալիս այն, վոր Պետրոսի զեսպան Իվան Տոլստոյն էլ խոսք ուներ այդ «Ճասլաթի» մեջ, և մանավանդ այն, վոր Յերևանի կարևորությունը չափում եր իրքեւ Պարսկաստանի բանալի, մի բան, վոր չեր կարող նշանակություն ունենալ հայերի ձգտումների տեսակետից, այլ ցուցադրում եր հեռավոր իմպերիալիստական հորիզոններ:

Այսպիսով Պետրոսը, վերադառնալով Պարսկաստանից առանց վորեև բան անելու վրացիների և հայերի ազատության համար, իրքեւ հաշվող քաղաքագետ, չեր ուղում, վոր սրանք կտրեն իրանց հույսը Թուսաստանից: Թեև յերկու ժողովուրդներն ել թողնված եյին ճակատագրի կամքին, բայց հաճոյական ժպիտներով նրանց խաբելը միշտ ել գործադրության մեջ մնաց:

Պետք ե շեշտել այստեղ, վոր Պետրոսն այս կողմից առանձնապես ուշադիր եր դեպի հայերը, վորոնց վրա կարծես սիրահարված եր և վորոնց հուսագրելն ու խոստումներով կերակրելն ավելի դրական և հաճախակի յերեւյժի կերպարանք եյին ընդունուած մանավանդ Պարսկաստանից վերադառնալուց հետո: Այսպես վարդելու գաղտնիքը մենք շուտով կիմանանք: Վերաբերմունքը դեպի Վախթանգ թագավորն այսպես չեր, և այս վարմունքի մեջ Պետրոսը հանդես ե գալիս քաղաքական ձեռնածուի դեմքով, վոր ամենայն հարազատությամբ պատկերանում ե պաշտոնական գրադրությունների մեջ:

Վերադառնալով Թիֆլիս, Վախթանգը գտնում եր այդտեղ կայրի զեսպան Խվան Տոլստոյին, վորի բերած հրովարտակի մեջ ապահած եր հետեւյալը:

«Չնայած այն բարեկամության, վոր վաղ ժամանակներից զոյսություն ունի Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ, այն հաշամանքներն ու վասաները, վորով մի ժամանակներից ի վեր յենթարկվում են ուստանապատակները պարսիկների կողմից, իսկ վերջերում նաև նրանց կարողության թալանումը, վոր մի քանի միլիոնների վնաս ե, ստիպեցին մեզ զիմել Շահին և պահանջել բավարարություն, բայց վորովհետև մինչև այժմ մենք պատասխան ել չունենք, հարկադրու և դիմել գենքի»:

Թագավորը հանձնաբարում եր պլինցին (Վախթանգին) Շահի հետ հարաբերությունների մեջ մտնել, բացատրել նրան, զեսպանի միջոցով, թե չկամենալով թշնամի լինել նրան, այլ, ընդհակառակը, պատրաստ լինելով ոգնություն հասցնել նրան ներկա պայմանների մեջ, ինքը, պրինցը, պահանջում ե միայն զիջել կասպից ծովի նահանգները, վոր հնարավոր ե մանավանդ այն պատճառով, վոր Դերենատ քաղաքը գտնվում ե ուստաների ձեռքում, իսկ մյուս նահանգները գտնվում են Դոռւդ-Բեկի ապատամբների տիրապետության տակ, վորոնք, ինչպես լավում ե իշխանդրում են մի ուժեղ պետության հովանավորությունը, այնպիսի մի պետության, վոր վաղուց աշք ունի զրած Պարսկաստանի վրա: Թագավորը նույնպես առաջարկում եր պրինցին, յեթե նարաի կհամարե, պահանջել իր և ըոլոր քրիստոնյաների ապատւմը և զիջումը Ռուսաստանին, վորի համար համաձայն եր ոգնել Շահին ապստամբների գեմ և խոստանում եր զորք տալ բայց այն պայմանով, վոր Շահը նախապես ուղարկեր մի լիազոր զեսպան դաշնագիր կապելու համար, վորի հետ բանակցություններ վարելիս ուստական մինհատըները կիսուն և Վախթանգի գործերի մասին, յեթե միայն նա այդ ցանկանում ե և այս մասին նախքը պիտի հայտնե՞»:

Հիմա յել այսպես եր ձևափոխվում կովկասյան քրիստոնյաների մեծախոս «Փրկիչը»: Խոստումներ եր արել զորքով գաւազատել անհավատների լուծի տակ տանջվող հավատակիցներին: այժմ փոքրիկ Քարթալինիայի տիրապետողին, վորին նույնիսկ թագավոր չեյին ճանաչում վոչ նա ինքը, վոչ ել Պարսկաստանը, դնա շագանակներ հանե կրակից ուստական իմպերիալիզմի համար, պահանջելով նրան՝ զիջել կասպիկան նահանգները: Դրա հետ Վախթանգը կարող եր, յեթե կամենար, պահանջել Շահից

1) «Պերուս. ցրչ. պար» ս. LXXVI—LXXVII.

ազատությունը բոլոր քրիստոնյաների համար, այն պայմանուի, սակայն, վոր նրանք բոլորն ել զիջվեն Ռուսաստանին: Այս թուղթը գրելու ժամանակ վհչ գնդապետ Շիպովի զորաբաժինն եր հաստատվել Ռաշտում, վոչ ել Իրմայիլ-բեկի ուղերետային դեսպանությունն եր սարքել, ուստի կայսրը, Վախթանգին հանձնելով պահանջել Շահից վոր ուղարկվի գեսպան զաշնագիր կնքելու համար, այստեղ միայն վողորմություն եր անում Քարթալինիային, ասելով թե բանակցությունների միջոցին խոսք կանեն նաև Վախթանգի գործերի մասին, յեթե միայն նա ինքը կամենա:

Վախթանգն, ինարկե, այն աստիճան անգիտակներից չեր, վոր չտեսներ թե իր առջև կանգնածը «փրկիչ» չեր, այլ մի պարզ ժակակիր խարերա: Բայց ի՞նչ կարող եր անել նա, շրջապատված լինելով բազմաթիվ թշնամիներով, մի յերկրում, վոր անընդհատ կեղեքվում եր ներքին ընտանիկան յերկարակություններից, ծիծագելի կիներ մտածել անգամ պահանջողի դերում յերեվալ իրանի շահ նշանի առջև, վորի հպատակն եր, վորի ստրուկ պաշտոնյան եր, իր գլխի վրա շատ հաճախ փորձած եր նրա բոնակալ բոռնցքը: Յեկ ի՞նչ եր մնում անել այդ մարդուն, յեթե վոչ նորից ինդրել ցարեն, իր հույսերն ու ակնկալությունները թափել նրա առաջ: Պատասխանելով նրա նամակին, Վախթանգը վոչինչ չեր ասում նրա դիվանագիտական հանձնաբարությունների մասին և գրում եր.

Հետեւյալն ենք զեկուցում ձեր բարձր դրան առաջ: Դուք շնորհ եր արել մեզ ուղարկելու ձեր բոյարին իվան Անդրեեիշին (Տոլսոյ), մենք իմացանք ձեկանից յեկած հրամանները, յերջանիկ թագավոր: Մինչև նրանց ստանալը մենք զորք եյինք հավաքել և մոտենում եյինք Գանձակին և սոլատում եյինք նրանց (այլինք հրամաններին), վոր գնանք այնակեղ, ուր կհրամայեր թագավորը: Յեկավ իվան Անդրեեիշը, բերավ խնդրած տեղեկությունները և նրանց ցուցունքով մենք իսկույն յետ վերաբարձանք, թեկ սրանով Շահին վրդովմունք պատճառեցինք: Կախեթի թագավորն ապօտամբեց մեր գեմ, իսկ սուլթանն իրան վերաբորված զգաց և ոկսեց սպառնալ մեղ, բայց մենք պատրաստ ենք մեր գուլիքը տալ ձեզ հավատարմարար ծառայելու համար և ինչ ել պատահեն մեզ, մենք այդ կընդունենք իբրև նահատակություն, միայն թե կատարված մնի այն, ինչի վրա գուք բարեհանել եք հրամայել վոր հույս գնենք և ակնկալենք իբրև վողորմություն: Խնդրում ենք ձեզ, մեծ թագավոր, կատարել այն, ինչով վոր մեզ հուսաղել եք և չթողնել մեղ, առաւալյաներիս: Այն նամակը, վոր դուք ուղարկել եք մեղ այն մարդու ձեռքով մենք ուղարկեցինք Շահի որդուն, վամն Շահղագելի, հուսալով թե գուցե վրանով մենք առ ժամանակ ևս կազմագենք նրա թշնամական արարքներից: Մենք նույնակես սուրհանգակ և նամակ ուղարկեցինք սուլթանին, վորի մեջ մենք զեկուցում ենք այն, ինչ նամապատասխան եր և պետք եր ասել: Հույս ունենք ձեր բախտով աղատվել այս անգամ պատերազմից և խափանել նրանց դիվանագորությունները: Կա զար-

ձյալ կախեթի թագավորը, բայց մենք յենթագրում ենք, վոր ձեր ույժի միջոցով մենք թույլ չենք տա, վոր նա գերակառություն ունենա մեզ վրա: Խոզրում ենք ձեզ մի անգամ ես, և հեռվից թագավորին յերկրպագելով, վոր յեթի գործելով ձեզ պահանջեն և թույլ չտան վոր գաք արտեղ, հրամայեցեք վոր մեղ մույթեա, վորքան կարելի յն շուտ, հեծելազորքի մի բավականաշափ զորաբաժին: վոր մեղ ոգնե և պտհապանե, ինչ հույս ունենք մենք և այս յերկիրը:

Բայց այս բոլոր ակնկալությունները բոլորովին զուր և յին: Պետրոսի խոստացած ոգնական զորքն այնպես ել յերբեք չերեւաց վրաստանում: Նույն իսկ Իվան Տոլսոյը, վոր գեսպանի պես մի բան եր Վախթանգի մոտ, հեռացավ թիֆլիսից: Յեկ Վախթանգի ստեղծած ամբողջ գործով, այն և հայ-վրացական միացած զինվորությամբ մնաց մենամենակ «ոռուսներին բերողի» աղետալի համբավի ազգեցության տակ, վոր սկսեց փոթորկել մահմեզգական աշխարհը, մանավանդ Պետրոսի գժրախտ, փախստանման նահանջից հետո: Այս առաջին անգամն եր, վոր կովկասյան քըստառնեյությունը պիտի հատուցում տար ոռուսներին բերելու համար: Այս հատուցումը մարմնացավ շատ ծանր, յերկարատե զոհողությունների մեջ, վորոնցից ամենաառաջինն եր, գուցե և ամենացավալին իր ամբողջ ժողովրդի հետ:

Ուռսական արշավանքը և Վախթանգի շարժումը թիֆլիսից գանձակ մեծ անհանգստություն եյին պատճառում առաջ ու առաջ ուսմանցիներին, կարծել տալով, թե ոռուսների իսկական նպատակն և պարսկական հողերի վրայով անցք ունենալ՝ Թյուրքիայի վրա հարձակվելու համար, և վրացիներն ու հայերը պիտի առաջնորդին նրանց: Երզրումում սկսվում եյին շտապ պատերազմական պատրաստություններ: Երզրումի փաշան պահանջում եր, վոր ամբողջ Վրաստանը հպատակվի սուլթանին և նախազգուշացնում եր, թե հակառակ զեալքում նա հրաման ունի սուլթանից ալիներելու և քանդելու Վախթանգի յերկիրը: Նույն փաշայի դիսպանն ասում եր, 1723 թվի ապրի 2-ին, Էջմիածնի կաթողիկոսին.

«Ես ամիսիս ախիյումն կամ թէ մայիսի ավարտմն վեր կը կանք կը կանք էս երկիրն կը զափանք և սոցայ մեծ խարարի կը տանք. մին էլ մեր կաթուղիկոսին կասի՝ թէ դու էլ մեծ սուչի տեր աս որ Ըոռուստին խետ մին աս դացել: Էսչանք խայ աս կանգնացուցել՝ որ առում ան՝ թէ 60 հազար խայ եարազով հազիր ան՝ որ քոյ խոսկովն ան խայերն վեր ան կացել դու էլ շատ նեղութիւն կը քաշես էս պատճառիվ որ ուզես Ըոռուստն էս ձեր երկրովն ըերեւակիրն»:

Ահա ինչ լուր եյին բերում կարսից.

«Մեր կաթուղիկոսն զբել եր Ղարսու մեր խայերին թէ մեռն պիտիմ օրհ-

1) «Ժամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գելանենցի» («Կոռունկ» ամսագիր, Թիֆլիս, 1863, յիր. 195):

նեմ ո. խաչ օր եկեղ յուխտ։ Ղարսու փաշեն զագաղաց արար՝ որ օսմանցուն քառակիոթ թայ չը զնայ էջմիածինն և ասաց թե՝ ձեր կաթուղիկասն Ըստութին խիստ մեռյվորիկ այ և Ըստութին բերել այ Ղըրաշի երկիրն՝ որ գան մեզ վրայ. Կարդաց էդ մտնանով ուղեղ գլներ, ձեր վանքութե աղօթք տուեց, վոր մենք գար թարտիք լինենք. Դուք ուրախացնեց, մենք ձեր կաթուղիկասին ևսունք թողելց չենք¹⁾:

Վերջապես մի յերբորդ վկայություն.

Բայեագի քուրթի բեկին խարար կը տանէն թէ Ըստութին եկէլ այ Յառեն զաֆտել այ և էջլ այ ուղարկել որ էջմիածնամն նստած ար էս բեղն վախութենէն մինմարդ կուղարկի էջմիածինն կտթուղիկոսի կուշտն՝ թէ տեսնի էս խարարն աղօթք այ, թե սուտ, և կաթուղիկոսին էլ կասի՝ թէ մեր ըէդն չեղ շատ բարե կոսի ասում այ՝ թէ յեփ սոստարն գոյ, թողուս ոչ՝ որ մեղ գարսը խասացանեն, որ ես իմ էլօվս խայ կրտանանք, քոյ ժողովուրթն անք և կաթուղիկոսն այս ջուղապը կը տայ՝ թէ Ըստութին էս երկիրը չեկել և լսել էլ չեմ թէ էս տեղեքս այ գալման և էդ խարարանցեն խարար չունեմ և իւր քրիստոնեայ դառնալէն խամար ասես թէ եթէ Ըստութի ախիցն աս քրիստոնեա զաւման, ևս Ըստութին բաներին մոնչ խարար ամ, մոնչ լսել ամ. Օսմանլուն էս ֆանգօվն ուղում այ եղել՝ որ մեր կաթուղիկոսին սըս խանայ և մեր խեղջ ողորմելի հայոց աղին կրակ զցի և վարժարափ արի²⁾:

Այսպես եյին սուննիները: Թեև նրանց և շիանիրի մեջ թշնամությունն անցնում եր ամեն չափ ու սահման, բայց հարցը յեկուի հասավ ուուններին բերող քրիստոնյաներին, նրանց մարտական ճակատներն այդ համբուլամական ընդհանուր վտանգի դեմ սկսեցին հաճախ միանալ մի ողի վրա: Մենք գիտենք, վոր վախթանգիր անհաշտ թշնամին կախեթի Մոհամմեդ. Ղուլի-խանն եր: Գանձակից վերադառնալուց հետո նրան միացան և Գանձակի, Բորչալի, Ղազախի խաները և մի ընդհանուր ամրաստանապիր զրկեցին Շահ-թահմազին Վախթանգի դեմ.

Եթէ խորհեալ և զատամբութիւն ի քէն միաբանէ ընդ ինքեան զազգն հայոց և վրաց, և գետպանս արձակեալ առ Ծագաւորն ուուսաց զի եկեալ արշացէ: աշխարհին քոր Արդ՝ զոր ինչ հաճոյ է յաշ քո, հրամայեցնես առներ իսկ նորաբուսիկ անխոննես այն գրեց հրովարտակ եթէ զերկիրն կախեթու և Քարթալայ որ է Տիմիլս ըոլոր թումանօքն վրաց, ետու Մհամետ զուլի խանին և զամենայն զլատուրու և զօրս Դանջայու, ներեանու և զայլս և զվերոյ գրեալուն ետու նմա ողնական, ահա պահանջնեմ ի ձենց զվախտանկն և կամ զգլուխ նուրին. զաղաղակի յղենջիք առ ինչ³⁾:

Սկսվեցին ազգամիջյան կատաղի կորիվները, վորոնք ամբողջ յերկու տարի քարուքանդ արին վոչ միայն Քարթալինիան, այլև Կախեթը և վորոնց մանրամասնություններով մենք այստեղ զրադիկել

¹⁾ Անգ., յեր. 193.

²⁾ Անգ., յեր. 197—198.

³⁾ Յեռայի, յեր. 62—63

չենք կարող¹⁾): Շեշտենք այստեղ մի նշանավոր հանգամանք: Զի կարելի ասել թէ այդ անխանա ընդհարությունները չեյին կարող վերջանալ վոխաղարձ համաձայնությամբ և հաշտությամբ: Մենք ունենք փաստ, վոր նույն այդ դարոված Մոհամմեդ. Ղուլի խանը հջմիածնից իր մոտ եր տանում հայոց կաթողիկոսին՝ իրան վախթանգի հետ հաշտեցնելու համար: Բայց հաշտություն չեր կայանմամ, վորովնետե մեջ տեղ, մի կողմի համար, ամեն զգուշություն, ամեն զիջում ավելորդ, նույն խակ վեասակար եր դարձնում անվերապահ, կույր հավատը դեպի սուսաց թաղավորը, վոր հմայք, պաշտամունք եր դարձել վախթանգյան կողմի վրացիների համար:

Ահա մի խոշոր ապացույց, վոր տալիս են հայերը և վորի պատմողը դարձյալ Պետրոս դի Սարգսի Գիլանենցն ե.

«Պապանէ որդի Աթամշէն, — որում և նա, — որ Մամուգ-դուլի սանդուղարն այ, կախեթու արեկ Յարկան ասաց՝ թէ Մամուգ զուլի խանն» ինձ էջի դաստուրի ուղարկեց հայոց ասկարի մեծայորին կուշտն՝ թէ խանն ասում այ էս ինչ բան այ վոր գուք տառմ եք, եկէլ ինձ հնազանդեցներ, ինչ ձեր մտքայորն այ, ես կը տամ մեծություն, փող, երկիր, ձեր ամենայն մտքարն ես հասիլ կանիմ. Թաք լինի՝ ինձ հնազանգեր և իմ խոսկն լսէք. Հայոց ասկարքին մեծայորն այս ջուղարն արեա՝ թէ մեզ մոչ մեծութիւն, մոչ փող, մոչ երկիր այ լազում. մենք քեզանէ մոշինչ չենք անսաշում չենք. մենք մեծ եփայտօք թագաւորին խամար ննք բոլորվել. մենք նորայ ծառայ ենք, ոսրա ուղուրով ճանապարս անք ականամ և նորայ մարդն անք: Աստուծոյ ողբքութեամբ՝ թէ մեծ եփայտօքն արեկ էս երկիրն կու գնանք ուր կուշտն իսմ թէ ինչպես յուքմ կառի՝ էնպես կառենք: Եթէ Աստուծ մի արացէ՝ թէ մեծ եփայտօք թագաւորն զոյ ոչ էս երկիրն կամ թէ մեզ խամար մին բռն չը զիի, որ ուր ողորմելի ծառէքն մոռանայ, մենք ինչպես որ բոլորվել անք, ել էնպէս կը ցրվենք, յամենք մեր տեղն կը զնանք Մամուգ-Ղուլի խանն եղ փիքըն ասի ոչ՝ մենք նրա հնազանդող չենք»²⁾:

Մոհամմեդ. Ղուլի խանը բարկանում և այս պատասխանի վրա, կախեթի և Յերեանի զորքերը միացնում և իրար հետ և ուղարկում և հայ զորքերի վրա: Վերջիններս ջարզում փախցնում են խանական զորքերը, վորոնք իրանց պարտության վրեժը հանում են Գեղարքունու անմենդ հայ պղպանակությունից.

«Հ հազար ջանիցն իվել թէ մեծ, թէ պստիկ կին, մորդ, մինչև կոթնայիք տրախոյ խային ջառթել որչանք ապրանք, կին, խրզան կը քաշեն, կը բերեն Յարկան»:

Այսքանով բանը չե վերջանում:

«Յարկանայ նայիրն և թուրքերն՝ որ կը լոեն թէ թայի տակարն ուրէնց

¹⁾ Մանրամասնություններ ատլիս և՝ Պ. Խոսելիզնի — «Իստոր. աշ. ու գու. Հրազդական պատմություններ» առ 1900 թ. 74—80.

²⁾ Կախեթի թագավոր

³⁾ «Կոռունդ», յեր. 200—201

առկարին ջառթել այ, ինսպիր պաշտամիշ արագին թէ զեղի Խայէրին թէ քա-
ղաքի Խայէրին թուանելն, կի՞ն, երեխայ և խիզան քաշելն և մարդ սպանելն,
որ Խայէրն ցերեկօվ կարել չեն ելել տունէ դուս զոլ, որ շատ նեղութիւն կը
տան խեղջ ողորմելի խայէրոցն: Էս ողորմելի Խայէրն կը տեսնէն որ էլ ճար-
չը կայ, նեղութիւնն օր ըստ օրէ իվիլաման այ, շատ զեղ և շատ մարդ խի-
զանօվ փախան գնացին Օսմանցու երկիրով).

Այս առաջին ծանր զոհերն եյին, վոր տալիս եր հայ աշխատավոր ժողովուրդը ուսւական ցարիքմին, շնորհիվ այն հանգամանքի, վոր հայ կղերական դիվանագիտությունը և հայ Խոջայական կապիտալն իրանց համար մոլիգնոտ պաշտամունք եյին դարձրել այդ ցարիքմը՝ նրանից վողորմություն մուրալու համար Չեզ վոր այդ կղերականությունը տգիտության ստեղծած մի ինչ վոր յերկնքում գրել եր մի ամենահզոր, ցարանման աստված, վորից մի կտոր բարիք գջլելու համար հրամայվում եր զոհ մատուցանել այսինքն անմեղ ու անճար անասուններ մորթոսել:

Բայց հայ ժողովրդից միայն մորթվել չեր պահանջվում։ Կասպիական ձեռնարկությունը ցարական Ռուսաստանի առաջին արշավանքն եր գեպի Առաջավոր Ասիա և այս առաջին շարժման մեջ հայերը յերեան են գալիս մի գերի մեջ, վոր այնուհետև մինչև վերջ դառնում են նրանց հատուկ արհեստը։ Այդ ցարական լըրտեսների դերն եր՝ ՄԵՆՔ մասնավոր, պատահական լրտեսությունները չունինք ի նկատի, այլ կազմակերպված, սիստեմի վերածված լրտեսությունը, վորի իրացնողները դարձյալ նույն հրամայող ուժերն են—կղերը և կապիտալը։

Յերբ Շիպովի փոքրիկ զորաբաժինը առանց վոր և եղիմա-
գրության զրավեց Ռաշտը, անհրաժեշտ համարվեց, վոր չափա-
զանց հեռու գնացած և անծանոթ, թշնամարար տրամադրված մէ-
ժողովրդի մեջ գործելու պաշտոնն ունեցող զորքն ունենա իր
լրտեսությունը, վորի համար ամենահարմար ազգազրական տարրը
հայերն եյին: Կազմակերպող դառնում եր Մինսս վարդապետ Տիգ-
րանյանը, վոր 1723 թվի ապրիլին Ռաշտ եր ուղարկում վաճա-
ռական Պետրոս դի Սարգսի Գլուխենցին իր 15 մտերիմների հետ,
ուրեմն մի ամբողջ խումբ, վոր սկսում եր լրտեսել վոչ միայն
Պարսկաստանը, այլև Թյուրքիան: Այդ լրտեսության հետևանքն
և Գիլանենցի շատ հետաքրքրական այն զրությունը, վորին մե-
զանում տվել են «Փալմանկարգություն» անունը և վորից մենք
խկույն մեջբերումներ արինք: Հայերի այս լրտեսական գերն
եւ իհարկե, չեր կարող դուր գալ այն մահմեղական ազգերին,

վորոնց հետ նրանք ապրում ելին, այլ պիտի մշտական կասկածի, անվստահության և վրեժինդրության աղբյուր ծառայեր նրանց ընդգեմ հայերին ինքը Գիլանենցը հաստատում է այս՝ իր զբության վերջում, ասերով.

«Ակսոն որ մեր ձենքն թամամ Դպրաշի երկիրն և Օռմանցու երկիրն ըլու-
շակվեց թէ ֆլան ֆլան Խայէրն Ըստուսի թագափորքին զուլ ան դասցել՝ որ
արտնանիս ծըռում ան եթէ Աստուած մի արացց՝ մեղ մին բանի վերայ չը
դրիր, որ մեղ ըստուխաթ ելակ՝ էլ կարել չենք էս երկրումն ման գոր որ թէ
ձեռն ընկանք՝ մարդի պէս չեն ըստանում շան պես կը ըստանենալ»:

Չնայած, սակայն, այս մեծ վախին, հույսը «մեծ եփոայտորի» վողորմության և ամենազորության վրա այնքան կուրացրեց աղդասեր խջային, վոր նա ձեռնարկեց մի ավելի ևս վտանգավոր գործի, այն եւ իր հաշվով կազմակերպեց 70 հոգուց բաղկացած մի հայ կամավորական խումբ և գրեց ոռուս հրամանատարության տրամադրության տակ՝ հետախուզական պաշտոն տանելու համար բուն պարսկական յերկրում, ուր հայ ազգաբնակությունը չափազանց ցանցառ եր: Այս կամավորական խմբին ոռուսները տվին «Հայկական Խսկադրոն» կամ «Ծկադրոն» անունը, վոր հետո մեծացավ, հասավ մի քանի հարյուր հոգու և տեղափոխվելով Հյուսիսային Կովկաս, շատ նպաստեց, վոր այդտեղ, մերձկասպիական տափարակներում կադմին մի քանի հայ առետրական գաղութներ:

Խոջայական կապիտալի կազմակերպչական գործունեցությունը
հայ կամավորական շարժման սկզբնական շրջանում այսպես և
ներկայացվում մասնակցող խոջաներից մեկի նամակի մեջ.

«Ի՞նչպես խուզարկու խմբի, Նույնպես սկզբում նաև հայրական հսկագրոնի պարենավորման հոգմն ամբողջովին ընկնում եր զործը կազմակերպողների վրա, և ամենախոշոր զոհողությունն անողոն այդ ուղղությամբ հենց Պետքոս Դիլանենցն եք: Նա եր հայթայթում խմբի համար պատերազմական մթերքներ: Նա եր, վոր կերակրում եր իր միջոցներով զբեթե բոլորին: «Նրանց, վորոնք չքավոր եյին մեր միջ—դրում ե Մինսս վարդապետին Դիլանենցի զործակիցներից մեկը, — բոլորն ել ինչպես զիտես, կերակրում եր ինքը պարան Պետքոսը: Ինչքան փող և ապրանք ուներ, բոլոր ել ծախսեց ու շատ պարտքերի տակ ընկալ, քանի վոր յոթանառուն և չօրս ձիավոր եր կերակրում նա»:

Կրելով այս քան ծանր զրկանքներ, Գիլանեցն իր մարդկանցով կատարում եր ուսւ գործի համար կարևոր գործեր:

«Ե՞նչպես քեզ հայտնի յե, — կարդում ենք Մինս վարդապետին ուղղած նույն գրության մեջ, — շատ ժանր են տիղիս պայմանները, յերկիրն անտառապատ և և մահճոտ՝ բացի ուրիշ անհարմարություններից. հետախուզության մասին յեղած զինվորական կանոններով վոչինչ չի կարելի անել այստեղ. Մեղանում ոդին ել վատառողջ և ուսարները չեն դիմանում այստեղ, իսկ մահճեղականները այնքան լավ աեղյակ են այստեղի սովորություններին ու անահե

1) Անդ:

գիտեն վարվելու յեղանակները, վոր յերբեմն հարցում են յերկու հազարին, վորովնետե տեղը խուլ ե, և յեթե չը լիներ մեր հայոց զորքը, հայտնի յի Աստուծուն, թե ինչ ծուղուկներ կը պատրաստեիին մահմեղականները¹⁾։

Յեվ իրանք՝ մահմեղականները շատ լավ հասկանում եյին այս, ուստի ասում եյին.

«Յեթե չը լինեյին մեր մեջ հայերը, յեթե ականատես չը լինեյին նրանք մեր գործողություններին ու չիմանային մեր լեզուն, մենք վաղուց ջարդած կը լինեյինք Ռուսաստանի զորքերին»²⁾։

Ճիշտ այսպիսի հայտարարություն անում եր 105 տարի հետո պարսից Ֆար-Ալի-Շահը ոսմանյան սուլթանին 1826—1828 թվականների պատերազմի հետեւանքով, ինչպես կտեսնենք իր տեղում։ Յեվ պատվիլու համար իրանց քթին բուսած վտանդից, ուշտեցիները դանազան առաջարկություններ եյին անում Գիլանենցի կամավորներին Նույն նամակադիրն ավելացնում եր, թե թշնամին քանից խոստացել և Գիլանենցին և իր գործակիցներին մեծամեծ պատվանշաններ և նույնիսկ առանձին իշխանություն, միայն թե նրանք յետ կանգնեն իրանց ոռւսասեր քաղաքականությունից։ Սակայն Գիլանենցին չե հրապուրել նրանց խոստումներից և վոչ մեկը։

Այսքան ջերմեռանդ և ինքնազոն եր, հենց առաջին խոկ բուպեյից, հայերի մեջ սկսված նոր պաշտամունքը, անվանենք նրան ցարապաշտություն։ Այս կրակոտ շապիկի մեջ ել նա մնաց մինչև վերջը։ Այդ մի ամրող գարավոր տրագիզմ եր, վորովնետե այդ հրաբորքը պաշտամունքից հայ ժողովուրդն ոգուտ չստացավ։ Այսպես եր այս սկզբնական բռնկման հետեւանքը։ Այսպես յեղավ և միշտ։

Միենույն անհաշտ և անվերապահորեն ինքնավատահ վարքադիճն ընդգրկած ուներ և Վախթանգյան Քարթալինիան։ Մեր աղբյուր խոջա Գիլանենցը զբում ե.

«Մամադ-Ղուլի խանն մարդ ազարկէց Վախտանգ խանին կուշան՝ թէ ինչ այ քո մաթլաքն, եկ խաշավինք, ախաղոր պէս միայլորմինք, մեր երկիրն պախնք և շահին էլ օգնութիւն տունք՝ վոր նայ էլ խեղջ այ. մին էլ որ ուզեմ յիմանամ թէ զու ինչ ֆրումի աս և քոյ սրտինն ինչ այ և ինչ մասացում աս, ինձ ասա, որ ես էլ էն մասապն պախիմ. եթէ քուրթ աս՝ քիզ խետ քուրթ ամ, եթէ քիստունեայ աս՝ ես էլ քեզ խետ ամ. ինչ այ քոյ կամքըն ինձ ասայ. Վախտանգ խանն էս չուղաբն այ տվել թէ ես քեզ խետ խաշտման չեմ և քոյ խոսկին էլ ըլխոաղայ չեմ առում ինչ մտկի տեր որ կամ և ինչ ֆքրի վերայ՝ որ կամ՝ քեզ պետք չե որ խարցանեա ին զորձին վերայ որ ես կամ, ենտուր

վերայ շատ հաստատ ամ և Անտուծոյ շաղավաթովն քոյ ֆիքրն էլ կառեմ Մամադ Ղուլի Խանին էս խաբարն էր ազարկելց¹⁾։

Յեվ այն ել լինում այս տեսակ հարաբերությունների հետեւանքը, վոր Կախեթի թաղավորը, չկարողանալով հաղթել Վախթանգին պատերազմի մեջ, գնում-ըերում և լիզգիներին իր ոգոնության, վարձ խոստանալով նրանց ավարի տալ հարուստ Թիվալիսը Վախթանգը պարտվում ե, փախչում, Թիվալիսն ավերվում ե. Բայց Մահամեդ-Ղուլին ել չե վայելում իր այդ սարսափելի հաղթությունը։ Նրա Կախեթն ել Քարթալինիան ել զրավում են ումանցիները, սկսվում ե կատարյալ անիշխանություն և յերկիրը քար ու քանդ և գառնում ահութի չափերով։ Բոլոր այս ժամանակ Վախթանգը, հաստատ բնավայր չունեցող, թափառական, աղերսանքներ եր ուղարկում իր սրբությունը, իր պաշտամունքը կազմող Պետրոսին, փրկություն խնդրում։ Բայց հյուսիսային «փըրկիչը» բավական եր համարում, վոր մի անգամ արդեն յեկել եր Կովկաս։ Քաղաքական հանգամանքներն այնպես եյին դարսվում, որ նա իր իմպերիալիստական անհագության կեր պիտի տար այդ գթություն աղերսող գժբախտ թագավորին։

Հայերը մնում են մենակ մահմեղականության ալեծուփ ծովի մեջ։ Հարաբաղը դեռ ոռւսական պաշտամունքի գրոշակն ունի բարձրացրած իր լեռների գագաթներին և դեռ հաղթական զենք ունի իր ձեռքին։ Հայ զինվորությունը ճակատած եր տեղական թուրք և այլ մահմեղական ցեղերի գեմ, վորոնք իրանց հերթին ճակատած եյին այդ «ռուս բերողներ»-ի դեմ։ Կոխվը մանր եր, տեղային, աղգամիջյան։ Նրա կիրքն եր՝ բնաջինջ անել վոչընչացնել դիմացինին, կամ, ինչպես, մեր ժամանակներում դաշնականները ձեակերպել եյին այս բովանդակությունը յերկու, զրեթե կրօնական բացարություն վերցնող բառերով — մաքրելս սրբելու, իրար բնաջինջ եյին անում ավելի կամ պակաս աջողությամբ։ Այսպես եր մանավանդ Կավիր-քեկի գործունեյությունը Հարավային Հարաբաղում։ Մեզ հայտնի չե, թե այստեղից ինչ տեսակ զիմումներ եյին անում ոռւսաց կառավարության, բայց հավանական ե, վոր այդ դիմումներն ել նույն իմաստն ունենային, ինչպես հյուսիսային Հարաբաղից ուղարկվողները, այն ե՝ թէ վորպիսի աջողություններով և հայ զինվորությունը մղում տեղային փոխադարձ բնաջնջման կոփմները։ Ասել թե հայերը, յեթե միշտ ել նրանցը լիներ աջողությունը, պիտի կարողանային խոպառ վոչնչացնել իրանց ըրջապատող մահմեղական աղգամա-

1) Ա. Հովհաննիսյան — «Պետրոս դի Սարգիս Գիլանենց», յեր. 11.

2) Անգ, յեր. 13.

կությունը, իհարկե, չեր կարելի, քանի վոր հայ զինվորությունը՝ չնայած վոր նրա թվական կազմի մասին չափազանցրած լուրեր շատ եյին պատռմ, տկար ույժ եր այդքան մի խոշոր և յերկարատե գործի համար: Ուստի բնականորեն շարունակ կանչվում էր «մեծ եփուայտորը»:

Մինչև այստեղ այդ կանչողի դերի մեջ մենք շարունակ տեսնում եյինք Յեսայի կաթողիկոսին: Բայց 1723 թվի մարտ ամսից այդ դերի մեջ ել մրցակից եր հանդիսանում նրա հակառակորդը, Յերից Մանկանց վանքի ներսես կարաղիկասը, վորին ժամանակի եռուն շարժումները և մանավանդ Յեսայու բարձրացումը քշում տանում եյին նույնպես դեպի ոռւսասիրություն, իրքեւ մի միջոց, վոր կհեշտացներ նրա փառասիրական ձգտութեամբ: Ճանապարհ այս ուղղությամբ նրա համար հարթում եր հայ զինվորությունը նրա յեղայր Սարգիսը Սղնախի գլխավորներից մեկն եր, վորի միջոցով նա կողմանակիցներ եր գտնում մյուս գլխավորների մեջ, զրավելով նրանց, յերեի, այն խոսառմով, թե կզրի ոռւսաց կայսրին, վոր նրանք բոլորը իշխանական ծագում ունին և կխնդրի, վոր նա, մինչև իր գալն ամեն մեկին առանձին հրովարտակ ուղարկե, հաստատե ամեն մեկի իշխանական ծագումը, և նրանց բոլորին հանձնե յերեք գավառների — Բարդա-Գյուլատանի, Զարարերդ-Զրարերդի և Խաչենի կառավարությունը: Յեկ գրում եր հետեւյալ դիմումը.

«Պետրոսի մեծի կայսերից թագաւորաց թագաւորի և պարծանք ամենայն քրիստոնէց մեծի արքայիդ ուսուուի:

«Բարձանաց ամենայն հայազուն ասկիս մերոյ և առաւել մերոյ, նուաստներսէ կաթողիկոս ի կողմանս Աղուանից, որ եմք Դարապաղու և Շիրվանայ հոգեոր առաջնորդ ձունիս անկեալ և երեսս կետին թացեալ ձեռս առ քեզ տարածեալ արտասուալիր աչօք և մեծաւ պաղատանօք ազդ արարից մեծութեան քում դերի եղեալ ժողովրդեամբքս, որք կամք ի ձեռս անօրէն շար ասկիս որք յամենայն ժամ գեղեքին և չարաշեր տանջեն ոմանք գերի անելով և ոմանք կոտորելով, և մացեալքն քաղցեալ և տարաւեալ լերանց բնակելով ի յայրս և ի ձերպս քարանձաւաց լինելով, վերե Աստուած ներքես գու, քեզանէ ի զառ ոչ ոք չունեմք զմեզ պատելոյ այս տառապանացս, այլ լեր լիրեն զմեծն Մոլիս մարգարէ և պատեայ զմեղ ի ձեռաց փարաւօնի, քանզի ի նուազիլ թագաւորութեանն պարսից չորս կողմանց արհաւերք բաղումս է որք կամին քրիստոնէց ասկս սպառել և վերացուցանել որ և մեծ նախանձն անօրինացն. գալտեան մեծի համպաւոյդ այսպիսի չարանան, աստից յառաջ վրաց իշխանն Վաղթանկ խանն եկաւ, 50, 60 հազար արամբք օգնութիւն տառապելոց և հայել ուհի քում գալստեանգ, բայց յետուստ կողմանէ թշնամի յարուցին Կախէթու Մահամադ Ղուլի խանն որ և թուրքի քօմակ լինելով զմիմանս պատերազմեն և զմեզ անտես առնեն և մեք կամք ի մեծի տարակուսանս, միայն սպասեմք մեծի գալստեանքում և ազատիլ տառապանացս, դարձեալ ի համպաւու գալս-

տեան քում հայոց ասկս քանի մի ընտրելագոյն զօրաւորք որպես յառաջ ևս ևրդ արարեալ որ մէկ քանի հազար զօրք ունին ի լիրանց տմուր տեղաց սղնախ են արել, որ զմին եսային որ է Պարտաւու երկեցն և երկորդն Սարպին Զարապերթու երկրէն որ յառաջագոյն են ի ցեղաց իշխանաց և այլք Երուանն Գրիգորին, Սարուխանն, Աւանն, ուզպաշիք և թագունք են, Երուանն այլուրի Զարապերթու է թագուն Սարգուի իշխանիւս. Սարուխան Գրիգորին Մաշնու երկրէն են որք են երեք երկիք, Գրիգորն ևս է իշխանաց ցեղէ, իշնդրեմք ի մեծութենէդ որ այս երիցս յատուկ հորմ հրաման զրես այս հայազուն ասկիս տէրութիւն անեն մինչեւ ի զալուստ ծագեսցի առնացեալ, չորացեալ երկիքս դալարեացի և յայնմ աւուր զոր ինչ քո կամաց հաճոյն է և մեք բոլոր բոլին հնազարդ եմք և ամեներեան երեսս կետնի դներով փոշի առնեմք ստացդ կոխան և լեր ողջ յամենայն ժամ պակաւորդ պարծանաց մերոց. ամենա¹⁾:

Այս իսկապես կրկնություն եր այն դիմումի, վոր մի քանի ամիս առաջ արել եյին Սղնախի չորս գլխավորները և վոր մենք Գրիգորնք վերեաւմ, այն տարբերությամբ միայն, վոր այժմ չկարա աւշայի Մելիք Հովսեփի անունը: Սակայն Ներսես կաթողիկոսի այս կիսապրագետ գրությունն արժանանում և առանձին բախտ ի այն կողմից, վոր Գետրոս կայսրի առանձին ուշադրության առարկա յե գառնում, և այս, իհարկե, վոչ թե այն պատճառով վոր Յերից Մանկանց կաթողիկոսը կամ նրա գրությունը մի արտակարդ բան եյին ներկայացնում, այլ սոսկ այն պատճառով, վոր Պետրոսը ժամանակ եր համարում պատրաստել հայերին իր իսկական զիտավորության ծառայեցնելու համար: Ուստի պատասխանում եր Ներսեսին, հրատարակելով մի հրովարտակ հայ ժողովրդի անունով և հատուկ մի պատվիրակ ուղարկելով Ղարաբաղ: Հրովարտակը հենց Պետրերուբում ել հայերենի յեր թարգանվել մի բարբառական, հազիվ հասկանալի լեզվով²⁾ և մի ուրիշ վրության հետ ուղարկվում եր ցարական հրամանով նշանակված հայ իվան Կառավետի ձեռքով: Մենք բերում ենք այդ հրովարտակն իր ամբողջ նախանական հարազատությամբ.

«Աստուածոյ ողորմութեամբն մեք Պետրոս Առաջին ինփառյթու, ինքնակու բավանդակ ըստուսի երկրի և ամենայն տեղաց. տեղաց: և տեղաց:

«Պատվական Հայոց Ազգին, որնոր Պարսից երկրումն էք բնակեալ, մեր ինփառյօսութեան ողորմութեամբն շատ բարե ունեմք: Զեղ համանի այ որ վաղուց ժամանակաց մեր և պարսից թագաւորութեան միջումն ամենայն ժամ էլ սիրով զիր անք գրել և համարձակ սովորագրութիւն ւայելել երկու կողմանց ավետութիւնն ելէլ նորայ. պարսից երկիքն խալվեց և կարվէց և էն ժամանակումն մեր սօվզայգարէն որ շամախի են, շատ մեծ նեղութիւն և մեծ զարարութիւն ան տվել. և սպանութիւն ան արէլ. էդ ջաթ տան մեղ պարտ և գալստեանը ան տվել:

1) ԹՅՕՅ, Ը. 344—345.

2) Յեղյանի ժողովածվի մեջ հայերեն բնագիրների հրատարակությունը պատշաճավոր ինամքով չի կատարված:

ուաց որ դարձա երկիրն մեր սրի զորութինն բանացանէք. Աստուծոյ ողորմութեամբն և աջողութեամբն էսպէս արարինք որ ինչ քաղաք որ գելանայ ծովափունէ. որ էն քաղաքով վերոյ սովորագարէն ամենայն ժամ մեր երկիրն ին գորման ըլլայ. մեր հրամանին տակումնայ և մեր ձեռնութեայ. և յառաջմանէ ձեր Ասկիցն շատ բաժին սովորագարըն դար մեր երկիրն անելէլ գորման. վասնորոյ էն հայքն որ պարսից երկրումն ան կալման և շատ էլ որ կան մեր երկրումն ջոկ-ջոկ քաղաքանուման կալման ուրէնց սովորագարութիւնն առնումք մեզնէ ծառայութեամբ խնդրեցին թէ որ էլ նմայնայպես նորոգենք և հաստատենք ձեր Հայոց ասկի սովորագարութիւնն որև որ պարսից երկրումն էք և մեր էլ յատուկ մեր ինքրայդութեան ողորմութեամբն էստօվ յայտնեցինք ձեր թամամի ասկին որ ինչպէս առաջմէ սովորագարութիւնն ան եւէք առումն էլ նույնպէս մեր նոր առած քաղաքանումն էլ սովորագարութիւն և նորոգումն հաստատէք. էն ջաթան որ էդ քաղաքանին զիւանայ ծովին վերայ այ և նասպարն էդ քաղաքավն այ զոր մեր թագաւորութիւնն առանց փիքը խաթիրջամ զոն. և թէ կուզեն էդ քաղաքանումն որ մեր ձէռքումն այ չորեք կողմանն որտեղ գեղ և գտառ ելէլ ինչպէս որ յառէջ կալման անել էլ աանով տեղ և էլ նմայնապէս շինութիւն զցէն նստեն և իրենց սովորագարութիւնն համարձակ և ուրէնց կամքով սովորագարութիւն առնեն, հաւատացէք և հավատացնում ամ որ մեր ոչ թէ միայն սովորագարութիւն ջաթանամ ձեղ, կառավարում և այլ ձեր ամենայն ջաթան կուզեմ ձեր խնդրուացքին, կատարումն տամ. և շատրարութիւն հուքմ կառնեմ և այլ առատել, շահական և շահաւէտ. ուրիշ կերպի զաւողաթ կու լինի և մեծ ողորմութիւն կառնեմք. և այլ շատ էս ջաթան ձեր Հայոց Ասկին հաւատակէ համար մեր պեթկական տեղին կացող Հայոց իրնդրվացկով գատեցինք մինն նոցայ տիրօրացէն իվան կարապեան էս մեր բացյայտնի զիրն ետուրն ուղարկենք և մեր ամենայն ողորմութեամբ, և աղաղաթովն հուքմ և հրաման արարինք, որ թամամի ամենայն Հայոց Ասկին խնդրվացքն և ամենայն բանն յայտնի առնի և որ ամենայն ճշմարիտ և հաստատեառութիւնն կատարէ. այլ ոտք գորայ և հավագաէ համար էս յայտնի զիրն թագավորին միտով սմինք ուրն¹⁾:

Պետրոսի իսկական նկատառումը հայերի վերաբերմամբ,—մենք այս շեշտել ենք սկզբից, — առևտրական եր և այս կողմից նրա այս «բացահայտ» հրովարտակը հստակորեն ցուացնում եր իր մեջ նրա քաղաքական կետ նպատակին հայերի վերաբերմամբ: Ծրագրած լինելով հափշտակել ամբողջ կասպիական առեսուրը, նարնականորեն պիտի պատրաստեր նյութ այլ մեծ հափշտակությունը բեղմնավորելու համար: Այսպիսի նպատակի համար իսկապես գեղեցիկ նյութ էյին հայերն, ամենից առաջ, իրեկ առևտրական տարր: Յեվ ահա, զեռ նույնիսկ չվերջացրած կասպիական հափշտակությունը, նա ամենալայն խոստումներով հրավեր եր կարդում այս հրովարտակով հայերին, վոր նըրանք կնան «սովորագարություն» անելու Գիլանայ ծովափին ոււսների ձեռք բերած քաղաքներում, շինություններ շինեն, բնակություն հաստատենք:

մի խոսքով վայելեն այն բոլոր բարիքները, վոր պատրաստ եր տալ «մեծ եփուայտուրը»: Նկատել հեշտ կարելի յե, վոր հայ վաճառականին համոզում էյին խկապես զաղթել այդ նոր տեղերը և վոչ թե առևտրական նպատակով գնալ գալ ունենալ: Պետրոսի խեկան միտքն եր հայերով գաղթավորել կասպիական ափերը և սկսում եր այդ բանն այս զրավիչ հրավերով, իվան կարապետի առաքելության իսկական նպատակն ել այն պիտի լիներ, վոր բերանացի բացարություններով և գովարանություններով ընդունելի դարձներ այդ հրավերը:

Բայց Պետրոսի առջև կար մի գժվարություն, վորը պետք եր հաղթահարել Այդ հայրենի հողի աղատության հարցն եր, վորի մասին Պետրոսը հաստատուն խոստումներ եր արել զեռ Խորայել Որիին, խոստումներ, վորոնք, սակայն, առանձին կարեւություն չունեյին, քանի վոր կեռնային Դարարաղի նվաճումը չեր մտնում և չեր կարող մտնել նրա հաշիվների մեջ: Այսպես եր վերաբերմունքը և զեպի Վրաստանը, վորի նվաճման մեջ անմիջական շահ չեր տեսնում դեռ կասպիական հորիզոններին կառչած Ռուսաստանը: Մնում եր տանջվող քրիստոնեյության պաշտպանի ծիրանին, վորի մեջ փաթաթված ծնվեց ոռւսական իմպերիալիզմը: Ահա այս բանի համար ել Պետրոսը զբել եր տալիս և հանձնել եր տալիս նույն իվան կարապետին մի յերկորդ գրություն, ուղղված Յերից Մանկանց վանքի ներսես կաթողիկոսին և նրա թղթի մեջ հիշատակված «իշխաններին» և յուզպաշիներին¹⁾: Պատասխանելով սրանց աղաչանքներին, Պետրոսն ամենայն վեհությամբ հայտարարում եր, թե ինքը պատրաստ ե վերցնել հայ ժողովությունը իրացիք զեպի Հայաստան:

Բայց ինչ եր սրանով ուղում ասել Պետրոսը: Միթե այն՝ թէ Բագուն վերցնելուց հետո ոռւս զորքերը կզնան Դարարաղ, այստեղ կապատերազմին անհավատների գեմ ու այսպես կազմեն հայերին: Ամենեկին: Այսպիսի խոստում Պետրոսը յեթե տար եւ այդ կլիներ կատարյալ ստություն և խարեյություն, քանի վոր ընդդամենը մի յերեք ամիս անցած այդ գրությունից՝ նա կնքում եր իզմայիլ բեկի հետ այն զաշնագիրը, վորով, ինչպես տեսանք, պարտավորվում եր ամբապնդել Շահ-Թահմազի իշխանությունը,

1) ԷՅՕՅ, շ. 354—357.

զսպել և պատժել ապստամբ հպատակներին և այլն։ Յերեխ հենց այս պատճառով ել Պետրոսը չկատարեց հայկական Աղնախի գլխավորների խնդիրքը՝ իրանց յերեք գավառների կառավարիչ նշանակելու մասին։ Ընդհակառակն, բոլոր առհասարակ գլխավորներին և նշանավոր մարդկանց խորհուրդ եր տրվում, վոր յեթե նրանք չեն կարողանում տանիլ անհավատների ճնշումները, տեղափոխվեն ուսւներին պատկանող կասպիական նահանգները, այսինքն նույն այն տեղերը, ուր Պետրոսն իր հրովարտակով հրավիրում եր բնակավորվել հայ վաճառականներին։ Իսկ հայ հասարակ ժողովրդին խորհուրդ եր տրվում հանդարտ նստել իր տեղը և սպասել։ Իսկ յեթե այդ հասարակները անկարող լինելին նստել և սպասել, ինչ պիտի անելին, յեթե վոչ վեր կենալ և, չսպասելով Պետրոսի մի նոր հրավերին, գնալ իրանց վաճառականների, «իշխանների» կամ առհասարակ նշանավոր մարդկանց մոտ։

Դեպի Բագու բացվող ճանապարհն, ուրեմն, ուսւ զորքի ազատաբար արշավանքի համար չեր։ Այդ ճանապարհով Ղարաբաղի հայ ժողովուրդը մաս մաս իրար յետելց կդնար Գիլան, Մազանդարան և ուսւական դրավման այլ տեղեր, և այսպիսով կը մտներ ուսւական տիրապետության տակ, կազատվեր անհավատների լուծից, ինչպես ինքն եր յերեսանկյալ աղաջում, պաղատում, և Պետրոսն ել կդառնար ամեն ինչ իրեն քրիստոնյա ազատող-հրեշտակ, սուրբ, կես աստված, գուցե հենց և ամբողջական աստված……

Այժմ հասկանալի յե, թե ինչի՞ցն եր վերաբերմունքի տարբերությունը, վոր մենք այնքան պարզ նկատեցինք Պետրոսի կողմից դեպի Վախթանգն ու հայերը և թե ինչպես եր, վոր Պետրոսն ավելի հոգացողություն ցուցաբերում եր դեպի հայերը քան դեպի վրացիները, չնայած վոր վերջիններս կրոնապես ավելի ձոտիկ և հարազատ ելին նրան։ Գաղտնիքը բացված է։ Հայերն ավելի մեծ ույժ ունելին վաճառական կայսրի աշքում, և այդ ույժը՝ նրանց խոջայական կապիտալն եր։ Հաջորդ գլուխը մեղ պիտի ցուցց տա, թե այդ մեծ ույժն ինչ եր և ինչեր հարկադրեց անել «Մեծ» տիտղոսով պսակված այդ ամենակարող բռնակալին։

10.

1724 թվականի հունվարի 1-ին եր միայն, վոր Իվան Կարապետը կարողացավ հասնել Ղարաբաղ՝ իրան հանձնված յերկությերով, վորոնց վրայով արդեն յոթն ամիսներ ելին անցել։ Այս յոթն ամիսների ընթացքում շատ փոխվել ելին ներքին և

արտաքին հժնգամանքները, վորոնց մեջ ապրում եր, որը որին ուռւսների գալստեան ապասելով, Ղարաբաղի հայությունը։ Նա ուներ, ճիշտ ե, իր զինվորությունը, վոր վորոշ ուազմական ույժ եր ներկայացնում և ընդհանուր անիշխանության մեջ մի գրեթե անկախ զրություն եր ստեղծել իր գրաված լեռներում։ Բայց հենց այդ հանգամանքն ել բերել եր այն հետևանքը, վոր իրանց համար անկախություն հափշտակած լեռները զբաից ողակավորվում ելին հետզհետե ավելի և ավելի շատացող և ուժեղացող թշշնամի տարբերով։ Այդ ողակը գնալով սեղմգում եր և արդեն բանն այն դրության եր հասել, վոր հայ լեռնային զինվորությունը սպաշարման վիճակի մեջ եր, կտրված զրաի աշխարհից։ Այս մեկուսացումն առանձնապես վտանգավոր եր Հյուսիսային Ղարաբաղի Սղնախների համար, վորոնց համար շատ զժվար եր անգամ հասարակ նամակներ հացնել կասպիական ափերում գտնվող ուսական զորաբաժիններին։ Ցեղ սակայն զենքի և սպամամթերքի մեծ կարուսություն ունելին նրանք և այս պակասությունը կարող եր վոչնչացնել նրանց նշանակությունը։

Պետրոսի կասպիական դրավումները Ոսմանյան հարվածների տակ ելին զբել Ղարաբաղը։ Թյուրքիան նույնպես շտապում եր դեպի կասպից ծովը, վորպեսզի վերցնե Բագուն և այսպիսով ձեղքի ուսւական զորաճակատը և յերկուսի բաժանելով նրան, հարկադրե նրան հեռանալ կասպիական ջրերից։ Ղարաբաղը կանգնած եր այդ ուղմական շարժման ճանապարհին և անխուսափելիուն կամ պիտի տեղի տար կամ բաղմակեր սսմանյան ույժին։ Արդեն 1723-ի յերկրորդ կեսին սսմանյան մի խոշոր բանակ, վորի կազմը հասնում եր, ինչպես ասում ելին, 80 հազարի, Խբանիմ Փառայի հրամանատարությամբ, առաջացավ մինչև Գանձակ, բայց չկարողացավ վերցնել այդ քաղաքը։ Բատ սովորականին, ավերվեցին շատ հայ գյուղեր, շատ մարդիկ գերի վերցվեցին, շատերն ել մերկ ու բորիկ փախան գնացին Մեծ Սղնախ, ապաստան գըտնելու հայ զորքի մաս։ Զորքի գլխավոր հրամանատար Ավան յուգանցին մարդ և ուղարկում իբրահիմ փաշայի մոտ և պահանջում է նրանից արձակել գերի վերցրած հայերին, ասելով, թե թյուրքական զորքերն ուղարկված են Գանձակը վերցնելու և վոչ թե հայերին հարստանարելու համար։ Իբրահիմ փաշան կատարում եր յուղաշու պահանջը, բայց, իհարկե, վոչ թե վախից ստիպված, այլ ունենալով նպատակ հայ զինվորությունն իր կոզմը գրավելու։ Ցեղ իրավ, նրա բանակը հանձնարարություն չուներ կովի ըըսնվելու հայ զորքի հետ։ Գանձակից նա վերապարձավ Թիֆլիս, ուր

և կազմալուծվեց: Բայց հետո Ավան յուղաշին նամակներ ստացավ իրրահիմ փաշայից, վորոնց մեջ նա, թյուրքաց կառավարության անունից, առաջարկում եր դաշնակցություն թյուրք և հայ զորքերի մեջ: Բայց ցարական պաշտամունքից կուրացած լեռնցի քաջարի միամիտը բնականաբար մերժեց այդ առաջարկությունը¹⁾, և այսպիսով Դարաբաղը դարձավ ռազմաբեմ ուժանյան արշավանքների առաջ, մի վիճակ, վոր վերջի վերջո որհասական պիտի դառնար նրա համար:

Արևմուտքից, ուրեմն, սամանյան ույժն եր ողակավորում իր լեռների ծայրին պաշարված հայ զինվորությունը: Հարավից նրա վրա զալիս եր հոգևարք Իրանը: Նույն այդ ժամանակ Դիզակ դավառի Հաղբութ գյուղի մոտ ճակատամարտ եր տեղի ունենում պարսից զորքի և հայոց Փոքր Սղնախի զորքերի մեջ: Հաղթությունը մեռում եր հայերի կողմը: Պարսիկների կողմից սպանվում եյին 200 հոգի, իսկ հայերի կողմից վիրավորվում եր մի յուղաշի²⁾:

Պարսից բանակի գործը Հյուսիսային և հարավային Ղարաբաղի յերեք հայկական զորաբաժինների ղեմ շարունակում եյին տեղային խաներն ու ցեղապետները, վորոնք այլպիսով լրացնում եյին զինված հայության ողակավորումը հյուսիսից և արևելքից: Պետք ե այդ քոլորի վրա ավելացնել Դաղստանի գիշատիչներին, վորոնց ձիաները, թալանի դնալիս, արևելք արևմուտք չեյին հարցնում:

Այսպես եր դրսից: Իսկ ներսում հայ զինվորության մեջ արդեն սկսում եյին նշմարվել այնպիսի յերևոյթներ, վորոնք ցույց եյին տալիս, թե շատ ել ամուր հիմքերի վրա չե խարսխաված ընդհանուրի միաբանության և միակամության սկզբունքը: Հյուսիսային Դարաբաղի Սղնախներն ազատ չը մնացին յերկը դժբախտությունը կազմող յերկու հակաթոռ կաթողիկոսների վեճերից: Արդեն սկզբից տեսանք, վոր հայ զինվորության գործի հողին Յեսայի կաթողիկոսն եր, վոր և դառնում եր նրա ծայրակույն զեկավարն ու կարգադրիչը: Այս արդեն բավական եր, վոր Յերից Մանկանց աղքատ ու խղճուկ վանքի գետնափոր ու մութ սենյակում³⁾ վորջացած ներսես կաթողիկոսը փքվի նախանձով ու չկամությամբ: Պետքուին գրած իր կիսագրագետ նամակի մեջ, ինչպես տեսանք, նա ասում եր, թե շարաբերդի Սարգիսը, վոր հայոց Սղնախի գլխավորներից մեկն եր, իշխանական ցեղից եր և

1) ԷՅՈՎ, Ը. 362.

2) Տամ же.

3) Նկարագրությունը տ. իմ «Իմ հիշատակարանը», Շուշի, 1890, յիշ. 276:

ինդրում եր, վոր կայսրը նրան նշանակե Զարաբերդ գավառի կառավարիչ: Այդ Սարգիսը նրա, ներսես կաթողիկոսի յեղայրն եր և ուներ իր հետ յուղաշիների մի խմբակ, վորոնց անունները հիշատակված են նույն այդ նամակի մեջ: Մենք ունենք և Ձեսայի կաթողիկոսի մի նամակը, ուր նա շրջապատված ե՝ բոլորովին ուրիշ անուններ կրող յուղաշիներով: Այս արդեն մի պարզ փաստ ե, վոր հայկական զինվորության մեջ մտել եր թայֆայականությունը, վոր գնալով կարող եր զարգանալ մինչև կատարյա պառակտում, ասել ե՝ ներքին թշնամություն առաջացնելլ: Իսկ թե ինչ կնշանակեր ներքին թշնամի մի այդպիսի ժամանակ, զրափորձն ել արդեն ուներ Դափանի հայ զինվորությունը: Տաթեի Մելիք-Դավիթիրը, մահմեղականանալով և զառնալով Մելիք Բագրդանությունը եր նաև վոխերիմ թշնամի հայ զինվորական շարժման: Դա մի ուժեղ մարդ, ուներ իր սաստիկ ամուր քերգը, վորի վրա հնենքած՝ ամեն տեսակ վատություններ եր անում: Դավիթ-ընեկի զորքի շարժումներից, ձեռնարկություններից չեր լինում և վոչմեկը, վոր այդ գավաճանը շշտապեր հայտնել պարսից կատագալության, իսկ վերջերում իր հանգնությունը հասցրեց այն ու տիճանին, վոր խարեյությամբ իր մոտ ճաշի հրավիրեց Դավիթը քեկի մարդկանցից 55 հոգու, կարել տվեց բոլորի գլուխները և ընծառ ուղարկեց Շահ-Թահմազին Թավրիզ: Տնային հրեշին վոչընացնելլ հեշտ չեղավ, պետք տեսնվեց միացնել դրա համար Ղարաբաղի ամբողջ զինվորությունը: Ավան-յուղաշին իր Սղնախները տարապ գավաճանի ղեմ, Դավիթը բեկը վերցրեց նրա բերդը և իրան ել զերելով, սպանեց Շնհեր զյուղում:

Այսպիսով Հայ զինվորությունը, չնայած իր աջող գործողություններին, ուներ կազմակերպչական շատ պակասություններ, վորոնք, աճելով և բազմանալով, հեշտությամբ կարող եյին նյութել քայքայիչ հետեանքներ: Դժբախտություն եր մանավանդ այն, վոր Վախտանգը մի աստանդական փախտական եր և հայ զորքը զրկված եր նրա թանկագին զեկավարությունից: Դրությունը բավական ճիշտ գնահատությամբ ներկայացնում եր Յեսայի կաթողիկոսը Պետքուին 1723 թվի նոյեմբերի 1-ի իր հետեյալ նամակի մեջ:

«Արդ գիտութիւն լիցի մեծի ինքնակալիք, զի յառաջ քան զայս քանից անգամ առաջ և որպեսութիւն մեր ազգեալ և բոլորեալ եմք ի գուռն հղօրիդ, թէ երբեմ երբեմ յուսագրական բանս և լուրս լուաք, մեւեալ սիրտք մեր զօրացան և յարեան այնու բանիվ ոչ միայն մերային ազինք, այլև ազգն վրաց և հոռոմոց ամենայն քրիստոնեայք: Բայց զկատարությ քանի և խորհրդոյ հրամանի քում ոչ տեսանեմբ ըստ փութոյ ժամանակիս, քանզի մինչև ցայժմ կեր-

պիւ ինչ կայաք ի ձեռու պարսից արքային թէ՝ նեղութեամբ և թէ հեշտութեամբ անցուցանէար զիեանս մեր ակն արկելով Աստուծոյ և բոյց խնամոցն Այժմ սոցին իշխանութիւն ևս բարձաւ ի մէջ կամօքն Աստուծոյ Բայց ի չորից կողմանց թշնամիք մեր յարոցեալ կան ի վերայ մեր և եմք իրեւ հոտք անհովիք մոլորեալիք ի լերինս և ի զաշտու. և մեք ոչ կարեմք զգէմ ունել նոցա, զի մէկ զիմաց Օսմանցին եկն Վրացառն առաւ և եկն մինչեւ ի Գեանջայ 20 օր ծեծեց զբարաքն և դարձաւ. և մէկ զիմաց պարսից մեացեալըն փոյթ ընդ փոյթ դան ի վերայ մեր. և միւս զիմաց Տաղսաւանցին և լազիկն ասպատակեն զմեզ իսկ մեք որը մեացեալըն երեմն կավելով և երեմն հաշտութեամբ հազիվ մինչեւ ցայժմն կիսոյ չափ մեացեալ կամք ակնարկեալ վերին խնամոցն և քում այցելութեանդ: Վասն որոյ հայցեմք և խնդրեմք ի բարեխնամ տէրութենէ քումմէ զի մի անտես առնիցես զմեզ յայսմ մեծի նեղութեան և վշացս վասն սիրոյն Քրիստոսի և նորին խաչի և եկեղեցոյ խաթերն համար, անա մինչեւ ի մեկ 2 ամիսն եթէ զօրապես և զորք ի հրամանէ քումմէ ոչ հասանցիցին առ մեզ, այսպէս համարհցի տէրութիւն քոյ որ զմեղ ազգովիմք կրանան ի միջոյ թշնամիք խաչին Քրիստոսի: Ահա 3 ամ է որ մեք ծառայք քոյ անտէր և անդուի զորով մեծի նեղութեան մէջ սպասեմք և ակն ունիմք ճանապարհի քում յամենայն ժամ. զմեր թուղթն և չափարն անպակաս կու լինէր ի ծառայութենէ քումմէ, բայց քանզի ճանապարհքս փակած է, ոչ կարեմք որպիսութիւնք մեր հանապազ գրել և աղդ առնել ձեզ. զի այս կողմ ամենայն ոք տեղեկացեալ զիտէ զմեր առ տէրութեան քում ծառայել կամենալն, վասն որոյ զգուշացեալ կան յամենայն ճանապարհաց. քանի մարդիք ևս կորցրին այս մէջս. վասն այս ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ թուղթ զրել. խնդրեմք վառն որոյ այց եւանել քում տառապեալ ծառայիցս և մէկ փրկութեան գուռն բանալ մեզ Քանզի և արիւն մեր իսկ ի ձեռաց ձերոց պահանջեն Տեր. եթէ ոչ այց եւանցիք վշացեալ անդամոցս նորա. և զայս ևս յայտ լիցի մեծութեան հզօրիդ, եթէ զգալուստ քոյ անմելոց իցէ, փութանակի մեզ զոք ի թիկունս հասոյ հազարապետի. միով. միայն թէ անուն քո կոչեցի ի վերայ մեր և մեք քոյին զօրութեամք և խնամօքն Աստուծոյ կարող իմք հաւածել զթշնամիսն խաչին Քրիստոսի, մինչեւ Աստուծով կատարելապէս բոլորվիմք կրուիցուք ի հնագանդութիւն և ծառայութիւն ընդ հզօր իշխանութեամք ձերով, որպէս և յառաջապայն ունիմք խնդիրը և իդ. ահա այս է ժամանակ զմեզ ի ծառայութիւն ստանալոյ. զի թագաւորն պարսից յոյժ նորապեցաւ և ոչ իսկ երեխ, և իշխանութիւն օսմանցույն տակալին առ մեզ ոչ է հասեալ. այլ ինքնազլուս աղդք չորք շրջակայք մեր յարեալ են ի վերայ մեր և ընդ մեզ մաքառեալ կան. և զլուխ պատրիարքն մեր հանգերձ սուրբ աթոսովն էջմիածնաւ մեծի նեղութեան մէջ մեացեալ կայ. այլ վանորայք և անապատք մեր խաւար և խանկարեալ կան. ահա այս է օր այցելութեան և փրկութեան եթէ կոմենցի տէրութիւն քոյ, զոք և մեք կամիմք և խնդրեմք. զոք ահա ձեռագրեցաք ի վերայ նամակիս և զշամախցի Անտոն անուն քահանայի յղեցաք ի ծառայութիւն Տեառնդ:

Ստորագրում եյին այս թուղթը, բացի Յեսայուց, և նրա կողմանակից յուղբաշիներն այսպես. «Նառայ Աւան ուզպաշի. ծառայ Միքայ ուզպաշի. ծառայ Փալասան. ծառայ Փանոս. ծառայ Սուլի. ծառայ Դաւիթ, ծառայ Մելիքում. ծառայ Զաբարեայ. ծառայ Ռիման»¹⁾:

¹⁾ ԷՅՈՅ. ս. 360—361.

Յեկ ահա այսպիսի հուսահատ սպասողական-աղաչական դրության մեջ եյին հայոց Սղնախները, յերբ այստեղ յերեան յիկավ իվան կարապետը՝ Պետրոսի հուսագրական թղթերով: Հասկանալից ընդհանուր ցնծությունն այս առիթով: Հայերին աղատելու խոստումն, իհարկե, ըմբռնվում եր ամենքի ակնկալած իմաստով, այսինքն վոր Պետրոսն իր զորքերով կերեայ Դարաբաղի սահմաններում, կհաստատե այստեղ իր իշխանությունը և հայերը կը դառնան ուռսահպատակ ու այսպիսով ել կվերջանա նրանց հարցը: Ի՞նչ եյին այսուհետեւ նրանք ակնկալելու ուռսաց ցարից, վորպեսպի իրազորձվի իսրայել Որիի յերազների գոնե մի մասը, հայտնի չե: Ամենայն հավանականությամբ այս պարզ հպատակության փոփոխությունից հեռու չեյին գնում հայերի իղձերը, գոնե մենք վոչ մի նյութ չունենք՝ հակառակն ապացուցանող:

Իվան կարապետի բերած խոստումների առիթով հայ զինվորությունը տոն կատարեց ամրող ութ որ: Յեկ նորից նրա զգացմունքների թարգման հանդիսացավ ծայրագոյն հրամանատար Յեսայի կաթողիկոսը: Ինչպես յերեւում ե, ամեն ինչ արդեն վերջացած համարելով, հայերն արդեն ընդունել եյին ուռսահպատակություն, ուստի ընդհանուր հրձվանքի արտահայտությունը դարձող նրա նամակն սկսվում եր այսպես.

«Ի նորընծայ ծառայիցս քոյ երկրպագութիւն մատուցանեմք մեք հայոց ազգս ամենայն. քրիստոսի ծառայից ծառայ եսայի կաթողիկոս Աղուանից և և ընդ ինե եղնալ զօրապետք և զօքք, եպիսկոպոսը և քահանայք, մէլիքները, անուտէրը և ամենայն ժողովուրդը Զի ահա իկն ենաս առ մեզ ի հրամանէ քումմէ առաքեալ գեսպան իւան կարապեան հանգերձ շափաղաթի և ողորմութեան և ինամոց քոյ նոմոսիւ, զոր մեծաւ ուրախութեամբ ընկալաք ի վերայ զիմոց մերոց իբրեւ յաստուծոյ առաքեալ ողորմութիւն և խնամք. և զոր ինչ հրամայեալն էր ի քումմէ բարձրութենէ, իբր զմեզ ի թշնամեաց մերոց պատրաստ պահնելոց և զպակասութիւն մեր ըստ չափու մերում հոգալու Ահա մինչեւ յայս թարիզու թէպէս շորից կողմանց թշնամիք զօրեկը յարուցեալք կան ի վերայ մեր, ապա աստուծով և քոյին կարող զօրութեամք և աղօթիւք զմեզ և զմեր մերձակայքս ողջութեամբ պահնեալ եմք թէ կրութիւնով և թէ աղոթիւք զմեզ և զմեր մերձակայքս ողջութեամբ պահնեալ եմք ի տէրութիւն քո առ մեզ հասանիլն կարողացուք պահնել զմեզ ի թշնամեաց մերոց քոյին զօրութեամք և աղօթիւք. զի յամբազոյն տեղիս ժողովեալ կամք ի տեղիս տեղիս. և զօքքն հանապազ ի զալ թշնամեան ելեալ մարտնչին ընդ նոսա. և մեծաւ յուսով ակն ունիմք ողորմութիւն և շափաղաթ քոյ փութիւն պահութիւն առ մեզ հասանիլոյ. և յորմամ մերձեսցի զօրըն թագաւորական ի սահմանս մեր, յայնժամ և մեք ելցուք ըստ չափու կարողութեան մերում զօրօք ընդ առաջ հզօրիդ և զոր ինչ հրամայեալն իցեւ ի քումմէ տէրութենէզ, կատարեսցուք աստուծով ըստ կարողութեան մերում, և վասն այն այժմս ոչ արկաք ի թիւ զհամար զօրաց մերոց, զի յոյժ ցան:

¹⁾ ԷՅՈՅ. ս. 267.

և առա և անդ այժմս ոչ եղի ձեռնհաս և ի հասանել տէրութեանդ առ մեզ գամենայն բացայայտելոց է առաջի քո. բայց պակասութիւն զինուց պատերազմականաց յոլով ունին. առա իւան կարապետ էլշին աստ առ մեզ է, որ եկն 1723 (=1724) թվիս յունվարի մէկն եւ զբեցաւ զիրս 1724 թ. փետրվարի հինգն՝ Առա ուղաղը. Միքայ ուղաղի. Մելիք Թամրազ¹⁾:

Սղնախներն այսպիսով նոր հաստատություն և խրախույսներ եյին դանում իրանց զործունեյությունը շարունակելու համար: Իսկ այդ զործունեյությունը զուտ ուղմական չեր, այլ առաջացրել եր և վարչական կազմակերպության մի նոր ինքնուրույն յեղանակ, վոր չե կարող հետաքրքրական չլինել հին ավատական ավանդություններով կարատված մի յերկրի համար: Մի քանի խոսքով պարզենք մեզ Սղնախների սիստեմի ինքնուրույնությունը, վոր զուտ տեղային ստեղծագործություն եր, ներշնչված այն աշխարհայացքից, վոր ամփոփում ե իր մեջ լեռնականությունը:

Արդ՝ այդ ինքնուրույնության միջուկը կենտրոնացումն եր, վորից վաղուց եր ձեռք վերցրել լեռնային անջատ կալվածատիրական իրականությունը: Բոլոր բաժան-բաժան գավառակային ինքնազմանությունները մեջ ելին ըերել իրանց զինական ուժերը, սկսած փոքրիկ քանակություններից (100—150 մարդ) մինչև համեմատաբար խոչորները (400, 500, մինչև իսկ 700 մարդ), ինչպես այս ցույց և տալիս Ստեփանոս Շահումյանի կազմած ցուցակը²⁾: Գորաժողովի այս յեղանակը հիշեցնում է առվակների և առուների միախառնվելը մի գետակ կազմելու համար, այն տարբերությամբ, սակայն, վոր ամենափոքրիկ առվակն ել այդ հավաքույթի մեջ չեր կորցնում իր իրաւու շեշտված տեղայնությունը: Այս բազմաթիվ մասերը միացնողն ընդհանուր հրամանատարն եր: Յեվ այսպիսով վերանորոգված եր յերեսում, բայց շատ մանր չափերով, հին սպարապետությունը:

Ամբողջ Ղարաբաղի հայ զինվորությունն ուներ յերկու սպարապետ: Հյուսիսում, հին կարգով, սպարապետը Գանձասարի կաթողիկոսն եր, մինչդեռ հարավում, ընդհակառաջին, բարձր հոգեուրականությունը վոչ մի կապ չուներ հրամանատարության հետ, և այդտեղ վոչ միայն սպարապետ, այլև դիկտատոր եր Դավիթբեկը: Այս սիստեմը ուժեղացնում է առաջին կարգի յեր վերածում յերկրի ընդհանուր շահերի աղղեցությունը և յետ եր մղում տեղական անջատականությունն իր մանր մունի հաշիվներով և ձըգտումներով, մի նոր, ուրեմն, վարչական կացություն, վոր ըոլուրովին հակառակ եր նախկինին: Ամենակարևոր, յերկրի ընդհան-

բության վերաբերվող կենսական հարցերի անորինողն այսպիսով դորքի վիմավոր հրամանատարն եր, վոր հարկավոր գեղքերում գիտեր սանձահարել տեղային անջատականությունը, յերբ նա մասսակար ընթացք եր բոնում ընդհանուր զործի դիմաց: Այս նկատառումով Դավիթ բեկը գլխատել եր տալիս իր նշանավոր ոգնականներից մեկին, Կալեր զյուղի զորավար Պասին¹⁾, վոր ուներ իր ձեռքի տակ 700 զինվոր: Բայց և այնպիս, ընդհանուր հրամանատարը միանձնյա կարգադրիչ չեր: Հյուսիսային Սղնախների վիմավոր հրամանատարը Յեսայի կաթողիկոսի ստորագրության կից զրոյդ մելիքների, յուղբաշիների և տանուտերերի ստորագրություններն ապացուցում են, վոր յերկրային ընդհանուր զործը խորհրդակցական ոկրունքով եր տարգում:

Դիմելով հայ զինվորության ուղմական կազմին, մեղ ամենից առաջ պիտի հետաքրքրե նրա ընդհանուր թվի հարցը, Այսունզ մենք ընդհարվում ենք մանրամասն տեղեկությունների բացակայության և վոր ավելի վատն ե՝ չափազանցությունների: Արեւլքը, ինչպես հայտնի յե, գիտե անչափ ուղցնել փաստերն ութվանշաները: Շատ հեռու չգնալու համար՝ վերցնենք հենց միայն այն փոքրիկ գրականությունը, վոր պարունակում է իր մեջ տեղեկություններ հայ զինական շարժման պատմությունից, վոր 8—10 տարվա տեսլություն ունի: Պետք եր, վոր այստեղ վատահություն ներշնչեր Ստեփանոս Շահումյանն իրեւ ականատես մասնակից Ղափանի անցքերին: Բայց ահա նրա հեղինակած զործի մեջ մենք տեսնում ենք, վոր 70 հազար հոգուց բազկացած ուսմանյան զորքը, պաշարելով Հալիձորի փոքրիկ ըերդը, վոչ միայն չի կարողանում վերցնել այն, այլև փախուստի յե դիմում յերեք հարցուր հայ ձիավորների առաջ, վորոնք կոտորում են 12 հազար մարդ, ասել ե՝ ամեն մեկը 40 մարդ.... Հեղինակն ասում ե, թե այդ Աստուծու առանձին վողորմությունն եր, Յեվ իրավ, այդ անհեթեթությունը միայն կարող եր ծնել մի այնպիսի առասպեկտ Լավ վիճակի մեջ չե Հյուսիսային Սղնախների զեկավար Յեսայի կաթողիկոսը, վոր, ինչպես տեսանք վերեւում, 40 հազարի յեր հասցնում եր ձեռքի տակ յեղած զորքերի թիվը և խոստանում եր մինչև իսկ 100 հազար դարձնել այդ թիվը, մինչդեռ իր զրած պատմության մեջ 12 հազարից ավել չեր ցույց տալիս այդ թիվը: Արդեն տեսանք, վոր Պետրոս դի Սարգիս Գիլանենցը «հայոց ակարի» թիվը համարում ե, ըստ լրո, 60 հազար և անշուշտ իր այս

1) ԵԶՕՑ, շ. 367.

2) «Դավիթ բեկ», յեր. 76—78.

1) Անդ, յեր. 28.

թվանշանով աղբյուր և ծառայել սուս Յուտկավին, վոր արդեն
միայն Դավիթ բեկի զորքը հաշվում է 60 հազար¹⁾:

Պետք է թողնել այդ չափազանցությունները: Մշտական և
անփոփոխ թվանշաններ չպետք է ել վորոնել քանի վոր մշտական
զորք առհասարակ չեւ ունեցել մելիքական Ղարաբաղը, չեւ ունեցել
մանավանդ և Սղնախների ժամանակ: Յեղել են միայն զինված
մարդիկ, վորոնք միաժամանակ թե՛ յերկրագործ գյուղացիներ են
յեղել, թե՛ կովողներ: Զորաժողով յեղել և ամեն հարկավոր դեպ-
քում, բայց մշտական խոշոր զորամասերի կուտակումներ չեն յե-
ղել և չեյին ել կարող լինել քանի վոր դրա համար հարկավոր
եյին հատուկ հիմնարկություններ և զրամական խոշոր միջոցներ:
Զորքերի դասավորման իբրև հիմնական պահանջ ծառայում եր
տեղայնությունը: Ստեփանոս Շահումյանի ցուցակը լավ պատ-
կերացնում է զորքերի զորքան մանր մասերով արոհված լինելու
ըստ գավառակների և նույնիսկ ըստ դյուղերի: Հյուսիսային Ղա-
րաբաղում այդ մանրացումն այնքան շատ եր, վոր Յեսայի կա-
թողիկոսն իր համհարդներով Պետրոսին զրած իր այս վերջին նա-
մակում չեր կարողանում ասել, թե վորքան զինվոր ունի, այնքան
ցաք ու ցրիվ եյին զրամասերը: Խոշոր կուտակումների բացա-
կայության խոշոր ապացույց ե այն, վոր չեն մնացել խոշոր բա-
նակետեղերի հետքեր, վոչ ձմերոցների և այլ հանրակացարանների
վոչ միայն նշաններ, այլև ավանդական ցուցմուքներ: Ամեն ինչ
տարվում եր հին կարգով: Դավիթ-բեկի հոչակավոր Հալիձոր բեր-
դը, վոր վորպես թե 70 հազար ոսմանցիներ եյին պաշարել արտա-
կարդ մի յերեսություն չեր ներայացնում այն «արծվի բույների» մեջ՝
վորոնք լեռնային իշխողների բերդերն են ներկայացնում:

Յեկ այսպես, չափազանց դժվար ե վորոշել և ճշտել հայ դին-
վորության մշտական թիվը: Միակ միջոցն է այդ ուղղությամբ
վորեն համկացողություն կազմելու համար վերապահումներով հան-
դերձ նկատի առնել Շահումյանի ցուցակը վորպես հավանական
և յերկրի պատմական աշխարհագրական պայմաններին ել համա-
պատասխանող տեղեկություններ, ըստ վորոնց Ղափանի հայ զին-
վորության ընդհանուր թիվը հասնում եր 7000-ի: Այդքան ել
կամ զրանից քիչ ավել կարելի յեր հաշվել հյուսիսային Սղնախ-
ների զորքերի թիվը, ընդամենն, ուրեմն, 15—16 հազար, մի քա-
նակություն, վոր կարելի կլինել մեծացնել ծայրահեղ դեպքե-
րում, յեթե զենքի և ռազմամթերքի պակասություն չիներ:

1) Եղիկով, I, с. 31.

Զորքի այս մանր տեղային խմբերով տեղավորման սխտեմը
միանգամայն համապատասխանում եր պատերազմի այն յեղանա-
կին, վոր մղում եր նա: Այդ՝ լեռնային մանր պատերազմն եր,
վոր մեծ զորքաժինների կուտակում չե պահանջում, վոր յերկար
հակատների վրա չի վարվում և բարդ պատրաստությունների,
հերժուրված շարժումների կարոտություն չունի: Այլ մի պատե-
րազմ ե այդ, վորի մեջ ամեն ինչ վճռողը շեշտակի և անակնկալ
հարձակումն ե, բաղիսման ուժգությունը, տեղազրական հարմա-
րությունների և անհարմարությունների արագ ոգտագործումը,
մի խոսքով այն ամենը, ինչ լեռնցի մարդն ստանում է իր բնու-
թյունից՝ գիշատիչ լինելու համար: Մենք ունինք միայն զափան-
ցիների մղած պատերազմների համառոտ նկարագրությունները, և
նրանք մեր առջև հենց այս տեսակ պատերազմների տեսարանն
են ծավալում: Ուրիշ կերպ չեր կոփմն, իհարկե, և Հյուսիսային
Ղարաբաղում: Յերկու տեղերում հայ կովողները միենույն տեսակ
հանգամանքների առջև եյին կանգնած: Մինչև 1724 թվականը
նրանց առջև բացված եր ռազմական ներքին ճակատ. ներքին
այն պատճառով, վոր իրար դեմ կանգնած եյին միենույն յերկրի
զավակները՝ իրար ջնջելու համար, ինչպես ընորոշեցինք վերեռում:
Բավականանանք մի տեսարան բերելով փոխազարձ բնաջնջման
ճակատից:

«Բայց Սափի Ղուլին, — ասում ե Դավիթ բեկի պատմությունը, — զգիւղօ-
րեսն թուրքաց, որք էին ի Լեազու ձորն, խաղացուցանէ ի յօրդուվար. և մնա-
ցին միայն չորք գիւղը թուրքաց ի կողման Արձանաքարին:

«Եւ հրամայեաց Պապ երթալ կոտորել զնոսա. և եկին հարին զերիս
գիւղուն, և ի յաւարապոին զինչո նոցա: Եւ ի թաղամեր աւանին էր վաթսուն տուն
թուրքաց, սոքա եկին, լացին, զաղաղակ բարձին առ զօրականուն հայոց և ասեն.
մեր ըստ ամենային ամենային կերպին հնազանդեմք ձեզ. և խնայեցին ի նոսա:

«Յետ այսորեկ, իբրև մի ամիս կամ երկու ի վերայ անցանէր, Սափի Ղու-
լին առնոյը ընդ իւր ի յօրդուարայ արս հինդ հարիւր, և ի գիշերի միում զայը
հարկանէր զերկու զիւզո հայոց ի Սայդուն, զարսն կոտորեր և զկին և զորպիս
նոցա զերի վարէր ի յօրդուվար:

«Իսկ Դավիթ բէգն իբրև լուր, զՄխիրար սպարապետն իւր յառաջ կոչէր,
հրաման տայր նմա երթս և ստակել զնոյն վերոյ սասցեալ վաթսուն տունն ի
թաղամեր, և նա արար այնպէս»¹⁾):

1724 թվականի սկզբից դրությունը փոխվում եր: Ներքին
ճակատի վրա ավելանում եր արտաքին ճակատը, վոր բաց եր
տնում ոսմանյան խոշոր բանակն իր ընդհանուր արշավանքով
դեպի պարսկական յերկիրները: Այս մի պատասխան եր ընդդեմ

1) «Դավիթ բէգ», յեր. 19—20.

1723թ. սեպտեմբերին Պետրոսի և Իզմայիլ-բեկի մեջ կնքված դաշնազրության: Վերցնելով, ըստ այդ դաշնազրության, կասպիական քաղաքներն ու մարգերը, Պետրոսը դիվանագիտական բանակցություններ եր սկսում, նույն 1723 թվականին, ոսմանյան կառավարության հետ՝ վորոշելու համար սահմանները Ռուսաստանի, Թյուրքիայի և Պարսկաստանի մեջ: Այս բանակցությունները յերկարաձգվեցին և գարձան Պարսկաստանի բաժանում Ռուսաստանի և Թյուրքիայի միջև: Թյուրքիան մեծ հողամասեր եր պահանջում ճյուսիսային Պարսկաստանում (Այս գովկաս), նույնպես և Աստրապատականի մեծագույն մասը Թավրիզ քաղաքով մինչև Համադան: Այս պահանջները զինական ուժով իրականացնելու համար Թյուրքիան ընդարձակ պատերազմական գործողությունների յեր ձեռնարկում մի քանի ճակատներով: Ճյուսիսային ճակատն սկսվում եր արդեն գրավված Վրաստանից և ուներ իր առջև մի խոշոր խնդիր — Յերևանի առումը, վորից հետո արշավանքը պիտի մտներ Աստրապատական: Այս ճակատի հրամանատարն եր Քոփրուլու Աբդալլահի փաշան:

Մարտ ամսին Արդարական փաշայի առաջապահ գնդերը հասան Եղիվարդ գյուղին, ուր նրանք ընդհարվեցին Յերևանի Մեմրակի խանի գորքերի հետ, ջարդեցին ու փախցրին նրանց ու իրանք շարժվեցին զեպի Յերևան, վորի բերդում փակվել եր պարտված պարսիկ խանը: Սակայն այս շարժման մեջ ոսմանցիները հանդիպեցին մի անակնկալ և անսովոր արգելքի: — Կարբի հայ գյուղաքաղաքն եր այդ, վոր զինված դիմադրություն ցույց տվեց թյուրք գորքերին, վորոնք ստիպված յեղան կանգ առնել և պաշարել նրան: Այնքան անսովոր եր այս փաստը, վոր նույնիսկ Արդարական փաշան գարմացել եր և ասում եր կարբեցիներին: «Զիկայ ձեզ զինուորիլ վասն երկրիս, որոյ տէրութիւն ոչ է ձեր»¹⁾: Այս, իրավ վոր, հետաքննական մի հարց եր, վորի պատասխանը մեզ բացորոշ կերպով չեն տալիս ժամանակակից աղբյուրները, բայց վորի բացատրությունը կարելի յե գտնել մի շարք նկատառումների միջոցով:

Նախ ի՞նչ եր ինքը կարբին: Վեց հազար բնակիչ ունեցող մի գյուղաքաղաք, վոր աչքի ընկնող մի առեւրական կենտրոն եր, ուր խոջայական կապիտալն ուներ խոշոր կուտակումներ: Այս

¹⁾ Աբրահամ Երևանցի — «Պատմութիւն պատերազմացն, որք յօսմանցւոց ի վերայ քաղաքացն հայաստանեաց և Պարսից, յետ գումարելոյ Մահմուտ սուլթանին Աղվանից ի վերայ արքային Պարսից Շահ-Սուլտան Հիւսէ: — Զեռագիր մենետիկի Միթարեան գանքում:

Հանգամանքը կապում եր Կարբիի բուրժուազիան Յերևանի առեւրական բուրժուազիայի հետ և այսպիսով կազմում եր նրա հետ մի աշխարհ, վոր իր դասակարգացին բնույթով յենթարկված եր ժամանակի հայ ազատազրական շարժման խիստ ազդեցության, հետևաբար ներկայացնում եր մի տեսակ առաջապահ պահակ Դարադաղի հայ զինվորության՝ արևմտյան ճակատի վրա: Վոր հայ Սղնախները հմայք ունեցին Դարարաղի սահմաններից դուրս ել, այս մասին մենք պերճախոս ազացույցներ ունինք Պետրոս զինապրիս Գիլանենցի ժամանակադրության մեջ: Եջմիածնի կաթողիկոս մաերմական հարաբերություններ ուներ «հայոց ասկյարի» հետ և այս՝ անշուշտ վոչ առանց Յերևանի «մեծամեծների» դիտության: Հիշենք և այն, վոր Թիֆլիսի առաջնորդ Մինաս վարդապետ Փարվեզյանը չեր թագցնում, թե ոռւսական արշավանքի մի խողիրն ել պիտի լինի Յերևանի առումը և այս առիթով նա նույնիսկ խորհրդակցություն և ունեցել ոռւսական գեսպան Տոլստոյի հետ:

Այս բոլորը ցույց եւ տալիս, վոր հայ ազատազրական ծրագրի մեջ Յերևանը վերջին տեղը չեր գրավում: Հասկանալի յե, ուրիմն, թե ինչն եր զրդում Կարբիի խոջաներին զինվել արագորեն, ամրացնել իրանց գյուղաքաղաքը և մերժել Արդարական փաշայի առաջարկությունն՝ անձնատուր լինելու մասին: Բայց բանը կովի չհասավ: Կարբեցիները ժամանակին հասկացան, թե ինչ կնշանակի կովի բոնվելը մի այդքան ահոելի ույժի հետ և անձնատրության բանակցություն սկսեցին. Թյուրք հրամանատարը զինաթափ արակ գյուղաքաղաքը, փոխարենը թույլ չտվեց իր զորքին կողոպուտներ կատարել:

Իսկ Յերևանի հայությունը գարձրեց իրան պատերազմող կողմից և ծագալեց գործունեյության մի յեղանակ, վոր չեր կարող հեղակարծ, հանպատրաստից պայթած համարվել, այլ կրում եր վաղորոք պատերազմական գործողությունների պատրաստված յիղած լինելու նշանները: Պատերազմը լոկ հայերի և ոսմանցիների մեջ եր: Պարսիկ խանն իր զորքով փակված մնաց միջնարերդում, տեղական թյուրք ազգաբնակությունն ել հեռու պահեց իրան մասնակցությունից: Հայերի զինակից հանդիսացան միայն կոնդ թաղի բոշաները: Մի կարճ միջոցում կազմակերպվում ե մի ամբողջ բանկ, բաղկացած ինն հաղարից ավելի մարգկանցից, Կաղմակերպողներն ենին Յերևանի հարուստ հայերն ու բոշաները, ասել ե՝ խոջայական կապիտալը: Ամեն մենք մի քանի հարյուր հոգի յեր պատրաստում, զինվորագրելով վոչ միայն քաղաքացիներին, այլ

մանավանդ և մոտիկ գյուղերի մարդկանց։ Դեկավարում եր մի վորս Գրիգոր վարդապետ, վոր ապրում եր Զորագեղ թաղի ս. Սարդարի վանքում։ Թե ինչ ներքին բովանդակություն ուներ յերեանցիների այս մեծ ձեռնարկությունը, թե ինչի համար եր այս պատերազմը և թե վորտեղից վերցվեցին ռազմական հրահանգիներն ու հրամանատարները, — մենք, տարաբախտաբար, չգիտենք։ Մեր միակ աղրյուրը¹⁾ դնում ե մեր առջև միայն մի արագ ու հեշտ պատրաստված պատերազմի պատմությունը և մենք միայն գործն ենք տեսնում, առանց իմանալու նրա ներքին շարժիչ թերը։

Իսկ գործը շատ լուրջ ու ծանր եր — մի անփորձ ժողովրդական դանդաղի պատերազմ ոսմանյան փորձված և ամեն տեղ ահարկու հանդիսացած կանոնավոր բանակի դեմ։ Արդուլլահ փաշան հանդիպում եր ամենայեռանդուն, տոկուն դիմադրության և յերկար ժամանակ չեր կարողանում վերցնել քաղաքը։ Տեղի ունեցան արյունահեղ ճակատամարտեր, յերկու կողմից սպանվեցին հազարավոր մարդիկ։ Հայ-բոշայական հերոսությունն ակնհայտ եր։ Բայց վերջը։ Այս ել ակնհայտ պիտի լիներ այն գլխից։ Թյուրքիան ահազին քանակությամբ (38 հազար) ոգնական զորք կուտակեց Յերեանի շուրջը։ Դրա մի խոշոր մասը Սարբ-Մուսաֆա փաշայի բանակն եր, վորի հատուկ պաշտոնն եր գրավել Գանձակն ու Ղարաբաղը և ամրող տարածությունը մինչև ոռւսական սահմանը։ Մի ամրող որ տեսած կատաղի պատերազմից հետո Յերեանն ընկնում եր ոսմանցիների ձեռքը (1724 թ. հունիսի 7-ին)։ Հետո, իհարկե, սովորական աղետը — ավեր ու թալան, մեծ քանակությամբ գերիներ քշվում եյին սորկավաճառանցները։ Կ. Պոլսի Հակոբ Կոլոս պատրիարքի դիմումով եր, վոր թյուրք կառավարությունն արգելեց հայ գերիների վաճառումը²⁾։

Մինդեռ այսպես հողոտվում եր Պարսկաստանը, ոռւս-թյուրքական բանակցությունները նոր սահմանորոշումների առիթով շարունակվում եյին նախկին թափով, և Թյուրքիան ինչպես վոր յեռանդով վարում եր պատերազմական գործողությունները, այնքան ել համառ ու խստապահանջ եր այդ բանակցությունների մեջ։ Բանակցող կողմերի շահերը շատ եյին հակամարտ, հաշտեցնել նրանց հաճախ այնքան դժվար եր, վոր պատերազմը ոռւսների և թյուրքերի մեջ համարվում եր անխուսափելի։ Բայց Պետրոսը վճռել եր չպատերազմել, և Կ. Պոլսի Փրանսիական դեսպանն իր

միջնորդություններով վերացրեց պատերազմի վտանգը¹⁾։ Յերկար ու բարակ վեճերի առարկա դարձավ մանավանդ Կովկասի մեջ գծվելիք սահմանների հարցը։ Դաշնագրի սեւագրությունը փոփոխվեց բազմաթիվ անդամ, մինչև վոր, վերջապես, 1724-ի հունիսի 12-ին, այսինքն Յերեանի գրավումից հինգ որ հետո, Ռուսաստանի և Թյուրքիայի մեջ ստորագրվեց մի դաշնադրություն, վոր հետեւյալ վորոշումներն եր սահմանում։

Շամախին մնում ե սուլթանի վասար բեկի տիրապետության տակ։ Տարածությունը Շամախուց մինչև Կասպից ծովը ուղիղ գծով բաժանվում եր յերեք հավասար մասի, վորոնցից յերեկուաը, Կասպից ծովին կից գտնվողները, պատկանում են Ռուսաստանին, իսկ յերրորդը, վոր Շամախուն և կցված, կլինի Դուռողի իշխանության տակ, այսինքն կգտնվի Թյուրքիայի բարձրագույն իշխանության ներքո։ Դերբենտից գեպի յերկրի ներսը 22 ժամ ճանապարհի վրա նշան կտնկվի։ այս նշանից ուրիշ գիծ ե տարգում գեպի հարավ, գեպի այն տեղը, ուր, վերեւում հիշատակված յեղանակով, կորոշվի սահմանագիծ ոռւսական հողերի և Շամախու նահանգի մեջ։ Այն հողերը, վորոնք այդ գծի աջ կողմեն գտնվում, դեպի յերկրի ներսը, կպատկանեն Թյուրքիային, իսկ վորոնք ձախ կողմն, ծովի ուղղությամբ, կպատկանեն Ռուսաստանին։ Վերջապես այնտեղից, վոր Շամախու և ոռւսաց սահմանագլուխն ե կազմում, տարգում ե ուղիղ գիծ մինչև այնտեղ, ուր խառնվում են Կուր և Արաքս գետերը, այստեղ կլինի սահմանը Ռուսաստանի, Թյուրքիայի և Պարսկաստանի մեջ։ Շամախին չպիտի ամրացվի և նրա մեջ չպիտի լինի թյուրքական կայագոր. բացառությամբ այն գեպքերի, յերբ այնտեղի տիրապետողը կընդիմանա սուլթանի իշխանության կամ թե խոռվություն կծագե բնակիչների մեջ. բայց այս գեպքերում ել թյուրքական գորքերը, նաև գան կուր գետն անցնելը, պիտի իմաց տան ոռւսաց հրամանատարներին, իսկ խոռվությունները հանգստացնելուց հետո, ոսմանյան զորքերից մի հատ մարդ ել չպիտի մնա Շամախում։ Համայն ոռւսաց կայսրը խոստանում ե համաձայնեցնել Շահ Թահմազին, վոր նա զիջե Թյուրքիային այն բոլոր տեղերը, վորոնք գրավված են Թյուրքական զորքերով, իսկ յեթե Շահը չկամենա Ռուսաստանին և Թյուրքիային զիջել նրանց վերցրած նահանգները, այն ժամանակ Ռուսաստանը և Թյուրքիան գործում են նրա գեմ միահամուռ²⁾։

1) Արբահամ Երեանցի, ա. անդ.

2) Այվազովսքի - «Պատմ. Օսմանեան», 2-րդ հատ. եր. 173.

1) Անդ յեր. 172.

2) С. Соловьев «История России» т. 18, М. 1868, с. 73.

Դեռ մի տարի ել չեր անցել Պետերբուրգում Իզմայիլ-բեկի հետ կնքված դաշնագրից, վորով Պետրոսը պարտավորվել եր պաշտպանել Պասկաստանի ամբողջությունը Շահ-Թահմազի իշխանության տակ, և ահա այժմ վաճառում եր նա իր այդ պաշտպանյալին ամենաստոր կերպով, առանց նրա գիտության, Թյուրքիային, Ռուսաստանի հինավուրց վախերիմ թշնամուն, կնքելով վերջինիս հետ նույն խակ հարձակողական դաշնակցություն Պասկաստանի գեմ: Իմպերիալիստական սրիկայության այս բարձր տեսակի քաջագործության դիմաց համեմատաբար անմեղ բաներ եյին այն յերկու սրիկայությունները, վոր Ռուսաստանի «մեծ» կայսրը գործադրում եր Վրաստանի և Հայաստանի վերաբերմամբ: Յերկուսին ել ամենայն հանդիսավորությամբ խոստացել եր ազատություն ի սեր քրիստոնեյության, յերկուսն ել այժմ, հունիսի 12-ի դաշնագրությամբ, մտնում եյին այն հողերի մեջ, վորոնք պիտի պատկանեյին Թյուրքիային: Վախթանգը, տեղյակ լինելով այս գիշանագիտական վաճառքին, այլ ևս անհույս կորած համարելով Վրաստանի ազատագրության գործը, թույլտվություն խնդրեց Պետրոսից բնակություն հաստատելու Ռուսաստանում, և ստանալով այդ թույլտվությունը, 1400 մարդկանց հետ զաղթեց Աստրախան:

Ուրիշ եր հայերի բանը: Յեթե Հայաստանը հարկավոր չեր Պետրոսին, հայերն անպատճառ հարկավոր եյին նրան: Մենք ար դեն մասամբ մտցրել ենք ընթերցողին նրա խսկական դիտավորության մեջ: Հունիսի 12-ի դաշնագրությունը նրան լավագույն միջոցն եր տալիս «ազատելուք հայերին, բայց վոչ թե Ղարաբաղի լեռներում, վորոնք արդեն ոսմանցիներին եյին պատկանում, այլ Գիլանի և Մազանդարանի վատառողջ, ճահճուտ դաշտերում: Հունիսի 12-ի դաշնագրությունը, Պետրոսի ըմբռնողությամբ, հեշտացնում եր, իբրև անխուսափելի յելք հայերի, համար, ամբողջ Ղարաբաղի գաղթեցումը Պարսկաստանից նոր խլած յերկիրները:

Յեզ նա շտապեց իրագործել այդ գաղթեցումը: Ագոստոս՝ ամսին բրիգանիր Ռումյանցիլը տանում եր սաորագրությամբ վավերացրած ոռություրքական դաշնագիրը կ. Պոլիս: Նրան հանձնարարվում եր համոզել հայերին, վոր սրանք գաղթեն կասպիական յերկիրները: Պետրոսը խոստանում եր, վոր յեթե գաղթողների թիվը մեծ լինի, նրանց կարվեն նաև այն հողերը, վորոնց վրա ապրում են պարսիկներ, հեռացնելով վերջիններիս ուրիշ տեղեր¹⁾: Բայց

համոզման միջոցով անկարելի յեր զաղթականության պես մի աղետալի ժողովրդական շարժում գլուխ ըերեւ: Պետք եր հարկադրական միջոցներ վորոնել, և Պետրոսը, գործելով այս ուղղությամբ, չեր կանգ առնում նույնիսկ կեղծարարի սրիկայության առաջ:

Վերևում մենք տեսանք, վոր Յեսայի կաթողիկոսը զեռ 1723 թվի յերկրորդ կեսում, բավական չհամարելով թղթով գիմումներ անելը ոռուսց կառավարության, հայ զինվորության կողմից յերեք հոգուց բաղկացած մի պատվիրականություն ել ուղարկեց Պետերբուրգ, վորպեսզի բերանացի կրկնե ոգնական զորք ուղարկելու խնդիրքը: Այս պատգամավորությունը, վոր բաղկացած եր յերկու քահանայից—շամախեցի տեր Անտոն Առաքելյանից և Ղարաբաղեցի Տեր Պետրոսից և մի հատ ել աշխարհականից, վորի իսկական անունը հայտնի չե և կրում եր Քելիխա-Զալարի մականունը, յերկար ժամանակ, ամիսներով, Աստրախանում սպասում եր թույլտվության՝ Պետերբուրգ գնալու համար: 1724-ի հունիսի 4-ին Անտոն քահանան գրում եր Մոսկվա Մինսա վարդապետին: «Խեղճ եմք, մեզի ուղել տուր, յա ոռուսիաթ տան գնամք: Աստուծու սիրուն, այն խալիս մեզ են մտիկ տալիս. մեզ ուղել տուր շատ առանձնակի բաներ կա. այլ ինչ ասեմ, մեք խեղճ եմք, հալբաթ և հալբաթ մեզ մեկ ճար անես»¹⁾: Այսքան արդեն անկարելոր եր համարվում Աստրախանում ընկած այդ հայկական պատվիրակությունը: Բայց աշնան, անշուշտ ոռուս-թյուրքական դաշնադրության հետևանքով, ուշադրության և առնվում նա և հրավիրվում է Պետերբուրգ: Նոյեմբերի 5-ին պատվիրակները հարց ու փորձի յին յենթարկվում արտաքին գործերի մինիստրության մեջ, և Անտոն քահանան անում ե մի քանի հայտարարություններ, վորոնք սաստիկ պիտի գրգույին Պետրոսի իմպերիալիստական-վաճառականական ախորժակը: Իսկական Ղարաբաղում, ասում եր սա, հայ ազգարնակության թիվն ե հազար տուն, իսկ Ղափանը, վոր միացած է Ղարաբաղի հետ, ավելի մեծ հայ ազգարնակություն ունի: Ղափանի հայերը մեծագույն մասամբ վաճառականներ են, իսկ Ղարաբաղի հայերը լավ գիտեն շերամապահություն:

Այս քահանային արդեն կաշառել եր ոռուսց արքունիքը, վորի թելագրությամբ ել մտցնում եր իր հայտարարությունների մեջ հետեւյալ կետերը.

¹⁾ Бутков, I, с. 67.

¹⁾ Էզօն, с. 369.

«Հ. Յեթե նորին կայսերական մեծությունը չի բարեհաճի հայերին ոգնեցրու համար զորք ուղարկել, այս դեպքում նրանք (հայերը) խնդրում են, վոր նորին կայսերական մեծությունը բարեհաճե նրանց իր հովանավորության տակ վերցնել և հրամայել նրանց համար բնակության անդեմ նշանակել Կոռպութից ծովի մոտ, Գլխանում, Սալլյանում, Բագվի մոտ և Դերբենում, վրովհետեւ նրանք, հայերը, բարորովին չեն ուղարկ այլև լինել մահմեդական լուծի տակ, թեև նրանց թե՛ Շահ-Թամարը և թե՛ թյուրբական իրահիմ փաշան Գանձակից (յերը նա այնտեղ եր) իրանց նամակներով կանչում ելին ամեն մեկն իր կողմը հուսաղբերով թե՛ կատանան ամեն տեսակ ազատություններ, բայց նրանք (հայերը) այդ բանին համաձայնություն չտվին, իմանալով նրանց փոփոխամությունը, ուստի իրանց հավատի համար ուղարկ ևն լինել քրիստոնյա թագավորի հովանավորության տակ: Յեթե նորին կայսերական մեծությունը կրաքեհաճե հայերին իր հովանավորության տակ այնել և տակ առնել և տակ նրանց բնակության համար հողեր վերոհիշյալ վայրերում, այն ժամանակ թող նա այդ մասին անհապաղ հուսաղբական հրովարտակ ուղարկե մի հատուկ սուրհանդակով, վորպեսզի հայերը, այդ հրովարտակն ստանալուց հետո, կարող լինելին վողորդք, քանի վոր թշնամին դեռ նրանց չե տիրել կամ զնալու ճանապարհները չեն փակվել, դուրս գալով Դարաբաղի նահանգից, իրանց ընամանիքներով գնան հիշատակված տեղերը... 6) Դարաբաղից դեպի Կասովից ծովը զնալու համար հայերը չունին վոչ մի վասնգ, և կարող են ազատ, մի կողմ թողնելով սարերը, զնալ Սալլյան, մինչեւ ուր նրանց Աղնախներից չորս որվա ճանապարհ և ձիռվ, իսկ ամբողջ ժողովուրդը մինչեւ Աղնախն կդնա վեց որում, քանի վոր այդ անապարհը հարթ և և չոր 7) Իսկ յերը նոր և կայսեր ական մեծություն և բարեհաճե վերցնել Շամախին և այնտեղ ոռւսական զորքեր պահել, այն ժամանակ հայերը Դարաբաղի նահանգից գեղի Կասովից ծովը զնալ կարող ելին առանց վորեկ յերկյուղ ունենալու լեզզիներից, 8) Հիշյալ տեղերում բնակվելու համար այերը նորին կայսերական մեծությունից վոչ մի ոժանդակություն չեն պահանջում, իրանք իրանց ծախսով կանեն ամեն ինչ, միայն խնդրում են, վոր նորին կայսերական մեծության վողորմածությամբ բնակության համար արքին հարմար հողեր, վորպեսզի նրանք կարողանան կերակրել իրանց, իսկ յեթե բնակություն հաստատելու ժամանակ մեկը մի կարիք կունենա, այդ ժամանակ կենդզի նորին կայսերական մեծության ոգնությունը: 10) Յերկանի մոտ ապրող հայոց առաջին Արարատյան կաթողիկոսը և այնտեղի հայերը (վարոնք թվով շատ պակաս են Դարաբաղի նահանգի հայերից), թեև Դարաբաղի հայերի հետ, հոռավորության պատճառով, հաջորդակցության մեջ չեն յեղել դեռ ևս, սակայն նույն Արարատյան կաթողիկոսը հաճախ նամակներ և ուղարկում Դարաբաղ, Յեսայի կաթողիկոսին, հուսաղբերով թե ինքն ել համաձայն և նըտէ¹⁾:

Այս մի ամբողջ ծրագիր եր, պատրաստված ոռւսական դիվանատան մեջ և սակայն դրված կիսագրագետ քահանայի բերանում, իբրև Դարաբաղի լեռներից բերված աղաչանք: Այդ ժողովուրդը, հարյուր հազարներից բաղկացած, իբր թե իրան զոհ եր բերան Պետրոսին, գնում եր այնտեղ, ուր նա յեր կամհնում, ամեն ծախս եր վրա վերցրած, անձնատուր՝ առանց վորեւե պայմանի, միան-

¹⁾ ԷՅՕՅ, Ը. 387—383.

դամային հլու և անխոս հպատակ նրա ամեն մի կամեցողության: Այս ազատություն եր Քրիստոսի սիրուն: Յեթ այս տմարդի պայշմանների մեջ և ահա, վար իր ամրող հասակով նկարվում եր Պետրոսն իբրև «Փրկիչ», փրկիչ իրան ակնկալող, իր վրա աղոթող խեղճ ու նկուն ժողովրդների:

Մենք դիտենք նաև, թե ինչ բարիքների ակնկալությամբ եր, վոր Աղնախների յերեք պատվիրակները համաձայնեցին դնել իրանց ստորագրությունները Պետրոսի կառավարության կատարած այս անպատճիվ խարդախության տակ: Յերկու քահանաները շահաղիտական սպասելիքներ ունեյին: Անտոն քահանան արարքի գլխավորն եր և չաղ քահանայարաժին եր ուղում իր համար — ոգնություն, վոր ինքը Շամախուց տեղափոխվել Դերբենտ, խոստանում եր գաղթեցնել իր հետ Շամախու ծուխը, բազկացած 50 ընտանիքից: Դերբենտում նրան սպասում եր փառավոր կացություն, վորովհետև այնտեղ արգեն կային 200 տուն հայ գաղթականներ, վորոնք պիտի նրա ծուխը գառնային: Պետրոս քահանան խնդրում եր Ղարալա գավառի հայ ազգաբնակության մասին, վոր նա առնվի ոռւսական հովանավորության տակ: Իսկ Քաղիսա Զալարին մի թշվառ հայր եր. նրա ամբողջ ընտանիքը գերի եյին տարել լեզզիները. մի առ մի նա պատմում եր, թե այժմ ում մոտ և ինչ տեղերում եյին գտնվում նրա տղաներն ու աղջիկները, արտասվագին աղաչում եր, վոր հրամաններ տրվեն այդ գերիներին նրանց տերերից խելու համար:

Այս խարդախության վրա հիմնվելով Պետրոսն ուղղեց հայ ժողովրդին հետեւյալ հրովարտակը.

«Աստուծո վողորմությամբն մեք Աստաջին Պետր ինքրայթոռ, ինքնակալ ամենայն հուստափի յերկը և այլ տեղյաց:

«Պատվելի կաթողիկոս Յեսայուդ և պատվելի ուղպաշաց Ավանիդ և Միքաղի և ամենայն այլոց պատվական ուղպաշացդ և գլխավորացդ, և ամենայն պատվական հայոց ասկիդ մեր ինքրայթորության վողորմությամբ շատ բարեկ հասցե:

«Հայտնի լիցի ձեզ վոր ես մեր վողորմության զիր ա, վոր մեր ձեր ուղարկած Տեր Անտոնին և Քեֆիսյա Զալարուն իսե ա, վոր ձեր խոնարհությամբ վողորմության խնդրվածքին զիրն մեղ հասել ա. և սուքա ել բերանով ամենայն ջաթան ձեր խնդրին խնդրիք արին վոր մեք ձեր տանովն և խիզանով և ձեր ունաղության մեջ և բարձր ինքրայթորության վողորմության համամատած տակաւն լինեք, վոր ձեր կալե համար և ձեր զնջություն, առանց նեղության վոր գեք և կենաք, մեր առած նոր պարսից յերկումներ, որ Գիլանա ծուվին վերեն ա, վորն որ ձեր խավանած տեղն լինի, մեք հրաման տանք վոր գուք տեղն ձեր զնջությամբ ավաղանի ցցեք և կեք և ըրբություներության հաւատն զուք առանց այլ և յերկյուղի պախեք. և մեք պատվական հայոց ասկիդ վասն քրիստոնեյության ուղարկել մեք վողորմությամբն կը

պախամանք. եղ ջաթ տան մեր ձեր ես ինըրվածքին ամենայն վողումությամբ հրամայեցինք. և պիտանի տեղն մեր հրամանաց գիրն ուղարկեցինք, վոր նոր յերկըն մեր... մեծավորաց վերայ, վոր Պարսիցն առել անք, վոր նորա ձեղ Դիլան և Մազանդարան և Բաքու, և այլ ինչ տեղ որ ձեզ ընդունելի լինի, ինչ վախտ վոր ձեզանից ով վոր տեղերն կը գնա, չե թէ միայն ընդունեն և ձեր կալե և շինության ավագանի առել ե. ձեր խովանած պեթկական տեղաբերն նշանց տան ձեղ և մենայն ջաթտան վողորմությամբ պիտի զձեղ պախեն առանց մնաս. և վոր դուք մեր վողորմության ամենայն հրամանն և ամենայն ժամ և առավել կը հավասարեք և ել իվելի ումիզով կենեք. ես ջաթտան չե թէ միայն ինքրայթոռության հրամանագիրն ձեղ ուղարկեցինք, մեր ձեր ուղարկած մարդիքն ել ես ժամանակում դար ձեղ յետ ուղարկեցինք և ինչպիս վոր մեր վողորմություն, վոր առ զձեղ ունինք, ալ իվելի դոքա լեզվով ձեղ կու պահեն և հավատով կու լինեք, վոր դոքա հրաման ունեն ձեղ առելի. և վոր դուք կարելի յեր դոցա թամաժ հավատալի, ջաթտան հավատով սրդում տալի. և մենք մեր ինքրայթոռության մեծ վողորմությամբն Աստուծով առ ձեղ ունիմք¹⁾.

Միաժամանակ սկսվում եր մի յեռանդուն գրագրություն ոռւսական այս ձեռնարկության առիթով: Պետրոսը հրամաններ եր ուղարկում կասպիական յեղերքում գրավված բոլոր տեղերի զինվորական հրամանատարներին, վոր նրանք ընդունեն գաղթող հայերին, հողեր տան նրանց բնակության համար և առհասարակ աջակցեն նրանց ամեն կերպ: Գրագրությունների մի խոշոր մասը վերաբերվում եր Սղնախների յերեք պատգամավորներին, վորոնցից մեկի, այն և Պետրոս քահանայի տեղ այժմ յերեսում և մի վոմն Սիմոն Պոպով: Գլխավորներն են, ինարկե, նույն Անտոն քահանան և Քելլսա Զալարին, վորոնք այժմ դարձել են շատ կարսոր պետական մարդիկ: Պետրոսը, չնայած վոր հիվանդ եր, ընդունեց յերկուսին, հուսագրություններ արավ և հրամայեց նրանց իսկույն վերագառնալ Սղնախները և տանել իր հրովարտակը գաղթման մասին: Այս անգամ բազմաթիվ կտրուկ կարգադրություններ եյին անգում նրանց արագ և ապահով ճանապարհորդության մասին: Մի խոսքով, գործի յեր դրվում ամբողջ պետական մեքենան արագ ու հեշտ կերպով իրագործել տալու համար իբր թէ հայերի հայտնած ջերմեռանդ ցանկությունը Պարսկաստան գաղթելու մասին: Սուսուն, այնուամենայնիվ, բոլորովին չեր մնում չմերկացված Պետական կանցլերը նամակ եր գրում իվան կարապետին, վոր նա համոզե Յեսայի կաթողիկոսին և մյուս գլխավորներին գաղթել, հասկացնել թէ ինչ ոգուաներ ունի գաղթումը և այն²⁾, մինչեռ բոլորովին կարիք չեր լինի գործադրելու այդ միջոցները, յեթե հայերն իրանք լինելին գաղթելու ցանկություն հայտնած:

Բոլոր իր ձեռնարկած հնարների վրա Պետրոսն ավելացնում եր և գիվանագիտականը: Ահա մի ժամանակ ինչ եր նա գրում կ. Պոլիս դեսպան ուղարկված բրիգադիր Ռումինցովին:

«Եղ մոտ յեկան հայոց պատգամավորները խնդրելու մեր պաշտպանությունը թշնամիներից, իսկ յեթե այդ անկարելի յե, թույլ տալ նրանց գնալ ասպեկտ Պարսկաստանից մեր նոր ձեռք բերած նահանգներում: Մենք նրանց պատասխանեցինք թէ վորքով ոգնել նրանց չենք կարող՝ Բ. Դրան հետ կնքված դաշնագրի հետևանքով, իսկ գաղթել մեր մերձկասպիական մարզերը թաւուտարեցինք և մեր հուսագրատկուն հրովարտակն ուղարկեցինք: Յեթե թյուրքերը կը սկսեն խոսել մեղ հետ այդ մասին, պատասխանեցիք թէ մենք ինքնիրա հայերին չենք կանչել, այլ նրանք հավատակցության պատճառով խնդրեցին մեզ ընդունել իրանց, մեր հովանագործության տակ. մեզ, քրիստոնեյության պատճառով, հայերին, իբրև քրիստոնյաների, մերժել անկարելի յեր, ինչպես և ինքը վեղիը հաճախ հայտարարում եր, թէ հավատակցության պատճառով հովանագործություն խնդրով մերժել անկարելի յե. պետք և միայն նայել վոր հողերը պատկանեն նրան, վորի անունով նշանակված են գահնադրության մեջ, իսկ ժողովրդներին չպետք եր արգելել վոր նրանք այս կամ այն կողմն անցնեն: Բ. Դրան համար ավելի ձեռնոտ կը լինի, վոր հայերը դուրս գնան, վորդինետե նա այդ գեպքում ասանց զիմագրության կը տիրե նրանց հողերին Ավելացըրու, վոր յեթե Բ. Դուրս կը կամենա դիմի իր կողմը կանչել Պարսկաստանից մեր ձեռք բերած նահանգների մահմետականներին, այս բանին մենք հակառակ չենք լինի. յեթե գրավոր հուսագրություն պահանջեն, ավեքը³⁾:

Այսքան ջանք ու յեռանդ, այսքան փութկոտություն, ստություն, խարերայություն ու կեղտ ոռւսական մեծ կայսրը հարկադրված եր գործադրել, մտրակված այն հանգամանքից, վոր ավագակարար հավիշտակել եր Գիլանը, մի մեծ հարստություն, վոր այժմ պետք եր շահագործել: Գիլանը տարին 70 հազար փութմետաքս եր տալիս. ով պիտի հալաքեր, մեծացներ, շահավաճառության բարձր նյութ գարձներ այդ անհուն հունձը, տալով մրուսաստանին գրեթե մենավաճառի գիրք համաշխարհային շուրջայում: — Համենայն գեպս՝ վոչ ոռւսները: Ուրիշ պատճառ վոր չիներ, Գիլանի և Մազանդարանի ճահճային ողը մահարել եր նրանց համար և խոսք կար ժողովրդի մեջ, թէ միայն Ռաշտում, ոռւսական կայազորի մեջ, որեկան 30 մեռնողներ եյին լինում:

Մյուս կողմից ել ավագաների արշավանքը մինչև Սպահան մի խոշոր փլուզում եր առաջացըրել վոչ միայն Պարսկաստանի, այլև Առաջավոր Ասիայի տնաենության մեջ—նոր Զուղայի, իբրև հայ խոջայական կապիտալի կենտրոնավայրի վոչնչացում: Մենք իր տեղում կտեսնենք այդ տնտեսական աղետի հետևանքներն ու նշանակությունը. այստեղ միայն չմոռանանք, վոր Գիլանի և հարեւան ծովերյա մարզերի մետաքսի տերը հայ խոջան եր, և յերը

¹⁾ ՅՅՕՅ, Ը. 333 - 391.

²⁾ ՅՅՕՅ, Ը. 404.

նա այսոր այլես գրեթե բոլորովին չկար, այս նշանակում եր մահ մերձկասպյան մետաքսազործության համար, և Պետրոսին կմնար հարյուր ու մի խարդախությունների գնով միայն ավերակների տիրելու հաճույքը, յեթե նրան չաջողվեր վերակենդանացնել հայ խոջայական կապիտալն իր հափշտակած պարսկական մարդկերում: Իսկ այդպիսի անհրաժեշտություն նա ի կատար ածել եր մտածում ճիշտ այնպես, ինչպես այդ արել եր նրա պես մեծ բոնավոր-վերանորոգիչ Շահ-Արքասը մի դար և ավել դրանից առաջ, այն եւ հայ ժողովրդի խոշոր մասսայական գաղթեցման միջոցով: Պոկել ամբողջ Լեռնային Ղարաբաղը, շպրտել նրան Գիւլան, Մաղանդարան — այս մի ահոելի, հրեշտային ծրագիր եր, այս նշանակում եր հարյուր հազարներով անմեղ մարդիկ քշել տանել հետու-հետու իրանց ոջախներից, թե ինչ եւ նրանց մեջ դանվում են և շատ վաճառականներ, վարժ շերամապահներ: Բայց այսպես չե՞ր և Շահ-Արքասի զերեվարությունը: Հայ խոջայական կապիտալը, միակ ույժը, վոր մնացել եր հայ ժողովրդի մեջ նրա ապրած քաղաքական վիրուզումներից հետո, քշում տանում եր նրան յերկրից յերկիր, վորպեսզի բաժին ու ավար դառնա բոնակալ գիշտաիչների: Այս աղետալի տեսարանը կրկնող պիտի դառնար Պետրոս Մեծը, վոր ավելի հաշվագետ եր այս բանի մեջ իր նախորդից: Յեթե Շահ-Արքաս Մեծն ասում եր, թե յուրաքանչյուր հայի Սպահան հասցնելը իրան նստել ե 2 հազար թուման, Պետրոս Մեծն իրան այդպիսի ծախսերից ել եր ազատել, վորովհետև նա Գիւլանի 70 հազար փութ մետաքսի համար չեր իրը թե ծրագրում այդ գերեվարությունը, այլ լոկ Քրիստոսի սիրու համար, ուստի յուրաքանչյուր հայ պիտի իր հաշվով քարուքանդ և բնավեր դառնար: Արդար լինենք, սակայն: Պետրոսը դեռ 1722 թվին, հրահանգներ տալով գեներալ Մատյուշկինին հայերի գաղթը նախապատրաստելու և խրախուսելու մասին, հանձնարարում եր, իրք միջոց, մահմեղական ազդարնակության փչացումը գրավված նահանգներում: Այս ել, ինարկե, Քրիստոսի սիրու համար եր, և հայերն ինչպես պիտի չուղեցին իրանց հաշվով գնալ և այդպիսի «մաքրած-սրբած» տեղեր վայելել:

Յեկ այսպես, հայ խոջայական կապիտալը մի անգամ ել ոտար յերկրում ոտար գիշտատիչների կեր դառնալու համար, պիտի ահագին գանգվածներով տեղահան աներ հայ ժողովուրդը և տաներ նրան աննկարագրելի տանչանքներով յերկրից յերկիր: Յեկ յեթե այս անգամ տեղի չունեցավ այս դժբախտությունը, պատճառն այն ե, վոր մինչդեռ Շահ-Արքասն անձամբ եր պոկում Արքասի

ժայռերից և իր հետ տանում խոջայական կապիտալը, Պետրոս Մեծն այդքան կարգադրություններն անում եր մահվան անկող նում պառկած:

Նա մեռավ յերկու և կես ամսից հետո — 1725 թվի հունվարի 28-ին:

11.

Հունիսի 12-ի դաշնագրությունից հետո թյուրքիան սկսեց իրագործել իր իրավունքը, գրավելով պարսկական այն հողերը, գորոնք նրա բաժինն եյին ընկել Պետրոս Մեծի հետ կատարած հափշտակության միջոցով: Յերեանի գրավման հետևեց նախինի, Բորչալուի և այլ տեղերի գրավումը. թյուրքական բանակն այժմ կանգնած եր հայ գծի վրա, վոր կազմում են Գանձակը և Ղարաբաղը մինչև Արքասի հովիտը, այսինքն նույն այն գիծը, վորի վրա ամբացած եր հայ զինվորությունը Այս զինված ույժից եր այժմ կախված կամ թույլ տալ, վոր թյուրքական բանակն առանց արգելքի առաջանա մինչև Շամախի և Կասպիական ափերը կամ կանգնել նրա այդ ճանապարհի վրա, կտրել առաջիւազության հսարավորությունը: Առաջին գեպքում հայ զինվորությունը պիտի ոսմանցիների կողմը լիներ, յերկրորդ գեպքում՝ զինք հաներ նրանց գեմ: Պետք ե ասել, վոր իրանք ոսմանցիներ չեյին ուզում տեսնել հայերին դիմադրողի գիրքում և խաղաղ համաձայնության հետամուտ եյին, ուստի և զիմեցին եջմիածնի Աստվածառու Համադանցի կարողիկոսի միջնորդության: Շատ նշանակալից ե վերջինիս մի նամակը Գանձասարի Յեսայի կաթողիկոսին այս ասարկայի վերաբերմամբ: Նամակի սուսենք թարգմանությունն ե միայն մնացել: Յեկ ահա ինչ եր ասված այդտեղ:

«Կաֆլան-Ցիվեսից (?) մինչև Յերեանը նվաճել ե թյուրքաց սուլթանը և չկա այլես մի դատարկ տեղ այդ յերկրիներում, բոլորը գրավված են և զուք չկարծեք, թե նրանք չեն վերցված, հենց ճիշտ վերցված են: Յեկ յեթե ինձ լսեք, հաճնեցեք ուղարկել ձեզնից մի քանի յուղբաշներ թյուրքաց փաշայի մոտ ընծաներով: Ասաված յերկար կյանք տա թյուրքաց փաշային և սերասկերին, վորսինեան, յեթե մեկը գալիս ե նրանց մոտ և յերկրագում ե, նրան մահ չել լինում, քանի վոր ով գալիս ե նազանգությամբ, այս զեպքում նրանցից վոչ թե վորեւ գախ չկա, այլ պատիվներ ել են լինում նրանց կողմից, և այդպիսի ներին նրանք ավելի լավ զիրը ել են տալիս, քան վոր ունեյին նրանք առաջ Շատապեցնեք, շուտ մարդ ուղարկեցնեք նրանց մոտ յերկրագությամբ, այս ձեզ համար լավ կլինի. շուտ ուղարկեցնեք այն պատճառով, վոր թյուրքաց զորք մինչև այժմ ձեզ մոտ չեն ուղարկված, իսկ յեթե չգաք և չերկրագում կլուորեաց զորքերն ել ձեզ մոտ գան, այն ժամանակ նրանք ձեզ բոլորիդ կկոտորեն:

և գերի կվերցնեն և մի սպասեք վոր նրանք դան և ձեզ ջարդեն ու կտոր-կտոր անեն և մենք այդ բանը տեսնենք մեր աշխերով: Մեղ քրիստոնյաներին նրանցից պատիվ և հանգստություն կա և վոչ մի զրկանք չի լինի մեզ նրանցից, և ձեզ համար ել լավ կլինի և գուք ել մեծ ոգնություն կստանաք, յեթե ինձ կսեք և կդաք և կերկըպագեք. և յետ գրեցի ձեզ, վոր դուք հավասաք այս բանին և ինձ լսեք, կամ ինչպես լավ կհամարեք, մտածեցեք ձեր մեջ»¹⁾:

Յեվ պետք է ասել, վոր միայն Աստվածատուր կաթողիկոսը չեր այդպես մտածում: Հենց իր հայ զինվորության մեջ ել գոյացել եր մի հոսանք, վոր տեսնում եր, թե զրությունը փոխվել է, պարսիկ ու ոռւս չեն այլև հրապարակում, այլ ահարկու ոսմանցին և անարգել տիրում ամեն տեղ, ուստի Աստվածատուր կաթողիկոսի պիս մտածում եր հաշտվել այդ ամենի ույժի հետ: Այսպիսով հայոց Սղնախներում գլուխ բարձրացնել եր սկսում մի թյուրքական կուսակցություն: Նրա ներկայացուցիչ կարելի յե համարել Յերից Մանկանց վանքի ներսես կարողիկոսին: Այս մի փոքրամասնական հատված եր. մեծամասնական հատվածը, ոռւսականը, գլխավորում եր Յեսայի կաթողիկոսը: Ներսեսը, իբրև հայ զինվորության մի մասի գլխավոր, հաղորդում եր Յեսայուն, թե յուզբաշիների մեջ սկսվել է մի վտանգավոր խմորում և, որինակ, Բարդայի Յեսայի յուզբաշին հայտնել ե, վոր յերբ թյուրքերը գան Գանձակ, ինքը կերթա նրանց վոտը: Ներսեսը խորհուրդ եր ատլիս Յեսայուն զգուշանալ յուզբաշիներից, չը հայտնել նրանց ոռւսաց կայսրին արած զիմումները և առհասարակ այլևս դիմումներ չանել, քանի վոր «յոթնզլիխան վիշապն արդեն յեկել ե և յերկը բոլոր չորս կողմերը կոխել ե և իր պոչը մեզ ել կը հասցնե»²⁾:

Բայց այս պառակտման առաջն առնում և ոռւսական գործակալը հայոց Սղնախներում իվան կարավետը, հավատացնելով ամենքին, թե ոռւսական զորքը պիտի ոգնության գա և բոլորվին պիտք չկա, վոր հայերը դիմեն ոսմանցիներին: Միամիտ լինցիներին հեշտ եր խարել յերեխաների նման, իվան կարապետը պարծանքով հայտնում եր Բագդի կայազորի հրամանատար բժիգաղիը Բարյատինսկուն, թե իրան միանգամայն աջողվել է յետ կանգնեցնել հայերին ոսմանցիների հետ բանակցություններ ըսկելու դիտավորությունից և կատարյալ համաձայնություն վերականգնել հայ զինվորության մեջ³⁾: Յեվ այս սուտ չեր: 1724 թ. հոկտեմբերի 18-ին ամենքը միացած — Յեսային, Ներսեսը, մելիք-

ներն ու յուզբաշիները դիմում են ուղարկում Պետրոսին, հայտնում են ոսմանցիների շարժումները, հայտնում են, թե հայ ժողովուրդը գտնվում է բնաջնջման վտանգի տակ, վոր 3—4 անգամ զրել են նրան այս մասին, բայց պատասխան չեն ստացել և նորից աղաջում եյին, «խաչի խաթեր», հրամայել, վոր Բագվի զորքից իրանց ոգնություն ուղարկվի, խոստանում եյին հոգալ այդ զորաբաժնի ամբողջ պարենավորումը: Այս թղթին ստորագրում եր նաև նորեկուկ հայ գիվանագիտական գործիչ «ըալուկա (Ըլցա) Կարապետ Իվան»-ը⁴⁾, վոր դասավորում եր իր այդ անունները և հակառակ ուղղությամբ:

Այս գիմումի պատասխանն եր, վոր տանում եյին Պետերուրացից Անտոն քահանան և Քելիսա Զալտրին: Թեև նրանց շտապեցնում եյին, բայց ոռւսական ձմեռը գամեց նրանց անշարժության և միայն 1725 թվականի գարնան եր, վոր նրանք յերեացին Շամախու շրջականերում, ուր ճանապարհները փակել եյին եղբիները, վորոնք սպանեցին պատվիրակներից մեկին, Սիմոն Պոպովին: Հարկավոր յեղավ, վոր մնացածները մեծ զգուշությամբ, հետևաբար և մեծ գանդաղկոտությամբ առաջ գնան:

Իսկ ոսմանյան հրամանատարությունը, տեսներով վոր հայերի կողմից վոչինչ փորձ չե անվում իր հետ խաղաղ համաձայնության գալու համար, 1725 թվի վաղ գարնան պատերազմական գործողություններ եր սկսում նախ Հյուսիսային Ղարաբաղի գետ: Կարելի յեր ասել, թե այս ժամանակից հայտարարվում եր մի հայթյուրքական պատերազմ, առաջինը հայ իրականության մեջ ոսմանյան պետության հիմնարկությունից ի վեր, մի պատերազմ, վոր տեղական ապստամբական բնավորություն չուներ և մղվում եր յերկար ճակատի վրա, Գանձակից մինչեւ Որդուրաթ և Նախիջևան: Բայց այս հարավային թեր զեռ մի տարուց հետո պիտի մտներ պատերազմական կրակի մեջ: Կանոնավոր, մեծածավալ պատերազմ, ինարկե, չեր կարող լինել վոչ-հարավային թերի վրա: Հայերը փոքր զորաբաժիններով լեռներից հարձակումներ եյին գործում: Սակայն վորքան ել աջող լինեյին այդ հարձակումները, նրանք չեյին կարող կանգնեցնել մի կանոնավոր և խոշոր բանակի առաջխաղացությունը: Յեվ ոսմանյան մի զորաբաժին, բաղկացած հինգ հազար հոգուց, մտավ Ղարաբաղ: Հայերն ստիպված յեղան հնապանդություն ցույց տալ, բայց ուխմեցին մի խորամանկ զավադրության և նրանով մի խոշոր հաղթանակ տարան: Այս զոր-

¹⁾ ՅՅՕԲ, с. 378.

²⁾ Տամ же, с. 350.

³⁾ Տամ же, с. 384.

⁴⁾ Там же, с. 382.

ծողությունները նկարագրված են Յեսայի կաթողիկոսի և մելիք-ների նամակների մեջ, վորոնք ուղղված եյին արդեն մեռած Պետրոս Մեծին, Վախթանգ թագավորին և սրա վորդի Շահ-Նավազին: «Թագաւորացն և քաջատոհմ մեծի և Աստուծազօր Վախթանգ թագաւորի և Շահնաւագ խանի».

«Քրիստոսի նուաստ ծառայ Եսայի կաթողիկոսէ Աղուանից և ամենայն մեծ և փոքր ուղղացաց և մելիքաց և դիմաւորաց և տանուտեարց և ժողովրդոց երկրիս Դարապաղու Ողջոյն և երկրաց գութիւն հասցէ: Զի ահա աստի յառաջ Փիլիպին գալովն զամենայն որպիսութիւն գրեալ եմք առ ձեր մեծութիւնսդ, չգիտեմք եհաս եթէ ոչ. այժմ ահա կրկին գրեալ որպիսութիւն մեր և երկրներին. զի ահա երևան, Նախջուան իւր երկրովն առան օսմանցիք. այլ և Թավրիզու վրայ երկու անգամ կորի է եղել, նոցա զօրքն կոտորել են, չեն կարողացել առնել. այլ և Շամշատինլու զաջաղն, Պօրչալու, Լուի ևս թամամ նոցա ձեռքն է: Վրացաւուն միայն քաղաքումն կայ զօշուն, այլ ուրիշ տեղ չի կայ. Շիրվան ես 4500 մարդով Մուսավաֆա փաշան գնաց. մեզ մօտ ես յառաջ էլչի եկաւ Մհամմատ Ղուլի խանն չգիտեմք որտեղ է, եղրօրորդին Գեանջայ է, Շահն ասում են Արտավիլու կողմն է. այս միջում Գեանջու շահարն և մեք եմք մնացեալ, իրար հետ լաւ ե՛ք, մեր և նոցա մարդն գնում են դալիս. ապա զայս յայտնի լիցի ձեր մեծութեանդ, զայս աղուհացիս և շաբթումն, մարտի մէկումն 3 փաշայ՝ Շահին, Սալահ և Ալի անունով 4700 մարդով Գանջու ներքիւնց անցան եկին մեզ մօտ վարանդայ. մէկ 2 օրն տեսանք միտքներն ծուռ, կորի անելով էլ օնդէն կարել չեմք զար, զոնադ որինք գեղուգեղ 100-ով, 200-ով, 300-ով, 400-ով թամամ կոտորեցինք¹⁾: Միայն մէկ 150 մարդ փախան: 200 էսիր թափեցինք, հիմա մուշախաս որ մեզ վրաց մեծ զօշուն կու զայ քանի օրումս. այլ մեք այս բաներս ձեր արեով և ումիտով և գրովն ենք անում, դուք որ զնացալ էք տեղդ էք, մեք մեծ հուսով եմք, և մեր աշքն գիշեր և ցերեկ ձեր զալու ճանապարհին և զրին է. ահա և նոր արդ զբեցինք թագաւորին, վասն որոյ ձեզանէ կու խնդրեմք, որ թէպէտ հեռացաք մեղանէ, զձեզ չմոռանաք. ահա օգնութեան և քօմակի օրն այսօք է. եթէ մինչև ի մէկ, 2 ամիս մէզ օգնութիւն չհասաւ այդ կողմէտ, թամամ բրիստոնեայք բնաջինչ կու լինի, մուշախաս, այլ ինչ օգուտ ձեր աշխատանքն. ահա աղաշեմք, աղաշեմք, անտես մի առնեք զաղաշանս մեր, այլ հասէք մեզ վասն սիրոյն Քրիստոսի մեզ օգնութիւն. այլ զինչ երկարեմք, զարձեալ Փիլիպն զեանջոց և մեր թղթովն գնայ Շահին մօտն, հիմա էկաւ խալաթով. ըսաղամով

1) Կովի այս յեղանակը նույն Վարանդայի գավառում նոր չեր Պետրոս գե Սարգսի Գիլաննեցի «Ժամանակագրության» մեջ կարդում ենք. «Վերոյ թարկումն (1723, ողոսառու 20) Ղափանցի Յարութիւն թավրիզու արեկ ասաց թէ Յայի ուղղացի Ղանլու-Նապանն և Դուղաղու Աւետարանոց գեղուն Մելիք Բաղուն տղին խետ փախաշտի (վեճ) կունենան. կը խաշացնեն, էլ Մելիք Բաղուն աղէն Ղանլու-Նարանին պատիւ կկանչնեն էս ուղրաշի Ղանլու Նարանն 300 խայալ կը գնայ էս Մէլիք Բաղուն գեղն պատիւ էս Մէլիք Բաղուն տղէն յառէշ ուր գեղին խալիին պատիւ կանի տվել՝ թէ Ղանլու Նարանն քանի խոդով կը տանեմ իմ տունս, նրա 5—6 հոգով տարեք ձեր աներն, եփ մի թվանքի ձին լսէք, յամէն մարդ ուր դրսաղն սպանի: Էսպես կը տան Ղանլու Նարանին և իւր 300 մարդին կը սպանեն: Էս ողորմելի նորընծայ Խայի ուղղացի Ղանլու Նարանն ուր 300 մարդովն կը սպանեն («Կոռունկ», 1863, եր. 207):

մեզ համար. այլև Քալսպալի բեկն այս բանին վրայ բերինք մեր մէջս, Ղզլպաշին հետ հաշտեցինք, այլևս մեր մէջս որքան խոռվ մարդ կար, թէ մէլիքինք, թէ ուղղացի ամենն մին եղան. պարիշեցանք, այլ շոկութիւն չկայ. միայն թէ մեր աշքն ձեր ճանապարհին է և ձեզ եմք ընթիզար, և խնդրեմք որ Տեր Աստումած ձեղ երկար կեանք տայ, աջողութեալ շուտ մեզ հասնէք և ձեր մէկ օրն 100 հազար լինի:

«1725 թիւս, մարտի 10 գրեցաւ ի Գանձասար:

«Քրիստոսի ծառայ Թարխան. Քրիստոսի ծառայ Աւան. Քրիստոսի ծառայ Օհան. Քրիստոսի ծառայ Պաղիք»):

Պետրոսին ուղղած նամակից իմանում ենք և մի այլ մանրամասնություն: Ցերեք փաշաներից յերկուսն սպանվել են, խկ յերրորդը, Սալահ փաշան, գերի ընկավ հայերի ձեռքը: Մի ուրիշ նամակի մեջ բերված և այն շատ հետաքրքրական խոսակցությունը, վոր տեղի յե ունեցել հայ զորապետների և այս Սալահ փաշայի մեջ:

«Զնա (փաշային) խօսացրինք, — գրում եյին մելիքները կայսրին. — դուք ինչպիս էք եկել այս երկիրս. նա ասաց՝ մեր թագաւորն հրաման է արարեալ որ պիտի մեք այս երկրներին հայն և զղլըաշն վչացնեմք. Չուն որ ըուու թագաւորին զօրքն ծովի այս կողմն են անցել, մեք նոցա վերայ գնամք, հայն այս մէջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինի, որ մեր ճանապարհն բացվի. նաև ասաց այս փաշան թէ գուք շէիք այս միջումս, մեք հիմա Դարբանդու և Պաքու վերայ էինք գնացեյ, որ զատի մի մերն է»²⁾:

Այս խոսքերը նշանակալից եյին այն կողմից, վոր նրանց մեջ առաջին անգամ արտահայտություն եր գտնում թյուրքական քաղաքականությունը հայերի վերաբերմամբ այն ամեն ղեպքերում, յերբ սրանք փորձ կանեյին զինված ույժով կանգնեցնելու կամ առնվազը գժվարացնելու ումանյան շարժումը ղեպի Արևելք, ղեպի կասպից ծով, ղեպի Իրան և այլն: Վոչնչացնել հայերին իրեն արգելք և ճանապարհ բաց անել — այս ուղմական գործելակերպը ումանցիները չմոռացան և մոտ յերկու հարյուր տարի այդ ժամանակից անցնելուց հետո, 1918—1921 թվականներին, յերբ նրանց ղեմ պատերազմող հայերն եյին կանգնած նրանց ճանապարհին կարսի, Ալեքսանդրովու, Ղարաբիլիսայի, Ղարաբաղի Քյուրդամիրի վրայով մինչև Բագու և Բագվի մեջ եւ և այդ բոլորը նստեց նրանց ոսմանյան յաթաղանով խողիսովված մոտ 50 հազար մարդ:

Ուշագրավ և և մի ուրիշ հանգամանք. — հայոց Սղնախները հաշտվում են պարսիկների հետ, որպեսզի նրանց հետ միացած դիմադրեն ընդհանուր թշնամուն — Թյուրքիային: Քայքայլած,

1) ԷՅՕՅ, ս. 420—421.

2) Տամ-ճե, ս. 422.

ուժասպառ Պարսկաստանը չեր կարող, իհարկե, փոքրի շատե շուշափելի ոգնություն տալ հայերին, բայց փաստի նշանակությունն այն բանի մեջ եր, վոր հայերը նախընտրելի եյին համարում պարակական ռեժիմը, քան ոսմանյանը: Այս մենք տեսանք և Շահ Արքասի ժամանակ, 17-րդ դարի սկզբում, յերբ հայերը Պարսկաստան եյին փախչում ոսմանցիների գրաված Այսրկովկասից: Յեզ հայ զինվորության այս զինակցությունը պարսիկների հետ, ինչպես կտեսնենք շուտով, պսակվեց այնպիսի գեղեցիկ հետեանք ներով, վորպիսիները այնքան զուր սպասում եյին հայերը Արքամոյան Յեվրոպայի և մասնավորապես Ռուսաստանի «քրիստոնակիությունից»:

Ահա այդ ցարական «քրիստոնասիրության» վերջին պատգամը կես տարվա ճամբորգությունից հետո, վալիս, վերջապես հասնում եր Փաքր Սղնախը, Շոշու գյուղի մոտ, Շուշու ժայռերի մեջ: Մայիսի կեսին Անտոն քահանան և Քիլս Զալարին այդտեղ եյին և տվին Պետրոսի հրովարտակը զորքի գլխավորներին: Կատարյալ անակնկալություն: Ինչի եյին սպասում և ի՞նչ զուրս յեկավ: Տպավորությունը ծանր եր: Մարդ ուղարկեցին Գանձասար, Յեսայի կաթողիկոսի յետելից: Յեզ յերբ նա յեկավ, կազմվեց լեռնցի մարտիկների ուղղմական խորհուրդ, վորի բնորոշ նկարագրությունը լեռնային անհման պարզությամբ տալիս և իվան Կարապետն իր մի նամակի մեջ, վոր ուղղված և պիտական կանցեր կոմս Գոլովյանին:

«Տէք Անտոն և Քիլսայ Զալապին որ եկին Նարապազս մեծ ինքը թօրի ուքաղովն և շավազաթլամովն և հրամանոցգ գիրովն, բանտառ (ծառաս) և ուղարկեն բոլորվեցինք ուրաղն և հրամանոցգ գիրն բացինք և կարդացինք, շատ պաշտոնակալ եղանք: Ուրաղն կարդաէն հա ուղպաշենք և շատ ուրախացանք և շնորհակալ եղանք: Ուրաղն կարդացինք հարցինքն թէ՝ այ Տէք Անտոն, մենք քեզ ուղարկեցինք դնա իմացիր, տես զօշուն կըզմայ մեղ մին քօմակ և ճար կլինի թէ ոչ. Երբ ասացինք մեզ համար տեղ ուղիր Դարզանա, Բաքու, Կիլան և կամ այլ տեղ որ մենք գնանք տեղդ կենանք: Երբոր էսպես հարցըն, չկարաց ջուղապ տալ. տեսաւ որ ինքն կունահքար եղաւ. Չ օրէն եստ առանց ինձ տեսնել, առանց ուղպաշինն հարցաներ բաց եթող զրերն, փախաւ Յետ նորս հարցըն Զալապի Քէվլսէն թէ չում մէք տուն քանդեցիք, Զալապին առաւ. Անքէք ես ի՞նչ անեմ, իմ անունն զրած չեր գրում, ինքն միայն գրել երետ ինչ որ իւրեան մաթլապն էր. յետոյ նորս հարցըն թէ մեր զրերն թամամի տարմք. ասաց թէ ուղպաշոց գիրն, իւրան կարապետի գիրն տարանք, ամայ նոյի կաթողիկոսի գիրն շամբախ ջուտեց, ինքն մէկ գիր գրեց, տարաւ առ թագաւորն: Մին էլ Զալապի Քէվլսէն գիր եկաց, ինձ հետ խոզաշոց հետ, հոգնոր տիրոջ հետ, ասաց. իրը թէ մեր զլիսին տէրը մնացել չի, լսել բայց երկու ձեռն ելաւ մին զլուխ. մնացին գլխերանին թագելով, ողջ ասացին թէ մեր ճարն ոնց կլնի, մեղ ով տերութիւն կանի օրէց գէն. ամայ էս խոսքիս ճշմարիտն ու սուսն մին Աստուած խասլար և բանտառ

«Ելքաց նաշաղացու, մինչև զրոյս թարեղն դեռ ել նաշաղամը¹⁾, ուրենքն էլ պիտամաղ եղան բեղափուլ տուին մինչի զրոյս Յ թարեղն և թարեղում լսեցին թէ ջնդրալ եկել ա Պաքու. ապա թե գիր գրեցին ուղարկեցին Պաքու ջնդրալին մօտն որ թէ ջնդրալն էլ ուղարկի վիրե, տեսնենք մեզ համար ինչ խասլար կը գայ, և այլ երկրիս ինչ որ հալ և ամիսլ որ կար, ուղպաշիքն և հոգնոր տէրն գրեցին և ուղարկեցին զուլուղն և այլ ուրիշ ավայա, բանի որ էս տղերքս չոք հինդ հակար օսմանլու որ կոտրեցին, օսմանլուէքն էլ պաշլամիշ են արաքել թէ երեան, թէ՝ Թիֆլիսը, թէ Ղափան ինչ տեղ որ ձեռքբերանին խասնում այշափմիշ ան անում, մեծն կոտրում անփոքը եսիր ան անում»²⁾):

Հետաքրքրական հանգամանքն այն և, վոր հայերը, թեև շատ յավ հասկանում եյին, վոր ընդհանուր տեղահանության հրամանը մի սոսկալի աղետ և ժողովրդի համար, բայց, գոնե առերես, այդ դժբախտության հեղինակ համարում եյին վոչ թէ Պետրոսին, այլ Անտոն քահանային, վոր միայն վաճառված մի գործիք եր դարձել նրա ձեռքին: Ճիշտ և, թեև Պետերբուրգի կառավարության թուղթ գնաց, թե Անտոն քահանան այդպիսի հայտարարություն անելու լիազորություն չե ունեցել, բայց սրանից ի՞նչ ոգուտ, քանի վոչ տեղ կար ցարական հրամանը: Մերժել այս հրամանը Սեպտեմբերի առաջարարությունը կարող եր յեթե իրան պահել եր վողորմելիորեն պաղատդ, ծունկ չոքած ստրկի գիրքի մեջ: Այժմ այս զիրքը նրան պարտավորեցնում եր զլուխ իջեցնել Պետրոսի հրովարտակի առաջ ստրկավայել կեղծ ուրախությամբ և հաճությամբ: Այդպիս ել անում եյին Սղնախները: Բայց ստրուկն ել ունի իր ինքնապաշտպանության յեղանակը: Հայ ժողովրդի վարիչները գաղթելու կատարյալ հոժարություն եյին հայտնում, բայց ցույց կյին տալիս դըժվարությունները, այն հուսով, իհարկե, թե հենց գրանք ել կը փրկեն ժողովուրդը գաղթելուց: Յեզ զրում եյին նրանք.

«Ենրկպագութիւն և ողջոյն ի հեռուստ մատուցանեմք աղքա հայոց նորընծայ ծառայքս քո պատրիարքօք, Եշվանօք, մելիքներօք, հեծելազօրօք, տանուաթիրօք, սամկօք և առհասարակ միախումք և միաբան և միահամուռ ժողովրդօք: Ընդ ոմին և աղդ և զիտութիւն և յայտնի տանեմք առաջի տէրութեանդ զաղտէն և զուրախութիւնն մեր քանզի զմեր յղեալ երկու արքն որ մեկն երէց և մէկն աշխարհական եկին և զնամակ հրամանի հզօրիդ բերեալ առ մեզ հա-

¹⁾) Նամակի այսակղը թէ աղավաղված և արտադրողից և թէ մթագնված և ժողովրդական արտահայտություններով: Մեր զլիսի տերը մնացել չի՝ թագավորը մեռել և «Յերկու ձեռք անել մի զլուխ»—սուդ անել զլուխը ծհծել Դեռ չեն հավատում թէ Պետրոսը մեռել և, բայց իկան կարապետն այդ լուրից հիվանդացել և (նաշաղացել):

²⁾) ՅՅՕՅ, Ը. 425.

սուցին, և մեծ փափագանօք և ուրախութեամբ համբուրեցաք և եղաք է վերաց գլխոյ մերում, գոհացաք և շնորհակալ եղաք ի տերութենէդ զի մինչեւ ցայժմ զմեղ ի խնամոց և ի ողորմութեանց և մտացդ անտես շես արարեալ և մոռացեալ և զի հրաման հզօրիդ առ ծառայքս այսպես է որ մեք ենումք տանով և տեղով և ամենայն ընչեւք զամք զձեր պարսից նոր երկրներն որ է Պաքու, Կիլան, Դարպանդ և աստ բնակիլ կամք ահառնդ եղիցի և հրամանիք քում մասու շափ և մեք հնագանդ, բայց կամիմք որպիսութիւն և բանի կերպն որ աստ է յայտնել տեառնդ, և զի խնդիրքս մեք զոր զքեալ էաք ոչ էր ըստ այսմ կերպիր և այս որ հրաման տեառնդ ե, յոյժ անկարելի է մեզ, որ ընսա ձեռք չեւ տալ այս քանի պատճառն, զի այս երկիրներս, որ ծառայքս քո ընակեալ եմք, որ էն Գանջայ, Ղարապան և մհալ, այլն Գնդարքունի, Քօլանի, Ղափան, Սիսիան այլ երկիրներ, այս ամէն մհալ 30, 40, 50 փարէ գեղէ և ամէն գեղ 600 տուն, 500, 400, 100 տուն, 50 տուն, փարը 30, 40 տուն են և այս երկիրներս վարով և տեղով շատ ամուր են, և մեք այս խալս ամենքն իւր երկրումն որդուադ ենք արել ամուր տեղերն, և ամենքս մէկ սղնաղին վերայ նստած պահում ենք և մեր չորս կողմի երկիրներ օսմանցիք տուր են, որ մեզ թշնամիք են, այլն մեք մեկ կողմն էլ զղլպաշ են, որ թշնամիք են. հարկաւ թէ որ մեք այսքան հազար-հազար խալս տեղանանեմք և դուրս բերեմք իւրեանց ապրանքով և ուրախով, արձակ տեղ մտան թշնամին շուտ կու յաղթէ և խալըն գերի կառնէ. այլ և Քուռ գետն որ մեք առաջես է լոթկով կանցանուի. լոթկէն զղլպաշի և Ղարապօրի ձեռքն է և ոչ մեր, որ են թշնամիք. մինչեւ լոթկի թէտարեք կանեմք, և այսքան մարդ, անսասուն անց կենալն թշնամին մօտ է, զմեղ շուր շամմիշ կանեն. այս պատճառաւ շատ դժուար է ձեռք տալիս զմեր այդ կողմն անցնեն, թէ չէ հրաման արքայի ի վերայ զիսոյ մերոյ է... եւ արդ, Տեր թագաւոր, մեք ազգս հայոց մինչեւ ցայժմ անօրեն թագաւորին էինք ծառայք. այժմ որովհետեւ կամ եղան ձեզ ծովուն այս կողմն տիրապեսեր, և մեք կամիմք ձեզ ծառայել. որ և մինչեւ ցայժմ ձերով անուամբ զօրացեալ, այս Յ արի և որ ընդ անօրինաց պատերազմեմք և զձեղ ունիմք պարծանք մեր վասն որոյ խնդրեմք թախանձանօք զի զմեզ ի ներքոյ խնամոց քոց մի արտաքսեր, այլ չուք ողորմութեան քո ի վերայ մեք պահեա և զմեղ ապատեա ի շաբ թշնամիացն որ անհաշտելի խոռվութիւն է մեր և անօրինաց մէջն և խընդիքը մեր այս է զի թէ մինչեւ առ մեղ և ի մէջ մեր զօրք և օպնութիւն շեք ուղարկելու, տպա հրաման լինի զօրացն որ ի Պաքու զի մինչեւ ի Շամախի զան և ապա մեր մէջ նոցա մէջ Աստուծով և քո զօրութեամբն կիստակեմք և հեշտ մեր ձեռն կու հասնի և անհապարհն կու բացուի և մեք գնալն կու. հեշտանայ-միայն թէ վասն Քրիստոսի սիրոյն և մեր ազատութեան խաթրին համար հրաման լինի որ զօրքն գան Շամախի. ապա ամենայն բան հեշտ է, զի Պաքուայ մինչ Շամախի 2 զօնադ է, մէջ տեղն թշնամի շկայ և Շամախոց մինչեւ Քուռն 2 զօնադ է. թէ որ զօրքն Շամախի լինի, մեք այս մէջս կիստակեմք որ Աստուծով կի լինիմք թագաւորի զօրաց մէջն և որտեղ որ հրաման լինի պահերազմի՝ յառաջ զնամք ընդ զօրացն Այլն այս խնդրեմք, որ թէ ուրիշ զօրաց և գլխաւորի հրաման չանէ արքայ, տպա Վախտանկ խանին և կամ իւր որդի Շահնաւալ խանին հրաման լինի զօրօք դալ ի Շամախի, որ մեզ օգուա լինի և մեք այս չար թշնամոյն ապատուիմք, լինի թէ թագաւորին մէկ պէտքական ծառայ լինիմք. Այս է խնդրեմք մեք, և այս հաւատարիմ Զալապի Քելիխայ ու իւր ընկերն ուղարկեցաք. ոչինչ լեզուի խօսք չունիմք, միայն զբոյս բանն է:

«1725 թուին յուլիսի 25-ի Գանձասար

«Քրիստոնի նուասա ծառայ Խոայի կարպիկոս և պատրիարք տանս Ազուանից խնդրեմ կատարել զհայցուածու մեր Քրիստոնի նուասա ծառայ Խոեսն կարպիկոս Ազուանից երկրի խնդրեմ աղերսանօք որ այս խնդիրքս մեր մէ անտես ատներ շուտափոյթ ողորմից. և որք ընթեռնուք, աղերսեմք թարգմանեցէր:

«Մելիմ Եկան, Մելիմ Պալը. Մելիմ Թամրազ. Մելիմ Հավանի. Աւան ուզպաշի. Թարիան ուզպաշի. Յոհան ուզպաշի. Սարգիս ուզպաշի. Պապի ուզպաշի. Արքահամ ուզպաշի. Սարգիս ուզպաշի¹⁾:

Այս վերջին զիմումն եր, վոր հայ կղերական զիվանգիտությունն անում եր Պետրոս Մեծին, Այս զիմումներն արդեն բոլորել եյին մի քառորդ դարի շրջան և ամբողջ այդ ժամանակը, սկսված և ամրապնդված Իսրայել Որիի յեռանդով, միապաղապաղաչանք ու պաղատանք եր: Շարունակ աղաչում պաղատում եյին զորք ուղարկել իրանց յերկիրն աղատելու համար: Վերջում այլ ևս յերկրի համար չեր աղաչանք-պաղատանքը. յերկիրը թողնում եյին, հիմա աղաչանք-պաղատանքն այն եր, վոր զորք տրվի ամրագ ժողովուրդը յերկրից դուրս հանելու և գաղթեցնելու համար:

Պատմական այս վավերազիրը, վոր մենք բերինք վերևում, մեկն և այն անթիվ փաստերից, վորոնք լուսաբանում են հայ իրականության այն դարավոր ծանրագույն հարցը, թէ ինչպես եր, վոր հայությունը գրեթե անընդհատ ցույց է ատիս իրան իր յերկիրը զատարկողի, մշտագես գաղթողի զերում: Այս հին հոգերանությունն ունի իր մեջ բազմաթիվ քաղաքական-տնտեսական տարրեր իրանց հարկադրական և հոժարակամ զրդապատճառներով: Բայց մենք դրանց վրա չենք այստեղ կանգնեցնում մեր ուղարկությունը, այլ հատկապես այն հանգամանքի վրա, թէ վարպիսի հեշտությամբ եյին վորոշվում և զլուխ բերվում ժողովրդական ուղառող ապառող ազգաբնակության տեղահանման հարցը: Մեզ մի այն մի ժժվարություն և յերկում այդ տերերի աչքին — ինչպես անել վոր գաղթի ճանապարհն ապահով լինի թշնամիների հարձակումներից: Յեթե մենկը տար այդ ապահովությունը, այլևս վոչինչ խոսք չեր լինի տեղահանության դեմ. իսկ թէ ինչ միասներ կտար հարյուր հազարներից բաղկացած այդ ժողովրդին այդ աղանապարհությունը, յեթե նա կատարվեր անգամ արտաքին ամենախղաղ պայմանների մեջ, — այս արդեն հարց չեր, այս մասին վոչոք չեր մտածում: Տնտեսական կատարյալ քայլքայման հասած, տկարացած մի ահագին ժողովրդական զանգված, անհայտ ճա-

1) ԵՅՕՒ, Ը. 421—423.

Նապարհների վրա դիակներ փուելով, հալ ու մաշ դառնալով առաջ
և առաջ, գեպի անծանոթը, գեպի անսովորը սողացող — այս ե
յեղել գաղթեցման, բռնի թե հոժարակամ, — մշտականությունը՝
Այս գաղթեցնող առաջնորդները նույնիսկ հարկավոր չեյին հա-
մարում նախորոք ծանոթանալ այն յերկիրներին, ուր պիտի տա-
նեյին իրանց ժողովուրդը: Գաղթող հայը սովոր չեր լավ ու վաս-
հարցնել. նա միայն պիտի գնար:

Յեվ այսքան մեծ ժողովրդական դժբախտության հայ կղերտ-
կան դիվանագիտությունը ձեռնարկում եր հանուն և ի սեր իր
նոր մոլեգին պաշտամունքի — ոռւս ցարականության: Այս մեծա-
քանակ գաղթեցման պահանջը ցարականությունն առաջին ան-
գամ այստեղ եր դնում, Ղարաբաղում: Շարժառիթը — ձեռք բերել
առևտրական-արհեստավորական տարր իր խուլ ու մեռած ան-
կյունները կենդանացնելու համար — այս առաջին գեպքից հետո
ել յերեան եր գալիս իրեւ հատուկ հայկական քաղաքականու-
թյան յերեւյթ նուսաստանի զանազան կողմերում. վորի հե-
տեւանքով հիմնվեցին, ինչպես կտեսնենք իր տեղում, մի շարք
հայ առևտրական գաղութներ: Ճիշտ ե, Ղարաբաղին վերաբերվող
այս առաջին նվազում հայոց Սղնախների առաջնորդները ներք-
նապես դեմ եյին ժողովրդի տեղահանման, բայց այս նշանակու-
թյուն չուներ: Յեթե Պետրոսից հետո նուսաստանում զանվեր մի
ույժ, վոր կարողանար վորեւ կերպով կատարել հայերի խնդրած
զորական փոքրիկ շարժումը Բագվից մինչև Շամախի, այն ժա-
մանակ Յեսայի կաթողիկոսին և նրա ընկերներին կմնար միայն
դատարկել Ղարաբաղը հայերից: Յեվ հայ ժողովրդի բախտն եր,
վոր այսպիսի ույժ չգտնվեց նուսաստանում. — այս անզամ Ղա-
րաբաղն ազատվեց քարուքանդ լինելուց, բայց վոչ ընդմիշտ. 18-դ
դարի յերկրորդ կեսում Ղարաբաղը նորից դառնում եր ցարական-
խարդախ քաղաքականության առարկա և այս անզամ արդին մի-
անդամայն ավերգում եր շարունակական արտագաղթերի հետևան-
քով. հայերի գաղթեցումը դառնում եր հայ կղերական դիվանա-
գիտության սիրած միջոցը թե հայ առևտրական կապիտալի և թե
մելիքության, իրեւ հայ ավատականության մնացորդի, շահերը
պաշտպանելու համար, մի միջոց, վոր նա հաճախ եր ինքնահօժար-
առաջարկում ցարական կառավարության, առանց, ինարկե, յերը
եիցե հարցնելու գաղթեցնելի ժողովրդի տրամադրությունը:

Պետրոսի մահով հայկական աղաջանք-պաղատանքները 25-
ամյա շրջան եյին բոլորում, բայց չեյին վերջանում: Յեսայի կաթո-
ղիկոսի ցարապաշտության համար նուսաստան առանց Պետրոսի-

ել կըլինի նույնը, ինչ եր Պետրոսի դեկավարությամբ, այսինքն
գարձալ ականջ կախած հայկական «Քրիստոսի սիրուն» աղա-
չանք-պաղատանքներին: Հայոց Սղնախներն այս պատճառով
հարկ չհամարեցին վորեւ փոփոխություն մացնել նրանց առանց
այդ ել շատ արդեն տհաս քաղաքականության մեջ: Ճակատ առ
հակատ ոսմանյան ահեղ բանակների դեմ բռնված նրանց հետ
քաջարի, հերոսական, բայց և որհասական կոիմներով և միւնույն
ժամանակ հյուսիսը զուր տեղից հավարի և ոգնության կանչող—
այս դրությունը գեռ մի քանի տարի ել պիտի շարունակվեր մինչև
վերջնական խորտակումը: Յեթե հայերը տեղեկություն չունեյին
1724 թվականի հունիսի 12-ի ոռւս-թյուրքական գաշնագրի մա-
սին, ժողովրդի գաղթեցման պահանջն ել շատ զորեղ փաստ եր
հասկացնելու համար բոլոր հայերին, թե Պետրոսը վաճառել է
նրանց հայրենիքը թյուրքերին, հետևաբար և ավելորդ արյու-
նակեղություն ե հայ-թյուրքական պատերազմը: Այսպես ել գուցե
հասկանային նրանք: Բայց ոռւսական քաղաքականությունը մնում
եր նույնպես խարեւա, ինչպես Պետրոսի ժամանակ
և լեռնցի հայերի անսահման միամտությունն ամենայն հեշտու-
թյամբ հարստահարվում եր նրանից, հավատ ընծայելով նրա սուտ
ու պատիր խոստումներին:

Ամենքին հայտնի յե, վոր ոռւսական զահը հզոր, հանձարեղ
վերանորոգիչ և անսահման բռնակալ Պետրոսի մահով անցնում
եր մանր-մունը, խեղճ ու ապիկար մարդկանց ձեռքը: Պետության
ծավալումն ու առաջադիմումը կանգ եր առնում, պետրոսյան ժա-
ռանգություն անվթար պահելն անզամ այդ անընդունակ ժա-
ռանգների ույժից բարձր եր երեսում: Պետրոսին, բռնության մի-
ջոցով, հաջորդում եր նրա կինը, Յեկատերինան (1725 — 1727):
Յեվ ահա սրան եր, վոր Թեսա Զալարին ներկայացնում եր Յե-
սայի կաթողիկոսի և մյուսների նամակը, վոր բերգված ե վերեսում:

Նոր կայսրուհին պատասխանում եր հայերին 1726 թվի փե-
տրովարի 22-ի իր հրովարտակով, վորի մեջ ազգաբարում եր, թե
ինչ վոր հարկավոր եր իմաց տալ ամբողջ հայ ժողովրդին իրեւ
պատասխան նրա խնդրագրին, ինքը բերանացի ասել է Քեխա
Զալարին և ինչ վոր ասե այս պատգամավորը, պետք է նրան
հավատալ և համարել իր՝ կայսրուհու խոսքերը: Իսկ թե ինչ եր
այդ բերանացի պատասխանը, այդ իմանում ենք նույն փետր-
վարի 14-ին արտաքին գործերի պաշտոնատան մեջ կազմված ար-
ձանագրության հետեւյալ կտորից, վոր թարգմանված եր հայերին
լեզվով.

«Հըրաման» տվյալնք Քեփիսա Զելեբուն վոր բերնով ասես հավատացեք, հայոց Սղնաղումք յեղյան թամամի ժողովյալ ազգ և դոշուն, վոր մեծ ինփերտթուրիցն քոմակ վոր ուղարկում անք ձեզ քոմոկ գաք պարսից յերկին Վախտանկի խանն և ջնորակ վոր և սարասկար, քնյազ Դովլուտէին մի թե փոքր զօշունով, շատ զօշունով և վորչանք վոր գուք կարողություն ունեք վոր զիտել ևք և ձեզ պախե առաջինին նման, պիրկ կենեք և թշնամի զարշուց ամենայն ժամ կանգնեք և թուր տեք և թշնամին հաղթեք, մինչեւ ձեզ քոմակ հասանելն»¹⁾:

Իսկ Յեսայի կաթողիկոսը, դեռ անտեղյակ այս դրական խոստման, մարտ ամսին նամակներ եր ուղարկում Դերբենտի ուսւ հրամանատարին և Մինաս վարդապետին, նորից և նորից կրկնելով թե հայերը մենակ են մնացել ոսմանյան ահավոր բանակի դիմաց, թե շատ քաջություններ են արել, գերի չեն տվել թշնամուն և վոչ մի հատ, թե նրանք անդադար ոգնություն են սպասում ուսւաց զորքից:

«Միայն մնացեալ եմք մեք, — գրում եր նա Դերբենտի հրամանատար իշխան Գոլցինին, — որ հալա զատել եախա չենք տուել. հիմա պինդ կուզեն զմեզ ձեռն տոնուն այս գարունս և ասկա երիշ անեն Շամախու, Պարուայ և Դարբանդին վերար Պասն որոյ ահա ծանուցաք և մեր խնդիրքն այն է, որ թէ զուք շատ և փոքր այս կողմին հարաքեաթ ունեք, պիտի Զատկիս շուտ Շամախի բռնէք և մեզ իմաց անէք, որ մեր փքրին լինիմք: Խոկ թէ էլ շատ ետացաք, զմեղ ձեռն բերին, գժուար կլինի և սոքա շուտ կու զնան, մեր մարդու էլ որ մէկ տեղաց օգնութիւն չեն տեսնում, յուսահատում են և ցըսւվում»²⁾:

Այս «իշխանաց իշխան» Գոլցինը, ինչպես երևում է Յեսայու այդ նամակից, շարունակ հուսադրական նամակներ եր գրում հայոց Սղնախներին: Բայց թե ինչ զին ունեյին նրա խոստումները և թե առհասարսկ ինչ զինվորական հեղինակություն եր ներկայացնում նրա զորաբաժինը Դերբենտում և նրա շրջականերում, ցույց ե տալիս այն, վոր հենց նույն այդ ժամանակ լեզվիները սոսկալի վրեժ հանեցին նրա քթի տակ գտնվող Մակուրի գավառի հայերից այն պատճառով, վոր նրանք բերել եյին «սարու գյավուրներին» (շեկ գյավուներին, այսինքն ուսւներին): Ժողովը դադարդական այս ծանր աղետը ժողովրդական անպաճույժ, բայց սըրտառուչ գույներով նկարագրել եմ վոմն Մարտիրոս վարդապետ 1725 թվականի փետրվարի 5-ին Դերբենտից գրած իր նամակի մեջ, վոր ուղղված եր Աստրախանում գտնվող Վախթանգ թագավորին և նրա վորդի Շահնավագ խանին:

Պետք ե իմանալ, վոր Մակուրի գավառի հայերը կազմում եյին Դաղստանի հյուսիսային կողմը, ծովեղերյա տարածության վրա ընկած մի առևտրական գաղութ, վոր հետո ստացավ ուսւաց կա-

ռավարությունից Ռուսաստանի մյուս հայ առևտրական զաղութներին հատկացրած արտոնությունները: Ազետը, վորին յենթարկվեցին Մակուրի հարուստ հայ գյուղերը, առաջ ու առաջ լեզգիական սովորական թալանների մի գործողությունն եր, բայց բարգացած մի շարք քաղաքական և տնտեսական նկատառումներով: Շարժումը ուսմանյան ներշնչումներով եր կատարվում, հետևաբար արձագանգ եր հայոց Սղնախների ճակատում կատարվող պատերազմական գործողությունների: Վորքան հաղթական եր դիմադրությունն այդ կողմում, այնքան մոլեզնական անհրաժեշտությունն եր գառնում հայերին վոչնչացնել ուր վոր կարելի յե և ուր վոր նրանք արգելք եյին հանդիսանում իրրե ուսւների գաշնակիցներ: Մակուրի հայությունը, յերեխ, ծառայել եր ուսւական բանակին Պեծի արշավանքի ժամանակ և այժմ պիտի կրեր գրա պատիքը: Լեռնցիների գրգռումն, ըստ սովորականին, լորբոքվում եր կրոնական հողի վրա: Բայց մակուրցի հայերն այնքան լեզգիներից չեյին խոշտանգվում, վորքան դադստանցի հրեաներից: Սրանց անզուսպ կատաղությունն արդեն կրոնական հանգամանքով չեր բացատրվում, քանի վոր իրանք հրեաներն ել ամեն տեղ կրոնապես հալածված ժողովուրդ եյին, այլ լոկ առետրական-մրցակցական հանգամանքով: Վոչնչացնել հայերին՝ նրանց համար, բացի հարուստ ավարից, նշանակում եր հանել առևտրական հրապարակից հայ խոջայական կազմիտալը և աիրել նրա տեղ:

Մենք մեր այս տեսությունը կլուսաբանենք մի քանի հատվածներով Մակուրի ազետի այս ժողովրդական նկարագրությունից:

«Փետրվարի 15 (?)ուն Մակուրից հարայչի եկաւ Շամիալի և իսմու ձեռքն Դարաշուղլուէցի Տէր Պետրոսի որդի Աբբահամ և Գոււմէի որդի Մուրատիան-այսպէս ասացին որ ի ներքոյ գրեցինք. 12 գիւղ եմք, այդ 12 գեղում պաւար, ձի, զոմէշ չի մնացել. շորեղէն, բրնձեղէն, արծաթեղէն, արկաթեղէն չի մնացել. մեր և օղլաշաղի կեցէն շոր հանել են. մեր օղլուշազն մեր ձեռքին առել են, դիշեր ու ցերեկ իւրեանց մօնէ. ասում են թէ մեք զնալիս կու տանինք. գարի, գարման, ցորեն, բրինձ, չալթուք չի մնացել. մեր աներ փուլ են ածեւ այրել. եկեղեցիք թովլայ են շինել, էլ մեզանում սիրաթ չի մնացել. էլ մի իբրմին չի մնացել որ մին փուլ արժենայ. գեղագլուխ 15 թուման փող են առել տուն զլուխ 10 զօնաղ, 15, 20, 30, 40, մինչև 50 ձիաւոր կայ. այս ձիաւորներ որ իւրեանց զօնաղից առած միայն Աստուած պիտէ որ որչափ փող են առել. երէցների մորումներն ողջ հանել են. մարդկոց վերայ կարմիր միս չի մնացել շատ թակելէն. անտէր և անճար ենք մնացել, մեր եսիրին մին փիքը թէ որ եսիր տարած լինի, չաւ որ աչք չի տեսնուը, ինչ որ կանեն կանեն մեր աչքի դիմաց մեր օղլուշաղի զլուխն ինչ սիրաթ են բերում. զմեղ կապում են, սմանց մարդիք զմեզ են թակում. մի քանին հաւաքվում են մեր աշաց առջև մեր կաշնաց և մեր աղջկերանց հետ խառնակվում ինձ էլ իւրեանց իւրեանց առումին

1) ԷՅՕՅ, շ. 430.

2) Տամ же, շ. 433.

մէկզմէկին թէ կեավուրին շարչարանք տալ վարձք է. աման ջուհուղի ձեռնէն և անզրիցուց ձեռնէն. ասե թէ սոքա մեր գլուխ ինչ են ըերում. մեր բերանող որն տանէք, որն մասյ մեր գլուխ եկած լեզուով չի լինել պատմել. զիրայ յուն-փարի 17-ումն կոխել են գեղերանք, ողջ զաֆել են թէ ձի, թէ դաւար, թէ գոմէշ, թէ ապրանք, թէ շոր. թէ պղինձ, թէ արծաթեղէն, թէ սուկեղէն, թէ արկաթեղէն, թէ փող, թէ մարդ, թէ կին, թէ աղջիկ, թէ տղայ. թէ ցորեն, թէ ըրինձ, թէ չալթուկ. ամենայն ինչնեցէ որ կայ իւրեանց են շինել. ձին, դաւարին և գոմէշին թամզելեն տմէնք իւրեանց անուամբ. կանայք, աղջկունք, աղիրք, ամենք իւրեանց համար աներ են լցել. թէ գնալիս կուտանեմք. մարդիք բնաւ իւրեանց երես չեն տեսնում, չեն թողնում թէ մէկ զմէկ տեսնան. հայր որդույ տեսութիւնին փափակ որդին հօր, քոյր եղքօր տեսութեան-է փափակ եղքայր քվեր մարդ կնօշ է փափակ, կինն մարդին, հերեան հերեանին է փափակ մասցել. այս գեղի մարդիկ այս գեղի մարդկոնց է փափակ մասցել, վայ մեզ հայոց զմին, որ վասն մեր մեղաց Աստուած բար-կացել է մեզ վերայ որ փուշանանք... 2 ամիս է իւրում որ զոշունով կոխել եր-նոսեն. սոցա արարմունք աչք ոչ տեսնա, ականջ ոչ լսի. չի լինել զրով պատ-մել, որ մին զրեմ. շատ կին և շատ աղջկունք շատ շնանալէն կոտորվել են, սոցա տեղ մարդիք են տանում պղծվում. բանանայ չկայ հաղորդութիւն չկայ, եկեղեցի չկայ, մարդիք ողջ անհաղորդ զմեռնեալք չեն թաղում գերեզմանոց տա-նելոյ կամ հողում թաղելոյ, զցում են գեղամէջ, շներ և կազաններն է լափում. շատ մարդ ցորենի հոր են զցում կենանի բերան հողում են, մուռն է մէջում մեռնում է փուչանում պազին որ զիշեր մեռնում է, տանում են զիշեր ծածուկ թաղում են. վազ որ տեսնում են, հանում են զուրս զցում. աման ջուհուտի և անզրիցունց ձեռնէն. ասում են իւրեանք թէ սարուկեավուր մեր և մեր օղու-շաղի գլուխ ինչ որ բերել է, մենք 100 ապատիկ ձեր գլուխ կու բերեմք, այ կեավուրներ. թէ որ իմանաք Յ գեղ փափել են եկել այս մօտիկ հայերի գեղ կոյ Մոլախալի և Հուլքիում են, միայն իւրեանց եսիր վեր են առել փափել սովոմ, տկլոր, անձար են մասցել թէ որ իմանաս այս Յ գեղի անուններ, մէկ Փատարմիկ Պանամիր, մէկ Մուսուրման Պարախում, Պարաջալուի և Արմանի Պարախումի կէս ու կէս եկել են, էրլի այս հայերի միջումն են. այսչափ դո-շուն մէկ մէկին սովորացնում են թէ կեավուրին շարչարանք տալ և կանանց հետ խառնակել մնեց վարձք է, այսպէս են ասում մէկզմէկին, օրէն օր շարա-նում են, նեղութիւն և շարչարանք աւելանում են. մինչեւ այս թարելոս նստած են, էլ շինութիւն չկայ բնաւ, երկրի կէս Սրխովի և Հաճի Դուռի զօշուն է կոխել կէս Շամլաւի և Խսմինու զօշուն է կոխել մինչ այսօր, ասում են թէ Սրխով սպանվել ե, սուտ եղաւ, այս թարիդէն 7 օր տառջ Սրխով եկաւ. Մը-կուր, մինչեւ հիմայ Շամախի էր... Այս տաճկաց Փիքրն այլ իմն է. այս պիր-դիս նստող տաճկի մնեաւորի խօսքն Շամիալի, Խսմինի, Սրխովի, Հաճի Դուռի հեան է. ողջ սոցա մարիփաթուլ է անում. պիքրի մէջի տաճկաց խօսքն նոցա հետոն է. զրում են թէ միատիկէք եկէք զուրս կողմից, մեք մէջ կողմից, այս կեավուրներ վեր առնունք փուչացնենք, տինի իսլամ աւելանար... Այս անօ-րինաց միտք և խորհուրդ այս է. իւրեանք մէկ մէկին ասում են թէ կս գեղիս կեավուրներ փուչացնենք որ սարը կեավուր զալիս այս կեավուրներ կու քան-դեն մեր երկիր և գեղերանք, մեր տներ, չուն որ վալատ է. մեր երկրին մեր կեղերանին, մեր ճանապարհին, մեր ամենայն որպիսութեանն, զմեղ ես կու շնառաշեն... Քանի նաւեր բերել են Նիազովայ. ինչ ապրանք որ կայ հայերին ողջ ամէն մի ըստ միոջէ քաշում են տանում նաւեր լնում. վեր են առնում

տանում Թարիսու, թէ եսիր, թէ շոր, թէ ըրինձ, թէ ցորեն, ոչինչ չի մնաց, ոչչ կրցին տարան Դաղստուն. զալիս են Դարբանդի մոտով զնում 4,5 սովոր-գնացել են եկել. հիմայ Նիազովայ 2 նաւ լնում են, 3 նաւ ել զրկել են Թար-իսու»¹⁾.

Միանգամայն ակներեւ ե, վոր Մսկուրի հայերի աղետը շրջա-պատել եր Դերբենտը, թափվել եր նրա մեջ. Ցեղ այս ամենին-կատարյալ անտարբերությամբ վերաբերվեց Դերբենտի ոռւսական զորքը, վորի հրամանատար իշխան Գոլիցինն այնքան հուսադրում եր Գանձասարի միամիտս սպարապետ կաթողիկոսին: Այս անտար-բերությունն այնքան խրախոսիչ եր լեզգիների համար, վոր նրանք նույնիսկ մտածում եյին մի որ ել հարձակվել Դերբենտի վրա և սրի քաշել այնտեղի բոլոր ոռւսակերին: Ցեղ մսկուրցիների սարսափներին թարգման հանդիսացած Մարտիրոս վարդպետն եր, վոր այդ գժբախտների համար ճար ու ողնություն հայցում եր Վախթանգից և Շահնավազից, վոր նրանք միջնորդեն կայսրի առաջական և ոգնության գան:

Միանման մի աղերսանք ել ուղարկում եյին ոռւսաց թագա-վորին և Շաքիի (Նիժի և այլ զյուղերի) հայերը 1725 թ. հոկ-տեմբերի վերջին.

«Ղազալու երկրից հայոց է,—գրում եյին նրանք,—արգ լիցի հրամանոցգ, օսմանցի զօշուն եկաւ Գանջայ առաւ, Սղնախն մասցելայ խեղճ. այսօր կամ վաղն Սղնախն էլ կանեն, ապա յետոյ կուզան Շամախի, քանի որ Սղնախն-առել չեն, Շամախի զալն վախենում են. թէ մէջ կու զցեն զմեղ կու կոսորեն, մեր գեղարանքն թամամ և Շաքու երկիրն թուրքացրել են ուժով. մեր գիր դրեանքն և եկեղեցին այրեցին. մեր քահանայըն կոտրեցին. շատ մարդ վասն հաւատոյ խաթրին սուրով զնացին. հիմա ցերեկն թրբութիւն ենք անում, գիշերն հայութիւն, այլ ճար չի ունիմք, մեր ճարն հրամանքդ ես. մեր խնգիրն այս ի սէրն Թրիստոսի մեզ մեկ փրկութիւն հասուցանս զօշուն ուղար-կեն Շամախին առնու, համ մենք աղատվենք, համ Սղնախն, թամամ զանք ը-հրամանոց զօշունի մէջն, հրամանցդ ի ըոհաթութիւն անեմք»²⁾:

12.

Նոր թագավորություն, հին խարդախ և խաթերա քաղաքա-կանություն: Այսպես եր յետպետրոսյան Ռուսաստանը, Ցեղ խար-վողները հարավում՝ միշտ հայոց Սղնախներն եյին: Ցեղատերինա լ-ը վոչ մի գժվարություն չգտավ իր ամուսնուց ել սանձարձակ խոս-տումներ անելու մեջ, Պետրոսին կյանքի վերջին տարում զալում եր ոսմանցիների հետ կնքած դաշնագիրը, վորի զորությամբ նա կարող եր հայերին միացող միջն արտագոյն պարագաների միջամտութիւնը կայացող ափակեցին:

1) Էջ 8, ս. 415—418.

2) Տայ же, ս. 427—428.

նրա ամուսինը կարծես չեր ընդունում այդ դաշնադրի գոյությունը, թեև մյուս կողմից ընդունում եր և արտագաղթը: Այս վերջինը, սակայն, յերկրորդական նշանակություն եր ստանում, հայ զինվորությունը վոգերում և իր գիմագրական համառության մեջ ամրապնդում եր կայսրուհու հաստատ և անվերապահ պատգամը՝ — պինդ կացեք տեղներդ, ահա ոգնական զորք եմ ուղարկում Վախթանգի և «Ճնպրալ» իշխան Դոլգորուկովի հրամանասարությամբ: Կարող եր այս խոսքերից, այս անուններից հետո վորեւ կասկած ծնվել առանց այն ել ծայրահեղ հավատով և վստահությամբ լցված կաթողիկոսների, մելիքների և յուղբաշխների մեջ: Հարաբաղի լեռներում բորբոքված հայ-թյուրքական պատերազմը պիտի այս բանից ավելի ևս սաստկանար:

Մենք տեսանք, վոր այդ պատերազմի հյուսիսային թեսում ոսմանցիները գրավել եյին Գանձակը և այդտեղից աշխատում եյին խուժել Հյուսիսային Հարաբաղի ներսը, բայց չեյին կարողանում եղորել հայ զինվորության տոկուն զիմացկանությունը: Միենույն դրությունն ստեղծվում եր և Հարավային Հարաբաղում կամ Հափանում, ուր գործում եր Դավիթ բեկը: Ոսմանյան զորամասերը Հափան մտան 1726 թվականին Նախիջևանի և Որդուրաթի կողմից: Այստեղ ել նույն լեռնային պատերազմի յեղանակը դրեթե միշտ հաղթությունը հայերի կողմին եր պահում:

Ոսմանյան կառավարությունն, իհարկե, չեր կարող թույլ տալ այսքան յերկար հապաղում իր զորքերի առաջխաղացության մեջ դեպի կասպիկական կարեոր ճակատը, ուստի վճռում եր միանգամից վերջ տալ հայերի ցուցադրած արգելքին՝ խոշոր զինվորական ուժեր կուտակելով հյուսիսում ել, հարավում ել: 1727 թվականը վճռական եր հանդիսանում լեռնային Հարաբաղի ճակատագրի կողմից: Մենք այս վտանգի չափը կարող ենք մեզ ներկայացնել՝ աչքի առաջ բերելով Դավիթ-բեկի պատմության այն կտորը, ուր խոսվում ե այն մասին, թե ինչ տպավորություն թողեց յերկը հայ աղքարնակության վրա միայն ոսմանյան բանակի տեսքը:

«Յայնժամ, — ասում ե նա, — ամենայն ընակիչը գաւառին առհասարակ խռովեցան, սասանեցան, թողին լքին գԴաւիթ և զնացին մտին ընդ լծովի օսմանցւոց եւ մեաց միայն Դաւիթ եօթն և տասն սպառազէն արամը ի յանապատն Հալիծորոյ, ուր կանգնեալ էր զանառիկ բերդն Ընդ նմա էին նաև երեք եպիսկոպոսունք Տաթևու և երկոտասան քահանայք, զհետ զնացին նաև Տէր Աւետիսն և Մէլք Փարսաղանն սակաւ ոմամբք, զի զօրք ամենեքան թօթափեցան ի Հոգանէց¹⁾:

1) «Դաւիթ բէզ», եր. 43—44.

Այստեղից սկիզբ եր առնում այն ներքին կազմալուծումը՝ վոր վերջիւղի վոր պիտի խորտակեր դափանցիների ամբողջ գործը՝ Մինչև այստեղ ընդհանուր վոգերություն եր և միակամություն, այսուհետեւ պիտի պարզվեն մեկը մյուսից քստմնելի դափանական շարժումներ: Այս բարոյական լքման սկզբունքը Դափանի ազատագրական շարժման մեջ մտցնողը դառնում եր հենց նույն այն խոչայական կապիտալը, վոր բոլոր քաղաքական անցուղաբեկ շարժիչ ուժում եր: Շատապենք, սակայն, ավելացնել վոր կազմալուծողի տիտուր դերում հանդիսացողը խոչայական կապիտալի մի հատվածն եր, զոկականը: Յենթարկված լինելով Նախիջևանի խոշոր և ուժեղ խանության իշխարհագրորեն ել զատկած լինելով Դափանից, զոկական կապիտալը (Ազուլիս, Որդուրաթ և այլ տեղեր), սկզբից և եթ, տկարին հատուկ հայեցաղությամբ, իր շահն եր դարձնում չեղոքությունը հայ քաղաքական շարժման նկատմամբ, այն ել այնպիսի մի չեղոքություն, վոր պատրաստ կլիներ փոխարկվել հակառակության, անգամ թշնամության Դաւիթ բեկի գեմ: Այս դիրքը հարկադրական եր դառնում մանավանդ այն որից, յերբ Յերևանն ու Նախիջևանն անցնում եյին Թյուրքիային և նրա զորքերը վողողում եյին Արաքսի ամբողջ ձորը մինչև Մեղրի: Զոկական կապիտալին, իհարկե, ուրիշ ելք չեր մնում, բայց միայն խոնարհ գլուխ իջեցնել նոր տիրապետության առաջ և այդ խոնարհությունն ափելի ևս արտահայտիչ դարձնելու համար իր զորքը խառնել ոսմանյան բանակի հետ, վոր գնում եր պատերազմ տալու Դաւիթ բեկին: Զոկական կապիտալն իր այս որինակով տանում եր իր յետելից և այնպիսի տեղեր, վորոնք միացած եյին Դավիթ-բեկին, որինակ շարժման նախնական ոջախը ներկայացնող Մեղրին իր շրջանով: Յեվ առաջանում եր ընդհանուր գասալքում, վորի արձագանքները հասնում եյին և հյուսիսային Սղնախներին, այդտեղ ել տարածելով համանման յերեւութիւն, այսինքն ոսմանցիների կողմին անցնելը, թեև մասնակի չափերով:

«Յայց, — շարունակում ե պատմիչը, — Դաւիթ յայսմ ամենայնի ոչ լքաւ, ոչ կանցաւ ի խորհրդոյն, ոչ զանգիտեաց ի բաղմութենէ բարբարոսացն և ոչ դադողիցաւ ի քաջագործութեանցն ոչ յուսանաեցաւ յաստուածային խնամոցն: Այլ արիաբար զբերդն ամրացուցանէր, զհամբար բերդին պատրաստէր, զղօքականն առ ինքն ժողովէր, բազմացուցանէր և զԱստուածն ամենակարող յոդնութիւն ինքեան կոչէր:

«Արդ յամսեանն իններորդի յետ գալստեան օսմանցւոց ի Խափան, որ այն հենգերորդ ամ էր գալստեան Դաւիթ, եկին հասին ի Խափան ի ուլթում Ահմետին օսմանցւոց Պեքիր փաշայն և Արագ Ալիփաշայն բազում զօրօք, ընդ ինքեանց առեալը նաև զԲարալի խանն Բարբուշատար:

«Եստ այսորիկ, հրաման տային ի տեղեաց տեղեաց տշխարհին ամենայն զօրաւարաց հայոց և թյուրքաց գալ ժողովել անդը. և եկին հասին ունուա յամենայն կողմանց զօրք թյուրքացն, ընդ ինքեանս տռեալք նաև զօրսն հայոց ի գողթան գաւառէն, ի յԱզուլս քաղաքէն, ի յՕրդուվարայ, ի Փիսխոնայ (Սիսիանայ ?), ի Բարքուշատայ, ի Չալչպրու, ի Մեղրույ, ի Խափանու, այլ և զԴարտչուու կոչեցեալ թյուրքոն և զրնակիչս Սեալերինն, և սոքա ամենիքեան եկին գումարեցան և եղեն իբրու վաթսուն կամ եօթանասուն հազար, և առաւել և բազմում յոյժ, մինչեւնու բազմութեան հեծելոց և հետեակաց սոցա՝ զդաշտա և զերինու¹⁾»:

Այս ահագին բազմությունը, բաղկացած գլխավորապես տեղական խառնիճաղանձից, պաշարում եր Հալիճորի բերդը: Բայց Դավիթ բեկն իր քաջ համհարզներով, ունենալով իր ձեռքի տակ յերեք հարյուր ընտիր ձիավորներ, յանկարծակի դուրս արշավեց և այնպես շեշտակի հարձակվեց թշնամու վրա, վոր միծ շփոթություն գցեց նրա բանակի մեջ, և սա, կրելով միծ կորուստներ գուցե հենց անակնալ շփոթության պատճառով, խուճապի մատնվեց և փախուստի զիմեց: Այս մի շատ խոշոր աջողություն եր Դավիթ-բեկի համար, վոր և վերականգնում եր նրա ույժն ու հեղինակությունը տեղական ազգաբնակության աչքում, այնպես վոր նա իր համար նպատակ եր դարձնում մաքրել Դափանն ոսմանցիներից, մի ծրագիր, վոր նա աջողեցնում եր զլուխ բերել նույն 1727 թվականին բազմաթիվ հաղթական ընդհարումներով զանազան տեղերում ումանյան զրամասների հետ, վորոնք ստիպված երին լինում փախուստի զիմել Դավիթի մանը խմբերի հարձակումների առաջ: Այսպիսով ոսմանցիները Դավիթի ձեռքին եյին թողնում վոչ միայն Զավնդուրը, Մեղրին, այլ նույն իսկ Որդուքաթն ու Ազուլիսը, և Դավիթը անձամբ գնաց Ազուլիս՝ նրա դավաճանությունը պատժելու համար: Սակայն զոկական կապիտալի միջնարդը աննկուն մնաց իր հակառակության մեջ մինչ այն աստիճան, վոր դավաճանաբար սպանեց Դավիթի լավագույն զրադուխներից մեկին, Մելիք Փարսպանին: Ազելի հեշտ յեղակ պատժել և ծունկի չոքեցնել Զավնդուրի դավաճաններին:

Այս բոլոր քաջարի գործողությունների հետ Դավիթ բեկը մշակում եր և քաղաքական մի նոր վարքագիծ, վորի նախընթացը մենք արդեն տեսանք հյուսիսային Սղնակիներում, այն և հաշտություն պարսիկների հետ՝ միասին դիմադրելու համար ընդհանուր թշնամուն, ումանցիության: Այս նպատակով Դավիթ բեկը հարաբերություններ սկսեց վոչ միայն Արաքսի մյուս ափին զբանվող պարսկական զրամասների հետ, հրավիրելով նրանց միա-

համուռ ուզմական գործողությունների ընդհանուր թշնամու գեմ, այլ և զիմեց Թավլիզում ապրող Շահ-Թահմազին, հպատակություն հայունեց նրան և իր կատարած քաջազործություններին իրք իրական ապացույցներ ուղարկեց մի քանի բնուն ոսմանյան կորած գլուխներ: Շահը միծ հաճույքով ընդունեց այդ ընծան և ինքն ել իր կողմից ընծայեց Դավիթին ամբողջ Դափանը, անվանելով նրան իշխանաց իշխան այնտեղի հայ և թուրք տիրողների վրա և զնելով նրա հրամանի տակ տեղային բոլոր զորքերը, վորապես ինա վտարե ամբողջ Դափանից ոսմանյան բոլոր զորամասները: Դավիթի զործերի պատմիչը հավատացնում է թե Շահ-Թահմազը եւս բերել նմա զմի խաչփառ յել զմի պատուական նմոյգ ձի, յել յեկս զիշխանաւրին կարող լինելոյ դրամ հատանելոյ¹⁾:

Այս համարյա անկախություն եր, մի քաղաքական մանրանկար դրություն, վորին չեյին հասել Հայաստանի մեջնադարյան թագավորություններն անգամ: Յել վոր ամենից զարմանալին եր, այս խոշոր փաստը, յերազ՝ դարերի համար, կատարվում եր առանց Արևմուտքը և Հյուսիսը աղաչանք-պաղատանքով ծածկելու, առանց Քրիստոսին անհանգստություն պատճառելու: Բայց այս ընծան տրվում եր հայ ժողովրդին կարծես հատուկ խրատական խորհրդով: Դավիթ բեկը վայելում եր իր քաջություններով ձեռք բերած այդ իշխանապետական զրեթե անկախ դիրքը շատ կար ժամանակով, զուցե մի քանի ամսով միայն: Հետեւյալ 1728 թվականին նա մեռնում եր, նրա հետ նաև նրա իշխանապետությունը: Զկար սպարապետը, բայց կային նրա ընդունակ ոգնականները: Յել, այնուամենայնիվ, չմնաց կարողություն պահպանելու և շարունակելու Դավիթի նվաճած ժառանգությունը: Բանից դուրս յեկավ, վոր միայն Դավիթի յերկաթե ձեռքը կարող եր խեղդած պահել լեռնցի ժողովրդի մանր տեղայնական կրքերը և հաճախ հավոր կերպարանք ցուցադրող կենարոնախույս ձգտումները:

Դավիթի մահը բռնկեցրեց այդ բոլոր բացասական հատկությունները: Դավիթին հաջորդած յերկրորդ սպարապետը, քաջամարտիկ Մխիթարը, սպանվում եր յուրայինների ձեռքով ամենաքստմնելի դավաճանությամբ, վորից հետո Դափանի ամբողջ ազատագրական շարժումը (1722—1730) կորչում եր անհետ, յերբեք չեղածի նման: Ազատությունն ու անկախությունը բաներ են, վորոնց արժանի պիտի մի ժողովրդը: Ահա ինչ եր ասում Դավիթ-բեկի որինակը:

1) Անդ, յեր. 44—45.

Դարձյալ նույն 1727-ին եր, վոր խոշոր ընդհարում եր ունենում ոսմանյան բանակի հետ և՝ Հյուսիսային Դարաբաղը: Ահա ինչպես եյին նկարագրում այդ ընդհարումը Սղնախների ներկայացուցիչները Պետերբուրգում: Հյույսային ճակատի ոսմանյան բանակը գտնվում եր, ինչպիս ասացինք, Գանձակ քաղաքում: Նրա հրամանատարն եր Սարբ-Մուսթաֆա փաշան: Այստեղ ել նրան գալիս միանում եյին տեղական խառնիճաղանճ անկանոն զորքեր հոչակավոր Դոռւդ-բեկի յեղբայր, Անմեղ խանի և ուրիշների հրամանատարությամբ, և այսպիսով Գանձակի բանակի թիվը հասնում եր 40 հազարի: Պատերազմը, վոր սկսվեց ոսմանցիների հարձակումով, շարունակվեց ուժ որ շարունակ: Հաղթեցին հայերը: Ենիշեր աղասին և կիրխ-չալմա աղասին սպանվեցին պատերազմի մեջ, և ոսմանյան բանակն ստիպված յեղավ վերադառնալ Գանձակ¹⁾:

Այս խոշոր աջողությունն, իհարկե, հեշտությամբ չեյին ձեռք բերում հայերը: Անշուշտ նրանք ել կորուստներ շատ ունեցան: Յեկանը այսքանով պիտի վերջանար: Դժվարությունները գեռառվելում եյին, հայ-թյուրքական պատերազմը պիտի զառնար ավելի անխնա, ավելի կատաղի: Այս դրությունն եր պարզվում հաղթողների առաջ, և ոռուսական ոգնությունն այժմ մանավանդ դառնում եր կյանքի և մահվան հարցի չափ անհրաժեշտություն: Մեծ խրախույս եր գառնում նբանց համար Քեվիսա Զալարիի բերած բերանացի տեղեկությունը, հաստատված կայսրունու հրովարտակով: Ոգնությունը խոստացված եր վոչինչ կասկած չթողնող դրական յեղանակով: Պետք եր միայն շտապեցնել նրան: Յեկ Սղնախների յուղբաշխներից կազմվում եր մի ամրող մեծ պատրամավորություն, վորի մեջ մանում եյին 20-ից ավելի հոգի, Ավան յաւզբաօսու զիսավորությամբ, վոր, վերցնելով իր հետ Յեկատերինայի հրովարտակը, գնում եր Սալյեան՝ գններալ Դոլգորուկովի մոտ, անմիջապես ոգնական զորք խնդրելու համար: Բայց գեներալը Ռտաշտում եր գտնվում, ուստի և յուղբաշխները գնացին այնուեղ: Իշխան Դոլգորուկովը, սակայն, մերժեց պատրամավորության խնդրքը, ասելով թե ինքը կայսրունուց հրաման չունի ոգնական զորք տալու: Ինչ կարողացավ նա անել հայերի համար, այն յեղավ, վոր նա յուղբաշխների հետ գնաց Դերբենտ, մի ուրիշ «Ձբնորակի», այն ե՝ Ռումյանցովի մոտ, վորին խնդրում եր ոգնական զորք տալ հայերին, և յերբ Ռումյանցով ել պատասխանում եր

¹⁾ ԷՅՈՅ, Ը. 439.

մերժումով, այն ժամանակ առաջարկում եր նրան թույլ տալ վոր յուղբաշխները զնան Պետերբուրգ և անձամբ խնդրեն կայսրունուն: Ռումյանցովը միայն յերկուսին եր տալիս այդ թույլտվությունը — Քեվիսա Զալարիին և Բաղի յուզբազուն, վորոնք և ուղերձվում եյին Պետերբուրգ, իսկ մնացածները վերադառնում եյին Սղնախները:

Իր կողմից իշխան Դոլգորուկովը, իրք զորքերի հրամանատար, հայոց հարցի վերաբերմամբ իր հայացքներն եր հայանում իր կառավարության: Նախ և առաջ նա պնդում եր, թե հայերը լսել անգամ չեն ուզում կասպիական յերկիրները զաղթելու մասին: Յեկ ավելացնում եր, թե նրանք կատարյալ իրավունք ունին: Նախ վոր պիտի իրանց վաճառականությունը թողնեն և յերկրորդ՝ իրանց ընտարի և բարերեր տեղերից պիտի զնան այնպիսի անպատուղ տեղեր, ուր ապրուստ գտնելը դժգար ե: Գալով հայերի քաղաքական դրության, «Ճնդրալը» գրում եր, թե պետք ե զարմանալ թե հայերն ինչպես են դիմանում ստեղծված դրության, վորի մեջ նրանք հարկադրված են մեն-մենակ պատերազմ մղել թյուրքական բանակի գեմ: Նա ասում եր, թե միայն Աստված և պահապանում հայերին, թե չեմ մարդկային խելքից բարձր ե հասկանալ թե գեռ ինչպիս են նրանք պահվում այդքան ուժեղ թլշնամու առաջ: Պետերբուրգի կառավարությունը հարց եր տվել նրան՝ թե արգյուք չե կարելի հայ զորքերը ուստական ծառայության մեջ մտցնել: Այս հարցին իշխան Դոլգորուկովը տալիս եր ժխտողական պատասխան, առաջ բերելով այն պատճառաբանությունը, վոր հայ զինվորությունը շատ ստոր ե ուսւ զինվորությունից, մինչեւ նրան պահելը և կերակրելը մեծ միջոցն եր կիսլեն ուսւաց գանձարանից. բայց զիսավորն այն եր, վոր իրանց այդ զորքով հայերը հազիվ են կարողանում պաշտպանվել ոսմանցիներից: Խոսելով աղա այն մասին, թե ինչ կարելի յե անել հայերին ոգնելու համար, իշխան Դոլգորուկովն եր հայտնում, թե միայն միջոցն ե համաձայնություն կայացնել Բ. Դրան հետ, վոր Ռուսաստանին դիջվեն պարսկական յերկիրները մինչև Արաքսի միջին հովիտը: Այն ժամանակ ուսւներն առաջ կերթան, հայերին կառնեն իրանց հովանավորության տակ, և հայերն ել կարող եյին մեծամեծ ոգնություններ անել ուսւներին:

Սակայն Պետրոս Մեծի ժառանգներն ընդունակ չեյին այդպիսի ծրագիրներ իրագործելու և դրությունը մնաց անփոփոխ: Քեվիսա Զալարիին և Բաղի յուղբաշխն Պետերբուրգում պատմում եյին հայերի տարած հաղթությունը Սարբ Մուսթաֆա փաշայի

գեմ, ինչպես հիշատակեցինք վերևում, և կառավարությունն, իբրև պատասխան նրանց միջնորդության, նույն իշխան Դոլգորուկովին եր թողնում ուղևը հայերին ինչպես ինքը հնարավոր և համարում և համենայն դեպս հանձնարարում եր ամեն կերպ հուսադրել և խրախուսել հայերին, վոր նրանք պինդ կանգնեն ոսմանցիների դեմ: Դոլգորուկովը ոգնության ձև ընտրում եր հուսադրությունն ու խրախուսումը, և այսպիսով հայոց Սղնախները թողնվում եյին ճակատագրի կամքին: Իսկ այդ ճակատագիրն այնպես եր, վոր դիմադրությունը ոսմանցիներին մնծամնծ ոգուտներ եր ըերում ուռւսներին և մնծամնծ մասներ՝ հենց իրանց հայերին:

Արյունահեղ կոփակեր, ինչպես գրում եր Մինաս վարդապետը, տեղի եյին ունենում համարյա ամեն որ¹⁾: Յեվ հայ զինվորությունն, իսկ վոր ամուր կանգնած իր զիրքերում, չեր թույլ տալս թշնամուն հաստատվել յերկրում, իսկ այս, ինչպես զիտենք, նշանակում եր նաև կտրել նրա ճանապարհը դեպի Կասպից ծովը: Իզուր, սակայն, հայ գործիչները ցույց եյին տալս ուռւսաց կառավարության իրանց այս կարեւը ծառայությունը, իզուր կըրկնում և յերեքնում եյին, թե իրանց Սղնախներն են, վոր Բագուն, Դերբենտը պահում են ուռւսների ձեռքում և յեթե վաղորոք ոգություն ստացած լինեյին, Գանձակն ել ոսմանցիների ձեռքին չեր գտնվի Ռուսաց կառավարության այս բոլորն, ինարկե, շատ լավ հայտնի յեր, բայց մի բան անել չեր կարողանում: Առաջ ու առաջ կար Պետրոսի կնքած ուռւս-թյուրքական դաշնագիրը, վոր յեթե չլիներ ել, կառավարության ապիկարությունը դրանց աւգելի մեծ արգելք եր զործելու հնար գտնելու դեմ: Յեվ, վերջապես, կարիք ել չկար ինքնահօժար լքելու հայերին շահագործելու ընդարձակ հնարավորությունը: Մարդիկ ծայրահեղ հավատարմությամբ, վողջակիզվելու աստիճան ինքնազոհությամբ կովում եյին ուռւսական շահերի համար, կարծելով, թե ուռւսական շահերն ել հենց իրանց շահերն են: Կարելի յեր այդպիսի կովողներին միայն կովեցնել, և ուրիշ վոչինչ:

Բայց այս դրությունը չեր կարող չունենալ իր բացասական խոր ազգեցությունը հայ զինվորության ներսում: Յեվ այստեղ ել ահա մեր առջե, գանդաղ կերպով յերեան են յելնում բարոյական հյուծման նույն ախտանիշները, վորոնց մենք արդեն ականատես յեղանք Հարավային Ղարաբաղում: Ախտածին սկզբունքը մեկ եր յերկու կողմերում եր, բայց արտահայտության ձևերը բոլորովին տարբեր եյին հյուսիսային Սղնախներում: Այստեղ նրանք հա-

մեմատարար տանելի եյին, համեմատարար, յեթե կարելի յե ասել մարդավարի կերպով բացատրելի և միանգամայն հեռու այն խայտառակություններից, վոր սանձարձակ բարոյալքումը հրապարակ նետեց Հարավային Ղարաբաղում:

Վորքան և սակավապետ լինի լեռնցին, վորքան և շատ լինի քնական կորովը նրա յերակների մեջ, բայց և այնպես, յերկարատե պատերազմական դրությունը մեծ քայլայում եր մացրել յերկրի առանց այդ ել աղքատ տնտեսության մեջ: Այս հողի վրա եւ ընականարար, պիտի ծագելին դժվարություններ, զանգատներ, կարգապահության հիմքերը փորփորող տրամադրություններ: Դրգում և հուսահատեցնում եր մանաւանդ ուռւսների խարերայական քաղաքականությունը: Հայ զինվորը շարունակ լսում եր խոստումներ թե ահա գալիս են բարերարները, բերելով աղատություն. բայց որերը, ամիսները, տարիներն անգամ անցնում եյին իրար յետելից, և այդ ակնկալությունը չեր իրագործվում: Ուժեղ դժգոհություն և հուսաբեկություն առաջացնում եր մասնավորապես Պետրոս Մեծի հղացած ընդհանուր տեղահանության պահանջը: Այս ուժեղ դրդապատճառներն ահա քայլայման տարբեր են մտցնում հայ զինվորության մեջ: Սղնախներն սկսում են կամց-կամաց սակավամարդանալ: Դժգոհների մի մասը բռլորովին հեռանում ե զինվորությունից, վերագառնում ե իր խաղաղ պարապմունքներին, իսկ մի մասը, համարելով վոր անաջողության պատճառն առաջնորդներն են, պարտք են համարում կռիվ վարել գրանց գեմ կամ հեռանալով ուրիշ ամրացած վայրեր և ինքնադլուխ գործ սկսելով կամ թե հենց Սղնախներում և այդտեղ կատարելով իրանց քայլայիչ գործը: Ուրիշ խոսքերով, սկիզբ եյին առնում ազգամիջյան անհամաձայնությունները: Յեվ նրանք ուղղված եյին զիլսավորապետ Յեսայի կաթողիկոսի գեմ: Նա եր սպարապետը, գերագույն հրամանատարը, նա եր խոսում ուռւսների հետ և նա եր, վոր շարունակ հավատացնում եր. թե ուռւսները պիտի գանու իր այս պաշտոնին Հասան-Զալալյան կրօնապետը վերաբերվել եր մի անդրդվելի շիտակությամբ և հավատարմությամբ, վորին բոլորովին չեր համապատասխանում ուռւսական խարդախաղանությունը:

Նշանավոր և այն հանգամանքը, վոր սամանցիները, չկարողանալով կոտրել Սղնախների համադիմադրությունը, փորձեր արին հաշտություն խոսել նրանց հետ, նույնիսկ կաշառքներ եյին առաջարկում Յեսայի կաթողիկոսին, յեթե նա կհամաձայնի իրանց կողմն անցնել: Գուցե հայերը կարողանային ողուտ քաղել իրանց

1) ԹՅՕՅ, с. 459.

թշնամու այս տրամադրությունից և խաղաղ համաձայնության միջնորդի իրանց համար նոր գիրք ստեղծել, հետեւլով Դավիթ-բեկի որինակին: Բայց մենք արդեն շատ անդամ տեսանք, զոր Սղնախների վարիչները վորքան լավ կուղղներ եյին, այնքան վատ քաղաքակետներ: Յեսայի կաթողիկոսը բացե ի բաց մերժեց ուսմանցիների առաջարկությունները, կամենալով անաղարտ պահել իր համար պաշտամունք դարձրած ցարականությունը: Դա առաջին ցարապաշտ դիվանագետ հայ կաթողիկոսն եր, վոր մարմնացում եր այդ պաշտամունքի մուլեպնության սկզբնական, համեմտարար մեղմ զարգացման աստիճանը, վոր և կարելի յե իր անունով կոչել յեսայականություն-Այս հավատարմությունն ել, վոր տարգում եր այնպիսի անվերապահ համառությամբ, բնականաբար մնուցանում եր հետզհետե ծավալուն դարձող հակառակություն կաթողիկոս-սպարապետի դեմ: Նրան եյին համարում պատճառ յերկրի քայլայման: Յեկ այս ել միանգամայն անբնական չե, յեթե նկատի առնենք անաջողության մատնված տրատունջներին սովորած, տնտեսական պաշարման նեղ շրջագծի մեջ զրված դինվորության հոգեբանությունը: Մեծ վիրավորանքներ և վշտեր կրեց նա, ինչպես վկայում ե Մինաս վարդապետը: Յեթե այս մարդը պարզ խոսելու ընդունակություն ունինար, մեր առջև բացված կտեսնեյինք մի ամրող դինվորական ապստամբություն հրամանատարի դեմ: «Մեծ վիրավորանքերի» դրդապատճառները զրեթե վոչինչ կասկած չեն թողնում այս մասին: Ոսմանցիները, մերժված տեսնելով իրանց առաջարկությունը հաշտություն կնքելու մասին, սաստկացնում եյին իրանց պատժողական գործողությունները հայ խաղաղ ազգաբնակության դեմ և այս բանի մեջ իրանց աշխատակից եյին դարձնում լեղվիներին: Բազմաթիվ հայ գյուղեր կործանվեցին, հազարավոր մարդիկ գերի տարվեցին և վաճառվեցին իրեն ըստրուկներ: Այս դժբախտությունների պատճառը Յեսային եր համարվում, ուստի և սա, Մինաս վարդապետի ասելով, «թշվառապես վերջացրեց իր կյանքը¹⁾», գուցե սպանվեց կամ ինքնասպանություն գործեց: Այս դեպքը տեղի յեր ունենում 1728 թվականին, ուրեմն Ղարաբաղի հայ դինվորությունը միաժամանակ կորցնում եր յերկու սպարապետներին ել:

Այստեղ, Հյուսիսային Ղարաբաղում ել, սպարապետի մահը նշանակում եր նույնը, ինչ եր Ղարավայինում — սկիզբ վախճանի, թեև տարբեր ուղղություններով: Յեսայուն հաջորդում ե Ավան-

¹⁾ ԹՅՕԲ, ս. 459.

յուղբաշին: Դրությունը մնում ե անփոփոխ — կոխվեր ոսմանցիների դեմ և դիմումներ ուսւաց կառավարության: 1729 թվականի հունվարին մենք տեսնում ենք Ավան յուղբաշուն, նրա յեղբայր Թարխան յուղբաշուն և նրանց հետ մի քանի այլ ներկայացուցիչների Բագվում, ուր նրանք բանակցություններ եյին վարում ուսւական հրամանատարի հետ: Հետևանքը միևնույն եր, ինչ վոր առաջ եր, այն տարբերությամբ, վոր այժմ Ավան յուղբաշուն հետ խոսողը գեներալ Ռումյանցովն եր, վորի թղթերից յերեսում ե, թե նա ընդհանրապես վատ եր վերաբերվում հայերին, ներկայացնելով այդպիսով գուցե առաջին որինակը հայատյաց ցարական բյուրոկրատի, մի տիպ, որ հետո չափազանց ընդհանրացավ: Ավան՝ յուղբաշուն մասին նա գրում եր իր կառավարության, թե դա մի շատ թույլ խելքի տեր մարդ ե և գանգատվում եր թե ինքը, Ռումյանցովը, հանգստություն չունի հայերի ձեռքից, վորոնք շարունակ ձանձրացնում են նրան Իիրանց հայտարարություններով²⁾): Ահա վերջի վերջո ինչ հասկացողության եր վերածվում հայերի շարժումը, վոր յեթե այսքան մեծացել եր և այսպիսի ուղղություն ստացել, այս միայն ուսւա կառավարության դրդումներով և սուտ ու պատիր խոստումներով:

Բայց հայերն ել Ռումյանցովներից ձեռք վերցնելու տրամադրություն յերբեք չունեյին: Այսպես եր նրանց քշում միանգամից վերցրած գիծը: Ավան յուղբաշին իր յեղբայր Թարխան յուղբաշուն ուղարկում եր Պետերբուրգ Յեկատերինային հաջորդած մանկահասակ Պետրոս II-ի մոտ, վորին ուղղում եր հետեւյալ աղերսագիրը.

«Արդ լինի մեծութեանդ քում այսօր քանի տարի է որ մենք Սղնախ ենք արարեալ, օնմանցու սուլթանի զօշունի հետ կոփե եմք տախու լուսահողի մեծ թագաւորի ուղազով, մինչի այսօր քանի անգամ մարդ եմք զրկել լուսահողի թագաւորին և քո հրամանոցդ զուլուղն, մեղ մին օգնութիւն չե եղե, զէրա մեք երկուս եկանք Բագու. Օհան ուղպաշին, Աքրահամ ուղպաշին, Պազի ուղպաշին, Աւագ ուղղեցինք Սղնախումն, մեք եկանք Բագու. իմ եղբայր Թարխան ուղպաշին, պարոն Քրիստոն, պարոն Մելքոն, պարոն Ներսեսն զրկեցինք քո հրամանոց զուլուղն, վասն Աստուծոյ Խաթրին մեղ մին ոգնութիւն անես, ի սէրն Քրիստոսի, քանի-քանի հազար հոգի կան մեք Սղնախում, Աստուծոյ հրամանաւ. և քո ողորմութեամբն մինչի այսօր պահել եմք, էսիր շեմք տուել, այսօր շատ նեղ եմք, լուսահողի մեծ թագաւորի գերեզմանի խաթրին մեղ քօմակ և օգնութիւն հասուցանես, որ անօրէնի ձեռքին էսիր չի լինիմք, վեր Աստուծած, ներքեն քո հրամանքոյ ես մեղ քօմակ. մեք ամենայն աւհալն Թարխան ուղպաշին և իմ վաքել Գրիգոր Մելքոն քո հրամանոցդ արգ կանեն, որ սորա ինձ վաքել կարգեցի: Այս գրիս ասլն թողեցինք Սարեցին կոմինդատին մօմ Աւան ուղպաշին մհրովն²⁾:»

¹⁾ Տամ-же, ս. 441.

²⁾ Տամ- же, ս. 442.

Հոկտեմբերի 21-ին Պետերբուրգում Թարխան յուղբաշխն աքտաքին գործերի պաշտոնատան մեջ, պատասխանելով իրան ուղղած հարցումներին, տվեց հետևյալ ցուցմունքները. 1) Հայկական գորքը բաժանված է չորս մասի և նրանց հրամանատարներն են վեց հոգի. Աւան և ինքը Թարխան, Արքահամ, Ոհան, Բաղի և Աւագ. Սղնախներում գորքերի թիվը հասնում է 30 հազարի, ուրիշ դասակարգեր—գյուղացի, վաճառական չկան այդտեղ; 2) Յուրաքանչյուր զինվոր ունի իր սեփական զենքը; Զենքերը շինվում են տեղում. հրացան, ատրճանակ, սուր, խանջար; 3) Յերկերն արդյունաբերում է ցորեն, բամբակ, մետաքս, խաղող և այլ բաղմաթիվ մրգեր; Կան նաև յերկաթի, պղնձի, անագի և արծաթի հանքեր. տեղացիները պատրաստում են և վառող. թնդանոթներ չկան, վորովհետև չկան ձուլող վարպետներ; 4) Զիաները տեղական լավ ցեղից են. կերակրի համար տնային կենդանիներ—կով, յեղ, վոչխար և այլն կան բավական թվով; 5) Յեկել են նաև իր ընկերները խնդրելու համար, վոր նորին կայսերական մեծությունը բարեհաճե հնար եղածի չափ ողնություն անել, ոռուսական գորքեր ուղարկելով հրետանիների և այլ զինվորական պատկանելիքների հետ՝ պաշտպանելու համար թյուրքերից. «Մինչև այժմ հայերը թյուրքերի դեմ իրանց զինվորությամբ կանգնած՝ միակամ և քաջարար կովել են և նրանցից կոտորել եյին շատերին զանազան դեպքերում»: Այժմ ել նրանք պատրաստ են շարունակել կոկվը, բայց զգալով իրանց թուլությունը, խնդրում են ողնական զորք, վորի ամբողջ պարենավորումը հայերն իրանց վրայեն վերցնում: 6) Գնալ բնակվել այն տեղերում, վորոնք վերցված են Պարսկաստանից, հայերը չեն կամենում¹⁾:

Յեթի հայերի կողմից՝ յեղած զիմումներն իրանց ձևով, բովանդակությամբ և տառով անգամ անվերջ կրկնությունների միջոցով վերջի վերջո փոխարկվում եյին մի տեսակ քաղաքական խաղարկության, նույնպիսի խաղարկության ձև եյին ստանում և ոռու կառավարության պատասխանները — խոստում, հուսադրություն, խրատ պինդ պահպերու, թյուրքերին անձնատուր չինելու: Թարխան յուղբաշխն իր յերկու պարոն (անշուշտ առևտրական) ընկերակիցներով հայրենիք եյին վերադարձվում այսպիսի ծանրոցքով: Բայց յեթե մեզ հարկ յեղավ մի անգամ ել դնել այս կըրկնություններու ընթերցողի առաջ, պատճառն այն է, վոր այս բանը տեղի յեր ունենում վերջին անգամ, չպիտի այլ ևս կըրկնության յենթարվեր: Հանձնարարվում եր հայերին սպասել մինչև վոր դրու-

թյունը կապարզվի: Յեկ պարզվում եր այդ զրությունը շատ արագ և շատ հստակ կերպով: Առաջ ու առաջ այն, վոր պարսկական ժառանգությունը Պետրոս Մեծի հաջորդների համար զնալով դառնում եր մի ավելորդ և ծանր բեռ: Խլված նահանգներն ոգուտ չեյին բերում պետության, այլ միայն մնա: Յեկ արգեն նույն 1729-ին սկիզբ եր դրվում հափշտակված տեղերի ինքնահօժար վերադարձման. զաշնագրով Պարսկաստանը յետ եր ստանում իր Աստարաբագն ու Մազանդարանը: Փօխվում եր գրությունն արեւվելքում: Յերկու տարի անցած՝ Աննա կայսրուհին, իրը թե ի նշան բարեկամության, վերադարձնում եր Շահ-Թահմազին և ամբողջ տարածությունը կուր գետի բերանքից մինչև Մազանդարանը. գնում եր այսպիսով և Պետրոս Մեծի ախորժակն այնքան չարաչար կերպով գրգուած Գիլանն իր 70 հազար պուդ մետաքսով: Շնորհի և բարեկամության հարց չկար. պարզապես գրծում եր յերկաթե անհրաժեշտության որենքը: Պարսկաստանն ուժեղանում եր: Նոր մարդ եր յերեացել, մի ավագակապետ, վոր հետո պիտի հոչակվեր Նադիր-Նահ անունով և վոր չպիտի թողներ և վոչ մի թիզ պարսկական հող ոռուսների թե ոսմանցիների ձեռքին:

Հայերի դադթեցումը դեպի Պարսկաստան այլևս միաք չուներ ոռուսների համար: Բայց այս չեր նշանակում, թե հայերը իսպառ կորցնում եյին իրանց կարևորությունը ոռուսների աչքում: Հին առևտրական կարևորությունը կար ու կար, Պետրոսի պարսկական արշավանքը դրան միացնում եր և զինվորական կարևորությունը: Հայ խոջան վոչ միայն մետաքս և պարսկական ապրանքներ եր տալիս Ռուսաստանին, այլ և կովում եր նրա համար, իր արյունն եր տալիս նրան, ինչպես եր Պետրոս դի Սարգիս Գիլանցը Ռաշտում իր հաշվով կազմած և գեկավարած հայկական ևսկադրոնի հետ, վոր կազմում եր ոռուսական բանակի մի մասը, մասնակցում եր կոփմերին, կրում եր կորուստներ սպանվածներով): Ինքը Պետրոս Գիլանենցն ել սպանվեց պատերազմի մեջ, բայց նրա եսկադրոնը չվերջացավ, այլ իրեւ ոռուսական զորամաս՝ Ռաշտից փոխարվեց նախ Դերբենտ, այստեղից՝ Սուրբ Խաչ անունով քաղաքը, վոր հիմնել եր Պետրոս Մեծը Դերբենտի վրա արշավելու ժամանակ: Այստեղ արդեն կազմվել եր հայ փոքրիկ առևտրական գաղութ, և հայկական եսկադրոնը, վոր գտնվում եր գնդապետի (հետո և զեներեալ մայորի) աստիճան ստացած Ղազար Խաչատրյանի (ոռուսերեն՝ Ղազար Խրիստոֆորով) հրամանատարության տակ, այնքան բուն ուազմական նոպատակների չեր ծառա-

1) Там-же с. 444—446.

յում, վորքան մի միջոց եր դառնում նորանոր հայ գաղթականներ զբավելու համար դեպի Հյուսիսային Կովկասի մերձկասպիական տափարակները՝ արդյունագործությունը և առևտուրը զարգացնելու համար: Ուստի հայկական եսկադրոնին տրվում եր այսպիսի դիրք, վոր նա կարողանար ազդեցիկ և անուն ունեցող հայեր գրավել իր շարքերը և դրա հետ միասին զբավել նաև ուրիշ հայ գաղթականական տարրեր: Այս դիտավորությունն առանձնապիս Դարաբաղի հայերին եր վերաբերվում: Յեթե անաջողության եր մատնվում Դարաբաղի ամբողջ ազգաբնակությունը Գիրան և Մազանդարան տանելու ձեռնարկությունը, արդեն իսկ մասնակի գաղթականական հոսանքներ նույն այդ յերկրից անցել եյին գեպի հյուսիս, գաղթավորելով Բագուն, Դերբենտը և այս տեղերից ել գեպի հուսիս, Աստրախանի ուղղությամբ: Ահա այդ հոսանքն ուժեղացնելու համար եր, վոր ուսւաց կատավարությունը փորձում եր հայկական եսկադրոնի մեջ թափել հատվածներ Սղնախների ղինվորությունից, գործադրելով պարզապես կմժցը:

Յեվայս փորձը նրան աջողվում եր լիուլի կերպով: Նա կարողանում եր գնել Սղնախների վոչ թե յերկրորդական գործիչներին այլ գլխավոր հրամանատարին, Ավան յուղբաշուն՝ իրան: Առևտուրը կատարվում եր առանց վորեն գժվարության: Թարխան յուղբաշու ուղերությունը Պետերուրդ անշուշտ կրում եր իր մեջ նաև վաճառվելու առաջարկություն: Դոնե նա վերադառնում եր Պետերբուրդից արդեն վաճառված և այս, ինարկե, վոչ առանց նրա յեղբոր գիտության: Ռուսաց արքունիքն ընծայում եր Թարխանին մի սամույրի մուշտակ և 1000 բուրլի դրամ: Նույնպիսի մի մուշտակ ել ուղարկվում եր Ավան յուղբաշուն և բացի դրանից Բագվի ուսւ իշխանության հրամանագրվում եր՝ տեղական արդյունքներից տարեկան հազարական բուրլի տալ ամեն մի յեղբոր: Միաժամանակ և պետական դադարնի խորհուրդը վորոշում եր, վոր յեթե Թարխանը կամ նրա հետ Բագու դնացած Ավանը կամհնան մեալ ուսւաց տիրապետության տակ գտնվող յերկիրներում, այդ բանը կթույլատրվի նրանց և ուսւաց կատավարությունը հանձն և առնում յերկուսին ել բավարար ոռնիկ տալ¹⁾:

Այնուհետեւ Ավան յուղբաշին լքում եր Սղնախները, զնում եր ծառայելու ուսւներին, մտնելով հայկական եսկադրոնի շարքերի մեջ, տանելով իր հետ նաև մի քանի յուղբաշիների: Դարաբաղի

հայ զինվորության վերջն եր, և մենք այլևս վոչինչ տեղեկություն չունինք նրա մասին:

Բայց գիտենք, վոր Ավան յուղբաշին, բավական չհամարելով այն գինը, վոր ուսւաց կառավարությունը կտրել եր իր համար, 1734 թվին ղիմեց կայսրուհի Աննա Իվաննովային մի շարք հայտարարություններով, վորոնց մեջ ասում եր.

«1. Յերջանկահիշատակ նորին կայսերական մեծություն Պետրոս Առաջինի հուսադրությամբ դուրս և յեկել նա (Ավանը) Սղնախից (թողնելով այնտեղ տունը և կալվածը շատ հազարների արժողությամբ), բերելով իր հետ 5 հոգի ուրիշ յուղբաշիներ և 250-ից ավել այլ զինվորական, վորանցից 150 հոգի նրա սեփական հաշվով, իսկ ոռնիկ նշանակված և նրան, իբրև զվարու հրամանատարի, 1200 բուրլ., վորով նա իրան պահել չե կարող և բացի դրանից 1729 թվից մինչև այժմ ծախսել և նա իբրև հավելում իր սեփական փողերից 8000 բուրլի, վար խնդրում և վերադարձնել իրան 2. Ռուսաց պարսկական մարզերում, Մուշկուրի մեջ կան Քիրվան և այլ անուններ կրող գյուղեր, թվով 9, տակ նրանց իրան ի տիրապետություն: 3. Վոր պարսիկների, ոսմանցիների և այլ էնունցի ժողովրդների գերությունից դուրս յեկած հայերը մեկ ել յետ չվերադարձնեն ուսւաց կողմից, վորից քիչ չի բաղմանա հայ ժողովաւոզը նորին կայսերական մեծության ծառայության մեջ: 4. Նախկին պարսից Շահը շնորհել և նրան խանի և սպասալարի կոչումը, և այժմ նորին կայսերական մեծությունը բարեհանե շնորհել նրան գեներալ մայորի աստիճան, վորպեսզի, տեսնելով այս, մնացած հայերը Սղնախից հոգարությամբ գային մտնելու նորին կայսերական մեծության հովանու տակ նրա ծառայության մեջ: 5. Ամենից առավել խնդրում և, վոր իրան շնորհվի նորին կայսերական մեծության պատկեր»:

Աննա կայսրուհին նշանակում եր Ավան յուղբաշուն, բացի ոռնիկից, 2000 բուրլի, տալիս եր նրա խնդրած գյուղերը, համաձայնում եր, վոր գերությունից աղատված հայերը հայրենիք չուղարկվեն, այլ մնան, անշուշտ՝ Ավան յուղբաշու ձեռքի տակ և նրա կալվածներում, ուսւական ծառայության մեջ մտցնելու համար: Հետաձգվում եր միայն գեներալ մայորի աստիճան և կայսերական կենդանագիր շնորհելու հարցը: Բայց դրա տեղ, Սղնախներից նոր գաղթականներ գրավելու համար, թույլատրվում եր, վոր նա կը պարսից Շահի շնորհած խան տիրողութը¹⁾: Ավան յուղբաշին դառնում եր Ավան խան:

Այս ժամանակ հայկական եսկադրոնը դեռ գտնվում եր Սուրբ խաչ քաղաքում: Բայց վորովնետեւ այս տեղը, իբրև պարսկական հոգ, Դերբենտի հետ պիտի վերադարձիր Պարսկաստանին, ուստի 1735 թվականի սկզբում գեներալ Լեվառելի թերեք գետի ձախ ափին, ձահիճներով և յեղեգնութերով շրջապատված մի տեղում,

¹⁾ Տամ-յե, ս. 451—453.

գրեց Ղղար անունով բերդի հիմքը, վոր հետո պիտի մեծանար և հոչակվեր իրրե զինեզործական, ողեզործական և մետաքսագործական հարուստ և վաճառաշահն քաղաք: Հիմնարկության ժամանակ այստեղ բնակեցվեցին գանազան աղքություններ, վորոնց մեջ առաջին տեղը բռնեցին հայերը: Այստեղ տեղափոխվեց հայկական եսկալերոնը, վոր հետո կազմալուծվեց իրրե զորամաս և նրա զինվորները դարձան այդ նոր քաղաքի բնակիչներ¹⁾: Ղղարն այսպիսով դառնում եր զլիսավորապես հայաբնակ գաղութ: Ավան յուզբաշին ել այսպիսով դառնում եր Ղղարի հիմնադիրներից մեկը, իսկ տեղային հայ ազգաբնակության մի խոշոր մասն, անշուշտ, նրա ջանքերով եր գուրս բերվել Հյուսիսային Ղարաբաղից, վորի քաջամարտիկ առաջնորդն ու պաշտպանն եր նա նախ քան իր վաճառվելը:

Բայց 1736 թվին, ինչպես իմանում ենք մի պաշտոնական ցուցակից²⁾, Ավան յուզբաշին կամ Ավան խանն արգեն վախճանված եր: Նրա կինն ապրում եր Աստրախանում իր Արլուխան վորդու հետ: Ավան խանից, ինչպես ասում են, առաջացել են մի քանի իշխանական տոհմեր — Սմբատյան, Մելիքյան, Հայրապետյան³⁾:

Յերեսնամյա պատմության վերջումն ենք: Այս՝ Ղարաբաղի աղատագրական շարժման առաջին շրջանն եր: Նրա մեջ զործած անձինքներից մի հատն եր միայն մնացել — Մինսս վարդապետ Տիգրանյանը. նա ել, մնալով, ինչպես ասվում ե, ողի մեջ կախված, թողնում եր ամեն ինչ և մտնելով ոռուսաց յեկեղեցու ծոցը, անհետանում եր հայկական հորիզոններից:

Խորայել Որիի գործը կատարյալ լուծարքի յեր յենթարկված: Այս լուծարքը ուրիշ խոսքերով կարելի յե բնութագրել՝ ազատգրական պատրանի արտահայտությամբ:

Տարաբախտաբար, այս միակ պատրանքը չեր հայ ժողովրդի համար, այլ միայն առաջինը: Այս առաջին պատրանքն ե պատմում մեր գործի այս առաջին հատորը: Դրանից հետո հայ ժողովրդին վիճակվել են դարձյալ չորս մեծ քաղաքական պատրանքներ: Յեվ դրանցից յուրաքանչյուրն ել մենք կպատմենք առանձին առանձին հատորներով:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՑՈՐԻ

¹⁾ Бугков, I, с. 153—155.

²⁾ „Старапопольские Губернские Ведомости”, 1834, № 50.

³⁾ „Собрание актов, относ. до обозр. ист. армян. народа”, М. 1838 ч. II с. 57.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ (ԿՈՆՍՊԵԿՏ)

Առաջարան

Նոր Պատմություն և խոջայական կապիտալ: Զուգակշեռ Արեմուտքի և հայության մեջ. — Ամերայական և խոջայական կապիտալ: — Դասակարգեր: — Ներկա աշխատության ծրագիրը

ԴՐԱԿԱՌԱՋԻՆ (ՆԵՐԱԾԱԿԱՆ)

ՀԱՅ ԿԱՆՔԱԿԱՆ ԴԱՎԱՆԱԳԻՒԹՅՈՒՆԸ

1. Ակնարկ հեթանոսական ժամանակների վրա. — Զորբորդ գարի ավատական հեղաշրջումը և քրիստոնեյությունն իրեւ պետական կրոն Հայաստանում. — Հոռմ և Պարսկաստան. — Արաւային և հովտոյին տնտեսություններ. — Պարթևական իրանը և Հայաստանի Արշակունի փոխարքայությունը. — Հոռվեյական ազգեցությունը Հայաստանի վրա: — Իմպերիալիզմ և կապիտալիզմ: — Կիկերոնի շահագործական իրատները Պոմպեյոսին. — Հայաստանի հովտային տնտեսության նվաճումը հոռմեյական կապիտալի ձեռքով: — Քաղաքային տնտեսություն, հրեյական գաղութներ, հոռմեյական մեծ զինվորական ճանապարհ Արարատի կենտրոնից գեպի Արեմուտք: — Հայ Արշակունիները և քաղաքային տնտեսությունը. — Յերվանդակերտն իրեւ նմուշ: — Հոռմայեցիների հոգացողությունը Հայաստանի քաղաքային տնտեսության մասին

2. Սասանյան հեղափոխությունն իրանում: — Դինաստիական պատերազմներ Սասանյանների մեջ: — Հայ Արշակունիների մեջ: — Հայ արշակունիները փրկություն են փորուում քրիստոնեյության մեջ: Սիրիական խաղաղ վաճառականական քրիստոնեյությունը Հայաստանում: — Վորոնվողն այս չե, այլ Բյուզանդականը, իրեւ իմազերիսալիստական-ուազմական. — Գրիգոր Պարթևի կամ Լուսավորչի գեմքը: — Կազմակերպչական ընդունակությունների հաֆշուակում սրով և հրով — Ավատական տակնուկրացումներ, նոր դասավորութերը: — Յեկեղեցի և կղեր հողատիրական ընդարձակ հիմքերի վրա: — Կղերական պետություն հայ Արշակունիների պետության մեջ: — Գրիգորը այդ պետության գլուխ և առաջինը հայ Փեղողալների մեջ իր սեփականացրած գավառներով: — Նմուշ այդ սեփականացման, պատերազմ Աշտիշատի համար: — Կղերականության անչափ մեծացում պետական հողերի ընծայումների միջոցով: — Մերձեցում Մամիկոնյան տոհմի հետ շահակցական կապերով:

3. Կղերական միապետությունը Հայաստանում ավտական կազմակերպություն ուներ աշխարհականի պետ Ավատական հեղաշրջման շար-

4. Ավատականության վերջնական հաղթանակը: Շապուհ Յերկարակյաց և քաղաքային տնտեսության վոչնչացումը — Տնտեսական հեղաշրջում: — Հայաստանը զյուղականացած: — Քահանայապետական դինաստիան ավատական հեղաշրջման զլիքին: Արշակավան: — Դինաստիական տագնապ Գրիգորի տոհմի մեջ — որդենության հարցը, Հուսիկ և Սահակ: — Անզագակությունը մերօւմ և դինաստիան Մամիկոնյան տոհմի հետ: — Գիր և զբականություն իբրև վերջնական հաղթանակ կղերական դասի և ավատականության: — Լուսավորչականությունն իբրև ճակատագրականություն հայ ժողովրդի համար:

5. Կղերական դիվանագիտության դավանանքը, Արևմտամոլություն: Պապ Էլագավորի քաղաքականությունը արևմտամոլության գեմ և նրա սովորությունը, Նախարարները վորոշում են հավատարիմ մնալ Բյուզանդականության իրեն քրիստոնյա կողմին: Ազգամիջյան պատերազմ:

6. Բյուզանդիայի, իբրև մեծ պետության քաղաքականությունը հանդեպ հայերին - Քրիստոնասի իրություն և շահամոլություն։ Հայաստանի վաճառումը - 384-ի բաժանումը և նրա նշանակությունը հայության համար։ Արևմոյան Հայաստանի հոնացումը։ Կղերական զիվանդիառության պաշտամունքն, այնուամենայնիվ, մեռմ և բյուզանդականությունը։ Հինգերորդ դար. կղերա-ավատական ազստամբություն։ Բյուզանդիայի աջակցության հուսով։ Բնորոշ զիվանդիառական զիմում կայրին։ Հայաստանը նորից վաճառված և կործանված։

Պաշտամունքն անփոփոխ է դարձել ընթացքում: Բյուզանդիայի տեղ՝
Քրիստոնյա: Յեկապա: — Հակառակ հասանեցներ հայ իրականության մեջ: —
Պապ թագավոր, Թեոդորոս Մշտունի, Մլի: Խշան Կիլիկիայի: Հեթում
Մազաքոր Եկիլիկիայի:

ԴՐԱՄԱԳ ՅԵՐԿՐՈՐԴ

ԶՈՒՂԱ ՅԵՎ. ԶՈՒՂԱ.ՅԵՎՑԻՆԻԹՑԵՆ

Գլուխ տռաջիմ. — Խոջայական կապիտալի վոկենդար

1. Նախարարական դասի նվազումը Հայաստանում: - Ձինքորական բանի և հոժարակամ արտապալթեր, մասսայական կոտորածներ արար-ների ձեռքբափ: - Միջնադարյան առևտուր: - Դվին: Պարտավ, Դվին: Անի: Կարս: Արձն գծեր: - Սելջուկան արշավանքներ, նախարարական մա-ցորդները քաղած դեպի հյուսիս և արևմուտք: Կիլիկիայի նշանակու-թյունը հայ ավատականության համար, հայ բարոններ Արևմտյան Յեկրոպայի առևտորական կամլիսալը Կիլիկիայում և նրա ազգեցությունը հայ կյանքի վրա Կիլիկիայի հայ Փեղալական թագավորության ան-

կումը և պրա հետևանքները. հայ բարոնը՝ պարոն վաճառական, առետրական գաղութներ; Կիլիկիայի հզոր ազգեցությունը բուն Հայաստանի վրա: Արտագաղթեցը դասնում էն առետրական Հայ առետրական կտպիտալը գերազանցորեն գաղութային յերկույթ

2.—16-րդ դար, Թյուրքիա և Նոր Իրան: Հայ առևտրական կապիտալը Արաքսի ձախ ափին, Նախիջեանից գետի արևելք: Խոչայտական գյուղեր և ավաններ Ինչու յինք դրանց կապիտալն անվանում խոջայական: Զուղար, նրա գիրը առևտրական հաղորդակցությունների վրա 16-դարն իբրև Նախնական շրջան Զուղայի խոջայական կապիտալի Զուղայեցիները Վեհենտիլիում: Նրանց ազդեցությունը պարսից արքունիքում: Զուղայի ավերակների Նկարագրությունը Պարսկա-թյուրքական պատերազմները և Շահ-Աբբաս Մհեմ: Հայերի հօժարակամ գաղթը Այսբեկովասում Ոսմանցիների գրաված տեղերից Պարսկաստան Շահ Աբբասի հաղթական արշալանքը ոսմանցիների դեմ

3. Շահ Արքասը Զուղայում. Հայ Ժողովրդի մեծ զանգվածային բռնակորումը Արարայան յերկրից Պարսկաստան՝ Զուղայի խոջայական կապիտալը Սպահան փոխադրելու համար Շահ Արքասի հոգացողությունները Ժողովրդական այդ ազեաը մերժմացնելու համար

4. Նոր Զուղա, նրա կառուցումը, խոջայական համայնքը, պատմական նշանակությունը: Նոր Զուղայի խոջայական կապիտալը՝ թափազորական կապիտալ: Շահ Աբրասը և Զուղայի խոջաները. Ընկերական առետրական գործեր, հասարակական և ընտանիկան հարաբերությունները Խոջաները միջազգային առեսորի մեջ. I Հատվածներ Զաքարիա Ազուլեցու. Որագրից. II Սաֆար և Ֆրանսիացի՝ խոսակցություն. III Պատառն Տուրնըֆոր և հայ խոջայական կարավան: «Դանձ չափոյ, կըոյ, թուոյ զիբբը՝ միջազգային առեսորի ուղեցույց:

5. Առջայիկան կապիտալի խոշոր կուտակումներ նոր Զուղայում Որբնակները կապիտալից գեղի պետական ծառայությունն է Հայ խոջաները՝ պարսից կառավարության դեսպանները Արքևազ Զուղայում, առարանքները, պատկերագրությունն, Մինաս վարպետ-Զուղայեցիությունն Խոջայական կապիտալը և հայկական առաջարությունը Մեկենասությունն ենք

6. Խոջայական կապիտավոլի աշխարհագրությունը: Յերկու գլխավոր ուղղություններ՝ գեպի հարավի, Հնդկաստան և գեպի հյուսիս, Ռուսաստան: Հնդկաստան և գոհարավաճառություն Անգլիական կապիտավոլ գաշնակից հայ խոջայական կապիտավոլի հետ Հնդկաստանում: Արարուազրեր: Խոջա Փանոսը մեղեսիկ անունով գոհարի մենափաճառի տեր Հնդկաստանում: Մի խոշոր արամանգի գնման պատմություն Մարկոս անունով հայի ընծան անգլիական թագավորին գոհարներով, Հնդկաստանից: Գոհարեղեններից կազմված մի հարսաության ցուցակ: Մի հայ գոհարավաճառի անաջողությունը վենետիկում: Հայ տունքական ընկերություններ և նրանց խոշոր վաստակները, Խոչա Հուսեփի, Շահըմանյաններ: Հայերը՝ հիմնադիրներ Կալկաթա քաղաքի:

7. Հայ խոջաներն Ռուսաստանում Նրանց առևտությ Մոսկվայի վաճառական թագավորների հետ Զուղայի վաճառականական ը կերռւթյան բանակցությունները ցար Ալեքսեյի հետ Զաքար Սահրապյան և Նրա մատուցած ընծան Ստեփան Ռամազանեցի և Գրիգոր Լուսիկյան՝

Հվաստարմատարներ նույն առևտրական ընկերության Արտօնություն-
ների պայմանագիր, անզլիայի Թովմաս Բրայտը լիազոր ներկայացուցիչ
ընկերության, Գետրոս Մեծ և հայ խոջաները: Վոլգոյի ճանապարհը,
Առարախանի կաքեռությունը Պարսկաստանի առարի համար . . .

89

8. Հայ խոջայության մեջ առաջազոր տարրեր, վորոնցից կազմվում ե
այն խափը, վորին արվում ե ինտելիգենտ առունը: Նոր Զուղայի դրու-
թյան փոփոխությունը 17-դ դարի յերկորդ կիսում: Կառավարական կեղե-
քությունը, կրօնական հալածանքների Դժգոհություն, վոր տանում ե դեպի
ազատապահական դադախարը: Հայ կղերական դիվանագիտության հին հա-
վատը Յեղորակայ խաչակրության մասին, վոր պիտի գա հայերին ազա-
տելու համար Հռոմի պապի գերը: Կաթոլիկ պրոպագանդը Հայաստա-
նում: Լուի 14-դ, Փրանսիական առևտրական կապիտալի մրցությունն
Արևելքում անզլո-հոլլանդական առևտրական կապիտալի գեմ, վորին գաշ-
նակցած եր հայ խոջայական կապիտալը: Զանքեր կաթոլիկացնելու հա-
յերին և այդպիսով Ֆրանսիայի կողմը գրավելու հայ խոջայությունը:
Լուի 14-դ և Նախիջեանի գավառի հայ ունիթուրները: Դիվանագիտական
հարաբերություններ պարսից կառավարության հետ այդ կաթոլիկներին
պաշտպանելու համար Փարձ պորտից կառավարության ձեռքով վոչնչաց-
նելու Զուղայի խոջաներին Մեծ գեղիքի պատասխանը: Վեճ առևտրա-
կան մեծ ճանապարհների համար Մարսելի հարցը: Հայ խոջաները պարս-
կական առևտություն են Մարսելի ճանապարհից և տանում են դեպի
Հնդկական Ովկիանոսը և գեալի Կասպից ծավը: Լուի 14-դը, իբրև հակա-
դրություն, ուժեղացնում եր կաթոլիկ պրոպագանդը Յեղիտուները Հա-
յաստանում: Խոստացվում ե, կաթոլիկությունն ընդունելու զեպքում,
ազատություն տնավատների լուծից: Պայքար կաթոլիկ և լուսավորչա-
կան կղերի մեջ: Նմուշներ: Ֆրանսիական տեղեկացի Պարսկաստանի և
Հայաստանի առևտրի և հայ վաճառականության մասին: . . .

94

9. Առևտրական շահերը Թյուրքիայում Ֆրանսիայի և Լըվան: Կապի-
տուլասիրներ, Ֆրանսիան Թյուրքիայի մշտական բարեկամ: Առևտրական
մեծ ճանապարհների հարցը և Լուի 14-դի նոր պահանջները Թյուրքիա-
յից: Դիվանագիտական միջազնության մասին կապիտալը պահանջում է պատե-
րազմ: Թյուրքիայի գեմ: Լուի 14-դը խաչակրություն և ուզում սկսել
Թյուրքիան կործանելու և Արևելքի քրիստոնյաներին ազատելու համար:
Դիվանագիտական միջազնություն հարթվում ե, Թյուրքիան մասնակի բավա-
րարություն և տալիս Ֆրանսիայի պահանջներին, Բայց խաչակրությունը
մնում և Լուի 14-դի համար պալատական ժամանց: Երա գործակալները
շրջում են Արևելքում և ամեն աեղ քրիստոնյաներին ավելառում են ֆրան-
սիական մոտալուս ազատազրական արշավանքը: Այդ գործակալներից
յերկուուր յերեան են գալիք Եջմիածնում: Հակոբ կաթոլիկոսը և Յերեանի
յեղիքա քարոզիչները: Կաթողիկոսը թեքվում և գեալի կաթոլիկություն
այդ միջոցով Հայաստանն ազատելու համար: Անհրաժեշտություն դիմելու
Հռոմի պապին: Նախընթաց յերկու փորձերը Պիտիսպ կրոնափորը և Պե-
տրիկ հայ կաթոլիկը Եջմիածնում: Հակոբ կաթոլիկոսը հանդիսավոր կեր-
պով ընդունում է կաթոլիկություն: Պիտիսպն և Պետրիկը Վիննայում,
ուր դիմութիւնը են անում ավարիական կայսրին հայերի ազատության
մասին Պիտիսպի մահը: 1678-ի դադովը Եջմիածնում: Հակոբ

366

կաթողիկոսը 6 պատգամավորների հետ գնում ե կ. Պոլիս՝ այնտեղից
Հռոմ անցնելու համար: Մահ և ձեռնարկության քայլայում . . .

107

Գլուխ յերկրորդ.—Ղարաբաղ

1. Այս անվան աշխարհագրական բովանդակությունը 16—18-դ դա-
րերի առևտությունը: Ասհմաններ լեռնագծերով Լեռնային և Դաշտային Ղա-
րաբաղը: Նրանց տնտեսական փոխարարերությունները: Անասնաբուծու-
թյունը հովոց և ձմերոց: Լեռն ու գաշտն այս տնտեսական անհրաժեշ-
տառթյունների մեջ: Լեռնային յերկրագործությունն իրքի տնտեսության
ավագ ճյուղ Հակաբրություն գաղտային բազմաճյուղ և բազմանարուստ
ծալիւթիւն: Լեռը և առևտրական հարաբերությունները: . . .

122

2. Ազգաբնական բովանդակությունը: Հարավային Ղարաբաղ (Սյու-
նիք) և Հյուսիսային Ղարաբաղ (Արցախ), յերկու հայացված քույրաթելվ
յերկիրներ Նախանայիկան իրականություն ցեղային ծագում, տարա-
ծում: Աղվանից աշխարհ-ժողովուրդներ, լեզուներ, թագավորներ, ընդհա-
նուր ազգաբանական բնություններություն, առնմատիրական-ցեղային կաղ-
մակերպություն, հայացում լեզվի միջոցով: Սյունիքը հայոց պատմու-
թյան մեջ: Արցախը և Աղվանից զաշալը . . .

127

3. Ազգաբնակչական շերտավորումները Լեռնային Ղարաբաղում: Գյու-
ղացիություն և նախարարությունն Ավատական սիստեմ: Հյուսիսային
Ղարաբաղը արաբական տիրապետության հաստատումից հետո Դաշտային
Ղարաբաղում: Գյուղական թագավորների շրջանը: Հյուսիսային Ղարա-
բաղը (Խաչինը) հյուսիսային Հայաստանի ավատատերների գանձակցու-
թյան մեջ (Փամար Թագուհի, Զաքարե սպասարար): Տնտեսական և մշա-
կույթային բարգավաճում: Հողային հարաբերությունների հարցը: Ճոր-
տային գրության ազգացույցներ Տաթեր Շուտողները և գյուղացիական
շարժումներ: Ճորտատիրությունը Հյուսիսային Ղարաբաղում—Մխիթար
Գոչի «Դատաստանապիլքը»: Քրիստոն ճորտատիրություն . . .

134

4. Միջին Ասիայի յերեքարյան աշխարհաբանություններն Արե-
մտյան Ասիայում: Լեռնային Ղարաբաղն այդ բանդումների մեջ: Հնի
պահպանությունը մանրացած և կարկանած ձեռերի մեջ: Գանձասարի
վանքի նշանակությունը Հյուսիսային Ղարաբաղի համար: Վանական
գրադիտառթյան վերածնությունը: Գանձասարի կաթողիկոսը — գանձեց
իշխան և հրամանատար մանր ու խոշոր կաթոլիկությունը ցանցի ամրագլ
Հյուսիսային Ղարաբաղում: Այս գասակարգի բազմաբարդությունը: Մե-
լիքական գրությունն Մելիքական գյուղատիրությունն ըստ պարսկական
պաշտոնական վագերագրերի: Մազրայի մելիքները: Շահնազար և նրա
հաջորդները: Մելիքը — առեստական գլխավոր իր գավառում: Հին սովո-
րությանական կարգով մելիքների վայելած իրավունքներն ու հարգը ժո-
ղովրդի մեջ: Մելիք-Ազամի որինակը Մելիքական հողատիրության մեջ
պահովել եր հին ճորտատիրությունը: Ապացույցներ: Մելիքական իշխա-
նության ժողովրդական ավանդությունների մեջ — զորք զատաստան
Մելիքական ժամանակի մշակույթ: Մելիքական տուն: Մելիքական գույքը

146

Մելիքական Ղարաբաղը — պատվանդան ազատազրական գաղափարի
իբրև այսպիսին՝ նա տարվում է Արևմտյան Յեղորակա: Ճանապարհը —
Ղարաբային Ղարաբաղի այն մասը, վոր կապած եր Արաքարի ձորին և պատ-
կանում եր հայ խոջայական կապիտալության մասին . . .

367

1. Պերմանքի խանութիւնը լուի 14-դիւ արքունիքի մոտ և այդ խանութիւնը — Խորայել Որի անունով հայր, վաճառական իշխանական տոհմից և հիմա ուղղում և մտնել դիվանագիտական աշխարհ իբրև ներկայացուցիչ «Հայաստանի իշխանների», ընտրված եջմիածնի գաղտնի ժողովում և Հակոբ կաթողիկոսի մահից հետո անցած Յեղորապատ Խորայել Որին պատմական գրականության մեջ — պրոֆեսոր Սոլովյով, պրոֆեսոր Հեյդել Կարապետ Ենոյան Ազգյուրը — արքի փային թղթեր Աշուա Հովհաննիսյան և այդ թղթերի քննական վերլուծությունը՝ Կեղծիքներ և իրականությունները լուսաբանությունն Որիի իշխանական ծառագիր հարցը: Խաչքակյան տոհմը և Պռոշ իշխանը Նախիջևանի Շահապոնք զավարությունը — Որիի հայրենիք: Որին — ամենայն հավանականությամբ հայ կաթոլիկ (ունիթոր): Միքանի ապացուցներ

2. Որի պարզուն ջանքերը ունենդրության ընդունվելու կու կամ 14-դի մոտ Որին իրեւ գիշանագետ աշխարհական վոչինչ տարրերություն չը կա հայ կղերական և աշխարհական դիշանագետների մեջ ։ Փարիզից Որին աեղափոխվում է Հռենոսյան Պալատինատի մայրաքաղաք Դյուսելդորֆի ։ Քրդապատճառները Քաղաքական տեսություն - ավատրության պատերազմները և Լեռոպոլի կայսրի բարձրացումը ։ Որին ցորենի և գինու առևտուրական Մանողությունը Հովհանն-Վելհեմ կուրֆյուրստի հետո Վերջինիս բնութագիրը Խոսակցություններ Հայաստանի պատռւթյան մասին։ Որին առաջարկում է կուրֆյուրստին Հայաստանի թագը, յիթե նա զորք կուղարկե այստեղ՝ հայերին ազատելու համար կուրֆյուրստը համաձայնում է Որիի հանապարհորդությունը Հայաստան՝ նոր լիազորություններ բերելու և ծրագիր մշակելու համար։

3. Ճանապարհորդական արկածներ և փանազիաներ էջմիածնում:
Հայրական պանքը Անգեղակոթ պյուղը՝ Անհավատալի արագություն շարժումների և գործողությունների մեջ, Գանձասարի վանքում Որին խռովում և կուրֆյուրստի դրամական ոգնությամբ Կրօնական վիճաբանություն Անգեղակոթի «ավագաժողովը» Ամեն բան վերջացրած 12 որում «Ճերմակ պլեներ» և կեղծ թղթեր Մինաս վարչապետ Տիգրանյան Վերադարձ Ենքոպա:

4. Ծրագիր խաչակրական արշավանքի Հռենոսի ափից մինչև Թագերիդ Ինչ ընդունակություններ թույլ տվին Որին ստեղծելու այսպիսի մի խոշոր հիշատակագիրը՝ Բովանդակություն Զո՞ն Հովհան Վիհնելմին, յերբ ականակացությունն այսատանի համար, բանակի կազմը, ծախուերը, առասպեկները Լեհաստանի և Ռուսաստանի մասին, նվաճողական քանդագուշանք, թվական բանդագուշանք, Փինանսական բանդագուշանք: —Կուրֆյուրստի սպասած ընծաների հարցը Փոփոխված քաղաքական դրություն-պատերազմ սպանիական ժառանգության համար Որին գլուխագիտական ճանապարհորդությունը Հռոմ, Ֆլորենցիա, Վենետիկ Ամեն տեղ հուսաղբություն Կայսրի մերժումն ու ցուցմունքները Կուրֆյուրստի սիրալիք հուսաղբական նամակը «Հայաստանի իշխաններին»: Պատմակնատում պատրաստվում եր հայ թագավորացու—Որին, Ռուսաստանի գերրու

133

179

188

199

Գլուխ չորրորդ. — Ցարք յիշ խոչան

1. Ծինծու զիմում Ասպեղակոթի ժողովի անունից ցաք Պետք Ալեքս-
սեյէկիչին Որին Մոսկվայում Կասպիական ծբագիր և հյուսիսային պա-
տուհազմ Ռուսական իմպերիալիզմի ընդգրկած զինավոր պատրիակը —
քրիստոնյաների ազատությունը Հայ կղերական դիվանագիտության
հանդիպումն այդ իմպերիալիզմին: Որիի դիմումը նույն իմաստով, բայց
փոփոխված պայմաններով: Հայաստանի թագի հարց չը կա այլնա Որին
«իշխանների» դիմումի մեջ սնված և ընդհանուր զլութ և կարգադրիչ Հա-
յաստանում: Ազատազրությունը պիտի կատարվի միայն ռուսական զոր-
քերի ձեռքով, զիրոնք և զրաված պիտի պահեն իրանց վեցքած աեղերը: 215

2. Որիի անդրանիկ աղերսագիրը ոռւսաց ցարին՝ նախորդինակ հետապա անթիվ աղերսագիրը: Պետրոսը հուսագրում է, խոսանում եազատել հայերին միայն շվեդական պատերազմը վերջանալուց հետո: Շարունակական բանակցություններ ոռւսաց կատավարության հետ: Ի միջի այլոց, Պետրոսը թույլատրում է, ըստ որիական ծրագրի, վոր կուրֆյուրսի զորքերը Խուսաստանի վրայով անցնեն Հայաստան գնալու համար, բայց բանից գուրս եր գալիս վոր կուրֆյուրստի այս խոստումը լոկ խոսքեր եյին յեղեք 1702-ին Պետրոսը հրամայում եր նորից հուսագրել հայերին դատական խոստումներով, և Որին այդ «ավետիսը» ուղարկում եր Հայաստան հայ Միրոն Վասիլիեսի միջնորդուի:

3. Լեռնային Դարաբազի ծանը դրությունը պարսկական զմաժան
հարկանանության աակի վոր յերևան եք հանում յերկը ծայրահեղ տնտե-
սական տկարությունը և մելիքական ինքնավարության ստվերայնու-
թյունը Ցարական հուսադրությունը վոչ մէ արձագանք չի գտնում կե-
ղեքփող յերկը մեջ: Միքոն Վասիլյեվի ձեռնունայն վերապարձր Որիի
աշխատակից Մինաս վարդապետը կեղծում ե մի թուզթ իբր թե Եջմի-
տնի ամբողակալ Մինաս վարդապետի լեզվից Ավելի խոշոր կեզծարա-
րություն հետևյալ տարրում: կեղծվում ե մի մեծ ժողով Գանձասարում,
վոր հրճագանք և հայտնում ցարական հուսադրության առիթով և միաժա-
մանակ յերկու տուրհակով կաշառք և խստանում պետական կանցլեր
Գոլովինին 20 հազար վոսկի և խորդման Սպաթարիկոսին և հազար վոսկի:
Հաղթանակ այս միջոցավ Որին ստանում ե զննավետի աստիճան թույլ-
տվություն գնալու Պարսկաստան իբրև դեսպան Որին արտասահմանում
Մեծածախս պատրաստություններ դեսպանության Որիի համար սարք-
մում կո ուստանի առաջո՞ն Հռոմի պատի կողմից . . .

4. Դրամական միջոցներ Որին հայթայթում եր վաճառականությունը Նրա հարաբերությունները յերեք գոկ յեղբայր վաճառականների հետ Մեծածախ և բազմամարդ դեսպանությունն Պետրոսի նամակը պարսից Շահին Որին Շամախում Նրա գեսպանության պատճառած հուզմունքն Արևելքում Վաճառականություն և առևտության հանձնարարություններ Ֆրանսիական կապիտալի ներկայացուցիչներն Սպահանում և նրանց պրոպագանդը Որիի գեմ: Մշշել Որին Հյուսիսային Շահի մոտ Վերադարձ Շամախի, Նիզովոյ, դեսպանության քայլայսւմ, ապրանքների կորուստ Ցեսարյի կաթողիկոս Աղվանից Որին Աստրախանում:

5. Որին բնութագրումը Նախատիվ հայ ինտելիգենտի, ծնված խռայական կապիտալից, արևելահայության միջավայրում Ցեղերմիա Զե-

24 ԱՐԱ ԽՈԳՅԱԿԱՆ ԵՎԱՎԻՇՎԱՐ

լեզրի Քոմուրճյան իբրև նախատիպ արևմտահայ ինստելիքենտի: Ամիրայական կավիտար Սառափությունը՝ ծնունդ թյուրքաց պետական ռեժիսոր, Ազգաբնակության կեղեցման ուստիեմ և վաշխառուական կազիտալին իբրև գործիք այդ սիստեմի Դավառների կառավարիչ ժաշաները՝ հայ սառաֆների ճանկերում: Կեղեցումներով գիշված հարստությունները Մառափների գործունեյության նկարագիր: Թե ինչպես եյին նրանք կեղեցում մայրաքաղաքում: Վաշխառուական կադիտալի իշխանությունը մեծ վեգիտերի, անգամ սուլթանների վրա: Սառափությունը հայ ամիրայական դասակարգի ամենասովար բաղկացուցիչ մասը: Ամիրայական բռնակալ ույժը հայ համայնքի մեջ: Ազգային իշխանություն և պայքարուներ պատրիարքական աթոռի շուրջը: Այդ պայքարները սրում են դասակարգային հակադրությունները և վերջը ձուլվում են դասակարգային կովի մեջ: Ամիրայական կապիտալի բնույթը համեմատությամբ խոշայական կապիտալի: Նրա ծոցում կարող եր առաջնալ խաղաղ առաջադիմության գաղափարով սնվող, զբական-հրապարակախոսական ինտելիգենցիա, զորի նախատիպն եր Յերեմյա Զելեպին իսրայել Որին՝ հակապակեր Առաջին քաղաքական-հեղափոխական ինստելիքենտը հայերի մեջ: Նրա պակասությունները նրան հաջորդած հայ հեղափոխական ինտելիքենցիայի պակասություններն են Որին իբրև առաջին աղբյուր հայ ժողովրդի համար այն սարսափելի համբավի, թե իբր նա յէ, զոր տանում և ոռուներին մահմեղական Արելքը նվաճելու հոմար: Որին գրական հատկություններն իրան հաջորդած հայ քաղաքական գործիշների համեմատությամբ:

6. Պարսկաստանի գրության վատթարացումը ներքին կատաղի կրոնական կլիմեր շիաների և սյունների մեջ: Ավշանների շարժումներն Արելքում և կովկասյան ցեղերի արշավանքներն Այսրեկովկասում: Ռուսթյուրքական ձգումների բաղկումը Կասպից ծովի ափին: Վոլինսկու դեսպանությունը Պարսկաստան Մինաս վարդապետի գործուղումը Հայաստան Եջմիածին և Գանձասար Յեսայի կաթողիկոսի խանդավառ վորդությունը Պետրոսի ուղարկած հուսադրության և խոստումների առիթով Նրա առաջին աղերսական նամակը Պետրոս թագավորին՝ մի ամբողջ զինական դաշինք Վոլինսկին Պարսկաստանի մասին: Խորհուրդ և տալիս ոգավել նրա ծայրահեղ թուլությունից և նվաճումներ կատարեր Վախթանգ թագավոր վրաց և նրա կողմից թիֆլիսեցի հայ Փարսկան-բեկը Վոլինսկու մոտ Շամախում Յեսայի կաթողիկոսը Մինաս վարդապետին իր թշնամիների մասին Յերեկ Մանկանց վանքի հակաթողական կաթողությունը: Եջմիածնի շահադիտական հակառակությունը հարուստ Շամախու թեմի համար Յեսայի կաթողիկոսի հաշտեցնող քաղաքանությունը: Պետրոս թագավորի շրջաբերական կապիտալի յերեկ խոշոր ներկայացուցիչներին, այն ե՝ Պետրոս, Արքանամ և Ստեփան Արքուներին մեծամեծ առևտուական արտօնություններ շնորհելու մասին, զորպեսզի նրանք առևտուաններն իտանիանի հետ:

7. Վախթանգ թագավորի վերագարձը Վրաստան և նրա դերը հայ-վրացական հարաբերությունների մեջ: Զինակցություն և միացած վինական-ազատազրական շարժում սուսաց ցարի հովանավորության տակ Թիֆլիսի հայերի զինավորազրումը Այստեղից կազմեց՝ Լեռնային Ղարա-

բաղում հայ զօրամասերի կազմակերպելու համար Վախթանգը՝ հայ ցըվածույթի հավաքող: Լեզգիները վերցնում են Շամախին և Պետրոսը, արդեն կայսը համայն Ռուսաստանի, շտապով ձեռնարկում և ձեռնարկել պարսկական արշավանքին 1722 թվականը: Աղվանները առաջանում են մինչև Սպահան և վերցնելով Զուղան, պաղարում են մայրաքաղաքը: Միաժամանակ՝ լեզգիները արշավում են Ղարաբաղը: Թալանի և գերեզմանության տեսարանները: Առաջին յելույթ հայ զինվորության լեզգիների գեմ Զարաբերդ գավառում (Մեծ Սղնախ): Այս զինվորության չորս զիմավորների նամակը Պետրոս կայսրին Վախթանգի առաջի արշավանքը Գանձակ: Վրացական թալան Յեսայի կաթողիկոսը Վախթանգի հետ Թիֆլիսում: Խորհրդակցություններ Պետրոս կայսրին զիմավորելու մասին, զոր արդեն հայոնել եր թե գալիս և իբր թե քրիստոնյանների ազատելու համար Վախթանգի յիրկորդ արշավանքը Գանձակի Յեսային հայ զորքերի առաջնորդ հայ-վրացական գորքերի միավորումը Գանձակի տակ հայտնի հանգիստ հանգիստ համար Յատչյական կապիտալի ներկայացիայի համար իտաղյական կապիտալի նոր պահանջություն համար Յատչյական կապիտալի նոր պահանջություն համար Յատչյական կապիտալի գլխավոր հրամանապարագությամբ:

273

8. Պետրոս պարսկական արշավանքի սիզբից վոչ «փրկիչ» փետուրներով զարգարված, այլ իր իսկական, իմպերիալիստական կերպանքը մեջ: Հրահանգներ Վախթանգ թագավորին: Քրիստոնյանների «փրկիչ» իրան հայտարարում և Պարսկաստանի բարեկամ, նրա ամբողության պահապահն և յիշի այժմ արշավում և Պարսկաստան, այս վոչ թե նվաճումներ անելու համար ե, այլ Շահի դեմ ապստամբվածներին պատժելու համար ե: Այսպես հանդիսավոր կերպով հայտարարվում եր Արելքի ժողովրդներին ուղղած հրովարակի մեջ Խոկ դիվանագիտական հանդիսական կառավարությունում և Շահից, զոր իբր փոխարինություն իրան զիջվեն Ենրքենտը, Բագուն, Դիլանն ու Մազմագարանը: Պետրոսի նամակը Վախթանգին և վերջինիս պատասխանը: Պետրոսը Ենրքենտում: Վերագարձն Աստրախան: Հյուսեյին Շահի վորդի Թահմազը, զոր փախել եր Մպահանից Հյուսիսային Պարսկաստան և իրան այդակեղ Շահ եր հայտարարել, համաձայննեց Պետրոսի առաջարկության և իզմայիլ բեկին գեսպան նշանակեց պայմանագիր կնքելու համար, բայց հետո հրաժարվեց այդ մտքից: Պետրոսը, առանց այդ համաձայնության եր, զորպես և տալիս Ռաշաը և այդպիսով հափշտակում է Դիլանն ու Մազմագարանը: 1723 թ. սեպտեմբերի 12-ի սուսական կապիտալից Վախթանգը մերժված Շահի կողմից:

284

9. Վախթանգը Գանձակի տակ սպասում և Պետրոսի տեղեկության, զոր գնա միանալու նրա հետ: Նրա նամակը: Հիասթափում և հուսահատություն Պետրոսի վերագարձի հատեանքով: Իվան Տոլստոյի գետպատությունը Թիֆլիսում: Նորանոր աղաչանքներ Վախթանգի կողմից: Համար Վախթանգի կողմից: Հատկած Փարվեզյան վարդապետի նամակից: Հատեանքները և հայերի համար Համբուլամական ճակատ: Առանձին բերքերի մեջ կախեթի Մհամմադի-Ղուլի խան թագավորի շանքերը հաշություն խոսելու հայ զորքերի Սղնախի և Վախթանգի կողմից:

271

կ տրուկ մերժումն ի սեղ ռուսաց ցարի Նետահնքները. Գեղարքունիքն ավերված, 2000 հայ կոտորված, Թիֆլիսը լիզգիների կողոպուտին մատնված, Վախթանգը փախած, ոսմանյան զորքերը գրավում են Վրաստանը. անհշիսանություն ամեն տեղու Խոչայական կապիտալի կազմակերպած լրտեսությունը և կամավորական խումբը Մաշտում. Պետրոս զի Սարգիս Գիլանենց Հայ զինվորության և տեղական մահմերականների մեջ անդադար կրիվներ իրար քնաջնջելու համար Յերից Մանկանց ներսես կաթողիկոսի նամակը Պետրոս կայորին. Պետրոսի պատասխանը՝ բաց հրովարտակը և ծածուկ հուսագրական թուղթը, ուղարկված իվան Կարապետի հետ.

295

10. Ուսմանյան զորքերի աստղխաղացությունը հայ զինվորության ներքին տկարությունները Տաթև Մելիք-Դավթի գավաճանությունը Յեսային Գետրոսին զրության մասին Նկատողություններ հայ զինվորության մացքած վարչական կարգի մասին, նաև նրա կազմի, ապօպավարության յեղանակների և այլ հանդամանքների մասին Մի պատկեր հարևանների փոխադարձ ընաձննութեքից Ուսմանյան արշավը ամբողջ տըսելյան ճակատի յերկարությամբ Կարքի և Ցեղեան, Խոջայական կապիտալի ուժեղ դիմագրությունը Յերևանի առումը 1724 թ. հունիսի 12-ի ոռուս-թյուրքական զաշնազիրը Պարսկաստանի բաժանման մասին, վորով Գետրոսը Թյուրքիային եր թողնում Վրաստանն ել, Հայաստանն ել Այս ստոր վաճառքի հեանանքը Ձեւնարկություն դազթեցնելու ամբողջ Լեռնային Ղարաբաղը: Անտոն քահանայի և Թիգիս Զալատիի պատգամավորությունը Պետերբուրգ Վաճառված քահանայի սուր հայտարարությունները Պետրոսի հրովարտակը հայ ժողովով զազթելու մասին Հրահանդէ կ. Պոլիսի ոռուսաց գեսապահնին:

312

11. Անմանյան արշավանքը Փոքր հաշտության հայ զի՞նվորության հետ Եջմիածնի կաթողիկոսի նամակը Յեսայունու Առաջարկությունը մերժված Պատերազմական գործոցությունները Անմանյան զրաբարձնի ընացնջումը Վարանդայում: Յեսայու նամակը Շահնավադի խանին: Գերի ընկած թյուրք փաշայի բնորոշ բացատրությունը թյուրք կառավարության քաղաքականության Անտոն քահանան և Քելիս Զալարին Փոքր Սղնակում Նրանք բերել են Պետրոսի հրովարակը, միաժամանակ և տեղեկություն նրա մահվան մասին: Դավանան Անտոն քահանայի փախուստը Իվան Կարապետի նամակը կռմ Գոլովինին: Պատասխան Պետրոսի հրովարտակին: Պետրոսի մահը վոչինչ փոփոխություն չե առաջնում հայ կղերական դիվանագիտության մեջ: Դիմում Յեկատերինա կայսրունուն և սրա գրավոր խոսառումը ոդնական զորք ուղարկելու հայերին Նույն տեսակ խոսառումներ կասպիական ափերը զրաված զօրքերի հրամանատարներից Յեսայի կաթողիկոսի նամակը Դիրքենտի գեներալ իշխան Գոլիցինին Մսկուուի հայ ազգաբնակության ազնությունը Շաքիի հայերի դիմումը ծարական քաղաքականությունը շարունակում եր մալ նույնը—խարդախությունը:

333

12. Առմանցիները Ղափանում. Դավիթ-բեկի զորքի կազմալուծումը Զոկական կապիտալի գերն այս զորքի մեջ, Դավիթ-բեկի անձնական քաղցությունը փրկում և զրությունը. Հալիձորի հաղթանակը Ասմանյան զորքերի վարումը Ղափանից, Դավիթ-բեկի հաշտողական քաղաքականությունը պարսիկների մերաբերմամբ. Շահ Թահմազը տալիս ե Նրան

ամբողջ Հարավային Ղարաբաղը իշխանաց իշխան տեսդրով և գրամ կտրելու իրավունքով: Դավիթ բեկի մահը քանդում և ամբողջ գործը Հարուցանելով ընտանի խայտառակ գործողություններ: Դավիթ բեկին հաջորդած Մխիթար սպառապետի սպանությունը հայերի ձեռքով: Խոշոր ընդհարում ուսմանցիների հիմ Հյուսիսային Ղարաբաղում: 20 յուղաշիներից կազմված պատգամավորությունն Ռաշտում, գեներալ Դոլգորուկովի մոտ և Դերբենտում Ռումյանցովի մոտ: Նոր պատգամավորություն Պետերբուրգ, նոր խոստումներ և նոր խաբեյություններ: Գեներալ Դոլցորուկովի կարծիքը հայերի մասին: Կազմալուծման վըությունը մտնում և Աղնախիները: Դարձյալ մի փոք ոսմանցիների կողմից հաշտվելու հայերի հետ և Յեսայի կաթողիկոսի մերժումը: Յեսայականությունն Իրգուհություններ: Յեսայու մահը կամ ինքնասպանությունը: Գեներալ Ռումյանցիվ ձանձրացել է հայերից, իսկ հայերը չեն ձանձրանում դիմութերից: Յեսայուն հաջորդած Ավան յուղամին նոր պատգամավորություն և ուղարկում Պետերբուրգ, բաղկացած իր յեղբայր Թարխան յուղաշուց և յերեք առևտրական հայերից: Ռուսաց կառավարությունը գնում է թե Թարխանին և թե Ավանին Վերջինն լքում և Աղնախիները, փորոշայնուհեակ կորչում են անհայտության խավարի մեջ և հետանալով Ղարաբաղից, ծառայության և մանում հայկական եսկարունի մեջ: Ինչ գնով եր նա իրան վաճառում: Սուրբ Խաչ քաղաքում, Ղվարբի հիմնարկությունը Մահ և ժառանգներ: Մինաս վարդապետ Տիգրանյանի մուտքը ուսւաց յեկեղեցու ծոցը: Խոչային կապիտալի առաջին ըրջանի (Զուղացականի) փակումը: Առաջին պատրանք:

342

